LIBRAIRIE ORIENTALE
H. SAMUEL
51, RUE MONSIEUR-LE-PRINCE
PARIS VI^E

4 lw

St Ephraemi Armenian Version
of Tatiani Diatessaron
Mechitarists Venice 1836
Vol I, 24

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽՆԵԱՑ

ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ

Vol 1

ՍՐԲՈՅՆ

ԵՓՐԵՄԻ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱԾՈՑ ԵԼԻՑ ՂԵՒՏԱՑՒՈՑ ԹՈՒՈՑ
ՕՐԻՆԱՑ ՅԵՍՈՒԱՅ ԴԱՏԱՒՈՐԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՄՆԱՑՈՐԴԱՑ



ALMA COLLEGE
208.43
LIBRARY
Ep38M
Alma, California

Ի ՎԷՆԷՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄԻ 1836 ՌՄՁԵ

27619

Digitized by the Internet Archive
in 2025

https://archive.org/details/holyepremebiblio0001vari

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Զնշխարս 'ի Ճոխ վարդապետութեանց մեծին Եփրեմի սրբոյ վարդապետին 'ի Հայրենասէր բարեպաշտիցն պահեալ անկորուստ եւ աւանդեալ փափագողացս պայծառութեան լեզուիս եւ դպրութեանս Հարստութեան, տամք աւասիկ 'ի վայելս Հասարակաց. իբրեւ զի եւ սա մի է 'ի պատուական վաստակոց նախնեացն մերոց երանաշնորհ Թարգմանչաց։ Որոց 'ի սեամս անդ ծաղկելոյ Հայ դպրութեանս զցանկալի ցանկալի մատեանս զառ 'ի սրբոց Հարցն անջինջ աւանդս եկեղեցւոյ ամփոփեալ յամենայն ուստեք Հայերէնախօս բարբառովք թողին մեզ որդւոցս 'ի զբօսանս Հոգեւոր ջանից. մեծաւ իմաստութեամբ կրշռեալ թէ քան զամենայն բանս մեծահանճար իմաստնոցն ըստ աշխարհի, յորոց եւ չեղեն անճաշակք, սոքա 'ի վեր են եւ պատուով եւ շահաւէտութեամբն։ Նմին իրի այն ինչ յազգս իւրաքանչիւր Յունաց եւ Ասորւոց Հռչակ Հարկանէին սրբոցն բանք, ոմն սքանչելի պերճախօսութեամբն եւ միւսն նուրբ եւ Հոգեբուղխ քաղցրութեամբ եւ այլք այլօրինակ, անդէն 'ի սուղ ժամու եւ Հայեցի խօսիւք լսելի եղեն յաշխարհս մեր։ Յորս նորատեսիլ իմն Հանդիսացաւ սուրբ Հայրս մեր. ոչ այնքան 'ի վարժոցս Հպատակեալ կանոնադրութեանց Հանճարոյ մարդկան, քան թէ 'ի

չնորհաց Հոգւոյն սքանչելեօք հմուտ գտեալ խորոցն Աստուծոյ. արդարեւ քարոզ աստուածային օրինաց եւ քաջածանօթ ամենայն շարժմանց սրտի դիւրասահ մարդոյս։ Ամեն իրի այլ շաւիղ յայլոցն կալեալ 'ի տիպս բանից իւրոց, 'ի վեր քան զբազումս 'ի նոցանէ երեւեցաւ խիտ առ խիտ անակնկալ խելամտութեամբք եւ սուր իմաստիւք։ Ի խրատականսն քաղցրախօս եւ որպէս հայր յաղէտս որդւոց կարեկից, եւ 'ի վարդապետութեան սքանչելի նրբութեամբ. հանճարոյն զէն անպարտելի ողջամտաց ժամանակին եւ սուր երկայրի այլաձայն բարբանջելոցն։ Այլ նախանձելի օրինակ է նա ամենեցուն յորժամ զմայլեալ սիրով աստուածեղէն տառիցն սլանայ մտօք 'ի բարձունս վառեալ 'ի սէր արարչին. մանաւանդ ուր առաքելականն նմա 'ի յուշ գայ իղձն եռանդուն երանելի ժամուն ընդ փրկչին միանալոյ։ Այս ահա կարգք բանից սրբոյ վարդապետիս եւ չափ ներանձնացեալ ոգւոյն։

Դանդաղիմք մի առ մի բան ճառել զմատենից սրբոյ Հօրս զոր 'ի չորեսին հատորս բովանդակեցաք. զի պատկառելի անունն եւեթ Հօր բանիցս գովութիւն է ինքնին խօսիցն, եւ տրիտուր քրտնաջան մերոց վաստակոց։ Այլ միայն տացուք համար կարճ 'ի կարճոյ գրչագիր օրինակացն, յորոց զբովանդակութիւնս զայս արարաք։

ՄԵԿՆՈՒԹԵԱՆՆ ԱՐԱՐԱԾՈՑ մինչեւ ցՄՆԱՑՈՐԴՍԸՆ մի եւեթ օրինակ գոյր 'ի ձեռին մերում. այլ բոլորագիր էր ընտիր, գրեալ 'ի ՉԽԲ Թուականիս. եւ գործ ճարտար գրչի։

Բայց մեկնութեանն Յեսուայ, Դատաւորաց եւ

Թագաւորութեանց կայր եւ երկրորդ օրինակ նոյնպէս բոլորագիր, գրեալ յերեքտասաներորդ դարու առ ժամանակօք Ստեփաննոսի Ուռպելեան. համապատիւ թերեւս կալեալ էր մեր զսա ընդ առաջնոյ օրինակին, եթէ բաց 'ի մարդկօրէն վրիպակաց, որ անխտրշելի են իսպառ, չէին զեղչեալ 'ի նմա ուրեք ուրեք եւ մեծամեծ հատուածք բանից: Սակայն ուր կարեւոր այլեւայլութիւնք ընթերցուածոյ կային 'ի նմա, 'ի ստորեւս իջիցն նշանակեցան:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ՉՈՐԻՑ ԱՒԵՏԱՐԱՆՉԱՑ ԵՒ ՉՈՐԵՔԻՆ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՃԱՌՔՆ. գրեալ 'ի Հաղբատ 'ի Թուին ՈԽԴ. բոլորագիր անհարթ, այլ ոչ թերի յերկիւղած հաւատարմութենէ գրչին: Ի յիշատակարանին Անանիա ոմն վարդապետ յիշատակեալ զորմէ չունիմ ասել հաւաքող մատենիս իցէ արդեօք եթէ թարգմանիչն. գովութեամբ խօսի գրիչն զնմանէ՝ թէ "Որպէս աւանդ հայրենի յաղագս որդւոց յառաջապահեստ արարեալ գանձեալ եւ եդեալ սուրբ եւ արդիւնակատար վարդապետ ոմն Անանիա ժառանգողաց տանս Հաղբատայ եւ 'ի լուսաւորութիւն համուրց աշխարհի": Ի սմին մատենի զկնի աւետարանական ճառիցն գրեալ էին 'ի նոյն գրչէ եւ երեքին ճառքն, յԵնովք եւ յԵղիա, վասն երաշտի եւ վաշխառուաց, եւ առ Յովսէփ. զորս 'ի հատոր ճառիցն խառնեցաք 'ի տպագրութեանս, անխառն զաւետարանական մեկնութիւնս բանից յայլոցն կալեալ:

Մօտ 'ի վախճան տպագրութեան մեկնութեան աւետարանիս եհաս առ մեզ 'ի բարեպաշտէ ումեմնէ եւ միւս եւս օրինակ բուն մատանց գիր աստուածա-

րեալ Հայրապետին սրբոյ Ներսեսի Լամբրոնացւոյ ։ Բայց 'ի մատենիս յայսմիկ արտաքոյ մեկնութեանն առաջին եւեթ գոյր 'ի չորից աւետարանական ճառիցն այսու վերնագրով Ընդդէմ Մարկիոնի որ ասէ ոչ ծնեալ Տէրն-ման . Եւ մեկնութիւն յառաջս աւետարանչացն . Եւ 'ի վախճան գալստեանն Տեառն . այն , որ 'ի մերում օրինակի եդեալ է Թարգմանութիւն աւետարանի ։ Օ յիշատակարան ցանկալի մատենիս ինքն երանելին արձանագրէ զայս օրինակ .

ՓԱՌՔ ԵՒ ԳՈՀՈՒԹԻՒՆ ՆՄԱ, ՈՐ ՍԿԻԶԲՆ Է ԵՒ ԿԱՏԱՐԱԾ,
Ի ՆԻՒԱՍՏ ՎԱՍՏԱԿԱՒՈՐԷ ՆԵՐՍԻՍԷ ։

ՏԱՌԱՊԵԱԼ ՆԵՐՍԵՍ , ՎՐԻՊԵԱԼ ՑԱՌԱՆՁԻՆՆ ԽՈԿՄԱՆԷ,
ՎԵՐԱԿԱՑՈՒԹԵԱՄԲ ՏԱՐՍՈՆԻ ՔԱՂԱՔԻՆ
ԵՒ ՈՐ Ի ՆՄԱ ՄԵԾԻ ԵԿԵՂԵՑՒՈՅՆ ՊԱՇՏԱՄԱՄԲ
ԶԲԱՒՍԱՆՍ ԻՄՈՑ ԶԲԱՂՄԱՆՑՆ ՍՏԱՑԱՑ ԶՎԱՍՏԱԿ
ԳՐՉՈՒԹԵԱՆ Ի ՄԱՏԵԱՆՍ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ
ԼԵԶՈՒԱՒ ԲԱԶՈՒՄ ԱՆԳԱՄ ԶՔԱՂԱՔԱԿԱՆՆ ԼՆԼՈՎ ՀՈՔՍ
ԵՒ ՀԻՒՍՄԱՄԲ ՁԵՌԻՆ ԵՒ ՄՏԱՑ ԱՍՏ ԴԵԳԵՐԵԼՈՎ
ԶԲՆԱԿԱՆՆ ԵՒ ԶԿՐԹԱԿԱՆՆ ԽՈԿՄԱՄԲ
ՑԱՍՏՈՒԱԾԱՅԻՆՍ ԿԵՐԱԿՐԵԼՈՎ ԶՈԳԻ ։
Ո՛Հ Ո՛Հ . ԹԵՐԵՒՍ ԸՍՏ ՄԵԾ ՔՐԻՍՏՈՍԻ ԳԹՈՒԹԵԱՆՆ
ՊԱՏԱՀԵՑԱՅՑ Ի ՁԵՐԿՆԻՑ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆՆ ԲՌՆԱԲԱՐՈՂԱՑ ։

Ի ԹՈՒ՝՝ ՈԽԴ ։

Պահեցաք աստէն զսա անթերի , համարեալ հնասէր հայրենասիրացն ախորժելի գոլ ։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՉՈՐԵՔՏԱՍԱՆ ԹՂԹՈՑՆ ՊԱՒՂՈՍԻ . յորում զՓիլիմոնին իբրեւ զյայտնի ինչ եւ ամենեւին անկարօտ մեկնութեան թողեալ է 'ի բաց ինքն սուրբ վարդապետն , որպէս հաւաստեաւ իմ

կարծեմք. զի օրինակն անթերի է: Եւ այս յայտ անտի է դարձեալ, զի զնոյն առնէ ստէպ 'ի բնաւ մեկնաբանութիւնս իւր, կարեւորացն եւեթ փոյթ կալեալ պարզել զիմացուած բանից. մանաւանդ յորս ինքն վառեալ իցէ 'ի խորս գաղտնեացն Աստուծոյ: Ի կարգին խառնեալ է ընդ այլոցն եւ զթուղթն առ Երրորդ կորընթացիս. իբրեւ զի 'ի ժամանակին թերեւս գտանէր յօրինակս ինչ սուրբ գրոց յոյն կամ ասորի, որ ցարդ չերեւեցաւ ուրեք բաց 'ի հայ թարգմանութենէն զոր ունին ամենայն գրչագիր օրինակք աստուածաշնչից մերոց. որ եւ գուցէ ընդունելի եւս կարծէր առ ոմանս յարեւելեայց. այլ առ մեզ ընդ անհարազատս դասեալ է, որպէս եւ առ Լատինս եւ առ Յոյնս: Օրինակ մեկնութեան թղթոցս գրեալ է 'ի թուին ՆԽԸ բոլորագիր հին 'ի ձեռն Սիմէոնի ուրումն վարդապետի, զոր նա ինքն գաղափարեալ է յայլ ստոյգ եւ 'ի հին օրինակէ իմեքէ յԱրծրունեաց գաւառի 'ի թագաւորութեան Գագկայ որդւոյ Աշոտի եւ 'ի կուրապաղատութեան Դաւթի:

Զմիահետ գրութիւն երից մատենից մեկնութեանցս բաժանեցաք 'ի գլուխս. զԹղթոյն ըստ գլխակարգութեան աստուածաշունչ գրոց. ընդ որում կարգ բանիցն անսայթաք միաբանէր. իսկ զայլոցն բաժանեցաք որպէս եւ հաճոյ թուեցաւ ըստ յայտնի ինչ բանից կամ պատմութեանց:

ՃԱՌՔ ԵՒ ԱՂՕԹՔ: Զաղօթիցն չմարթի ճշդիւ տալ զօրինակայն զհամար. զի ոչ միախուռն ամփոփ գտանէին եւ ոչ ժամանակք գրութեան նոցա երեւէին բաց յերկուց նոր օրինակաց գրելոց 'ի ՌՁԸ եւ ՌՃԴ: Այլ զթիւ նոցա որ բազմաթիւ էին, եդաք 'ի

կարգին ։ Իսկ Ճառիցն որ մեծաւ մասամբ յայլ եւ այլ Ճառընտրաց հաւաքեցան որ առ մեզ եւ որ այլուր , այսոքիկ են օրինակք ։

Ա․ Ճառընտիր բոլորագիր․ գրեալ 'ի ՈՀԳ Թըւիս․ որ Թէպէտ եւ անզերծ է 'ի մարդկօրէն վրիպակաց , այլ գրչին փայլէ 'ի նմա հաւատարմութիւն ։

Բ․ Ճ․ երկաթագիր անԹուական , հարազատ եւ ընտիր գրութիւն ։ Զսա կալաք մեզ օրինակ յամենայնի որչափ ինչ գտան 'ի նմա 'ի Ճառիցն Եփրեմի , զոր եւ կոչեցաք Հնագոյն օրինակ․ եւ ուր Թերթք ինչ պակասէին առ հնութեանն , նշանակեցաք 'ի կարգին , յայլոցն միաբանութենէ զԹերթին լրացուցեալ ։

Գ․ Ճ․ նօտարացի ձեւով գրեալ 'ի ՌՁՋ․ որ Թէ եւ ըստ ընդհանուր տեսութեան Ճառից իւրաքանչիւր հաւատարիմ Թուիցի , զի չերեւին 'ի նմա ըստ կամի յաւելուածք , այլ ոչ հարազատ եւ երկիւղած է 'ի դարձուածս բանից հարց լեզուիս․ զի ստէպ նշմարին 'ի նմա կամաւոր նոր խանգարմունք․ գրչին ախորժեալ անշուշտ եւ գաւհկաց անգամ ժամանակին իմանալի առնել զբանն ։ Սակաւք էին 'ի սմա յեփրեմեան Ճառիցն որ յայլսն չերեւէին ։

Դ․ Ճ․ բոլորագիր անԹուական․ ըստ հարազատութեանն կեղակարծ , եւ գրչին վրիպակք 'ի նմա ոչ սակաւք ։

Ե․ Ճ․ բոլորագիր 'ի ՈԿԴ Թուականիս գրեալ․ ընտիր եւ հարազատ , եւ անխորշելի վրիպակք 'ի նմա յոյժ սակաւք ։

Է․ Ճ․ բոլորագիր գրեալ 'ի ՊԾԱ․ գործ անհըմուտ գրչի եւ ըստ ամենայն բանի Թերութեամբք լի ։

ԺԲ․ Ճ․ գաղափարեալ է 'ի Ճառընտրէն որ կայ

'ի սուրբ Կարապետի վանս 'ի Կեսարիա ։

ԺԳ. Ո՛. բոլորագիր հին, գրեալ առ ժամանակօք առաջնոյ Հեթմոյ Թագաւորին Կիլիկեցւոց. որ եթէ հնութեամբն ոչ, սակայն պատուականութեամբն եւ հարազատութեամբն հաւասարապատիւ իցէ արդեօք ընդ Բ. Ճառընտրին.

ԺԵ. Ո՛. գաղափարեալ է 'ի Ճառընտրէն որ պահի 'ի վանս Գաղատիոյ ։

ԺԸ. Ո՛. բոլորագիր անթուական. գործ Ճարտար գրչի, այլ անզերծ 'ի վրիպակաց. եւ ուրեք ուրեք զեղչեալ ։

ԺԹ. Ո՛. երկաթագիր անթուական. մատեան ցանկալի հնութեամբն եւ հարազատութեամբն ։

ԺԸ. Ոսկեփոր բոլորագիր անթուական. հաւաքող մատենիս է Մ՛ովսէս վարդապետ ոմն եզնկացի, եւ գրիչն Մ՛խիթար ոմն. այլ նորա թէ գրչին, չունիմ ասել, անցանէ ըստ չափ անհաւատարմութիւն, ստէպ կցկցելով 'ի խելաց կարկատուն հատուածս, եւ զնոյն զմի Ճառն բաժանելով յայլ եւ այլ Ճառս զանազան վերնագրով. իսկ զեղչել եւ ոչ ընաւ ։

ԽԴ. եւ ԽԵ. գրչագիրք Փարիզու. են երկու Ճառընտիրք անթուականք. առաջինն երկաթագիր, իսկ երկրորդն բոլորագիր գրեալ 'ի ժամանակս Կիլիկեցւոց. եւ պահին յարքունի գրանոցին Փարիզու ։

Ըստ յօրինակացս աստի յամենայնի զհնագոյնս եւ զընտիրսն առաք մեզ առաջնորդ տպագրութեանս մերոյ. եւ զայլոցն զմիաբան ընթերցուածսն, եւ ըզտարաձայնսն իսկ՝ ուր կարեւոր հմտութիւնք կային լեզուիս, եդաք զամենայնն զգուշեաւ 'ի ստորեւսն. սակաւ ուրեք հետեւեալ այլոց զհնագունիցն առաք 'ի

խոնարհ, ուր մարդկօրէն վրիպակք կարծեցան 'ի մէնջ, կամ վասն այլ ինչ բանի ։ Յորս եթէ թերի գտեալ իցեմք ճշդիւ դատաստան առնել, ցանկամք ներողամիտ քննաբանութեան հմտից հանդիպել ։

Ի ճառից աստի ոմանք թերակատար երեւին, մանաւանդ որոց յոյն եւ կամ ասորի բնագիրն ամբողջ կան. եւ ոմանք եւս հատուածոյք զոր յաւարտ տպագրութեանս ամփոփեցաք. որոց լրութիւնն 'ի հայրենասէր բարեպաշտից խնդրի անձկանօք եւ երախտապարտ գոհութեամբ ։

Զայս ամենայն քրտնաջան երկամբք 'ի յաճախաբան մատենագրութեանց սրբոյ վարդապետիս հաւաքեցաք, զորս գտաք զերծեալս 'ի բազմածախ ժանեաց ժամանակին ։ Բայց ոչ եթէ 'ի սոսին եւեթ սահմանին բանք նորա. զի են եւ այլ բազում մատեանք սրբոյ Հօրս 'ի յոյն եւ յասորի բարբառս, որ տակաւին չգտան 'ի մեզ ։ Իցեն եւ 'ի մերոց աստի ոչ սակաւք, որ թերի են առ նոսա. որով եւ դպրութեանս մերոյ յաճախեն պարծանք առ այլս ազգաց ։

Կան 'ի բազում ճառընտիրս եւ այլ ճառք յանուն Եփրեմի ոչ անծանօթք հնախոյզ ուսումնասիրաց. այլ զնոցանէ տեսցեն փափագողք 'ի մատենագրութեան Յովհաննու Մանդակունւոյ, որ ընդ հուպ ելցէ 'ի լոյս ։

ՏԵԱՌՆ

ԵՓՐԵՄԻ

ԽՈՐԻՆ ԱՍՈՐՒՈՑ

ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԱՂԱԳՍ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԱԾՈՑ

ԳԼՈՒԽ Ա

“ՍԿԶԲԱՆԷ հաստատեաց Աստուած զհաստատութիւն երկնից և զհաստատութիւն երկրի,,։ Քանզի վասն այսորիկ փոյթ եղև Մովսիսի՝ 'ի ձեռն յայտնութեան Հոգւոյն օրինակագրութիւն ճշմարտութեան ընդդէմ մոլորութեան կռապաշտութեանն առնել, որք զարարածս արարիչ կարծէին լինել, սկսաւ ուսուցանել՝ թէ է և գոյ արարիչ և հաստիչ աշխարհիս այսորիկ. և մի է Աստուած որ իսկն էր, և կարաց առնել զամենայն յոչընչէ. 'ի ձեռն այնորիկ ասաց Մովսէս, զի հաւանեցուսցէ և հաճէ՝ թէ ամենայն ինչ արարածք են։ Եւ վասն դիցն զի կարծէին թէ ինքնութիւնք էին 'ի միտս պաշտօնէից իւրեանց, զի յայտ արասցէ թէ և նոքա արարածք են։ Եւ սկսաւ ասել. իբրև ոչ ինչ էր ուրեք, խորհեցաւ Աստուած 'ի կամս բարերարութեան իւրոյ, այն որ ոչն նորոգի 'ի գիտութեան իւրում, առնել զտունս զայս զերկինս և զերկիր՝ որ ամենայն ինչ փակեալ էր ընդ նովաւ. զի ոչ եղև և ոչ ական թարթափել 'ի բանալ արտևանացն՝ սկիզբն առնէ պատուէրն հրամանին. և յական թօթափել 'ի ձեռն հրամանի կատարեցան գործք։ Եւ եղիցի վկայ մեզ Մովսէս, որ 'ի ձեռն յայտնու-

թեանցն ակնարկէ վասն ծածկութ̃եցն. զի 'ի կողմն յոր կոյս և խոնարհին ձեռք, որ է որդի, նոյն ժամայն կատարէր գործն: Զի եթէ 'ի ձեռն թօթով ծանրախօսին փութացեալ հաստատեցաւ ակնարկել կամաց իւրոց, զի մի՛ շփոթումն արասցէ և կասեսցէ, որչափ ևս առաւել 'ի ձեռն միածնին իւրոյ կատարէր: Սոյնպէս և 'ի ժամանակի անդ ապականութեան:

"Երկիր, ասէ, էր թոհ և բոհ". յայտ արար թէ անպատրաստ էր ցայնժամ և ամայի: Յայտ առնէ բանն, զի յառաջագոյն է լինել երկրին քան զջուրցն որ 'ի վերայ նորա. վասն այսորիկ՝ յետ այնորիկ զի ասէ "եղև", ասաց "Ամայի էր և անպատրաստ": "Երկիր, ասէ, թոհ և բոհ". Յոյնն ասէ "Աներևոյթ և անպատրաստ". զի ջուրք տարածեալ էին 'ի վերայ նորա. և զի երկիր յառաջ էր քան զջուրն, և անապատ էր և ամայի, զոր յայտնէ բանն. և ծածկեալ էր 'ի ջրոց: Եւ ապա պատմեաց վասն խաւարին որ 'ի վերայ. զջուրցն ասէ որ 'ի վերայ նորա, զի չև էին ժողովեալ 'ի մի կողմն. զի չև ևս էր ծագեալ 'ի վերայ լոյս, աներևոյթ զայն ասէ. իսկ անպատրաստ դարձեալ, զի բազմութ̃ի ջուրց արգել և խափան էր սերմանեաց և տնկոց. և զի ոչ ևս ցայնժամ առեալ հրաման լինել ծնանել, վասն այսորիկ աներևոյթ և անպատրաստ:

Իսկ զի ասէ "Խաւար ևս էր 'ի վերայ անդնդոց". զի 'ի մէջ երկնից և անդնդոց որ 'ի վերայ երկրի՝ տեղի էր բացատ զօդն արգելեալ, և զմթինն որ 'ի մէջ նոցա՝ ասաց խաւար. այն զի բնութ̃ի և արմատ չիք նորա. իբրև ոք զի շինիցէ տուն առանց պատուհանից: Արդ 'ի վերայ անդնդոց ասաց. զի ցուցցէ թէ 'ի մէջ երկնից և անդնդոց խաւար էր. զի չև ևս էր հաստատեալ լոյսն երևեցուցիչ բնութ̃եց այնոցիկ՝ որ ոչ կարացին երևեցուցանել զանձինս իւրեանց առանց լուսաւորի: Այլ դարձեալ ասասցուք. զի եթէ հաստատութ̃ի սոցա հաստատեալ էր յաւուրն առաջնում, նման էր այս յասել՝ թէ խաւար ստուեր է երկնից. և եթէ 'ի մէջ երկնից վերնոց և ներքնոց լոյս է, որպէս գիրք վկայեն. և յաւուրն երկրորդի

եղև այս հաստատութիւնս՝ ահաւասիկ յայտ է. զի խաւարն որ յաւուրն առաջնումն գրէ թէ եղև, ոչ ստուեր է այս հաստատութեանս. յետ հաստատելոյն հաստատութիւն յաւուրն երկրորդում՝ պաշտեաց ստուեր նորա զգիշերն որ զկնի անց. այլ նման էր զի յաւուրն առաջնում ընդ հաստատել անդնդոցն՝ հաստատեցան և ամպք, և 'ի ստուերաց անտի ամպոցն հաստատեցաւ խաւար: “Ամպ մի փոքրիկ, ասէ, ելանէր 'ի ծովէ„: Եւ դարձեալ. “Իմաստութեամբ իւրով պատառեցան անդունդք, և ամպք ցօղեցին„: Այլ հեբրայեցին փոխանակ այնր զի ասէ թոխ և բոխ, խոր և խաւար ասէ, և խաւար ունէր 'ի վերայ խորոց:

Իսկ զի ասէ “Հոգի Աստուծոյ շրջէր և գրգայր 'ի վերայ ջուրց„. կամ զի թէ և 'ի կազմութենէ թերի էին, և 'ի ձեռն գրգելոյն կատարեալ լինէին. զի 'ի ձեռն շարժմանն որ 'ի շնչելոյ անտի՝ զօրութիւն կենդանութեան իւրեանց ստանային. այլ զի և այսօր իսկ գթայ և գրգէ 'ի վերայ արարածոյ, որպէս զի ոգի ամենայնի 'ի նմա կախեալ կայ. զի եթէ ոչ առնու 'ի նմանէ շունչս այս, որ փչեալ է 'ի մեզ, և հանգչի յայն 'ի գիգիջն՝ հեղձնուս: Կամ յասել իւրում վասն ջուրցն և խաւարին որ 'ի վերայ նոցա, ետ խորհուրդ տկար մարդկան՝ իբրև նկարէ նոցա զխորհուրդ աւազանին մկրտութեան, զի սրբելոց էր նա 'ի գթութիւն գրգելոյ Հոգւոյն սրբոյ: Քանզի զարարչութիւն Աստուծոյ պատմէր, ոչ եթէ արարած յայտ արար ընդ նմա 'ի վերայ ջուրցն որ գրգայր, այլ վասն Հոգւոյն սրբոյ յայտ արար. իբր Հայր ասէր, Որդի գործէր, Հոգին գրգէր և գթայր: Եւ զի կոչեաց զլոյսն տիւ և զխաւարն գիշեր, ինքն իսկ օդն զգենու զամենայն զգոյնս և զամենայն համ և զհոտ. 'ի տուէ 'ի ձեռն լուսոյն սպիտականայ, և 'ի գիշերի 'ի ձեռն խաւարին թխանայ. որպէս բորբոքի հուրն 'ի շնչոյ և շիջանի, և որպէս դառնան ջուրք 'ի կարկուտ և 'ի ձիւն և 'ի սառն, և որթն դառնայ 'ի գինի և լմնանայ:

Յաւուրն երկրորդի մեկնեցան ջուրքն, որ էին 'ի վերոյ քան զհաստատութիւնն, 'ի ջուրց անտի՝ որ 'ի

ներքոյ հաստատութենն ։ Լուեաց և դադարեաց վասն սկզբանն հաստատելոյ ջուրցն ․ փոխանակ զի հանդերձեալ էր զի 'ի Նոցանէ ձգեսցէ հաստատութի 'ի մէջ նոցա , արար զնոսա հաստատութի ։ Յաւուրն երկրորդի ձգեաց պարզեաց զնա իբրև զխորան , իբրև զվրան ․ զի ցուցցէ՝ թէ ոչ տարապարտուց ինչ գըրգայր նա , այլ գրգելովն իւրով զլոյծ բնութի նոցա պնդէր ։ Զի զոր օրինակ անօթս այս որ արարեալ է իբրև խորան , բարձեալ ունի 'ի վերայ մկանանց իւրոց զջուրսն զայնոսիկ՝ որ բնութի նոցա կալ առանց շրջանակի կարակնի ոչ կարեն ․ զի կողմ որ զրկէ 'ի խոնարհել իւրում , անդր յաճախեն բազմանան զեղուլ ։ Արդ զայս զի գրեաց՝ եթէ մեկնեաց 'ի նոցանէ 'ի վերոյ քան զհաստատութին , յայտ արար զի ոչ եթէ բնութեամբ իւրեանց հաստատեալ կան , այլ 'ի զօրութիւն նորա կախեալ կան , և 'ի սքանչելիս հրամանի նորա զանձինս իւրեանց բարձեալ ունին ․ իբրև այն զի ասէ ․ “Հաստատեաց զերկիր 'ի վերայ ջուրց „ ․ զի անջրպետեաց 'ի մէջ ջուրցն՝ որ 'ի վերոյ հաստատութե էին , և 'ի մէջ ջուրցն՝ որ 'ի ներքոյ հաստատութենն ։ Եւ վկայեն վասն այսր ջուրք ծովուց , զի ելանեն մինչև յերկինս , որպէս և գրեալ է ․ և հասանեն մինչև առ աւազ , որպէս և երևին ․ և կարկեալ լինին 'ի ձեռն հրամանին , որպէս և ասացեալն վկայէ ։

Յաւուրն երրորդի մեկնեցան ծովք յերկրէ ․ “Ժողովեսցին , ասէ , ջուրք 'ի ժողով մի „ ։ Եւ քանզի յամենեցունց 'ի ներքոյ երկնից 'ի մի 'ի բոլոր անդր ժողովեցան , և աղբեւրք որ ծածկեալ էին 'ի մէջ ջուրցն՝ դարձեալ իբրև 'ի բարձանց 'ի միջոյ երկրի յորդեցան և հոսեցան իջին ջուրք 'ի ստորոտս նորա ուր ծովքն էին ։ Արդ երկուս ասեմք մեք ․ կամ Նոքին իսկ դարձեալ ծովքն ընդարձակեցան անդորրեցան՝ զի բաւական իցեն ընդունել զայլ ջուրս , կամ զոր օրինակ ոչ լնուն ծովք այսօր , սոյնպէս և յայնժամ ․ և ահաւանիկ յաւուրս Նոյի հոսանք բացան յերկնից և առ ծովս ժողովեցան ։ Եւ եթէ 'ի վերոյ քան զլերինս յորդեցան ջուրք , իսկ արդ զիա՞րդ ժողովեցան 'ի մի կողմն , թէ ոչ Աստուծոյ հրամանաւն ։

Թերեւս ասիցես, թէ հրաման պատուիրանին նեղեաց զնոսա։ Այլ ոչ եթէ զբռնութ՟ի հրամանին պահանջեցի ես 'ի քէն, այլ զբնութ՟ի ջուրցն. այլ ոչ եթէ 'ի ջուրցն արար զջուրս, այլ 'ի հրամանէ։ Եւ զի մի՛ նեխեսցին ջուրքն և եղիցին արարածք տառապեալ, յաղեաց զնոսա զի մի՛ նեխեսցին. և միւս եւս, որչափ աղի են՝ ըմպեն և կլանեն զքաղցր ջուրսն որ իջանեն անդր. և թէ ոչ յաւելու, ահաւասիկ յորմէ հետէ հաստատեալ է աշխարհս՝ ընդունի և ոչ դադարէ, և ոչ երբէք երևեցաւ։ Նա և այսպէս դարձեալ երևեցոյց զմեծութ՟ի զօրութ՟ե իւրոյ 'ի լճածովս. զի և նոքա արգելեալ կան, և ոչ նեխին կամ զեռացուցանեն ինչ մի չար. և ոչ ջուրք նոցա աղի են. և ծովն զի աղի է՝ առնու եղանէ ջուրն աղի զջուրսն բազումս։

Ի նմին իսկ յաւուր երրորդի պտուղք և ծառք երկրի։ "Բղխեսցէ, ասէ, երկիր"։ Եւ յայսմիկ յայտ արար, զի իբրև 'ի տան գանձի ժողովեալ ամփոփեալ կային իրքն։ Եւ քանզի յամուսնութ՟է ջուրցն բղխելոց էր ամենայն ինչ, նոքին իսկ ջուրքն գանձաւորք եղեն գանձուցն երկրի. զի Հոգին գրգայր իբրև 'ի վերայ կենդանի իրաց 'ի վերայ ջուրցն, զի նոքին իսկ ջուրքն ծնցին զամենայն ինչ ըստ բնութեան իւրեանց. զի 'ի ջուրսն ծածկեալ թաքուցեալ էին ամենայն ինչ։ "Երկիր, ասէ, աներևոյթ և անպատրաստ"։

Յաւուրն չորրորդի լուսաւորք երկնից։ Այն լոյսն որ յառաջ էր քան զարեգակն երեքօրեայ ժամանակաւ՝ ոչ էր անփոփ և ժողով, այլ տարած և սփիռ էր։ Յաւուրն չորրորդի արար նմա անօթս, և սփռումն տարածութ՟ե նորա ամփոփեցաւ ժողովեցաւ յանօթն, որպէս պատրաստեցան նմա. բազմութ՟ի նորա յարեգակն, և սակաւութ՟ի նորա 'ի լուսին։ Այլ նմին իսկ տարածելոյն՝ կարգս և սահմանս եդեալ էր նմա. զի յոր վայր կատարէր տիւն, տեղի առնէր գիշերոյն 'ի մտանելն իւրում. այլ ոչ կատարի՝ թէ եղիցի լոյսն սփիռ տարած առանց տարեր ընչի, զի լոյսն շառայլք ինչ էին իբր 'ի հաստատութ՟է ընչէ. որպէս ոք զի ասիցէ, լուսաւոր է ոսկին, կամ լոյս ճրագի կամ արծաթոյն, զի 'ի նմին իսկ և

նա յանօթոյ եղիցի լոյս տալ։ Այլ Մովսէս գրեաց և ճշմարիտ է վկայութիւն նորա. և գործն բանի իւրում վկայէ՝ եթէ եղև լոյս։ Այլ դարձեալ, զի "Արար լուսաւորս մեծամեծս" ասէ. և յայնմիկ զի ասաց բայ "մեծամեծս", փոքրկացոյց զառաջինն. զի 'ի մեծութիւն նոցա ընկղմեցաւ առաջինն։ Այս դարձեալ մեծացուցանէ. "Լուսաւորն, ասէ, մեծ՝ իշխանական տուընջեան, և լուսաւորն փոքր՝ իշխանական գիշերոյ"։ Եւ եթէ փոքր և մթագոյն է յոյժ քան զարեգակն՝ մեծ կոչեաց զնա առ համեմատ առաջնոյն, որչափ ևս առաւել նուազ լինէր քան զերկուսին, զի զկէս աւուրցն ինքն լոյսն պաշտեաց զերիս աւուրսն. և զի զկնի երից աւուրցն երևեցաւ արեգակն առակ օրինակի տեառն մերոյ. զի յետ երից աւուրց կենդանացաւ և յարեաւ 'ի դժոխոց։ Քանզի լուսինն լի կատարեալ երևեցաւ յաւուրն՝ յորում հաստեցաւ. որպէս և Ադամ կատարեալ ստեղծաւ. զի յաւուրն չորրորդի եղեն լուսաւորք, և գտանին մետասան օր աւելի 'ի միջի։ Արդ մետասան աւուրքն առաջի, զի երէց էր լուսինն քան զարեգակն որ յաւելաւ լուսնի յամին առաջնում. սոքա են յամենայն ամի, զի յաւելուն նմա այնոքիկ որ շրջշրջին 'ի թիւ և 'ի համար լուսնի։

Յաւուրն հինգերորդի գազանք և թռչունք. "Բղխեսցէ, ասէ, ջուրք զեռուն կայտառ շնչոյ կենդանի"։ Յետ կատարածի աստեղաց և զարդուն երկնից՝ լցան և ջուրքն շնչականօք և զարդարեցան, որպէս երկիր ծաղկօք և երկինք աստեղօք զարդարեցան։ Եւ զի թերի էր ջուրքն 'ի ծննդոց քան զերկինս և քան զերկիր, զի և նոքա 'ի միջոյ բնութե իւրեանց իբրև 'ի տանէ գանձուց իւրեանց զարդարեցին, փութացոյց զնոսա պատուէր հրամանին, զի և ծով և գետք ամենեքեան իբրև յական թօթափել յղացան փութապէս՝ երագ երագ երկնեցին և ծնան թռչունս և գազանս պէսպէս. զի և ոչ խոնաւութիւն ջուրցն ամուլ ինչ եղեն յակնարկելոյ անտի հրամանին, յայնմիկ՝ զի և մժղուկ և ճանճիռն 'ի նմանէ ծնան. և այս այսր աւուրս, որ լինին քարոզ և վկայ առաջնոյն։ Փոյթ և տագնապ եղև 'ի ջուրս

և յիւրաքանչիւր 'ի ժողովս իւրեանց՝ թէ ո 'ի նոցանէ աւելի քան զընկեր իւր աճեցուսցէ և բազմացուսցէ զազգս և թռչունս առանց թուոց և առանց համարոյ։ Արդ թռչունք որ 'ի վերոյ են՝ քան զջուրսն, և որ 'ի ներքոյ 'ի ջուրսն, թևք երագունք են նոցա. զի նոքօք 'ի վերայ օդոց փառաւորին. և նոքօք դարձեալ 'ի մէջ ջուրցն փախկանան։ Եւ զի մի՛ արգելցի պատուէր հրամանի արարչին 'ի ներքոյ կարողութ̃եց, արար և զազգս բազումս 'ի ջուրս առանց թուոյ. զի և նոքա քարոզեսցեն զզօրութ̃ի արարչութ̃ե նորա։ "Բղխեսցեն, ասէ, ջուրք զեռունս կայտառս շունչ կենդանի"։

Յաւուրն վեցերորդի Ադամ։ Եւ զի ասէ "Ըստ պատկերի կերպարանաց մերոց", ըստ նմանութեան պատկերի կերպարանաց իշխանութ̃են ասէ. զի որպէս իշխանութ̃ին Աստուծոյ 'ի վերայ ամենայնի, սոյնպէս և տէրութ̃ին Ադամայ 'ի վերայ ամենայնի եղաւ։ Մեկնէ բանն որ զկնին ասաց. "Իշխեսցեն, ասէ, 'ի վերայ ձկանց ծովու, և զազանաց երկրի, և թռչնոց երկնից, և 'ի վերայ անասնոց, և 'ի վերայ ամենայն երկրի"։ Արդ արար զնա գլուխ և առաջնորդ խօսուն 'ի վերայ այնոցիկ՝ որ առանց բանից են. և զայն որ իմաստութ̃բն գիտութ̃բ էր 'ի վերայ այնոցիկ՝ որ 'ի բնութ̃ի. զի նա վարիչ և առաջնորդ անձին իւրոյ լեալ էր, և իմաստութ̃բ անձնիշխանութ̃ե իւրոյ եղև վարիչ այնոցիկ՝ որ յիւրեանց բնութ̃ի կացեալ են. յայսմիկ անուանեցաւ նա ըստ նմանութ̃ե պատկերի կերպարանաց Աստուծոյ։ Եւ զի խտեղծուած ձեռաց Աստուծոյ կոչեցաւ, վասն պատուի փառաց մարդոյն ասաց. թէպէտ և 'ի պատմել գրոցն՝ ասաց թէ առ հող, և ստեղծ զնա։ Զի սովորութ̃ի է գրոց զկամելն Աստուծոյ՝ գործ ասել. որպէս այն զի ասէ, մարդ պատկեր Աստուծոյ է. ոչ զբնութ̃ի ասէ, այլ զիշխանութ̃ի ազատութ̃ե նորա ասաց կերպարան. և որ զկնի ամենեցուն արար զնա, զի մի՛ կարծիցէ մարդն թէ իւր իցէ արարչութիւնն։

Եւ զի 'ի վեց օր կատարեաց, զի յայտ արասցէ զառաջինն և զմիջինն և զվերջինն, և արասցէ կարգ-

գործոց իւրոց, զի մի՛ կարծիցի աշխարհս թէ չփոթեալ է, և չիք սկիզբն և կատարած։ Եւ զի ծանիցէ ոք թէ ո՞ր զկնի որո՛յ իցէ· և ո՞ր առաւել քան զընկեր իւր։ Այլ կարող էր Աստուած 'ի մի ակնարկելն կատարել զամենայն· զի որպէս արար վասն մեր, սոյնպէս հոգայ վասն մեր· զի մի՛ արկցէ զմեզ 'ի ծուփս խորհրդոց, արար կարգաւ։ Եւ զի ասէ "Հանգեաւ յաւուրն եւթներորդի", վասն կատարման գործոյն ասէ հանգչել· զի 'ի նմին իսկ յաւուրն շաբաթու կատարեցան գործքն, և հանգեաւ 'ի գործոյն իւր, յայնմիկ զի ասէ "Ետես Աստուած զի բարի է յոյժ"։ Եւ զի նկարեսցին դարձեալ 'ի նմա խորհուրդք ճշմարիտ շաբաթուն՝ որ հանդերձեալ է լինել· իբրու զայն զի ասէ, կայ և մնայ շաբաթն Աստուծոյ։ Եւ զի մեծացուսցէ բանիւ զօրն շաբաթուն, զոր ոչ մեծացուցին զնա գործքն· քանզի և եղեն իսկ ոչ 'ի նմա· որպէս զի և վասն պատուոյ նորա լծիցի ընդ այլ աւուրսն՝ որ գործքն գործեցան· և կատարեսցի թիւ շաբաթուն պաշտաման աշխարհիս։

Արար զՄովսէս վկայ անձին իւրոյ Աստուած, և արար զարարածս ամենայն վկայ Մովսիսի· զի յայլումն կարող էր ցուցանել զիշխանութիւն իւր որ 'ի վերայ նոցա 'ի հնազանդելն իւրում զնոսա այլում։ Եւ զի վկայ լինելոց էր նա Աստուծոյ, ետ նմա զանուն Աստուծոյ և զիշխանութիւն Աստուծոյ· զի վկայեսցէ Աստուած 'ի վերայ Աստուծոյ։ Եւ քանզի ինքնին Աստուած կարող է վկայել 'ի վերայ անձին իւրոյ, զոր և ասէ "Բարի է յոյժ"· իբրև զսոյն իսկ զբանս զայս մինչև 'ի Մովսէս ոք ոչ գիտէր, և ոչ զշաբաթն և ոչ զսրբութիւն նորին· վասն այսորիկ վասն դեղոյ նոցա արարիչ նոցա վկայէ։ Զի այն որ գիտէ դպրութիւն, ճանաչէ զինչ գրեալ է 'ի մէջ նորա· սոյնպէս քանզի նա է արարիչ միայն, նա ինքնին գիտէ զինչ թաղեալ կայ յաշխարհի։

Արդ բանիւ հաստեաց հաստիչն զարարածս· վասն այսորիկ թագաւորեալ է բնութիւն նորա 'ի վերայ ամենայն արարածոց, և հնազանդին տէրութեան նորա ամենայն ականջք 'ի լսել· և ծառայեն գործոցն նորա ամենայն շրթունք 'ի պէսպէս բարբառս,

և ամենայն լեզուք պէսպէս ձայնիւք։ Զի եթէ զօրութ̃ բանին արարածքն յոչընչէ հաստատեին, որչափ ևս առաւել արդ զի հաստատեցան՝ ո՞չ առաւել ևս ունկնդիր լինիցին նմա. ածէ զնոսա յինչ յոր կամի, զայն՝ որ ած զնոսա յոչընչէ ըստ կամաց իւրոց։ Արդ զի տայէ իշխանութ̃ի բանին, ած զնա 'ի պէտս իւր արարիչն. այն զի և 'ի լռութ̃ի նորա թաղեալ է զօրութ̃ի նորա, որպէս և 'ի ձայնի նորա. և հնազանդին արարածք լռութ̃ե նորա, որպէս և բանի նորա. և ակնարկելոյ նորա, որպէս և ձայնի նորա։ Արդ հաստատեաց զնոսա բանիւն, և ետ զնոսա 'ի ձեռն բանի. վասն այնորիկ իշխանութ̃ի ունի բանն համարձակութ̃ք ելանել առ նա։ Այս ծնունդք են երկնի և երկրի։

Եւ զի ասեն եթէ յաւուրն եւթներորդի հաստատեցաւ Ադամ, յանդիմանեալ կշտամբին յայնմիկ զի ասէ, յաւուրն վեցերորդի կատարեցան երկինք և երկիր և ամենայն զօրութ̃իք նորա. “Եւ կատարեաց Աստուած յաւուրն վեցերորդի զամենայն զգործըս իւր”։ Եւ զի յայտնապէս 'ի միտ առցես, հայեաց դու որպէս ասէ “Այս են ծնունդք երկնի և երկրի յաւուրն յորում հաստեցան”։ Այս ինքն սկիզբն արարչութ̃ե իւրոյ պատմեաց. “Յաւուրն, ասէ, յորում արար Աստուած զերկինս և զերկիր”։ Ո՞ր օր. այլ այն առաջինն. յայսմ, ասէ, աւուրս ամենայն ծառք դաշտի չև ևս էին, քանզի յաւուրն երրորդի եղեն։ Եւ եթէ ոք ասիցէ թէ չև ևս էր բղխեալ երկիր 'ի ժամանակի իբրև ասացաւ նմա բղխել, ոչ ինչ է այս նման. քանզի յորժամ հրամայեցաւ նմա բղխել, գրեալ է, ասէ, բղխեաց։ Եւ Ադամ, ասէ, չև էր ձեռն 'ի գործ արկեալ յերկիր, այս ինքն յաւուրն առաջնում. այն զի 'ի նմա արար զերկինս և զերկիր. այն իսկ է զոր վերագոյն ասաց։ Եւ զի երկրորդեաց անդ և ասէ. “Ստեղծ Աստուած զԱդամ”, յետ առաջնոյն այնորիկ զի ասաց վասն նորա՝ զի և սոքա ոչ էին 'ի նմա, զպատմութ̃ին երկրորդեաց երագ 'ի վերայ վեցօրեայ ժամանակին։ Դարձեալ յաւելու յասելն. “Տնկեաց տէր Աստուած զդրախտն յԱդեն”. մինչ կանխաւ՝ այս ինքն

յաւուրն երրորդի ընդ այլ ծառսն, այն զի ասէ «Բղխեսցէ երկիր զամենայն ծառ պտղաբեր», յայնմ աւուր տնկեաց զԱդէն դրախտն։

Փիսոն յերկրին Եւիլատայ։ Թերևս Եւիլաթն 'ի սահմանս Սեմայ է. բայց յոսկւոյ անտի և յականցն սուտակին և դահանակին թերևս մեկնեսցի։ Այլ հեբրայեցի ասէ «Անդ մարգարիտ և ականք պատուականք»։ Եւ փոխանակ այնր զի ասէ «Դկլաթ երթայ դէմ յանդիման Ասորեստանի», հեբրայեցի «յարևելից կողմանէ, ասէ, Ասորեստանի»։

«Ոչ է, ասէ, բարւոք զի եղիցի Ադամ միայն»։ Եւ ո՞ւր է այն զի ասէ «Ետես տէր Աստուած զամենայն զոր արար, և ահա բարի է յոյժ». և ընդէ՞ր ոչ է բարի, զի մինչ կանխաւ յառաջագոյն հաստեցաւն արու և էգ։ Եւ զի ասէ «Արասցուք նմա օգնական ըստ նմանութեան պատկերի իւրոյ», ո՞չ արդեօք գիտէր եթէ կործանիչ լինի նմա փոխանակ օգնականի. թէ այդ այդպէս իցէ, բարւոք էր լինել նմա միայն. և զի՞արդ ասաց՝ ոչ բարւոք է. բայց թերևս արդեւք 'ի դրախտի անդ ևս էր նա. զի նա եղև նմա պատճառք։ Եւ ո՞ւր է այն զի ասէ՝ օգնական. այլ այս օգնականս զոր ասէ, վասն կանգնելոյ աշխարհիս արար զնա նմա։ «Ոչ է բարւոք զի միայն եղիցի», վասն կարգաց ծննդեան ասաց, և վասն ազգացն որ զկնի նորա։

«Ադամայ, ասէ, ոչ գտաւ օգնական նման նմա»։ Ուստի՞ արդեւք խնդրեցաւ և ոչ գտաւ. եթէ ասեմք յԱստուծոյ, ոչ լսի. այլ զի կոչեաց նա անուանս կենդանեաց. և ոչ եթէ վայրապար ինչ կամ դուզնաքար, այլ ըստ բնութեան և ըստ հաղորդութեանն և ըստ պիտոյից գործոց նոցա։ Արդ իբրև անուանէր նա, ետես արու և էգ՝ իբրու զուգեալ էր միաբանութեամբ. և նա միայն յատուկ էր. խնդրեաց նա իւր օգնական, և ոչ գտաւ։ Արդ թէպէտ և օգնականք նորա են և գազանք՝ զի նոքօք եգիտ նա զկանգնուածն իւրաց բազմաց, այլ միւս ևս իբրև զի շնորհեցաւ գըտանել իւր հաղորդակից արար զնա Աստուած արարչութեամբ, յայնմիկ՝ զի իշխան արար զնա դնել զանուանս, որպէս և ինքն հաստեաց զանձինս. զի յոր-

ժամ կամեցի նա աստուածանալ՝ գողութե̃ն իւրով յանդիմանեալ կշտամբեցի և ամաչիցէ։ Եւ լեալ իսկ էր ընկեր. եդ Աստուած անուանս ամենայն արարածոց, և զգազանսն Ադամայ պահեաց. զի 'ի գիտութենէ իմաստութե̃ նորա ստասցին զյորջորջումն անուանց իբր զկենդանիս։ Զի ահաւասիկ առանց անուանց իբր մեռեալք են տղայք և մանկունք. անուամբք կենդանանայ այնոցիկ որ կարդանն։

“Ոչ արկ, ասէ, նիրհ 'ի վերայ Ադամայ„. հերքայեցի՝ քուն ասէ։ Եւ զի ասէ “Առ ոսկր մի 'ի կողից նորա և շինեաց զայն 'ի պատկեր կնոջ„, զի սկիզբըն եղիցի աշխարհի. և զի 'ի նմանէ առ զնա, զի կատարեսցի բանն զի ասէ. “Արու և էգ հաստատեաց զնոսա„. և զի մի՛ ոք կարծեսցէ թէ այլ արարիչ է կնոջ։ Եւ զի ոչ փչեաց նա շունչ յԵւայ, զի իբրև շինեաց զկողն՝ համդերձ շնչով կազմեաց զնա. զի ոչ եթէ շունչ 'ի շնչոյ ծնանի՝ որպէս մարմինն 'ի մարմնոյ. “Ոսկր, ասէ, յոսկերաց իւրմէ„։ “Եւ եղիցին, ասէ, երկոքեան 'ի մարմին մի„ և ոչ շունչ։ Այլ զայս ասասցուք. զի 'ի ժամանակին իբրև շինեաց յօդեաց զկողն, ամենայն պիտոյիւք կազմեաց զնա։ Այլ դարձեալ ասասցուք. զի եթէ 'ի հողոյ ստեղծեալ էր զնա որպէս զԱդամն, զձոխութի̃ նախապետութե̃ թերևս իւր յափշտակէր նա։ Եւ ոչ 'ի գլխոյ նորա առ զնա, զի գուցէ համարձակութի̃ ինչ լինիցի նմա։ Զոր օրինակ ամենայն բան գլխոյ է, սոյնպէս և ամենայն լռութի̃ կողի. վասն այսորիկ պատուիրէ Առաքեալ և ասէ. “Զի մի՛ խօսիցի յեկեղեցւոջ որպէս խօսեցաւն 'ի դրախտի անդ„։ Այլ թերևս տրտմեցան կանայք, զի լսեն զհնազանդութիւն իւրեանց. այլ ուրախ լիցին, զի աւելադոյն է նոցա քան զԱդամայ։ Զի Ադամ յանխլիրտ հողոյ ստեղծաւ և կազմեցաւ. բայց նոքա 'ի խօսուն կենդանւոյ առեալ են. և մեծասցի անձն նոցա։ Զի որչափ շփոթեաց Եւայ մայր նոցա զկեանս մարդկութե̃, սոյնպէս ուղղեաց և կանգնեաց զկեանս աշխարհի Մարիամ կոյս, որ ծնաւ զՔրիստոս։

Եւ զոր օրինակ ոչ էր բաժանեալ կողն 'ի մարմ-

նոյ անտի մինչդեռ չև էր Եւայ, սոյնպէս ոչ որոշե-
ցաւ 'ի նմանէ իբր ամուսնացաւ յետոյ. և իբրու թէ
'ի տեղւոջ իւրում բևեռեցաւ տնկեցաւ վերստին.
"Եղիցին, ասէ, երկոքին 'ի մի մարմին": Եւ զի ասէ
"Ոսկր յոսկերաց իմոց է". այս ինքն զի ոչ եթէ մար-
մին այլոյ մարդոյ. և իբրև յերազի իմացաւ նա՝ զի
առեալ եղև 'ի նմանէ կողն, զի 'ի քուն էր: Կամ
վասն այնր՝ զի յորժամ իմացի վասն նորա զի ած
կացոյց զնա առաջի Ադամայ, զի ինքն կինն եկեսցէ
առ այրն: Փոխանակ այնր զի ասէ "Այս այժմիկ
ոսկր յոսկերաց իմոց", հեբրայեցի՝ "Այս ամուսին
իմ, ասէ, ոսկր յոսկերաց իմոց": Ի ժամանակի իբ-
րև հաստեցաւ՝ մի հաստեցաւ. և յորժամ օրհնե-
ցաւ՝ եղեն նոքա բազումք: Եւ որպէս մինչ 'ի նմայն
էր Եւայ՝ ընդ նմա ընկալաւ զօրհնութիւն, զի ասէ.
"Աճեցէք և բազմացարուք". սոյնպէս մինչ 'ի նը-
մայն էր՝ ընդ նմա ընկալաւ զպատուէր հրամանին:

ԳԼՈՒԽ Բ

"Եւ ասաց, ասէ, օձն ցկինն. զի՞նչ է այս զի ա-
սաց տէր Աստուած՝ թէ յամենայն ծառոց որ իցեն
'ի ներքս 'ի դրախտի այդր մի՛ ուտիցէք": Զի ետես
նա զնոսա զի ոչ հպէին նոքա ընաւ ընդ կողմն ծառոյն
զոր պատուիրեաց նոցա թէ մի՛ ուտիցէք 'ի նմանէ.
այլ թէ 'ի քանի ծառոյ պատուիրեալ էր նոցա թէ
մի՛ ուտիցէք, ոչ գիտէր նա. և եթէ զիարդ և որչափ
ծառոյ համարձակութիւն տուեալ էր նոցա, բանսար-
կուն ոչ էր գիտակ. վասն այսորիկ եհարց զնա: Այլ
Եւայ՝ անմեղ ետ զպատասխանին. ասէ. վասն միոյ
առաք մեք պատուէր հրամանի զի մի՛ կերիցուք և մի՛
մեռցուք: Այլ նա իբրև հոգաբարձ մի և վերակա-
ցու, ասէ. զի թէպէտ Աստուած ըստ բարերա-
րութեան իւրում հրամայեաց յամենայն ծառոց դը-
րախտիդ ուտել, սակայն ահաւասիկ վասն նախանձու
իւրոյ արգել զձեզ 'ի միջէ անտի՝ զի մի՛ ուտիցէք, և
լինիցիք իբրև զնա:

"Եւ ետես, ասէ, կինն զի բարի է ծառն 'ի կե-

րակուր”։ Յայտ արար բանն, զի նոյն ժամայն իբրև լուաւ Եւայ՝ վառեցաւ բորբոքեցաւ, և այրեցին զնա կարծիք նենգաւոր թշնամւոյն։ Եւ այն որ հեռացեալ էր երբեմն 'ի ծառոյն զի մի՛ մերձեսցի առ նա, ժպրհեցաւ համարձակեցաւ և անց զսահմանաւն. “Ետես, ասէ, կինն զի բարի է ծառոյն կերակուր”։ Այս յայտ առնէ՝ թէ մինչ չև մերձեցեալ էր առ ծառն, ցանկութ̃բ իւրով եկեր զնա։ Եւ զի ասէ “Հաճոյ աչաց հայելոյ”. զի իբրև լուաւ՝ անդէն ցանկացաւ 'ի մտի իւրում. վասն յաւելլոյն՝ որ եղև ըստ խրատու օձին, անուանեաց ցանկութ̃ի։ Եւ այն զի ասէ. “Գեղեցիկ էր 'ի տեսանել”, յայտ արար զի ոչ նոյն ժամայն վաղվաղակի մերձեցաւ առ ծառն, այլ յետ բազում խորհրդոց անցեալ կայր և հայէր ընդ նա։ Եւ քանզի փութացեալ ձեպեալ էր մեծանալ ըստ լսելոյ խրատու օձին, ոչ արար պատիւ Ադամայ և նախ նմա ետ. այլ ինքն եկեր, և ապա ետ Ադամայ։ Եթէ մերձենայք, ասէ, առ նա՝ ոչ մեռանիք. զի ասաց՝ թէ աստուածք լինիք։ Առ Ադամ՝ զի լուսով ստեղծեալ էր, ոչ իշխեաց մերձենալ. այլ առ Եւայ, զի 'ի քնոյ առեալ էր զնա ընկեր և դրացի և դուրք մահու. զի գիտասցէ Եւայ և ծանիցէ զի մահ եմոյծ խրատու իւրով. որպէս և քուն յորոշելն իւրում յԱդամայ։

Արդ քանզի կերպարանս բանի զգեցաւ օձն, այն որ ոչ էր բնութ̃բ բանաւոր, յայսմիկ առաւել գայթագղեաց յանձն իւր Եւայ 'ի զարմանալեաց անտի. զի ետես զանխօս օձն խօսուն եղեալ. զի իբրև նոր իմն լուաւ զբանն 'ի նմանէ և զարմանալի, և վասն այնորիկ զխրատն նորա փութապէս ընկալաւ։ Նախանձեցաւ ընդ նա սատանայ տկարացուցանել և խոնարհեցուցուցանել զնոսա, և արար իւր կերակուր զնոսա, որպէս զի Աստուած բարկասցի 'ի վերայ նոցա։ Գրեալ է 'ի գիրս՝ ասէ. քանզի իշխանն անօրէն իբրև կամեցաւ աստուածանալ՝ ձեռն արկանէր 'ի նոսա, և զամենայն մարդիկ մեղօք կապէր։ Նա և անուն իւր իսկ վկայէ վասն խոտորելոյ յանցուածոց իւրոց։ Այլ բարերարն իբրև ետես զնա թէ անց ըստ չափ բնութ̃ն իւրոյ, ած եմոյծ

զստեղծումն հաստելոյ Ադամայ 'ի մէջ աշխարհի ․ եւ 'ի վերայ նորա զանուն նմանութեան պատկերի կերպարանաց իւրոց վասն յանդիմանութեան սատանայի ․ զի յայտ արասցէ թէ որպէս պատկերի նորա հնարեաց նա մնասել 'ի մէջ երկրի , սոյնպէս 'ի վերայ նորա կամեցաւ նա բարձրանալ երբեմն , իբրեւ աստուածանալ , ասէ , կամեցաւ ․ և այլ եւս ։ Արդ լուաւ նա զի ասացաւ Ադամայ , թէ ուտիցէք՝ մեռանիցիք ․ և խորհեցաւ նա վասն մահու նոցա , որպէս զի արգելցէ և կարճեսցի աշխարհս , և մի սերասցի և բազմասցի ․ և վասն այնորիկ ետ նոցա խրատ ուտել 'ի ծառոյ անտի ։

Ո՜ օձն , ասեն , խորամանկ և զծառն ցանկալի և զկին ամուսին նորա՝ բոլս արար զնոսա Աստուած վասն քննութեան ազատութեան Ադամայ ․ զի եթէ յարիցի 'ի նա պատուէրն , և ընդելանիցի ընդ նմա ։ Այլ ասեն ․ զոր օրինակ խնդրեաց սատանայ զստացուածսըն Յոբայ և տուաւ նմա՝ զի եղիցի նա վասն քըննութեան Յովբայ , նոյնպէս խնդրեաց սատանայ՝ զի տացի խօսք բանի օձին , զի 'ի ձեռն այսր՝ որ խորամանկս է քան զամենայն գազանս , եկեսցէ արասցէ ընդ նմա մարտ պատերազմի , ընդ այնմիկ՝ որ առ զիշխանութիւն 'ի վերայ գազանաց և սողնոց ։ Եւ զոր օրինակ առ Յոբ բարի արար տէր իւր զի առաքինասցի նովաւ , և Ադամայ առաւելութիւն առնէր՝ եթէ ոչ փութացեալ էր , և 'ի պատճառս ագահութեան իւրոյ սուտ արարեալ զարարիչն իւր ։

Արդ բան նոր տուաւ օձին որպէս և գրաստուն ժամանակեան միոյ ․ և ոչ է գրեալ՝ ոչ զի բարձ 'ի գըրաստուէ անտի , և ոչ զի ետ օձին , և ոչ զի ետ Ադամայ ։ Եթէ այդ այդպէս է , իսկ զի՞ մեղաւ օձն ․ զի ահաւանիկ բան առ և առաքեցաւ ։ Արդ որ ինչ 'ի վերայ սատանայի ասի , և 'ի վերայ նորա նոյն իսկ է ։ Բայց ընկալաւ նա զպատիժս պատուհասից , փոխանակ զի նա եղեւ պատճառք մահու նոցա ․ և զի անկցի ահ և երկիւղ 'ի վերայ այնոցիկ որ ունկնդիր եղեն և հնազանդեցան նմա ․ իբրեւ զայն զի ասէ ․ “Անիծեալ եղիցի երկիր 'ի գործս քո „ ․ և “Չարն գալոց է , բայց վայ իցէ այնմ՝ յորոյ ձեռն չարն գայ-

ցէ»։ Այլ ընկալաւ զպատիժս օձն՝ կապեալ բռնութ՟ն. զի գիտասցէ և ծանիցէ թէ որչափ մեծ են յանցանք տիրացեալ ազատութ՟ն։ Զի զոր օրինակ պատուէր հրամանի ետ քարկոծ լինել անասնոցն յորում մարդն մտաբերիկ լինէր, ոչ եթէ զի անասունն կամեցաւ ընդ պղծութ՟ն՝ այլ զի եղև նա պատճառք մահու այնորիկ՝ որ ընդ նմա պղծեցաւ, նոյնպէս և օձն՝ ոչ եթէ զի գիտակ էր նա զօրութ՟ե նենգաւորին արժանի եղև անիծից, այլ փոխանակ զի եղև նա անօթ սպասու պաշտաման թշնամւոյն՝ ընկալաւ և նա զպատիժս պատուհասից։

Եթէ Աստուած, ասէ, ետ նմա բան, և եթէ սատանայ խօսեցաւ նովաւ, վասն է՞ր բարձ 'ի նմանէ զոտս նորա՝ եթէ այլ արշաւեսցի նա. կամ ընդէ՞ր ետ նմա հող կերակուր. զի ոչ եթէ նա դարձոյց զԱդամ 'ի հող։ Եւ արդ դու եկեալ զվրէ՞ժ օձին պահանջես՝ եթէ ընդէր ընկալաւ զպատիժս. ասա մեզ ընդէ՞ր քարկոծ լինէր անասունն որ պղծեցաւ 'ի մտաբերել այնորիկ՝ որ եղև նմա պատճառք։ Եւ ընդէ՞ր սատակեցան գազանք և թռչունք 'ի ջրհեղեղէ անտի։ Եւ զի՞ մեղան ոչխարք և եզինք և թռչունք, զի տուեալ են հանապազօր 'ի զենումն։ Զի՞ մեղան հօտքն Յովբայ, զի տուան 'ի կիզումն հրոյ. և հազարքն խոզից, զի շնորհեցան լեգէոնի։ Եւ եթէ վասն սրբոցն ոչ դատին, և մի՞ վասն անիծեալ օձին դատիցին։ Իսկ վասն է՞ր մեռանէր զուարակն սուրբ փոխանակ յանցաւոր քահանային. և զի՞ մեղան աղաւնիքն և տատրակքն, որ մատչէին փոխանակ տղայոցն. և կամ զի՞ մեղաւ գառնն որ զենեալ լինէր փոխանակ փրկութ՟ե ժողովրդեանն. կամ քօշն, որ պատարագեալ լինէր վասն յանցանաց ժողովրդեանն։ Զոր օրինակ եղեն անասունքն փոխանակ փրկութ՟ե ժողովրդեանն և վասն քաւութ՟ե նորին, և 'ի նոցանէ սպաս պաշտաման և 'ի կերակուր ազգաց, նոյնպէս եղև օձն վասն փորձութ՟ե և քննութ՟ե Ադամայ. և ընկալաւ նա զպատիժս պատուհասից վասն պատուոյ փառացն Ադամայ։ Նա և 'ի վերայ ստուգաց արդարոցն և մարգարէիցն, զի համբերին զթշնամանս անարգանաց, վասն մարդասիրութ՟ե

ասի ։ Դարձեալ զի՞նչ մեղաւ Մովսէս, զի անարգե֊
ցաւ 'ի ժողովրդենէ անտի · և Եղիա, զի հալածե֊
ցաւ յԵզաբելայ · և Երեմիայ, զի ընկղմեցաւ 'ի գուբ
տղմոյն · և Եզեկիել, զի կապեցաւ շղթայիւք · զոր
և ասէ իսկ Աստուած · “Ջնջեցի ես զմարգարէս և
սատակեցի զնոսա 'ի բանս բերանոյ իմոյ „ ։ Եւ եթէ
մարգարէքն թշնամանեցան անարգեցան վասն ժո֊
ղովրդեանն, և տէր մեր եկն եւ 'ի խաչ վասն կենաց
մերոյ, իսկ արդ ո՞վ իցէ որ տրտնջիցէ և ցասնուցու
վասն փոքր մի պատժի զոր ընկալաւ օձն ։ Կամ թէ
կամէիր դու զի Ադամ ընկալցի զանէծս, և օձն ա֊
զատեսցի՞ 'ի պատուհասից · և զի Ադամ կորուսցէ
զփառս իւր, և օձն և ոչ զո՞տս իւր ։ Եւ քան զնոյն
պատիժն պատուհասից դառն էր այսնոցա, զի զնեն֊
գաւոր թշնամին իւրեանց առանց պատժոց տեսա֊
նէին ։

Եւ եթէ ասիցես թէ ա՛յլ է որ եղև նմա պատ֊
ճառք, անցանէր ստուգութի և առ նա պատժօքն
պատուհասիւք այնորիկ՝ որ եղև նմա պատճառք ։
Այլ զոր օրինակ կորստեամբ խոզիցն գիտացաք զչար֊
չարանս լեգէոնին, սոյնպէս տկարութըն զվատթա֊
րութի օձին իմացաք և ծանեաք զչարչարանս այնո֊
րիկ՝ որ պաշտեաց և կատարեաց 'ի նմա զկամս իւր ։
Զարչարեցաւ տանջեցաւ սատանայ 'ի ծածուկ 'ի
ձեռն պատժոյն՝ որ եկին հասին 'ի վերայ օձին · բե֊
կաւ խորտակեցաւ փշրեցաւ թշնամին՝ յորժամ ե֊
տես զանօթն իւր՝ զի 'ի պորտ և յորովայն իւր սո֊
ղէր ։

Եւ զի ասէ “Բացան աչք նոցա „ · փոխանակ զի
մերկացան զհանդերձն փառաց իւրեանց, և մնացին
մերկ ամօթալից խայտառակեալ · իբրև զայն զի
ասէ, առագաստեալ էին սիրտք նոցա և ոչ իմա֊
նային ։ Սոյնպէս և յայսմ վայրի մերկք էին և ոչ գի֊
տէին, զի ծածկեալ էր 'ի նոցանէն որչափ 'ի ներքոյ
պահպանութե պատուիրանին էին ։ Եւ իբրև անցին
զպատուիրանաւն՝ բարձաւ անց 'ի նոցանէ հանդերձն
փառաց, զի լեալ էր նա իբրև զվարագոյր մի մեր֊
կութե նոցա · գիտացին և 'ի միտ առին թէ ուստի
անկան ։ Արդ տեսէք զձախողանսն · ոչ եթէ աս֊

տուածք են որպէս և ասաց օձն , այլ մերկք են . որպէս և երկիր փշաբեր փշալից փոխանակ դրախտին փափկութե : Վասն ուրախութե ցնծութե ասաց նոցա՝ բայ "Բանայցեն աչք ձեր ,, . և բացան աչք նոցա յամօթ անարգանաց : Այլ յառաջ քան զվճիռն հրամանին ցոյց ինքն ծառն զսուրն մերկութե նոցա . զի գիտութիւն որ 'ի նմա՝ այս էր , զի արու և էգ առանց կերակրոյ նորա ոչ գիտէին ամաչել 'ի միմեանց : Այլ ծառն գիտուե բարւոյ և չարի՝ ոչ եթէ բնութե իւրով բարի էր կամ չար . զպահել պատուիրանին և զանցանել զպատուիրանաւն կոչեաց բարի և չար . զի ոչ եթէ կերակուրն պտղոյն խիստ էր , այլ ինքն դնել մտացն վասն կերակրոյն : Զի եթէ մոլորեալ խաբեալ էր նորա , կամ ժպրհեալ կերեալ էր առանց այսր խորհրդոյ աստուածանալոյ , թերևս գտեալ լինէր նորա զողորմութիւն գթութեց : Արդ անցանելն զպատուիրանաւն սպան զնա , և ոչ եթէ ծառն . զոր օրինակ պատուէր հրամանին նեխեաց զմանանայն առանց բնութե իւրոյ . և վկայէ այն որ եղև երկոցուն աւուրց՝ այնու հանդերձ՝ որ պահեցաւ 'ի սափորն յազգս ազգաց :

Այլ ծառն կենաց ընդէր տնկեցաւ . զի 'ի կատարածին է պիտոյ նա այնոցիկ որ կենդանանան : Այլ նման է այս՝ զի 'ի ծառոյն յայնմանէ տուեալ լինէր նմա ուտել , թէ համբերեալ ալեացն ժամանակեան միոյ և անարգեալ էր զխրատ օձին : Ոչ եթէ զի ստեաց նմա , նա և այս իսկ յոյժ չար է՝ եթէ քանզի չլինէին իրքն , ոչ առնէ զնոսա ոք . այլ արժան է՝ թէպէտ և ճշմարիտ ասաց օձն , կալ և մնալ Ադամայ առ պատուէրն տեառն իւրոյ . Վասն այսորիկ վաղվաղակի փութապէս տագնապաւ հանէ ըզնա առ 'ի ծառոյն օրհնելոյ , որ պսակէ զարդարս պըտղով իւրով . զի եկեսցէ առ երկիրն անիծեալ , որ յամօթ առնէ զյանցաւորսն փշովք իւրովք . այս ինքն փոխանակ պատուիրանին պատիժք պատուհասից : Եւ եթէ էր պահեալ նորա , կատարեալն լինէր գիտութե բարւոյ և չարի . ապա գիտացեալ էր այնուհետև թէ բարի է պահել զպատուիրանն , և չար է անցանել զպատուիրանաւն :

Այլ իբրև ետես Ադամ զծառն կենաց, ցանկացաւ նմա և յղացաւ զգեղ նորա 'ի ծածուկ տեսլեամբ, որպէս և որոջքն զգեղ գաւազանացն։ Եւ թուեաւ խմորն կենաց 'ի ծածուկ յազգս նորա, մինչև ընկալան զպատեհն կատարածին իւրեանց 'ի գալստեանն անդրանկանն. իբրև զայն՝ զի ասէ. Թագաւորք և արդարք ցանկացան զծառն կենաց։ Ծառ կենաց կոչեաց յայտնապէս։ Թէ այդ այդպէս իցէ, արժան էր և զսա ծառ մահու կոչել. ապա թէ ծառ մահու էր, գիտութ՟ի զիա՞րդ տայր նա. զի ահաւասիկ մահ'ի գիտութ՟է զրկէ, և հարկանէ տանի զմարդ։ Եւ եթէ ծառ մահու էր, ոչ եթէ պատուէր'ի մէջ մեղաց և արդարութ՟ե տայր Ադամայ, այլ զգուշութ՟ի սպանող արմատոյ. զի այլ է պատուէր սպանող, և այլ է արմատ սպանող։ Եւ եթէ ծառ կենաց վայել էր այնմ դրախտի, իսկ ծառ մահու ընդէ՞ր։ Եւ ծառ կենաց՝ զի յանդիմանեալ խայտառակեսցին աղանդք հերձուածողաց. զի ասեն՝ թէ մարմին բնութ՟ի մահկանացու է, և ոչ կարէ կեալ. զի այն որ հաստատեաց զարմատս՝ զի ճշմարիտ սպանանեն զմարմինս, հաստեաց և ծառ՝ որ կարող է կեցուցանել զնա։

Յառաջ մինչ չև մեղուցեալ էր Ադամայ՝ մարմին նորա մարմին էր, զի ոչ կարէր մահ լուծանել առանց մեղաց զնա. որպէս երկաթ՝ զի ոչ կարէ ճարտար լուծանել զնա առանց հրոյ։ Այլ կարող է երկաթ 'ի ձեռն հրոյ ընդունել զչարչարանս դարբնաց. սոյնպէս և մարմին 'ի ձեռն մեղաց ընդունի զչարչարանս պատժոց պատուհասից։ Զոր օրինակ զի մի էր տեսիլն Թամարայ յառաջ քան զմեղսն, և զկնի մեղացն սիրեաց զնա Հեմնոն վասն գեղոյ նորա, և դարձեալ ատեաց զնա, իբր ոչ եթէ փոփոխումն ինչ եղև գեղոյ նորա։ Սոյնպէս և ծառն՝ մի էր գեղ նորա յառաջ քան զուտելն և զկնի ուտելոյն 'ի նմանէ։ Սիրեցին զնա որպէս և Հեմնոն՝ յառաջ քան զանցանելն զպատուիրանաւն. և դարձան ատեցին զնա որպէս և Հեմնոն զկնի մեղացն պաշտելոյ։

Նա և ինքն իսկ բարերարն ոչ յայտնեցաւ յանկարծակի, զի մի՛ զարհուրեսցին նոքա. և ոչ ծագեաց որպէս և փայլակն, զի մի՛ խռովեսցէ զնոսա. այլ

արար ձայն ոտից իւրոց և առաքեաց առաջի իւր, զի ուսուսցէ ապաշխարութիւն անզեղջ և անապաշաւ սրտին ։ Եւ յիջանել նորա 'ի դրախտ անդր՝ նկարեցաւ գալուստ նորա յաշխարհս ․ և 'ի ձայն նորա, զի եկն առաջի նորա, դրոշմեաց զՅովհաննէս ․ զի առաքելոց էր նա առաջի երեսաց նորա ։ Եւ փոխանակ այնր զի ասէ "Լուան զձայն գնալոյ տեառն Աստուծոյ,,, զի իջեալ գնայր 'ի ներքս 'ի դրախտի անդ ընդդառնալ աւուրն, հեբրայեցի՝ " 'ի ձգել աւուրն,,․ այսինքն 'ի միոյ դարձից աւուրն յերեկս կոյս ։ Ադամայ ասէ " Ո՞ւր ես,,․ զի ինքն եղիցի յանդիմանիչ անձին իւրոյ ։ "Զձայն քո, ասէ, լուայ,, ։ Թէ ձայնի իմոյ լուեալ էիր, ոչ մերկացեալ խայտառակեալ լինէիր դու ։ "Ո՞վ, ասէ, եցոյց քեզ թէ մերկ իցես դու․ բայց եթէ 'ի ծառոյ անտի զոր պատուիրեցի քեզ կերա՞ր դու,, ։ Եկն եհաս 'ի վերայ նոցա անդ ամօթ․ զի յայտ արասցէ՝ թէ ինքն գործն արարչին պատերազմեցաւ ընդ նմա, այն՝ որ կամեցաւ բարձրանալ 'ի վերայ արարչին ։ Եւ զի յայտ արասցէ նմա թէ անդ էր Աստուած յայն ժամու՝ զոր կարծեացն թէ հեռի իցէ անտի ։

"Կինս, ասէ, զոր ետուր ինձ, սա յանցոյց զիս,,․ և կինն ասէ․ "Օձն խաբեաց զիս,, ։ Վասն այնորիկ արար զնա առանց ոտից, փոխանակ զի ընթացաւ նա 'ի չարիս ։ "Ի պորտ և յորովայն քո, ասէ, գնասցես դու,,․ զի ոտիւք իւրովք չոգաւ նա ։ "Եւ հող կերիցես զամենայն աւուրս կենաց քոց,,․ փոխանակ զի արարեր դու զնոսա հող ։ "Եւ թշնամութիւն եդից 'ի մէջ քո և 'ի մէջ նոցա,,․ փոխանակ զի արարեր դու զնոսա թշնամիս Աստուծոյ ։ "Նա սպասեսցէ քում գլխոյ,,․ այն զի բղխեաց և խօսեցաւ զանօրէնութիւն ։ "Եւ դու սպասեսցես նորա գարշապարի,,․ փոխանակ զի ընթացաւ նա առ ծառն ։ Այլ ոչ կալաւ զոյժ ողորմութեանն յորժամ ետես թէ 'ի ձեռս ետ սատուգութեան զթոյլ գարշապարն ահաւոր թունաց․ վասն այսորիկ կանխեաց խառնեաց անդ՝ զի "Եւ նա, ասէ, սպասեսցէ քում գլխոյ,, ։ Զոր թէպէտ և չարն վասն չարութեանն իւրոյ անխայութեան առնել ոչ գիտէ, սակայն գոնէ վասն ապականութեան և չարչարանաց իւ-

րոց արգելցի և կարճեսցի փոքր մի, զի մի կատարեալ մերձաւոր լինիցին Թոյնքն նորա առ գարշապարս մարդկութեան։

“Առ ցկինն ասէ․ բազմացուցանելով բազմացուցից զտրտմութիւնս և զհեծութիւնս, զցաւս և զյղութիւնս քո”։ Փոխանակ զի կարծեաց նա՝ թէ որդիս Աստուծոյ ծնանի, և որդիք նորա աստուածապէս ծնանին, վասն այսորիկ “Ցաւովք և տրտմութեամբ որդիս ծնցես”։ Եւ զի հաստատեաց և հաւատաց օձին և եկեր ինքն նախ, և կարծեաց թէ մեծացաւ ձոխացաւ քան զայր իւր, վասն այսորիկ “Դարձ քո առ այր քո եղիցի, և նա տիրեսցէ քեզ”․ որպէս և իշխան եդ նմա անուն, և կոչեաց զանուն կնոջն Եւայ։

“Առ ցԱդամ ասէ․ փոխանակ զի լուար ձայնի կնոջդ, անիծեալ եղիցի երկիր վասն քո”։ Զի պատկերին իւրոյ պատիւ արասցէ, անէծ զերկիր փոխանակ Ադամայ։ “Անիծեալ եղիցի երկիր վասն քո”․ այն զի վասն քո օրհնեցաւ նա։ “Ցաւովք և տրտմութեամբ կերիջիր զդա”․ փոխանակ զի կարծեցեր դու թէ իբրև զԱստուած բնակեսցես դու ՚ի վերայ դորա։ “Ցաւովք և հեծութեամբ կերիջիր զդա”․ փոխանակ զի կարծեցեր դու հանգչել ՚ի դմա։ “Փուշ և տատասկ բուսուսցէ քեզ” փոխանակ ծառոյն կենաց։ “Կերիցես բանջար վայրի” փոխանակ պտղոյ դրախտին։ “Եւ ՚ի քրտան երեսաց քոց կերիցես զհաց քո”․ փոխանակ զի կարծեցեր դու հանգստեամբ ուտել զնա։ “Մինչև եղիցի քեզ դարձ յերկիր՝ ուստի ստեղծար դու․ զի հող ես դու” այսինքն հող ես դու ըստ բնութեան քում, և ոչ ես Աստուած՝ որպէս և ՚ի մտի քում եդիր։ Ի ժամանակի իբրև հաստէր նա զհողն՝ պատկեր Աստուծոյ կոչեաց զնա և ոչ հող․ և յորժամ կամեցաւ հողն լինել իբրև զարարիչն իւր, ՚ի բաց արար ՚ի նմանէ և զայն՝ զի ասէ պատկեր Աստուծոյ․ ասէ․ “Հող ես դու և ՚ի հող դարձջիր”։

Արդ եթէ էր հաստատեալ կապեալ մտացն Ադամայ ՚ի պատուէրն արարչին իւրոյ, ոչ լինէր լուծեալ մարմին նորա յօդելոյ անտի․ և եթէ էր կացեալ մնացեալ նորա հաւատովք, ոչ լինէր նա մերժեալ ՚ի

ծառոյ անտի կենաց ։ Եւ թշնամութի̃ 'ի մէջ նորա և 'ի մէջ ծառոյն կենաց , փոխանակ զի արար նա զբարեկամութի̃ 'ի մէջ իւր և 'ի մէջ թշնամւոյն ։ Եւ փոխանակ զի միաբանեաց նա ընդ վնասակարին իւրոյ , երկմտեաց 'ի նմանէ օգնական նորա ։ Եւ զի ոչ կապեաց նա 'ի փորի իւրում զպատուէրն , ոչ ետ նմա թոյլ լինել 'ի դրախտի անդ ։ Չէր ինչ մարթ , իբրև եղև նա թշնամի արարչին , եթէ եղիցի նմա բարեկամ գործն արարչին . կամ յորժամ ապստամբեաց նա յարարչէ անտի , եթէ հնազանդեսցի նմա արարածք արարչին ։ Թող նա զպահել պատուիրանին, զի նովաւ թագաւորէր նա . թող զնա շունչն կենդանի , զի նովաւ հաստատեալ կայր նա ։ Հաւատարիմ եղև նմա քան սրտին . նա և ոչ վճիռն հրամանի դատաւորին սուտ ինչ եղև առ նմա . յայնմիկ զի հաւատաց նա սրտին , ուսիր թէ որչափ հաւատարիմ է քան ճըշմարտին ։

Այլ եւ նա ընդ սպանողին իւրոյ ուխտ սիրոյ , և առ բարերարն իւր դնել խորհուրդ չարութե̃ . զի 'ի գալն իւրում առ ծառն՝ զհաստատութի̃ խրատու օձին ցուցանէր . և յուտել իւրում 'ի ծառոյ անտի՝ զա̃ծ սուտ առնէր , իբրու զի թէ նախանձու արգել զնա 'ի նմանէ ։ Այլ իբրև ամաչեաց և մերձեցեալ յանդիմանեցաւ , և մերկացեալ խայտառակեցաւ , ապա ետես նա զնախանձն առ նենգաւոր թշնամին իւր , և զսէրն առ արարիչն ։ Այլ իբրև փորձանք վարդապետ եղեն նմա , յայնժամ դնելի մտացն 'ի միջոյ բարձաւ , և եկն եհաս վճիռ հրամանին , որ 'ի մէջ ա̃յ և 'ի մէջ մարդոյն՝ զուարթ երեսօք . և փախեաւ ուխտն՝ որ 'ի մէջ օձին էր և 'ի մէջ մարդոյն՝ ամաչեցեալ երեսօք . զի դատաւորն[1] գալ փութայր , և նենգաւորն փախչել և մարդոյն թաքչել , վաղվաղակի խաղաց ելանել նենգութի̃ն . խեթեաց յանձն իւր թշնամութի̃ . եւ զերեսս իւր 'ի փախչել ։

Ազատութիւնն դատաւորին 'ի վերայ միոյ ընկեց զհարցանելն իւր . այլ յանցաւորք 'ի վերայ միմեանց ընկենուին զյանցանսն իւրեանց ։ Չկտեցոյց տարա-

1 Յօրինակին դատաւորն։

ծեաց դատաւորն զհարցանելն իւր 'ի վերայ ամենեցուն, որ զի որսասցի 'ի նոսա զյանցուցիչն ամենեցուն ։ Որսացաւ զյանցանման նախ յԱդամ, տես՝ թէ Եւայ է, և գնաց ․ և եկն առ Ադամ, որսաց զնա դարձեալ յԵւայ ․ և գտաւ զի յօձէ անտի ․ ել գնաց և եկն առ Եւայ ։ Իբր ետես ա̃ծ թէ օձն եղև ոտք յանցանաց, արար զնա առանց ոտից ․ վասն որոյ եղև ոտք ամենայն յանցանաց ։ Բերանոյն Ադամայ գտաւ տալ պատասխանի ․ ասէ "Կինդ ետ ինձ" ․ Եւայի՝ "Օձն, ասէ, խաբեաց զիս" ։ Բերան օձին զլացեալ զրկեցաւ 'ի պատասխանի տալոյ ․ և տուաւ նմա հող, զի խցցի բերան նորա ․ զի եղիցի հողն յանդիմանիչ բերանոյ նորա, և հատանել ոտիցն նորա՝ վկայ չարութե̃ նորա ․ և զի ուսուսցէ նովաւ՝ եթէ բերան որ պաշտէ զմոլորութե̃ խաբէութե̃, այսպէս հասանէ նմա հատուցումն ․ և ոտք որ ընթանայ 'ի չարիս, այսպէս վաղվաղակի ստէպ ստէպ հասանէ նոցա կործանումն ։ Արժան էր Ադամայ իմանալ որոշել 'ի միտս իւր՝ եթէ որ տկարագոյնն էր քան զնա, նա նախանձի ընդ նմա ․ և այն որ զօրագոյնն էր քան զնա, նա լինի նմա օգնական ։ Տկարն նախանձեցաւ ընդ նմա՝ զի խստագոյն էր քան զնա, զի մի՛ հնազանդեսցէ զնա ․ և զօրագոյնն խոնարհի առ այն՝ որ տկարն է քան զնա, զի մի՛ անգոսնեսցէ զնա ։

Արդ այն որ ետ ձրի զբազում երանութիւնս, արժանի էր հաւատարիմ լինել և վասն այլոց պարգևաց ․ և զի խոստացաւ զծածկեալս առանց առհաւատչեի յայտնեաց՝ պա՞րտ ինչ իցէ եթէ անգոսնեսցեն ։ Յաճախեաց ետ իբր ոչ պարտէր, զի 'ի տալն իւրեանց փոխ՝ հաւատասցեն եթէ բազում հատուցումն առնուն ․ իսկ այն որ ետ սիրով իւրով այնոցիկ որ ոչն ետուն փոխ՝ զրկել զլանալ զայն որ փոխն ետ, ոչ ետ թոյլ իմաստութ̃ի նորա ։ Ո՞վ ողորմութ̃իք որ եդին զմեզ 'ի մէջ ողորմութե̃ և ստուգութե̃, զի մի՛ նեղիցի մեզ շտեմարան սերմանեաց ․ զի առցուք 'ի նմանէ և մեւս ևս երկիր սերմանեաց, զի հնձեսցուք 'ի նմանէ ընդ միոյ հարեւր ․ և այս զի ազատութ̃ին բացցէ յայտնեսցէ զերեսս իւր, և եղիցի ինքն տէր գործոց ձեռաց իւրոց ։ Արդ եկն ողորմութ̃ին սի-

րով իւրով, և յաճախեաց ետ առանց աշխատութ՟ե. եկն և ստուգութ՟ին սիրովն իւրով, զի մի՛ եղիցուք մեք պապանձեալ ողորմութ՟ըն, այլ պահանջօղք ստուգութ՟ըն. զի որ առնուն՝ ողորմութիւն պարտի, և որ պահանջէ՝ շնորհս վարկանի: Այսպէս փոփոխեաց զնոսա մեզ այն քաղցրն և բարերարն. զի մեք փոխ տացուք իբրև շնորհարարք, և նա հատուսցէ մեզ իբրև շնորհապարտ:

Եւ զի ոչ եղև բաւական Ադամ միայն առանձինն տալ հատուցանել զվրէժ յանցանաց իւրոց, ձկտեցան պատիժքն պատուհասից մեղացն նորա 'ի վերայ ծննդոցն նորա՝ իբր ոչ էին արգելեալ 'ի ներքոյ մեղաց, զի յանցանքն ըստ մեծութ՟ե նորա պահանջեալ լինիցին. և ազատութ՟ին յիշխանութ՟է տէրութ՟ե իւրոյ մի՛ բռնադատեալ մերժիցի: Իսկ ստուգութ՟ին որ եհարց զԱդամ և զԵւայ, զօձն ընդէ՞ր ոչ եհարց. և եթէ բնութ՟ի է նա կապեալ, ընդէ՞ր դատապարտեցաւ և նա ընդ այնոսիկ՝ որոց ազատութ՟ին էր. և եթէ ազատութ՟ի նորա է, ընդէ՞ր ոչ հարց զնա: Այլ ոչ հարց զնա վասն այսորիկ՝ զի գիտէր նա թէ ընդ ում խօսի. և այն որ լսէ՝ գիտէ զինչ լսէ: Եւ զի օձն նախ ընկալաւ զպատիժս պատուհասից, զի նոքա զղջացեալ ապաշաւեսցեն և խնդրեսցեն 'ի նմանէ: Եւ զի ոչ կամեցան դառնալ յապաշխարութ՟ի, եդ 'ի վերայ նոցա զվճիռ մահու, և եղիցին նոքա հող՝ կերակուր օձին: “Ի հողոյ ես դու, ասէ, և անդրէն 'ի հող դարձջիր„. և ցնա ասէ. “Հող եղիցի կերակուր քո„:

Եւ զի ասէ “Արար ա՟ծ Ադամայ և կնոջ նորա հանդերձս մաշկեղէնս և զգեցոյց նոցա„, զի մի՛ ելցեն մերկ 'ի դրախտէ անտի, զի եղիցի առաւել տեսիլն նոցա քան զգազանաց. կամ զի անկան նոքա յաշտիճանէ անտի յորում կային, սգաստացոյց զնոսա՝ զի յայսմ հետէ յաշտիճան ցանկութ՟ե մի՛ իջցեն: Եւ յերկուց կողմանց օգտեցան տունն Ադամայ հանդերձիւն, որ եղև նոցա զէն ընդդէմ ցրտոյ, և ըզգեստ ընդդէմ ցանկութ՟եց: Նայեաց դու 'ի դէմս յայտնիս, և տես ո՞րչափ վնասակար է նա: Դաւիթ որ յաղթեաց սկայազանց 'ի պատերազմի, յաղթահա-

րեցաւ 'ի մերկ մարմնոյ ։ Յորժամ լինիցին նոցա տղայք արու և էգ , որպէս և 'ի ցանկութե անկցի 'ի վերայ նոցա ամօթ . զի անկցի 'ի վերայ նոցա քող առագաստի , զի մի՛ մնասիցին և մեղանչիցեն միմեանց գեղովն իւրեանց։ Կամ մորթօքն գազանացն զի զգեցոյց զնոսա, վասն մեռելոտի գործոցն յայտ արար ։

Ի մէջ դրախտին բարկացուցին 'ի տեղւոջ, յորում արժան էր հաշտեցուցանել ։ " Հան զնոսա , ասէ , տէր Աստուած 'ի դրախտէն փափկութեան , և պատեաց ընդ արևելից կողմանէ զդրախտըն փափկութե 'ի սուր տէգ նիզակին , և 'ի հրեղէն շրջանակաւ սուսերին „ . Հեբրայեցի ասէ . "Բնակեցոյց ընդ արևելից կողմանէ դրախտին փափկութեցնորա „ ։ Այս ինքն Ճառագայթն որպէս սուր սայր սուսերի . և զի շրջիցի և լինիցի ծառայն համեմատ տեառն իւրոյ յապստամբելն նորա 'ի նմանէ լինել իբրև զնա , վասն այսորիկ "Ահաւասիկ Ադամ եղև իբրև զմի 'ի մէնջ „ ։ Կամ զի գործովք գիտաց մեկնեաց որոշեաց զբարին և զչարն յուտել իւրում 'ի ծառոյ անտի , որպէս և ած զի գիտակ է նոցա աւանց փորձանաց՝ այլ նա փորձանօք , վասն այնորիկ ասէ "Եղև Ադամ իբրև զմի 'ի մէնջ „ ։ Յայսմիկ ոչ ինչ էր նմա օգուտ , զի գործովք գիտացէ և ծանիցէ զորոշումն գիտութե բարւոյ և չարի . զոր օրինակ ոչ ինչ օգուտ է մեզ փորձել զթոյնս օձի և կարճի ։ "Ահաւասիկ , ասէ , Ադամ եղև իբրև զմի 'ի մէնջ „ . զաղատութիւն նորա կշտամբեաց . բայց ոչ պատուհասեաց զնա թէ ընդէ՞ր կամեցար լինել իբրև զիս , զի տկարութե էր այս ։ "Ահաւասիկ Ադամ՝ եղև „ . փոխանակ զի ասիցէ՝ թէ կամեցաւ լինել . այլ եղև ըստ դնել մտաց իւրոց չարաց ։ Եւ քանզի պատիժ պատուհասի դնէր 'ի վերայ , յայն ժամու ած յայտ առնէ նախ զյանցանսն . զի եկեսցեն զկնի յանցանացն պատիժքն պատուհասից . կամ հեգնելով հեգնեաց զնա բանն ած . "Ահաւասիկ Ադամ եղև իբրև զմի 'ի մէնջ „ ։ Իբր ոչ այլ 'ի կենաց անտի՝ որ 'ի ձեռն ծառոյն՝ մի՛ առցէ 'ի կեանս անձին իւրոյ , երթիցէ կեցցէ որպէս ած . "Գուցէ , ասէ , ձգեսցէ զձեռն իւր „ . զի յայտ արասցէ վասն զօրութեան

ծառոյն կենաց ։ Քերոբէ դարձեալ և սուր տէգ նիզակի՝ վասն պատուոյ փառաց իւրոյ ։

Իսկ ընդէ՞ր զմիոյն միայն զանուն նեթ յիշեաց յամենայն 'ի ծառոց. զի տեսցեն զքերովբէսն և զսուր տէգ նիզակին, և գիտասցեն և ծանիցեն եթէ թշնամութի̃ ցանդեաց առաջի երեսաց իւրոց ա̃ծ, և ցանկացեալ փափագեսցեն այնմ զոր ինչ կորուսինն ։ “Գուցէ, ասէ, ձգեսցէ զձեռն իւր և առնուցու 'ի ծառոյ անտի կենաց, ուտիցէ և կեցցէ յաւիտեան„. ոչ եթէ խեթեաց զնա, այլ զի ոչ եղև նա արժանի ողորմութե̃ց. և երկու՝ քանզի եդեալ էր 'ի վերայ նորա հրամանն ա̃յ յառաջ քան զայս, զի ասէ “Ի հող դարձջիր„ ։ Հան զնոսա առ 'ի ծառոյն կենաց, զի մի՛ եղիցի կերակուր ծառոյն կենաց հակառակ հրամանին մահուն. զի մի՛ն 'ի նոցանէ սուտ լինէր, կամ ծառն կենաց՝ թէ չէ ծառ կենաց, կամ վճիռ հրամանին մահու. կամ ողորմութե̃ն իւրով ոչ ետ նմա մերձենալ 'ի ծառն կենաց ։ Քանզի վճիռն հրամանին եդեալ էր 'ի վերայ նորա ցաւովք և տրտմութե̃ք կեալ, անխայեաց 'ի նա՝ զի մի՛ կերիցէ 'ի ծառոյ անտի և կեցցէ. որպէս զի մի՛ ընդերկարասցի 'ի նմա այս կեանք տանջանաց ։ Եւ դարձեալ զի մի՛ սուտ գտեալ հաստատեսցի բանք օձին 'ի կեալն նորա, և սուտ լինիցի ա̃յ ։ Բայց դարձեալ զի ոչ ետ նմա մերձենալ առ ծառն կենաց, զի մի՛ եղիցի յոյս ապաստանի նորա 'ի պտուղն առանց աշխատութե̃ց և վաստակոց, այլ յապաշխարութի̃ վաստակօք և ապաշխարութե̃ք ։

“Յաւուր, ասէ, յորում ուտիցես՝ մահու մեռջիր„. և ահա ոչ մեռաւ ։ Այլ զոր օրինակ յորմէ հետէ ասացաւ Աբրահամու՝ թէ “Հնազանդեսցի զաւակ քո յերկրին եգիպտացւոց„, համարեալ թուեն չորեքհարիւր ամ, իբրու երկերիւր քսան և հինգ ամ եղեն անդ, սոյնպէս և Ադամ թէպէտ և եկեաց ամս բազումս յետ դատակնքի մահուն, սակայն յօրէ անտի յայնմանէ՝ յորում ընկալաւ նա զվճիռն և զդատակնիքն, ընկալաւ նա զառհաւատչեայ մահու. յայնմիկ՝ զի ել նա 'ի դրախտէ անտի, և զի մերկացաւ նա 'ի փառաց անտի, և զի բարձաւ հա-

մարձակութ̃ի նորա . և մեռաւ նա ձայնիւն ա̃յ 'ի ժամէ անտի յայնմանէ : Եւ զի ետես դարձեալ զԵւայ թէ ցաւովք ծնանի , և զի քրտնեցաւ ինքն 'ի վաստակ աշխատութ̃ե իւրոյ , հաստատեալ ստուգեցաւ նմա վճիռն և դատակնիքն հրամանին : Եւ զի կանխագոյն յառաջագոյն էր օրհնու̃ին , այն զի ասէ " Աճեցէք և բազմացարուք ,, , քան զայն՝ զի "Յաւուրն յորում ուտիցես մահու մեռջիր ,,, պարտ և պատշաճ էր հաստատուն լինել բանին առաջնոյ՝ ա̃յ , զի բազմասցին . և ապա գալ այնր մահուն : Եւ զի մի՛ դարձեալ կարծիցի , եթէ ոչ էր նորա մեռուցեալ զնոսա՝ լինիցին աստուածք ըստ բանից օձին , եկեաց Ադամ զինն հարիւր ամ վասն դսրովու̃ե չարախօսին , և Աստուած ոչ եղև : Եւ զի ճաշակեսցէ դարձեալ զօրութ̃ին նորա , Ենովք որ ոչ մեռաւ , և յայսմիկ ետես Ադամ զաւակ օրինակի փրկչին մերոյ՝ թէ գալոց և կեցուցանելոց է զնա . որպէս և փոխեաց նա զԵնովք 'ի մահուանէ 'ի կեանս : Ճաշակեաց Ադամ զերկոսին զՀաբէլին և զԵնովքայն . զի մինն մինչ ցոր վայր բարձրացաւ , և միւսոյն խոնարհութ̃ին մինչ յոր վայր էջ . զի գիտասցէ և ծանիցէ թէ յորմէ բարձրութ̃է յորքան անարգութ̃ի անկաւ . և նովին Ենովքաւ 'ի միտ առցէ Ադամ , զի ոչ եթէ մահկանացու հաստեցաւ նա :

Դարձեալ ասի . զի ոչ եթէ կենդանի անմահ արար զնա , և ոչ մահկանացու եթէ ոչ կարիցէ կեալ . այլ եդ պատուէր 'ի միջի՝ ծառն կենաց իբրև պարգևս , և զմահ իբրև պատիժս : "Ետու , ասէ , առաջի քո մահ և կեանս , ընտրեա քեզ զկեանս և մի՛ զմահ ,,: Բայց դարձեալ ոչ եթէ նա մոլորեցաւ , այլ քանզի յապականու̃է չփոթանացն չարեաց լիրբ օձին յԵւայ երևեցաւ . քանզի և նա իսկ սկիզբն արար ձգել ըղձեռն իւր 'ի ծառ անդ : Եւ իբրև ետես Ադամ՝ եթէ կայ մնայ բանն ա̃յ , և մահ 'ի վերայ նորա ոչ տիրեաց , հաստատեալ ստուգեալ էր նմա՝ զի թէպէտ և առ ժամանակ մի կաց մնաց բանն ա̃յ , սակայն կալ մնալ լի կատարեալ 'ի կիտէ անտի եղելոյ դատակընքի նորա՝ չէ ինչ մարթ : Եւ իբրև ձգեաց Եւայ զձեռն իւր առ Ադամ տալ նմա , յուզեցաւ գութ

ողորմութե՟ իւրոյ 'ի վերայ նորա. որպէս զի եղիցի նա օգնական Եւայի 'ի խոնարհել իւրում առ նա. զի մի՛ եղիցի նա յատուկ եթէ ինքն կեցցէ և նա մեռցի. կամ զի նա կացցէ մնասցէ 'ի ներքս 'ի դրախտի անդ, և նա մերժեալ ընկեցեալ լինիցի յերկիր նզովից: Զի զոր օրինակ այն որ հաղորդի ընդ կնոջ իւրում, յետոյ իբրև անցանէ ըստ ճանապարհ առն իւրում՝ պոռնկելով պոռնկի, և այրն իբրև կամեսցի ծածկել զյանցանս նորա և զինքն 'ի ներքս խառնել, ասէ ցայն որ զուգեացն զնոսա, եթէ ես ոչ մեղայ, այլ կինս զոր ետուր ինձ՝ սա յանցոյց զիս: Սոյնպէս և Ադամ իբրու անխայեայր 'ի վերայ նորա՝ կարկառ զաջ իւր ոչ յառնուլ 'ի ծառոյ անտի, այլ յառնուլ 'ի ձեռաց օգնականին իւրոյ, յայնմ զի գիտաց թէ ել դատակնիքն մեկնել որոշել զօգնականն իւր առ յինքենէ. և վկայ այսոցիկ Առաքեալն 'ի յասել իւրում. “Ադամ ոչ մեղաւ, այլ Եւայ„: Եւ արդարեւ ոչ մեղաւ:

Թէ այդ այդպէս է՝ խոնարհեցաւ նա առ նա, զի եղիցի նմա օգնական. հաղորդ եղև յանցանաց նորա՝ ոչ 'ի ցանկալ իւրում 'ի ծառոյն, այլ զի եդ նա 'ի մտի իւրում պահել զկատարումն մարգարէութե՟ նորա, զի եղիցին երկոքին 'ի մի մարմին: Եւ վասն այսորիկ և 'ի միւսումն ևս վայրի վկայէ ինքն Առաքեալ՝ իբրև նմանեցուցանէ զգործն 'ի Քրիստոս և յեկեղեցի իւր, 'ի խորհուրդ հաղորդութե՟ առն և կնոջ. զի 'ի ժամանակի իբրև մեղաւ եկեղեցի նորա և հաղորդեցաւ ընդ անցանել պատուիրանին, և խոնարհեցաւ ողորմութի՟ գթութե՟ նորա առ նա՝ ոչ 'ի մեղանչել և առնուլ 'ի ծառոյ անտի, այլ բուռն հարկանել զօրացուցանել զբազուկն՝ որ ձեղքեցաւ վասն պտղոյն՝ որ կթեցաւ յանարժանս. և հաղորդեցաւ հաւասարեցաւ մեռանել ընդ նմա, որպէս և Ադամ ընդ Եւայի. զի և ինքն եկեղեցի նորա հաղորդեսցի դարձեալ 'ի կեանս ճշմարիտս, այն՝ որ վասն նորա հաղորդեցաւ հաւասարեաց ժպրհութիւն համարձակութեան նորա. զի վասն այնորիկ “կեցցէ, ասէ, վասն ծննդոց իւրոց՝ եթէ կայցեն մնայցեն 'ի հաւատս և 'ի ճշմարտութե՟„ այլովք հան-

դերձ ։ Ոչ Եւայ բաւական եղև առնուլ պատուիրան յայ , այլ Ադամ ․ և ոչ ժողովուրդն կարող էր՝ եթէ խօսեսցի ընդ նմա ած առանց Մովսիսի ․ և ոչ եկեղեցի՝ թէ առցէ փրկութիւն , այլ 'ի ձեռն տեառն մերոյ ։

Այլ դարձեալ ասասցուք զայն զոր ասաց Առաքեալ "Ադամ ոչ մեղաւ այլ Եւայ ,, ։ Քանզի մոլորութին յանցանաց յԵւայէ սկիզբն արար և առ Ադամ կատարեաց , բայց ըստ մոլորութե յանցանացն Եւայի ոչ մեղաւ Ադամ ։ Արդ լուր դու զինչ ասէ 'ի միում վայրի ․ "Որպէս վասն մարդոյ մահ եղև , և վասն միոյ մարդոյ ամենեքին մեռանիմք ,, ․ այլ ըստ համեմատի մոլորութեն յանցանացն Եւայի, Ադամայ յանցանքն նմին իմն ոչ էին ։ Զի են իրք յորժամ միայն առանձինն իցեն և ունին զտեղի իշխանութե , այլ 'ի գալ ընկերացն իւրեանց որ առաւել իցեն քան զնոսա , նոքա թէպէտ և իցեն՝ սակայն իբրև զոչինչ երևին ։ Ճրագ՝ զի 'ի խաւարի լուսաւորէ , 'ի տուէ նուաղի լոյս իւր ․ և լուսին 'ի գիշերի լուսատու լինի , բայց յարևու անդ ընկղմի նա ։ Նա և Առաքեալ ասաց վասն փառացն Մովսիսի որ խափանելոցն էր ․ և արար զնա իբրու թէ չիցէ բնաւ ․ ոչ եթէ զի ոչ էր նա , այլ առ այս զոր Քրիստոս աշակերտացն իւրոց ետ , նա իբրու թէ չիցէ ․ զի անդդիմօք , բայց աստ և հաւատացելովք ։ Նա զի Իսրայէլ մեռուցանելով մեռոյց , զի ոչ եղեն արժանի նմա ․ բայց աստ և ստուերք նոցա անկանէին 'ի վերայ մեռելոց և կէին ․ արդ առաւել են այս փառք քան զՄովսիսին որ անցանելոցն էր ։ Արդ ոչինչ առաւելութի էր Ադամայ քան զԵւայի ․ այլ փոխանակ զի եղև նա պատճառք գայթագղութե , եդ զնա 'ի ներքոյ հնազանդութեն ․ զի 'ի տեղւոջ յորում լինիցի այր 'ի մոլորութի յանցանաց , և կին 'ի ճըշմարտութին զայրն հնազանդեցուցանէ և զկինն իշխան առնէ ․ "Եթէ իցէ , ասէ , այրն անհաւատ և կինն հաւատացեալ , մի թողցէ զայր իւր ։ Ուստի , ասէ , գիտես կին դու՝ եթէ զայր քո ապրեցուցանես ,, ։

ԳԼՈՒԽ Գ

"ՄՏՈՒՏ Ադամ առ Եւայ կին իւր, յղացաւ և ծնաւ զԿայէն․ ստացայ ինձ ասէ այր յայ։ Եւ յաւել ևս ծնանել զեղբայր նորա զՀաբէլ,,։ Եւ եղև Կայէն Ադամայ որդի ճաշակեցուցիչ չարչարանաց․ զի գիտասցէ թէ որպէս դառնացոյց նա զՀայրն հասարակաց։ Կայէն ծնաւ անիծիւք զոր զգեցեալ էին հարք նորա․ եղև նա դարձեալ գործել զերկիրն անիծեալ․ խորհուրդ է այս այնոցիկ՝ որոց ամենայն խորհուրդք նոցա աստէն յերկրի են։ Իսկ Հաբէլ հովիւ էր խաշանց, զի յանիծից հեռագոյն էր․ խորհուրդ և օրինակ տեառն խաշանցն։

Նաև այսպէս, թէ ըստ խրատու Հաբէլի եղև զի մատուսցեն նոքա պատարագս։ Եւ կաց մնաց Հաբէլ Կայէնի զերիս ամիսս․ զի երիւք ամսովք յառաջագոյն կանխեալ լինէին ծննդակարգք խաշանց քան զվաղահասուկ արտոց․ բայց Կայէն գողացաւ զժամանակն յեղբօրէ անտի իւրմէ՝ կարծել իւրում թէ յառաջագոյն քան զնա ընդունելի լինի և 'ի դրախտ անդր երթայ։ Եւ կարծի թէ վասն այնորիկ անարգեցաւ նա, զի նենգեաց զնա, և Հաբէլին ընդունելի եղև, զի պարզ և յստակ մտօք մատոյց․ կամ 'ի մնացորդաց ոսկորստուէ իւրոյ մատոյց Կայէն, վասն այնորիկ անարգեցաւ նա․ այլ Հաբէլ յանդրանկաց խաշանց իւրոց զպատարագսն իւր ած։ Ի միտ առ դու յընթերցուածոց անտի․ ոչ ասաց ոչ թէ "Հաճեցաւ ած ընդ պատարագս Հաբէլի,,, այլ յառաջ ընդ Հաբէլ, և ապա ընդ պատարագս նորա․ քննեաց նախ զսիրտն, և ապա ընկալաւ զպատարագս նորա։ Այլ Կայէն զինքն յառաջագոյն աղտեղացոյց զանձն իւր․ վասն այնորիկ դարձոյց զերեսս իւր 'ի պատարագաց անտի նորա։

Բայց Թէոդիտոն փոխանակ այնր՝ զի ասէ "Հաճեցաւ տէր ած ընդ Աբէլ հրով,,, ասէ "Մեկնեաց որոշեաց զընտիրսն յանարգէ անտի,,․ վասն այնորիկ չար թուեցաւ Կայէնի։ Եւ Սիմաքոս, "Ջուար-

թացաւ տէր ած Հաբէլի. եթէ հաճոյ լինիցիս՝ թողից, ապա թէ ոչ՝ առ դուրս մեղք”: Ակիղաս, “Դարձեալ, ասէ, խոնարհեցաւ տէր ած Հաբէլի և պատարագաց նորա”: Եւ զի ասէ հաճոյ լինիցիս՝ ընկալայց, և եթէ միաբանիցես՝ այս ինքն մատուցանել ընդ եղբօր քում, և կամ որպէս եղբայրն քո, և հաճոյ լինիցիս առաջի հարց քոց: Եթէ էր քո ստուգութք մատուցեալ և ոչ էր բաժանեալ, առեալ էր իմ. կամ եթէ հաճոյ լինիցիս ՚ի չար խորհրդոց անտի, զի մի՛ լինիցիս եղբայրասպան: Կամ անդրանկութն իւրով և զօրութ իւրով հպարտացեալ բարձրացեալ ձեռն յանձին հարեալ էր, և վասն նոցա անարգեցաւ նա խորհրդովք իւրովք. ասէ՝ եթէ հաճոյ լինիցիս ՚ի խորհրդոց անտի յայնմանէ: Եւ զի ասէ՝ առ դուրս մեղք մակաղեալ նստէին, այս ինքն՝ մինչ դեռ աստէն ես դու՝ լոյծ զնախանձ քո քինեալ ընդ եղբօրն քում. ապա թէ ոչ՝ գիտեմ ես յեղանելն քո յերեսաց իմոց զեղբայրն քո առնուս տանիս ՚ի դաշտ սպանանել զնա: Եւ զի ասէ “Առ քեզ լիցի դարձ նորա”. այս ինքն պատարագին քո. փոխանակ զի պատուեցեր դու զանձն քո քան զիս, և քեզ զլաւն պահեցեր և ինձ զանարգն մատուցեր. վասն այսորիկ առ քեզ լիցի դարձ նորա: Իբրև ոք զի ասիցէ. և այդ ևս տուեալ լիցի քեզ. և դու տիրիցես ՚ի վերայ անարգ պատարագաց քոց. զի կարծեցեր դու թէ կարօտ ինչ իցեմ ես նմա: “Ոչ, ասէ, ուտեմ ես զմիս զուարակաց”. և “Պատարագ այ հոգի խոնարհ”:

Արդ եթէ վասն զի ոչ եղև ընդունելի պատարագ նորա՝ տրտմեցաւ նա, ահաւասիկ խոնարհեցաւ և խօսեցաւ ընդ նմա քաղցրութբ՝ որ ինչ ընդ Հաբէլի ոչ խօսեցաւ. եթէ հաճոյ լինիցիս ասէ, ընկալայց: Տեսե՞ր. ոչ եթէ զի ոչ եղև ընդունելի պատարագն նորա, այլ փոխանակ զի եղբօրն նորա եղև ընդունելի: Եթէ հաճոյ լինիցիս, ասէ, համարեաց թէ առեալ եմ. փոխանակ զի ուսցիս ապաշխարութի, ուսաւ նա սպանութիւն: “Ո՞ւր է Հաբէլ եղբայր քո”. ա՛յս է հաճոյ լինել զոր ասացի քեզ՝ եթէ հաճոյ լինիցիս: Եւ զի ոչ փակեաց Աստուած զդուռն

ապաշխարութե̃ն նորա, վասն այնորիկ “Մեծ են յանցանք իմ„ ։

“Յարեաւ, ասէ, Կայէն 'ի վերայ եղբօր իւրոյ և սպան զնա ։ Հարց զնա տէր · ասէ ո՞ւր է Հաբէլ եղբայր քո„ ։ Այլ նա քանզի յայնժամ ևս արբեալ էր նախանձուն չարութե̃ն, պատասխանի ստութե̃ն ցասմամբ ետ ա̃յ · այնմիկ թերևս և նմա ևս սպառնացեալ էր նա, զի ոչ ընկալաւ զպատարագն նորա · նենգեաց նա զեղբայրն և ընդդէմ դարձաւ ա̃յ և ասէ “Ոչ գիտեմ„ ։ Եւ արդարեւ ոչ գիտաց, զի ոչ իմացաւ նա թէ զդատաստանն սպանման նորա 'ի ձեռն արեանն նորա ա̃յ մատուցանէր ։ “Միթէ պահապա՞ն իցեմ ես եղբօրն իմում„ ասէ · և երանի թէ պահապան և ոչ սպանող նորա ։ Ա̃Ծ հարցանէ զնա քաղցրութե̃ զի զղջասցի վասն գործոյն զոր գործեացն, և նա տայր պատասխանի ցասմամբ · ոչ եղև նմա այն շատ՝ զի ասաց բայ չգիտեմ, այլ յաւել · “Միթէ պահապա՞ն ինչ իցեմ նորա„ ասէ ։

Հաբէլի իսկ արժան էր նախ իջանել 'ի դժոխս · զոր օրինակ վասն Ղաւթայ՝ որ գերին վարեցաւ ընդ սոդոմացիսն՝ ապրեցոյց Աբրահամ զՍոդոմ, կեցուցէ 'ի պատճառս Հաբէլի զԱդամ ։ Ճաշակեաց Ադամ զմահ՝ որ տուաւ նմա 'ի Հաբէլ որդի իւր · վերացաւ Ենովք, և ճաշակեաց Ադամ զկեանս անմահս յԵնովք յորդի որդւոյ՝ որդւոյն նորա ։ Բայց ոչ եթէ 'ի նմին իսկ յաւուրն յորում զպատարագն մատուցին՝ սպանեալ էր նորա զՀաբէլ · զի եթէ 'ի նմին իսկ յաւուր սպանեալ էր նորա զնա, և Ադամ և Եւայ գիտէին, և ոչ ա̃յ ստէր նա · այլ օր մի երբեմըն զի ոչ գիտէին հարք նոցա, ասէ Կայէն ցՀաբէլ եղբայր իւր · եկ երթամք շրջիմք 'ի դաշտ զբօսանալ ։ Եւ ոչ դարձեալ 'ի նմին աւուր յորում սպան Կայէն՝ հարց զնա ա̃ծ, որպէս զի գողասցի զնա եթէ չգիտիցէ ա̃ծ ։ Եցոյց Կայէն զմեղս իւր լի կատարեալ · զի ըսպան մարդ, և արհամարհեաց զա̃ծ · հատոյց նմա ա̃ծ կատարեալ պատիժս, զի անարգեցաւ նա ամենայն զաւակօք իւրովք հանդերձ ։ Գիտակն ամենայնի հարցանէր իբրև զանգէտ · զի յայտնի լիցի այն որ ստեացն թէ ո՞ւմ ստեաց ։ Ո՞չ գիտես դու ·

գիտակն զգիտակն հարցանէր. իբրու գիտէր ա͞ծ, հարց իբրև զայն թէ չգիտիցէ. իբրու գիտէր սպանօղն՝ ուրացաւ իբրու զայն թէ չգիտիցէ: Իբրև եցոյց ա͞ծ զգիտութի͞ իւր, յայնժամ սպանօղն խոստովան եղև զգիտութի͞ իւր. "Մեծ են, ասէ, յանցանք իմ". վասն այսորիկ պատրաստեաց որդւոց իւրոց սպանումն: "Գոչումն արեան եղբօր քո բողոք ունի առ իս յերկրէ". և ոչ եթէ արիւն չնչոյ նորա, այլ արիւնն նորա. և այս վասն կենդանութե͞ յարութե͞ նորա յայտ առնէ. "Արիւն նորա, ասէ, գոչէ". ոչ եթէ բերանով, այլ տեսլեամբ. իբրև այն զի ասէ "Երկինք պատմեն զփառս ա͞յ:

Ասէ. "Անիծեալ լիջիր դու յերեսաց երկրէ". փոխանակ զի ուսուցեր արուեստ գիտութե͞ չարութե͞ 'ի վերայ երեսաց երկրի: Անիծեալ լիջիր դու յերեսաց ամենայն երկրի. փոխանակ զի չարչարեցեր վշտացուցեր դու զԱդամ և զԵւայ զհարս ամենայն երկրի: Անիծեալ լիջիր դու յերեսաց ա͞մ երկրէ. փոխանակ զի սպաներ դու զայն որ բարւոքն էր քան զամենայն երկիր: Անիծեալ լիջիր դու յերեսաց ամենայն երկրէ. փոխանակ զի բացեր դու զդուռն դժոխոց առաջի ամենայն երկրի: Անիծեալ լիջիր դու յերեսաց ամենայն երկրէ. փոխանակ զի կամեցար դու միայն առանձին լինել 'ի վերայ ամենայն երկրի: "Երերեալ և տատանեալ լիջիր դու 'ի նմա". փոխանակ զի գնացեր դու 'ի նմա բարձրութե͞ք և ամբարտաւանութե͞ք 'ի վերայ երեսաց երկրի: Երերեալ և տատանեալ լիջիր դու 'ի նմա. փոխանակ զի յուսացար դու 'ի բռնութի͞ քո և 'ի զօրութի͞ քո, և սպաներ զնա: Երերեալ և տատանեալ լիջիր դու 'ի նմա. այն զի երկնչէին բնակիչք նորա 'ի նմանէ, երկիւղ ամենայն անկցի 'ի վերայ նորա: Յորժամ գործիցես դու զերկիր, և նա մի՛ յաւելցէ քեզ տալ զզօրութի͞ իւր. քանզի ոչ օգտեցար դու առաջին զօրութե͞ն զոր առեր 'ի նմանէ, մի՛ յաւելցէ քեզ տալ զզօրութի͞ իւր: Փոխանակ զի կամեցար դու միայն առանձին ուտել զզօրութի͞ նորա, մի՛ յաւելցէ քեզ տալ զզօրութի͞ն իւր: Փոխանակ զի թաղեցեր դու զնա 'ի հող անդաստանի քո, վասն այսորիկ գործեա-

ցես դու զերկիր՝ և նա մի՛ յաւելցէ քեզ տալ զզօրութիւն իւր ։

“Եւ ասէ Կայէն ցտէր . մեծ են յանցանք իմ„ ։ Եւ զի ասէ “Ահաւասիկ հաներ զիս այսօր յերեսաց յերկրէ . և յերեսաց քոց մեկնեալ թաքուցեալ իցեմ„ , զզօրութիւն այնոցիկ զոր ա՟ծ ասացն՝ երկրորդեաց Կայէն ։ “Հաներ զիս այսօր , ասէ , յերեսաց երկրէ „ . զի անէծ զնա ՚ի մէջ նորա . զի ոչ գոյր նմա հանգիստ ՚ի մէջ նորա ։ Եւ զի ասէ “Յերեսաց քոց մեկնեալ թաքուցեալ իցեմ„ . զի ոչ ևս յաւելու տեսանել զերեսս նորա որպէս և զառաջինն՝ այս ինքն պատարագաւ . իբրու այն զի ասէ , հանից զնոսա յերեսաց իմոց և ելցեն . զի ապականեաց նա զպատկեր ա՟յ , արժանի էր նմա ընկեցեալ մերժեալ լինել յերեսացն ա՟յ ։ Եւ վասն այնորիկ ասաց՝ արիւն նորա հեղցի . զի ըստ նմանութե՟ պատկերի կերպարանաց ա՟յ արարեալ է Ադամ ։ “Ամենայն որ գտանիցէ զիս , ասէ , սպանցէ զիս „ գաղա՟ն կամ ապականիչ ինչ . այս ինքն երերեալ տատանեալ դողայր նա , փախչէր տեղւոջէ ՚ի տեղի ։ Ոչ , ասէ , սպանցիս՝ զի այդպէս ամենայն սպանող . այլ ՚ի Կայենէ եւթն պատժոց հատուցումն խնդրեցի . այն իսկ է զի զեւթն դար նորա տեսանէին զերերել զտատանել նորա . կամ զի եւթանքն անարգէին ընդ նմա . քանզի ասաց նա՝ բայ “Ամենայն որ գտանիցէ սպանցէ զիս „ , ասէ ցնա՝ ոչ ։

Եւ իբրև եդ ՚ի նմա նշան , զի ամենայն որ տեսանիցէ զնա մի՛ իշխեսցէ սպանանել զնա , զի ՚ի կեանս իւր հատուսցի նմա . իբրև զայն զի ասէ Դաւիթ . “Մի՛ սպանաներ զնոսա , զի մի՛ մոռասցին զժողովուրդ իմ„ . որպէս զի մի՛ մոռացին բազումք առանց պատժոց պատուհասից . սոյնպէս և նոքա ։ Այլ զի՞նչ ասէ . “Խռովեա զնոսա զօրութ՟բ քով , և կործանեա զնոսա „ այլովքն հանդերձ ։ Զի յայտնի լիցի վրէժխնդրութիւն , երերեալ տատանեալ շրջէր ՚ի վերայ երկրի ։ “Ամենայն որ գտանէ զիս՝ սպանցէ զիս „ . աղօթք են . փոխանակ սպանման նորա խնդրեաց նա՝ զի սպանեալ եղիցի ։ Եւ յայսմ վայրի ստուգութիւն խորհեցաւ նա . թէպէտ և յեւթն պատժոց անտի կամեցաւ խորամանկութ՟բ փախչել ։ Ասէ ցնա ա՟ծ՝ ոչ ,

այլ ամենայն սպանող որ 'ի քէն և անդր լինի, անձն ընդ անձին տացէ. բայց դու ընդ միոյ եւթն տացես ։ Եւ զի ոչ համբերէր ընութի նորա եւթն պատիժս տալ փոխանակ ընդ միոյ, զօրութի հրամանին այն՝ որ ասաց թէ եւթն ընդ միոյ տացէ՝ կապեաց զշունչ նորա 'ի մարմնի նորա. զի զտանջանս մահու 'ի կեանս իւր տեսցէ ընդ միոյ եւթն ։ Վասն էր. զի ստեղծ և անդ ազատութի նորա գործ մի՝ որ ոչ էր անուանեալ. եւ ստուգութին անչափ բարկութբ, փոխանակ ընդ միոյ պատժի զոր պարտէր նա, եւթն պատիժըս եդ 'ի վերայ նորա ։ Զի աստի եդ ած զայս, զի ամենայն յորժամ գտցէ ժպրհութի համարձակութեան յաշխարհի մեղք՝ որ ոչ անուանեալ յառաջ քան զնա, անչափ պատիժս ընկալցի ։

Նու ո՞ւր է այն՝ զի ասէ "Ապականեաց ամենայն մարմին զճանապարհս իւր, և ջնջեաց զնոսա ջուրքն հեղեղօք,, ։ Եւ սոդոմայեցիքն, և որ զաշտարակն շինէին, և տունն Կորխայ. և յետ ժամանակի նոյն իսկ պաշտեցաւ 'ի մէջ մարդկան ։ Եւ զայն նոր հատուցումն վրիժուց, զոր ընկալան այնոքիկ որ գտին ըզմեղս, ոչ ած ստոյգն 'ի վերայ առնելեաց խարդախութեցն։ Նոյնպէս և արդարութի, որ 'ի մի մի ստուգաց անտի որ եգիտ անձին իւրում արդարութի՝ որ յառաջ քան զնա չէր երևեալ, ընկալաւ զհատուցումն որ յառաջ քան զնա ոչ էր անուանեալ. Ենովք, Նոյ, Մելքիսեդեկ, Աբրաամ, Մովսէս, Եղիա և տունն Դանիելի, այլովքն հանդերձ ։ Բայց Յովն՝ "Ամենայն սպանող Կայէն ընդ միոյ եւթն կացուսցէ,, այս ինքն հատուսցէ. կամ զեւթն պատիժսն լուծցէ որ եկին 'ի վերայ նորա եւթն յանցանաց. այս ինքն, այս առաջին նախանձն, զի ոչ եղև ընդունելի պատարագն որպէս եղբօրն իւրոյ. երկրորդ՝ նենգութի, յայնժամ զի ասէ "Եկ երթամք 'ի դաշտ,,. երրորդ՝ սպանութի. և չորրորդ՝ զի զեղբայրն իւր եսպան. հինգերորդ՝ զի նա եղև սպանող առաջին. վեցերորդ՝ սուտ և տրտմութի հարցն նորա. եւթներորդ՝ զի ստեաց այ. և ընդդէմ այսորիկ եկին հասին 'ի վերայ նորա եւթն պատիժք ։ Առաջինն՝ անիծեալ լիջիր դու յերկրէ. երկրորդն՝ մի յաւելցէ քեզ տալ

զզօրութի՟ . երրորդ՝ երերումն հանապազորդ . չոր-
րորդ՝ տատանումն մարմնոյ . հինգերորդ՝ զի օտարա-
ցաւ նա յընտանութե՟ այ՟ ։ “Յերեսաց քոց, ասէ,
թագուցեալ իցեմ„ . վեցերորդ՝ նշանն զոր եդ 'ի
վերայ նորա . եւթներորդ՝ սահմանն որ եղև 'ի մէջ
նորա և 'ի մէջ հարց նորա, զի օտարացաւ նա յընտա-
նութենէ առաջին համարձակութե՟ ։

Բայց դարձեալ զի Կայէն յեւթն դար հատուս-
ցէ՝ ողորմութե՟ տուանն նմա այս, զի մի անցցէ խրատ
նորա այլ ևս քան զեւթն դար . իբրև զայն զի ասէ
“Մինչև յերիս և 'ի չորս դարս հատուցանէ ատելեաց
իւրոց„ . ողորմութե՟ց է ։ Թէ այդ այդպէս է, և այս
Կայէնիս՝ զի յեւթն դարսն հատուսցէ ։ Եւ զի բարւոք
լուաւ զնա Ղամէք . զի և 'ի նմա յետ եւթն եւթա-
նասնեկին ողորմութիք լինին 'ի վերայ նորա ։ Եւ այն զի
խոստովան եղև յասելն իւրում “Մեծ են յանցանք
իմ քան զներել թողութեան„ . այս ինքն զի մեծա-
ցոյց նա զյանցանս իւր քան զողորմութի՟ն այ՟, յայտ
արար՝ զի թէպէտ և ճշմարտիւ մեծ են յանցանք նո-
րա, սակայն քան զողորմութի՟ այ՟ փոքր են ։ Եւ ի-
մեծ են . այլ այնուիկ՝ զի ընդ միոյ եւթն խնդրեաց ։
Ահա լքեալ թողեալ ես դու իբրև զհայրն քո, զի
բարձրացաւ 'ի վերայ իմ . և զի առ օրին հրամայեցի
ես մեռանել նմա, և ահա կեայ ։ Եւ հայեցաւ Կայէն,
ետես թէ քան զհօրն իմոյ մեծացան յանցանք իմ,
իբրու քան զայն ոչ էին մեծ . ապա եթէ ոչ ընդէ՞ր
ասէ՝ ոչ ողորմի ինձ ։ Արդ Ադամ բարձրացաւ 'ի
վերայ այ՟, և Կայէն որդի նորա 'ի վերայ ծառային
այ՟ . իսկ Սէթ եղև հիմն ազգին արդարոց ։

Եւ եդ 'ի Կայէն նշան՝ զի մի ոք իշխեսցէ սպանա-
նել զնա, այնոքիկ որ գիտէին զնա՝ բայց երկիրն
Նայիդ . այն իսկ է զի երերէրն և տատանէրն . և
նշանն զոր եդ 'ի նմա օտար է եւթն պատժոցն ։ Եթէ
մեռեալ էր Կայէնի՝ զոր խնդրեաց նա, զո՞ր մարդիկ
երկեցուցանէր նովաւ . այլ զայս ասասցուք, զի եթէ
'ի վերայ եւթն դարու Կայէնի ձգեցան յանցանք նո-
րա, ընդէ՞ր ոչ արար յայտ . զի այն որ ասաց ցԱդամ
“Անիծեալ լիցի երկիրն վասն քո„, կարօղ էր ասել
ցԿայէն, անիծեալ լիցին ծնունդք քո վասն քո . և

այն որ եթող զՔամ և անէծ զՔանան , կարօղ էր անիծանել զազգն Կայենի՝ Կայենիւ հանդերձ ։ Նա և կարեմք իսկ ոչ մեք ցուցանել՝ եթէ եւթն դարք նորա ընկալան զպատիժս նորա , զի ոչ է գրեալ թէ հատուցի նմա եւթն դարովք իւրովք հանդերձ . այլ “Կայէն, ասէ , ընդ միոյ եւթն պատժեսցի„ ։ Նա և ինքն իսկ անիծաւ , և նա ինքնին եղև երերեալ, և 'ի նմանէ եդաւ նմա նշան , և ոչ 'ի զաւակի նորա . վասն այսորիկ 'ի վերայ նորա ասացեալ էր ընդ միոյ եւթն ։ Զի ահաւանիկ որդիքն Յոբէլայ և Յոբաղայ թէպէտ և եւթներորդք էին 'ի Կայենէ , սակայն քանզի և նոքա ծնան՝ եղեն որդիք նոցա ութերորդք ։ Բայց արդ Ադամաւ և Կայենիւ հանդերձ տասներորդք էին . զի են դարքն այսպէս . Ադամ, Կայէն , Ենովք , Գեդադ , Միէլ , Մաթուսաղայ , Ղամէք, Յոբէլ և Յոբաղ , որդիք նոցա ութերորդք . բայց որդիք նոցա բնակիչք վրանաց իններորդք . և սկայազունքն տասներորդք ։

Խափանեցաւ այն՝ զի ասէ եւթն . զի ասացաւ Կայենի ընդ միոյ եւթն , ինքն ած զայս 'ի վերայ իւր . զի եթէ լուեալ դադարեալ էր նորա յետ առաջին պատժոյն , 'ի նշանէ անտի և յայնմանէ զի ասէր ընդ միոյ եւթն տուժեսցի՝ ապրէր նա ։ Այլ զի խնդրեաց նա իւր մահ զի ապրեսցի 'ի պատժոց անտի ստուգութ՟ե , ասէ ցնա ընդ միոյ եւթն . իբրև յաւելաւ նմա նշանն եւս , փոխանակ զի խնդրեցեր դու մահ , եւթն դար եկեսցեն և տեսցեն զվատթարութ՟ի անարգանաց քոց ։ Բայց հեբրայեցի՝ “Եւ եդ տէր նշան 'ի Կայէն„ . այս ինքն զի պատուիրեաց նա զի մի՛ ոք իշխեսցէ սպանանել զնա յառաջ քան զայն եւթն դարն ։ Արդ ոչ եթէ 'ի նմա եդ զնշանն , այլ զնա եդ նշան պատժովք իւրովք յայն՝ զի մի՛ ոք սպանցէ զնա . “Ամենայն որ գտցէ զիս՝ սպանցէ զիս„ ։ Ոչ . ասէ ամենայն սպանօղ մեռցի . բայց Կայէն ընդ միոյ եւթն տուժեսցի ։ Բայց Սիմաքոս ասէ . “Կայէն եւթն դար տայցէ զդատաստանս„ . և Թէոդիտոն՝ “Կայէն եւթն դար հատուցէ„ ։

Բայց դարձեալ ասասցուք . զի եթէ չէր խառնեալ ազգաց նոցա , 'ի վերայ եւթն դարու նորա

ձգեալ լինէին պատիժք նորա և կիրք․ զի համարեցան մինչև ցեւթն և լուեցին․ զի յայտ արասցեն եթէ այս դարք տան նշան Կայենի՝ զի կեցին յետոյ վասն անօրէնութե՛ որդւոցն Սեթայ մնացին․ և վասն այնորիկ եղև երկայնմտութի՛ վասն սոցա և ՚ի վերայ այնոցիկ․ զի եթէ ըստ հրամանի դատակնքին լինեալ էր, եւթներորդ դարու անդ լինեալ էր նոցա սատակումն որդւոցն Կայենի։ Եւ զի փոքր էր նա և չէր բաւական եթէ միայն ընկալցի նա զպատիժս յանցանաց իւրոց, ձգեցան ՚ի վերայ եւթն դարուն․ զոր օրինակ ձգեցան պատիժքն Ադամայ ՚ի վերայ ծննդոց նորա։ Եւ զոր օրինակ ընկալաւ զպատիժս Նաքովրայ կին իւր և որդիք և ստացուածք իւր, և զԱքայաբու եւթանասուն որդիք նորա, և զՍաւուղայ եւթն որդի նորա, սոյնպէս և զԿայենին։ Թէպէտ և այսպէս ասացաւ, սակայն ոչ եղև․ զի ոչ եկն ՚ի դարու անդ եւթներորդի հատուցումն յանցանաց նորա․ և ՚ի տասներորդի անդ զի եկն, Կայէն ոչ էր կենդանի։ Իսկ զիա՞րդ ապրեցաւ ՚ի պատժոց անտի գործիչն սպանման, և եկն հատուցումն նորա ՚ի վերայ այնոցիկ՝ որ ոչն գիտէին․ և ո՞ւր է այն զի ասէ, Կայէն ընդ միոյ եւթն տուժեսցի․ զի ըստ գրոց ընդ նոսին իսկ ընդ դարս իւր տուժելոց էր։ Արդ զիա՞րդ ապրեցաւ Կայէն ՚ի ջրհեղեղէ անտի․ այն զի վասն նորա իսկ եղև, և մաշեցան նովաւ որդիք Սեթայ, այնոքիկ՝ որք ոչ գիտէին զնա։ Ապա եթէ ՚ի տասներորդ դարու անդ եղև ջրհեղեղն, և Կայէն ոչ էր կենդանի, յայտ է թէ վասն անօրէնութեան որդւոցն Սեթայ մնացին երեք դարքն Կայենի։

Խորամանգեցաւ Ղամէք խրատուն իւրով՝ որ առ կանայս իւր՝ խառնել զազգն, որ որիշ էին յաւուրց անտի Կայենի և Սեթայ։ Ետես նա թէ Կայէն կենդանի է, և որդիքն Սեթայ խառնել ընդ նոսա ոչ կամէին, զի այպն կատականաց լեալ էին ազգն նոցա վասն Կայենի։ Եւ զի բարձցէ ՚ի նոցանէ զնախատինսըն, ըստ նմին հօրն որդին դողդոջէր․ այն էր “Երիտասարդ ՚ի ցաւս„։ Սպան Ղամէք զԿայէն և զորդի նորա կրտսեր, զոր ծնեալ էր նորա ըստ նմանութե՛ պատկերի կերպարանաց իւրոց․ զի մի՛ յիշեսցեն զԿայ-

էն 'ի պատճառս նորա • զի այնու գործով հաճոյ լի-
նիցի նա որդւոյն Սէթայ • ահաւասիկ, ասէ, խնդրե-
ցաւ վրէժն 'ի Կայենէ ։ Եւ ապա ետ խրատ կանանց
իւրոց զարդարել զդստերս իւրեանց • յայնմ հետէ
ասէ զի Կայէն մեռաւ՝ յորժամ տեսանիցեն որդիքն
Սէթայ զդստերս ձեր, հաւանեսցին խառնել ընդ-
նոսա • և 'ի պատճառս նոցա ապրիմք մեք 'ի բար-
կութէ անտի, որ գալոց են 'ի վերայ մեր 'ի պատ-
ճառս Կայենի ։ Յորժամ ասէ "Ադա և Սեղա լուա-
րուք ձայնի իմում", ո՞չ ահա յայտ է՝ զոր օրինակ
ոք զի հաւանեցուցանէ և խրատէ 'ի գործել ինչ մի •
այսպէս յայտ առնէ բան նորա՝ զի ասէ "Լուարուք
ինձ և անսացէք ինձ" • այս ինքն զի պաճուճեսցեն
և զարդարեսցեն զդստերս իւրեանց, և ուսուսցեն
նոցա երգս և մոլորութիս պղծութե ։ Զի Յոբէլ
արար վրանս • "Նա է, ասէ, հայր այնոցիկ՝ որ բնա-
կեալ են 'ի վրանս խաշնարածաց" ։ Եւ Յոբաղ ու-
սոյց զերգս արուեստականաց • "Նա եղև, ասէ, հայր
այնոցիկ՝ որ ցուցին զերգս և զքնարս" ։ Եւ Թոբելայ
կին կազմեաց զփողս • "Նա եղև, ասէ, ճարտարա-
պետ ամենայն գործոց պղնձոյ և երկաթոյ" ։ Եւ
Նաեմաս ուսոյց զարդ և հիւսս դստերաց նոցա • և
կացուցին զնոսա ըստ խրատուն Ղամեքայ, որպէս և
զմադիանացին, և դերեցան ։

Եւ քանզի որդիքն Սէթայ կոչեցեալ էին որդիք
ա͞յ, սկսան, ասէ, կարդալ զանուն տեառն ա͞յ • իբրև
զայն զի ասէ "Ասացի բամ ա͞ծք իցէք" ։ Եւ որդիքն
Կայենի կոչեցան մարդիկ • սակայն ա͞ծ յազգ արդա-
րոց է ։ Եւ իբրև խորամանկեցին հնարեցին տունն
Կայենի և գրգռեցին յօժարեցուցին զորդիսն Սէ-
թայ, և առին իւրեանց կանայս յամենայնէ զոր ընտ-
րեցին, վասն այնորիկ ջնջեցան նոքա վերին և ներ-
քին ջուրբքն • իբրև զայն զի ասէ "Խորք խորոց
կարդացին առ քեզ" ։ Եւ փոխանակ զի արբին նոքա
յօտար աղբերէ, ընկալան նոքա զհատուցումն ջուրբ-
քըն օտարոտեօք ։ Վասն այսորիկ "Արբցես ջուր 'ի
քոց աղբերաց, և 'ի քոց վտակաց զեղցին քեզ
ջուրք քո" ։ և Դաւիթ ասէ • "Փորձեցին զնա 'ի վե-
րայ ջուրցն հակառակութեցն" • այս ինքն զՅովսէփ

'ի ձեռն տիկնոջ իւրոյ ։ Կամ զԿայէն միայն եսպան, զԿայէն 'ի վերս և յապտակս. որպէս և ինքն Ղամէք պատմեաց առաջի նոցա 'ի զղջանալ անձին իւրոյ ։ Եւ իբրև մեղ դնէին նմա կանայք իւր, ասէ ցնոսա. թէ նա զարդար եսպան՝ եւթն դար տուժեցաւ, ես զի սպանող սպանի՝ եւթանասնեկին եւթն տուժելոց իցեմ ։ Դարձեալ ասէ. զի ոչ եթէ սպանանելով եսպան, այլ զի գիտաց և իմացաւ զգալ ջրհեղեղին. ինքն Ղամէք զի ասացեալ էր յայնմանէ զի ասէ, յեւթն հատուցումն վրիժուց տուժեսցի. և յայնմանէ որ քարոզեցաւն 'ի ձեռն Նոյի ։ Եւ ծընունդ Կայէնի սակաւ էր, և նորա ծնունդք բազում էին, զի մի մի ծնանէին. և նա ծնաւ իւր չորս. իբրև ոք զի տրտնջէ, ասէ. այր սպանի 'ի վերս ինձ, զի Կայէն ընդ միոյ եւթն հատուցանելոց է, և Ղամէք իւթանասուն և եւթն վասն ջուրցն հեղեղին, զի եկն և ջնջեաց զզաւակ նորա ։

Դարձեալ լսի թէ արդարեւ սպան, որպէս ինքն վկայեաց. և առ նա մխիթարել զկանայս իւր՝ թէ զայն ինչ զոր արարի ես, ոչ վասն վիրաց իմոց և ոչ վասն հարուածոց իմոց. զի եթէ Կայէն՝ զի նա եղև առաջին սպանող և զեղբայր իւր զարդար եսպան՝ եւթն դարս պատժեցաւ, զվրէժ իւր հարկ է և Ղամեքայ հատուցանել եւթանասնեկին եւթն ։ Իբրև այն զի ասէ "Եղիցի խաղաղութիւն և Ճշմարտութիւն յաւուրս իմ„. եբրայեցին ասէ. " Զի ընդ միոյ եւթն հատուցումն հատուցաւ այս Կայէնի„ ։ Ինքն Թոբէլայ կինն ասէ որդւոյ Ղամեքայ՝ սպան զԿայէն. զի Թոբէլայ կինն սատակիչ Կայէնի թարգմանի 'ի հեբրայեցւոց բարբառոյ անտի ։ Բայց դարձեալ թէ նա ըսպան զԿայէն, և ոչ զի յեւթն դար ջնջեցաւ նա. այլ թէ արդարեւ Ճշմարիտ սպան Ղամէք այր և երիտասարդ, որպէս և յայսմ երեսս վկայեաց, բայց ոչ էր վայելուչ զի 'ի ջրհեղեղէ անտի լուասցին մեղք նորա եւթն դարուն ժամանակի. քանզի 'ի ձեռն ...ռեառն մերոյ ջնջեցան մեղքն նորա ։ Եւ գտանեմք ...եք զայս յերկրորդել ազգացն Ղուկայ աւետարա...ագրի, զի յեւթանասուն և եւթն դարու ծնաւ ...էր մեր քաւիչ ծննդոց Ադամայ ։

Ադամ զի ծնաւ ըստ պատկերի կերպարանաց իւրոյ, զի եղիցի պատկեր Ադամայ երկրորդի՝ սկիզբն առաջնոյ. և փոխեցաւ պատկերն Ադամայ առաջնոյ 'ի ծնունդս երկրորդ Սեթայ։ Ենովք ստուգութ̃ք իւրով գազանացաւ 'ի վերայ մահու և յաղթեաց նմա, և սաստկացաւ 'ի վերայ նորա և կոխեաց, զի հայեցաւ նա 'ի միտս իւր և ասէ. Թէ արդարեւ ճշմարիտ տուեալ էր Ադամայ անմահութի̃, հաճոյ եղէց ես. և յայսմ հետէ և անդր տեսից թէ արդարեւ յաղթահարելոց իցէ մահ, և ես մտանելոց իցեմ 'ի դրախտն փափկութե̃։ Արդ զոր օրինակ յափշտակեցաւ Եղիա եւ՝ ետես Եղիշէ. նոյնպէս յափշտակեցաւ Ենովք և ետես Ադամ. զի մի կարծիցի թէ որպէս Հաբէլն սպանեալ է, և ոչ է 'ի միջի։ Իբրեւ ոչ գտաւ Հաբէլ 'ի միջի, կարծեցին տունն Ադամայ թէ 'ի դրախտ անդր յափշտակեցաւ. որպէս խաբեաց զնա Կայէն յասել անդ իւրում. ընդունելի եղև պատարագն նորա և յափշտակեցաւ։ Եւ եղեն վկայք Ադամ Ենովքայ վասն Կայէնի սպանողի, և Եղիշէ Եղիայի վասն Յեզաբէլի սպանողի։ Արդ Ենովք և Եղիշա 'ի դրախտ անդ մտին. և զի ելին երկուք՝ որ յանցեան, մտին որ առաքինացան. զի յամօթ լիցի Ադամ. զի զինուն որով պարտաւորեցաւ Ադամ, նովին յաղթեցին նոքա։ Եւ զի մտին յառաջ քան զտէր մեր 'ի դրախտ անդր, զի զմեզ յանդիմանեսցեն. զի ոչ եթէ բռնութիւն տէրութեան տեառն մերոյ միայն եբաց զնա իբրեւ զա̃ծ, այլ տօհմակիցք մեր, զայն տեղի՝ որոյ դուռն սայր սուսերի էր։

ԳԼՈՒԽ Դ

Եւ զի եղև Նոյ հինգհարիւրամենի և ոչ ամուսնացաւ, երկեաւ զի մի ծնցի որդիս և պղծեսցին նոքա ընդ դստերսն Կայէնի, զհինգհարիւր ամ պահեաց նա զկուսութի̃. քանզի որդիք ա̃յ կոչեցան. զի ամփոփ էին կեանք նոցա, որ մինչև ցհինհարիւր ամ յանուն հոգւոյն անուանեցան։ Վասն այսորիկ 'ի ժամանակի իբրեւ ամփոփեաց առ ինքն զկեանսն, զի

եղիցի յիննհարիւրամեան Նոյի 'ի հարիւր և 'ի քսան . ասէ “Մի՛ բնակեսցէ հոգի իմ 'ի մարդիկ մինչև յաւիտեան „ : Եւ զի ցուցցէ զսէր.իւր առ Նոյ, միում յորդւոց անտի նորա աւելի քան զհարիւր և զքսան ամ ետ նմա կեալ ստուգութեամբ : Հրամայեաց, և ողորմութեամբ լոյծ զնոյն . այլ ոչ մինչև յիննհարիւր ամ, և ոչ դարձեալ 'ի հարիւր և 'ի քսան միայն . յայնմիկ զի անցուցանէ նա քան զհարեւր և զքսան ամ անդր՝ յայտ առնէ զողորմութ՟ի գթութեան իւրոյ . և յայնմիկ զի ոչ հասուցանէ զնա յինն հարիւր ամ՝ քարոզէ զստուգութ՟ի արդարութեան իւրոյ :

Միւս դիր դու 'ի նմին կարգի ընթերցուածոյ . “Եւ ասէ մի՛ մնասցէ հոգի իմ 'ի նոսա յաւիտեան „ : Քանզի այս ուխտ լիեալ էր՝ թէ յաւիտեան բնակեսցէ . փոխանակ այնր զի ոչ կամեցան նոքա, և ասէ “Մի՛ բնակեսցէ հոգի իմ 'ի նոսա յաւիտեան „ . մի՛ կեցցեն և նոքա մինչև յաւիտեան, այս ինքն զամենայն զկեանսն իւրեանց . այլ եղիցին աւուրք կենաց նոցա հարիւր և քսան ամ : Արդ զի ասէ “Մի՛ բնակեսցէ հոգի իմ 'ի նոսա յաւիտեան „, այս է . զի մի՛ ընդերկայնեսցին աւուրք կենաց նոցա յաշխարհ . զի հալածեցին զհոգին զի մի՛ բնակեսցէ 'ի նոսա յաւիտեան, հալածեցաւ 'ի նոցանէն կենդանութ՟ի իւրեանց, զի մի՛ բնակեսցէ 'ի նոսա յաւիտեան : Զկնի յանցանացն եկն եհաս վրէժխնդրութ՟ի իբրու զուգեալ էր ընդ նմա թիւրութ՟ե . ոչ բնակեաց հոգի իմ 'ի ձեզ յաւիտեան, մի՛ բնակեսցէ 'ի ձեզ կենդանութ՟ի ձեր յաւիտեան :

Արդ “Եղիցին աւուրք կենաց ձերոց հարիւր և քսան ամ „ . զայս քարոզէր Նոյ, զի գործ տապանին տուաւ նմա : Վաստակեցին աշխատեցան 'ի գործ տապանին, և այպն կատականաց առնէին զփրկութիւն նորա : “Զղջացաւ, ասէ, տէր ա՟ծ՝ զի արար զԱդամ 'ի վերայ երկրի „, զի մեք 'ի միտս մեր զղջասցուք և աշխատեսցուք . զի եթէ ա՟ծ վասն մեր զղջացաւ, ո՞րչափ ևս առաւել մեք վասն անձանց մերոց : Զի թէ արդարեւ զի արար զԱդամ՝ զղջացաւ նա, ոչ պահէր 'ի տապանի անդ մնացորդս 'ի զաւակէ

նորա ։ Յայնմիկ՝ զի ապրեցոյց զՆոյ , յայտ արար զի զմեղաւորսն կամեցաւ զղջացուցանել ․ և այն զի ասէ՝ քանզի են նոքա մարմին , փոխանակ զի եղեն նոքա 'ի միտս մարմնոյ ․ "Խորհուրդ մարմնոյ , ասէ , թշնամութի՟ է առ յա՟ծ ,, ․ և "Մարմին և արիւն զարքայութի՟ ա՟յ ոչ ժառանգեն ,, ։ Եւ զի երկայնամիտ եղև և ներեաց նոցա , մի՝ զի ապաշխարեսցեն , և երկրորդ՝ զի մնայցեն արդարքն 'ի միջի նոցա ․ զի նոքօք դատապարտեալ լինին , և յագեալ լիցին արդարքն կենօք իւրեանց ։ Եւ զի մի ասասցեն մեղաւորքն , և սոքա զի ոչ խառնակեցան , թէ այդ այդպէս է ընդէր ոչ եթող զնոսա , և սուտ լինիցի յաչս նոցա դատակնիքն ։

Տես դու որչափ կողմանք են հարիւր և քսան ամին ․ հայեաց դու 'ի Նոյ զի հինգ հարեւր ամ համբեր յամուսնութե՟ ։ Յամօթ եղիցի Մարկիոն , զի ասէ՝ 'ի տեառնէ և այսր եղև այս ամենայն սրբութիւն , և ոչ ևս այլ աւելի ։ Նոյնպէս և Ենովք ։ Եւ այն զի ասէ "Զղջացաւ տէր ա՟ծ ,, , զի ցուցցէ մեզ զի ոչ եթէ յայս իրս հեղձման հաստատեաց զնոսա , այլ յայն գրգութի՟ փափկութե՟ ․ բայց մխիթարեցաւ նա և ողորմեցաւ յայնմիկ՝ զի ասէ "Կնճիռն , ասէ , ամենայն մարդկան 'ի խնամս չարի հաստատեալ է 'ի մանկութե՟ իւրմէ ,, ․ այս ինքն խորհուրդք նորա ։

Ով գործս բարւոքս Նոյի ըստ ծննդոց նորա կարգեցին գիրք ․ "Եւ էր Նոյ , ասէ , այր արդար և կատարեալ յազգի անդ իւրում ․ և հաճոյ էր Նոյ ա՟յ ,, ։ Իբրև զայն զի ասէ "Ծնաւ Նոյ զՍէմ զՔամ և զԱբեթ ,, , թուեաց նախ զծնունդս հոգւոյ , և ապա համարեցաւ զծնունդս մարմնոյ ։ Տես որչափ մեծ է Նոյ , զի 'արգել և եհատ զանձն իւր 'ի ցանկութե՟ց անտի դարուն այնորիկ զհինգ հարիւր ամ ․ և որդիք դարուն իւրոյ զի ոչ ետուն տեղի և բնակութի՟ զգաստութե՟ 'ի մարմինս իւրեանց , ոչ տուաւ նոցա յարկի տեղի 'ի տապանի անդ՝ որ լի է զգաստիւք ։ Գտաւ տեղի յարկի Նոյի 'ի տապանի անդ , զի արար նա տեղի զգաստութե՟ 'ի մարմինս իւր ։ Բնակեցոյց զնա ա՟ծ յարկս տապանին , փոխանակ զի բնակեցոյց նա զգաստութի՟ յանդամս իւր ․ զգաստութի՟ որ հեղձաւ յամենայն մարմինս , 'ի մարմին Նոյի հանգեաւ ․ հան-

դնեաւ նա 'ի ծոց տապանին : Եւ փոխանակ զի ոչ յաղթահարեցաւ յանդամս մարմնոյ, յաղթեաց նա յարկս փայտեղէնս . մինչ չեւ արարեալ էր զտապանն 'ի պահպանութ՟ի մարմնոյ իւրոյ, արար զգուշութ՟ի պահպանութ՟ե մտաց իւրոց : Ստուգութ՟բ և արդարութեամբ պահեաց զնա ա՟ծ, զայն որ յառաջ քան զպահելն ա՟յ ինքն եղեւ պահապան անձին իւրոյ . զի պահեաց նա զմիտս իւր, զի մի՛ հեղձեալ լիցի նա 'ի ցանկութ՟է . պահեաց զմարմին նորա, զի մի՛ հեղձեալ լիցի նա 'ի ջուրց անտի հեղեղէ :

Սատակեաց կորոյս ա՟ծ զամենայն մարմինս զայնոսիկ՝ որք յառաջագոյն կորուսին զանձինս իւրեանց : Ոչ եղեւ անխնայութ՟ի յա՟յ 'ի վերայ այնոցիկ, որք ոչն արարին անխնայութ՟ի 'ի վերայ անձանց իւրեանց . բայց խնայեաց և կարճեաց զկեանսնոցա, զի որպէս զպարանս երկայնս երկայնէին զմեղս իւրեանց : Եբաց զհոսանս 'ի ներքուստ և 'ի վերուստ, զի շիջուսցէ զհուրն՝ որ 'ի միջոյ նոցա վառեցաւ բորբոքեցաւ 'ի նոսա : Բազմացան ջուրքն, զի բազմացաւ ցանկութ՟ի ըստ հրոյ, շիջուցիչք նորա . Ծածկեցան լերինք ջուրբք, զի ծածկեաց ցանկութիւն զամենայն մարմին : Ծածկեցան լերինք՝ զի մի՛ ոք գտցէ իւր դադար 'ի վերայ երկրի, փոխանակ զի ոչ գտաւ սրբու՟ի 'ի նոսա տեղի բնակութ՟ե : Տկարացոյց 'ի ներքոյ իւր տապանն Նոյի զալիսն, փոխանակ զի տկարացոյց համբերութ՟ի Նոյի զալիս պէսպէս ցանկութ՟եց : Վերացաւ բարձրացաւ տապանն Նոյի 'ի վերոյ քան զամենայն իրս վնասակարս, զի ոչ հնազանդեցան խորհուրդք նորա լինել ներքոյ քան զխտրղտումն մարմնոյ : Բնակեցոյց ա՟ծ զՆոյ 'ի փայտեղէն ապարանսն, փոխանակ զի բնակեցոյց նա զԱստուած 'ի տաճար մարմնոյ իւրոյ :

Պաշտեաց նա զա՟ծ որպէս քահանայ, որպէս բնակեալ էր 'ի նմա ա՟ծ : Պաշտեաց զնա բերան աղաւնւոյն 'ի պտուղ ձիթենոյն՝ խորհուրդ քահանայութ՟ե . այս ինքն է զի ոչ մեղան նմա գազանքն որ բնակեալ էին ընդ նմա յարկս փայտեղէնս, փոխանակ զի ոչ վնասեցին նմա ցանկութ՟իք որ բնակեալ էին ընդ նմա յանդամս մարմնոյ նորա : Մի՛ զարմանար դու ընդ առեւծս որ

բնակեալ էին ընդ նմա և ոչ ապականէին զնա, այլ յորժ զարմացիր դու ընդ խոտըղտումն որ բնակեալ էր յանդամս նորա և ոչ վնասեցաւ նա։ Եւ մի զարմանար դու զի մերձեցաւ մատակ առեւծ 'ի մարմինս նորա և ոչ ապականեաց զնա, այլ զարմասջիր դու ընդ ցանկութի մարմնոյ նորա՝ զի 'ի մարմին նորա ոչ մերձեցաւ։ Մի զարմանար դու զի ոչ մեղան նմա գազանք ապականիչք՝ որ յամենայն կողմանց շուրջ պատեալ էին զնովաւ. այլ ընդ այն զարմասջիր, զի ոչ գայթագղեցուցին զնա կանայք պղծալիցք գայթագղեցուցիչք՝ որ յամենայն կողմանց շուրջ պատեալ էին զնովաւ։

Մծութին հնազանդեաց զզգայարանս, և ազատութի զցանկութիս. արար ա̃ծ զայն որ ա̃յն էր, և արար մարդն զայն որ մարդոյն էր. հնազանդ արար նմա զզգայարանսն զայնոսիկ՝ զոր ինքն հնազանդել ոչ կարէր. և հնազանդեցոյց ինքն զցանկութիս զի կարող էր հնազանդել զնոսա։ Սոյնպէս և տունն Անանիանց առ հուրն. և զի ասէ "Հանդերձք նոցա ոչ այրեցան", զի ոչ եթէ վասն ցանկութե զարդարէին նոքա. և զի ոչ քաղցրացաւ նոցա հոտ խորտկաց թագաւորին, հոտ հրոյն ոչ մերձեցաւ 'ի հանդերձս նոցա. ոչ տիրեաց 'ի վերայ նոցա կռապաշտութի պատկերին, վասն այնորիկ և ոչ հուր հնոցին։ Եւ ոչ Նոյի մեղան աղբերք որ բղխեցին, փոխանակ զի եխից նա զաղբեւր ցանկութե. և ոչ զԴանիէլ ապականեցին առեւծքն 'ի գբի անդ, զի պահեցին զնա աղօթք իւր որ 'ի պաշտաման անդ։ Զի եթէ կանայք բռնութբ բռնադատեալ լինէին, իսկ կանայք տան Նոյի զիա՞րդ ապրեցան։ Եւ եթէ հրեշտակք ցանկացան դստերաց մարդկան, զի՞նչ առնէին կանայք տկարք. զի բռնութի խիստ բռնադատեաց զնոսա։ Այլ ահա ասէ գրեալ է. "Ամենայն որ մտաբերիկ լինի յանասուն՝ մեռցի. և ինքն անասունն քարկոծ լիցի". զի՞նչ մեղաւ անասունն. այլ զի մի յիշեսցի 'ի միջի նոցա իրքն այն։ Բայց անդ զի յայտ արասցէ թէ մարդիկ են նոքա, ասէ. "Ապականեաց ամենայն մարմին զճանապարհ իւր"։ Ապա թէ յայնժամ գոյր 'ի նոսա ցանկալ և այսօր ո՞չ. թէ այդ այդպէս

է, թերի ուրեմն էին և արդ եղեն կատարեալք ։ Ո՞ր պատճառք արար զնոսա կատարեալ, զի այլ մի ևս ցանկասցին կանանց ։ Եւ եթէ մեք, որ արժանի լինիմն, նոցա նմանեմք 'ի յարութե̄ անդ մեռելոց, ո՞րչափ ևս առաւել նոքա ։ Եւ եթէ յայնմանէ զի ծընան սկայքն, ահաւասիկ յետ ջրհեղեղին գտան սկայք բազումք. մի՝ զոր Մովսէս ասաց, ասէ "Ինն կանգուն էին մահիճք նորա երկաթիք ըստ կանգնոյ հըսկայից՝ Ովգ ". և երեք այլ ևս զորս Յեսու որդի Նաւեայ եսպան. և երկու այլ ևս, զոր սպան Դաւիթ զԳողիադ և զայն՝ որոյ վեց վեց մատն էր ։

Իբրև, լուաւ Նոյ զի ասէ "Ահաւասիկ, ասէ, ածեմ ես ջուր ջրհեղեղի ", դողացաւ և խռովեցաւ սիրտ նորա ։ Ասէ ցնա. "Այլ հաստատեցից կացուցից զուխտ իմ ընդ քեզ " ։ Ոչ եթէ նա մեկնեաց նմա զսուրբն 'ի պղծոյ անտի, այլ զայնոսիկ որ ըստ սովորութեան ոչ լինէին զպէտս իւրեանց 'ի նոցանէ՝ զազրանայն և գարշելին 'ի նոցանէ, զնոսա կարգաց պիղծս. և որք ընդունելի էին մտաց նոցա, զնոյն ասեմ և որ իբրև զնայն էին, զնոսա անուանեաց սուրբս ։ "Եւթն եւթն, ասէ, որ 'ի սրբոցն են ",. յայնցանէ որք ոչ ուտիցեն զմարմինս ընկերաց իւրեանց, իբրև սուրբս անուանեաց զնոսա. և զապականիչս՝ իբրև պիղծս ։ Որպէս և մեք կարգամք զգազանս չարս, վասն վնասուց նոցա կարգամք զնոսա չարս. բայց զխոյս գառինս ոչ կարգամք չարս ։ Եւ հարկանօղք են նա և ցուլք, և ուղտք և ձիք վնասեն. թէ կարգամք զնոսա հարկանօղ կամ ուղտ մարդառու, միում կարգամք և ոչ եթէ ազգին ամենայն ուղտուց. զի և այն մին յորժամ ապականէ իբրև զպիղծս զայսոսիկ՝ այս ինքն ապականիչս, ապա անուանի յայս անուն ։

Եւ եթէ ասիցես զի՞նչ անուն նմա է պիղծս առ ապականիչսն. զի անուն պղծոյ առ այնոսիկ որ ոչն ուտէին՝ զի՞նչ նման է. արժան էր ասեն՝ չեն պիտանացու, կամ չեն ընդունելի. զի պղծութի̄ 'ի մարդկանէ ծնանի ։ Եւ եթէ յանուն պղծոյ անուանեցան՝ գիտասջիր դու զինչ են պիղծք, եթէ ոչ սպանիչք այսոքիկ. զի և նոքա յանուն գազանաց ա-

նուանեալ էին․ և զոր օրինակ անուանեցան նոքա յանուանս գազանաց, սոյնպէս և գազանք անուանեցան յանուանս նոցա․ սոյնպէս և սուրբքն յանուանս գառանց [1], սոյնպէս և աղաւնիքն և գառինքըն յանուանս սրբոցն ։ Իսկ ընդէ՞ր այսպէս․ այլ 'ի սկզբանէ սուրբս զայնոսիկ պատրաստեաց զնոսա ա՟ծ․ սոյնպէս և յաւուրս Նոյի ։ Եւ եթէ ոչ հաւատաս՝ տես ո՞ր ազգ բազում են, այնոցիկ որ ուտին, թէ այնոցիկ որ ոչն ուտին․ հաւանեա դու 'ի տեսանելոյ անտի և ոչ 'ի բանէ ։

Եւ այնոցիկ որոց միան էր կերակուր նոցա, որպէս գազանաց անապատի, զի՞րդ կերակրէին սոքա․ այլ որ արար խաղաղութի՟ 'ի բնութի՟ նոցա 'ի ժամանակի իբրև մտանէին 'ի տապան անդ, նա ետ սահմանս որկորստութե՟ նոցա ։ Եւ է դարձեալ հաւանել․ զի 'ի ժամանակի իբրև ելին 'ի տապանէ անտի զի՞րդ կարացին կեալ․ զի երկու երկու զոյգ մտանէին պիղծքն, այս զի մի՛ բազմասցին ապականիչքն․ և սուրբքն եօթն եօթն, զի բազմասցին 'ի պէտս նոցա յորժամ ելանիցեն․ զի 'ի նոցանէն մատուցանէր պատարագ ա՟յ ։ Եւ արդ հարկ է ասել՝ թէ առաջնորդութի՟ ա՟յ լցոյց յագեցոյց զնոսա մինչև բազմացան․ և եթէ 'ի ցամաքի ելին բազմացան լցան 'ի տապանէ անտի, զի՞րդ 'ի մէջ ծովուց 'ի կղզիս գըտանին․ այլ զի յայտ արասցէ այնոցիկ որ տեսանեն զնոսա, զի և 'ի կղզիսդ գտեալ է արարչութի՟ արարչին հոգեբարձութե՟ նորա հանդերձ․ իբրու այն զի ասէ " Բանաս զձեռս քո, լցուցանես զամենայն կենդանիս կամօք քովք " ։

Արդ մտին գազանքն ամենայն, զի բազմութի՟ք արարածոց պահեսցին մարմնով, և խորհուրդ եկեղեցւոյ յայտնեսցի հոգւով ։ Եւ զոր օրինակ 'ի ձեռն Նոյի աշխարհ ամենայն ջուրբք մեռան, սոյնպէս 'ի ձեռն տեառն մերոյ ամենայն հոգիք ջուրբք կենդանացան․ եղև առաջինն օրինակաւ, և վերջինն ճըշմարտութե՟ ։ Զոր օրինակ առաջինքն ջուրբք մեռան, սոյնպէս և վերջինքս ջուրբք կենդանացան․ և զոր

1 Յօրինակին գառանց ։

օրինակ նոքա փայտիւն ապրեցան, սոյնպէս և սոքա խաչիւն ազատեցան ։ Եւ եթէ վասն զի ոչ կարէր արդարացուցանել զնոսա՝ հեղձոյց զնոսա, ահա փոխումն գազանացն բնուէ դարովլէ զնոսա. և զի զքառասուն օր էջ անձրեւն 'ի վերայ նոցա և ապա հեղձան, զի կոչիցէ զնոսա յապաշխարութի՝ իբր զայն նինուէացւոցն. զի կարող էր 'ի միում ժամու ջնջել սատակել զնոսա ։ Այլ զի ասէ ցնա "Արա դու քեզ տապան„. իբրու կարող էր նա պահել ապրեցուցանել զնա և առանց տապանին. զի այն որ պահեաց զՅովնան 'ի փոր ձկանն՝ գերեզման 'ի մէջ գերեզմանի, կարող էր նա զՆոյ և որ ընդ նմա էին առանց տապանի ապրեցուցանել ։

Արդ բացան զքառասուն օր արարածք ամենայն 'ի վերայ որդւոց մարդկան 'ի գալ հանապազորդ ջրհեղեղին, և սրբեցաւ յետ քառասուն աւուրն 'ի պղծութէ անտի մեղաւորացն ։ Ապականեաց զնոսա 'ի քառասուն աւուր ստուգութբ և արդարութբ զայն՝ որ եղծին ապականեցին գործովք իւրեանց չարեօք. զկերպարանսն զոր նկարեաց 'ի քառասուն օր ողորմութին բարերարին, յամուսնութի արդարութեան նկարեաց զնոսա. և վասն հաղորդութե պղծութե եղծ և ապականեաց զնոսա ։ Ի քառասուն օր կատարեցան յորովայնի. 'ի քառասուն օր սատակեցան ջնջեցան յարարածոց անտի ։ Եւ զի տեսին 'ի հարիւր ամ զգործ տապանին և ոչ դարձան յապաշխարութի, տեսին զտանջանս իւրեանց զքառասուն օր և ոչ ապրեցան ։

Եւ ո՞ւր է այն զի ասէ. 'ի տեղւոջ ուր ոչ էին օրէնք, և ոչ այն որ անցանէ զնովաւ. զի ահաւասիկ աստ փութացաւ հատուցումն վրիժուցն, լուաց զաշխարհս 'ի յորդւոց 'ի մարդկանէ ։ Այլ զի ուխտ եդեալ էր տանն Սէթայ զի մի խառնակիցին ընդ տունն Կայէնի, իբրև զայն՝ զԱբրահամուն, "Գիտեմ ես, ասէ, զի պատուիրելով պատուիրէ նա որդւոց իւրոց պահել զճանապարհս տեառն„, սոյնպէս և նք. քանզի հաստատեալ կապեալ էին նոքա 'ի սովորութին, և եղև սովորութին իւրեանց նոցա իբրև օրէնք ։ Եւ իբրև խոտորեցան 'ի նմանէ, խնդրեաց 'ի նոցանէն զվրէժն

իբրև զանցաւորս օրինաց հարց իւրեանց. զի “Ապականեաց, ասէ, ամենայն մարմին զճանապարհս իւր». այս ինքն զճանապարհս ամուսնութե։ Նախ 'ի սիրտ սկսաւ ցանկութիւն ապականել. ապա ապականեցաւ մարմինն։ Փոխանակ զի հեղեղեցան անձինք նոցա ցանկութբ, հեղեղեցան մարմինք նոցա հեղձմամբ։ Փոխանակ զի արարին նոքա հեղեղ մեղաց, արար ած զջրհեղեղ։ Եւ զի ելին 'ի վերայ նոցա պատիժք ստուե, ընթացաւ ողորմուին, փոփոխեաց զգործ. և արար հեղեղ ջուրց 'ի մկրտութի աւազանին, և հեղեղեցան և հեղձան մեղքն քաւութբ թողութեն. զի փոյթ յոյժ եղև ողորմութեն վասն մարդկութեն. և եկն նա վասն կենաց նոցա, և ընթացաւ զկնի զարշապարացն մեղաց, զի սպառեսցէ զնոսա. զի երթիցէ հասցէ մարդկան, զի ունէր զնոսա 'ի ձեռն մահու և մեղաց։ Եմուտ ընդ ունկն, լուծաւ յարգանդի, և ել յորովայնէ, և շրջեցաւ յաշխարհի. եկն եհաս 'ի խաչ, եմուտ առ մահ, թուոյց զմարմինս մարդկան ընդ երկինս։

Իբրև ետես եթէ հեղեղեցան մարդիկ ջուրբք և հեղձան, եբաց զմկրտութի աւազանի 'ի կեանս, և և եղև քաւուի նոցա։ Եւ ետես եթէ այրեաց հուրն յերկնից զսոդոմայեցիսն, առաքեաց զհուր իւր 'ի վերայ առաքելոցն, և բնակեցոյց 'ի նոսա զցօղն հոգեւոր. և ելին 'ի մէջ հեթանոսաց, շիջուցին զհուրն կռապաշտութեց՝ որ բնակեալ էր յարարածս։ Եւ ետես զի թլփատէին զմարմինս իւրեանց ցաւօք, ուսոյց նոցա զի թլփատեսցեն զմարմինս առանց չարչարանաց։ Ետես զի զոհէին զանասունս որ ոչն մեղան փոխանակ յանցաւոր մարդկան, արար զնոսա զի եղիցին առանց ապականութե պատարագել իմաստութբ ըզկեանս իւրեանց՝ պատարագ կենդանի սուրբ ընդունելի հաճոյ այ և կենդանի պաշտօն։ Պատարագ զոր մատոյց Հաբէլ, արգելեալ էր բարկութբ վասն Կայէնի մինչև ցՆոյ. մարգարէացաւ վասն այնորիկ հայրն նորա և ասէ. “Սա մխիթարեսցէ զմեզ պատարագօք իւրովք», որ հաշտեցուցանէ զած ընդ արարածս իւր. զի բարկացեալ էր 'ի վերայ նորա։ Զի 'ի մեղս Ադամայ անէծ զօրհնեալսն, և դարձեալ

օրհնեաց զնոսա 'ի ձեռն Նոյի երկրորդում, և ձեռոյց զաշխարհս ամենայն 'ի միում աւուր որպէս զԱդամ. զի ամենայն պատճառք որ լինէին՝ գործ ինչ գործէին ։ Արգելան պատարագք, զի մի ևս եղիցի սպանութիւք մինչև 'ի մի անդր՝ զի մնաց, և ոչ ոք եղև նմա հակառակորդ. և ապա մատոյց ։

“Եւ հոտոտեցաւ, ասէ, տէր ա՟ծ 'ի հոտ անուշից ,, . և յիշեաց զՀաբէլ և երդուաւ ։ Այս ինքն՝ զի ցուցցէ և յայտ արասցէ, եթէ որչափ բաւական է Նոյ միայն, քանի՞ ևս արդարքն առաւել բազումք բաւական էին արգելուլ զջրհեղեղն ։ Արդ հոտոտեցաւն՝ ոչ 'ի պատարագսն, այլ 'ի խորհուրդսն բարւոք Նոյի . իբրև զայն զի ասէ . հաճոյ լինիցիս, առի ընկալայ ։

Երիս ուխտս հաստատէր ընդ Նոյի . մի՝ զի մի կերիցեն միս միայն արեամբ շնչոց հեղձուցիկ . և միւս ևս կենդանութե՟ . զի խնդրեսցէ զարիւն նոցա յամենայն գազանաց . և միւս ևս՝ որ սպանանէն սպանցի . զի “Որ հեղցէ, ասէ, արիւն, փոխանակ արեան նորա հեղցի արիւն նորա ,, . զի ըստ պատկերի կերպարանաց ա՟յ արարեալ է զԱդամ, այս ինքն 'ի նմանութի՟ արդար դատաւորին արարեալ է, զի խնդրեսցէ զայն ։ “Զարիւն, ասէ, անձանց ձերոց խնդրեցից ,, ։ Կապեաց երկու 'ի մի անդր . 'ի մարդկանէ, ասէ, և 'ի գազանաց 'ի վախճանի . և զի երկեցուսցէ զսպանօղսըն ։ Զի եթէ 'ի գազանաց վրէժ խնդրեսցի, ո՞րչափ ևս առաւել 'ի նոցանէն խնդրեսցի արիւն գազանաց, եթէ ոչ հեղուցու զնա փոխանակ այնր իւրոյն . մի՛ արիւն անասնոցն, և մի՛ մարդկութե՟ս ։ Զմինն թէ հեղումք մեք, դատապարտիմք մեք . և զմիւսն ևս թէ հեղումք, արդարանամք ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Զարիւն ձեր յամենայն գազանաց խնդրեցից ,, , հեբրայեցի ասէ “Ի ձեռաց ամենայն կենդանեաց ,, ։ Եւ զի ասէ “Խնդրեցից զվրէժ արեան անձանց յամենայն ձեռաց մարդկան . և 'ի գազանաց խնդրեցից ,, ասէ ։ Իսկ եթէ զծառայն հարկանիցէ ցուլն՝ երեսուն սատերս տացէ տեառն նորա, և ցուլն քարկոծ լիցի, խորհուրդ տեառն մերոյ և Յուդայի ։

Եւ ասէ տէր ա՟ծ ցՆոյ . “Այս է նշան ուխտին՝

զոր եդի ես ընդ իս և ընդ ձեզ»։ Զի 'ի պատճառս արդարոյն տուաւ աղեղն մեղաւորաց, զի 'ի նետաձիգ աղեղանէ անտի՝ նոցա մխիթարութի՟ և քաջալերութի՟։ Եւ այն որ լինէր բարկութի՟, եղիցի նոցա 'ի նըշան շինութե՟։ Եւ զոր օրինակ ոչ գոյին փուշք, և վասն անիծիցն մտին, նոյնպէս ոչ գոյր աղեղն, և վասն նշանի եմուտ։

«Եւ զարթեաւ սթափեցաւ 'ի գինւոյ անտի Նոյ. և գիտաց զինչ արար ընդ նա որդի իւր կրտսեր»։ Եւ յայսոսիկ յայտ արար՝ զի եթէ Քամէ. զի Քամ միջին և ոչ եթէ կրտսեր, այլ վասն Քանանու որդւոյ Քամայ ասաց կրտսերոյ։ Այլ ասեն. տեսանելով ետես Քամ զՔանան որդի իւր, զի այպն կատականաց առնէր զմերկութի՟ հօր իւրոյ ծերոյ, և ծիծաղեցաւ. և եւ Քամ և պատմեաց եղբարց իւրոց արտաքոյ. այլ ոչ եթէ աւետիս ամօթոյ չոգաւ թէ տարցէ նոցա։ Այլ նոքա իբրև լուան՝ տրտմեցան. զի գիտէին եթէ տեսիլք և յայտնութի՟ք ա՟ծուե՟ն յայտնի լինին հօրն իւրեանց, և հրեշտակ վերակացու լինէր նմա, ծածկեցին զնա, զի մի՛ խայտառակեսցի նա առաջի զուարթնոց. ապա թէ ոչ զի՞նչ համարէր նմա յայնմիկ ելանել պատմել եղբարց իւրոց, թէ ոչ վասն անմեղութե՟ տգիտութե՟ տղայոյն եւ պատմեաց. և 'ի ծիծաղել իւրում եղև խեղկատակութի՟։

Եւ այն զի ասէ «Գիտաց Նոյ զինչ արար ընդ նմա որդին իւր կրտսեր», այս ինքն որդին Քամայ կրտսեր։ Բայց անէծքն Քամայ այն իսկ է, զի ոչ օրհնեաց զնա։ Վասն այնորիկ թէպէտ և կարծիցէ՝ զի ոչ եթէ ստուգու՟ անիծաւ, զի յանմեղու՟ տգիտու՟ արար, սակայն ստուգութե՟ արդարութեամբ անիծաւ. զի ոչ եթէ փոխանակ այլոյ ուրուք անիծաւ նա, եթէ ոչ զի արժանի էր նա անիծիցն։ Ցերութի՟ նորա 'ի գործ պատժոց ոչ մերձեցուցանէր զանմեղութի՟ նորա։ Եւ զի կարդաց զնա որդի կրտսեր, իբրև զայն զի ասէ. եղբայր Աբէթի երիցու, և հայր ամենայն որդւոց Եբերեայ։ Թէ այդ այդպէս է, և Մարիամ՝ Ահարոնի միայն է քոյր և ոչ իցէ Մովսիսի։ «Եւ առ, ասէ, Մարիամ քոյր Ահարոնի մարգարէ»։ Սոյնպէս դարձեալ եթող զԵղամ և

զԱսուր, և ասաց զԱրփաքսադ. և դարձեալ եթող զԱրփաքսադ, և ասաց հայր ամենայն որդւոցն Եբերայ: «Անիծեալ լիցի, ասէ, Քանան մանուկ և կացցէ 'ի ծառայութի̃ եղբարց իւրոց» երբեմն և յաւիտեանս յաւիտենից. որք են ծառայք հեթանոսաց: «Եւ ընդարձակեսցէ տէր ա̃ծ Յաբէթի». որպէս ընդարձակեաց լայնեաց զբաճկոն 'ի վերայ ուսոց իւրոց: «Եւ բնակեսցէ 'ի յարկս Սեմայ». զոր օրինակ բնակեաց 'ի նմա ահ և երկիւղ ծածկել զամօթ խայտառականաց հօր իւրոյ: «Եւ բնակեսցէ, ասէ, յարկս Սեմայ». այս ինքն յազգս Սեմայ:

Դարձեալ ասի. զի ոչ եթէ Քանան յանցեաւ հօրն ծերունի, այլ ինքն Քամ յանցեաւ հօր իւրում. այլ ոչ կարաց անիծանել զնա, զի միանգամ առեալ էր նորա օրհնութի̃ յա̃յ ընդ այնոսիկ՝ որ ելեալ էին 'ի տապանէն: Բայց ոչ եթող զնա առանց դատապարտութե̃, փոխանակ զի ծիծաղեցաւ նա ընդ մերկութի̃ հօր իւրոյ, և այպն կատականաց արար զայն որ ծնաւ զնա. զի ընկալաւ նա զչարչարանս յորդի իւր որ անիծաւ: Բայց դարձեալ քանզի գիտէր ա̃ծ՝ թէ Քանան եղև նմանող չարութե̃ Քամայ հօր իւրոյ, և Քուշ և Մեստրայիմ և Փուդ ոչ եղեն նմանող Քամայ, կանխեաց յառաջագոյն՝ քարոզեաց մարգարէութե̃ զյանցանս Քանանու, զի յամօթ եղիցի Քամ 'ի ծնունդս իւր: Զի եթէ զՔամ անիծեալ էր նորա, անիծեալ լինէին ընդ նմա և երեք ևս այլ որդիք նորա Քուշ և Մեստրայիմ և Փուդ: Այլ ըստ չափոյ յանցանաց նորա անէծ զորդի նորա կրտսեր, զի նմանող եղև նա հօր իւրոյ. զի յայտ լիցի՝ թէ վասն այլոց արդարոցն ոչ անիծաւ հայր նորա: Տես դու զի ոչ եթէ այլ զաւակ նորա անիծաւ, այլ Քանան. և եղբարք նորա քաւեալ ապրեցան 'ի պատժոց անտի: Այն զի և զերկիրն Քանանու զաւակ Աբրահամու ժառանգեաց զնա, այս ինքն են որդիք Սեմայ:

«Եւ ետես, ասէ, Քամ զմերկութի̃ հօր իւրոյ և ծիծաղեցաւ»: Արդ փոխանակ զի ծիծաղեցաւ նա զհարբ իւրով, ընկալաւ նա 'ի զաւակ իւր զանէծս և զծաղր: Եւ որդիքն Սեթայ զի արբին յօտար աղ-

բերէ, ընկալան հատուցումն ջուրքն հեղեղին ։ Եւ Հուսբէն զի արբ յօտար աղբեւրէ ջուր, ասէ ցնա հայր իւր . "Մոլորեցար, իբրեւ զջուր մի եռասցիս 'ի վեր" ։ Եւ Եսաւ փոխանակ զի պահեաց զթշնամութիւն, եղեւ ոխակալ եղբօր իւրոյ . պահեցաւ նմա թըշնամութիւն յաւիտենից, և դարձան եղեն լերինք նորա յաւեր յապականութիւն ։ Եւ Փարաւոն զի խորհեցաւ հինգ չարիս 'ի վերայ ժողովրդեան, եկն եհաս 'ի վերայ նորա տասնհարուածեան հատուցումն ։ Եւ Հուսբովամ զի առ յանձն զխրատ տղայոցն, եղեւ նա ծառր և այսպէս կատականաց ծերոց ։ Եւ Յորոբոամ զի արար իւր որթս պատկերս, եղեւ նա կերակուր շանց ։ Եւ այն ասորեստանեայն զի հայհոյեաց շրթամբք իւրովք, և քթովք իւրովք ունչս արար, անցոյց շրջակ ընդ քիթս նորա, և եդ վարապան 'ի ցռուկ նորա ։ Եւ ժողովուրդն զի անարգեցին զջուրն Սելովայ՝ որ գնայր խաղաղ, ած 'ի վերայ նոցա զջուր գետոյն զհզօրն և զյորդն, զանհուն զանհնարին ։ Եւ Նաբուքոդոնոսոր զի արար իւր պատկերս ոսկիս՝ զի կայցի զչորս հողմս, չնչեցին ընդ երեսս նորա չորք հողմք երկնից, և թաղեցին զնա ցօղով եւթն ժամանակ . և զի կարծեաց նա յանձն իւր թէ ած իցէ, և մարդկութիւն ևս բարձաւ 'ի նմանէն, և սիրտ գազանի տուաւ նմա ։ Համան՝ զի ակն ունէր ջնջել սատակել զորդիսն Յակովբու, դուստրն Յակովբու ջնջեաց սատակեաց զյիշատակ նորա որդւովք տասնեքումբք հանդերձ ։ Եւ Հերովդէս երդուաւ և ստեաց հեղուլ զարիւն արդար, որդն եռաց և ել 'ի բերան նորա ։ Եւ դուստրն Հերովդիադայ զի խնդրեաց զգլուխն Յովաննու 'ի վր սկտեղ[1], եղաւ գլուխ նորա սառնամանի սկտեղ ։ Գամեր գաղաադայցի, և ահա մակաբայեցիք վկայեն, զի արարին ընդ նմ մարտ պատերազմի ։

Յորդւոց անտի Յաբէթի սկիզբն արար և յորդւոցն Քամայ, և յորդւոցն Քանանու և յորդւոցն Սեմայ մինչև յորդիսն Յեկտանու եղբօր Փարէսի ։ Եւ թանասուն և երկու որդիս թուեաց, որ լինին եւթանասուն և երկու ազգ . և որդիք Սեմայ Եղամ և

1 Յօրինակին օչէղէ ։

Ասուր և ապա Արփաքսադ. յերկրորդ ամի անդ ասէ՝ Եղամ և Ասուր և ապա Արփաքսադ։ Իսկ արդ ո՞ւր են ծնունդք Եղամու և Ասուրայ. զի ահաւասիկ եւթանասուն և երկու են գլխաւորք ազգացն լեզուաց։ Եթէ անդրանիկն նորա Եղամ էր, զիա՞րդ ասաց, ասէ, “Սեմ որդի հարիւրեմեան իբրև ծնաւ նա զԱրփաքսադ յերկրորդ ամի անդ յետ ջրհեղեղին”։ Այլ հարկ էր զկնի գալ պատմելոյն Աբրահամու. զի 'ի Փարիսայէ որդւոյ Եբերեայ, որդւոյ Սաղայ, որդւոյն Արփաքսադայ։ Եւ եբրայեցի զի կոչեցաւ Աբրահամ, զի յանցից անտի գետոյն էր նա. կամ յԵբերայ էր նա։ Կամ զի ասէ “Սեմ որդի հարիւրամեան”. այս ինքն մինչև երևեցաւ ա̃ծ Նոյի յետ հինգ հարիւր ամի, և ապա ամուսնացաւ։ Վասն այսորիկ իբրև անցին երկու ամք, ցայնժամ Սեմ հարիւրամեան կոչէր զայն զերկուս ամսն՝ որ յետ յայտնութ̃են. բայց Նոյի՝ յետ վեց հարիւր ամի։

Եւ Նամրաւդ յորսոյն անտի իւրոյ մատուցանէր պատարագ Աստուծոյ զգլխաւորն. և նովաւ օրհնէին մարդիկ զմիմեանս։ Վասն այնորիկ ասեն 'ի բանից կարգի. “Իբրև զՆամրաւդ հսկայ որսորդ առաջի տեառն”։ Փոխանակ այնր զի ասէ “Յերկրէն յայնմանէ ել ասորեստանեայն”. “Ել, ասէ, Ասուր և շինեաց զՆինուէ” ըստ գրոց եբրայեցւոց։ Որէք՝ ասի Ռուխա, Արափաթ՝ Նծբին, և Քաղանէ՝ Տիսբոն. և յերկրէն յայնմանէ ել և շինեաց զՀռոբոթ, զխաղաք և զՔաղախ, զՔարկ և զԴասեմ, “Այն է, ասէ, քաղաք մեծ”։ “Եւ եղեն, ասէ, սահմանք քանանացւոցն 'ի Ծուրայ 'ի Ծայդանէ, որ 'ի մուտս գերերացւոց մինչև 'ի գազացիս, որ է 'ի մուտս Սոդոմայ և Գոմորայ, յԱդամայ և 'ի Սոբոյիմ մինչև 'ի սասացիս”։ Այս են որդիք Քանանու։ Եւ զիա՞րդ գտաւ յանիծեալ սահմանս Մելքիսեդեկ օրհնեալ. և ո՞ւր է զի եղեն նոքա ծառայք. զի ահաւանիկ Աբրահամ որդի Սեմայ խոնարհեցոյց զգլուխ իւր առաջի Մելքիսեդեկի քանանացւոյ։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և առաջի որդւոցն Քեբրոնեայ. զի գաբաւոնացիքն յորժամ եղեն ծառայք ժողովրդեանն տեառն, եղեն նոքա փայտաքաղք և ջրբերք այլովքն հանդերձ՝

’ի ժամանակի իբրև շինելին զտաճարն յաւուրս Սողոմոնի ։

Աբրահամ ասէ · “Նշդեհ եմ ես և պանդուխտ ’ի միջի ձերում„ ։ Եւ Յակովբ ցՓարաւոն ասէ · “Աւուրք կենաց պանդխտութե͞ իմոյ հարիւր և երեսուն ամ է„ ։ “Եւ եդ, ասէ, Մովսէս անուն որդւոյ իւրոյ Գերսամ · զի պանդուխտ եմ ես, ասէ, յերկիր օտար„ ։ Եւ կնքէ Դաւիթ յայնմիկ՝ զի ասէ · “Յորժամ էին նոքա ’ի թիւ սակաւ նուազք և պանդուխտք ’ի նմա„ ։ Եւ ո՞ւր է այն զի ասէ “Եղիցի Քանան ծառայ նորա„ ։ Այն իսկ է, զի ետ նոցա զերկիրն քանանացւոց ’ի ժառանգութի͞, որպէս կարծիք ցուցանեն ։ Եւ ’ի ժամանակի իբրև շինեաց Սողոմոն զտաճարն, կացոյց, ասէ, հարիւր հազար նշդեհ պանդուխտ ’ի մէջ Իսրայէլի ’ի վերայ անտառին փայտահարս և ’ի վերայ այլոց գործոց արքունի ։ Եւ իբրև չոգաւ Աբրահամ թափեաց զսոդոմայեցիսն զորդիսն Քանանու, և կոչեցան նոքա գերիս Աբրահամու · և եղև Քանան ծառայ յայնմ հետէ ։ Փոխանակ այնր զի ասէ “Եւ Սեմ հայր ամենայն որդւոցն Եբերայ„ · հեբրայեցի, “Ամենայն որդւոցն հեբրայեցւոց„ ։ Փոխանակ այնր զի ասէ “Եղբօրն Յաբեթի երիցու„ · հեբրայեցի ասէ “Եղբօրն Յաբեթի, որ մեծն է քան զնա„ ։

“Շինեսցուք մեզ, ասեն, աշտարակ, զի իցէ գլուխ նորա ’ի վեր մինչև յերկինս„ · զի ազատութի͞ ա͞ծ է ։ Երկրորդ իբրև ա͞ծ հակառակ ա͞յ · և վասն այսորիկ վաղվաղակի փութապէս եկն եհաս նոցա պատիժ պատուհասի ։ “Եկայք, ասէ, իջցուք և բաժանեսցուք զլեզուս նոցա„ · փոխանակ զի խորհեցան զի մի՛ շինեսցեն և բնակեցուսցեն զերկիր ։ Զի ասէ այսպէս · ոչ եթէ ’ի տարապարտուց ինչ հաստատեաց զնա, այլ զի բնակեսցեն ’ի նմա արարածք իւր ։ “Եւ աճեցէք, ասէ, բազմացարուք լցէք զերկիր„ ։ Եւ զի ասէ “Արդ ոչ ինչ լինի պակաս կամաց նոցա զայն ինչ զոր խորհեցան նոքա„ զի մի՛ ցրուեսցին, վասն այնորիկ ցրուումն հասցէ նոցա ։ “Ոչինչ, ասէ, լինի պակաս կամաց նոցա„ · այս ինքն զի մի՛ ապրեսցին ա-

ւանց պատժոց · կամ յայսմ հետէ պակասիցէ 'ի նոցանէ, զի մի՛ կատարեսցին խորհուրդք նոցա ։

Թագեաց Թարա զՆաքովր 'ի քսանամենից, և ծընաւ զԱբրահամ յիմնամենից ։ Յեսքա ինքն իսկ Սարայ է, և վասն գեղոյ նորա այսպէս կոչեցին զնա · հայրն ասէ Մեղքայ, և հայրն Յեսքայ ։ Եւ յայսմիկ յայտ արար թէ քոյրք էին հարազատք դստերք Հառանայ · և եղեն նոքա կանայք հօրեղբարց իւրեանց ։ Եւ քանզի եղբօրորդի էր Աբրահամու ինքն Սառա, վասն այսորիկ ասաց “Քոյր իմ է առ 'ի հօրէ” · որպէս կարդաց զՂովտ եղբօրորդին · ասէ “Արք եղբարք եմք” · և որպէս ասաց ծառայն Աբրահամու “Առաջնորդեա ինձ տէր առնուլ զդուստր եղբօր տեառն իմոյ որդւոյ իւրոյ” · իբրու թոռն էր նա Նաքովրայ եղբօր Աբրահամու ։ Եւ հեբրայեցի այսպէս գրէ · “Արդարեւ քոյրաթիւ է իմ առ 'ի հօրէ և ոչ առ 'ի մօրէ ։

ԳԼՈՒԽ Ե

“Եւ ասէ տէր ցԱբրահամ · ել դու յերկրէ քումմէ և յազգէ քումմէ՝ 'ի տանէ հօր քո ։ Եւ ել գնաց Աբրահամ որպէս և ասաց տէր ա̃ծ · և առ ընդ իւր զՂաւտ” · զի հաւատաց յայտնութե̃ նորա ։ Եւ շինեաց սեղան յերկրին Քանանու, զի ուսուսցէ երկրպագութի̃ սրբութե̃ յերկրի նոցա, և զի տացէ առհաւատչեայ ա̃ծ զերկիրն ժառանգութե̃ իւրոյ ։ “Եւ անդ, ասէ, կոչեաց զանուն տեառն ա̃յ” · քանզի նոքա կարդային զանուն դիցն իւրեանց ։

Եւ եղև սով մեծ յերկրի · վարեաց էջ Աբրահամ յերկիրն եգիպտացւոց ինքն և Սառա կին իւր ։ Պատուիրեաց նմա և ասէ · ասասջիր գոգջիր քոյր նորա եմ · և նա ասաց որպէս պատուիրեցաւն ։ Իսկ վասն էր հարաւ հարուածովք Փարաւոն՝ զի առ զնա կին · զի ահա ոչ լուաւ թէ առնակին է ։ Այլ վասն բարկութե̃ մոլեգնութե̃ նորա հարկ եղև սատել Աբրահամու · թող և 'ի ձեռանէ ա̃ծ, զի քննեալ փորձեսցի Սառաա, որպէս փորձեցաւ Աբրահամ զրկանօքն զոր զրկեցաւն վասն Ջրհորոյն՝ զոր փորեաց յեր-

կրին խոստացեալ նմա. և ոչ տրտնջեաց, թէպէտ և նեղեալ էր։ Եւ զՍառա յայսմիկ եթող, զի նորա էր քննութ̃ի. այլ կամեցաւ զի քննեալ փորձեսցի 'ի գործ կանանց, որպէս Աբրահամ 'ի գործ արանց։ Եւ իբրև քննեալ փորձեցաւ և նա, և ոչ տրտնջեաց զԱստուծոյ, զի վասն այսորիկ մատնեաց զնա, յայնժամ եհար զնա հարուածօք ստուգութեամբ զայն՝ որ չոգաւ զկնի ցանկութ̃ե իւրոյ չարախօսութ̃բ. զի եղիցի նեղութ̃ի նորա նշան այնմիկ՝ որ ինչ անցք անցանելոց էին ընդ զաւակ նորա. և եղիցին հարուածքն Եգիպտոսի փրկութ̃ի Սառայի. նշան՝ վասն հարուածոցն, և փրկութ̃ի՝ որ լինելոց էին 'ի ձեռն Մովսիսի։

Արդ Սառա զի թշնամանեցաւ յԵգիպտոս, ըզխորհուրդ որդւոց իւրոց ուսաւ հարքն նոցա հանդերձ. և զի ելին անտի բազում ստացուածովք, դարձեալ զխորհուրդ փրկութ̃ե որդւոյն Ճաշակեցին հարքն. արժան իսկ էր երկոցունց փորձել։ Ըզվարձս անարգանաց թշնամանաց դարձոյց Փարաւոն մօր նոցա. և վարձս վաստակոց իւրեանց առին որդիք նորա 'ի նմանութ̃ի նորա։ Ոչ քաղցրացաւ մօրն նոցա անկողինքն Փարաւոնի և ցանկութ̃իքն եգիպտացւոց. զի այսպէս ուսցին որդիքն նորա նմանել նմա։ Դարձեալ ասեն. Սառա խորհուրդ եկեղեցւոյ է, զի պղծեցաւ ընդ ամենայն տեղիս, և յետոյ առ այր իւր Ճշմարիտ դարձաւ։ Բայց զժողովուրդն յամենայն ազգաց ժողովեաց նա առ ինքն. և նա առ պոռնկութիւնս իւր առաջինս դարձաւ։ Մինն առ թուղթ ապահարզանի և մեկնեցաւ. և միւսն ևս գրեցաւ 'ի վերայ խորտակեալ տախտակացն 'ի նմանութ̃ի նորա, և զսա 'ի վերայ ձեռաց սրտի նորա։

Արդ թշնամանեցաւ Սառա, զի առաքինասցի որպէս զԱբրահամն յայնմիկ՝ զի ոչ տրտնջեաց Սառա. բայց այլ կանայք իբրև պղծին 'ի կամս իւրեանց տրտնջեն։ Առ վարեաց գնաց Աբրահամ զորդի Սառայի, և ուրախ եղև Սառա. առնու վարէ գնայ ա̃ծ զորդիս նոցա, և Ճչեն անմիտ կանայք։ Սառա ընդ թագաւորին ոչ փոխանակեաց զգաղթական այրն իւր. բայց նոքա ընդ յիմարի միոջ փոխանակեն

զՔրիստոս ։ Իսկ այն որ դսրովեալն է յերկոսին, 'ի Սառռա դատապարտեալ լինի՝ որ յաղթեացն ամենայնի ։ Բայց դարձեալ, կարծելով, ասեն, կարծէր Սառռա՝ թէ Աբրահամ է ամուլ, և ոչ նա․ վասն այնորիկ թոյլ ետ նմա առ Փարաւոն, զի հաւանեցուսցէ զանձն իւր ։

Ապա յետոյ ասաց Սառռա․ “Արդարև գիտացի զի արգել զիս տէր ա՟ծ, զի մի՛ ծնայց քեզ որդի․ մուտ դու առ նաժիշտ իմ, և թող մխիթարեցայց ես 'ի նմանէ” ։ Արք նախանձայոյզք քինախնդիրք պահեն զկանայս իւրեանց․ բայց Աբրահամ եթող ետ կնոջ իւրոյ, զի գիտէր զճշմարտութիւն նորա առ նա ։ Հաւանեցուսցէ քեզ պահելն Սառռայի զխորհուրդ նորա 'ի տան Փարաւոնի․ ոչ եթէ Աբրահամ պահեաց զնա, այլ նա պահեաց զնա ։ Ոչ պղծեցաւ Սառռա 'ի տան Փարաւոնի․ զոր օրինակ և ոչ մարգարէն 'ի պոռնկէ անտի զոր առ ։ Զի զոր օրինակ իբրև համարձակեաց նմա Սառա, և եմուտ նա առ Հագար ոչ կամօք իւրովք, այլ զի Սառայի եղիցի մխիթարութիւն․ “Մուտ դու, ասէ, առ նաժիշտ իմ, թերևս եղիցի ինձ մխիթարութիւն 'ի նմանէն” ։ Իբրև յղացաւ՝ արհամարհեաց զտիկինն իւր․ ասէ Աբրահամ “Աւանիկ կայ աղախինն քո տուեալ 'ի ձեռս քո” ։ Սոյնպէս յուսացեալ էր 'ի նա Աբրահամ 'ի ժամանակի իբրև վարեցաւ նա 'ի տուն Փարաւոնի ։ Թող 'ի ձեռանէ ա՟ծ զի վարեսցի նա, զի յայտ արասցէ զսէրն Աբրահամու զոր ունէր առ նա․ իբրու այն զի ասէ “Առ դու զորդիդ քո սիրելի միամօր զԻսահակ”․ և թոյլ ետ նմա մինչև եհան զվաղակաւորն և կամեցաւ զենուլ զնա ։ Այլ առ Սառռա և գործն իսկ պաշտեցաւ, և ոչ փրկեաց զնա․ զի յորժամ եկեսցէ հասցէ օրն մեծ փորձութեան նորա վասն Իսահակայ, մի՛ ասասցեն՝ թէ զի յուսացեալ էր նա զի փրկեսցէ զնա, վասն այնորիկ պատրաստեցաւ երթալ մատուցանել զնա պատարագ ։

Եւ կագ հովուացն և մարտ պատճառք եղև Ղաւթայ երթալ 'ի Սոդոմ, զի դատապարտեսցին նովաւ․ և Աբրահամ յերկիրն քանանացւոց, զի նախատլիցին նովաւ ։ Ած զնա ա՟ծ նախ 'ի Խառան իբրև

զաղբեւր ջուրց ’ի մէջ ծարաւեաց. ած զնա դարձեալ յերկիրն քանանացւոց, որ բնակեալ նստէր ’ի խաւարի։ Ծագեաց ’ի վերայ նոցա որպէս լոյս խաւարելոց կուրաց. և ’ի մէջ եգիպտացւոց որպէս բժիշկ ցաւագին խարելոց[1]։ Կոչեցաւ Աբրահամ ելանել գնալ. գնաց ընդ նմա և Ղովտ։ Եւ ոչ համարեցաւ Աբրահամ զանձն իւր գլուխ և ճոխ առ բարիսն որ պատահեցին նմա, այլ իբրև զեղբայր իբրև զընկեր։ Յոր իրս փորձանք գային Աբրահամու՝ Ղաւթ ’ի խաղաղութե̄ կայր. իսկ որ ինչ փորձանք հասանէին Ղաւթայ, Աբրահամ ’ի տառապանս կայր։ Փորձեցաւ Աբրաամ ’ի բազում տեղիս. Ղովտայ ճառք ուրեք չէք։ Այլ իբրև վարեցաւ գերի Ղաւթ, Աբրահամ մարտնչէր փոխանակ ընդ նորա։ Ստացաւ Աբրահամ ինչս բազումս. և Ղաւթ իբրև զնա։ Հովիւք էին Աբրահամու. և Ղովտայ իբրև զնորա։ Տեսին հովիւքն Ղովտայ զի խոնարհէր Աբրահամ Ղաւթայ. բարձրացան ամպարտաւանեցին ’ի վերայ հովուացն Աբրահամու։ Իբրև ետես Աբրահամ թէ և ’ի խոնարհութի̄ նորա հնարս խնդրեաց թշնամին արկանել ’ի մէջ նոցա զգրգռութի̄ հակառակուե̄, կանխեաց Աբրահամ յառաջագոյն՝ հատ զպատճառսն ’ի միջոյ.անտի։ Կոչեաց զՂովտ սիրով, և արար զնա իբրև զինքն ժառանգաւոր. իբրու ա̄ծ ասաց նմա՝ թէ “Քեզ և զաւակի քում տաց զերկիրս զայս„. և ոչ ասաց թէ զՂաւթ ընդ քեզ առ. այլ նա ասէ ցՂովտ. “Արք եղբարք եմք մեք. ահաւասիկ երկիրս առաջի քո, ընտրեա քեզ և բնակեա„։ Ընտրեաց Ղովտ զերկիրն բարւոք. այն զի արժան էր զԱբրահամ պատուել, և տալ նմա ընտրել։ Այլ խոնարհուի̄ հեզութի̄ Աբրահամու զրկէր և զանցանէր, զի զմեզ ուսուսցէն՝ թէ վասն անցաւոր ստացուածոցս մի՛ ագահեսցուք։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Չու արար Ղաւթ յարևելից„, հեբրայեցի՝ “Չու արար Ղովտ յառաջագոյն, և բնակեցաւ ’ի քաղաք դաշտին փոխանակ Աքարայ„։

1 Յօրինակին ’ի լուսանցսն հարելոյ։

Ոչ առ Աբրահամ զինչս և զստացուածս, որպէս ասաց նմա արքայն սոդոմայեցւոց. քանզի ինչք և ստացուածք սոդոմայեցւոց խառն էին, այլ զի էին նոքա 'ի զաւակէ անտի Քանանու։ Եւ զի յայտ արասցէ թէ ոչ 'ի վերայ ընչիցն աղահեաց, և ոչ վարձուք թափեաց զնոսա, “Համբարձեալ զձեռն իմ առ ա̅ծ, որ արար զերկինս և զերկիր”։ Յայսմիկ յայտ արար՝ թէ ուխտ եդ ընդ ա̅յ, զի ոչ առ նա 'ի շաղամաթէ միոջէ մինչև 'ի խրացս մի կօշկացն, եթէ յաղթութի̅ տացի նմա։ Եւ պատճառք երթալոյ նորա, որպէս գիրք յայտ առնեն, վասն Ղաւթայ եղբօրորդւոյն իւրոյ եղև, որպէս և գրեալ է։ Ասէ յամենայնէ՝ զոր դարձոյց, տասանորդեաց ա̅յ 'ի ձեռն Մելքիսեդեկի։ Եւ զի ասէ՝ բայ յամենայնէ եղիցի այն արգելեալն եղբօրորդւոյ նորա, յայնմիկ զի ասէ՝ յամենայնէ։ Ասէ նա ցարքայն սոդոմայեցւոց. “Զի մի՛ ասիցես, ասէ, վաղիւ թէ ես մեծացուցի զԱբրահամ”։ Եւ զի մի՛ եղիցի նա զրկօղ և զլացօղ երիցն դաշնաւորաց իւրոց, ասէ “Զբաժինս իւրեանց առցեն”։ “Համբարձեալ զձեռս իմ առ ա̅ծ, որ արար զերկինս և զերկիր”. քանզի վարդապետութի̅ եցոյց նոցա յայսմիկ. սոյնպէս Մելքիսեդեկ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Բարա արքայն սոդոմայեցւոց”, “Վաղա”. և փոխանակ զի ասէ “Արքայ Գեղա”, “Արքայ հեթանոսաց”։

“Ապա յետ բանիցս այսոցիկ եղեն պատգամք տեառն առ Աբրահամ 'ի տեսլեան գիշերոյ և ասէ. մի՛ երկնչիր Աբրահամ զի ես վերակացու եմ քո, և վարձք քո բազում են յինէն։ Եւ ասէ Աբրահամ ցտէր ա̅ծ. զի՞նչ այն ինչ իցէ զոր տացես դու ինձ, զի ես աւասիկ կորուսեալ եմ անորդի, և Եղիազար դամասկացի ժառանգէ զիս։ Ասէ ցնա տէր ա̅ծ. ոչ ժառանգէ զքեզ դա. այլ որ ելանէ յերանաց քոց, նա ժառանգեսցէ զքեզ։ Եւ հաւատաց Աբրահամ յա̅ծ, և համարեցաւ նմա յարդարութի̅”։ Եւ իբրև ասաց նմա՝ բայ “Զաւակի քում տաց զերկիրս զայս”, ասեն երկմտեաց նա յայսմիկ, զի ասաց ցնա “Իսկ իւ գիտացից”։ Եւ զիա՞րդ մարթի լսել. զի այն որ հաւատաց ա̅յ, որ դժուարինն էր, վասն դիւրինն իւրաց

զիա՞րդ երկմտէր նա ։ Զի եթէ վերջինն անկաւ՝ առաջինն ոչ կարէր կանգնել, ո՞ր բազմանայր զաւակն . ո՞չ ահա անդէն 'ի յերկրին . զի 'ի նոյն ընթերցուածի կարօղ ես դու 'ի միտ առնուլ՝ թէ ոչ երկմտեաց նա ։ “Ասէ ցնա . աղէ հայեա դու ընդ աստեղս երկնից, և սխսիր դու թուել՝ եթէ կարասցես դու զնոսա թուել . այսպէս, ասէ, զօրասցի զաւակ քո բազմութեամբ առանց թուոյ ,, ։ Եւ գրեալ է, ասէ, “Հաւատաց Աբրահամ յա̃ծ, և համարեցաւ յարդարութի̃ նմա ,, . զի հաւատաց՝ համարեցաւ, և ոչ եթէ զաւակի նորա ։ Եւ դարձեալ ասէ . “Ես եմ տէր ա̃ծ քո, որ հանի զքեզ յերկրէն քաղդէացւոց տալ քեզ զերկիրս զայս 'ի ժառանգութի̃ ,, ։ Աբրահամ լուաւ երկուս պատգամս միանգամայն . մի՝ զի բազմանայ զաւակ նորա . և միւսն՝ զի ժառանգեսցէ զերկիրն, յայնմիկ՝ զի դժուարին էր յամուլ պառաւէ անտի ծերոյ անցելոյ ըստ չափ ժամանակի՝ աճել բազմանալ իբրև զաստեղս երկնից, յայնմիկ ոչ երկմտեաց ։ Եւ զի ետես նա՝ թէ ճշմարիտ հաւատաց, գրեաց զարդարութի̃ նորա, զի յայտ արասցէ թէ ոչ երկմտեաց ։

Իբրև ասաց նմա՝ բայ “Զաւակի քում տաց զերկիրս զայս ,,, ցնծաց և ուրախ եղև սիրտ նորա, իբրև փափագելին միտք նորա գիտել ճանաչել թէ ո՞րպէս կամ զիա՞րդ հանդերձեալ լինի այս ։ Զի ետես նա զերկիրս՝ զի էր մարդալից բնակչօք իւրովք, թագաւորօք և իշխանօք, գլխաւոր գեղօք պարսպեալք և քաղաքօք, յուսացեալ բերդիւք և անկռիւ ամրոցօք ։ Եւ իբրև ընդ այն ամենայն նայեցաւ, խորհեցաւ 'ի միտս իւր և ասէ . իսկ զիա՞րդ արդեօք դառնայ և լինի ժառանգութի̃ մեր երկիր մի, որ ծագէ 'ի ծագ լի է բնակչօք իւրովք ։ Բազմանալո՞վ արդեւք բազմանայցէ՞ զաւակ իմ, և ծածկեսցէ զբնակիչս երկրիս այսորիկ . կամ եթէ մարդամա՞հ արդեօք անկանիցի 'ի նոսա և սատակեսցին . և կամ երկիր արդեւք բանայցէ զբերան իւր և կլանիցէ՞ զնոսա . թշնամի՞ք ելանիցեն 'ի վերայ և վարեալ խլուցանիցեն զնոսա 'ի գերութի̃ . նոյն ինքն գրդւեսցեն և ելցեն 'ի պատերազմ և սատակեսցե՞ն զմիմեանս ։ Եթէ

Հնազանդելո՞վ հնազանդեսցին մեզ, եթէ փեսայանալո՞վ փեսայասցին մեզ. ա՛յլ ուրեք աճէ և բազմանայ Աբրահամ, և ապա գայ մտանէ զաւակ իմ, հարկանէ սատակէ զնոսա և ժառանգէ զերկիր նոցա: Գտանելով գտանէ զաւակ իմ ողորմութ̃ի՞ յաչս նոցա, և նոքա մեծացուցանեն զնա, և լինիցին 'ի նմանէ իշխանք պետք և առաջնորդք. դառնալով արդեւք դառնայցե՞ն. զի՞արդ արդեւք լինելոց է, ոչ եթէ զի՞արդ մարթի լինել: Արդ զայս ամենայն զի ոչ եղև բաւական գիտել ճանաչել 'ի յանձնէ իւրմէ, զայս կամեցաւ նա ուսանել 'ի տեառնէ անտի իւրմէ: Զի թէպէտ և կարծիցէ՝ թէ վասն անձին իւրոյ խնդրեաց նա գիտել ճանաչել, այլ առաւել ևս զաւակին իւրոյ դնել օրինակ իմաստնացուցիչ և ուսուցիչ խորհեցաւ նա:

Եւ ասաց ասէն. “Տէր ա̃ծ, իսկ ես ի՞ւ գիտացից”: Եւ տէր իւր իբրև ետես զի ոչ եթէ բաժանեցաւ նա, այլ զնոյն իսկ զվախճանն կամեցաւ նա գիտել ճանաչել, ասէ ցնա տէր. “Ա՛ռ դու քեզ երինջ մի երեմեան և այծ մի երեմեան և խոյ մի երեմեան և տատրակ մի և աղաւնի մի”: Յայնմիկ՝ զի ասէ երեմեան, յայտ առնէ՝ եթէ յետ երից դարուց մտանելոց են. և զի խելամուտ արասցէ զնա՝ թէ մարգարէք և թագաւորք և քահանայք հանդերձեալ են լինել նոցա: Եւ զի յօշեաց զնոսա երկոտասան անդամ, ծանոյց նմա թէ երկոտասան ազգ լինելոց են: Եւ զի թռչունք երկնից տարմ տարմ երամ երամ խոյանային 'ի վերայ շաղղոյն անդամաթուին, և նստէր Աբրահամ և քշէր, ցոյց նմա թէ մարտ պատերազմի առնելոց են ընդ նոսա, և վասն արդարոցն՝ որ լինին 'ի միջի նոցա՝ փրկին: Եւ բոցք հատանէին, իբրև հնոցք հրոյ վառէր, և ճառագայթք նորա ընթանային 'ի վերուստ. յայտ արար նմա, զի թէպէտ և սպառեսցին արդարքն, սակայն վասն քո փրկութե̃ ա̃ծ օգնական լիցի նոցա: Եւ զի ասէ “Ահ և երկիւղ և խաւար”, զի եղիցի ահագին ահաւոր տեսիլն:

Եւ զի ցուցցէ նմա թէ ու՛ր հանդերձեալ է բնակել զաւակ նորա, ասէ ցնա. “Գիտելով գիտասջիր, զի պանդուխտ լինիցի զաւակ քո յերկիր օտար”:

Ոչ եթէ յայս երկիր, այլ յօտար. ոչ եթէ բռնութ̃ կամ գերութ̃ կամ պատժովք պատուհասից, այլ նշդեհութ̃, այս ինքն պանդխտութ̃ ։ Եւ ընդէ՞ր. զի չեւ եւս էր լցեալ չափ մեղաց ամովրհացւոց. ապա թէ ոչ յօրէ յայնմանէ լինէր ։ Եւ զի տրտմեցաւ զի ասաց՝ բայ հնազանդեսցի զաւակ քո. հարկ է հնազանդել. ոչ եթէ այսպէս կամիմ ես, զի կարող եմ ես արգելուլ զեգիպտացիսն, զի մի՛ մեղիցեն նոցա. այլ ոչ կամեին ելանել անտի՝ թէ ոչ նեղէին նոքա ։ Այլ թէ զեգիպտացիսն ոչ նեղեցից ես, և որդիքն քո ելցեն հնազանդել զնոսա. և մի՛ տրտմեսցիս դու վասն հնազանդութ̃են՝ որ լինի նոցա ։ Եւ զազգն զայն որ զնոսա չարչարելոց են, դատեցայց ես. և որդիքն քո ելցեն մեծաւ ստացուածովք, որպէս զի մեծասցի յաչս նոցա իրք փրկչին՝ որ հանէ զնոսա. և կալցին շնորհս ։ Եւ զայս զի յառաջագոյն կանխեաց ասաց նմա, զի մի՛ յորժամ հնազանդիցին նոքա, տկարասցեալ հիւանդանայցեն միտք նոցա, և կարծիցեն թէ այլ զօրութ̃ի հնազանդեցոյց զնոսա ։ Եւ զի ոչ եթէ պատիժք պատուհասից էին այս, այլ յայտնութ̃ի էր պատրաստելոց ժամանակաց, և գուշակումն ծածկելոց յառաւել 'ի լուսաւոր իմաստութ̃է անտի Աբրահամու ։ Յայտնի լիցի քեզ, զի ոչ եթէ վասն այնորիկ մատոյց նա պատարագ. զի ահաւասիկ պատարագ նորա որ յայնմ ժամու՝ խնդրուածոց էր վասն յայտնութ̃եց, և ոչ եթէ պատարագէր նա վասն մեղաց ։

Արդ ոչ եթէ բաժանելով բաժանեցաւ Աբրահամ, թէ վասն այսորիկ ընկալաւ զաւակ նորա պատիժս պատուհասից ։ Զի թէ այնր ժամու հաւատայ նա՝ համարեցաւ նմա յարդարութ̃ի. սոյնպէս թէ երկմտեալ էր նորա, ինքն իսկ ընդունէր զպատիժս պատուհասից, և ոչ եթէ 'ի վերայ Յակովբու և Յովսեփու և Մովսիսի գայր հասանէր պատիժքն պատուհասից ։ Զի եղբարքն իւր վաճառեցին զՅովսէփ յեգիպտոս 'ի մահ, և ոչ եթէ վասն Յակովբու առաքեցաւ նա անդր. և սէրն Յովսեփու իջոյց զՅակովբ անդր, և ոչ եթէ երկմտութ̃ին Աբրահամու ։ Զի զոր օրինակ ոչ առ ակն յանցանացն Մովսիսի

որ եղեն 'ի վերայ վիմին, այլ կշտամբեաց յանդիմանեաց զնա. “Փոխանակ, ասէ, զի ոչ փառաւորեցէք դուք զիս, մի մտանիցէք դուք յայն երկիր պարգևաց,,: Եւ զոր օրինակ ոչ արար նա անփոյթ վասն մեղացն Դաւթի, այլ խայտառակեաց զյանցանս նորա, և ընկալաւ զապաշխարութիւն նորա. և Եզեկիայ զի նշան ետ նմա՝ վասն զի ոչ հաւատաց՝ 'ի ստուեր արևուն ետ նմա, զի գիտասցէ և իմաստնասցի: Եւ Զաքարիայ՝ իբրև երկմտեաց վասն բանից հրեշտակին, նշան իմաստնացուցիչ 'ի նմին ժամու ետ նմա, զի 'ի նմանէն ուսցի զճշմարտութիւն բանից նորա: Զի յորժամ թերահաւատութիւն կամ երկմտութիւն գըտեալ լինէր յարդար, նոյնժամայն տայր նշան յանդիմանութեան նորա: Սոյնպէս և Աբրահամու՝ թէ երկմտեալ էր իբրև զԶաքարիա կամ զԵզեկիա, զկընի բանիցն ընդունէր զպատիժս: Զոր օրինակ իբրև հաւատացն՝ մօտ այնր զկնի զի ասէ “Համարեցաւ նմա յարդարութիւն,,, սոյնպէս մտանէին եպերանքն զկնի երկմտութեան: Եւ զի յայտ արասցէ թէ 'ի բացէ է 'ի պատուհասից, փոխանակ պատժոցն օրհնելով օրհնեաց զնա անդ յասել իւրում. “Դու, ասէ, հանգիցես առ հարս քո յագեալ աւուրբք, թաղիցիս 'ի ծերութեան պարարտութեան,,: Եւ այս յայտ է՝ զի ոչ եթէ պատիժք են:

Բայց Աբրահամ պատուիրեաց որդւոց իւրոց որ ինչ հանդերձեալ պատահելոց էր նոցա. զի յորժամ սկսանիցին նոքա հնազանդել, ուրախ լիցին վասն փրկութեանն՝ որ հանդերձեալ էր գալ նոցա յետ հնազանդութեան իւրեանց: Յովսէփ հաւատաց որ ինչ լուաւ 'ի հարց անտի իւրոց. ասէ “Գիտեմ ես՝ զի յիշելով յիշէ զձեզ ա̃ծ. հանէք, ասէ, զոսկերս իմ ընդ ձեզ,,. և Մովսէս 'ի թուոյ անտի ամացն գիտէր զամենայն՝ թէ մերձ է ժամանակն. որպէս Դանիէլն զի յեւթանասուն ամէ անտի զոր ասացն. և Երեմիա գիտաց զժամանակն դարձի: Արդ եթէ երկմտելով երկմտեցաւ նա յայնմիկ՝ զի ասէ “Ի՞ւ գիտացից,,, զի՞նչ ևս պիտոյ էր ասել զկնի նորա “Առու քեզ այծ մի և երինջ մի,,, այլօքն հանդերձ: Ապա ասէ ցնա յետոյ. “Պանդուխտ և նժդեհ եղի-

ցի զաւակ քո»։ 'ի բաց արար զերկմտութ՟ին նորա, և ապա ասաց։ Եւ զի՞նչ համարեաց այնմիկ զի ոչ գիտէ, և ոչ վասն որոց պատճառանաց եկն 'ի վերայ զաւակի նորա այս խրատ։ Զի եթէ յայսմ վայրի ասացեալ էր նմա՝ թէ ժառանգես դու զերկիր, և նորա ասացեալ էր՝ և ի՞ւ գիտացից, և ոչ այսպէս արժան էր կարծել 'ի վերայ Աբրահամու՝ թէ երկմտեաց։ Զի թէ յառաջ քան զայս ասացեալ էր նմա՝ թէ զաւակի քում տաց զերկիրս զայս, և շինեաց անդ սեղան տեառն ա՟յ՝ որ երևեցաւ նմա. և դարձեալ ասէ. ամբարձ զաչս քո 'ի վեր և տես դու քեզէն 'ի տեղւոջէդ յայդմանէ ուր կաս դու այժմիկ ընդ կողմն հիւսիսոյ և ընդ կողմն արևմտից և ուղեղ ընդ արևելս և այսր ընդ ծով, զի զամենայն երկիրդ զոր տեսեր դու՝ քեզ տաց և զաւակի քում մինչև յաւիտեանս ժամանակաց. դարձեալ ասէ ցնա. արի և շրջեաց դու ընդ երկիրդ յերկայնութ՟ի և լայնութ՟ի նորա, քանզի քեզ տաց զդա. և եթէ երիցս անգամ ասացաւ նմա այս, ոչ յերկուացաւ նմա. եթէ այդ այդպէս է, և ոչ յայսմ վայրի երկմտեալ բաժանեցաւ նա։ Եւ եթէ յայսմ աւուր գրեալ է, ասէ, ուխտ հաստատեաց ընդ նմա ա՟ծ, թէ այդ այդպէս է [1]. հաւատալով հաւատաց նա և ոչ երկմտեալ բաժանեցաւ նա։ Եւ զի հնազանդեցան նոքա, զի մի՛ մնասցեն անդրէն յերկրին եգիպտացւոց, և խափանեսցին աւետիքն. և եգիպտացիքն զի խրատեսցին, փոխանակ զի առաւել մեծարանեցան նոքա 'ի վերայ նոցա. իբրև զայն զի ասէ. ես բարկացայ սակաւիկ մի, և նոքա օգնական եղեն չարեաց։

Ընդ չորեքհարեւր և երեսուն ամ՝ յորէ անտի յայնմանէ յորմէ հետէ ասացաւ բանն. զի թէպէտ երկերիւր քսան և հինգ ամ բնակեցան անդ, սակայն ոչ եթէ զամենայն ամսն նեղեցան նոքա։ Զի որչափ և եկեաց Յովսէփ, պատուով բնակեցան նոքա անդ. և իբրև մեռաւ Յովսէփ, ապա նեղեցան նոքա 'ի թագաւորէ անտի, որ ոչ ճանաչէր զՅով֊

1 Յօրինակին եղծեալ էին բառքդ այդպէս է։

սէփ ։ Յամի անդ՝ յորում ծնան զՄովսէս, յաճախեցան նեղութիւնք չարչարանաց նոցա․ զի ահաւանիկ Ահարոն երիւք ամօք երէց էր քան զՄովսէս, և ոչ նեղեցաւ մայր նորա ծածկել թաքուցանել զԱհարոն որպէս զՄովսէս․ և յամին ութսներորդի նորին Մովսիսի եղև նոցա փրկութի՟ ։ Արդ եթէ երկերիւր քսան և հինգ ամ բնակեցան նոքա անդ, բայց նեղելով նեղեցան նոքա ութսուն ամ ։ Իսկ արդ ո՞ւր խնդրեսցես դու զայն որ ասացաւ չորեքհարիւր ամ հնազանդելին նոքա յերկիր օտար ։ Արդ տես դու զի այս չորեքհարիւր ամ, որ յաւելան ՚ի վերայ նոցա երեսուն ևս, զի ոչ եթէ ՚ի վերայ զաւակի նորա եդաւ միայն ամքս այս, այլ ՚ի վերայ նորա ։

Արդ հնգետասան ամք Աբրահամու, և վաթսուն ամ Սահակայ, հարիւր և երեսուն Յակոբայ յերկիր օտար համարեալ լինի նոցա՝ իբրև յերկիր ժառանգութե՟ բնակեալ էին նոքա ։ Բայց դար չորրորդ՝ յորէ անտի յայնմանէ, յորմէ հետէ մտին նոքա յերկիրն եգիպտացւոց, համարեալ լինի ։ Քաղէբ և Յեսու չորրորդ են․ բայց տղայք որ ելին յերկրէն եգիպտացւոց հինգերորդ են․ մանկունք՝ որ իննուտասնամեայ էին ՚ի ժամանակին իբրև ելին յերկրէն եգիպտացւոց, մտին յերկիր պարգևաց ։ Եւ քանզի ասէ "Զի և այժմ չև ևս լցեալ չափ մեղացն ամուրհացւոցն„ զայս յայտ արար․ զի ոչ եդեալ էր ՚ի մտի իւրեանց ամենևին կարճել ՚ի մեղաց անտի, այլ մեղս ՚ի վերայ մեղաց յաճախել ։ Զի ահաւանիկ հինգ դար երկայնամիտ եղև առ նոսա․ իբրու յառաջ քան զայն հինգ դար մեղաւորք էին ։ Բայց դարձեալ ըստ երկայնմտութե՟ն ա՟յ ասացաւ, ասէ "Զի այժմիկ չև է լցեալ չափ մեղացն ամուրհացւոց„․ սակայն նոյն ինքն երկայնմտութիւն նորա յայտ է՝ ուստի առնու սկիզբն ժամանակն ։ Զոր օրինակ յայտ է՝ ուստի առնու զկատարած դատակնիքն ։

Եւ Աբրահամ որպէս աստղ մի յարևելից, և առակեցաւ զաւակ նորա յաստեղս երկնից ։ Եւ Սահակ զի պատարագեցաւ իբրև զգառն մի, պատարագեցաւ գառն պատարագաց նորա ։ Յակովբ զի ստեաց հօր իւրում մորթեօք այծենեօք, ստեցին նմա որդիք

իւր մորթովք ուլենեօք ։ ԶՄովսէս զի կամեցան հեղձուցանել զտղայսն նորա ջուրբքն, 'ի մէջ ջուրց հեղձոյց զհեղձուցիչսն իւր ։

“Եւ ասէ Սառա ցԱբրահամ․ որովհետեւ արգել զիս ա̃ծ զի մի՛ ծնայց քեզ որդի, տուեալ քեզ զՀագար նաժիշտ իմ․ 'ի նմանէ եղիցի քեզ որդի, թերեւս մխիթարեցայց 'ի նմանէ ։ Եւ եմուտ Աբրահամ առ Հագար և յղացաւ․ և իբրև ետես թէ յղացաւ՝ հպարտացաւ, սկսաւ արհամարհել զտիկինն իւր„ ։ Արդ եթէ յղացար դու, ո՞վ Հագար, նա և տիկինն քո վասն զաւակի որդւոյ ետ զքեզ առն իւրում․ արդ յուրախութե̃ նորա կամեցար տրտմեցուցանել դու զնա ։ Վասն այնորիկ յուրախութե̃ նորա տրտմեցոյց ստուգութի̃ն և զնա․ զի 'ի տեղւոջ յորում արժան էր Սառայի նախանձել, յաղթեաց նա նախանձու․ յորում վայրի աւետիքն յաղթահարեցան յորդեսէր սիրոյ անտի ։ Հագար յանարգանս թշնամանաց Սառայի տուաւ, զի՞րդ ժառանգեր զաւակ նորա զերկիրն պարգեւաց ։ Եւ զի կարծեաց Հագար՝ թէ Աբրահամու ժառանգ որդի նորա է, սկսաւ յաղանալ հպարտանալ և արհամարհել զտիկինն իւր ։ “Երևեցաւ նմա հրեշտակ տեառն ա̃յ և ասէ․ Հագար աղախին Սառայի, զի՞ խնդրես աստ ։ Ասէ յերեսաց Սառայի տիկնոջ իմոյ փախուցեալ եմ ։ Ասէ ցնա հրեշտակն․ դարձիր առ տիկին քո և հնազանդ լեր 'ի ներքոյ ոտից նորա ։ Եւ ասէ ցնա հրեշտակն․ բազմացուցից զզաւակ քո, և եղիցի անթիւ 'ի բազմութե̃ն, և դէմ յանդիման սահմանի եղբարց իւրոց բնակութի̃ նորա „ ։ Գիտաց Հագար՝ թէ այլ որդիք լինելոց են Աբրահամու․ և զի բաժանեալ առեալ էր զժառանգութի̃ որդւոցն Սեմայ, եղև նա ցիր վայրագ․ բայց եղբարք նորա որդիքն Քետուրայ․ և վասն ճշմարտութե̃ նոցա՝ որոց ասաց նմա, ցոյց զփառս իւր առաջի նոցա․ զի ասէ․ “Դու ես ա̃ծ՝ որ հայեցար յիս․ զի ասաց՝ առաջի աչաց իմոց երևեցաւ ինձ„ ։ Եւ զի ասէ “Արարից զքեզ յազգ մեծ, և թագաւորք 'ի միջոյ քո ելցեն„․ տունն իսմայելի յազգս իւրեանց, և տունն Քետուրայ, և տունն Սահակայ ։ Եւ փոխանակ այնր՝ զի ասէ “Ե-

գիտ զնա հրեշտակն 'ի վերայ Ճանապարհին որ հանէր 'ի Գեդար կողմն 'ի Ճանապարհին Աթարայ „ · ասէ հեբրայեցի՝ "Այս ինքն Ասորեստանի „ ։

Ուխտ Թլփատութեան ։

"Այս է, ասէ, ուխտ իմ զոր պահեսցես դու · զի թլփատեսջիք զմարմին անթլփատութե՟ ձերոյ · և ամենայն որ ոչ թլփատեսցի, սատակելով սատակեսցի անձն այն „ ։ Եւ ահաւասիկ օրէնք ճշմարիտք տընկեալ են 'ի սիրտ մարդկան, և նոքօք հաճոյ եղեն առաջինքն · և յաւելուածք՝ զի եղեն վասն պատճառանաց ընչի, և խափանեցան ։ Արդ թլփատութի՟ յԱբրահամէ · և սէր նորա ընդ ա՟յ յառաջագոյն կանխագոյն է քան զթլփատութի՟ ընդ արդարոյն՝ որ յառաջ քան զնա · Ենովք որ վերացաւն, և Նոյ որ ապրեցաւն, և Սէթ որ օրհնեցաւ, և Մելքիսեդեկ որ քահանայացաւ ։ Եւ եթէ ասիցեն՝ թէ սոքա յառաջ քան զօրէնսն եղեն · և զի՞րդ՝ թէ այդ այդպէս է, վասն չնութե՟ց, սպանութե՟ց, կռապաշտութե՟ց յառաջ քան զօրէնսն գիտացին և ծանեան զնոսա · և իբրև 'ի չարեաց հեռացան խորշեցան մեկնեցան · ո՞չ ապա զի բնութե՟ որոշեցին զբարին 'ի չարէ անտի ։ Եւ եթէ զա՟ծպաշտութի՟ ոչ մոռացան արդարքն, սակայն մոռացան և զթլփատութի՟ և զշաբաթ ։ Շատ իցէ այս վասն դսրովլութե՟ ժողովրդեանն ։ Յիշեաց Յովսէփ զհեզութի՟ զզաստութի՟ առաւել քան զթլփատութի՟ն, զի ոչ թլփատեաց զորդիս իւր · և երկոքին 'ի մի անդամս պաշտին փոխանակ անթլփատութե՟, զի յինքենէ էր · հատ ընկէց զչնութի՟, զի ոչ յինքենէ ։ Թէ այդ այդպէս է, մոլորեցաւ խաբեցաւ Յակոբ և առ զքոյրսն զերկոսեան · և զհետ կուոցն Լաբանու ոչ մոլորեցաւ ։ Եւ Իսրայէլ յիշեաց զթլփատութիւնն և մոռացաւ զԱստուած ։ Առաքեաց Աստուած զՅովսէփ, և արարին զնա եգիպտացիքն ա՟ծ և երկիր պագին նմա · և առաքեաց ա՟ծ զորդի իւր առ հեբրայեցիս, և կախեցին զփայտէ ։ Հեթանոսք երկիր պագանեն արդարոց նորա որպէս և Աստուծոյ · և հեբրայեցիք սպանանեն

զմարգարէս նորա որպէս զմոլեգինս ապականիչս ։

Արդ ոչ եթէ զի օգնեսցէ տուաւ թլփատութիւն, այլ զի մեկնեսցէ որոշեսցէ․ զի ոչ արգել զշաւաղն Աբրահամու 'ի հնազանդութենէ, և ոչ Իսմայելի ժառանգութիւն ետ, և ոչ Եսաւայ օրհնութիւն ետ․ և ամենեքումբք հանդերձ որ անարգեցան ։ Եւ դարձեալ զի ոչ եթէ իմաստունս կատարէին զնա, այլ տղայք անգէտք․ զի և ոչ՝ թէպէտ և արդարուն էր, ժառանգէին ընդունելիք նորա․ զի ոչ գիտութեան նոցա կատարեալ լինէր նա 'ի նոսա ։ Եւ Մովսէս զքառասուն ամ խափանեաց զնա յանապատի անդ և ոչ պատժեցաւ ։ Եւ զի ասացաւ Եսովայ երկրորդում, զի չիցէ օտարութիւն, այն նոյն իսկ է ։ Զի թէպէտ և յորժամ հայեսցի 'ի մարմին իւր, յիշեսցէ զուխտ Աստուծոյ իւրոյ․ և ապա շաբաթն՝ հանդերձ հանդերձիւք իւրեանց և կերակրօք և անասնօք իւրեանց՝ այլօքն հանդերձ ։

Ստեղծ տէր Աստուած զմարդն առանց թլփատութեան․ և իբր անց զպատուիրանաւն, ոչ ցուցանի ուրեք թէ վասն թլփատութեան արգելաւ 'ի դրախտէ անտի ։ Եւ ոչ վասն շաբաթու այսուհետև մեկնեալ մերժեալ է հրեայ 'ի դրախտէ անտի․ զի ոչ օրէնք եդան և ոչ շաբաթ հանգստեան և ոչ տօնք տարեկանաց․ զի գլուխ տօնից տարեկանաց ինքն է դրախտն ։ Արդ յայտ է թէ գնացք եկեղեցւոյ՝ որ արտաքոյ քան զօրէնսն 'ի կեանս դրախտին հրաւիրեն, եթէ զառաջինն արժան է պահել՝ օրէնք նոր դրախտի անդ ևս արժանաւոր է պահել ։ Քանզի գիտէր Աստուած, թէ զկնի կռապաշտութեան եգիպտացւոյն երթան նոքա․ և չէր ինչ հնար՝ եթէ 'ի հաւատոց անտի Աբրաամու յայտնեսցին և երևեսցին այնոքիկ՝ որ գնացից նոցա ոչ հաւասարեցին․ եդ մարմնոյ նոցա կնիք վասն քննութեանց նոցա, զի պատրաստեալ էր լինել վասն ամօթոյ նոցա․ զի հեթանոսք մոլորեալք՝ մերձաւորք եղեն․ և Իսրայէլ որ ընտրեալն էր՝ հեռացաւ ։ Նա և Աբրահամու իսկ այսպէս ասացաւ․ “Այս է նշան ուխտի ընդ իս և ընդ քեզ„ ։ Եւ եթէ Աստուած նշան անուանէ զնա, զիա՞րդ ասեն թէ պատիւ փառաց տուաւ նոցա․ զի յանապատի անդ 'ի վերակացութեան օրէնսդրչին և մարգարէիցն և քահանայիցն և ոչ մի ոչ թլփա-

տեցան, զի ոչ էին մերձ 'ի հեթանոսս. և նշանք ևս էին 'ի մէջ նոցա մինչ չև թլփատէին: Եւ մեծ ևս, զի ամենայն թլփատեալքն յանապատի անդ սատակեցան. և որք մնան յանթլփատութեան, նոքա մտին յերկիր պարգևաց: Եւ անթլփատքն դարձեալ յանապատի անդ կերակրեցան մաննայիւ. և իբրև թլփատեաց զնոսա Յեսու՝ թէ ահա մտցեն, բարձաւ 'ի նոցանէ մաննայն. և ահա օգտութիւն և շաբաթ թլփատութեան: Նա և սուրն իսկ թլփատութեան յանդիմանէ զնոսա՝ եթէ թշնամի է նա մարդկան. զի ահաւանիկ Սիւքեմ թլփատեալք՝ զթլփատեալսն կոտորեցին. և մարգարէն ասէ. “Ամենայն հեթանոսք անթլփատ են մարմնով. և տունն Իսրայէլի անթլփատ են սրտիւք”:

Արդ եթէ թլփատութիւն մարմնոյս պիտոյ էր, ընդէ՞ր բամբասէր զանթլփատ սրտիւք. այլ եկեղեցի զի ստացեալ ունի յանձին զթլփատութիւն սրտի, ոչ ինչ պիտոյ է նմա թլփատութիւն մարմնոյ: “Ութօրեայ, ասէ, թլփատեսցի”. և ահաւասիկ սոքա որ թլփատեալքս են, դարձեալ միւսանգամ անթլփատս ծնանին: Եւ եթէ էր թլփատութիւն յԱստուծոյ, պարտ էր թլփատելոցն թլփատեալս ծնանել, որպէս մարդ 'ի մարդոյ. այլ զոր ինչ նոքա նշանօք գործեն, արարածք ծննդօք փոփոխեն զնոսա: Եւ զոր օրինակ բնութիւն լուծանէ զթլփատութիւն, սոյնպէս լուծանէ զշաբաթս. զի ամենայն ինչ գործելով գործէ և գործելով գործի, և ինքն իսկ օր՝ յօրէ ոչ որոշի: Նա և օրէնքն լուծանեն զթլփատութիւնք 'ի վախճանել տղայոցն յառաջ քան զութօրեայ ժամանակն, և լուծանէ զշաբաթս թլփատութեամբն՝ զի ծնանին: Եւ զի ոչ եթէ սոքա են որ սրբեն, վկայէ Երեմիա յասել իւրում. “Մինչ չև նկարեալ էր իմ յորովայնի, ծանեայ զքեզ. և մինչ չև ելեալ էիր՝ յարգանդի սուրբ արարի զքեզ”: Եւ եթէ յարգանդի այսպէս նկարեաց իմաստութիւն նորա, յաղթեն բնութեանն: Եւ եթէ յարգանդի սրբի շունչ, ո՞ւր է թլփատութիւն մարմնոյ. և եթէ մինչ չև ծնեալ էր սրբեցաւ, ո՞ւր է ուխտն որ ասաց՝ ամենայն զի թլփատէին, զի յայտնի լիցի ժողովուրդն զոր ընտրեաց Աստուած: Ահաւասիկ Իսմայէլ խոտեցաւ անարգեցաւ, իբրու ինքն և զաւակ իւր

թլփատեալք էին. և Սահակ օրհնեցաւ մինչ չև ծնեալ էր, և ընդունելի եղև անուն նորա մինչ չև յղացեալ էր։ Եւ 'ի Սեթայ կարգին արդար ոչ հատաւ մինչև յԱբրաամ, և թլփատուն ուրեք ոչ եղև պիտոյ։ Եւ ընդ Աբրահամու չորիցս անգամ խօսեցաւ Ած, և ապա 'ի չորրորդումն նուագի անդ ստեղծ ընկալաւ զթլփատութի։ Արդ զոր օրինակ ոչ յայտնեաց անթլփատիցն Ենովքայ և Նոյի՝ և եթէ հանդերձեալ է պիղծ համարել զանթլփատութի, և ոչ Սեթայ և Ենովսայ՝ և եթէ սուրբ առնէ զշաբաթս, սոյնպէս և ոչ յայտնեաց՝ եթէ հանդերձեալ է լուծանել զշաբաթս և զթլփատութի։

Արդ անփոյթ արար, ասէ, զառաջինս, և կապեաց զմիջինսն, և թոյլ ետ վերջնոցս։ Եւ զի յայտ արասցէ զիշխանուն տէրուն իւրոյ օրէնսդիրն, ոչ յայտնեաց մինչև օրէնք նորա երևեցան։ Ամենայն օրէնք 'ի ժամանակի իւրում եթէ էր յայտնեալ յառաջ քան զժամանակն՝ թէ անցանելոց են, անգոսնեալ անարգեալ լինէին 'ի ժամանակս իւրեանց. և փութացեալ ընթանային առաջինքն թլփատել 'ի ժամանակի անդ՝ յորում չէր արժան. կամ լուծանէին միջինքն զթլփատութի 'ի ժամանակի անդ՝ յորում չէր օրէն՝ եթէ էր յայտնեալ եթէ խափանելոց էր զնա. և զի ետ զնա նոցա՝ պիտոյ իսկ էր։ Սոյնպէս և զշաբաթն և զամենայն օրէնս ժամանակեանս. այլ կուրացոյց զնոսա յայնմիկ, զի անցանէին զնովօք և ոչ լինէին պատժեալք։ Արդ լուծանել որ ըստ օրէ կամ ժամ 'ի ժամէ՝ յայտ առնէ զի ոչ եթէ յաւիտենից են, յայնմիկ՝ զի սեղանաւն կապեալ էին, և ընդ լուծանելն նորա՝ լուծանէին և նոքա։ Ասէ այսպէս. ոչ ունիս իշխանութի դու յամենայն տեղիս անխտիր մատուցանել զպատարագս քո. այլ օրէնք ճշմարիտ առանց զոհից պատարագաց և առանց սեղանոյ յամենայն տեղիս՝ տեղի նոցա է, և յամենայն ժամ՝ ժամ նոցա։ Արդ ոչ եթէ վասն թլփատուն կոչեցան որդիք Աբրահամու, և ոչ վասն շաբաթուց մտին յերկիրն օրհնեալ, և ոչ ընտրութիք կերակրոց սրբեցին զնոսա։ Այլ ամենեքեան՝ որ ելին յերկրէն եգիպտացւոց և անցին ընդ ծովն և գնացին յա-

նապատի անդ , մի 'ի պահոց անտի ոչ կարաց օգնել նոցա • այլ մինչ թլփատեալն էին , պաշտեցին ըզ- կուռս • և 'ի պահելն իւրեանց զշաբաթ , արարին կուռս որթ պատկեր • և մինչ ընտրու՟նք կերակրոց 'ի մէջ կային , պոռնկեցան ընդ դստերսն Մադիամու այլոցն հանդերձ ։

ԳԼՈՒԽ Զ

ԱԲՐԱՀԱՄ ոչ եթէ զի ծերացեալ էր՝ ասաց "Ծերացայ անցի զժամանակօք ծննդեան,, , այլ վասն մեծութե՟ գործոյն՝ որ 'ի մէջ նորա և ա՟յ և զաւակի նորա և այլոց որ 'ի միջի • զի որդիք բազումք յետոյ Սահակայ 'ի Քետուրայ եղեն Աբրահամու ։ Սոյն- պէս և Դաւիթ վաթսնամեայ էր , ածին նմա կոյս մի զի ջեռուսցէ զնա • այս ինքն ոչ եթէ զի ոչ կարէր հաղորդել ընդ կուսին , և անցեալ էր նա ըստ ժա- մանակս բնութե՟ իւրոյ , այլ զի խրատեցաւ նա յա- ռաջինն՝ ցոյց նա սանձս կամաց իւրոց • փորձեցաւ 'ի Բերսաբէէ՝ զի մի ևս բարձրասցի , որպէս և այլքն ամեն • վասն այսորիկ "Փորձեաց զիս տէր և քննեաց զիս ,, • կամ փոխանակ զի ասաց "Փորձեա զիս տէր , և քննեա զիս ,, ։

Եւ զի ասէ "Ահա Սառա ծիծաղեցաւ ,, , նա և Աբրահամ ծիծաղեցաւ • այլ Սառա իբրև այպն կատականաց առնէր զբանիւն , այլ Աբրահամ յու- րախութե՟ սրտի իւրոյ համբերէին շրթունք նորա • վասն այսորիկ Սառա միայն պատժեցաւ ։ Եւ իբրև հաստատեցաւ Աբրահամայ հարիւրամենի ծնանել , և Սառայի իննսունամենի որդի լինել , ոչ կարաց համբերել զցնծութի՟ մտաց իւրոց ։ Եւ ասէ Աբրա- համ • "Իսմայէլ եւեթ կեցցէ առաջի քո ,, • զի յայտ արասցէ երկուս իրս • մի՝ զի զորդի աղախնոյն իբրև զորդի ազատին սիրէր • և 'ի հանել իւրում զնա , յայտնի լինիցի • զոր օրինակ ձգնեալ նեղեալ էր վասն Իսահակայ յերթալ պատարագել զնա , նոյնպէս վասն Իսմայէլի ։ Եւ երկրորդ զի յայտ արասցէ՝ թէ վասն որդւոյ հաղորդեցաւ ընդ Հագարայ , և ոչ

վասն ցանկութե̃ ։ «Ինձ, ասէ, Իսմայէլ կեցցէ առաջի քո»․ զմեծութ̃ի պարգևաց տուչին յայտ արար, և ոչ եթէ երկմտեաց ինչ․ և յայնմանէ՝ որ աւետիսն ետ նմա պարգևաց՝ խնդրէր նա․ վասն այսորիկ ՚ի վերայ մասին պարգևաց զարմացեալ էր, և վասն յաւելլոյն շնորհաց։ Արդ յայտ արար զփափագելն իւր առ պարգևսն, և զգութն իւր որ առ Իսմայէլ։ Կամ ընդ համարձակութիւն ժպրհութե̃ն Հագարայ հայէր․ յաղագս այսորիկ վասն կենաց որդւոյ իւրոյ երկմտէր նա յասել իւրում․ «Ինձ Իսմայէլ և եթ կեցցէ առաջի քո»։ Կամ զի ոչ հրամանաւ ա̃յ առ նա զԱգար, այլ ըստ խրատու Սառայի, խորհեցաւ նա ընդ միտս իւր և ասէ․ զի եթէ ՚ի Սառայէ տուեալ լինի ինձ որդի, ապա խնդրուածս կենաց արժան է մատուցանել ՚ի վերայ Իսմայէլի։ Այն զի որպէս զԻսահակ՝ նոյնպէս սիրէր զնա, յայնմանէ՝ զի իբրև յանցեաւ Սահակայ ինքն Իսմայէլ, որոշել մեկնել զնա ըստ բանին Սառայի ոչ կամեցաւ։ Եւ եթէ տուչին Սահակայ վկայութ̃ե իւրով զբանն Սառայի ոչ հաստատեալ էր, զԻսմայէլ ՚ի ժառանգութ̃է իւրմէ նա ոչ մերժէր։

Ոչ ետուն աւետիս հրեշտակք Աբրահամու մինչ կանխաւ յառաջագոյն․ զի մի կարծիցի զնմանէն՝ թէ վասն այնորիկ ընկալաւ զնոսա․ նա և յետոյ իսկ ծանեաւ զնոսա՝ թէ հրեշտակք իցեն նոքա։ Զի մինչ չև հրեշտակացն եկեալ էր առ նա, գրեալ է, ասէ, «Երևեցաւ տէր ա̃ծ Աբրահամու առ կաղնեաւն Մամբրէի»․ և ապա ետես զերիս արսն։ Եւ իբրև ընթացաւ ընդ առաջ նոցա, իբրև ընդ առաջ օտարաց ընթացաւ․ ծանեաւ զա̃ծ՝ այն որ յառաջ երևեալ էր նմա։ Այլ իբրև չոգաւ եհաս առ նոսա, այն ա̃ծ՝ որ երևեցաւ նմա յառաջագոյն, եկն լուծաւ ՚ի վերայ միոյ ՚ի նոցանէն․ ետես նա զայն նշան ՚ի մի ոք ՚ի նոցանէն, և ՚ի նմանէ խնդրէր․ և նա ինքն է՝ որ ետ նմա աւետիս վասն Իսահակայ որդւոյ նորա։ Եւ իբրև մեկնեցան երկուքն երթալ ՚ի Սոդոմ, մնաց այն՝ որ խօսէրն նովաւ ա̃ծ։ Եւ առաջի հրեշտակայն այնոցիկ ասէ ա̃ծ․ «Մի՞ եթէ թաքուստ ինչ իցէ յԱբրահամէ ծառայէ իմմէ»․

զի երիւք վկայիւք օրհնեսցէ զնա և բազմացուսցէ զնա զի ընկալաւ զնոսա. և նոքօք կործանեաց զՍոդոմ, զի ոչ ընկալան զնոսա 'ի մէջ նորա: Նա և Ղովտայ մի յերկուց անտի երևեցաւ Աստուած յետոյ ըստ բանին Աբրահամու. խօսեցաւ և նա առմի: Եւ քանզի պատուական և փառաւորք էին հրեշտակքն մի քան զմի, ետես զփառս մեծութ̃ե՝ որ էր առ մի 'ի նոցանէ աւելի քան զընկերաց իւրոց, և տեսլեամբ ևս. և զի լուռ ևս կային առաջի նորա՝ որ փոքունքն էին քան զնա: Եւ յառաջ մինչև երթեալ էր Աբրահամու ընդ առաջ նոցա, և զնոսա ևս երիս տեարս կարդաց. որպէս վասն Ղովտայ գրեալ է, ասէ. ետես երկուս արս՝ թէ զի նման իցեն նոքա օտարաց, ահաւանիկ յետ ճաշոյն ուտելոյ գիտաց Աբրահամ թէ հրեշտակք են: Գրեալ է եթէ յոտն կացին անտի արքն և գնացին. և զճշմարտութ̃ի նոցա ետես Գեդէոն, հրեշտակ և տէր. սոյնպէս և Մովսէս. բայց մեկնապէս Հագար ասաց. ասէ, տեսիլ ո̃յ երևեցաւ ինձ, յետ տեսանելոյ զիս հրեշտակին. և նովին հրեշտակաւ ետես զնա. իբրև զայն զի ասէ. անուն իմ 'ի վերայ նոցա, այս ինքն նիշ նշանակի իմն 'ի վերայ նորա:

Եւ որպէս ետ նա զնշան իւր 'ի վերայ Մովսիսի 'ի ժամանակի իբրև իջին նստան փառք նորա 'ի վերայ երեսաց նորա, սոյնպէս փառաւոր լինէր հրեշտակն՝ յորում երևէր նմա փառք մեծութ̃ե որպէս և մարգարէանային իւթանասունքն. և հոգին 'ի մի անդ երևէր թէ հանգուցեալ էր: Զի և երկոտասանքն զփականսն ունէին, սակայն Շմաւոնի տուեալ լինէին. և զի նա իսկ էր գլուխ, 'ի վերայ քարոզութ̃ե նորա ասաց շինել զեկեղեցի իւր: Զոր օրինակ արասցեն զօր թագաւորի պատերազմ, և զօրագլուխն որ ընդ նոսա իցէ՝ յանուն նորա անուանին ամենայն զօրքն: "Կոտորեաց զնոսա, ասէ, Յովաբ որդի Շարուհէ„: Մեծութ̃ին որ բնակեալ է 'ի բարձունս, զգեցաւ զկերպարանս օտարաց և առ սիրելին օտարաց եկն, զի մտցեն որպէս օտարք քաղցեալք հացիւ, և տայցեն որդի քաղցելոյն ծննդեամբ: Եւ իբրև լցաւ որովայն հիւրոյն 'ի սեղանոյ անտի, լցան ամուլ մէջքն ասպըն-

ջականացն 'ի պարգևաց անտի։ Ընթացաւ ընդ առաջ նորա, զի տացէ այնոցիկ որ ծածկեցին զպարգևսն իւրեանց 'ի ձեռն աղքատութեան, զի ցուցցեն զփոյթ յօժարութեան այնոցիկ՝ որ առնուն զնա ։ “Եկայք, ասէ, 'ի տուն ծառայի ձերոյ„ ։ Եւ ապա յետ այսորիկ ասաց վասն նորա. “Մի՛ եթէ թաքուստ ինչ իցէ յԱբրահամէ ծառայէ իմմէ„ ։ Այս բան՝ որ վաղվաղակի կատարեցաւ 'ի տեղւոջ իւրում, փոխանակ զի ոչ գարշեցաւ նա լինել բարեկամ օտարաց, խոնարհեցաւ Աստուած յայտնել նմա զխորհուրդս որպէս և բարեկամի ։

“Աղաղակ, ասէ, սոդոմայեցւոց կանխեաց բազմացաւ. և մեղք նոցա մեծամեծք 'ի կշիռս դիզան, և եկին հասին մինչև առ իս ։ Պատասխանի ետ նմա և ասէ. եթէ իցեն յիսուն արդար 'ի քաղաքի անդ, կորուսանիցես ապականե՞ս դու զքաղաքն, և ո՞չ ներես դու վասն յիսուն արդարոյ թէ գտցի 'ի նմա. քաւ լիցի քեզ՝ որ դատիս զամենայն երկիր„ ։ Այս ինքն զի և ամենայն երկիր լի է մեղօք և անօրէնութեամբք. և քաղցր ես դու 'ի վերայ նոցա, և 'ի վերայ սոցա բարկանա՞ս դու ։ Եւ զի ասէ “Մի՛ արասցես դու զայդ դատաստան„. ոչ եթէ 'ի վերայ արդարոց խնդրէր նա, այլ 'ի վերայ մեղաւորաց. քանզի գիտէր՝ թէ զարդարսն ոչ սատակէ. այլ արար ապաւէն զարդարսն, և խնդրեաց 'ի վերայ մեղաւորաց ։ Ո՛վ յստակութիւն Աբրահամու. Եղիա ժխտեցաւ յասելն իւրում “Ես միայն մնացեալ եմ„. և Աբրահամ 'ի կողմն մի երկրի ասաց “Եթէ իցեն յիսուն արդար 'ի քաղաքի անդ„ ։ Եղիա 'ի պաշտօնէից անտի Բահաղու և վասն մոլորութեան Եզաբելայ և Աքաբու զազրացեալ ձանձրացեալ էր յամենայն ժողովրդենէ անտի. այլ Աբրահամ 'ի նմանութենէ անտի Աբիմելէքայ և Մելքիսեդեկի հաւատաց և 'ի վերայ բազմաց ։

Գնացին հրեշտակքն 'ի Սոդոմ. այլ առ սոդոմայեցիսն բարկութիւն, զի ողորմութիւն առաջնորդեաց նմա, այն՝ որ ներէրն, և ոչ դարձան. և առ Աբրահամ ողորմութիւն, զի առաջնորդէր նոցա ստուգութիւն արդարութեան. առաքեաց առ նա հրեշտակս, և

յանձն արար նոցա աւետիս պարգեւաց. զի զարմացին հրեշտակքն թէ որպիսի բարեկամ գոյ ա՟յ 'ի վերայ երկրի։ Եւ միւս եւս, զի ծանիցեն զպատիւն զոր առնէր նա օտարաց, եւ ապա տացեն նմա աւետիս պարգեւաց։ Ի նմին օրինակի առաքեաց զնոսա 'ի Սոդոմ, զի տեսցեն նախ զանարգանս օտարաց, եւ ապա արասցեն զնա հրձիգ։ Որպէս եւ անդ մինչ չեւ փորձեալ էր եւ գտեալ էր զճշմարտութի՟ սիրոյ նորա, ոչ ետուն նմա զԻսահակ։ Այսպէս եւ աստ իբրեւ գիտացին եւ ծանեան զգործսն, ապա իջուցին 'ի վերայ նորա հուր։

Չիք սէր որ ոչ հաւատայ, եւ ոչ հաւատք որ ոչ սիրեն. զի 'ի ժամանակի իբրեւ սիրեաց ա՟ծ զԱբրահամ՝ եւ օրհնեաց զնա. եւ իբրեւ սիրեաց Աբրահամ զա՟ծ՝ հաւատաց նմա։ Ահ եւ երկիւղ 'ի նեղութենէ է, այլ հաւատք 'ի կամաց են. երկիւղ 'ի սպառնութենէ ծնանի, եւ հաւատք 'ի սիրոյ։ Իսկ զի՞նչ սէր էր առ ա՟ծ Աբրահամու, բայց 'ի հաւատոց. եւ զի՞նչ քննութի՟ էր ա՟յ առ հաւատս, բայց աւետիքն պարգեւաց։ Զի՞նչ արժան էր Աբրահամու, այլ հաւատալ յա՟ծ՝ որպէս յա՟ծ. եւ զի՞նչ վայել էր ա՟յ, բայց աւետիս տալ որպէս եւ փորձիչ, եւ հատուսցէ որպէս եւ փոխառու. զի հաւատք նորա որ 'ի մէնջն են՝ փոխ են, եւ պարգեւքն որ 'ի նմանէ են՝ հատուցումն են։ Տես ո՞րչափ դիւրին է դուռն՝ որ բացեալ է քեզ, ո՞վ վատ, զի կամք քո հաստատունք մուրհակ պարտեաց նորա են առ քեզ. ո՞րչափ հաւատաս, սոյնպէս տաս փոխ. եւ ո՞րչափ փոխ տաս, ընդ միոյ հարիւր պահանջես։ Զծառայսն Ղաւթայ զբանսերողս եւ զկագացողս մերժեաց ստուգութի՟ն եւ ընկէց 'ի մէջ սոդոմայեցւոց, որ զբանեարսն սիրէին. զի եւ նոքա խրատեսցին ընդ նոսա. եւ Ղովտ՝ զի համբերէր ներքնոց եւ արտաքնոց, ապրիցի 'ի միջոյ նոցա։

Տես դու զգործսն Աբրահամու եւ զաղօթսն զոր արար ըստ անչափ բարկութե՟ երկրին սոդոմայեցւոց. այսպէս անչափ իսկ չար էին խորհուրդք նոցա։ Պտուղ երկրի նոցա յոյժ քաղցր էր, այլ պտուղ գործոց նոցա յոյժ դառն էր. եւ երկիր նոցա ըստ բնութե՟ պտուղ ցանկալի բղխէր, այլ ապատութի՟ նոցա

արտաքոյ բնութեան պտուղ զազրութեան բղխէր ։ Ետ նոցա երկիր բարութի, զի թերեւս հայեսցին չարքն ընդ երկրին բարութի եւ նմանիցեն նմա, այլ ոչ նմանեցին նոքա բարութեան եւ վայելչութեան երկրին. այլ փոխանակ բարութեան զգործ խոտորման գործեցին ։ Եւ զի ոչ նմանեցին խոտորեալքն բարութեան երկրին, առտապալեաց կործանեաց զերկիրն, զի նմանիցէ նոցա ։ Փոխանակ զի խոտորնակ մտօք գնացին նոքա 'ի վերայ նորա, ետ նոցա երկիր բարութեան՝ զի առանց պատասխանի տալոյ եղիցին նոքա ։

Արդ զգործս սոդոմայեցւոց յանուն աղաղակի առակեաց. զի գոչէին եւ աղաղակէին մեղք նոցա առաջի դատաւորին, որպէս արիւն Աբէլի առաջի վրէժխնդրին. ասէ ցԱբրահամ. «Աղաղակ սոդոմացւոց եւ գոմորացւոց եկին հասին մինչեւ առ իս» ։ Եւ փոխանակ զի ուրախ եղիցի Աբրահամ՝ զի սկսաւ տէր կոտորել սատակել զքանանացին, զի ընկալցի նա զժառանգութիւն նոցա, որպէս տուաւ նմա աւետիքն, արդ անցեալ կայր՝ խնդրէր եւ աղաչէր փոխանակ նոցա. նա եւ որ զերեցան եւս, դարձոյց անդրէն ։ Եւ եթէ վասն Ղովտայ, կարող էր եւ զՂովտ միայն թափել իբրեւ զայն զՇամիշնէ բռքովրեանց. այլ գընաց նա առնել մարտ պատերազմի ընդ այնոսիկ՝ որ եկին 'ի թափել ընդարձակեցուցանել նմա զերկիրն, զի ժառանգեսցէ զնա ։ «Եւ եթէ իցեն 'ի նմա, ասէ, յիսուն արդարք». եցոյց նա՝ զի այս կամք էին, զի ամենայն ինչ նովաւ եղեւ իբրեւ զայն [1] զՋաքարիայն ասէ. ասաց տէր ցսատանայ սաստեսցէ 'ի քեզ տէր ։

Այլ ոչ եթող ստուգութիւնն զՂովտ 'ի մէջ սոդոմայեցւոցն, փոխանակ զի ոչ եթող նա զստուգութիւն 'ի մէջ սոդոմայեցւոցն ։ Հաստատեցաւ նա 'ի նմա մինչ դեռ 'ի միջի նոցա բնակեալ էր, եւ մեկնեաց որոշեաց՝ զնա եւ հան զնա իբրեւ 'ի մէջ նոցա խառն էր նա ։ Մեկնեաց որոշեաց եւ եցոյց նմա զգործս ստուգութեան 'ի մէջ անիրաւաց, որոշեաց մեկնեաց եւ նա եւ յայտնի եցոյց զփրկութիւն Ղովտայ յանօրինաց անտի ։ Վայել էր իսկ ստուգութիւնն 'ի թիկունս

1 Յօրինակին զայն ։

հասանել նորա 'ի ժամանակի նեղութե՟, այնմիկ՝ որ ոչն մոռացաւ նա զստուգութի՟ն 'ի ժամանակի ընդդարձակութե՟ն ։ Այլ արժան էր իսկ, զի մի ընկղմիցի նա 'ի մէջ սոդոմայեցւոցն այր մի՝ որ կորզեաց եհան զանձն իւր 'ի գործոց անտի սոդոմայեցւոց ։ Զիա՞րդ կորնչէր նա ընդ սոդոմայեցիսն այր մի՝ որ ոչ կորոյս զխորհուրդ իւր 'ի մէջ սոդոմայեցւոց ․ Թէպէտ և խորհուրդք սոդոմայեցւոց կորուսեալ և ապականեալ էին, սակայն նորա խորհուրդքն հաստատուն էին ։ Վասն այսորիկ 'ի ժամանակի իբրև կործանեցաւ երկիրն 'ի ներքոյ սոդոմայեցւոց, երկիրն որ 'ի ներքոյ ոտից նորա՝ հաստատուն կայր ։ Փոխանակ զի տապալեաց ցանկութի՟ զխորհուրդս նոցա արտաքոյ քան զբնութի՟, տապալեաց ստուգութի՟ զերկիր նոցա առանց բնութե՟ ։ Եւ զի եղեն նոքա կամօք իւրեանց 'ի ներքոյ մտաց տապալելոց, եղեն նոքա իբրև ոչ կամելին՝ 'ի ներքոյ երկրի տապալելոյ ։ Տապալեալ շրջեցաւ ցանկութի՟ նոցա 'ի վերայ երկնաւորացն, տապալեցաւ երկիր նոցա 'ի վերայ բնակչացն իւրեանց ։ Փութացաւ երկիրն, առ կուլ զնոսա և ծածկեաց 'ի ներքոյ իւր, զի մի տրտմեսցին երկինք 'ի տեսիլ այնոցիկ՝ որ անարգեցին զսիրելիսն նորա ։ Ոչ թողաւ նոցա բնակել 'ի վերայ երկրի այնոքիկ՝ որք անարգեցին զբնակիչս բարձանց ։

«Յիշեաց, ասէ, ա՜ծ զԱբրահամ, և եհան արձակեաց զՂաւթ»․ զի մեծացուսցէ զԱբրահամ․ և զի յայտ արասցէ եթէ ամենայն որ աշակերտէ և առնէ արդարս, հաղորդի նա մասին նոցա ։ Եւ զի ցուցցէ նա զստուգութի՟ նորա, զի փոխանակ միոյն զի ոչ խնդրեաց նա, եղեն կամք նորա վասն բազմացն զի խնդրեաց 'ի վերայ նոցա ։ Եւ քանզի անբիծ և անարատ էր Աբրահամ, կապեաց զստուգութի՟ն 'ի սկիզբն բանից իւրոց, զի մի կորիցէ արդարն ընդ մեղաւորին ։ Ոչ եթէ 'ի վերայ արդարոցն գլխովին խնդրեաց նա՝ զի ապրեսցին 'ի վախճանի, այլ և 'ի վերայ երկրին՝ զի ապրեսցին վասն նոցա ։ Ղովտ աղաղակէր յայնմ գիշերի, զի գործս չարս սոդոմայեցիքն գործէին․ և Աբրահամ քարոզէր՝ թէ որպէս աղաչեաց նա և խնդրեաց, և վասն վկայութե՟ նոցա ասէ՝

նա և աւետիս պարգևաց ետուն ինձ ։ Այլ իբրև
եղև ծնունդն 'ի ժամանակի իւրում, ետուն փառս
որդւոյ մարդկան այնմիկ՝ որ ժամանակս բազումս եր֊
կայնամիտ եղև առ սոդոմայեցիսն ։ Փոխանակ զի կո֊
չեաց զանուն նորա Սեգովր, հեբրայեցի ասէ՝ փոքրիկ ․
«Ահաւասիկ փոքրիկ է» ։

«Ահաւասիկ, ասեն, հայր մեր ծերացեալ է, և
ոչ ոք գոյ յերկրի որ մտանէ առ մեզ ․ եկ արբուցա֊
նեմք զհայր մեր գինեաւ, և ննջեմք ընդ նմա» ։
Հաւանեցան, ասեն, 'ի պատճառ գինւոյ գործել
զցանկութի̅ մարմնոյ ․ այլ ոչ եթէ ցանկութի̅ գոր֊
ծել, այլ ընդդէմ ցանկութե̅ն գործել ։ Զի ցան֊
կութի̅ աղբեւրս բանայ հոսել զնոսա յերկիր, որ
զպտուղս ոչ մնուցանէ ․ այլ ամուսնութի̅ ուղղութե̅
ակն աղբեւր իւրոյ զերկիր ջեռուցանէ, որպէս զի
պտուղ եղիցի նմա ընդ ժառանգաւորս ։ Արդ ա֊
մենայն որ վասն որդւոց զգուշացեալ է 'ի չնութենէ,
զի նա է ապականիչ որդւոց, զի զցանկութի̅ կամաց
բարեաց երթայ կատարել ․ իսկ այն որ զյղութի̅ յո֊
րովայնի ոչ առնէ, և զծնունդ յարգանդի ոչ կատա֊
րէ, թշնամի է նորա, և սպանանէ զնա և ատէ զնա
և ապականէ զնա ։

Արդ քանզի դստերքն Ղովտայ զաւակ կամեցան
յարուցանել, ոչ եթէ ցանկութի̅ չոգան գործել ․
այլ ամուսնութիւն արտաքոյ օրինաց, զի աշխարհս
մի՛ անզաւակեսցի ։ Թէպէտ իբրու արտաքոյ կարգաց
արարին զայս, սակայն որպէս զի յարուսցեն ժառան֊
գաւորս՝ վասն կարգաց աշխարհի խորհեցան ։ Թէ֊
պէտ ընդդէմ բնութե̅ց յայտնապէս պատերազմ առ֊
նէին, սակայն փոխանակ բնութե̅ 'ի ծածուկ մարտըն֊
չէին ։ Տեսին զերկիրն զի թափուր եղև 'ի ծննդոց
իւրոց յարժանի, և համարձակեցան յանարժանս որ֊
դիս յարուցանել նմա ․ սոյնպէս և Թամար ։ Զի եթէ
զպնդակազմ նահատակս կարող է գինի լուծանել
և լքեցուցանել, զիա՞րդ կարէին զօրանալ տկարքն 'ի
վերայ նորա ։ Վասն էր ոչ կարես դու հակառակել
և ընթանալ ընդ շունչ հողմն, կամ նեղել մտա֊
նել առ բոց հրոյ ․ Թերևս ասիցես, զի բնութի̅ իւ֊
րեանց խստագոյն են քան զիս ։ Եւ գինի ո՞չ ահա բնու֊

թ՟ իւրով ստացեալ ունի զզօրութ՟ի ։ Փախչիս դու 'ի բորբոքեալ հրոյ, զի այրէ զքեզ մարմնապէս. արժան է փախչել յայնմանէ՝ որ յամօթ առնէ զքեզ յայտնապէս ։ Մինչ դեռ 'ի քեզ է խռովութիւն գինւոյ, աշխատիս ջանաս դու զգաստանալ. իսկ յորժամ հանիցես դու զնա 'ի քէն, ո՞չ ահա առաւել ևս զգաստանաս դու. զի եթէ մինչդեռ խռովիչն պղտորիչն ընդ քեզ է՝ ծանր լինել փութաս դու, յորժամ մեկնիցիս որոշիցիս դու 'ի նմանէ ո՞րչափ ևս առաւել փառաւոր լինիցիս դու ։ Զի եթէ խառնակութիւն արտաքին խարդախչացն պարաւանդք են ուղղոյն, ո՞րչափ ևս առաւել այդ որ 'ի փորի քում արգելեալ կայ ։ Նա և խարդախն նովաւ խարդախանան ։ Մի՛ հակառակեսցուք վասն բնութ՟եց որ զօրագոյն իցեն քան զմեզ, զի խստանան և թանձրանան ստամոքք 'ի բազում կերակրոց, և վնասին միտք յառաւելագոյն յանչափ գինւոյ ։

Յուսահատութ՟ Հայէին ընդ Սառա ընդ ամուլն ծերացեալ անցեալ ըստ չափ ժամանակի. արդ սա, ասէին, ծնանի՞ ։ Սոյնպէս հայի ընդ դժոխս վիհս. արդ սա, ասէին, դարձուցանիցէ՞ ինչ ։ Արդ ընդ պարգևսն զաւակին որ ընկալաւ Սառա, զնորոգութիւն երիտասարդութեան և զտղայութ՟ի ընկալաւ՝ որպէս զՆեէմանն և զգաւազանն Ահարոնի. ապա թէ ոչ՝ զիա՞րդ եռացին ստինք ցամաքեալք. ապարահութ՟ի դաշտանին՝ զի դարձաւ նա վերստին, վկայէ վասն տղայութ՟են դառնալոյ ։ Եւ զի ցանկացաւ նմա Աբիմելէք, 'ի վկայութ՟ի տղայութ՟ե նորա գրեցաւ այս ։ Զի որպէս նորոգին տղայանան օձք և արծուիք մարմնովք իւրեանց և ոչ ամօք, սոյնպէս և Սառա և Աբրահամ ։ Զի այն որ ասացն՝ բայ “Եթէ իցէ՞ ինչ մարթ 'ի հարիւրամենի որդի լինել,,, յաւել դարձեալ ամս քսան և մի, և առ զկին, զի ծնցի և թագաւորս հեթանոսաց որպէս և խոստացաւ նմա ։ Եւ զի եղիցին հարձորդիքն քարոզիչք, և բերիցեն պատարագս որդւոյն ազատի, ետ նոցա պարգևս և արձակեաց զնոսա առ 'ի Սահակայ. զի առցեն զպարգևսն և եկեսցեն առ այն՝ որ ծնանելոցն իցէ 'ի Սահակայ ։

«Որ ինչ, ասէ, ցայժմ ոչ եղև, արդ լինիցի ինձ երիտասարդութիւն»․ վկայեաց զի երիտասարդութիւն պիտոյ է յղութեան, և մարգարէացաւ․ զի տղայութիւն երիտասարդութեան որպէս և խմոր թուեաւ ընդ ծերութիւն նորա և նորոգեաց զնա։ Զի զայն ինչ զոր ընկալաւ նա՝ եղև նա նոցա խմոր նորոգութեան, և նորոգեաց տղայացոյց զնոսա։ Եւ օրհնութիւն այն որպէս բնութիւն յարգանդէ ծնաւ յետոյ․ և իբրև ոչ բնութիւն առանց առն յղացաւ, այն որ կանխաւ մինչև յառաջագոյն ծերացելոց անցելոց ըստ չափ ժամանակի, իբրու բնութիւն տուաւ նոցա նորոգումն երիտասարդութեան և տղայութիւն առանց բնութեան։ Եւ զոր օրինակ արար զայս ՚ի գալստեանն իւրում առ Մարիամ, նոյնպէս և արար զայն ՚ի գալստեան իւրում առ Սառա։ Իսկ այն որ մեռաւ, զգործս կանանց գործել ոչ կարէ, բայց կենդանի, սոյնպէս և արգանդ մեռեալ․ և այս որ եղեն, զի ոչ իբրու բնութիւն, զի իմասցին և գիտասցեն զտէրն բնութեանց՝ զի եղև նա սիրով իւրով ՚ի ներքոյ բնութեան․ և զի գիտասցեն եթէ պարգև արտաքոյ քան զբնութիւն մտանէ բաշխել որպէս առ Սառայի՝ զի յղացաւ զխորհուրդ նորա, և որպէս Մարիամայն զի ծնաւ զճշմարտութիւն նորա։ Այլ և ՚ի ծնանելն Իսահակայ խորհրդեան նորա արարածք կապեալք արձակեցան, և անիծեալք օրհնեցան․ արձակեցան արգանդք կապեալք տանն Աբիմելէքայ, և օրհնեցան անզաւակ որովայնք նոցա։ Եւ եղև անդ ծնունդ մի նոր վայելուչ գեղեցիկ քան զառաջինն, զի գոհասցեն վասն խորհրդոյն այնմիկ՝ որ արար ծնունդ նոր ՚ի մկրտութիւն աւազանին, զի վայելուչ գեղեցիկ է քան ըզծնունդս որովայնի։

Եւ զի յայտ արասցէ զիշխանութիւն տէրութեան իւրոյ, այն զի ամենայն ինչ դիւրին է նմա առնել, արգել զյղութիւն ՚ի կանանց նոցա բազում ժամանակս․ զի անզաւակութիւն կանանց իւրեանց ուսցին գիտասցեն և ծանիցեն զանզաւակն զայն, զի յառնէ իւրմէ ընկալաւ զյղութիւնն զայն Սառա։ Արդ ոչ եղև անդ յղութիւն, զի ծննդականօքն որ եղեն յանկարծակի ամուլք, և լուացան զսերմանիս արանց իւ-

րեանց, յայտ լիցի ամլութին՝ զի մնոյց և աճեցոյց զսերմ մշակի իւրոյ ։ Նա և ոչ յղութիւն անասնոց եղև անդ ․ զի ծանիցեն եթէ վասն զի բազմացուցին զհայհոյութիս իւրեանց 'ի վերայ արդար և ստոյգ ծննդեան, անցաւակեցան արգանդք նոցա յուղեղ ծննդենէն ․ զի ակնարկեալ լիցի անդ հատուցումն այնոցիկ՝ որ հայհոյեցին և հայհոյեսցենն 'ի վերայ ծննդեան տեառն մերոյ ․ զի նա ինքն է լրումն կատարման Սահակայ ստուերի, այս ինքն ճշմարտութի Սահակայ նշմարանի ։

Արդ իբրև աղօթիւքն Աբրահամու բացան արգանդք կապեալք, քարոզիչք 'ի վերայ արգանդին բացելոյ, ուսան նոքա՝ զի եթէ կանաց ընկերաց իւրոց ետ Աբրահամ ծնունդ աղօթիւք իւրովք, յայտ է թէ իւր կինն՝ յօրհնութենէ որ յերանս իւր էր՝ լցեալ էր ։ Եւ յայնժամ եկին ետուն զերանութին այնոքիկ՝ որ ոչն ծնանէին, այնմիկ՝ որ ծընաւն ․ զոր օրինակ երանէր նա յայն ժամանակի այնոցիկ՝ որ ծնանէին, և ինքն անզաւակեալ էր ։ Արդ շարժեաց խռովեցոյց ծնունդն Սահակայ զամենայն բնութիս 'ի ծնունդս ․ զի տունն Աբիմելէքայ ծանիցեն և գիտասցեն զանբծութի նորա ․ զի խորհուրդ է նա այնորիկ՝ որ ոչ եթէ 'ի ձեռն փոքր արգանդին երևեցան յայտնեցան սքանչելիք նորա, այլ առաքինի աստեղըն քարոզեցաւ վկայուի նորա ։ Զի աստղն որ ծագեաց Յակոբայ, հրաման ետ աստեղն բարձանց առաջնորդել որդւոցն Աբրահամու գալ երկիր պագանել որդւոյն Դաւթի ։ Արդ աստղն կացոյց զնոսա 'ի վերայ աստեղն, զայնոսիկ՝ որ խնդրէին զնա ․ և մարմինն որ 'ի մարմնոյ անտի նորա է՝ նա կացուցանէ զմեզ 'ի վերայ նորա, զի խնդրեցաք զնա ։ Զի զոր օրինակ ինքն իսկ աստղն ստոյգ ճշմարիտ և հաւատարիմ էր առաջնորդութք իւրով առաջի այնոցիկ՝ որ զտէրն մեր խնդրէին, նոյնպէս ստոյգ ճըշմարիտ և հաւատարիմ է այս մարմին առաջնորդութք իւրով առաջի երեսաց մերոց ․ զի մի 'ի ժամանակեան յայրն յայն մուծցէ զմեզ, այլ յառագաստ նորա՝ որ յաւիտեանս յաւիտենից։ Եւ ոչ մեք մատուսցուք նմա զմերն, այլ մեք 'ի նորայոյ անտի առցուք

զամենայն երանութիւն բարութեանց ։

Եւ զի անխայեցոյց զԱբիմելէք զի մի՛ մերձեսցի առ Սառայ. մի՛ զի ոչ էր նա չար իբրեւ զՓարաւոն ․“ Յանմեղութե՟ սրտի իմոյ, ասէ, արարի զայս ” ․ եւ վկայեաց 'ի վերայ նորա ա̄ծ ․ “Զի եւ ես, ասէ, գիտեմ․ եւ վասն այսորիկ արգելի զքեզ, զի մի՛ մեղիցես ” ։ Եւ միւս եւս, զի մերձ էր Սառայ 'ի ծնանել, արգել զնա զի մի՛ մերձեսցի 'ի նա ․ զի մի՛ մայրն, որ զԻսահակ ծնաւ, կարծիցէ թէ որդի իցէ Աբիմելէքայ եւ ոչ որդի Աբրահամու ․ զի յղի էր նա յայնմ ժամանակի ։ Եւ զի ասէ ․ կապեցեր ծածկեցեր զաչս ամենայն զօրաց իմոց ․ զի գողացար դու, ասէ, զսիրտս մեր ամենեցուն ․ եւ կարծեցաք թէ քոյր իցես դու նորա ։ Եւ զի ասէ յանդիմանութե՟ կշտամբեցեր զիս, զի քաջալերեցաւ Սառա յորժամ ետես թէ ա̄ծ օգնական է նորա, յանդիմանութե՟ կշտամբեաց զնա եւ ասէ ․ ընդէ՞ր որպէս յիմար մի անցանես դու ըստ ճանապարհս կնոջ քո ․ վասն այնորիկ ետ նմա զվարձս յանդիմանութե՟ նորա, զի խրատեաց զնա հեզութե՟ եւ զգաստութե՟ իւրով ։ Եւ զի ասէ “Արգել եւ փակեաց ա̄ծ զամենայն արգանդ տանն Աբիմելէքայ ” ․ զի հարկանէին ստիպէին երկունքն եւ ծնանել ոչ կարէին, զի սրբութի՟ սաստկութե՟ էր գիշերոյ միոյ եւ տուընջեան ։ Այլ Յոյնն ասէ ․ “Փակելով փակեաց տէր արտաքոյ ընդդէմ ամենայն արգանդի տանն Աբիմելէքայ ” ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Ի ներքոյ եղեւնոյ միոյ ” ․ Հեբրայեցի ասէ “Ի ներքոյ ծառոյ ” ։

ԳԼՈՒԽ Ի

“Առ դու զորդիդ սիրելի զմիամօրդ քո, եւ գնա դու յերկիրն ամուրհացւոց ” ․ Հեբրայեցի յերկիրն մաւրիացւոց ասէ ։ Եւ զի մի՛ ոք կարծիցէ՝ թէ ափշելով ապշեցոյց ա̄ծ զԱբրահամ, ասէ ցնա ․ “Երթ գնա դու երեքօրեայ մի գնաց ճանապարհի ” ։ Արդ Աբրահամու մեռեալ էր Սահակ յայնմ օրէ հետէ, զի ասաց նմա ա̄ծ ․ մատո դու զնա ինձ պատարագ ․ եւ մեռեալ բարձեալ տանէր զնա թաղել ․ այլ կեն-

դանդաղելով կենդանացաւ նա յաւուրն երրորդում
'ի տեղւոջ մահուան իւրոյ ։ Զի՞նչ պիտոյ էր զի կա-
խեցի խոյն զծառոյն , եթէ ոչ առակ օրինակաց նը-
կարեալ մեզ ։ Եւ փոխանակ զի ետ Աբրահամ զա-
մենայն զսէր իւր որդւոյն իւրում ա̃յ , ետ ա̃ծ զամե-
նայն զսէր իւր անդրանկաւն իւրով ։ Եւ զի համբե-
րեաց Աբրահամ վասն ա̃յ մինչ դեռ զորդին իւր զե-
նոյր , համբեր ա̃ծ յանցանաց զաւակին Աբրահամու
վասն նորա ։ Ա̃ծ՝ զի խնդրեաց զԻսահակ , զի յայտ
արասցէ զսէր հօր նորա . և զի ոչ ետ թոյլ նմա սպա-
նանել զնա , զի արգելցէ զժողովուրդն զի մի զոհեսցեն
զորդիս իւրեանց կռոց ։ Աբրահամ զինու սիրոյ որ-
դւոյն իւրոյ առ զյաղթութիւն 'ի վերայ ախոյանին իւ-
րոյ . զի յայնմիկ՝ զի ետ զորդին իւր ա̃յ իւրոյ , առ նա
զյաղթութիւն յախոյանէ անտի իւրմէ ։

Արդ հայեցաւ Աբրահամ թէ ինչ զոր ա̃յ տայ՝
աւանդ յանձն առնէ նմա , զի պահեսցէ զնա նմա .
և զոր ինչ յախոյանէ անտի իւրմէ առնու՝ կորզե-
լով կորզէ զնա , զի մի կորուսցէ զնա յիւրմէ ։ Արդ
փութայր նա տալ զմիամօրն իւր ա̃յ , զի առ ա̃ծ պա-
հեալ լինիցի . և փութայր թափել կորզել զպսակն
իւր յախոյանէ անտի իւրմէ , և զի մի ապականիցէ
զնա ախոյեանն իւր ։ Նոյ յանանոց մատոյց պատա-
րագ , այլ Աբրահամ զմիամօրն իւր . թէպէտ և եր-
կոքեան արդարք իցեն , սակայն զատեալ մեկնեալ
են պատարագք նոցա ։ Յայն յառաջինն 'ի Նոյին՝ օ-
ղորմութիւն եղև աշխարհի , և յայսմիկ յԱբրահա-
մու՝ նկարեցաւ առակ օրինակի միածնին ։ Արդ
Աբրահամ գնեաց արեամբ Իսահակայ զերկիրն քա-
նանացւոց , զի 'ի նմա էին թագաւորք՝ զաւակք նո-
ցին իբրև զաստեղս , և իբրև զաւազ ։ Զայս ամենայն
երկնելոց էր Աբրահամ յերանս Իսահակայ , որպէս
և ծնունդքն Ադամայ յերանս նորա ։ Զի կեանքն
որ զկնի նորա եղեն ընդունչին պատարագաց՝ այն
էր , զի զոր ինչ կամիցի արասցէ զպատարագն . իսկ
մատուցչին այս էր , զի մատուցանելով մատուսցէ
և եթ . իբրև երևեցաւ նմա թէ ո՞րչափ իշխան էր
ձեռնն Աբրահամու 'ի վերայ պատանեկին , երևե-
ցաւ թէ ո՞րչափ իշխան էր սէրն բարձրելոյն 'ի վերայ

Աբրահամու ։ Այլ ոչ յայտնեաց Սառայի, քանզի նմա ասաց ա̃ծ ։ այլ մատոյց նա նախ զխոյն պատարագ, և ապա արձակեաց զԻսահակ 'ի կապանաց անտի, թէ դուցէ տեսիլ իցէ ։ Խնդրեաց ա̃ծ զսէրն Ճշմարիտ Աբրահամու, և ահա 'ի միամօր նորա էր ։ վասն այսորիկ նովաւ փորձեաց զնա ։ և զսէրն Յակովբու, և ահա 'ի Յովսէփ ։ և զԴաւիթ, և ահա Սողոմոն ։ և զՍահակ, և ահա յեսաւ ։ Վասն այսորիկ ծածկեաց յԻսահակայ առաքինչն պարգևաց, զի մի տացէ զնա տրտմութե̃ կամ բռնութե̃ ։ քանզի ընդ բերան նորա անցանէին պարգևքն այն, զի ձայնիւ ընդունէր նա զօրհնութիւն ։ զի մ̃րդ օրհնէր նա մինչ դեռ տրտում էր նա ։ Սոյնպէս խնդրեաց ստուգութի̃ն զսէրն Քամայ, և ահա 'ի Քանան ։ և նովաւ տանջեաց զնա, այս ինքն զերկոսեան միանամբք ։ Եւ ասեն զի նա ետես յառաջագոյն և ծիծաղեցաւ, վասն այսորիկ ա̃ծ եդ 'ի վերայ նորա նշան զուխտի իւրոյ, զի պատուեցաւ և զգաստացաւ անդամն՝ զոր խայտառակեաց Ադամ ։ և ետ զնա յայպն կատականաց, զի երևեսցի թէ գործք արարչին ա̃մ փառք են ։

Տասն փորձանս փորձեցաւ Աբրահամ ։ տասն հարուածս ած 'ի վերայ եգիպտացւոցն, զի հնազանդեսցի նա զաւակի նորա ։ Տասն պատուիրանս ետ որդւոց նորա, զի պահիցեն ։ տասն ազգ որպէս զտասն պատուիրանս ետ նոցա ։ Այլ զկենացիս և զկենեզացիս, և զգեդմոնացիս որդիքն Մովաբու ժառանդեսցեն զնոսա ։ զի մովաբացւոց, ասէ, ետու ես զնոսա ։ Եւ յայտ արար՝ թէ տալով ետ նոցա, իբրև զայն զի ասէ “Ետ նոցա զգաւառս հեթանոսաց„ ։ Այլ տասն փորձանքն Աբրահամու այս են ։ ել գնա դու յերկրէ քումմէ, և ել ։ Երկրորդ՝ և վարեցաւ Սառա 'ի տուն Փարաւոնի և ոչ տրտնջեաց ։ Երրորդ՝ և կադքն հովուացն Ղաւթայ 'ի ժամանակի իբրև ետ նա Ղաւթայ ընտրել զգաւառ ։ Չորրորդ՝ զի ոչ առ նա յընչից սոդոմայեցւոցն, զոր թափեալ էր նա 'ի կորովս իւր ։ Հինգերորդ՝ և զի ասէ “Եղիցի զաւակ քո որպէս և աստեղք երկնից„ ։ և հաւատաց նա, և համարեցաւ նմա յարդարութի̃ ։ Վեցերորդ՝ և զի ետ 'ի ձեռս զՀագար Սառայի 'ի ժամանակի

իբրև յղացաւ արհամարհեաց զտիկինն իւր։ Եօթ-ներորդ՝ և զի ասէ “Ի բաց հան զաղախինդ”. և հան զնա և ոչ եկաց հակառակ Սառայի։ Ութե-րորդ՝ և զի ետ նմա նշան թլփատութե̃ 'ի ժամանա-կի իբրև փոխեաց զանուն նորա։ Իններորդ՝ և զի վարեցաւ դարձեալ Սառաւ առ Աբիմելէք։ Տաս-ներորդ՝ և զի ասէ “Առ դու զորդիդ քո զմիամօրդ զսիրելիդ, և մատո ինձ պատարագ”։

Իւ այն զի ասաց Աբրահամ ցծառայ իւր ցերէց տանն իւրոյ, դիր զձեռն քո ընդ երանօվք իմովք, ոչ եթէ վասն զի 'ի ծննդոց իւրոց ծագելոց էր Քրիս-տոս. զի ահաւասիկ ծնեալ էր Իսահակ. այլ զի ա-մենայն փոյթ Աբրահամու այս էր՝ թէ յազգէ և 'ի տոհմէ իւրմէ առցէ կին որդւոյ իւրոյ, ետ նմա եր-դումն 'ի տէր ա̃ծ երկնի և երկրի։ Եւ իբրև եդեալ էր զաջ ձեռն նորա ընդ երանօք իւրովք, զի 'ի մեր-ձաւորի մարմնոյ առցէ կին որդւոյ նորա. իբրև ոք զի ասէ. 'ի տոհմէ աստի յայսմանէ և յազգէ աստի յայսմանէ. իբրև զայն՝ զի ասէ “Ոսկր յոսկերաց ի-մոց, և մարմին 'ի մարմնոյ իմմէ”։ Իւ ահաւասիկ և Յակոբ ետ երդումն Յովսեփու որդւոյ իւրոյ։ Նոյն-պէս և “Օրհնեցին, ասէ, ընտանիքն զՀռեբեկայ քոյր իւրեանց, և ասեն ցնա. քոյր մեր լիցես դու 'ի հազարս և 'ի բիւրս. և ժառանգեսցէ զաւակ քո զքա-ղաքս թշնամեաց քոց”։ Այս մարգարէութե̃ նման է. բայց պարզաբար մեկին ասացաւ որպէս մարդք, զի գնացին 'ի գաւառէ իւրեանց, և պանդխտեցան 'ի գաւառս հեռաւորս. և առաքեն զդստերս իւ-րեանց 'ի գաւառն զոր ոչ գիտասցեն։ Եւ լուան յե-ղիազարէ թէ ամենայն գաւառք պատուադիրք են նոցա, և օրհնեցին պարզ մտօք զդուստրն իւրեանց. իբրև նման է օրհնութի̃ նոցա մարգարէութե̃։ Փոխանակ այնր զի ասէ “Ել Սահակ շրջել ընդ դաշտակողմն ընդ երեկս աւուրն”. հեբրայեցի՝ “Յաղօթս կալ” ասէ։

Իւ զի առ Աբրաամ կին յետ մահուան Սառայի. զի 'ի ձեռն որդւոց իւրոց, որ լինին յազգս և յա-զինս, և 'ի տոհմս հեթանոսաց, սփռեցան տարածե-ցան հաւատք ճշմարտութե̃ նորա յամենայն գաւառս։ Արձակեաց զնոսա առ յինքենէ, զի քարոզեսցեն

զհաւատս ճշմարտութե՟ հօր իւրեանց . զի "Գիտեմ ես, ասէ, թէ պատուիրելով պատուիրէ նա որդւոց իւրոց պահել զճանապարհս տեառն" : Վասն այսորիկ պահեցան Սառա և Ռեբեկա յամլութե՟ իւրեանց, զի մի՛ կարծիցին թէ զաւակ նոցա որպէս և զայլոց է . այլ իմասցին զաւետիսն ա՟յ, և ծանիցեն զպարգևսն՝ որ տուեալ լինի նոցա : Կամ զի մի՛ պարծիցին հարքն Րափակայի՝ թէ յօրհնութե՟ անտի բազմացան՝ ծնունդք նորա և ժառանգեցին զհեթանոսս . վասն այսորիկ կաց մնաց նա յամլութեան, զի ծանիցէ եթէ աղօթիւք Իսահակայ տուեալ լինի նմա զաւակ, որպէս և Հռաքելայն . թերևս և Սառռա այսպէս օրհնեցաւ : Փոխանակ այնր՝ զի ասէ "Ամենայն հերք նորա գանգուր էին" . հեբրայեցին ասէ "Որպէս հանդերձս մազեղէն" :

Արդ զի՞նչ ևս ասիցեմք վասն մանկանն որ յորովայնի մօր իւրոյ բուռն հարեալ ունէր զգարշապարէ եղբօր իւրոյ : Եւ զայն ինչ զոր ոչ կարաց նա զօրութե՟ իւրով առնուլ 'ի նմանէ զանդրանկութի՟ն յայնմ ժամանակի, առ նա 'ի նմանէ իմաստութե՟ յետ ժամանակի . և ոչ եթէ զանդրանկութի՟ս, այլ և զօրհնութի՟ս ևս : Թերևս վասն այսորիկ ծանրացան շլացան աչքն Իսահակայ . փոխանակ զի սիրեաց նա զԵսաւ վասն որսոյ նորա, և ոչ գիտաց թէ ընտրութե՟ի առ կրտսերն մնալոց իցէ . վասն այնորիկ ծանրացան շլացան աչք նորա, զի մի՛ տրտմիցի նա, և խոժոռեալ մերժեսցի յօրհնութե՟ց անտի Յակովբու : Եւ ինքն դարձեալ Յակովբ, զի և նորա ծանրացան շլացան աչք, զի հատուսցէ զշնորհս որ շնորհեցան նմա . զի ետ նա Յովսեփու զանդրանկութի՟ս Հռուբէլայ :

"Եւ եկ, ասէ, Աբիմելէք առ Սահակ, և Փիքող սպարապետ զօրաց նորա" . այլ հեբրայեցին ասէ "Իշխանք զօրաց նորա" . և ուխտ եդին և դաշինս կռեցին ընդ Սահակայ . և գնացին առ 'ի նմանէ խաղաղութե՟ : Եւ գրեալ է՝ թէ "Եկին հասին ծառայքն Իսահակայ, պատմեցին նմա և ասեն . փորեցաք զջրհոր և ոչ գտաք ջուր" . փոխանակ այնր զի ասէ՝ չգտաւ ջուր : Եւ ասէ Իսահակ . զի երդուայ ես փղշտացւոյն, զի մոռացայ ես թէ կտրելոց սատակելոց են

նոքա․ ապա անէծ զնոսա ըստ վճռի հրամանին՝ որ 'ի վերայ նոցա․ և ահաւասիկ և Աբրահամ երդուաւ նոցա ։ Փոխանակ այնր՝ զի ասէ, Ջուրս կենդանի․ Ջուրս զի բղխեն․ և ոչ, ասէ, գտին ջուր 'ի ջրհորն յայն․ և կոչեաց զանուն նորա երդումն ըստ անուան երդմանն, զոր երդուաւ Աբիմելէքայ ։ Քանզի ջուրք 'ի մարտ և 'ի պատերազմունս առակեալ են, զի ծածկեալ են 'ի մտաց՝ որ 'ի միջի նոցա ։

Ետես Յակոբ զանդրանկութիւն՝ զի անարգեալ անգոսնեալ էր առ Եսաւայ, խորամանկեցաւ և բարձ զնա 'ի նմանէն․ Թողացո վաճառեա ինձ, ասէ, զանդրանկութ̃ի քո․ յանձն առ վաճառել ։ Ո՞վ Եսաւ, զի՞րդ վաճառես որ ինչ ոչն վաճառի․ կամ զի՞րդ առնուս դու գնով, Յակոբ, բանիւք՝ որ ինչ բանիւք ոչ գնի․ մի՞թէ կարօ՞ղ իցեն նոքա մտանել յարգանդ և ելանել ։ Անարգեաց Եսաւ զանդրանկութ̃ի իւր․ սիրեաց Սահակ զԵսաւ վասն որսոյ նորա, զի էր կերակուր բերանոյ նորա․ զի ոչ էր յայտնի նմա այն՝ զի ասէ “Երէցն կրսերոյն հնազանդեսցի„ ։ Քանզի ծածկեաց 'ի նմանէն Հռեբեկա, զոր օրինակ ծածկեաց Աբրահամ 'ի Սառայէ զԻսահակ ։ Վասն այսորիկ եմուտ Յակոբ իբրև զանդրանիկ, և ընկալաւ զօրհնութ̃ի նորա․ թերևս և ոչ ստեաց յասել իւրում ցհայր իւր, թէ “Ես եմ անդրանիկ որդին քո Եսաւ„․ զի գնեալ էր նորա զանդրանկութ̃ի նորա ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Կոչեաց զանուն նորա Եդոմ„ կարմիր ։ “Տուր ինձ, ասէ, զճաշ քո„ ։ Փոխանակ այնր՝ զի ասէ այր վայրագ, այր որսորդ ։ Փոխանակ այնր՝ զի ասէ առ դու զգործի քո, զսուսեր քո՝ զաղեղն քո՝ զկապարճ քո ։ Սիրեաց, ասէ, զնա, զի որս նորա կերակուր բերանոյ նորա էր․ և 'ի բաց արար զայն՝ զի ասէ “Դառնացուցանէին կանայք նորա զոգի նորա և զՌափակայ„․ բայց համբերէր նա թշնամանաց անարգանաց կանանց նորա վասն անդրանկութ̃են նորա․ և սիրէր զնա վասն հանգստեան իւրոյ ։ Արդ ոչ եթէ վասն այլոյ իրիք ինչ սիրէր զնա, բայց եթէ վասն որսոյ նորա․ զի յայտ արասցէ՝ թէ չիք ինչ այլ պատճառք 'ի միջի՝ որ նեղեցին զնա սիրել զնա, բայց եթէ այս ։

"Ահա, ասէ, հոտ որդւոյ իմոյ իբրեւ զհոտ անդոյ լիոյ զոր օրհնեաց զնա տէր,,: Անդ, որ օրհնեցաւ եւ ոչ դարձաւ օրհնութիւն նորա յանէծս, դրախտն էր, յորում ծառն կենաց էր 'ի նմա. զի ոչ տուաւ նա Ադամայ զրկողի ճաշակել 'ի նմանէ, եւ կեալ յաւիտեանս: Այն զի 'ի ժամանակէ անտի յայնմանէ, յորժամ հան զնոսա անտի, եղ 'ի նմանէ մշակն իւր Ադամ, արգելեալ փակեցաւ նա: Իբրեւ եկն տէր եղ 'ի խաչափայտն, առ եւ կախեաց զփականս 'ի խաչափայտի անդ, եւ ետ զնա աւազակին, եւ եբաց եւ եմուտ 'ի դրախտ անդր: Եւ իբրեւ բացաւ, յորդեալ բուրեաց հոտ ծառոյն կենաց, եւ եկն պատահեաց առաքելոցն. եւ 'ի սաստկութէ հոտոյն իւրոյ բազմութեց գերեաց զառաքեալսն, որպէս զի յաղթահարեցին. յասելն՝ բուրէր հոտ նորա որպէս զի սաստիկ իցէ հողմն ուժգին: Արդ թռեաւ 'ի նոսա հոտ օրհնութեան նորա, բուրեցին եւ տարածեցին զնա ընդ երկիր՝ որ զանէծս նզովից ընկալաւ. մինչեւ սպառեցան մաշեցան անէծքն նզովից յերեսաց օրհնութեցն, որպէս խաւար յերեսաց լուսոյ: "Հոտ որդւոյ իմոյ,, ասէ. ո՞ր որդի նորա, բայց եթէ Յակոբ. այն որ 'ի նմանէն ծագեաց Քրիստոս: Զի բուրեաց 'ի նմանէ հոտ կենաց փոխանակ Ադամայ, զի հարկանէր 'ի նմանէ հոտ մահու: Անդ Մարիամ է օրհնեալն 'ի կանայս փոխանակ Եւայի անիծեալն 'ի ծնունդսն. զի նա զԿայէն մարդասպան ծնաւ, եւ սա զՔրիստոս ծնաւ, որ փոխանակ մարդկան մեռանի, եւ կեցուցանէ զմարդիկ:

Ետես Սահակ հոգւով իւրով թէ յերանաց Յակոբայ ծագելոց է այն՝ որ հարկանէր զհոտ կենաց նորա դիւականց, եւ զարթուցեալ յառնէին: Ասէ ցնա. "Հոտ քո իբրեւ զհոտ պտղալի անդոյ զոր օրհնեաց զնա տէր,,: Ի ձայնէ անտի բարբառոյ [1] ոչ գիտաց Սահակ՝ այն որ 'ի մորթոյ անտի կարող էր գիտել, մանաւանդ 'ի մսոյ անտի ուլուցն. զի մեկնեալ զատեալ է միս նոցա 'ի վայրենի էրէոց, 'ի կամս բարձրելոյն ոչ գիտաց: Եւ զի՞նչ պիտոյ էին արդեւք հնարք

1 Յօրինակին բարբառոյ. եդաւ ըստ լուսանցին:

և պատճառք յայտնել զսրովութին Եսաւայ, և փութոյ յօժարութե՟ նոցա. զի ոչ եթէ նա ոչ կամեցաւ տալ զայս. նա փութացաւ յօժարացաւ յառնուլ, և Եսաւ կամեցաւ վաճառել: Այլ մուտ 'ի դէմս Եսաւայ, որպէս 'ի գարշապարէ նորա զգեցցի զանդրանկութին զոր զգեցեալն էր. զգեցաւ զհանդերձ նորա և զմորթն Եսաւայ: Սէր հարանց նորա 'ի միջի կայր. սէր հօրն ձգէր յԵսաւ, և մօրն 'ի Յակոբ. զի նմանօղ եղիցի նա եղբօր իւրում, և մնացէ առցէ նա զօրհնութի օրհնչին: Արդ զգեցաւ Յակոբ զանուննն Եսաւայ, որ մեռաւ անդրանկութեցն. որպէս մորթ նորա մեռեալ 'ի կենդանութէ:

Արդ տես դու որչափ խորամանկութիք պիտոյ էին արդարոյն առ բարիսն. օրհնեաց Սահակ զՅակոբ, և եղեն պատճառք ինչ՝ զի ոխս պահեսցէ նմա եղբայրն իւր: “Ազգ եղև, ասէ, Ռեբեկայ”: Թէպէտ և 'ի ձեռն խրատու նորա առաքեցաւ Յակոբ առ 'ի հօրէ իւրմէ, սակայն ա՟ծ իմաստութ՟ն իւրով 'ի ծածուկ գործէր: Զի եթէ էր Յակոբ մնացեալ 'ի տան հօր իւրոյ, և յաճախեալ բազմացեալ էր ընչիցն, ոչ լինէր յայտնի զօրութի անդրանկութեցն և օրհնութեցն. այլ յայտնապէս երևեցաւ 'ի ժամանակի, զի ցուպ 'ի ձեռն անց նա առ ազգ մի օտար, և երկու բանակօք դարձաւ: Տես դու թէ որչափ հասեալ էին 'ի վերայ և գիտէին զզօրութի զօրհնութեցն. զի ահաւասիկ Ռեբեկա ապաստան յօրհնութիսն առաքեաց զՅակոբ զի մի՛ զրկիցի. Նա և Յակոբ, զի գիտաց թէ ստոյգ և ճշմարիտ են օրհնութիքն հօր իւրոյ և անէծքն նորա, 'ի մէջ խիթի ահիւ և երկեղիւ կայր նա յասելն իւրում. “Գուցէ, ասէ, ածից ես 'ի վերայ իմ զանէծս և ոչ զօրհնութիս”: Նա և Եսաւ թէպէտ և ապստամբ էր, սակայն յայնմիկ զի աղաղակեաց և ելաց դառնապէս, յայտ արար թէ որչափ վշտացաւ և չարչարեցաւ. և յայնմիկ՝ զի գիտաց նա թէ յօրհնութէ առն արդարոյ զրկեցաւ: Գոյր նոցա օրինակ յառաջ քան զնոսա օրհնութիք Նոյի և անէծք նորա:

Օրհնեաց նա զոր օրհնեաց, և անէծ զոր անէծ: “Ծառայեսցեն քեզ, ասէ, ազգք և ազինք, և երկիր

պագցեն քեզ թագաւորք և իշխանք. և եղիջիր դու տէր 'ի վերայ եղբարց քոց. և երկիր պագցեն քեզ որդիք հօր քո„: Եւ այս 'ի վերայ Յակոբայ ոչ կատարի, և ոչ 'ի վերայ ծննդոց նորա: Իսկ արդ ո՞ր ազգք և ազինք հնազանդեցան նմա. կամ իշխանք նոցա երկիր պագին նմա. կամ ե՞րբ եղև նա տէր 'ի վերայ եղբարց իւրոց, և երկիր պագին նմա որդիք հօր իւրոյ: Նա և ոչ այլ որդիք եղեն Սահակայ արտաքոյ քան զՅակովբ, բայց Եսաւ, զի 'ի վերայ նորա կարծիցէ ոք՝ թէ լինելոց էն: Աւ 'ի տէր մեր կաց մնաց զօրութ՟ին նորա. զի երկրպագութ՟ե նորա հնազանդեցան ամենայն ազգք երկրի, որպէս երկրորդեաց Առաքեալ 'ի վերայ Սահակայ: "Ասացաւ, ասէ, Աբրահամու՝ քեզ և զաւակի քում. ոչ զաւակաց իբրև բազմաց, այլ իբրև 'ի վերայ միոյ„. զի է զաւակ նորա նա ինքն Քրիստոս:

"Եւ ասէ Եսաւ ցհայր իւր. ինձ ո՞չ թողեր և ոչ մի օրհնութ՟ի„: Ոչ եթէ քեզ ոչ թողի, այլ վասն քո ոչ թողի. ահա աւանիկ գլուխ և տէր կացուցի զնա 'ի վերայ քո, և զամենայն եղբարս նորա ետու նմա 'ի ծառայութ՟ի: Իշխանաց որդւոց Եսաւայ ասաց, և թերևս 'ի վերայ Մովաբու և Ամոնայ եղբարց նորա ասաց: Եւ զի ասէ "Ահա աւասիկ 'ի պարարտութ՟ե երկրի եղիցի բնակութ՟ի քո„. որոշեալ մեկնեալ զատեալ յօրհնութ՟եց անտի Յակոբու. զի աստ երկիր քաջ, զի ըստ քաջութ՟ե բնութ՟ե իւրոյ միայն տայ զպտուղ իւր. բայց Յակովբու և արտաքոյ քան զբնութիւն իւր: Եւ օրհնեցաւ Եսաւ. "Եւ 'ի սուր քո, ասէ, կեցցես, և եղբօր քում ծառայեսցես. և եթէ դարձցիս և ապաշխարեսցես„: Զի եղիցի գիտել Եսաւայ՝ թէ 'ի մեղս իւր հնազանդեցաւ. վասն այսորիկ "Որ առնէ զմեղս, ծառայ է„. և ծառայ Քրիստոսի՝ ազատ տեառն իւրոյ:

"Ասէ Եսաւ 'ի մտի իւրում. մերձեսցին աւուրք կատարածի հօր իմոյ, և սպանից զՅակովբ զեղբայր իմ„: "Ազդ եղև, ասէ, Ռեբեկայի զոր ինչ և [1] Եսաւ 'ի սրտի իւրում ասաց„: Զխո՞րդ եղև ազդ

[1] Յօրինակին և էր Եսաւ:

Բափակայի. խորհեցաւ թէ այսպէս կամեցաւ ասել. եգ 'ի մտի իւրում, փոխանակ այնր զի ասէ՝ ասաց 'ի սրտի իւրում։ Եւ այն զի ասէ "Աջգ եղև Բափակայի„ 'ի սաստկութէ սրտմտութե բարկութե նորա. որ սպառնայր եղբօր իւրում. և 'ի խոթոտել ականն իւրոյ 'ի միտ առ իմաստութբ իւրով Ռեբեկա։ Եւ զի ունկնդիր եղև Յակոբ հարց իւրոց, և ետես Ռեբեկա զհեզութի զգաստութի նորա. և վկայէ այն՝ զի ասէ "Զօրութի իմ և սկիզբն հաստատութե իմոյ„։ Վասն այսորիկ ասաց նմա. բազմասցին որդիք քո 'ի կեանս քո, և կացցեն շուրջ զմահճօք քովք, որպէս և ամիսք տարւոյ. և որդիք նոցա որպէս զաստեղս երկնից անթիւք. զի հանգեան ոգիք մօր քո 'ի կեանս քո. և աղիք իմ և սրտինք իմ գ.քեզ օրհնեն։ Եւ զի պատուեաց Յովսէփ զՅակովբ, որպէս պատուեաց ինքն զհայր իւր, վասն այսորիկ յաւել նմա հայրն զօրհնութիւս իւր՝ զօրհնութի ստեանց և արգանդի։

ԳԼՈՒԽ Ը

Եւ ել Յակովբ և գնաց 'ի Խառան. և եկն եհաս 'ի տեղի մի։ Անդ լուծաւ և ննջեաց, սկսաւ տեսիլ տեսանել տեսլեան գիշերոյ. և տեսանէր զի սանդուխտս կանգնեալ էր յերկիր, և գլուխ նորա հասանէր մինչև յերկինս. և հրեշտակք ելանէին և իջանէին ընդ նա։ Նշան տեսլեան իւրոյ, զի 'ի ճանապարհին յայնմիկ՝ յորում իջանէր, որ նա ինքն է սանդուխտք իջից իւրոց յերկնից յերկիր. սոյնպէս իջանելն նորա յերկրէ անտի պարգևաց յերկիրն ստորին։ Եւ զի ընդ նա ելանէին որք իջանէինն, զի ընդ նոյն ճանապարհս հանդերձեալ էր ելանել նա։ Եւ գալուստ նորա 'ի տուն Լաբանու, նշանակ եղև նմա, զի հանդերձեալ էր նմա իջանել յերկիրն եգիպտացւոց։ Եւ 'ի դառնալ իւրում բազում ստացուածովք, էր նշան՝ զի հանդերձեալ էր զաւակ նորա ելանել յերկրէն եգիպտացւոց անթիւ բանակօք։

Իրդ վասն մխիթարութե նորա երևեցան սանդուղխքն. և յայնմանէ որ ինչ ասացաւ 'ի միտ առ

դու. "Զերկիրդ զայդ յորում դու ննջեցեր, քեզ տաց զդա և զաւակի քում": Եւ զեւղն զոր արկ 'ի վիմի, զի եղիցի յայտնի՝ զի ոչ գիտէր նա թէ քսան ամ լինելոց է անդ: Եւ 'ի կալն իւրում յաղօթս, ասէ "Եթէ իցէ Աստուած ընդ իս, և պահեսցէ զիս 'ի ճանապարհս յայս յոր ես երթամ, և տացէ ինձ հաց ուտելոյ և հանդերձ զգենուլոյ": Եւ յետ փոքր մի ժամանակի ասէ. "Յամենայնէ զոր ինչ տացես ինձ, տասանորդս հանից քեզ յամենայնէ": Եւ այն որ վասն անարգ կերակրոյ յաղօթս կայր, վասն մեծութեան տասանորդեալ գտաւ՝ զի խոստանայր. այլ գտան 'ի հացին և 'ի հանդերձի նորա տասանորդս խոստանալ, և 'ի հանդերձեալն մարգարէութեան: Փոխանակ այնր՝ զի ասէ "Ոչ եթէ մարթ ինչ իցէ քեզ կալ և ծառայել ինձ ձրի", հեբրայեցի ասէ. "Ծառայեցեր ինձ ձրի ամս եօթն". այս ինքն շատ է ասէ այս՝ զոր պատուեցեր զիս:

Ու ձգեաց նախ Աստուածութիւն զՅակոբ առ ջրհորն, զի յայտ արասցէ անդ զողորմութիւն նորա և զզօրութիւն նորա առ վէմ անդր, և զողորմութիւն նորա արբուցանել անդր: Եւ զի մի՛ շնորհս արկանիցէ նմա Ղաբան սակս աներանալ Ղաբանայ վասն նորա. և եգիտ Ղաբան գանձ մի, զի ամենայն օրհնութիւնք 'ի նմա թաղեալ էին Իսահակայ: Ցոյց զզօրութիւն իւր յիսկզբանն իւրում, զի յորդեցէ նոցա ճաշակս ծածուկս զօրութեանն՝ որ էր 'ի նմա: Եցոյց զխոնարհութիւն իւր 'ի հարցանել ողջունին իւրոյ, զի ծանիցեն և գիտասցեն թէ 'ի նմանէ ծագելոց է այն՝ որ տարածելոց է զողջոյն և զխաղաղութիւն ամենայն հեթանոսաց: Փոյթ եղև նմա վասն ջուր տալոյ և արօտի խաշանց, զի ցուցցէ թէ 'ի նմանէ ծագելոց է հովիւն՝ որ կերակրէ զխաշինս իւր մարմնով և արեամբ իւրով: "Տուք ջուր, ասէ, և երթայք արածեցէք": "Ետես, ասէ, նա զվէմն՝ որ կափուցեալ էր 'ի վերայ բերանոյ ջրհորոյն". և ուրախ եղև: Եւ իբրև գիրկս արկ 'ի նմա, բազուկք նորա սիրով զանձն իւր թեթևացուցանէր. զի ետես նա զնշան այնորիկ՝ որ բառնալոցն էր զծանրութիւն 'ի թիկանց խորհրդոց հեթանոսաց: Եւ իբրև եբարձ զվէմն, հայեցաւ ընդ

ջրհորն, և ցնծացան ընդ առաջ նորա ջուրք ջրհորին, և 'ի բազուկս նորա խնդացին ելանել. զի գիտացին թէ 'ի նմանէ ծագելոց է սրբիչն ջուրցն և փառաւորիչ նոցա: Իբրև մկրտեցաւ, ասէ, տէր մեր, լոյս բազում 'ի ջուրց անտի փայլէր: Խաշինն՝ որում տկար աղջիկն հովուէր նոցա, պատահեաց երիտասարդն հզօր տալ նմա ջուր. Եւ առ հաւատչեայ բարի ամուսնին իւրոյ և խաշին նորա. խաշինն՝ 'ի ջուրն տալն, և աղջկանն՝ համբուրելովն: Խաշինն՝ որ ընկալաւ զառհաւատչեայ ջուրն ըմպելոյ, յուսացաւ թէ նա է հովիւն իւր քաջ. և աղջիկն՝ որ ընկալաւ զառհաւատչեայն ողջունին, գիտաց թէ նա է այր իւր ճշմարիտ: Խաշինն արբոյց ջուր 'ի ջրհորոյ անտի, և աղջկանն արբոյց զողջոյնն 'ի շրթանց իւրոց: Խաշնն որ արբեցաւ ջուրբ տալոյ նորա, ըստ հրամանի նորա ծնունդս ծնանէր. և աղջիկն որ արբեցաւ սիրով նորա, որդիս ծնանել խնդրէր 'ի նմանէ: Ոչ հատան 'ի նմանէ ոչ կանայք նորա և ոչ որոջք նորա, քանզի 'ի սէր նորա ընդ նմա կապեալ էին:

"Կատարեաց, ասէ, զհարսանիս նորա". և "Տաց քեզ և զնա ևս": Յայնմանէ զի 'ի նմանէ պարտաւ լինի Յակովբ, 'ի նմանէ փառաւորի. զի Ղաբան ստեաց նմա: Հաւանեցաւ հաղորդեցաւ ընդ Լիա և ոչ եթող զնա, զի եղեն նոքա մի մարմին. և Ռաքէլի զի ոչ ստեաց. զի այն որ յառաջն հաստեալն լինի մարդոյն՝ նա է կոչեցեալ կին նորա: Նեղեցին զնա հարճքն լինել ընդ նոսա, զի յառաջ քան զանուանել հարճիցն կարող էր լինել նմա ընդ նոսա: Բնութ՟ք արք ընթանան զհետ կանանց, բայց անդ այլն հեզ և ցած էր քան զկանայսն:

Եւ քանզի ետես Ռաքէլ եթէ կամաց Յակովբու նկարեցան ծնունդք յորովայնի որոջացն, կարծեաց նա թէ և 'ի վերայ արգանդի կանանց իշխէ. ասէ ցնա "Տուր ինձ որդիս": Եւ զի յոյժ տրտմեցի նա, "Ապա թէ ոչ, ասէ, մեռանիմ": Իբրև ետես Յակոբ թէ փոխանակ ա՟յ եդեալ է 'ի մտի իւրում նորա զնմանէ, բարկացաւ Ռաքէլի և ասէ ցնա. "Միթէ ա՟ծ ինչ եմ ես, որ արգելի 'ի քէն զպտուղ որովայնի քո". և յայնմիկ մեկնեաց նմա ով է տէր

արգանդի և նկարիչ մանկան ։ Եւ իբրև ուսաւ, ընթացաւ առ բժիշկն ամլութեան ․ “Վասն այսորիկ յաւելցէ ինձ տէր միւս ևս որդիս„ ․ տէր, և ոչ այր իմ ։ “Տուր ինձ, ասէ, որդիս ․ ապա թէ ոչ մեռանիմ„ ․ զի խիթաց նա՝ թէ գուցէ անարգիցի նա վասն ամլութեան իւրոյ 'ի Յակոբայ ․ բայց խրատեցաւ և ուսաւ՝ թէ չէ ինչ նորա մեղ ։ Գիտակ է Յակովբ այնմիկ՝ զի ասէ “Ես եմ որ ծնուցանեմ, և ես եմ որ արգելեմ„ ։ Բայց դարձեալ զի լուեալ էր Ռաքէլ թէ Սառայի տուաւ որդի վասն Աբրահամու ․ և Սահակ եկաց յաղօթս 'ի վերայ Ռափակայի, և եղեն նորա որդիք, ասէ ցնա “Տուր ինձ որդիս„ ։ Այս ինքն զի աղօթիւք իւրովք խնդրեսցէ, որպէս և հարքն նորա, և ա̅ծ տացէ նմա զաւակ ։ Եւ զի յայտնի լինիցի թէ այս այսպէս իցէ, “Կոչեաց, ասէ, զանուն նորա Յովսէփ„ ․ այս ինքն յաւելութիւն ․ “Յաւելցէ ինձ, ասէ, տէր ա̅ծ որդիս միւս ևս„ ։

Բայց դարձեալ՝ խօսեցաւ իւր Յակովբ զՌաքէլ զկրսերն ․ և ետուն նմա զԼիա զերէցն, զի աշխատ լինէր զոհիւք և պատարագօք ․ զի գիջագոյն էին աչքն նորա, և ոչ տեսանէր զոր ինչ ընթեռնոյր ։ “Առագաստեալ էին, ասէ ; սիրտք նոցա„ ։ Առ դարձեալ զՌաքէլ, որ բարեօքն տեսանէր ․ եկեղեցի սուրբ, այն որ ասացեալ է վասն նորա ․ յորժամ դառնան առ տէր, բառնայ 'ի նմանէ քօղն ։ Անդ ժողովուրդն՝ Լիա, որ աշխատ արար զայր իւր ․ “Աշխատ արարէք զտէր, ասէ, բանիւք ձերովք„ ․ և “Ջնջեցի զմարգարէսն և սատակեցի զնոսա բանիւ բերանոյ իմոյ„ ։ Բայց ատ Ռաքէլ, որ յափոյց զզօրութիւն նորա և նուաճեաց զնա առ Լիա ։ Նեղեցաւ Ռաքէլ ․ և աղաչեաց զայր իւր, զի մտցէ նա առ նաժիշտ նորա ․ սոյնպէս և Լիա ։ Բայց նեղութիւն անզաւակութեան դստերացն Ղաբանու՝ հաւասարութիւն միաբանութեան ած զաղախնայսն ընդ ազատս ։ Յայնմիկ զի սնանէին որդիք աղախնացն, յիստակութեան անտի ազատութեան խոնարհեցին ազատքն յազատութեան աղախնեացն ․ և որդւոց նոցա ներեսցի ստոյգն հաւասարել զամենայն զաւակն իւր 'ի նմին ժառանգութիւն օրհնութեան ։ Օրինակ կատարեալ, զի 'ի ձեռն

տեառն մերոյ ոչ ծառայ և ոչ ազատ. զի ամենեքեան մեք 'ի միջէ անտի հացէ առնումք :

Լիա՝ աշխատեալ ասի, կամ ոչ վայելուչ : Ռուբէն՝ մեծ է ա̃ծ : "Ետես, ասէ, տէր զտառապանս իմ, և այցելու եղև ինձ իմաստութ̃ք իւրով. զի ակն առցէ ինձ այր իմ և սիրեսցէ զիս,, և մի գարշեսցի յինէն վասն տգեղութեան իմոյ : Շմաւոն՝ յաւելցէ ինձ. գիտաց նա թէ պատճառս արար ա̃ծ զի մի ատեցեալ լինիցիմ : Ղևի՝ զի ոչ յարէր 'ի նա այր նորա, զի 'ի Հռաքէլ կոյս միտագոյն էր նա, վասն բազմութ̃ե որդւոց "Այսուհետև ընդ ինև է այր իմ,,. կոչեաց զանուն նորա Ղևի : Յուդայ՝ երկրպագեալ. սիրեաց զնա այր նորա վասն բազմութ̃ե որդւոց նորա, զի ծածկեցին զտգեղութ̃ի նորա. վասն այսորիկ "Երկիր պագից տեառն Յուդայիւ հանդերձ,, : Իւսաքար՝ տուրք վարձուց. "Զի ետու ես զաղախին իմ առն իմում,, : Զաբուղոն՝ բնակութ̃ի իմ. "Բնակեսցէ այր իմ առ իս,, : Դինա՝ դատաստանք նորա : Հռաքէլ՝ գառն, այս ինքն որոջ : Յովսէփ՝ յաւելումն. զի զնա միայն ծնայ ես. միւս ևս խնդրուածք՝ "Յաւելցէ ինձ, ասէ, միւս ևս որդի,, : Բենիամին՝ աջոյ որդի. հայր իւր կոչեաց այսպէս. իբրև ոք զի ասիցէ. ցուպ ծերութ̃ե իմոյ. մայրն կոչեաց զնա որդի վշտածին, որդի անարգանաց իմոց. այս ինքն որդի ցաւոց իմոց. զի 'ի ծնունդս նորա մեռաւ մայրն : Դան՝ իրաւունք, կամ 'ի վերայ իմ նախատանք իմ, կամ դատաստանք դատապարտութ̃ե իմոյ, կամ զի նուաւ եղէ ես դատեալ : Փոխանակ այնր՝ զի ասէ "Խնդրեցի ես 'ի տեառնէ, և աղաչեցի ես ընդ քեռ իմում,,. Թիւրուն̃ դատաստանի. այն զի ասէ "Դատեցայ թիւրեցայ ես ընդ քեռ իմում,,. և կոչեաց ասէ զանուն նորա Նեփթաղիմ : Խնդրուածք են. ընդարձակեսցէ ինձ, կամ յաջախիցէ ինձ ժառանգութ̃ի և անուն : Գադ, քանզի կացեալ էր նա 'ի ծննդոց, իբրև եղև սա՝ անուանեաց յառաջին պարգևսն ա̃յ՝ բախտ. "Դարձաւ յիս բախտ իմ,, : Ասեր՝ երանուն̃. "Զի նուաւ բազմացաւ երանութ̃ի իմ,, :

Փոխանակ այնր՝ զի ասէ "Ամենայն խայտախարիւ իմ են,,. "Ամենայն՝ որ թխագոյն յոչխարս քո,, ա-

սէ հեբրայեցին ։ Գողացաւ Հռաքէլ զկուռս հօր իւրոյ . և գողացաւ Յակոբ զսիրտն Ղաբանու . այս ինքն գողացաւ զանձն իւր յՂաբանայ, զի ճանապարհ զոր ոչ գիտասցէ Ղաբան՝ գնասցէ նա ։ Այլ զայս ասասցուք . զի ըստ սրտին Ղաբանու նոյնպէս տեսանէր զխաշինս նորա . յայտ արար՝ զի ամենայն զոր ծառայեաց նմա, միամտութբ ծառայեաց . ոչ գողացաւ զնա ընչիւ . բայց յայսմ գործովս գողացաւ զանձն իւր 'ի սրտէ անտի Ղաբանու ։ Եւ զհետ լինէր, ասէ, Ղաբան Յակովբու ։ Մարդ էր զկնի աստուածոցն՝ որ 'ի կնոջէ գողացեալ եղև . զանարգանս աստուածոցն և զփառս նոցա 'ի մի բան խառնէր ։ «Ընդէ՞ր, ասէ, գողացար զաստուածսն իմ»։ Ո՞վ Ղաբան, ո՞րչափ պատուեցեր, զի կոչեցեր զնոսա աստուածս . և ո՞րչափ անարգեցեր, զի արարեր զնոսա գողացեալս ։ Բարձրացուցեր զնոսա մինչև առ ածութին . և խոնարհեցուցեր և իջուցեր զնոսա մինչև առ գողութի ։ Ոչ եթէ նոքին իսկ աստուածքն գողացան . և երանի թէ գողացեալ էր նոցա և ոչ լինէին գողացեալք . և լաւ էր եթէ գողք լեալ էին նոքա և ոչ գողացեալք ։ Լուաւ Ղաբան այն Յակովբայ, զի զգուշացուցանէր և ասէր . ոչ ինչ կայ քո և Յակովբու ։ Եւ նա մեծաւ փութով խնդրէր զկուռսն, որ ոչ կարացին անձանց իւրեանց օգնել ։ Ճշմարիտ ասացաւ այն՝ զի ասէ . մի՛ եթէ փոխանակէ՞ն հեթանոսք զդիս իւրեանց ։ Ընդէ՞ր արարեր զնոսա աստուածս զի պահեսցեն կամ պահիցին ։ Եթէ զի պահեցին, անօրէնութբ կաս դու յաղօթս զի պահեցին, զի գողացար դու զնոսա . եթէ զի պահեսցեն անիրաւութեամբ, խնդրեաց դու զվրէժ նոցա . զի փորձեցեր դու զնոսա ։ Եկն Ղաբան առանց այ, և գնաց առանց այ . խօսեցաւ ընդ նմա ած կենդանի, զի տալ պատասխանի վասն մեռելոտի աստուածոցն նմա մի՛ գտցի ։

Եւ զի ետ տանել պատարագս Եսաւայ, զի ցածուսցէ զբարկութիւն նորա պատարագօքն ։ Զի առեալ էր նորա զփորձ նորա յեփեալ ոսպամբ պնակաւն . զի որկորստութի ագահութե՝ որ նեղեաց զնա վաճառել նմա զանդրանկութի իւր, նոյն ինքն հաւանեցոյց զնա զի մի՛ յիշեսցէ զոխսն օրհնութեանցն

վասն պատարագացն· Եւ այն զի մարտեաւ ընդ հրեշտակին և եղև նա ընդդիմակալ զօրութե̃ նորա։ Ոչ եթէ զգօտեաց կալաւ նա 'ի մարտի անդ և կռուեցաւ ընդ նմա, այլ մարտեաւ նա՝ զի օրհնեսցէ զնա, և ապա արձակեսցէ զնա։ Եւ յայսմիկ յաղթեաց և ընդդիմակալ եղև զօրութե̃ նորա։ Իսկ արդ ո՞վ է որ ոչ յիմարիցի և զարմասցի, զի 'ի հաւասար կշիռս զօրութի̃ մարդոյ ընդ հրեշտակի եդեալ էր, և ոչ էր յայտնի, ոչ որ յաղթէր, և ոչ որ յաղթահարեալ լինէր՝ մինչև յառաւօտ· զի տեսիլ էր այլակերպ։ Իբրև զայն՝ զի ասէ “Ի բազում նշանս և 'ի բազում արուեստս խօսեցաւ ա̃ծ ընդ հարս մեր”· զի յօրհնելն նորա զՅակոբ, Իսրայէլ կոչեաց զնա· “Զի մարտեար դու ընդ հրեշտակին, և ընդդիմակաց եղեր զօրութեան նորա”։ Այսու նմանութե̃ք տեսանէին մարդք ա̃ծեղէնք, և փափագեալ ցանկացեալ կատարեալ էին տեսլեան նորա· վասն այսորիկ ասաց Յակոբ· “Տեսի ես, ասէ, հրեշտակ դէմ յանդիման, և ապրեցաւ անձն իմ”։ Եւ երևեցաւ նմա ա̃ծ 'ի ժամանակի զի իջանէր նա· և երևեցան նմա յելանել անդր։ Յիջանել նորա մխիթարեաց զնա, զի մի՛ տրտմիցի նա· և յելանել նորա քաջալերեաց զնա, զի մի՛ երկիցէ յԷսաւայ։ “Եւ մնաց, ասէ, անդէն միայն· և եկն այր մի, մարտեաւ ընդ նմա”։ Եւ ո՞ւր է հրեշտակն· այլ նախ 'ի տեսիլ առն երևեցաւ նմա, և ապա յետոյ ծանեաւ։ Արդ մարտեաւ ընդ նմա հրեշտակն և ոչ յաղթեաց նմա· այս ինքն յասելն իւրում ընդ նմա “Արձակեա զիս”, համարձակութի̃ տայր Յակովբու ասել՝ թէ չիք հնար, ոչ արձակեցից զքեզ, եթէ ոչ օրհնեսցես զիս։ Իբրև զայն՝ զի ասէ “Թոյլ տուր ինձ, 'ի բաց կաց· թող ջնջեցից զժողովուրդդ”։

Եւ իբրև հաւանեցաւ օրհնել զնա, “Եհարց, ասէ, զի՞նչ անուն է քո· ասէ՝ Յակովբ։ Ոչ, ասէ, այսուհետև եղիցի անուն քո Յակովբ, այլ Իսրայէլ, զի կարացեր դու ընդդիմակալ լինել ընդ հրեշտակի և մարդոյ”· շատ իցէ քեզ օրհնութի̃, զի ընդ հրեշտակին մարտեար։ Այս ևս մեծ է, զի Իսրայէլ անուանեցաւ· այն զի է նա այր, որ զա̃ծ ետես· ապա

եթէ բնութ̅ իւրով հրեշտակ էր այն՝ որ երեւեցաւն , սուտ եղեւ բանն որ Իսրայէլն ասէ յայսմիկ , զի ոչ ետես նա զած̅ ։ Թէ այդ այդպէս է , ինքն հրեշտակն ած̅ էր , և մարդն ած̅ էր . այլ մարտնչէլն առն , և գործն հրեշտակի , բայց գործիչն ած̅ ։ Հարց զնա . "Ասա ինձ , ասէ՛, զանուն քո ։ Եւ ասէ ցնա . զի՞ հարցանես զանուն իմ , զի սքանչելի է . և անդէն օրհնեաց զնա ։ Եւ կոչեաց զանուն տեղւոյն այնորիկ տեսիլ ած̅յ . զի տեսի , ասէ , զհրեշտակ դէմ յանդիման , և ապրեցաւ անձն իմ" ։ Անտի առեալ է այն՝ զի ասէ "Տ̅ր տ̅ր մեր , զի՜ սքանչելի է անուն քո յամենայն երկրի" ։

Եւ զի ընդարմացոյց զամոլաջիլն նորա , զի սքանչելի են բանքն զոր խօսեցաւ ընդ նմա , և ահաւոր էր տեսիլն որ երեւեցաւ նմա ։ Զի մի՛ կարծիցի նա թէ առ աչօք ինչ եղեւ գործն , կամ գուցէ երազ համարիցի նա , ընդարմացոյց զամոլաջիլն նորա . զի գիտասցէ նա 'ի կաղալն իւրում՝ թէ ճշմարիտ խօսեցաւ ընդ նմա և երեւեցաւ նմա և լուաւ ։ Կամ զի խոստացաւ տասանորդել ած̅յ , և առ նա նախ տասանորդեաց Եսաւայ . վասն այսորիկ մերձեցաւ առ ամոլաջիլ ազդեր նորա , զի զած̅յն մարդոյ մատոյց ։ Կամ զի երկնչէր նա յԵսաւայ , մխիթարեաց զնա 'ի յԼաբան , և ապա քաջալերեաց զնա հրեշտակն , զի ակն կալցի ։ Զի թէ այս ամենայն փոյթ եղեւ ած̅յ վասն իմ՝ զի կարող եղէց յաղթութ̅ դիմակալ լինել[1] հրեշտակին . զի եթէ ընդ հրեշտակի մարտեայ և ընդդիմակալ եղէ զօրութ̅ նորա , ո՞րչափ ևս առաւել օգնական լինի ինձ ած̅ եթէ դէպ ինչ լինիցի պատերազմի 'ի մէջ իմ և 'ի մէջ Եսաւայ եղբօր իմում ։ Կամ 'ի տեսիլս Եսաւայ երեւեցաւ նմա հրեշտակն , զի քաջալերեսցի և մի՛ երկիցէ . զի ասաց նա և Եսաւայ . "Տեսի ես , ասէ , զերեսս քո , որպէս ոք զի տեսանէ զերեսս հրեշտակի" ։

Եւ դարձեալ , զի եդ 'ի նմա արատ խեղութ̅ , զի եղբայր նորա կակղասցի 'ի սաստկութ̅ սրտմտութ̅ իւրոյ ։ Զի յորժամ տեսանիցէ աչօք իւրովք զցաւագին տեսիլ նորա՝ զղջասցի նա , և միտք նորա զխոր-

1 Յօրինակին չինէր ։

հուրդս ողորմութեան. և գթացի նա 'ի վերայ նորա, և մխիթարեսցէ զնա փոխանակ այնր՝ զի եկն տրտմեցուցանել զնա: “Գոյ և իմ, ասէ, շատ. այդ ամենայն, եղբայր, քեզ բարի շայեսցէ„: Մանաւանդ զի եւ ընդ առաջ նորա պատարագօք, զի բարձցէ 'ի մտաց նորա զնենգութիւն երկմտութեան: Եւ դարձեալ զի կաղացոյց զնա, զի մի՛ փնասեսցի նա յամբարտաւանելն իւրում. յիշէր նա՝ թէ ընդդիմակալ եղև նա զօրութեան հրեշտակին առանց արատոյ, և բարձրանայր 'ի միտս իւր իբրև զայն՝ զի ասէ “Տուաւ ինձ խայթ մարմնոյ, զի մի՛ բարձրացայց„: Եւ զի նկարեսցի 'ի նմա դարձեալ խորհուրդ ժողովրդեանն. զի թէպէտ և արժանի եղև տեղւոյն հանդըստեանն և պատարագացն և քաւութեան, սակայն արատ գոյր 'ի նմա, այս ինքն թերի էր 'ի կատարմանէն:

Կատարեցաւ 'ի նմա դարձեալ և օրինակ տեառն մերոյ. զի չարչարանօք իւրովք ապրեցոյց զխաշինս իւր, և զժողովուրդ իւր յեսաւայ գայլոյ անտի. զի եւ նա չորեքհարիւր արամբք ընդ առաջ նորա, զի մի՛ տացէ նմա թոյլ կոխել զսահմանն՝ զոր խոստացաւ նմա հայր իւր: Եւ զի բարձցէ նա զլուծն առանց ապաշխարութեան, այն զոր եդ 'ի վերայ նորա հայր իւր՝ յասելն իւրում. թէ դարձցես և ապաշխարեսցես, բարձցի լուծ նորա 'ի պարանոցէ քումմէ. զի կամեցաւ նա սպանանել զնա: Այլ դարձան ողորմութիւնքն Եսաւայ 'ի վերայ Յակովբու. զի կարծեաց նա՝ թէ հնազանդութիւն զորս եդ 'ի վերայ նորա հայր նորա, սուտ է: Եւ զոր օրինակ էջ Յակովբ առ 'ի հօրէ իւրմէ ցուպ 'ի ձեռն առնուլ իւր կին, սոյնպէս և որդի առ 'ի հօրէ իւրմէ առ արարածս իւր, և խաչիւ իւրով էջ 'ի դժոխս միայն, և եւ բանակաւ՝ որպէս Յակոբ՝ առ հայր իւր: Յակովբ ցաւովք ազդերն իւրոյ առ զյաղթութիւն 'ի վերայ հրեշտակին. և տէր մեր չարչարանօք խաչին իւրոյ թագաւորեաց 'ի վերայ մահու և փրկեաց զեկեղեցի իւր:

Փոխանակ այնր՝ զի ասէ “Եգիտ աղբեւր ջուրց իբրև արածէր նա զջորիս հօր իւրոյ„, հեբրայեցի ասէ. “Եգիտ հսկայս յանապատին, ջորիք ոչ էին„:

Փոխանակ այնր՝ զի ասէ “Կոչեաց զանուն նորա Սաքովթ ,, , հեբրայեցի՝ տաղաւարս ։ Եւ առ գնոյ Յակոբ տեղի մի , հար զխորան իւր . զի յայտ արասցէ , զի և զբաժինն զոր առին գնոյ արդարքն 'ի Սիւքէմ յերկրին իւրեանց զխորհուրդ տեառն մերոյ յայտնեցին . զի իւրով զիւրն գնեաց ։ Եւ զի ասէ “Ի բաց առէք զաստուածս օտարոտիս 'ի միջոյ ձերմէ ,, , վասն կռոցն Ղաբանու ասէ , և վասն գնդացն՝ զոր ետ նոցա Ղաբան հեթանոսաբար մինչ դեռ տղայքն էին ։

“Եւ այս թագաւորք որ թագաւորեցին յերկրին եդոմայեցւոց մինչ չև էր երևեալ թագաւոր որդւոցն Իսրայէլի ,, ։ Քանզի ասացեալ էր . “Ահաւանիկ տէր և գլուխ կացուցի զնա 'ի վերայ քո ,, , յայտ առնէր՝ զի յառաջ քան զայն նախապետուի̃ն թագաւորեցին նոքա ։ Բայց իբրև եկն նախապետութիւնն 'ի ձեռն Դաւթի , հար սատակեաց զԵդոմ իբրև զծառայ մի հնազանդ . և գնաց Դաւիթ արկանել զձեռն իւր 'ի գետն Եփրատ . այս ինքն՝ զի տիրեցին 'ի գետոյ անտի մինչև յԵգիպտոս , որպէս և ասաց ա̅ծ ցԱբրահամ . և զի եղ ընդ առաջ նորա Ադրայազար , և հար սատակեաց զնա անդէն Դաւիթ ։ Նա և 'ի վերայ Յովբայ ասի այս . զի և նա մի յայնցանէ էր՝ որ յԵդոմն թագաւորեցին . և նա հինգերորդ է յԱբրահամէ , և թուի այսպէս . Աբրահամ ծնաւ զԻսահակ , Իսահակ ծնաւ զԵսաւ և զՅակովբ . և Եսաւ ծնաւ 'ի Մաղաղթայ 'ի դստերէ անտի Իսմայէլի զՀրուաքուէլ . Հռաքէլ ծնաւ զԶարեհ . Զարեհ ծնաւ զՅովբաբ , զի նա ինքն է Յովբ ։

Փոխանակ այնր՝ զի ասէ “Գիտաց Ոփնան թէ նորա լինի զաւակ ,, . հեբրայեցի՝ “Եւ գիտաց Ոփնան թէ ոչ յանուն իւր կոչի զաւակ իւր ,, ։ Ընդ կամս բժշկի հայիս դու և գովե՜ս . կամ ընդ գործն նորա հայիս դու և արհամարհե՜ս . սոյնպէս ընդ կամս Թամարայ , զի ահա այլում առն նա ոչ եղև ։ Սոյնպէս և դստերացն Ղաւթայ . և բարեկամին Յուդայ ընդ նմա էր . և ոչ խնդրեաց և սա մտանել առ նա ։ Եւ իբրև ետես Յուդայ , թէ նոյն ժամայն ընկալաւ զյղութի̃ , ասէ “Արդարացեալ է Թամար և որդիք իմ մեղաւորք ,, ։ Բայց դարձեալ արդարացեալ է

քան զիս. զի ես 'ի դէմս պոռնկութե̃ մերձեցայ առ նա. բայց նա զաւակի և որդւոյս իմոյ սրբոյ ցանկացաւ: Կամ զի զերկուս որդիս իմ ամփոփեաց, և զիս դարձեալ պարտաւորեաց: Բան միջին ասաց. “Վասն այսորիկ ոչ ետու զնա Սելովմայ որդւոյ իմոյ”. այս ինքն զի յաղթահարեաց զորդիս իմ մահուամբ իւրեանց. վասն այսորիկ ոչ ետու զնա նմա թէ գուցէ և զնա ևս մեռուցանիցէ: Զի ահաւանիկ և ինձ յաղթեաց խորհրդովք իւրովք. զի ակն ունէր թէ պարտաւոր իցէ նա արեան որդւոց իմոց. թերևս նա իսկ ոչ հաճեցաւ 'ի սերմն նոցա, մանաւանդ իբրև լուայ ես թէ պոռնկեցաւ նա: Բայց իբրև եցոյց նա զվկայսն, յաղթեաց ինձ. զի սոքա ետուն ընդ նորա պատասխանի. եթէ զզաւակ քո ատեցի ես, ասէ, զիմ որդդարձեալ միւսանգամ զկնի նորա գնացի: Թէ այդայդպէս է, բարւոք յաղթահարեցաւ նա, և ասաց “Արդարացեալ է քան զիս”: Զի ոչ ետու ես զնա Սաղովմայ որդւոյ իմոյ, ծաղր արար նա զիս, զի մի՛ ծանեայց զնա. զի իբրև 'ի խաւարի որսացաւ զիս, զի մի՛ առից զնա 'ի միտ. և ահա աղտեղութի̃ համարեալ և շնութի̃ 'ի վերայ հարցն: Իբրև զայն զի ասացին որդիքն Յակովբու. ասեն “Ոչ գործի այսպիսի 'ի միջի մերում”: Եւ Հռուբէնի և ամուրհայւոցն ես, ասէ, յանցեայ 'ի նա. բայց հեբրայեցի մեկնէ. “Եւ ոչ, ասէ, յաւել ևս գիտել զնա ինքն Յուդա” ասէ: Զիք ասա, ասեն, բոզ. ահա մի վկայութի̃. դարձեալ եկն բարեկամ նորա և ոչ եգիտ. ահա ետու ես և լուաւ. արդարացեալ, ասէ, քան զիս: Ես իբրև առ բոզ մի չոգայ կորուսանել զզաւակս զայս, որ գտանելոց է զկորուստն հեթանոսաց. և նա հաւատովք իւրովք իբրև զօրհնութի̃ եկն առնուլ զպարգևսն, որ սրբէ զայնոսիկ՝ որ առնուն զնա: Եւ սրբեցաւ Թամար 'ի պոռնկութե̃ իւրում 'ի շնութէ̃. զի հաւատք որպէս և կուսութի̃ առաւել է: Զի են բազումք որ վասն ամօթոյ այլոց պահեն զկուսութի̃. բայց սա իբրև պոռնկութի̃ արտաքոյ օրինացն չարաչար 'ի դէմս շնութե̃ առանց օրինաց յօժարեաց 'ի շնութի̃ կամօք իւրովք, զի զրկեցին զնա 'ի հաղորդութէ̃ առանց կամաց իւրոց: Զի ոչ ետուն նմա 'ի ջուրց անտի ան-

ձին իւրոյ, խնդրուածք նորա արարին զիմաստութին ծարաւ նորա, զի գողասցի նա զջուրս՝ որ թաղեալ էր 'ի միտս ըմպելի հեթանոսաց ։

Զարմանալ է ընդ երկոսին ․ զի ոչ յառաջ քան զայս գործ, և ոչ զկնի սորուն գրէ ուրեք վասն նոցա իբրև զայս ։ Բայց 'ի վերայ Թամարայ քարոզէ տուիչն, զի մի խնդրուածս խնդրեաց նա, և երկու տուան նմա զկնի երկուց արանց իւրոց ։ Զարմանք են դարձեալ, զի ոչ երկեաւ եթէ գուցէ հայիցի ընդ երեսս նորա և ծանիցէ զնա ․ այլ հաւատքն Թամարայ ուսուցին և զԵղիշա՝ թէ կարող են աղօթք զաչս ունել ․ և ոչ երկեաւ և զարհուրեցաւ 'ի ժամանակի իբրև խօսէր ընդ նմա, թէ գուցէ ծանիցէ զձայն բարբառոյ նորա ։ Զի ուսաւ նա 'ի հօրէ անտի Յուդայ, զի չարութին ունէր ձայնն Յակովբու ․ զի առաջի Սահակայ յանդիմանեաց զնա 'ի ժամանակի իբրև եմուտ նա զօրհնութիւնն Եսաւայ յափշտակել ․ զի զայն ինչ զոր յափշտակեաց Յակովբ յԵսաւայ 'ի ձեռն մորթոյն, զնոյն կորզեաց Թամար երևելի հանդերձիւն իւրով ։ Զի կարծեաց Յուդա թէ 'ի պատճառս Թամարայ սատակին որդիք նորա, եկին երկու որդիքն Թամարայ, որ 'ի միջի իւրումն էին, զի հանգուսցեն զնա 'ի կարեաց անտի զոր համբերէր յերկուց արանցն իւրոց՝ որ արտաքոյ քան զնա ։ Առ իւր Թամար երիս վկայս յայտնիս, և ապա առ նա զաներևոյթ երրորդութին այ ․ հան զերիսն վկայս զորս առ իւրն ունէր, զի մի՛ կորիցէ ինքն երկու որդւովքն իւրովք հանդերձ ։ Եկին երրորդքն և ապրեցուցին զերիսն ․ զի մի՛ հատցի կարգն երրորդին ։ Փարէզ՝ խրամատիչ ցանկոյ ․ Զարեհ՝ ծագումն ։

ԳԼՈՒԽ Թ

“ԵՒ Յովսէփ, ասէ, եւթնուտասնամի էր, զի արածէր եղբարբքն հանդերձ զխաշինս հօր իւրոյ ․ և ինքն մնանէր ընդ որդիսն Բաղլայ և ընդ որդիսն Զեղփայ կանանցն հօր իւրոյ „ ։ Եւ զի ընդ որդիսն աղախնացն մնանէր նա, զի ոչ էր նմա փոյթ վասն աղա-

տութե̃ բնութեան, որպէս ազատութեան մտաց․ զի ոչ համբէր որդին մատաղ բնակել ընդ Հռուբէլի, որ պղծեաց զանկողինս հօր իւրոյ․ և ոչ զի եղիցի նա ընդ Շմաւոնի և ընդ Ղևեայ, որք կործանեցին զպարիսպն քաղաքութե̃ իւրեանց, և կոտորեցին զարս սրտմտութեամբ իւրեանց․ և ոչ դարձեալ թոյլ տային նմա խորհուրդք սրտի իւրոյ հաղորդել ընդ Յուդայ, զի պոռնկեցաւ նա ընդ նուոյ իւրում։ Հեռացաւ նա յամենեցունց, և ընդ սոսա միայն լինէր նա։ Բայց հեբրայեցի փոխանակ այնր՝ զի ասէ “Ինքն մնանէր ընդ որդիսն Բաղայ և Զեղփայ„, “Ինքն, ասէ, կրտսեր էր քան զորդիսն Բաղղայ և Զեղփայ„։

“Եւ եկն եբեր, ասէ, Յովսէփ զհամբաւ չար զեղբարցն իւրոց առ հայրն իւրեանց, և ամբաստան լինէր զնոցանէ„։ Իսկ զի՞նչ էր համբաւն չար․ բայց եթէ գործք չար կորստեան խաշինն։ Քանզի նա տղայ էր, և իշխանութի̃ հեռի էր 'ի նմանէ․ տրտմէր և չար թուէր նմա վասն խաշանցն, զի չարաչար առաջնորդէին նոցա եղբարքն իւր։ Եւ զի ետես հայրն նորա զճշմարտութի̃ նորա և զհեզութի̃ զգաստութե̃ նորա, արար նմա առ սէր շապիկս թեզանեօք։ Բայց հեբրայեցին՝ “Շապիկս նկարէնս ծաղկեայս„․ այս ինքն պարեգօտս։ Զի սոյն իսկ այս թէպէտ և զՅովսէփ ուրախ առնէր, սակայն եղբարցն նախանձ արկանէր։ “Իբրև տեսին, ասէ, եղբարքն՝ եթէ զնա սիրէ հայրն առաւել քան զամենայն եղբարսն, յայնժամ բազմացաւ ոխութի̃ սրտից նոցա, և ոչ կարացին խօսել ընդ նմա բանս խաղաղութեան„․ զի եմուտ նախանձ 'ի միտս նոցա, և մերժեաց զհարազատութիւն 'ի միջոյ սրտէ որդւոցն հօր նորա։

“Երազ տեսանել սկսաւ, ասէ, Յովսէփ․ և պատմեաց զայն եղբարցն իւրոց„։ Այս ինքն զի մերձեցուցանէր զնոսա քանիւք իւրովք․ քանզի նշան էր նա, զի զշինութի̃ և զխաղաղութի̃ սիրէր նա։ “Լուարուք, ասէ, երազոյս զոր տեսի ես, պատմեցից ձեզ․ Թուէր ինձ, ասէ, թէ որայ կապէաք 'ի դաշտի միոջ„․ այս սկիզբն միաբանութե̃ է, և մերձենալն նոցա որ առ միմեանս։ “Եւ ահա, ասէ, յարեաւ որայն

իմ և կանգնեցաւ ”. այս մեծութի̃ փառաց է ։ “Եւ ահա, ասէ, գային պատէին որայքն ձեր, և խոնարհ երկիր պագանէին որայոյն իմոյ ”. այս նշան հնազանդութե̃ է. և վասն այսորիկ յաւելին ևս ատել զնա, զի եմուտ լուր կատարածի երազոյն և լոյծ զսէր սկզբան նորա ։

Ըմբոստացան եղբարքն և ասեն. “Արդ թագաւորելով թագաւորե̃լ կամիս դու ՚ի վերայ մեր ”։ Նոքա մեկնեցին ՚ի վերայ անձանց իւրեանց. իբրև զայն՝ զի ասէ “Շինեսցուք մեզ աշտարակ, զի մի՛ ցրուեսցիմք ”, և ցրուեցան. իբրև զայն՝ զի ասեն “Հաներ զմեզ յանապատ զի մեռցուք ”, և եղև. և զոր օրինակ հատին ՚ի վերայ անձանց իւրեանց մշակք այգւոյն. ասեն “Զարաչար սատակեսցէ զնոսա ”։ “Թագաւորելով, ասեն, թագաւորե̃լ կամիս դու ՚ի վերայ մեր. կամ տիրելով տիրե̃ս դու ՚ի վերայ մեր ”։ Բարւոք է երազ քո, ՚ի գործոյ այտի մեկնութիւն. կանգնեցաւ աջ քո, և եղև ժողովիչ երկրին եգիպտացւոց. ցորեան յշտեմարանս քո, և երկիր պագանեն քեզ որդիք հօր քո ։ Բայց նոքա լի եղեն սրտմըտութե̃ք բարկութե̃ք ընդ իմաստութիւն մեկնութե̃ ։ Յայնժամ տրտմեցաւ Յովսէփ, զի ոչ կացին մնացին ՚ի կատարածն, որպէս և ՚ի սկզբանն ։ Եւ ասէ Յովսէփ ցեղբարսն. ոչ տէրութի̃ քարոզեցի ձեզ և ոչ թագաւորութի̃. ես զայն ինչ զոր տեսի՝ պատմեցի ձեզ, և դուք ըստ կամս ձեր արարէք պատասխանի մեկնութե̃ ։ Ես երազ միայն ասացի, և դուք թագաւոր արարէք զիս. երազ միայն պատմեցի, և դուք ստացարուք զհնազանդութի̃ ձեր. կամ մի՛ մեկնէք զերազս իմ, կամ մի՛ տրտմիք ընդ մարգարէութիւնդ ձեր. ըստ կամս ձեր որպէս կամեցարուք ասացէք. և որպէս զի ոչ կամեցայ ես, բարկացայք դուք ։

Սկսաւ դարձեալ այլ երազ տեսանել ։ Ոչ դադարէ ճշմարտութի̃ ՚ի պատմելոյ զկերպարանս իւր հանապազօր. և պատմեացն եղբարցն իւրոց և առաջի հօր իւրոյ ։ Ո՞վ Յովսէփ, ո՞չ երկեար զարհուրեցար դու յերազոյ անտի յառաջնոյ, զի ոխացան ընդ քեզ ամենեքին ։ Վասն այսորիկ առաջի հօրն պատմեաց, զի թերևս, ասէ, շրջեսցէ հայր իմ զմեկնութի̃ն. այլ

ինչ ասացէ և հաշտեսցին եղբարքն իմ վասն առաջին ցասմանն։ Եւ սկսաւ դարձեալ միւսանգամ Յովսէփ, իբրև զահի հարեալ էր յոխակալ հայելոյ անտի եղբարցն իւրոց՝ որ էր առ նա, և ասէ ցնոսա. “Դարձեալ միւս ևս այլ երազ տեսանէի. Թուէր ինձ իբրև արեգակնդ և լուսինդ և աստեղք մետասան գային և ինձ երկիր պագանէին„։ Աստ մեկնութի 'ի պատմութիս յաւելու. զի այն առաջինն որայոյն մատուցանէ զերկրպագութի. և այս վերջինս առ ինքն մերձեցուցանէ զհնազանդութիւն։ Եւ իբր ամենեքին սպասէին և ակն ունէին լսել զոր ինչ հայր նոցա առնէր պատասխանի, սկսաւ նախ հայրն նորա սաստիւ պատուհասել զնա. զի սաստել պատուհասելն նորա զնա՝ ցածուցէ նախ զսպառնութին և զատելութիւն եղբարց նորա։ “Արդ գայցեմք, ասէ, ես և մայր քո և եղբարք քո առաջի քո, և քեզ խոնարհ երկիր պագանիցեմք„. և ահա մայրն նորա մեռեալ էր. այլ քանզի մի մարմին են նոքա, և մայր նորա պագ նմա երկիր 'ի պագանել երկիրն Յակովբայ։ Արդ սաստեաց պատուհասեաց զնա յանդիման նոցա, քանզի ետես նա՝ թէ ներկան նոքա նախանձու. ոչ եթէ զի չէր ստոյգ և հաւատարիմ Յակովբու մեկնութիւն երազոյն, այլ զի պատուհասիւն իւրով զցասումն նոցա 'ի բաց արասցէ։ Զի թէպէտ որպէս զիարդ գործըն և իրքն լինելոց էին՝ Յակովբ ոչ գիտէր, սակայն 'ի միտս իւր հանապազօր այն խորհուրդք բևեռեալ և տնկեալ էին. “Եւ հայր նորա, ասէ, պահէր զբանսն„։

Եւ եղբարքն Յովսէփու անցին գնացին արածել զխաշինսն 'ի Սիւքէմ. և զնա ոչ առաքեաց ընդ նոսա հայր նոցա, եթէ գուցէ յիշեսցեն զերազս նորա և տրտմեցուցանիցեն զնա։ Իբրև անցին ժամանակք հարուստ մի, Յակովբու այսպէս թուեցաւ՝ թէ յայսմ հետէ մոռացեալ է ցասումն 'ի սրտէ եղբարց նորա։ “Եւ ասէ Յակոբ ցՅովսէփ. երթ տես զեղբարսն և զխաշինսն թէ ողջ կայցեն, և բեր ինձ զրոյց„։ Թէպէտ և տրտմեալ էր Յովսէփ և երկուցեալ յեղբարց անտի իւրոց, սակայն քանզի ոչ էր սովոր

արհամարհել անցանել զհրաման հարքն իւրով, եւ զանձն իւր երթալ։ Եւ մինչդեռ երթայր 'ի Ճանապարհի մոլորեցաւ նա ըստ արտուղի, զի բազմացան հոգք խորհրդոց նորա, և մոլորեցաւ նա 'ի Ճանապարհէ անտի։ Իբրև տեսին եղբարքն իւր՝ սկսան կրճտել զատամունս իւրեանց և ասել. ահա երազատեսն՝ որ դիմեալ գայ առ մեզ։ Փոխեցաւ բնութի եղբայրութեն 'ի փոփոխումն մտաց, և մոռացեալ եղև եղբայրն 'ի խորհրդոց նոցա. զի բանք դառնութե էին քան զսրտմտութի խստութե 'ի նմանութի լարեալ աղեղան՝ իբրև զնետս սլաքեալս թուանէին բարկութք առ նա։ Յայնժամ կալան զնա և ասեն. հը՛ հը՛, անկար 'ի ձեռս մեր՝ երազատես. այս է մեկնութի երազոց քոց. արդ ընդ կառափն քո հանցուք զամենայն, զոր և ասացեր դու. և երկիր պագցեն քեզ վէմք հարուածովք, և խաւարեսցի արեգակն 'ի սատակման քում, և լուսին և աստեղք 'ի վերայ քո մթասցին, զի կարծեցեր դու բարձրանալ թագաւորել 'ի վերայ մեր լուսով նոցա։

Բայց Հռուբէլ աղաչէր հաւանեցուցանել զնոսա յասել իւրում. "Մի՛, ասէ, սպանցուք և ոգեպարտ եղիցուք, և մի՛ արասցուք աշխատ զձեռս մեր 'ի նա, և մի՛ հեղցուք զարիւն նորա յերկիր. ոչ, ասէ, բարւոք է սպանութի. այլ արկցուք զնա 'ի գուբ մի յանապատի աստ, և զձեռս ձեր դուք աշխատ 'ի նա մի՛ առնէք"։ Ո՞վ Հռուբէլ, զի՞նչ գործեսդ. և ո՞չ է լաւ մահ ժամանակեան միոյ քան զտանջանս գբոյ։ Այլ Հռուբէլ ոչ եթէ զի մեռցի Յովսէփ 'ի ներքս 'ի գուբն կամէր, այլ զի խելօք թափիցէ 'ի նոցանէն և անդրէն միւսանգամ 'ի հայր իւր հասուցանել մարթասցէ. զի ցանկայր նա բժշկել զցաւս իւր դեղօք իւրովք որպէս բժիշկ իմաստուն՝ որ անձին իւրում յաճախէ զօգտութիս 'ի հալածել իւրում առ յինքենէ զցաւս վնասակարս։ "Եւ մատեան, ասէ, ձգեցին հանին զՅովսէփ 'ի գբոյ անտի, և ետուն զնոյ իսմայէլացւոց"։ Ո՜վ ծառայք, որ վաճառէին ըզտեառնորդին իւրեանց։ Դան և Նեփթաղիմ որդիք Բաղղայ միաբանեցին վաճառել զորդին Հռաքէլայ, այն որ արար շնորհս ընդ Բաղա աղախնին իւր, և ետ

զնա Յակովբու առն իւրոյ ։ Ո՜վ Յովսէփ , ո՞ւր են երազք քո՝ զոր ասէիր դու . արեգակն և լուսին և աստեղք երկիր պագանէին ինձ ։ Եւ փոխանակ զի երկրպագիցին նմա , որպէս երևեցաւ նմա , երթեալ պաշտէր զծառայութիւն 'ի մէջ եգիպտացւոցն ։

Իբրև լուաւ Յակովբ թէ մեռաւ Յովսէփ , գրեալ է ասէ . "Ժողովեցան ուստերք և դստերք նորա և եկին մխիթարել զնա " ։ Եւ եթէ դստերք եղեն Յակովբու յետ [1] ելանելոյն , զիա՞րդ ոչ առնէ յայտ . և թէ հաճոյ եղեն Յակովբայ յետ նեղութեն մխիթարել , զիա՞րդ ոչ առնէ յայտ զդստերսն եթէ իջին յերկիրն եգիպտացւոց , և կամ թէ արանց եղեն նոքա յերկրին քանանացւոց ։ Քանզի 'ի նմին իսկ երկրէ և որդիք նոցա առին իւրեանց կանայս , և յիջանելն իւրեանց յերկիրն եգիպտացւոց ամենեքեան կանայս ունէին ։ Կամ զդստերս որդւոց նորա կարդաց դստերս նմա ։ Փոխանակ այնր՝ զի ասէ "Գազան ուրեմն եբեկ զՅովսէփ որդեակ իմ " . հեբրայեցի , "Գազան ուրեմն չար եկեր զնա " ասէ ։

Ութնուտասնամի էր զի վաճառեցաւ Յովսէփ . եղև 'ի տան Պետափրեայ մետասան ամ . քսանևութ ամի էր 'ի ժամանակին իբրև յարեաւ 'ի վերայ նորա տիկին նորա . մատնեցաւ նա 'ի տուն բանտի զերկուս ամս , և երեսնամի էր զի կաց առաջի Փարաւոնի ։ Եւ յամին երեսներորդի իններորդի Յովսէփու մուտ Յակովբ յԵգիպտոս . զքսան և զերկուս ամս պահեաց Յակովբ սուգ վասն Յովսէփու որդւոյ իւրոյ , և ոչ եղև նմա յայտնի թէ կենդանի իցէ և չիցէ մեռեալ ։ Եւ զի՞ ոչ յայտնեաց ա͞ծ Յակովբայ , զի մի՛ խափանեսցին իսքանչելիքն որ գործեցան ։

"Եւ եղև , ասէ , յետ պատգամացս այսոցիկ արկ զմիտս իւր տիկին տեառն Յովսէփու , և ակն եդ նմա և ասէ ցնա . վաղ եկ արա զկամս իմ " ։ Իբրև ետես Յովսէփ թէ այնչափ շտապ տագնապի 'ի վերայ հասուցանէր , եթող զձորձս իւր 'ի նա , և ինքն փախուստեայ արտաքս ելանէր ։ Թշնամութիւն այն , որ անկաւ զկնի նորա յեղբարց անտի նորա և վաճառեաց

1 Յօրինակին պակ ։

զնա, նոյն դարձեալ միւսանգամ պատահեաց առա-
ջի երեսաց իւրոց ։ Այլ այն ա̃ծ՝ որ ապրեցոյց զնա
'ի նոցանէ, նա դարձեալ փրկեաց զնա 'ի տիկնոջէ
անտի իւրմէ ։ “Եւ առ պատեաց, ասէ, և եդ զձորձ-
սըն Յովսեփու առ ինքն ,, . և 'ի դատ պահէր առն
իւրում մինչև եկեսցէ տէր տանն ։ Եւ իբրև եկն
տէրն, պատմեաց նմա զչարչարանսն իւր ստութ̃բ ։
Այլ թէպէտ նա զրպարտեաց զնա՝ և այրն հաւա-
տաց նմա, սակայն ա̃ծ՝ որ գիտէ զծածկեալս, ոչ
եթող զնա 'ի ձեռանէ ։ Այլ դու, ո՞վ տէր Յովսեփու,
ո՞չ էր արժան առնուլ քեզ 'ի միտ եթէ ո՞յր ձորձք
գտան առ ընկեր իւր. զի եթէ ձորձք կնոջ քո գտան
առ Յովսեփու, բարւոք հաւատացեր դու կնոջն քո.
ապա եթէ ձորձք Յովսեփու առ կնոջ քում գտան,
ո՞չ ահա յայտնի է այս՝ եթէ նա եհար բուռն զնմանէ,
զի կատարեսցէ զկամս նորա ։

Առ զնա տէրն իւր և տարաւ արկ զնա 'ի տուն
բանտին. և արգելեալ էին անդ ծառայք Փարաւոնի.
և տեսին երկոքեան երազ յաւուր միում, և տրտ-
մեալ էին ։ Հարց զնոսա Յովսէփ և յայտնեցին նմա ։
“Երազ, ասէ, տեսաք. և ոչ ոք է որ մեկնէ մեզ
զայն ։ Ասէ ցնոսա Յովսէփ. պատմեցէք ինձ ,, ։ Ո՞վ
Յովսէփ, և ահա երազքն զոր դու անձին քում տե-
սեր՝ առ քեզ ոչ հաստատեցան, զիա՞րդ խոստանաս
դու այլոց մեկնութ̃ի երազոց ։ Այլ յայսմիկ զի յու-
սացեալ համարձակութ̃բ հարց զնոսա և վաղվաղա-
կի մեկնեաց նոցա, յայտ արար թէ հաւատացեալ էր
'ի միտս իւր՝ թէ հանդերձեալ են կատարել տեսիլք
նորա ։ Եւ մինչ դեռ 'ի տան բանտին էր, պատմեաց
Յովսէփու նախ տակառապետն ։ Այս ինքն ամենայն
յո̃յ լինէր, և արկանել զնոսա 'ի բանտ անդր, և զի
տեսցեն երազս ։ Զի թէ պատմեալ էր մատակարա-
րին նախ, քանզի վճիռ մահու դնէր 'ի վերայ նորա
'ի մեկնել երազոյ նորա, երկնչէր տակառապետն և
ոչ պատմէր նմա զիւրն. այլ նախ պատմեաց տակա-
ռապետն, զի վասն բարւոք մեկնութ̃ե երազոյ նորա
յուսասցի մատակարարն ասել և նա որ ինչ ետես ։

Սկիզբն երազոյն Յովսէփու ընդդէմ Հաւուբէլի լի-
նէր յոյժ, զի նա էր գլուխ և անդրանիկ եղբարց իւ-

րոց ․ արդ տես դու զի որպէս Յովնաթանն յաղթեաց նախանձու և ատելութե՟ տանն Կայենի ։ Ատելութ՟ի արանց և սէր կանանց արկին զՅովսէփ 'ի բանտ դուբըն ․ ատեցին զնա արք, արկին 'ի գուբն յանապատի ։ Սիրեաց զնա կին, և արկ 'ի գուբ 'ի տան բանտին ․ եւ 'ի գբոյ անտի ատելութե՟, զի փոխարէն ատելութե՟ն հատուցանել ոչ կամեցաւ ․ եւ 'ի գբոյ անտի ցանկութե՟, զի փոխարէն սիրոյն ոչ հատոյց ։ Ոչ հատոյց նա փոխարէն եղբարցն իւրոց ․ քանզի ոչ եթէ ըստ ատելութե՟ն, որպէս ատեցին զնա, ատեաց զնոսա ․ այլ զլացաւ լաւացաւ զփոխարէն կնոջ տեառն իւրոյ, զի ոչ սիրեաց զնա որպէս և նայն սիրեաց զնա ։ Համբուրեաց զեղբարսն իւր զայնոսիկ՝ որ կրձտէին 'ի վերայ նորա զատամունս իւրեանց ․ բայց դարձոյց զերեսս իւր և փախեաւ յայնմանէ՝ որ փափաքեալ ցանկայր պագանել զնա ։ Հատոյց ատելուե՟ն, և զլացաւ զցանկութ՟ին ․ այս է որ հատոյց և փառաւորեցաւ, զլացաւ և գովեցաւ ․ հատոյց սիրով իւրով ատելուե՟ն, և զլացաւ սիրով իւրով զցանկութ՟ին ։ Ետ նա կրկին պատմուճանս այնոցիկ՝ որ պատառեցին զպարեգօտս նորա ․ զոր օրինակ պատառիցեն գազանք ։ Եթող զձորձըս իւր և փախեաւ 'ի գազանէ անտի, որ խնդրէր պատառել զմարմինս նորա և զհեզուե՟ հանդարտուե՟ նորա ։ Ատեաց դարձեալ զսենեակ, քանզի յանդորրութե՟ նորա հեզութ՟ի նեղեալ էր ․ բայց սիրեաց զգուբն, զի 'ի մէջ նեղութե՟ նորա կուսութ՟ի ցնծայր ։ Ատեաց զսենեակ, այն որ կանայքն 'ի մէջ նորա պատերազմ առնէին ․ բայց սիրեաց նա զտունն բանտին, զի անդ և աւազակք դադարեցին յամենայն պատերազմաց ։

“Գազան, ասէ, ուրեմն չար եբեկ զնա„ ․ արդարեւ գազան չար ։ Իսկ արդ ո՞ր գազան չար քան զատելութ՟ի ։ Արդ երկիր դու յատելութենէ, զի մի՛ ելցէ ապականիցէ զբազումս, որպէս Կայէնն զՀաբէլ, և որպէս եղբարքն Յովսէփու զՅովսէփ ։ Վայելէր իսկ գեղ Յովսէփու և ոչ պոռնկաց ․ և Շուշանայ և ոչ ծնացող կանանց ․ և իմաստութ՟ի Դանիէլի և ոչ մոլորելոց ․ և մեծութիւն Յովբայ և ոչ ագահաց ։ Եթէ իբրև զՅովսէփ էին ամենայն երիտա֊

սարդք, այր ընդ կնոջ ընկերի իւրում ոչ չնայր. և
եթէ իբրև զՇուշան էին ամենայն կանայք, կին ընդ
այլոյ առն ոչ պղծէր. և եթէ իբրև զՅովբ էին ա-
մենայն մեծատունք, ամենայն որբոց հարք էին, և
ամենայն այրեաց արք։ Սոյնպէս և ամենայն պտուղ
արարածոց. առ դու զնոսա յերկուս կողմանս զչա-
րացն և զբարեաց, և տես դու զի զամենայն ինչ զոր
և հաստեաց, բարուք հաստեաց. և ազատութիւն մեր
ոչ կամի առաքինանալ նովաւ։ Յերիս աւուրս մոռա-
ցաւ տակառապետն զՅովսէփ. և յետ երկուց ամաց
յիշեաց զնա. այլ ոչ նա՝ զի մոռացաւ զնա, այլ ա̃ծ՝
զի ոչ մոռացաւ զնա։

Փոխանակ այնր՝ զի ասէ “Ազազունք և խորշակա-
հարք”. ասէ “ի սաստիկ հողմոյ արևելից”։ Մի՛թէ
առանց ա̃յ գտանի՞ պատասխանի խաղաղութե̃ Փա-
րաւոնի. գիտէ տեսանել, և գիտէ մեկնել. այն զի
ասէ “Տեսցէ Փարաւոն այր”, վասն անձին իւրոյ ա-
սաց. զի ոչ ասաց նա արս, այլ այր։ Պատմեաց Փա-
րաւոն զերազն իւր առաջի իմաստնոց և կախարդաց
եգիպտացւոց, և ոչ կարացին մեկնել։ Եւ ահա յայտ-
նի էր երինջքն, զի ուտէին զերինջս. և զի մեկնես-
ցէ զնա յայտնապէս, հասքն զի ուտէին զհասկս. զի
յորժամ եկեսցէ Յովսէփ և մեկնեսցէ զնա, ամաչես-
ցեն կախարդքն այնոքիկ, որ կարծեցին կալ ընդդէմ
Մովսիսի արուեստագիտութե̃ն իւրեանց։

“Եւ իջին, ասէ, եղբարքն Յովսէփու յերկիրն ե-
գիպտացւոց գնել իւրեանց կերակուր”։ Ժողովեցան
և եկին վաճառականքն, զի բերան նոցա կշտամբեալ
յանդիմանեսցէ զնոսա. զի զտէրն իւրեանց վաճառե-
ցին, երկիր պագին նմա իբրև դատաւորի. աղաղա-
կեցին 'ի ձայն բարձր բարբառոյ և ասեն. “Ծառայք
քո եմք”։ Բայց նա ասէ ցնոսա. “Ոչ այդպէս է,
այլ լրտեսք էք դուք”։ Զիւրն ասէր նոցա Յով-
սէփ, զի քննելով քննէր զնոսա գիտել ճանաչել
եթէ կայցէ Բենիամին եղբայր իւր։ Քանզի ետես
նա զնոսա, և զԲենիամին ընդ նոսա ոչ ետես, կար-
ծեաց թէ և զնա սպանին և բարձին զյիշատակ Ռա-
քելայ վասն նախանձու Լիայ. վասն այսորիկ ասէ
ցնոսա՝ լրտեսք էք. “Ասեն ցնա. ոչ տէր, այլ ծա-

ռայք քո եմք»: Ո՞վ վաճառականք, ո՞վ է ծառայ, գո՞ւք՝ եթէ Յովսէփ: Այս են վաճառականք, որ եղեն ծառայք վաճառի իւրեանց: «Երկոտասան եմք մեք, ասեն, որդիք առն միոյ. և որ կրտսերն է, առ հայրն մեր մնացեալ է. և միւսն ևս չիք 'ի միջի»: Յովսէփ իբրև լուաւ թէ կրտսերն առ հայր իւր է, և վասն նորին հարցուածոյն իւրոյ փոյթ եղև նմա, «Ոչ ելանէք դուք աստի, ասէ, եթէ ոչ զեղբայրն կրտսեր ձեր ածէք դուք առ իս: Արդ առաքեցէք դուք զմի ոք 'ի ձէնջ, և ածէք վաղվաղակի զեղբայրն ձեր». զի կարծեաց նա թէ ուրէք վաճառեալ իցէ կամ գրաւեալ: Ես, ասէ, ոչ առաքեմ, այլ դուք առաքեցէք ուր գիտէք թէ իցէ եղբայրն ձեր. զի ես ինքնին, ասէ, յոյժ երկիւղած եմ:

Ի բարբառ գթոյ ասէր Յովսէփ. փոխանակ բազմաց, ասէ, մի 'ի ձէնջ մնասցէ աստ 'ի բանտի: Նոքա իբրև տեսին, ասեն. «Այո այո. արդ յիշեցաք զի հասին մեզ այն մեղք կարեացն եղբօրն մերոյ, զի արհամարհեցաք մեք զնեղութիւն ոգւոյ նորա. զի անկանէր պատէր զմեօք վասն ոգւոյ իւրոյ, և մեք ոչ անսացաք նմա. վասն այսորիկ հասին այս ամենայն փորձութիւնք և նեղութիւնք 'ի վերայ մեր»: Ո՞վ նախանձ չար և հակառակութիւն դառնութեան, զի իբրև նեղեցաւ տագնապեցաւ, դատեցաւ զանձն իւր ստուգութեամբ: Չիք 'ի միջի տանջանք և ոչ քերանք և ոչ կշտամբիչք, և եղեն ինքեանք դատաւորք և ինքեանք կշտամբիչք և ինքեանք յանդիմանիչք միմեանց: Յովսէփ լուաւ թէ լեզուն իւրեանց պարտաւորեաց զնոսա, և իբրև 'ի վերայ մեռելոյ խօսէին, և իբրև յոյժ զհատուցումն ընդունէին, և յուզեցաւ գութ ողորմութեան նորա վասն շնորհացն Հռուբէլի. և դարձաւ գնաց առ 'ի նոցանէ մեկուսագոյն և ելաց: Եւ հրամայեաց ունել զՇմաւոն և կապել զնա, և եթող զՀռուբէլ. զի լուաւ նա, զի ասէր ցեղբարսն իւր. «Ո՞չ ասացի ձեզ յայն օր՝ թէ մի՛ մեղանչէք մանկանն և դուք ոչ լուէք ինձ. արդ ահաւասիկ արիւն նորա, խնդրի 'ի ձեռաց ձերոց»: «Եւ ինքեանք, ասէ, ոչ գիտէին՝ եթէ զայն ամենայն լսէ Յովսէփ, զի թարգմանն կայր 'ի մէջ նոցա»:

Հրաման ետ Յովսէփ լնուլ զամանս նոցա ցորենեաւ. և տալ պաշար 'ի ճանապարհ. և զիւրաքանչիւր գինս գնել անդէն 'ի ցորեան անդ յիւրաքանչիւր քրձի ։ Բարի առնէր նոցա և ոչ յայտնէր, զի մի՛ գիտասցեն զշնորհսն և 'ի համարձակութենէ անտի երկմտիցեն ։ Խաբեաց զնոսա դարձեալ 'ի սկիհ անդր, զի ունէր և բախէր զնա. զի կարծիցեն թէ դիւթութ̃ք խօսեսցի ընդ նմա. “Եւ 'ի դմին, ասէ, հմայելով հմայէր զամենայն „. յայնմանէ ասեն, զի բազմեցան առաջի նորա երէցն ըստ երիցութ̃ե, և կրտսերն ըստ կրտսերոյն. և զարմացան, ասէ, այր ընդ եղբօր իւրում ։ Եւ զի ասէ “Առ որում սկիհն իմ գտցի՝ նա եղիցի իմ ծառայ „, փորձելով փորձէր զնոսա՝ թէ արդարև տայցեն զԲենիամին 'ի ձեռս նորա. և զի եդ Յուդա զանձն իւր փոխանակ նորա, և յիշեաց զսէր նորա որ էր առ հայրն իւր, յայտնեցաւ Յովսէփ եղբարցն իւրոց. պատուէր տայր նոցա Յովսէփ և ասէր. մի՛ ինչ կագիցէք և զայրանայցէք դուք ընդ միմեանս 'ի ճանապարհի փոխանակ այնր զի վաճառեցէք զիս. զի այն որ արարն զիս զի վաճառեցայց, նա եղև պատճառ բարեաց մերոց. կամ վասն չեղջակուտացն զոր բարձին առաջի նորա ։

Բայց Յովսէփ 'ի դքոյ անտի 'ի թագաւորութ̃ի արքայութ̃ե, և յանարգանաց 'ի փառս պատուոյ. և տէր մեր 'ի խաչէ անտի ընդ երկինս, և 'ի դժոխոց անտի յաթոռ փառաց ։ ԶՅովսէփ իբրև տեսին եղբարք նորա, ասեն. “Ահա աւանիկ երազատեսն որ դիմեալ գայ առ մեզ. եկայք սպանցուք զնա, և տեսցուք թէ երազք նորա ընդ ի՞նչ ելանիցեն „ ։ Եւ զտէր մեր իբրև տեսին մշակքն, ասեն. “Սա է ժառանգն այգւոյս. եկայք սպանցուք զսա, և եղիցի այնուհետև մեր ժառանգութ̃իս „ ։ Յովսէփ անկաւ յերկուս գուբս, 'ի մի՝ վասն երազոց իւրոց, և 'ի միւսն ևս վասն յաղթութ̃ե իւրոյ 'ի վերայ ցանկութ̃են ։ Եւ տէր մեր արգելաւ յերկուս գուբս. 'ի մարմին անդ վասն ողորմութ̃ե իւրոյ, և 'ի դժոխս վասն յաղթութ̃ե իւրոյ 'ի վերայ մահու ։ Յովսէփ փոխանակ պոռնիկ տիկնոջ իւրոյ առ նա իւր կին զԱսանեթ. և տէր մեր փոխանակ սպանող առաջին

ժողովրդեանն ընտրեաց իւր զեկեղեցի սուրբ ։ Մինչ չև եկեալ էր Յովսէփու յերկիրն եգիպտացւոց, չքով և պատուով էր առ հօր իւրում. և տէր մեր մինչ չև եկեալ էր յաշխարհ այսր, փառօք և գո-հութ̅բ էր առ առաքիչն իւր ։ Նրազն առաջին եղ-բարցն իւրոց, և ապա հարց իւրոց. քանզի և եղբարքն նորա պագին նմա երկիր յառաջագոյն, և ապա յեր-կրորդ գալստեանն հարք իւր ։ Յովսէփ արգելեալ կայր 'ի բանտի անդ իբրև չարագործ՝ իբրու զգեցեալ էր զամենայն հեզութ̅ զգաստութ̅ . և տէր մեր եւ 'ի խաչ իբրև զմեղաւոր, իբրու նա յաղթեաց աշխարհի ։ Յովսէփ եմուտ յերկիրն եգիպտացւոց, և ցանկա-ցաւ նմա տիկինն իւր . և տէր մեր եմուտ 'ի գերեզ-մանն, և ցանկացան նմա դժոխք ։ Տիկին ընթացաւ ապականել զՅովսէփ . և դժոխք ընթացան ապակա-նել զտէր մեր ։ Ոչ կինն կարաց յաղթել զօրութ̅ն Յովսէփու, և ոչ դժոխք կարացին յաղթել զօրութ̅ տեառն մերոյ ։ Տիկինն Յովսէփու զձորձոց նորա բուռն եհար, և Յովսէփ ապրեցաւ . սոյնպէս և դժոխք զհանդերձէն տեառն մերոյ բուռն հարին, և մարմին նորա յարեաւ և կանգնեցաւ ։ Յովսէփ զկա-լանաւորսն կերակրէր . և տէր մեր 'ի դժոխս մեռե-լոցն լուսատու լինէր ։ Մուտ Յովսէփ 'ի բանտ անդր և մխիթարեաց զկալանաւորսն . մուտ տէր մեր 'ի դժոխս և մխիթարեաց զմեռեալս ։ Եւ զոր օրինակ մեկնեաց Յովսէփ ծառայիցն Փարաւոնի, զմինն դար-ձոյց կացոյց 'ի գործ տակառապետութ̅ն իւրոյ և զմիւսն հան 'ի խաչ, սոյնպէս և տէր մեր զմինն մոյծ 'ի դրախտն փափկութ̅ վասն հաւատոց իւրոց, և 'ի վերայ միւսոյն եդ մՃիռ պատժոց վասն երկմտութ̅ իւրոյ ։ Եւ զոր օրինակ դատեցաւ Յովսէփ զդատիչսն իւր և արկ 'ի բանտ զայնոսիկ՝ որք զնայն արգելլին 'ի գուբ անդր, սոյնպէս և տէր մեր լինի դատաւոր խա-չահանուաց իւրոց ։ Եւ որպէս զենաւ ուլն և ապրե-ցաւ Յովսէփ, սոյնպէս եւ տէր մեր զմարմին իւր 'ի խաչ վասն փրկութ̅ եկեղեցւոյ իւրոյ ։ Եւ զոր օրի-նակ պարեգօտքն Յովսէփու թաթաւեցաւ արեամբ, բայց մարմին նորա ինչ ոչ վնասեցաւ, սոյնպէս և զմարմինն տեառն մերոյ կալան և ոչ զաստուածութ̅

նորա ։ Եւ զոր օրինակ երեսնամի էր Յովսէփ 'ի ժամանակի իբրև կաց առաջի Փարաւոնի, նա և Դաւիթ երեսնամի օծաւ, սոյնպէս և տէր մեր երեսնամի էր 'ի ժամանակի իբրև մկրտեցաւ 'ի Յորդանան գետ ։ Եւ զոր օրինակ յերկրորդում նուագի անդ ծանեան եղբարքն զՅովսէփ, սոյնպէս և ժողովուրդն յերկրորդում գալստեան տեառն մերոյ գիտեն ճանաչեն եթէ նա է Քրիստոս, որպէս և ասէ ․ “Հայեսցին առ այն զոր խոցեցինն„ ․ 'ի տէր մեր զոր խոցեցինն ։ Եւ Յովսէփ առ 'ի տիկնոջէ անտի իւրմէ առանց բաճկոնի, զոր օրինակ եւ նա առ յեղբարց անտի առանց պարեգօտից ․ առաջին պարեգօտիւքն հաւատարիմ եղև Յակովբու սուտ մահն Յովսեփու ․ և 'ի ձեռն բաճկոնին հաւատարիմ եղև տեառն իւրոյ զրպարտութ̅ի ստութ̅ե տիկնոջ նորա ։ Հայեցարուք դուք յողորմութ̅ի անդր որչափ համապազորդէ ընդ արդարս ։ Անկաւ Յովսէփ 'ի գուբ, հան զնա անտի առանց արատոյ ․ վաճառեցաւ 'ի մէջ եգիպտացւոց, արար զնա տէր 'ի վերայ ընկերաց իւրոց ։ Արկին զնա 'ի տուն բանտի, պատրաստեաց նմա անդ զփառս և զպատիւ ․ մուտ նա առաջի Փարաւոնի, արար զնա կերակրիչ երկրին եգիպտացւոց ։ Ո՜վ արդար ․ զի փոփոխեաց նա տեղիս բազումս, և ոչ փոփոխեաց նա ըզճշմարտութ̅ի իւր ։ Հասին պատեցան զնովաւ նեղութիւնք ճգնութ̅ե, և ոչ կարացին փոփոխել զսրբութ̅ի նորա ․ բազմացան յաճախեցան փորձութ̅իք նորա, և ոչ նուաղեաց և կարճեցաւ պարկեշտութ̅ի նորա ։ Բախեցին զնա ալիք, և ոչ լուծաւ քակտեցաւ նաւ նորա ․ անկան 'ի վերայ նորա աւազակք, և ոչ կարացին կապուտ կողոպուտ առնել զգանձս նորա ։ Անկաւ նա 'ի մէջ զբօսանաց, և ոչ ընկղմեցան վաճառք նորա ․ քննեաց զնոսա ստուգունի, և մեծացոյց զնա ողորմութ̅ի ․ փորձեաց զնա ծառայութ̅ի, և բարձրացոյց զնա ազատութ̅ի ։

ԳԼՈՒԽ Ժ

“ԵՒ ասէ ա̃ծ ցԻսրայէլ 'ի տեսլեան գիշերոյ. և ասէ. մի՛ երկնչիր դու իջանել յերկիրն եգիպտացւոց„. իբրու իշխանուե̃ տէրուե̃ն Յովսեփու էր անդ: Բայց զնոսա թէպէտ և բռնութի̃ն հնազանդեցուցանէր, սակայն ելանել անտի չկամէին: Երկիւղ 'ի մտանել նոցա, և բռնութի̃ յելանելն նոցա: Յակովբ երկեաւ, զի մի՛ մնցէ 'ի քաղաքն կախարդաց. և զաւակ նորա ոչ կամէր ելանել 'ի դիւթ երկրէ անտի եգիպտացւոց: Արդ երկեաւ իջանել Յակովբ յերկիրն եգիպտացւոց, զի մի՛ մեղիցէ որդւոցն նորա կախարդութի̃ն եգիպտացւոց. վասն այսորիկ երևեցաւ նմա ա̃ծ և ասէ ցնա. “Մի՛ երկնչիր դու իջանել յերկիրն եգիպտացւոց„: Եւ զի խղճէր նա՝ թէ գուցէ մ̃նայցեն նոքա անդէն վասն սիրոյ երկրին եգիպտացւոց, և խափանեսցին այնուհետև աւետիք հարանցըն, ասէ ցնա. “Ես իջանեմ ընդ քեզ յերկիրն եգիպտացւոց, և ես հանեմ զքեզ անտի„: Զի երկուցեալ խռովեալ էր նա՝ եթէ գուցէ մեռանիցի և ոչ տեսանիցէ զՅովսէփ, մխիթարեաց զնա յասել իւրում. “Յովսէփ, ասէ, սպասեսցէ ձեռօք իւրովք աչաց քոց„: “Ես. ասէ, իջանեմ ընդ քեզ յերկիրն եգիպտացւոց„: Այցելու եղև նոցա և 'ի Բաբելոն կառօքն իւրովք:

Յովսէփ յամսն լիութե̃ հինգերորդէր զերկիրն եգիպտացւոց. և իբրև առ գնոյ զամենայն երկիրն եգիպտացւոց 'ի ծառայութի̃ Փարաւոնի, ետ հրամանն զի տացեն 'ի հնգէ մի: Ո՞րպէս. այլ զի լուաւ Փարաւոն՝ թէ սով հանդերձեալ է գալ, հրամայեաց նա զի բռնութ̃ պահանջիցեն. որպէս զի պահեսցի նոցա մ̃նացորդ: Բայց իբրև առ նա գնոյ զերկիրն նոցա, արար զնոսա հարկատուս արդիւնաբարս: Բայց հեբրայեցի մեկնէ զնա. փոխանակ այնր՝ զի ասէ “Առցեն մի 'ի հնգէ„, “Կարգեսցեն զերկիրն„ ասէ:

“Ամենայն հոգիք, ասէ, որ եկին մտին ընդ Յակով

բու յերկիրն եգիպտացւոց, եւթանասուն„. և ահա վաթսուն և չորք են. Յովսէփ մեռեալ էր, և Եփրեմ և Մանասէ անդ ծնեալ էին յԱսանեթայ։ Եւ փոխանակ այնու՝ զի ասէ “Երկիր եպագ Իսրայէլ 'ի ծայր գաւազանի իւրոյ„, “Ի գլուխ մահճացն իւրոց„. այս ինքն ա̃յ։ Ուրախ եղեն տունն Փարաւոնի ընդ գալ եղբարցն Յովսէփու. այս ինքն է զի յայտնի եղև՝ թէ ազնուական է 'ի մեծազգեաց տոհմէ. զի մի՛ ասիցեն՝ թէ ծառայ մի գերի եկն թագաւորեաց 'ի վերայ մեր։ Եւ իբրև պատմեաց Յովսէփ զերազն իւր եգիպտացւոցն, յայտնի եղև թէ երազքն Փարաւոնի վասն երազոցն Յովսէփու երևեցան։ Առ զԵգիպտոս գնոյ, և տանջեաց զնոսա սովով. զի յամօթ լիցի Եգիպտոս յորժամ կոչէ զկախարդսն կալ ընդդէմ Մովսիսի։ Ժողովեցին ամփոփեցին ետուն եգիպտացիք զարծաթ երկրին. ետուն վարձս վարձկանքն, և ապա գործեցին. և զգինս որդւոց իւրեանց ետուն վարձս։ Ի ցող ցորենոյ կերակրեաց և հաստատեաց Յովսէփ զերկիրն եգիպտացւոց. և նա եղև եղէգն ջաղջախ նեցուկ եղբարցն Յովսէփու։

“Ասէ Յակովբ ցՅովսէփ. ահաւասիկ տամ ես քեզ բաժին մի աւելի արտաքոյ եղբարցն բաժնի, զոր առի ես 'ի ձեռաց ամուրհացւոց 'ի սուր սուսերի իմոյ և 'ի կորովս կապարճաց իմոց„։ Եւ ո՞ւր է այն՝ զի ասէ “Ի խորհուրդս նոցա ոչ եմուտ անձն իմ„. և զի ասէ. “Անիծեալ է բարկու̃ի և սրտմտու̃ի նոցա„։ Բայց զայն՝ 'ի սուր սուսերի իմոյ և 'ի կորովս կապարճից իմոց, զոր ինչ առին և թափեցին 'ի Սիւքէմայ նոքա խիստ սրով իւրեանց, նա աղօթիւք իւրովք կարաց ստանալ զնա երկրորդում։ Արդ զողորմու̃ին որ եղև նմա օգնական՝ կոչեաց կորով կապարճից, զի կամեցան զօրաժողով լինել գալ 'ի վերայ նոցա, հարկանել կոտորել սատակել զնոսա. և արգել եղև նոցա յա̃յ, այս ինքն վասն Յակովբու։ Զի եթէ ըստ Շմաւոնի և ըստ Ղևեայ էր, ես մեռեալ էի։ Կամ զժառանգու̃ին զոր առ նա գնոյ, կարդաց սուր սուսերի և կորովս կապարճից. իբր ոք զի ասիցէ. առի ես գնոյ 'ի զօրու̃ի բազկաց իմոց, և որոջացն զոր թափեցի ես 'ի Ղաբանայ իբրև

'ի պատերազմի: Իբրև աւերեցաւ Սիւքեմ, կալան յետ ամաց զամենայն Սիւքեմ՝ այնու ժառանգութե՟ համդերձ:

Եւ իբրև ասաց Յակովբ վասն ժառանգութե՟ն զոր առ գնոյ, խօսեցաւ նա վասն ամենայն Սիւքեմայ. քանզի Յակովբու անիծիւք անիծեալ էր զաւերիչսն Սիւքեմայ. հայեցաւ Յակովբ և ետես՝ զի տեղին այն որ վասն ցանկութե՟ն աւերեցաւ, խորհեցաւ 'ի միտս իւր և ասէ. եթէ այնմ արժան է տալ զայս ժառանգութի՟, որ ցանկութե՟ն յաղթեաց. զի մի՛ եկեսցէ զկնի ժառանգաւորացն նորա վրէժխնդրութի՟ սպանելոց նորա: Զի արժան իսկ էր եթէ տեղին՝ ուր ցանկութիւնն յաղթեաց, իբրև պսակ տացի այնմիկ՝ որում ցանկութի՟ն յաղթահարեցաւ 'ի նմանէ:

Օրհնեաց Սահակ զՅակովբ, և արար զնա անդրանիկ: Օրհնեաց Յակոբ զՅովսէփ, և արար զնա անդրանիկ, յայնմիկ զի ասէ. “Ի գլուխ Յովսէփու և 'ի վերայ գլխոյ պսակի եղբարց իւրոց„: Եւ ինքն Յովսէփ, զի ետ զաջն միաբանութե՟ հաւասարութեան 'ի վերայ գլխոյն Եփրեմի, աջն այն արարիչ անդրանկաց էր: Տես դու, զի թէ ոչ աջովն լինէին անդրանիկ, զի՞նչ հարկ էր Յակովբու փոփոխել արկանել զխիմեամբք զձեռս իւր. կամ Յովսէփ ընդէ՞ր օգնէր ձեռին հօր իւրոյ հանել զձեռնն 'ի գլխոյ Եփրեմի և արկանել զգլխովն Մանասէի: Այլ մինչ դեռ կամէր Յովսէփ ցուցանել թէ ո՛ր զօրութի՟ էր յաջու անդհօր իւրոյ, փութացաւ հայր նորա եցոյց զզօրութի՟՝ որ էր յաջ նորա: Զի կնքեաց աջն այնորիկ՝ որ առ զանդրանկութի՟ն Եսաւայ, 'ի վերայ աջոյն այնորիկ՝ որ առ զանդրանկութի՟ն Հռուբէլի. և յաջոյ անտի յերկուց անդրանկացն յորդեալ հոսեցաւ անդրանկութի՟ն 'ի վերայ գլխոյն այնորիկ՝ որ առ զանդրանկութի՟ս Մանասէի: “Ոչ այդ այդպէս է հայր, այլ սա է, ասէ, անդրանիկ„: Յովսէփ՝ որ եկն ուսուցանել, ուսուցին զնա այլք: “Գիտեմ և ես, ասէ, որդեակ, գիտեմ. այլ եղբայրն, ասէ, կրտսեր՝ մեծ լիցի քան զնա„:

Եւ Յակովբ զանդրանկութի՟ս 'ի Հռուբէլայ և ետ Յովսէփու յասել իւրում. “Ահաւասիկ ետու ես քեզ

բաժին մի աւելի արտաքոյ եղբարցն բաժնի ,, • զի անդրանիկն, ասէ, երկուս բաժինս ժառանգեսցէ, զի նա է սկիզբն ծննդեան նորա, և նմա է արժան անդրանկութ՟ին ։ Եւ զոր օրինակ վասն զի պղծեաց Ռուբէլ զանկողինս հօր իւրոյ՝ բարձաւ 'ի նմանէ անդրանկութ՟ի, սոյնպէս և Յովսեփու վասն հեզութ՟ե զգաստութ՟ե իւրոյ տուաւ. և վկայէ այն՝ զի ասէ "Եփրեմդ, ասէ, և Մանասէդ իբրև զՌուբէլ և զՇմաւոն եղիցին ինձ ,, • այս ինքն փոխանակ ողորմութ՟են զոր արարեր դու եղբարցն քոց, եղիցին որդիքդ եղբարք որդւոց հօր քո ։ "Իբրև զՌուբէլ, ասէ, և զՇմաւոն եղիցին ինձ • բայց այլ ծնունդք որ լինիցին 'ի քէն՝ քեզ լիցին ,, • զի մի՛ երկու միայն Յովսեփ և Բենիամին եղիցին Ռաքէլայ 'ի թիւս ազգաց, այլ չորք ։ "Եւ փոփոխեաց, ասէ, և արկ զմիմեամբք զձեռս իւր • և եդ զաջ իւր 'ի վերայ գլխոյն Եփրեմի ,, • ոչ վասն արդարութ՟են Եփրեմի, և ոչ վասն յանցանաց Մանասէի • պարգևք են իշխանութ՟ե նորա ։ Սոյնպէս և հեթանոսաց տուաւ անդրանկութ՟ի, և բամբասել ժողովուրդն ոչ կարէ • և եթէ բամբասիցէ վասն Մանասէին՝ զի ոչ յանցեաւ, բայց 'ի նոցանէ արդարութ՟ք բարձաւ անդրանկութ՟ին • փոխանակ զի 'ի խաչ հանին զտէրն անդրանկութ՟ե ։

Օրհնութ՟իք Յակովբու ։

Օրհնեցին արդարք, և եղեն օրհնութ՟իք նոցա ընդունելեացն յաւուրս իւրեանց • զի գիտացեն՝ զի և որդիք նոցա յորժամ օրհնեն, այսպէս լինին ։ Եւ յայսմիկ ետուն փառս և մեծվայելչութ՟ի այ՟, զի կատարեաց զբանս նոցա արդեամբք առ ազգս նոցա ։ "Բնակիցէ, ասէ, յարկս Շեմայ ,, ։ Ետես Շեմ իբրև մտին հրեշտակքն առ Աբրահամ որդի իւր • և ետես դարձեալ զի չոգաւ թափեաց զսոդոմայեցիսն զորդիսն Քանանու, և կոչեսցին նոքա գերիք Աբրահամու, և եղև Քանան ծառայ ։ Օրհնեաց Սահակ 'ի միտս խորագիտութ՟ե զԵսաւ, փոխանակ զի խորամանկեցաւ առաւել քան զնոսա Յակովբ ։

Ռուբէլ • եթէ հանդերձեալ էին անեծքն Յա-

կովբու՝ զի մի՛ եկեսցեն 'ի վերայ Հռուբէլի, զիա՛րդ ասէր Յակովբ "Եկայք ժողովեցարուք, և պատմեցից ձեզ՝ որ ինչ պատահելոց է ձեզ յաւուրս յետինս ժամանակաց „. և ոչ եթէ 'ի վախճան, այլ յետ ժամանակի ։ Բայց արդարութ՟ը անէծ զնա, փոխանակ զի պղծեաց զանկողինս նորա. և քանզի վասն չնութ՟ պատուհասէր զնա, յայտ արար վասն անձին իւրոյ՝ զի յայս գործ արտաքոյ քան զամուսնութ՟ին կանանցն իւրոց ոչ պղծեցաւ, յասել իւրում. "Հռուբէլ անդրանիկ իմ ես դու, զօրութ՟ի իմ և սկիզբն հարըստութ՟ իմոյ „. այս ինքն դու ես սկիզբն զօրութեան իմոյ. զի յառաջ քան զմայր քո 'ի պէտս կանանց ես ոչ անկայ ։ Եւ դու զիա՛րդ յետ հանգչելոյն քո 'ի վերայ ամուսնութ՟ կնոջ քո, պղծեցեր զանկողինս իմ ։ "Արդ մոլորեցար դու իբրև զջուր „. զի արձակեալ թողեալ են, և ռոգանեն զերկիր օտար ։ Եւ փոխանակ զի արբ նա 'ի ջուրց օտարոտեաց, ասէ ցնա հայր իւր. "Մոլորեցար իբրև զջուր մի՛ ծփասջիր, այլ առաւելութ՟ և զօրութ՟եց „. այս ինքն աւելի մասն էիր դու, և աւելի զօրութ՟ի, վասն անդրանկութ՟ նորա. կամ դու զի ես սկիզբն զօրութ՟ իմոյ, և այլ, ասէ, առաւելութ՟ և զօրութ՟. այս ինքն այլքն ևս եղբարք նորա զկնի ։ Բայց հեբրայեցի փոխանակ այնր՝ զի ասէ "Առաւելութեան և զօրութեան „, "Այլ առաւելութ՟ի զօրութ՟ իմոյ և սկիզբն սաստկութ՟ իմոյ „ ։

Արդ անիծաւ Հռուբէլ. եթէ անէծք են, արդարեւ տեսցուք զգործս նոցա որպէս զգործն օրհնութ՟եց, զի յայտնապէս եղեն ։ "Մոլորեցար դու, իբրև զջուր մի՛ ծփասջիր „. բայց հեբրայեցի՝ "Խրամատեցար դու իբրև զջուրս և ոչ ծփացեր „ ։ Եւ զոր օրինակ ջուրք զի ոչ ծփան և դադարեն յերկիր, մի՛ ծփասջիր դու 'ի մէջ ժառանգութ՟ քո, այս ինքն 'ի թիւ ազգացն. վասն այսորիկ ասաց Մովսէս՝ եղիցի 'ի համար թուոյ, զի 'ի մէջ ժառանգութ՟ իւրեանց ընկալան զօրհնութ՟իս իւրեանց ։ Բայց փութացաւ վաղվաղեաց ապաշխարութ՟ին Հռուբէլի. և արար իւր թիկունս զլեզուն Մովսիսի. ելոյծ զանէծսն զոր կապեաց ստուգութ՟ին Յակովբու ։ Եւ ահա ետես

իսկ Յակոբայ զապաշխարութիւն Ռուբէլի, ընդէ՞ր անէծ զնա. Զի 'ի ժամանակի իբրև բաժանեցաւ Կորխ, բաժանեցան ընդ նմա և Դադան և Աբիրոն որդիքն Փաղեթայ յազգէ անտի Ռուբէլի, և ընկղմեցան ընդ նմա իբրև զջուր 'ի մէջ երկրի. գործ անիծիցն հօր նորա: Բայց եկն եհաս նմա ողորմութի, և յիշեաց նմա և զբարիմն զոր արար նա առ Յովսէփ: Եւ զոր օրինակ անիծաւ նա վասն մեղացն, սոյնպէս և օրհնեցաւ նա վասն արդարութեն: Անէծ զնա Հոգին սուրբ 'ի բերանոյ Յակոբու, իբրու պահէր զնա օրհնութիւն Մովսիսի: Զի այն՝ որ ընթեռնու զպատիժս պատուհասից, երկիցէ յանցուածոց. և այն՝ որ թևակոխի 'ի քաւութի թողութե, մի անկցի առ յուսահատութիւն. զի ոչ յանցանք ապստամբեցին, և ոչ ողորմութիւն զրկեցաւ: Արդ սկսաւ լինել սատակումն որդւոցն Ռուբէլի յանապատի անդ յընկղմել նոցա 'ի մէջ երկրի իբրև զջուր, եթէ ոչ էր փութացեալ վաղվաղեալ այնորիկ, զի ասէ «Կեցցէ Ռուբէլ և մի մեռցի»: Առ սակաւ սակաւ մաշեալ և սպառեալ լինէին: Եւ եթէ ասիցես. իսկ ընդէ՞ր բազմացան նոքա, զի քան զայն՝ զի բազմացան որպէս ջուրք, արժան էր ըմպել զնոսա երկրին որպէս ջուրք. վասն ծածուկ մահուն ասաց Յակոբ. զի մահ Ռուբէլի իբրև զմահ ամենայն եղբարց իւրոց եղև: Եւ դարձեալ ասաց ցՅովսէփ. «Որդիք քո իբրև զՌուբէլ և զՇմաւոն եղիցին ինձ». ըստ բազմութե Ռուբէլի, և ըստ շինութեն՝ որ 'ի յայս աշխարհ:

Շմաւոնի և Ղևեայ, եթէ էր տուեալ զդստերսն իւրեանց նոցա կանայս, և առեալ էր 'ի դստերաց նոցա իւրեանց կանայս՝ խառնեալ լինէին աւետիքն այն, զի սատակելոց էին քանանացիքն: Բայց հատ Յակոբ, և անէծ զնոսա, զի ոչ համբերեցին որպէս և հարքն նոցա. զի վարեցան 'ի նոցանէ կանայքն նոցա և համբերին, և եղեն նոցա դատաստանք վրէժխնդրութե: Զի փորձեաց նա 'ի Ղաբան աներ իւր, և յԵսաւ եղբայր իւր՝ թէ պահապան գոյ նորա: Եւ անէծ զնոսա, զի ած ոչ կոտորեաց զնոսա. «Չև ևս էն, ասէ, կատարեալ մեղքն ամորհացւոց». և

կանխեցին նոքա յառաջագոյն ցուցին սուր՝ որ ոչ էր յոյ։ Եւ զի յայտ արասցէ, զի ոչ գիտէր զգործն նոցա, ասէ. “Ի խորհուրդս նոցա ոչ եմուտ անձն իմ„, զի ոչ կարացին զօրութեան նորա դիմակայ լինել բնակիչք երկրին։

Ասէ. “Ոչ իջի ես 'ի պատուէ փառաց իմոց„. բայց հեբրայեցի՝ “Ի ժողովս նոցա ոչ հաղորդեցաւ պատիւ փառաց իմոց„. զի ողորմութբ, ասէ, անխայեցայ ես յանարգանաց և 'ի թշնամանաց, թէպէտ առ 'ի նոցանէ ես 'ի սուր հրաւիրեալ էի։ “Վասն այսորիկ բաժանեցից զնոսա„. այլ գոն բաժինք մարմնոց, և էին բաժինք մտաց. արդ բաժանեաց զ'ի միտս նոցա, զի մի ևս միաբանիցեն և հաւասարիցեն երկոքեան գործել ինչ մի. զի Զամբրի և Փենեհէզ՝ որդիք Շմաւոնի և Ղևեայ՝ ընդդէմ միմեանց գործեցին 'ի ժամանակի, իբրև բաժանեցան 'ի վերայ միմեանց վասն այնր անիծից. զի միաբանք և հաւասարք էին երկոքին յամենայն ինչ. զոր օրինակ և ոչ չորիցն եղբարց իւրեանց այլոցն յայտնեցին 'ի ժամանակի իբրև մտին նոքա 'ի Սիւքէմ։ Տես դու զի ընդդէմ միաբանութե նոցա ած զբաժանելն նոցա. իբրև զայն՝ զի ասէ “Թշնամութի եդից 'ի մէջ քո և 'ի մէջ կնոջդ, և 'ի մէջ զաւակի քո և 'ի մէջ զաւակի նորա„։ Զի ոչ ինչ օգտութի եղև նոցա առաջին միաբանութեն, բեր եդ փոխանակ միաբանութեան բաժինս երկմտութե օգտակար։ Իբրև զայն՝ զի ասէ “Եթէ փեսայեսջիք դուք ընդ նոսա, եղիցին նոքա իբրև փուշ յաչս ձեր„։ Իբրև զայն զի ասէ. “Մի լուիցէ այր լեզուի ընկերին իւրոյ„։ “Եղիցին, ասէ, հինգ 'ի միում տան, և բաժանեսցին„։ Բաժանեաց զնոսա դարձեալ 'ի ժառանգութենէ իւրեանց։ Ղևեայ ոչ տուաւ ժառանգութի, քանզի մասունս ետուն նմա այր յազգէ իւրմէ. և Շմաւոնի՝ զի սակաւ էր ժառանգութի իւր, ետուն նմա վերադիր 'ի վերայ ժառանգութե եղբարց իւրոց։

Արդ քանզի անցոյց 'ի Հռուբէլայ զօրհնութիւն, զի ոչ իսկ էր արժանի նմա՝ թէ իբրև զանդրանիկ օրհնեսցի. բարձ 'ի նմանէ և զթագաւորութի, զի նմա ոչ վայել էր. զի նա՝ որ զանձն իւր ոչ կամեցաւ 'ի

կարգի ունել արդարութ՟ե, անցոյց 'ի նմանէ զառաջ-
նորդութ՟ի ժողովրդեան 'ի ժամ օրհնութ՟ենցն ։ Իբրեւ
անց 'ի Հռուբէլէ եւ եկն եհաս առ Շմաւոն, հաւա-
սարեցոյց ընդ նմա եւ զՂեւի եւս ․ զի հայեցաւ սատու-
գութ՟ին եւ 'ի նոսա ․ զի եթէ մինչ դեռ խոնարհա-
գոյնք եւ նուաղունք էն, վասն փոքր մի յանցանաց
զայս ամենայն համարձակութ՟ի գործեցին, զի զքա-
ղաք մի լրիւ իւրով սատակեցին ․ եթէ մեծասցին եւ
տիրիցեն ո՞րչափ եւս չարիս գործիցեն ։ Զի ոչ էին
արժանի թագաւորութ՟ե, եւ 'ի նոցանէ անցոյց զնա ․
զիա՞րդ կարէին նոքա՝ որք եղեն անօթք բարկութ՟ե,
լինել անօթք շինարար թագաւորութեան ։

Եւ իբրեւ եկին հասին առ Յուդայ, հայեցաւ Յա-
կովբ՝ թէ արդարութ՟ե նմա արժան է թագաւորու-
թ՟ին ․ զի թէպէտ եւ Յովսէփ արդար էր եւ իմաստուն,
սակայն անցանել առ Յուդայէ առանց յանցանաց՝
չէր արդարութ՟ի ․ իբրու առ Յովսէփ պաշտեցաւ ։
Իբրեւ սկսաւ օրհնութ՟ին ծագել 'ի վերայ Յուդայի,
ուրախ եղեն 'ի նա եղբարքն իւր եւ մխիթարեցան ․
զի 'ի նմա սահմանեցան անէծքն, եւ եղեւ դարձեալ
սկիզբն օրհնութ՟ենցն ։ “Զքէն, ասէ, գոհասցին եղ-
բարք քո” ․ զի անխայեցեր դու զնոսա 'ի սպանութ՟է
անտի Յովսէփու ։ Զի եթէ ոչ տուեալ էր նորա
խրատ եւ կեցուցեալ էր զնա, 'ի սովոյ սատակէին ։
Արդ փոխանակ զի անխայեցեր դու զնոսա 'ի մեղաց
սպանութ՟է եւ 'ի մահուանէ սովոյ, “Զքեզ օրհնես-
ցեն եղբարք քո” ։ Նա եւ Յովսէփայ իսկ գոհութ՟ի
պարտ էր մատուցանել Յուդայ վասն կենաց իւրոց ։
Հեբրայեցի զՅուդա՝ երկրպագեալ մեկնէ ․ եւ փոխա-
նակ այնր՝ զի ասէ “Զքէն գոհասցին եղբարք քո”,
“Քեզ երկիր պագցեն” ասէ ։

“Եւ ձեռն քո 'ի վերայ թիկանց թշնամեաց քոց” ․
զի հնազանդելոց է թագաւորութ՟ի նորա զթշնամիս ։
“Ի սպանուէ, որդեակ իմ, ելեր” ․ 'ի դատաստանէ
անտի՝ զոր հրամայեցեր 'ի վերայ Թամարայ եւ եր-
կուց որդւոց նորա ։ Կամ զի ոչ հաղորդեցաւ ընդ
սպանումն Յովսէփայ, վասն այսորիկ ընկալաւ զթա-
գաւորութ՟ին, եւ հնազանդեաց զթշնամիս իւր ․ այս
ինքն Դաւիթ, զի հար սատակեաց զփղշտացիսն այ-

լովք ազգովք համդերձ ։ “Ձեռն քո, ասէ, 'ի վերայ թիկանց թշնամեաց քոյ„ ։ Եւ զի ասէ “ի սպանութենէ, որդեակ իմ, ելեր„․ ինքն Դաւիթ 'ի ժամանակի իբրեւ ապրեցաւ նա 'ի ձեռաց Շաւուղայ․ կամ զի խնայեաց նա 'ի վերայ Շաւուղայ, եւ ոչ սպան զնա 'ի ժամանակի՝ իբրեւ մատնեցաւ նա 'ի ձեռս նորա․ այնու համդերձ Շեմայն, Նաբաղայն, Աբեններայն եւ Յովաբուն ։ Բայց եբրայեցի, “Ի կերոյ, որդեակ իմ, ելեր․ նիստ եւ բազմեաց իբրեւ զառեւծ, իբրեւ զկորիւն առեւծու„, վասն զօրութեն նորա ։

Եւ զի ասէ “Արդ ո՞վ իցէ որ յարուցանիցէ զնա„․ զի ոչ ոք շարժեաց եւ յարոյց զնա 'ի թագաւորութէ իւրմէ յազգաց անտի հեթանոսաց՝ զորս հնազանդեցոյց․ այն իսկ է ասէ, “Ձեռն քո 'ի վերայ թիկանց թշնամեաց քոց„ ։ “Մի՛ պակասեսցէ ազգ յիշխանութի, զի նա է հովիւ եւ առաջնորդ„ ։ Եւ փոխանակ այնր՝ զի ասէ “Եւ մի՛ մարգարէ յերանաց նորա„․ բայց հեբրայեցի՝ դատաւոր ասէ․ “Մինչեւ եկեսցէ որոյ իւր է թագաւորութի„ ։ Ո՞վ․ Դաւիթ ։ Եւ զի ասէ “Նմա սպասեսցեն հեթանոսք„ ․ յորէ անտի յայնմանէ յորմէ հետէ սպան նա զԳողիադ, ակն ունէին եւ սպասէին նմա ժողովուրդքն այնոքիկ՝ որ հնազանդեալ էին Իսրայէլի․ մանաւանդ զի չարչարեալ եւս էր Շաւուղ յայսոյ անտի պղծոյ ։ Կամ զազգսն Իսրայէլի կարդայ ժողովուրդս․ իբրեւ զայն՝ զի ասէ “Այլ մի՛ եւս լինիցին նոքա երկու ժողովուրդք, եւ երկու թագաւորութիք„․ եւ իբրեւ զայն՝ զի ասէ “Փոխանակ զի ասաց 'ի վերայ ձեր թշնամին՝ երկու ժողովուրդք եւ երկու քաղաքդ այդ իմ են, եւ ես ժառանգեցից զնոսա„ ։

“Կապեսցէ զգրաստ իւր զորթոյ„․ 'ի ժողովուրդն զթագաւորութի իւր․ կամ յԻսրայէլ զզաւակ իւր՝ վասն կարգին իւրոյ, զի ոչ հատանի իշխանութիւն նորա յորդւոց իւրոց․ որպէս մի մի յազգաց անտի 'ի ժամանակի իբրեւ եղեն 'ի նոցանէ դատաւորք ոչ տիրեցին որդիք նորա զկնի նոցա, որպէս եւ տունն Դաւթի զի տիրեցին ։ “Լուասցէ զպատմուճան իւր 'ի գինի եւ զհանդերձն իւր յարիւն խաղողոյ„․ վասն հարկաց՝ որ ելանէին նմա 'ի ժողովրդենէ անտի 'ի վե-

րայ սեղանոյ նորա․ զի գինի և արիւն խաղողոյ պր֊
տուղ են այգւոյ։ Եւ զի ասէ “Զուարթագին են աչք
իւր, և սպիտակ են ատամունք իւր„․ վասն գրգու֊
թե̃ց փափկութե̃ց, որ են ՚ի նմին հարկաց։

“Յուդայ, զքեն գոհասցին եղբարք քո„․ ՚ի վե֊
րայ տեառն մերոյ, զի ՚ի նմանէն ծագեաց․ և խոստա֊
վան լինին և գոհանան զնմանէն հեթանոսք և ժողո֊
վուրդն, այն իսկ է՝ զի ասէ “Խոստովան եղիցին քեզ
ժողովուրդք ա̃ծ„։ Եւ յեբրայեցւոյն դարձեալ ՚ի
վերայ նորա առաւել ևս կատարի․ “Երկրպագեալ,
ասէ, քեզ երկրպագեսցեն եղբարք քո․ և ձեռք
քո ՚ի վերայ թիկանց թշնամեաց քոց„․ իբրև զայն՝
զի ասէ “Եդից զթշնամիս քո ՚ի ներքոյ ոտից քոց„։
“Ամենայն ծունր, ասէ, կրկնեսցի, և ամենայն լեզու
խոստովան եղիցի՝ թէ տէր է Յիսուս․ զի զամենայն
ինչ հնազանդ արար ՚ի ներքոյ ոտից նորա„։ Այն
իսկ է՝ զի ասէ “Երկիր պագցեն քեզ որդիք հօր քո„․
եղբարք տեառն մերոյ՝ որդիքն Յովսեփու, և առա֊
քեալքն և այլ հեթանոսք։ “Կորիւն առեւծու Յու֊
դայ„․ զի ՚ի նմանէ ծագեաց։ “Ի սպանութ̃է, որ֊
դեակ իմ, ելեր„․ այս ինքն խաչին։ Ասէ “Ոչ թողեր
զանձն իմ ՚ի դժոխս, և ոչ սրբոյ քում ետուր տեսանել
զապականութ̃ի„։ “Ի սպանութ̃է, որդեակ իմ, ելեր„․
զի սպան նա զմեղս խաչիւն իւրով, և սպան զմահ յիշ֊
խանութ̃է իւրմէ։ Բարձրասցի, ասէ, աջ քո ՚ի վե֊
րայ թշնամեաց քոց, և ամենայն ատելիք քո սատա֊
կեսցին․ նիստ և բազմեաց ՚ի վերայ մահու և սատա֊
կեսցի․ իբրև առեւծ ՚ի վերայ կերոյ իւրոյ։ Եւ զի ասէ
“Արդ ո՞վ իցէ որ յարուցանիցէ զնա ՚ի նոցանէ„, զի
ոչ գոյ պատասխան բեկման նորա․ և “Ո՞վ իցէ, դար֊
ձեալ, որ յարուցանիցէ զնա„ յաթոռոյ արքայու֊
թ̃ե իւրոյ․ զի այն՝ որ փոխէ զնա և անցուցանէ, ոչ
գոյ․ որպէս և Դանիէլ վկայէ․ “Տէրութ̃ի նորա,
ասէ, տէրութ̃ի յաւիտենից, և արքայութ̃ի նորա
ոչ եղծանի„։ Եւ կնքէ Գաբրիէլ․ “Տացէ նմա, ասէ,
տէր ա̃ծ զաթոռն Դաւթի, և եղիցի նա թագաւոր ՚ի
վերայ տանն Յակովբու յաւիտեանս ժամանակաց,
և արքայութ̃ե նորա վախճան մի՛ լիցի„․

Եւ զի ասէ “Մի՛ պակասեսցէ ազգ թագաւոր„․

իբրև զայն՝ զի ասէ “Բղխեսցէ, ասէ, գաւազան յարմատեաց անտի Յեսսեայ”. և մարգարէ դատաւոր, ասէ հեբրայեցի. “Մինչև եկեսցէ որոյ իւրն է”: Զի թէպէտ և խափանեցաւ թագաւորութիւն նոցա յաւուրս Ծեդեկիայ, զի ասէ այսպէս. “Գրեցէք զայրս զայս տարագիր անժառանգ անորդի”, սակայն զնա ասաց, այս ինքն զգաւազանն՝ որ յարոյց կանգնեաց զխորանն Դաւթի զանկեալն՝ ՚ի ձեռն Զօրաբաբէլի յոմնաքեանց, զոր գերեաց Նաբուքոդոնոսոր արքայ. և կոչեցաւ նա իշխան. իբրև այն Եզեկիելին. “Իշխանն, ասէ, որ ՚ի միջի ձերում իցէ, բարձցէ բեռն ՚ի թիկունս իւր”: Արդ ոչ պակասեաց նահապետութիւն նոցա ՚ի ժամանակին գերութեան նոցա. այլ ՚ի ժամանակի իբրև իջին նոքա ՚ի Բաբելոն, զի խրատեցին անդ, Յոքոնիա որդւովք իւրովք հանդերձ անդ էր. և Զօրաբաբէլ՝ որ հան զնոսա, և թագաւորեաց ՚ի վերայ նոցա: Եւ եթէ նեղեցին զնոսա Յոյնք, փոքր մի ժամանակս խափանեցին զնոսա, իբրև զաւակն Դաւթի կայր: “Արարից ես, ասէ, զիշխանսն Յուդայ իբրև ջահս վառեալս ընդ եղեգն. և եղիցի՝ որ տկարն իցէ ՚ի նոսա՝ իբրև ըզԴաւիթ, և տունն Դաւթի իբրև զԱստուած”:

Բայց դարձեալ. “Մի պակասեսցէ իշխան Յուդայ”. ոչ եթէ վասն թագաւորութեան միայն. յայնմիկ՝ զի և ոչ մարգարէ. և այլ ևս, զի ահա թագաւորութիւն խափանեալ էր յաւուրց անտի Յակովբու մինչև ՚ի Դաւիթ. և ՚ի Բաբելոն դարձեալ խափանեալ էր. և ՚ի Զօրաբաբէլէ մինչև ՚ի ծնունդն Քրիստոսի այլ բարձ նա զթագաւորութիւն, և ցուցանէ՝ թէ թագաւորութիւն առանց քահանայութեան ոչ օծանի: Թէպէտ և յայտնի է՝ թէ ո՛ր ազգ է, սակայն մարգարէ պիտոյ է յասել՝ թէ այս պիտոյ է արքայութեան. քաղաք թագաւորութեան պիտոյ է. ՚ի նըմա և տաճար ՚ի սպաս պաշտաման, և հանդերձ քահանայութեան: Արդ թէպէտ և խափանեցաւ թագաւորութիւն մինչ կանխաւ որպէս և այս օրս, սակայն լի կատարեալ որպէս և այս օրս՝ ոչ երբէք: Զի յորժամ թագաւորութիւն խափանեալ լինէր, մարգարէութիւն դատեալ լինէր. և յորժամ երկոքին խափա-

նեալ լինելին, քահանայութին հաստատուն կայր և տաճարն հանդերձ քաղաքաւն թագաւորութեն. և յորժամ քաղաքն և այլ խափանեալք լինելին, մարգարէութին հաստատուն կայր:

Արդ Յակովբ զամենեսին կարդաց թագաւորութի. այս ինքն մի յայսցանէ մի պակասեսցէ մինչև եկեսցէ՝ որոյ իւրն է: Եւ իբրև եկն, թէպէտ և թագաւորութին տանն Դաւթի ոչ կայր, քանզի Հերովդէս թելակալ պահապան էր տեղւոյն, սակայն քահանայութիւնն Շմաւոնի հաստատուն կայր, և մարգարէութին Յովհաննու, և քաղաքն թագաւորութէ: "Մի, ասէ, այսուհետև պակասեսցէ մինչև եկեսցէ որոյ իւրն է": Իսկ զի նա ինքն է տէր մեր. և զի ասէ "Նա է յոյս հեթանոսաց", այն իսկ է՝ զի ասէ. "Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ա̃ծ": Եւ զի ասէ "Կապեսցէ զգրաստ իւր զորթոյ", ըստ բանիցն Զաքարիայ. "Ահաւասիկ, ասէ, թագաւոր քո գայ քեզ հեզ և խոնարհ և հանդարտ է, և հեծեալ է 'ի վերայ գրաստու": Եւ զի յաւել ևս յասել. "Ի վերայ յովանակի իշոյ". զի ցուցցէ՝ եթէ ոչ 'ի ջորի հեծանի յորժամ թագաւորէ, որպէս Սողոմոնն և այլ թագաւորք: Արդ "Կապեսցէ զգրաստ իւր զորթոյ". այս ինքն 'ի Մարիամ զմարմին իւր, կամ 'ի խաչն զմարմին իւր, կամ 'ի ժողովուրդըն զիշխանութիւն իւր: "Եւ զյովանակ իշոյն զորթոյն գնդակէ". յաղագս Յուդայ զթագաւորութիւնն իւր:

Այլ "Սպիտակացուսցէ զպատմուճան իւր 'ի գինի. և յարիւն խաղողոյ զհանդերձ իւր". զի և դժուարինք դիւրին են նմա. իբրև զայն՝ զի կաւոճն եբաց զաչս կուրին: Արդ "Սպիտակացուսցէ զպատմուճան իւր գինի". այս ինքն զմարմինն իւր, վարագոյրն նորա ասէ, զի նա ինքն է մարմինն իւր: Սպիտակացոյց դարձեալ 'ի գինի խորհրդեան իւրոյ զեկեղեցի իւր, զի նա ինքն է մարմին իւր. քանզի մեք անդամք եմք յանդամոց նորա: Զի եթէ վասն ճըշմարիտ մարմնոյ իւրոյ ասաց, ո՞ւր է այն՝ զի ասէ "Ո՞վ 'ի ձէնջ յանդիմանէ զիս վասն մեղաց". և զի ասէ "Ես յաղթեցի աշխարհի": "Զուարթագին են

աչք իւր իբրև 'ի գինւոյ „. զի սուրբ իսկ են. "Եւ սպիտակ են ատամունք իւր քան զկաթն „. Որք աւետեօքն՝ որ ելանեն 'ի միջոյ շրթանց նորա ։ Քանզի Դաւթի սուտ եղև ակն նորա 'ի հայել տեսանելն, և անօրինեցաւ բերան նորա 'ի հրաման տալ հրովարտակին. վասն այսորիկ 'ի վերայ տեառն մերոյ կատարի այս ։ "Սպիտակացուսցէ, ասէ, զպատմուճան իւր 'ի գինի, և զհանդերձ իւր յարիւն խաղողոյ „. զի 'ի ձեռն Մովսիսի դարձան շրջեցան ջուրքն յարիւն, և բանիւ տեառն մերոյ եղև գինի ։ Վասն այսորիկ երկրորդէ զնա Յակովբ 'ի վերայ Յուդայ. "Լուասցէ, ասէ, զպատմուճան իւր յարիւն, և յարիւն խաղողոյ զհանդերձ իւր „ ։ Եւ որոշեալ մեկնեաց 'ի մէջ արեանն և արեան խաղողոյն. և նորին իսկ տեառն մերոյ են երկոքին, և 'ի վերայ նորա կատարին. զի մարմին նորա լուացաւ արեամբ, և հոգին նորա խառնեաց առաքելոցն նորա յարիւն բաժակին նորոց կտակարանացն, զոր ետ աշակերտացն նորա ։

"Զաբուղոն ծովեզերբ բնակութի՟ քեզ, և սահմանք նորա մինչև 'ի Ծայդան „ ։ Բայց հեբրայեցի՝ "Վիճակակիցք նաւաց, և ձկտեսցի մինչև 'ի Ծայդան „. քանզի 'ի նաւաց անտի էր կերակուր նոցա ։

"Իսաքար այր հզօր „ ։ Գեդէոն զի արձակ հրեշտակս հրովարտակօք հանդերձ, զի եկեսցեն հասցեն 'ի վերայ մադիանացւոցն ։ Եւ զի ասէ "Ետես զբնակութի՟ իւր զի գեղեցիկ է, և զերկիր իւր զի պարարտ է „. զի ետես նա զերկիրն որ հասեալ էր նմա, զի բղխէր զկաթն և զմեղր ։ Ոչ եթէ զի պարարտ էր քան զընկերաց իւրոց, այլ զի ոչ տրտնջեաց նա և ասաց որպէս և այլքն՝ թէ "Երկիր մարդավար է բնակչաց իւրոց „. այլ օրհնեաց նա զայն՝ որ ասացն "Զիթենի, ասէ, զոր ոչ իցէ տնկեալ քո, և ապարանս զոր ոչ իցէ քո շինեալ, տաց քեզ „ ։ Եւ ոչ բարձրացաւ նա և մոլորեցաւ, որպէս և նոքայն. այլ հնազանդ եղև նա որպէս և մշակ մի և պանդուխտ տեառն երկրին. "Երկիր, ասէ, ճշմարտութ՟բ մի վաճառեսցի, քանզի իմ իսկ է ամենայն „. որ և հնազանդեսցի նմա որպէս տեառն երկրի ։ Բայց հեբրայեցի՝ "Իսաքար իբրև էշ մի, զի լայնեալ հանգուցեալ նստցի 'ի մէջ

աղեւաց. եւ ետես զհանգիստ իւր զի գեղեցիկ է, եւ զերկիր իւր զի պարարտ է, եդ զուս իւր 'ի գործել”, այլովք հանդերձ. այս ինքն զի լաւ թուեցաւ նմա գործել զերկիր, եւ ոչ ելանել 'ի մարտ պատերազմի։

“Դան դատեսցէ զժողովուրդ իւր”. 'ի վերայ Սամփսոնի”։ “Զի ինքն է օձ դարանակալ 'ի վերայ ճանապարհի”. զի եկն նա եւ չարչարեաց զփղշտացիսն։ Եւ զի ասէ “Ի վախճան փրկութեան մնայ տեառն”. վասն նորին Սամփսոնի, զի խնդրեաց ջուր, եւ ետ նմա Աստուած։

“Գադ ընդ աւազակս ելցէ”. այնոքիկ՝ որ քառասուն հազարաւ սպառազէն վառելովք. զի նա առաջնորդէր գնացից նոցա հանդերձ Յեշու Նաւեանց։ Եւ զի ասէ “Նա եղիցի վերջապահ”. զի նա ինքն էր առաջնապահ եւ վերջնապահ. քանզի յառաջագոյն ժառանգեաց նա զերկիրն, եւ հարստութիւն դարձեալ առաջնոյն 'ի զօրութե՛ վերջնոյն գտեալ լինէր. եւ 'ի վերայ նորա նախ եկին հասին պաղեստինացիքն, եւ հար սատակեաց զնոսա։ Բայց հեբրայեցի, “Գադ՝ աւազակք աւազակեսցեն զնա”. 'ի վերայ Նափեթայ. զի եղեւ հալածական յեղբարց իւրոց, եւ արարին զնա հինահար։ Եւ զի ասէ “Ինքն 'ի հինի ելցէ”. յետոյ զի կարօտացան նովաւ զօրքն եւ ածին զնա, եւ եղեւ նա դատաւոր. եւ կորզեաց թափեաց նա զժառանգութիւն իւր յեղբարց անտի իւրոց։

“Ասեր, 'ի պարարտութե՛ երկրի իւրոյ. եւ նա եղիցի համբարակ թագաւորաց”. երկիրն ապամացւոց։ “Զի թացցէ, ասէ, զոտս իւր իւղով”, ասաց Մովսէս։ Բայց հեբրայեցի ասէ. “Աշեր՝ ինքն 'ի պարարտութիւն հացի, եւ համբարակեալ իցէ թագաւորաց”։

“Նեփթաղիմ երագ հրեշտակ”. բայց հեբրայեցի՝ եղջերու երագ, բարակ. զի ետ տանել աւետիս բարեաց ամենայն փախստէիցն, եւ նա դարձեալ կերակրեաց զԻսրայէլ 'ի ժամանակի իբրեւ եկին նոքա թագաւորեցուցանել զԴաւիթ։ Կամ վասն տկարութե՛ նորա, զի էր տկար եւ վատթար քան զերէ, կարդաց զնա եղջերու. զի ոչ կամեցաւ նա երթալ

'ի մարտ պատերազմի , մինչև զի չոգաւ Դեբբովրա ։ Եւ զի ասէ "Որոտայ զխօսս բարւոքս և գեղեցիկս ,, ․ վասն օրհնութեանն զոր օրհնեաց զնա Դեբբովրայիւ հանդերձ ։

"Յովսէփ , ել դու իբրև զակն չինուածոյ հաստատուն ,, ․ զի օրհնելոց էր նա երկու որդւովքն իւրովք հանդերձ , զի հաստատեալ լինէր նա յաջ և յահեակ ։ Զի "Վասն քո , ասէ , խորհուրդ խորհեցան նենգութ̃ե , և ոխացան ընդ քեզ արք աղեղանց ,, ․ կամ վասն բազմութ̃ե նոցա , կամ վասն բանից նոցա , զի սաստկագոյնք էին , սակայն դարձաւ աղեղն նոցա ։ Իսկ Յովսէփու զօրութ̃ք , զի տիրեաց 'ի վերայ նոցա ․ այլ լուծան ջիլք բազկայ նորա , զի ոչ սպան զնոսա ։ "Քաւ եղիցի ինձ , ասէ , զի ես 'ի ներքոյ երկիւղի ա̃յ եմ ,, ․ վասն անուան զօրութեան Յակովբու ։ "Վասն այսորիկ , որդեակ իմ , ինքնին ա̃ծ հօր քո օգնեսցէ քեզ , զի արարեր դու զողորմութ̃ի գթութ̃ե 'ի վերայ եղբարց քոց վասն անուան նորա ,, ։ Իսկ այն՝ զի ասէ "Վասն անուան զօրութեանն Յակովբու ,, , այս ինքն՝ զի անուն հզօրին Յակովբու կոչեցաւ 'ի վերայ նոցա , և անուն հովուին վիմին Իսրայէլի ․ զի վէմն այն որ հովուեաց նոցա յանապատի անդ յօթեվանաց յօթեվանս՝ որ տուաւ ազգացն այնոցիկ ․ վասն այնորիկ ոչ սպաներ դու զնոսա ․ վասն այսորիկ ընկալ դու զամենայն օրհնութ̃իս օրինաց՝ որ տուեալ լինին ազգացս այսոցիկ զորս կեցուցեր դու ․ և փոխանակ զի կեցուցեր դու զնոսա , եղիցին նոքա քեզ պսակ փառաց ։ Եւ յայտ արար՝ թէ թագաւորելոց է նա 'ի վերայ նոցա՝ սպանանել և կեցուցանել ․ զի վայելէր իսկ նմա ։ Զի զոր օրինակ տիրեաց նա 'ի վերայ նոցա յերկրին եգիպտացւոց իբրու յանցաւորք և մնասակարք էին , և ոչ սպան զնոսա , սոյնպէս կեցուսցէ զնոսա յերկրին իւրեանց ։

Բայց դարձեալ՝ չինուած հաստատուն , զի հաստատեցաւ նա անդրանկութ̃քն և թագաւորութ̃քն ․ և զնոսա կարդաց պարիսպ ։ Նա և յերկրին եգիպտացւոց թագաւորեաց 'ի վերայ նոցա ․ և վասն այսորիկ հակառակեցին և ոխացան ընդ նմա , և լուծան տկարացան ջիլք բազկաց նորա ․ զի վաճառեցին զնա՝

փոխանակ թագաւորի իբրեւ զծառայ մի. սակայն դարձաւ աղեղն նորա զօրութբ : Բան ասաց յետ յառաջ. այլ 'ի ձեռանէ հզօրին Յակովբու դարձաւ. եւ յանուանէ հովուին վիմի՝ 'ի վերայ թագաւորութեան ակնարկէ. քանզի հանդերձեալ էր նա թագաւորել, դարձոյց զաղեղն նորա զի տիրելոց էր : "Օրհնութիւնք հօր քո զօրացան 'ի վերայ օրհնութեանց ծնանելեաց քոց ,,. կամ զի յաւելան օրհնութիւնքն իմ 'ի վերայ օրհնութե̃ նոցա. այս ինքն զի առաւել են օրհնութիւնքն զոր օրհնեցի ես զքեզ՝ քան զայն օրհնութիւնս զոր ես օրհնեցայ : Կամ մինչեւ յոյս բարձանց յաւիտենից : Զլեառնն ամուրհացւոց ած 'ի մէջ յայսմ վայրի, ուր Սահակն պատարագեցաւ. եւ բարձր է, ասէ, քան զբարձունս որ էին անդ. եւ բարձունք, ասէ, որ յաւիտենից իմ են, կամ բարձունք յաւիտենից մինչեւ 'ի դրախտն. իբրեւ զայն զի ասաց Մովսէս՝ 'ի գլխաւոր լերանէ արեւելից : Բայց հեբրայեցի, "Որդի պտղալից այգւոյ, որ արձակեալ է 'ի վերայ ջուրց գնացից, եւ մածեալ տարածեցաւ 'ի վերայ շինուածոյ. եւ անց նա ընդ պարիսպ, եւ ոխացան ընդ նմա արք աղեղանց ,,. եւ այլ եւս : Եւ փոխանակ այնր՝ զի ասէ "Մինչեւ յոյս բարձանց յաւիտենից ,, , ասէ "Օրհնութիւնք հօր քո զօրացան 'ի վերայ օրհնութեանց ծնանելեաց իմոց ,,. զի այսմիկ իսկ ցանկացան իշխանքն որ յաւիտենից. այս ինքն 'ի վերայ Եսաւայ ակնարկէ : Եւ զի ասէ "Ի վերայ գլխոյ պսակի եղբարց իւրոց ,,. ասէ "Ի վերայ գլխոյ ուխտի եղբարց իւրոց ,, :

"Բենիամին գայլ յափշտակօղ. այգուն կերակուր կերիցէ, եւ առ երեկս համբար մթերեսցէ, եւ բաշխեսցէ կերակուր ,, : Ի ժամանակի իբրեւ արարին նոքա ժողովուրդ 'ի մէջ Իսրայէլի յետ կոտորածոյ բենիամենեան գնդին, եւ մնացեալ էին նոքա չորեքհարիւր այր միայն. եւ յանձն առին նոցա իսրայելեանքըն յօմնուլ յափշտակել իւրեանց 'ի ժողովրդենէ անտի կուսանս, զի մի կորիցէ ազգն ամենայն, Բայց դարձեալ՝ գայլ յափշտակօղ, վասն ժպրհութե̃ համարձակութե̃ նորա՝ որ եղեւ առ կինն Ղեւեայ, եւ վասն պատերազմին զոր արար ընդ եղբարսն իւր, ասաց ընդ առաւօտս կերիցէ զկերակուր՝ այլովք հան-

դերձ ։ Դարձեալ Բենիամին յորժամ լինի առաւօտ, այս ինքն փրկութի̃, որպէս յաւուրսն Մինիքերիմ արքայի, քանզի 'ի տանէ անտի սրբութե̃ եղանէր փրկութի̃. եղանէր աւար հարկանէր, և առ երեկ՝ այս ինքն հանգստիւ՝ որպէս և ընդ երեկս բաշխէր նա որ զինչ առնոյր աւար ։ Կամ փոխանակ զի չոգաւ նա կոտորեաց զամաղեկացիսն, և բաշխեաց զաւար նոցա ։ Կամ 'զի ոչ պահեաց նա զպատուէր հրամանի Մովսիսի կամ Շմուէլի՝ զոր պատուիրեաց վասն ամաղեկացւոցն, կարդաց նա գայլ յափշտակօղ ։ Փոխանակ այնր՝ զի ասէ "Ի Ներքոյ ա̃յ եմ ես", "Քանզի երկիւղած եմ ես յա̃յ" ։

"Հանջիք դուք, ասէ, և զիմ ոսկերս ընդ ձեզ". զի որչափ գանձն սուրբ եդեալ էր յայն երկիր 'ի պիղծ, առնէ 'ի վերայ նոցա ա̃ծ խնայութի̃. վասն այսորիկ դարձան նոքա 'ի Բաբելոնէ ։ Բայց 'ի ժամանակի իբրև կախեցին նոքա 'ի վերայ խաչափայտին զմարմինն զայն, զի 'ի նմա էր գանձն կենաց հեթանոսաց, գթացաւ նա 'ի վերայ երկրին հեթանոսաց. զի ընկալաւ նա զգանձս զայս ։ Եւ փոխանակ այնր՝ զի ասէ "Եդին զնա 'ի Դոփինա 'ի տապանի", այս ինքն 'ի յարկեղ ։

ԿԱՏԱՐԵՑԱՒ ԱՐԱՐԱԾՈՑ ԳԻՐՔՍ

ՍՐԲՈՅՆ ԵՓՐԵՄԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ԵԼԻՑ

ՏԵԱՌՆ

ԵՓՐԵՄԻ

ԽՈՐԻՆ ԱՍՈՐԻՈՅ

ԵԼՔ

ԳԼՈՒԽ Ա

ՓՈԽԱՆԱԿ այնր՝ զի ասէ “Ամենայն ոգիք, որ ելին յերանաց Յակովբու, իւթանասուն մարդ. և Յովսէփ անդէն էր յերկրին եգիպտացւոց„. բայց հեբրայեցի, “Յովսեփաւ հանդերձ, որ էր յերկրին եգիպտացւոց„: Եւ այն՝ զի ասաց Փարաւոն. ասէ “Խորհեսցուք վասն նոցա„. այս ինքն հնարեսցուք վասն նոցա: Մանկաբարձքն ապրեցուցին կեցուցին զտղայսն. նա ինքն տոհմ յաւիտենից. “Արարին իւրեանց, ասէ, տունս„: “Եղիցի, ասէ, տուն ծառայի քո„. այս ինքն զաւակ նորա. և “Դատիմ ես, ասէ, զտունն Հեղեայ„. այս ինքն զզաւակ նորա: Կամ իսրայելացիքն արարին նոցա տունս 'ի ժամանակի իբրև երկեան մանկաբարձքն 'ի տեառնէ. քանզի աւերեաց Փարաւոն զտունս նոցա 'ի ժամանակին իբրև բարկացաւ 'ի վերայ նոցա: Կամ զի երկեան նոքա 'ի տեառնէ, յայտ արար նոցա տունս. զի նոքա եղիցին երթալ ծնուցանել զեբրայեցիս, որպէս զի կեցուսցեն զամենայն արու մանուկ. և ոչ առնէին նոքա յայտ զանձինս իւրեանց թէ երթան: Կամ զի առնուին նոքա յանձն մեռանել, և ոչ հեղձուցանել զտղայս, բարի արար նոցա տէր. և 'ի ձեռն արու տղայոցն շինեցին նոքա զազգսն իբրև զտուն, և ոչ

կործանեցին ։ Իբրև զայն՝ զի ասէ Դաւիթ . "Դու ասացեր չլինել քեզ տուն "։

Փոխանակ այնր՝ զի ասէ "Տեսին զմանուկն զի գեղեցիկ էր, և թաքուցին զնա ". Եբրայեցի ասէ . "Իբրև տեսին զմանուկն շոյտ "։ Բայց շոյտ՝ կամ անուն է, կամ բարբարոս՝ իբրև զփրկիչ . քանզի ակն իսկ ունէին թէ փրկիչ ծնանելոց է նոցա . և յայտնեցաւ, ասէ, մօր նորա թէ սա է ։ Արդ տես դու որչափ քրնեցին նոքա . զի ոչ ևս կարացին թաքուցանել զՄովսէս ։ Արդ տես դու որչափ պահեաց զնոսա ողորմութ̅ն շնորհաց, զի վեց հարիւր հազար ելին նոքա յերկրէն եգիպտացւոց . "Որչափ նոքա, ասէ, ճնշէին զնոսա, առաւել ևս աճէին բազմանային և զօրանային որդիքն Իսրայէլի "։ Հնարս խնդրեաց Փարաւոն, զի որք կենդանիքն իցեն, աշխատութ̅բ մաշեսցէ . և որ ծնանելոցն իցեն, սպանցէ հրամանաւ . և ա̅ծ արկ զահ և զերկիւղ իւր 'ի սիրտս մանկաբարձացն, զի մի՛ սպանցեն . և պատրաստեաց բանս 'ի բերան նոցա, զի մարթասցեն պատասխանի տալ թագաւորին ։

"Իսկ զքեզ, ասէ, ո՞վ կացոյց իշխան և դատաւոր 'ի միջի մերում "։ Զարհուրեցաւ Մովսէս . և յայսմիկ յայտ արար, զի որում ոչ ակն ունէր թէ գիտիցէ՝ լուաւ նա զբանն . զի այն առաջին որ փրկեցաւն՝ արժանի իսկ էր, զի ոչ եթէ անիրաւութ̅բ փրկեաց զնա Մովսէս . բայց նա յայտնեաց ընկերի իւրում սիրով, և նա կշտամբեաց զնա չարութ̅բ ։ Իբրև փախեաւ նա դարձեալ 'ի Մադիամ, և ոչ լռեաց դադարեաց նա 'ի ստուգութենէ . խնդրեաց նա զվրէժ զրկեալ աղջկանցն 'ի վերայ ջրհորոյն հովուաց ։

"Նա գնաց, ասէ, Մովսէս զխաշինսն Յաթրոնայ . և եկն եւ նա 'ի լեառն ա̅յ 'ի Քորեբ ։ Անդ երևեցաւ նմա հրեշտակ տեառն 'ի բոց հրոյ 'ի մէջ մորենւոյ "։ Մորենին այն զի ոչ էր պիտանացու՝ լինել 'ի նմանէ պատկեր մեռելոտի աստուածոց, գտաւ՝ զի նկարեսցէ 'ի նմանէ խորհուրդ ա̅յ կենդանւոյ ։ Եւ առաւել ևս . զի տացէ նա մեզ օրինակ, զի խոնարհութ̅բ նորա նմանօղք եղիցուք մեք նմա, զի յանարգ մորենւոյ անտի երևեցաւ նա ։ "Եւ յո՞, ասէ, հայեցայց

և բնակեցայց, այլ 'ի հեզս և 'ի խոնարհս,,: Զոր օրինակ և 'ի Մովսէս՝ զի բնակեցոյց զփառս իւր, վկայեաց նա վասն նորա՝ թէ խոնարհ էր քան զամենայն մարդիկ հանդերձ այլովք արդարովք: Սոյնպէս և միածին նորա 'ի կուսէ 'ի դստերէ անտի աղքատաց:

Արդ խոտորեցաւ Մովսէս տեսանել զայն տեսիլ սքանչելի. և իբրև բազում խորհուրդս խորհէր նա երկուցեալ զարհուրեալ, ձայն բարբառոյ եղև նմա 'ի միջոյ հրոյն և ասէ. Մատիր մերձեաց, ասէ, Մովսէս՝ հանեալ 'ի ջուրց, զի ջուրք 'ի հրոյ ոչ երբէք երկնչին: Զի եթէ մօրենին ոչ այրեցաւ 'ի հրոյ անտի՝ որ լուծեալ էր 'ի նմա, ո՞րչափ ևս առաւել քաջալերեալ լինէր որդին ջուրց, և մերձենայր առ նա: "Կոչեաց, ասէ, զանուն նորա Մովսէս. քանզի 'ի ջրոյ անտի հանի զնա,,: Ահաւասիկ 'ի մանկութեան քումում 'ի խորհուրդ մկրտութեան աւազանին դրոշմեալ ես դու, 'ի հրոյ զիա՞րդ երկնչիս դու: Այլ ոչ եթէ 'ի հրոյ երկեաւ նա, քանզի և 'ի հուր անդ խորհուրդ Որդւոյ դրոշմեալ էր. "Նա, ասէ, մկրտեսցէ զձեզ 'ի հուր և 'ի Հոգի սուրբ,,: Ի մօրենին դարձեալ չարութիւն Իսրայէլի նկարեցաւ. զի յայտ արասցէ մեզ թէ որպիսի՛ ժողովուրդ է հեբրայեցւոց: Եւ զի ասէ "Ես եմ ա̃ծ Աբրահամու, ա̃ծ Սահակայ, ա̃ծ Յակովբու,,. և ոչ ասաց՝ ա̃ծ Աբրահամու, Սահակայ և Յակովբու. զի նկարեսցէ զխորհուրդն երրորդութեան, և զկատարումն անուանն, զի ընթանայ զկնի անձանց:

Եւ զի ասէ "Լոյծ զկօշիկս քո յոտից քոց,,. զի յայտ արասցէ նմա՝ թէ ո՞յր առաջի կայ. և անդ զի գիտասցէ և ծանիցէ Յիսով որդի Նաւեայ թէ զի՞նչ է պատիւ փառաց այնորիկ՝ որ եկն 'ի թիկունս նորա օգնական լինել նմա: Բայց դարձեալ՝ լոյծ զկօշիկս քո՝ իբրև զայն է, զոր ետես մարգարէն 'ի ժամանակի իբրև դիմեալ գայր յԵդովմայ. զի խնդրեաց նա 'ի նոցանէ զվրէժ հատուցման որդւոցն Իսրայէլի, զի ասէ. "Ի վերայ Եդովմայ լուծից զկօշիկս իմ, և 'ի վերայ փղշտացւոց զաղաղակ բարձից,,: "Հնձան, ասէ, հարի ես միայն, Ճմլեցի ես զնոսա բարկութեամբ իմով,

և կոխեցի ես զնոսա սրտմտութեամբ իմով»։ Եւ սոյնպէս և Մովսէսի ասացաւ՝ լոյծ զկօշիկս քո. զի հրաման համդերձեալ էր նա հարկանել ՚ի մէջ երկրին եգիպտացւոց, այս ինքն վասն զօրութեացն՝ զոր արար նա անդ։ Քեզ իսկ, ով Մովսէս, այս եղիցի քեզ նշան՝ զի տեսեր դու զա՟ծ, զի բնակեալ էր ՚ի մէջ հրոյն. այսպէս լիցի ձեզ պաշտել ՚ի ձեռն հրոյ զա՟ծ՝ որ բնակեալ է ՚ի մէջ հրոյ։ «Ես եմ, ասէ, ա՟ծ Աբրահամու, Սահակայ և Յակոբու». զի լուիցեն որդիքն Աբրահամու՝ որ էին յերկրին եգիպտացւոց. զի եթէ հարքն նոցա իբրու մեռեալ էին՝ կենդանի են ինձ, որչափ ևս առաւել կենդանի են ինձ այնոքիկ՝ որ ՚ի նեղութիւնս իցեն։ Եւ եթէ մեռեալքն նոցա իբրև կենդանիք համարեալ են ինձ, զի կենդանութիւն յարութեան նոցա ՚ի դժոխոց դիւրին է ինձ, որչափ ևս առաւել դիւրին է ինձ փրկութիւն նոցա՝ որ յերկրին Եգիպտացւոց։ Յորժամ ելանիցեն նոքա անտի փրկութեամբն իմով և կենդանութեամբ, ամաչեսցեն մահն սպանող, և Փարաւոն նեղիչ։ Վասն այսորիկ անարգեաց անգոսնեաց Մովսէս զգանձսն եգիպտացւոց, և փութացեալ ընթացաւ նա առ ոսկերսն Յովսէփու. զի ՚ի նոսա ծածկեալ կայր գանձն կենդանութեան, որպէս զոսկերսն Եղիշայի։

«Ահա, ասէ, ոչ հաւատան ինձ, քանզի ասեն ոչ երևեցաւ քեզ տէր»։ Եւ զի ետես տէր եթէ նշան խնդրէ, ետ նմա նշան ՚ի գաւազանն՝ որ եղև վիշապ. զի ուսուսցէ զնա թէ չէ խիստ Փարաւոն քան զայս վիշապ։ Եւ ահա արիւն ձեր ոչ է ծածկեալ յայնմանէ որ արար զջուրսն արիւն, և ոչ ժողովուրդ ձեր ՚ի բորոտեալ ձեռանէ անտի. ձեռն քո, ասէ, որ բորոտեցաւ՝ սրբեցաւ ՚ի ծոցոյ քումմէ։ Դա գրէ օրէնս՝ որ սրբեն և պղծեն, ծոց նորա էր պղծիչ և տեղի սրբութեան. «Դարձո անդրէն, ասէ, զձեռն քո ՚ի ծոց քո»։ Ի միում յանդամի նորա ետ նմա նշան փրկութեան. քանզի առ մի ժողովուրդ առաքեաց զնա հանել զնոսա յերկրէն եգիպտացւոց։ Եւ զի ցուցցէ նմա՝ թէ զոր օրինակ բորոտեցաւ ձեռն նորա և պղծեցաւ, նոյնպէս և նոքա պղծեցան ՚ի կուռսն եգիպտացւոց. և զոր օրինակ սրբեցաւ ձեռնն նորա յետ պղծելոյն,

սոյնպէս և նոքա սրբեցան յամպն և 'ի ծովն ։ Բայց տէր մեր զի փրկիչ էր աշխարհաց ժողովրդեանն և հեթանոսաց, յամենայն մարմին նորա՝ զի մեռաւ վասն մեր՝ տուաւ մեզ նշան փրկութե̃ ․ և ոչ եթէ որպէս Մովսէսն զի մի անգամ իւր եղև նա նշան որդւոց ազգի ժողովրդեան իւրոյ, զի յայտ արասցէ՝ եթէ վասն ժողովրդեանն ցոյց նմա զայսպիսի սքանչելիս ։ Ասէ ․ “Եթէ ոչ հաւատասցեն քեզ առաջին նշանիդ, հաւատասցեն միւսումդ ևս ․ ապա թէ ոչ հաւատայցեն այդ երկուց նշանաց, առ դու ջուր 'ի գետոյ այտի և հեղ 'ի ցամաքի ․ և զջուրսն զոր հեղուցուս դու 'ի ցամաքի անդ, եղիցի նա արիւն „ ։ Եւ այս զի ուսցի նա թէ առաջի աչաց նորա է արիւն տղայոց նոցա՝ զոր հեղձուցին 'ի մէջ ջուրցն ․ և հաւատասցեն 'ի միտս իւրեանց, զի եթէ 'ի վերայ մեռելոց նոցա փոյթ է նմա, ո՞րչափ ևս առաւել 'ի վերայ նոցա, զի կենդանի են ։

Եւ իբրև ցարդ չև ևս առեալ էր Մովսիսի յանձն երթալ, ասէ ցնա տէր ․ “Կապուտ կողոպուտ արասջիր զեգիպտացիսն „ ։ Դու, ասէ, զայս բարբառ սերմանեսջիր յականջս ժողովրդեանն՝ որ ծառայ են մամոնայի ․ և տես դու՝ զի հաւատան քեզ ։ Այլ ոչ երկեաւ Մովսէս 'ի Փարաւոնէ, այլ յԻսրայելէ ․ “Ահա, ասէ, ոչ լսեն ինձ „ ։ Մինչև յո՞ր վայր հրաժարեաց նա 'ի նոցանէ, մինչև զի կացցէ հակառակ ընդդէմ այ̃ ․ սակայն դիւրին էր հակառակել նմա ընդ այ̃, քան հակառակել ընդ Իսրայելի ․ լաւ իցէ գլել վէմս ․ և “Լաւ իցեն, ասէ, հարուածք բարեկամի „ ։ Թերևս յայսմ վայրի չարախօս եղև Մովսէս զնոցանէ բազում իրօք ․ զի ոչ ասաց նմա Մովսէս՝ թէ ոչ լսեմ ես քեզ, այլ ասէ ․ ոչ լսեն ինձ, կակազոտ եմ ես, ասէ ։ Յայսմիկ, ասէ, փոքր ես դու ․ այլ ահա նովաւ մեծանաս դու ․ զի եղիցի քեզ մարգարէ խօսօղ, որպէս և այ̃ ։

Բայց դարձեալ զի հրաժարեաց, քանզի յիշեաց նա զնախանձն Կայենի և զԵսաւայ՝ երկեաւ և նա ․ վասն այնորիկ ասէ ցնա ․ “Ահաւասիկ եղբայր քո ելցէ ընդ առաջ քո, տեսցէ զքեզ և ուրախ եղիցի „ ։ Ոչ եմ ես այր խօսող ․ կամ բան միջին ասաց ․

“Զի այր մինրբաձայն ծանրախօս եմ ես”․ ոչ կարեմ ես խօսել առաջի խօսող ժողովրդեանն ։ Կամ զի լուծցի կապանք լեզուի իւրոյ՝ խնդրեաց նա ։ “Եթէ առաքես դու զիս, ոչ եմ ես, ասէ, այր խօսող յերեկուստ և յեռանտուստ”։ Կամ երկեաւ նա ՚ի հեբրայեցւոց անտի, զի առեալ էր նորա զճաշակս չարչարանաց նոցա յայնմիկ՝ զի ասէ “Միթէ և զիս սպանանե՞լ կամիցիս դու որպէս և զեգիպտացին”։ Կամ ՚ի տանէ անտի Փարաւոնի զգուշացեալ էր նա, զի տեղեկացեալ էր նա և գիտէր զկնձիռն դառնութեան նոցա ։ Այլ զայս ասասցուք․ քանզի նշանք բազումք եղեն աւանդ առ նմա առնել, ծանրախօսութի՟ նորա և կապանք լեզուի նորա ոչ արձակեցան․ զի տեղեակ գիտէին զնա եգիպտացիքն․ վասն այսորիկ “Առաքեա դու, ասէ, յոյր ձեռն առաքելոցն ես դու՝ որ կարօղն իցէ խօսել”․ ոչ եմ ես այր խօսող, այս ինքն համեմատ եգիպտացւոցն։ Վասն այսորիկ “Ահաւանիկ կայ Ահարոն մարգարէ քո”։ “Առաքեա դու, ասէ, ՚ի ձեռն այնորիկ՝ որ առաքելոցն ես”, այս ինքն զոր հանդերձեալն ես դու առաքել․ որ նա ինքն է տէր մեր Յիսուս Քրիստոս ։ Վասն այսորիկ բարկացաւ ՚ի վերայ նորա սրտմտութբ՟ տէր, փոխանակ զի խնդրեաց նա զնա տարաժամ ։ Ես, ասէ տէր, ժամուն իւրում պահեցից զնա ։

Եւ զի մի օտարացուսցէ նա զՄովսէս, ոչ փոխեցաւ անուն նորա, և ոչ լուծաւ կապանք լեզուի նորա ։ Յայսմիկ մեծացաւ Մովսէս քան զբազումս, իբրու մեծ էր նա խրատուն և իմաստութբ՟ եգիպտացւոցն, անգոսնեաց և խոնարհեցոյց զիմաստութի՟ գիտութե՟ իւրոյ վասն սիրոյն այ՟ իւրոյ․ վասն այնորիկ անուն այ՟ և դէմ յանդիման․ և վկայ այն, զի իջին փառքն այ՟ և նստան ՚ի վերայ երեսաց նորա ։ Եւ զոր օրինակ ՚ի ժամանակի իբրև ստեղծաւ Ադամ՝ հնազանդեցան նմա ամենայն գազանք, քանզի ՚ի նմանութե՟ պատկերի կերպարանաց արարչին իւրոյ էր, սոյնպէս ՚ի ժամանակի իբրև առաքեաց զՄովսէս փրկիչ նոցա, քանզի գիտէր նա թէ աղօթս և պաղատանս առաջի տեառն իւրոյ փոխանակ ընդ ժողովրդեան ազգին իւրոյ հանդերձեալ մատուցա-

նել՝ զի ինքն կորիցէ և մի ժողովուրդն ջնջեսցի , վասն այսորիկ և ինքն բարերարն իբրև ետես զխոնարհութ՟ի հեզութ՟ե նորա , զանուն իւր առանց նախանձու եդ 'ի վերայ նորա ։ Վասն այսորիկ պաշտեցին զնա արարածք իբրև աղախնայք . զի ծովն առաջի երեսաց նորա իբրև զծառայ մի 'ի սպաս պաշտաման նորա պատրաստեալ էր ։ Եւ այս են զարմանք , զի բնութ՟ի որ ոչ ունէր իմաստութ՟ի , ընկալաւ 'ի ձեռն հրամանի նորա զշարշարանս գիտութ՟ե . և երկինք հնազանդեցան բանի նորա , զի յառաւօտէ մինչև յերեկոյ վեց հարիւր հազարին հաց պատրաստիցէ ։

Եւ զի ասէ “Պատահեաց նմա տէր , և խնդրէր սպանանել զՄովսէս „ , ոչ եթէ վասն թլփատութ՟ե , այլ զի առ նա ընդ իւր զկին իւր և զորդիս իւր , և էջ առնել զնշանս և զարուեստս . զի անտի դարձաւ և մնաց կին նորա որդւովք իւրովք հանդերձ ։ Արդ դու , ասէ , որ մտանես հանել զորդիս ժողովրդեան քո յերկրէն եգիպտացւոց , առեալ վարեալ զկին քո և զորդիս և մտանե՞ս անդր ։ Եւ միւս ևս , զի զօրացի նա 'ի սաստէ անտի հրեշտակին . զի յապրելն իւրում 'ի սպառնութ՟է անտի հրեշտակին , թեթևացի յաչս իւր այն՝ զի խիթայր նա երթալ առ Փարաւոն , իբրև զայն զՅակովբուն առ Եսաւ ։ Կամ զի մուծանէր նա զորդիսն իւր՝ անթլփատութիւն'ի վերայ թլփատութ՟ե , երկմտութ՟ի անիմաստ ժողովրդեանն . վասն այնորիկ երկեցոյց զնա զի թլփատեսցէ ։ Զի մատեաւ Ծիփորա , բուռն հար զոտից հրեշտակին , և աղաչեաց զնա և խնդրեաց 'ի նմանէ վասն Մովսիսի , զի ոչ էր թլփատեալ նորա զմանուկն . և իբրև թլփատեաց զմանուկն Ծիփորա , ընկալաւ 'ի նմանէ հրեշտակն զաղօթս նորա , և ետ նմա զՄովսէս պարգև ։ Փոխանակ արեանն , ասէ , զոր հեղի ես առաջի նորա , ետ զքեզ ինձ փեսայ արեան , ուխտ արեան . զի առ Աբրահամ յորժամ թլփատեաց , ուրախութ՟ի և ցնծութ՟ի . և առ մեզ սուգ և տրտմութ՟ի ։

Բայց դարձեալ , զի խնդրեաց հրեշտակն սպանանել զՄովսէս , ետես զնա ստուգութիւն՝ զի յերկրին

եգիպտացւոց նախանձայոյզ եղև Մովսէս, և հար սատակեաց զեգիպտացին. և առ կին իւր ոչ եղև նախանձախնդիր, զի խափանեաց զուխտն ա՟յ նորա։ Արդ եկն սպանանել զնա հրեշտակն քինայոյզ նախանձախնդիր, զի յուցցէ նմա ո՞վ բուռն և սաստիկ իցէ՝ ընդ հրեշտակն և ընդ այն՝ որ զքեզն արգել. և երկու՝ զի օտար էր նա՝ ոչ պահեաց նմա ոխս վասն ողորմութե՟ գթութե՟ իւրոյ։ Եւ զի չ՟րեքհարիւր ամ հաւատացին թլփատութե՟ն, սակայն զայս ասասցուք. զի ուսոյց նմա յասել իւրում. ասէ "Ասաաջիր գոգջիր. ա՟ծ հարցն մերոց առաքեաց զիս առ ձեզ"։ Աստուած, ասէ, Աբրահամու 'ի բերան քո, և հակառակութի՟ սրբութե՟ վասն զաւակի քոյ։ Եւ զի ոչ առնոյր յանձն նմա կինն իւր, ցոյց նմա զահ և զերկիւղ, զի ինքն ձեռօք իւրովք թլփատեսցէ զնա, և զի յամենայն ինչ երկիցէ նա 'ի Մովսիսէ։ Եւ դարձեալ քանզի օրէնսդիր նա երթայր լինել, ցոյց նմա՝ թէ որպիսի ահ և երկիւղ մերձ է առ նա, զի զգուշասցի. և զի զգուշասցին դարձեալ 'ի տեսիլն նորա որդիքն Իսրայէլի։

Եւ զի յայտ արասցէ դարձեալ միւսանգամ, զի 'ի ժամէ անտի յայնմանէ՝ յորմէ հետէ խօսեցաւ ընդ նմա ա՟ծ, ոչ մերձեցաւ առ կինն իւր. բայց ինքն կինն ոչ հաւատայր նմա, և դատաստանք էին նոցա վասն այսր։ Զի 'ի տան հօր նորա ոչ կարաց Մովսէս ասել ընդ նմա բան ինչ. այլ յօթեվանս Ճանապարհին աւուրն այնորիկ՝ իբրև ոչ կամեցաւ երթալ առ նա յանկողինս նորա, բայց խառնեաց, և վասն անթլփատութե՟ որդւոյ նորա ասէ այսպէս. հրամայեաց ա՟ծ՝ թէ կորիցէ անձն անթլփատ յազգէ տոհմէ իւրմէ, և ահաւասիկ յամենայն իմիք եղէր դու ինձ սատանայ։ Եւ իբրև նկջեցին նոքա այսու խօսիւք, եկն հրեշտակն տեառն 'ի տեսիլ ահագին, իբրև խնդրէր զվրէժ թլփատութե՟. և խնդրէր սպանանել զՄովսէս զորդին Աբրահամու՝ որ գիտէր զուխտն Աբրահամու։ Ծիփորա իբրև ետես զայն ամենայն ահ և երկիւղ, արար զերկոսին միանգամայն. թլփատեաց զորդին իւր, և սրբեցաւ արեամբն իւրով հանդերձ. քանզի դողաց և զարհուրե-

ցաւ նա 'ի շքեղ տեսլենէ հրեշտակին ։ Ասէ Մովսէս ցկին իւր . դու 'ի հրեշտակէ անտի այդչափ զարհուրեցար տագնապեցար , և արարեր նմա պատիւ . ես՝ զի տէր հրեշտակաց յայտնեցաւ ինձ 'ի բոց հրոյ , և դարձեալ հանդերձեալ է յայսմ հետէ և անդր յայտնել ինձ , որչափ ևս առաւել արժան է ինձ առնել նմա պատիւ և սրբել նմա զանձն իմ ։ Ծիփորա իբրև ետես թէ հրեշտակք և տէր հրեշտակաց յայտնի նոցա և այցելու լինի նոցա , մեծացաւ յաչս Ծիփորայ տեսիլ հրեշտակին առաւել քան զամուսնութի՟ բնութե՟ . և ստուգեցան հաւատարիմ եղեն նմա ամենայն բանքն՝ զոր խօսէր ընդ նմա Մովսէս՝ թէ արդարեւ յայտնեցաւ նմա ա՟ծ ։

Եւ քանզի 'ի պատճառս թլփատութե՟ եկն հրեշտակն , այսպէս արժան եղև՝ զի 'ի պատճառս թլփատութեան եկեսցէ , թէպէտ և վասն երկոցուն իսկ եկն . և քանզի ետես Ծիփորա զահն և զերկիւղն մեծ , սիրեաց նա և սրբանալ ։ Բայց Դանիէլ խռովեցաւ իբրև ետես զհրեշտակն . վասն այսորիկ անուանեաց զիրան յանուն թլփատութեան . փեսայ , ասէ , արեան է ինձ . իբրև զայն՝ զի ասէ , վէմ օգնութեան՝ և ձոր ողկուզոյ ։ Եւ արդ այն փեսայութի՟՝ որ եղև մեզ յառագաստի անդ՝ այսօր յուխտն թլփատութե՟ հարցն քոց ամուսնանամ ես ընդ քեզ . և մի , ասէ , այսուհետև կոչեսջիր դու ինձ այր անկողնաց , այլ փեսայ սուրբ ուխտին հարց քոց ։ Դարձեալ փեսայ արեան՝ փեսայութի՟ ուրախութե՟ . ուրախութիւն է ինձ , ասէ , զի գնեցի ես արեամբ որդւոյ իմոյ . քանզի ասաց նմա . ասէ , ուրախութիւն եղև 'ի տանն Աբրահամու յորժամ թլփատեաց զորդին իւր . յայսմ , ասէ , խորհրդի հաղորդի մարդ ընդ տոհմ մեր ։ Փեսայութի՟ դարձեալ ամուսնութի՟ է . յայսմ հետէ , ասէ , գոյ ինձ հաղորդութի՟ ընդ քեզ յայս նշան ուխտի . խոստովանութի՟ խոստովան եղև նա Մովսէսի . քանզի յառաջագոյն ոչ հնազանդեցաւ նմա , հաւասարեցիս , ասէ , յայսմ ուխտի փոխանակ ամուսնութեան հարսանեաց ։

ԳԼՈՒԽ Բ

Այլ զիա՞րդ հաւատացին ՚ի Մովսէս յերկրին եգիպտացւոց վասն նշանաց իւրոց ։ Կամ թէ մարգարէք յայտ արարին զնմանէ՝ թէ ահա գալոց է ․ այլ զի սպասէին և ակն ունէին բանին այնմիկ՝ զի ասէ ․ զչորեքհարիւր ամ՝ միայն կայցեն ՚ի հնազանդութե̃ ։ Նախ յառաջագոյն զժողովուրդն հաճեաց և հաւանեցոյց Մովսէս ՚ի վիշապ անդր ։ Ոչ, ասէ, խիստ և բուռն իցէ Փարաւոն քան զայս վիշապ ․ և ահաւանիկ արիւնն ձեր ոչ է ծածկեալ յայնմանէ՝ որ արար զջուրսն արիւն, և ոչ ժողովուրդդ ձեր ՚ի բորոտեալ ձեռանէ անտի վասն ծերակոյտ ժողովրդեան ։ Եւ զի լուաւ վասն նշանացն զոր արար Մովսէս առաջի ծերակոյտ ժողովրդեանն, ոչ ել ընդ առաջ նորա խստութբ̃ ։ “Ընդէ՞ր, ասէ, Մովսէս և Ահարոն, խափանէք դուք զժողովուրդս զայս ՚ի գործոյ իւրեանց „ ։

“Առ դու, ասէ, զգաւազանդ քո, և ընկեա առաջի Փարաւոնի, և եղիցի վիշապ „ ։ Զի օձն այն՝ որ եբաց զբերան իւր մինչ կանխաւ, և սփռեաց տարածեաց զչարութի̃ իւր ՚ի վերայ ամենայն մարդկան, նա եբաց զբերան իւր, և առ կուլ զամենայն չարութի̃ կախարդաց ։ Եւ քանզի երկեաւ Մովսէս ՚ի Փարաւոնէ, եդ ա̃ծ առաջի նորա երկիւղ մօտաւոր քան զՓարաւոնին ․ զի զզէն նորա արար, զի եղիցի նմա հակառակորդ ․ և դարձաւ ետ նմա իշխանութի̃ ՚ի վերայ նորա, որպէս և ՚ի վերայ Փարաւոնի ։ Եւ փոխանակ զի խնդրեսցէ Փարաւոն նշան ՚ի Մովսէսէ, և ապա արձակեսցէ զժողովուրդն, և ասէ “Ո՞վ է տէր, զի լուայց ձայնի նորա „ ։ Արդ նա ինքն կոչեաց զհարուածսն բանիւ խստութբ̃, յասելն իւրում՝ ո՞վ է տէր ․ և զի ասաց՝ բայ “Ոչ գիտեմ զտէր „, հարկ եղև արարածոցն ցուցանել ընկերին իւրեանց թէ ո՛վ իցէ տէրն հասարակաց ։ Եթէ ոչ գիտես դու՝ թէ ո՛վ է Աստուած, ՚ի կախարդաց անտի՝ զոր գիտեսն դու, գիտասջիր դու զայն՝ զոր ոչն գիտես

դու ։ «Ձեռն, ասեն, Աստուծոյ է այս»։

Նախ յառաջ քան զամենայն հարուածսն, այն մեծ էր քան զամենայն հարուածսն, ասէ Աստուած ցՓարաւոն 'ի ձայն բարբառոյ. այն զի ասէ. «Զորդի քո անդրանիկ հարկանեմ»։ Բայց գործովն զվերջայն որ փոքր էր քան զամենայն հարուածս, ցոյց նմա ։ Առ կուլ գաւազանն զգաւազանսն, փոխանակ զի կլցէ մահ զանդրանիկս նոցա. մինն եղև յահ յերկիւղ, և միւսն ևս 'ի պահպանութիւն ։ Արժան իսկ էր նմա 'ի գաւազանաց անտի որ կլան՝ ուսանել վասն անդրանկացն զի մի՛ ընկլցին ։ Նա և երկրորդ հարուածքն ահի երկիւղի էին, զի մեռան դարձեալ ձկունքն փոխանակ անդրանկացն. և զի ոչ հաւանեցան նմա մահուամբ ձկանցն, հաւանեցան մահուամբ անդրանկացն. և փոխանակ այնր՝ զի ոչ ած նա զմըտաւ, փութապէս վաղվաղակի տագնապաւ վարեաց հան զնոսա յաշխարհէ իւրմէ ։ Սատակեցաւ մի ծնունդ ձկանց, և բղխեաց միւս ևս ծնունդ գորտոց ։ Եւ զի ոչ հաւանեցաւ նա մեռելովքն, ուսաւ կենդանեօքն. «Որդի իմ, ասէ, անդրանիկ Իսրայէլ». զի յայտ արասցէ թէ և այլ եղբարք են նորա, այսինքն հեթանոսք ։ Եւ զի կոչեցաւ ամենայն Իսրայէլ որդի անդրանիկ, խնդրեաց զվրէժ զամենեցունց յանդրանկաց անտի եգիպտացւոց ։

Եւ փոխանակ այնր՝ զի ասէ. Եղիցի արիւն յԵգիպտոս 'ի փայտ և 'ի քար. եղիցին ամենայն ջուրք նոցա արիւն, և ջուրք ևս որ կայր յանօթս փայտեղէնս, և յանօթս քարեղէնս. «Հար, ասէ, գաւազանաւդ քո զջուրսդ, և եղիցին արիւն»։ Եւ այս են զարմանք, զի 'ի միում վայրի հարկանէր, և ամենայն ջուրքն յարիւն դառնային, և ձկունք ամենայն գետոյն առ հասարակ սատակէին ։ Խորհուրդ մեծ, զի 'ի ձեռն տեառն մերոյ. զի 'ի միում՝ տեղւոջ տնկեաց նա զխաչափայտն իւր, և աշխարհս ամենայն լցաւ 'ի նմանէ, և ամենայն պաշտամունք կռոց խափանեցան յերեսաց ծագելոյ նորա ։ Ասի դարձեալ, զի 'ի սահմանս եգիպտացւոց միայն եղեն ջուրքն արիւն, և այլքն ևս յստակ էին որպէս յաղբերականց իւրեանց ։ Այլ առ օրինակի մեծ է անդ. զի գետն

սրբութ̃ իւրով՝ ժողովուրդն Իսրայէլի է, և Եգիպտոս օրինակ մեղաց է ։ Զոր օրինակ գետն եգիպտացւոց յաղբիւրականց իւրոց սուրբ էր, սոյնպէս և Իսրայէլ յԱբրահամէ 'ի հօրէն իւրեանց յստակք և սուրբք էին ։ և իբրև 'ի բնակութիւն մեղաց եգիպտացւոց մտին նոքա, յարիւն զոհիցն պղծեցան նոքա ։ որպէս գետն եգիպտացւոց, զի դարձաւ յարիւն ։ Որպէս զի և Եսայի յայտնապէս ասաց վասն նոցա ։ "Զի եթէ եղիցին, ասէ, մեղք ձեր ,, և այլ ևս ։ Եւ զի 'ի դոյն տգեղութ̃ արեան զազրութ̃ ներկեալ էին, հարկ եղև զի սրբեսցին 'ի մկրտութ̃ի ջուրցն, և ապա ընկալցին զկերակուրն հոգևոր ։ "Ամենեքին, ասէ, 'ի ջուրմն մկրտեցան, և ամենեքեան զկերակուրն հոգևոր կերան, և զըմպելի զհոգևոր արբին ,, ։

Եւ զի ետես Մովսէս զՓարաւոն՝ թէ խստացաւ սիրտ նորա, զի ետես զգաւազանսն եգիպտացւոց՝ զի եղեն վիշապք, որպէս և գաւազանն նորին Մովսիսի ։ և զի դարձոյց զջուրսն յարիւն ։ և իբրևած 'ի վերայ նոցա զգորտն, ասէ ցնա Փարաւոն ։ "Աղօթս արարէք վասն իմ, զի 'ի բաց արասցէ յինէն զգորտս ։ Ասէ ցնա Մովսէս ։ ժամ դիր առ Ե՞րբ խնդրեսցուք, զի թափիցի գորտդ 'ի քէն և 'ի զօրաց քոց ,, ։ Եւ այս, զի մի կարծիցէ նա՝ թէ իբրու դէպ ինչ կամ պատահար կամ արուեստդիտութեամբն կախարդաց եղև նմա հանդիստ, եդ նմա սահման, զի ցուցցէ նմա թէ հարուածք և բժշկութիւն 'ի ձեռս նորա եկին ։ սոյնպէս և այլ հարուածքն՝ որ եկին 'ի վերայ նորա, դնէր նա ժամ յասել իւրում ։ "Առ վաղիւ եղիցի նշանս այս ,, ։ իբր ոք զի ասէ՝ թէ կարող իցես դու օգնել անձին քում, 'ի ձեռն կախարդացն երթայք հնարեցէք և արգելէք՝ զի մի եկեսցէ ։ կամ խափանեցէք յորժամ եկեսցեն հարուածքն, զոր ածէ Մովսէս 'ի վերայ ձեր ։ Թոյլ ետ նոցա կենդանի գորտովք, արգել և յամօթ արար մեռեալ մարմնով զկենդանի կախարդսն ։ տանջեցան կեղովն, և դարձան պատերազմ արարին անդ ։

Յետ երից տանջանաց խոստովան եղեն և աստ ։ Յետ երից տանջանաց և մատնցոյց արարին ։ անդ կարասեաւ իւրեանց, և աստ անձամբք իւրեանց ։

Այլ որպէս և նկարիչք՝ զկերպարանս և զնշմարանս իրացն ցուցանէին կատարգքն. այլ տանջեցան նոքա կեղովն, զի կերպարանօք և նշմարանօք 'ի ճշմարտութենէ զայլս մի մոլորեցուսցեն ։ Եւ յորժամ խոստովան լինիցին և պարտաւորեսցին, երևեսցի յաղթութիւն ճշմարտութեան՝ իբրև առաքինանայր 'ի մէջ բանից նոցա ։ Եւ եթէ արասցեն դարձեալ և զայս ևս ըստ սովորութեան իւրեանց ընդդէմ Մովսիսի, ահա այնուհետև նկարեսցին զյաղթութիւն ճշմարտութեան 'ի մարմինս իւրեանց ։ Զի եթէ Մովսիսի նմանէին նոքա, ահաւասիկ ինքն Մովսէս հարկանէր զնոսա 'ի խաղաւարտս կեղոյ. և յորժամ խնդրէին նոքա առնել ընդդէմ Մովսիսի, նկարէին դարձեալ զգործն նորա 'ի մարմինս իւրեանց. զի գործովն Մովսիսի տանջեսցին, և իւրեանց գործով յանդիմանեալ կշտամբեսցին ։ Զի եթէ ընդ Մովսիսի առնէին նոքա, զոր օրինակ հար և չարչարեաց զնոսա Մովսէս, նոյնպէս և նոքա չարչարէին զՄովսէս կեղովն ։ Այլ քանզի ոչ ուսան նոքա յառաջինսն զոր արարին, եթէ ընդդէմ անձանց արարին զայն, արար զայս զմի զկեղոյս՝ զի ուսցին միանգամայն զերկոսին ։ Զի եթէ առնիցեն իբրև զնա զկեղսն 'ի մարմինս իւրեանց, տանջեն զանձինս իւրեանց ձեռօք իւրեանց առաջի ամենայն եգիպտացւոցն ։ Եւ եթէ ուսցին՝ թէ չէր արժան առնել զայս՝ որպէս և նայն, ուսցին եթէ չարաչար գործեցին զոր գործեցինն ընդդէմ առաջնոյն. զի զոր օրինակ այս հարուածք էին մարմնոց նոցա, սոյնպէս և առաջինքն հարուածք էին եղբարցն իւրեանց ։ Եւ զի ոչ խնայեցին նոքա 'ի վերայ անդամոց իւրեանց՝ չարչարեաց զնոսա 'ի մարմինս իւրեանց, զի գիտասցեն եթէ ցաւս 'ի վերայ ցաւոց յաւելուին բժշկութեան իւրեանց որդւոց ազգին իւրեանց ։

Արդ չարչարեաց զչարչարիչսն, զի մի խստացուսցեն զսիրտս երկրին եգիպտացւոց, զի մի դարձեալ տանջեսցին. "Արարին, ասէ, նոքա որպէս և Մովսէսն". և ոչ եթէ ընդդէմ Մովսիսի. վասն այնորիկ ոչ սատակեաց զնոսա այն՝ որ խռովեաց զնոսա 'ի ձեռն կեղոյն ։ Արդ ընդ նմին իսկ ընդ Մովսիսի հար-

կանէին և նոքա ևս զերկիրն եգիպտացւոց. զի կողմն է նա նենգաւոր յայլ բաժանեալ, և ընդ անձն իւր չէ միաբան։ Եւ զի դարձուցանէին զջուրն յարիւն և չարչարէին զերկիրն եգիպտացւոց, զնոյն արիւն ընդէ՞ր ոչ դարձուցանէին 'ի ջուր և տրտմեցուցանէին զՄովսէս։

Սակայն Փարաւոն իբրև ետես՝ եթէ ոչ են կարող կախարդքն լուծանել արձակել զոր ինչ Մովսէսն կապէր, 'ի Մովսէս ապաստան լինէր 'ի նեղութեան իւրում. քանզի տեղեակ էր և գիտէր՝ թէ այն որ հարկանէ, նոյն և բժշկէ։ Բայց նոքա ոչ եթէ արդարեւ ճշմարիտ փոփոխէին զարարածսն նման Մովսիսի, այլ առ աչօք առնէին և մոլորեցուցանէին զտեսօղս. վասն այսորիկ պատուիրեաց Մովսէս յասել իւրում. ասէ "Մի եղիցի 'ի միջի քում կախարդ". և այն՝ որ առ աչօք առնիցէ։ Զի եթէ զյայտնին և զդիւրին երազն Փարաւոնի նոքա ոչ ծանեան, զիա՞րդ կարէին նոքա փոփոխել զարարածս։

Արդ այն զի խստացաւ Փարաւոն 'ի սկիզբն հարուածոցն, իբրև զայն իսկ է՝ որ եղև 'ի կատարած հարուածոց։ Քանզի ոչ չարչարեցին զնա հարուածք գետոյն՝ խստացաւ նա, զի եթէ էր հաւանեցուցեալ զնա առաջնոյն, խափանեալ լինէին ևս այն՝ որ վասն վրիժուց խնդրելոյ ապստամբութեան նորա և զօրացն իւրոց պատրաստեալ էին։ Եւ դարձեալ, զի 'ի խրատելն նոցա, Իսրայէլ իմաստնասցի. իբրև զայն զի ասէ. անզգամ տանջի և իմաստուն խրատի։ "Ես, ասէ, խստացուցի զնա հակառակութեամբ, զի 'ի նմա ցուցից զզօրութիւն իմ"։ Բայց զի ոչ կաղացոյց զազատութիւն նորա, յայտ արար յայնմիկ՝ զի յորժամ ստիպէին 'ի վերայ նորա հարուածքն, խոստանայր արձակել. իբրև անցանէին հարուածքն, ապստամբ լինէր և դառնայր անդրէն 'ի նոյն յառաջին յամառութիւն։ Զի այն՝ որ իշխան է փոփոխել զբնութիւնս, զազատութիւն փոփոխել ոչ կամեցաւ վասն ողորմութեան իւրոյ։ Բայց թէպէտ և թոյլ տայ վասն ողորմութեան իւրոյ, սակայն ցուցանէ ընդ ժամանակս ժամանակս զստուգութիւն իւր. զի 'ի զեղուլ չափոյն մեղաց տանն Նոյի, ջուրքն որ 'ի բարձանց և 'ի խորոց՝ որ-

պէս 'ի մէջ երկուց ձեռաց հեղձոյց զնոսա. և 'ի վե-
րայ սոդոմացւոցն հուր տեղեաց. և ամենայն գար 'ի կորգի իւրում. և վասն խրատու Նաբուքոդոնոսոր արքայի սիրտ գազանի տուաւ նմա ։

Որդ ո՞չ է եպերեալ ստուգութ՟ի նորա. զի եթէ նա խստացոյց զնա, ընդէ՞ր դատի զնա. "Ես, ասէ, խստացուցից զՓարաւոն,,։ Յետ եւթն հարուածոց ասացաւ այս. զի եթէ էր յառաջագոյն ասացեալ նախ քան զհարուածսն՝ և ապա էր խստացեալ, յայտ էր թէ նա խստացուցանէր զազատութ՟ի նորա հայհոյել ընդդէմ նորա ։ Զի եթէ անցին եւթն հարուածքն, և ապա ասաց "Ես խստացուցի զնա,,, յայտ եղև՝ զի 'ի պատճառս անփոյթ առնելոյն որ 'ի նմանէ՝ խստացաւ սիրտ նորա ։ Զի եթէ յորէ յառաջնմէ իբրև խստացաւն, և խնդրեալ էր զվրէժն 'ի նմանէ, ոչ ևս յաւելոյր նա և այլ ևս հայհոյել ։ "Ես, ասէ, խստացուցի զնա,,. այս ինքն զի թոյլ ետ նմա. յայնմիկ՝ զի լսէր նա աղօթիցն Մովսէսի, և անցուցանէր զհարկութ՟ի յերկրէ նորա ։

Բայց որ զկնին է այսր՝ նա յայտ առնէ զառաջինն ։ "Թոյլ ետու ես նմա, ասէ, զի ցուցից 'ի նմա զզօրութ՟ի իմ և զփառս իմ,,. բայց զօրութ՟ի նորա վասն սքանչելեաց նորա, և փառք նորա վասն համբերութեան նորա. կամ ես խստացուցի զնա կալ և հակառակել ։ Ոչ եթէ նա խստացոյց զնա, զի մի հաւանիցի և առցէ յանձն. այլ զի յայտ արասցէ՝ զի ոչ եթէ հակառակութ՟ կամ զօրութ՟ կարող եղև հանդարտել դիմակալ լինել նմա Փարաւոն՝ զի մի արձակեսցէ զժողովուրդն, այլ ոչ կամեցաւ՝ զի վարեսցէ բռնութ՟ զազատութիւն նորա և զյամառոտ կամս նորա ։ Զի եթէ ոչ էր ասացեալ գրոց՝ ես խըստացուցի զնա, կարծիք իմն էին՝ թէ իբրև այլով իմն զօրութ՟ հակառակեաց և եկաց ընդդէմ ա՟յ. և զի գիտաց թէ ոչ էր արժանի՝ թէ եղիցի 'ի վերայ նորա ողորմութիւն, արդ "Ես խստացուցի զնա, ասէ, զի 'ի նմա ցուցից զզօրութ՟ի իմ և զփառս իմ,, ։

Բայց յայտ առնէ, զի այս որ եղեն՝ զի սքանչելիքն յաճախեցին, և հեթանոսք լուիցեն և փութացեալ տագնապեսցին, և ժողովուրդն մխիթարեալ

քաջալերեսցի. զի "Քարոզեսցի, ասէ, անուն իմ ընդ ամենայն երկիր". բայց քարոզեսցի, որպէս զի հաւատալի եղիցի: Արդ յայտ արար՝ թէ վասն այսորիկ անփոյթ արար և թոյլ ետ նա Փարաւոնի, որպէս զի եղիցին և կախարդքն ևս քարոզք անուան նորա յաղաղակել յասել իւրեանց. "Ձեռն ա̃յ է այս". զի 'ի լսելն հեթանոսաց՝ եթէ ձեռն ա̃յ՝ որ ընդ ժողովրդեանն էր, սատակեաց զկախարդսն: "Լուաք մեք, ասէ, զհամբաւ և զլուր ձեր, և խռովեալ դողացին սիրտք մեր":

Փոխանակ այնր՝ զի ասէ "Գարին ջովացեալ էր, և կտաւն 'ի ծաղկի էր", հեբրայեցի ասէ. "Գարին հասեալ պարարեալ էր, և կտաւն ընտացեալ էր": "Բայց ցորեանն և հաճարն ոչ հարաւ, զի ոչ էր բուսեալ". քանզի անագանավար էին: Փոխանակ այնր՝ զի ասէ "Հան ա̃ծ հողմ խորշակի, և յարոյց զմարախն", հեբրայեցի "Հողմ յարևելից" ասէ: Եւ փոխանակ այնր՝ զի ասէ "Մի՛ մնասցէ և մի՛ մի եղունգն", հեբրայեցի "Եւ մի՛ կճղակ մի" ասէ:

Բայց դարձեալ ասի. զոր օրինակ զգուշացեալ էր Փարաւոն 'ի ժողովուրդ անդ, և տանջէր չարչարէր զնա. զի ոչ ելանել յերկրէ իւրմէ թոյլ տայր նմա, և ոչ հանգչել 'ի մէջ աշխարհի իւրում տայր նմա: Սոյնպէս և արար նմա ստուգութիւն, զի զգուշացեալ էր 'ի նմա զի մի՛ տացէ 'ի ձեռս զժողովուրդն. և զի հարկանէր զնա, զի թոյլ տացէ ժողովրդեանն. քանզի մի պատիժ պատուհասի փոքր և սակաւ էր խրատել զՓարաւոն, հար զնոսա տասնհարուածեայ գաւազանաւն, այնոքիկ՝ որ հարիւր հարուածովք ոչ էին կարօղ հատուցանել զփոխարէնս զոր պարտ էին նոցա վասն նոցա: Եւ քանզի առաջին հարուածովքն մատաղելով մատաղեցոյց նա զՓարաւոն, որպէս զի կակղասցի նա ընդունել զխրատ նորա: Ի ժամանակի իբրև արար նա զԱհարոն միջնորդ 'ի մէջ Մովսէսի և Փարաւոնի, որպէս մարգարէ 'ի մէջ ա̃յ և մարդկան. և իբրև սկսաւ նա խստանալ և գալ, սկսաւ Մովսէս աստուածն Փարաւոնի երևել նշանօք իւրովք:

"Եւ ցանեաց, ասէ, Մովսէս զմոխիրն ընդ եր-

կինս 'ի վեր, և եղիցի փոշի երևիլ, ասէ, այս ինքն դալուկն, և հասցի 'ի վերայ ամենայն մարդոյ կեղ, և խաղաւարտք եռասցեն„։ Եւ իբրև տեսին կախարդքն եթէ տանջեցան նոքա 'ի մէջ երկրին եգիպտացւոց, ասեն. “Ձեռն ա̄յ է այս„։ Զի որչափ առաջին հարուածովքն, որչափ և է՝ սաստկացեալ հակառակէին. այլ և յորժամ հայեցեալ երևեցաւ 'ի վերայ նոցա աստուածն եգիպտացւոցն, եկին և ժողովեցան առ միմեանս ահիւ և երկիւղիւ։ Վասն այսորիկ և Փարաւոն իբրև ետես զնոսա՝ թէ տկարացան լքան ձեռք նորա, և լուծան անկան ջիլք բազկաց նորա 'ի բռնութ̄է գործոյն. և զի գիտաց Փարաւոն թէ հաստատեցան կացին 'ի վերայ նորա չարիքն հանել արձակել զորդիսն Յակովբու 'ի ծառայութենէ անտի հնազանդութ̄է նորա, ցոյց նա Մովսիսիւ 'ի դէմս ցասման յասել իւրում ցնա. “Այլ մի ևս յաւելցես դու անկանել յակն իմ. զի յաւուր յորում երևեսցիս դու ինձ, նոյն օրին մեռցիս„։ Եւ զի անց նա զսահմանաւ, և ետ վճիռ մահու 'ի վերայ ա̄յն՝ որ տուաւ նմա, սատակեցան և ամենայն երկիրն եգիպտացւոց. զի անունն ա̄յ որ կոչեցեալ էր 'ի վերայ Մովսիսի, անմահ էր։ Եւ զի վճիռ մահու ետ 'ի վերայ նորա, յայնժամ եկն եհաս 'ի վերայ նորա պատիժք մահու։

ԳԼՈՒԽ Գ

“ԱՄԻՍՍ այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց„. զի 'ի նմա արար ա̄ծ փրկութիւն հեթանոսաց և ժողովրդեան. ժողովրդեանն 'ի ձեռն Մովսիսի, և հեթանոսաց 'ի ձեռն մահուն կենարարին։ Ի նմա հանգեան աշխատեալքն՝ որ վաստակէին առանց վարձուց. և ազատեցան նոքա 'ի խիստ տէրութ̄է անտի. և 'ի նմա ազատեցան արարածք և բնակիչք նորա 'ի հնազանդութ̄է անտի սատանայի։ Ի նմա ելին արգելեալքն 'ի հանգիստ, և 'ի նմա զգեցան մերկացեալքն ըզփառս։ Ի նմա արձակեցան կապեալք յաւերակ գբոյ անտի, և 'ի նմա մեծացան աղքատք և ստացան զոր

ինչ ոչ ունէին ։ Ի նմա հորդեցաւ ճանապարհ յանապատ անդ, և 'ի նմա արձակեցաւ արգելեալ ճանապարհն 'ի դրախտն փափկութե՟ ։ Ի նմա արգելաւ գառն փրկութե՟, և 'ի նմա արգելաւ գառնն ճշմարտութեան 'ի յարգանդ կուսին ։ Ի նմա յաղթեաց լոյս, և 'ի նմա ծագեաց լոյսն մեր ։

Եւ զի ասէ “Ընդ երեկս զենցեն„ ․ 'ի մէջ երկուց լուսաւորաց, 'ի մտանել արեւու և 'ի ծագել լուսնի ․ որպէս զի երբ իցէ՝ հասցէ լոյս 'ի լոյս, և մի՛ տիրեսցէ խաւար 'ի մահու անդ նորա ։ Բայց դարձեալ զի ասէ՝ ընդ արեւուն մտանել սպանցեն զնա, զի հանդերձեալ էր արեւն 'ի մառն դառնալ ․ զի ժամ նորա 'ի վերայ նորա մարգարէացաւ, իբրև զայն զվրան ժամուն ։ Մտին նոքա յԵգիպտոս իբրև յերկիր խաւարին, և իբրև 'ի խաւարի և 'ի գիշերի բնակեալ էին 'ի նմա ․ սոյնպէս և 'ի գիշերի ելին նոքա անտի, որպէս և գրեալ է ․ ասէ ․ “Այս գիշեր յառաջապահ պահեստ տեառն„ ։ Եւ զի ասէ “Առցեն յարենէ անտի, և նշանեսցեն 'ի վերայ սեմոցն չորեցունց„ ․ զնշան խաչին դրոշմէ մեզ՝ որ 'ի բարձրութեան և 'ի խոնարհութեան, յաջ և յահեակ ։ Եւ զի ասէ “Խորովեալ հրով„ ․ խորհուրդ կենդանի հացին զոր առնումք մեք ․ և զի մի՛ յամիցեն յեփելն նորա, և զի բաղարջ կերիցեն, զի յիշեսցեն զշտապ տագնապի իւրեանց ․ զի ոչ ետուն նոցա թոյլ խմորել զհայսն իւրեանց, զի նկարիցէ զնշան նորոգութե՟ եկեղեցւոյ իւրոյ ։ Քանզի թուեաւ տարածեցաւ հին խմորն Եւայի, որ հնայոյց զամենայն ․ եկն եհաս խորհուրդ բաղարջին, զի նորոգեսցէ զամենայն ։ Եւ զի ասէ “Եղէգ կերիցեն„ ․ զի յիշեսցեն զդառնութի՟ եգիպտացւոցն հնազանդեցուցչացն իւրեանց ։ “Դառնացուցանէին, ասէ, և կեղէին զկեանս նոցա խիստ հնազանդութբ՟ն„ ։ Եւ զի ասէ “Ոսկր ինչ մի՛ թողուցուք„, զի մի՛ արհամարհեալ եղիցի նա իբրև ըզկերակուր ինչ դոյզն և անցաւոր, զի եղիցի քեզ իբրև զդեղ կենաց ։ Եւ զի մի՛ ոք կերիցէ զնա իբրև նստցի, խորհուրդ մարմնոյ նորա սրբոյ ․ զի եթէ սրովբէք փութացեալ տագնապեալ ահիւ և երկեղիւ կան առաջի նորա, իսկ ո՞վ ուտէր զնա 'ի նստելեաց ։ Եւ զի

ասէ "Գօտիք ընդ մէջ ,, • փութապէս , ասէ , որպէս մարդք պատրաստեալ են ելանել երթալ ճանապարհ , 'ի դրօշմելն նորա զայն՝ զի ասէ "Եղիցին մէջք ձեր պնդեալ ,, , այլովք հանդերձ ։ Եւ զի ասէ "Ցուպք 'ի ձեռին ,, • խաչք իւրեանց 'ի վերայ ուսոց իւրեանց ։ Եւ զի ասէ " Ոսկր մի բեկանիցէք ,, • այն իսկ է զի բեկլին զբարձս աւազակացն , և զնորայն ոչ բեկլին ։ Եւ զի ասէ "Անհետք առնիջիք զամենայն խմոր 'ի տանց ձերոց ,, , այս ինքն զեգիպտացւոց , այն իսկ է՝ զի ասէ "Արասցուք տօնս մի 'ի խմորս հինս , և մի 'ի խմորս չարութե և անօրէնութեց , այլ յանխմոր սուրբութեց և ողորմութեց և ճշմարտութեց ,, ։ Եւ "Ամենայն անձն որ կերիցէ հաց 'ի հայսէ խմորելոյ , սատակեսցի անձն այն յորդւոց Իսրայէլի 'ի բնակաց և յեկաց ,, • հերքրայեցի՝ "Հրէից և 'ի պանդխտաց ,, ասէ ։

Փրկութի մեծ Իսրայէլի ելքն իւր էին յերկրէն եգիպտացւոց • և ծանր պարծանք նորա այն են՝ արիւնն որ նշանեցաւ 'ի վերայ դրանց նոցա • և փակեալ դրամբք իւրեանց՝ ամենայն մարդ 'ի ներքս 'ի տան իւրում քահանայ անձին իւրում լինէր • և ոչ Ղևի պիտոյ եղև նոց և ոչ Ահարոն , ոչ քահանայութիւն և ոչ պաշտօն և ոչ եւթնօրեայ աշտանակն և այլ պահպանութիք օրինացն ։ Եւ եթէ նոց՝ զի խորհուրդ էր՝ այսպիսի կատարումն դրոշմեցաւ նոց , առ ճշմարտութին որչափ ևս առաւել • զի նոց գառն սպանեալ , և աստ մարմին կենդանի ։ Այլ ոչ եթէ գառն մաքեայ զօրագոյն ինչ էր քան զամենայն նշանս , և վասն այսորիկ նովաւ փրկեցաւ ժողովուրդն • այլ զօրագոյն է նա , զի եղև նա օրինակ հզօրին ։ Սոյնպէս և գաւազանն որ փրկեաց , և փայտըն որ քաղցրացոյց զջուրն դառնութե , և օձն պղնձի որ բժշկեաց զհարուածս օձիցն ։

Իսկ զի մի կարծիցեն՝ թէ սաքին իրքս այս ընտրեալ և սուրբ են , անիծեալ օձիւն արար սքանչելիս յառաջագոյն առաջի Փարաւոնի ։ Զի նոյն իսկ զայն գաւազան զսուրբն՝ արար օձ անիծեալ , խորհուրդ սրբոյն այնորիկ՝ որ առն զմեղս բազմաց յանձն իւր • զի քննեսցեն և գիտասցեն՝ թէ այս անիծեալ զիարդ

եղև 'ի փրկութի՟, եթէ ոչ խորհուրդ ինչ օրհնելոյ հանդերձեալ էր նա ։ Զի եթէ էր գնացեալ նորա ոսկւոյ՝ ասէին, վասն զի պատուական է. և հրոյ՝ զի ահագին է. այլ գնաց նա 'ի պէտս պիտոյից անխ-ծեալ օձիւն և անարգ մորենոյն և անքառաչ գա-ւամբն, որ զվրէժ անձին իւրոյ ոչ կարէր խնդրել ։

Բայց տես դու զսքանչելիս, զոր արար Մովսէս հրով և յիրս ահագինս, որ կարէն խնդրել զվրէժ անձանց իւրեանց. և ժողովրդեանն՝ զի խնդրեսցէ առցէ զվրէժ՝ ոչ կարաց, մինչև առ խնդրեաց զվրէժ ժողովրդեանն գաւամբն՝ որ զանձին իւրոյ զվրէժ ոչ կարէր խնդրել ։ Զի այն խնհարուածեալ գաւա-զանն զխիստ պարանոյն նորա ոչ խոնարհեցոյց, 'ի սատակել անդրանկացն իւրեանց լուծան լքան ձեռք նորա, զի Իսրայէլ ապրիցէ, և ա՟ծ բարձրասցի ։ Զի զոր օրինակ նեղեաց զկախարդսն նորա խորհուրդ խաչին խոստովան լինել նոցա յասել իւրեանց՝ թէ “Ձեռն ա՟յ է”, սոյնպէս հնազանդեցաւ և նա 'ի զե-նուլ անդ գառինն, որ նկարէր զխորհուրդ կատա-րեալ լրմանն. զի զԻսրայէլ անդրանիկ ազատեսցէ 'ի հնազանդութե՟ անտի ծառայութե՟ նորա ։ Այլ ոչ սրբեցաւ Եգիպտոս տասն նշանօքն, մինչև զի գառն զենաւ. զոր օրինակ և ոչ Ադամ փրկեցաւ քարոզու-թե՟քն մարգարէիցն, մինչև զի գառն Ճշմարտութե՟ 'ի վերայ խաչափայտին կախեցաւ ։

“Եւ որդիքն Իսրայէլի արարին, ասէ, ըստ բա-նիցն Մովսիսի, և խնդրեցին նոքա յեգիպտացւոց անօթս զհանդերձս զարդու զզարդ ոսկւոյ և զզարդ արծաթոյ, և կապուտ կողոպուտ արարին նոքա զե-գիպտացիսն”։ Զի եթէ այս կամք էին ա՟յ, նախ Մովսիսի իսկ արժան էր կողոպտել յափշտակել զե-գիպտացիսն. այլ Մովսէս՝ զի ոչ ծառայեաց և աշ-խատեցաւ յաղիւսարկի անդ, վարձս կողոպտոյ նա ոչ առ. բայց առ նա զոսկերսն Յովսէփու, զի յամօթ-արասցէն հաւատքն մեռելոյն զթերահաւատութիւնս կենդանեաց. զի մեռեալն փութայր մտանել յայն երկիր պարգևաց, և կենդանիքն փութային փախչել յերկրէ անտի պարգևաց ։ Արդ առ նա զոսկերսն Յովսէփու, զի երդմնեցոյց զնոսա. և կշտամբեաց

նոքօք զորդի ազգի ժողովրդեան իւրոյ, որ պոռնկեցան ընդ դստերսն Մադիանացւոց ։

Զգուշացեալ էր ա̃ծ 'ի միտս ժողովրդեանն. վասն այսորիկ որչափ զեգիպտացիսն տանջէր և չարչարէր, նոցա թշնամութ̃ի յաճախէր առ հեբրայեցիսն. և որքան թշնամութ̃ին արտաքոյ յաճախէր և բազմանայր, խէթ և խիղճ 'ի ներքոյ սաստկացեալ զօրանայր ։ Այլ քանզի ոչ էր բաւական այս միայն՝ զի նեղեսցէ զնոսա ելանել, դարձաւ ետ զնոսա յողորմութ̃ի, զի ևս քան զևս սաստկացեալ զօրասցի թշնամութ̃ին. զի կապուտ կողոպուտ առնէին զքանչելի գանձսն եգիպտացւոց և ելանէին ։ Զի թէպէտ և վասն երկիւղի ոչ ելցեն, սակայն գոնեայ վասն ձրի գանձուցն հարկ լիցի նոցա ելանել. վասն այսորիկ դարձեալ միւսանգամ անդրէն յերկիրն եգիպտացւոց մի՛ մտցեն ։ Կամ վասն զի սիրէին, զի ըմբռշխնեսցեն զոր ինչ առինն. կամ վասն զի երկնչէին, զի մի՛ տուժիցին զոր ինչ բարձին անտի, վիհ մեծ արար ա̃ծ 'ի մէջ իսրայելացւոցն և 'ի մէջ եգիպտացւոցն ։ Թէպէտ և նոքա զվարձս վաստակոց իւրեանց և զգինս կենաց որդւոց իւրեանց առին և ելին արդարութ̃բ, սակայն զայն զոր խնդրեցինն և առին 'ի զարդու՝ գողութ̃ի եղև նոցա. և այնոքիկ որ ետուն 'ի զարդու, դարձաւ եղև նոցա խաբէութ̃ի ։ Արդ այն՝ որ արար զխաբէութիւն, փախչելով փութայր փախչել. և այն՝ որ ծաղրն եղև, սպառնութ̃ին մերձ էր 'ի բերան նորա ։

Արդ որչափ և փախուստն ժողովրդեանն հեռանայր, սպառնութ̃ի եգիպտացւոցն զօրանայր. արդ 'ի մէջ փախստեանն և սպառնութ̃են արար ա̃ծ վիհ 'ի մէջ իսրայելացւոցն և եգիպտացւոցն, լինել օգնական անապատն անապատու̃ իւրով, և սովն խղճիւ իւրով, ծարաւն նեղութ̃ իւրով. մանաւանդ ծովն պարիսպ՝ տալ տեղի առաջի երեսաց նորա ոչ առնոյր յանձն ։ Եւ այս ամենայն ոչ եթէ զի մի՛ եկեսցէ եգիպտոս զկնի նոցա, այլ զի նոքա մի՛ դարձցին անդրէն յեգիպտոս ։ Բայց իբրև տեսին՝ թէ ոչ կարեն մարմինք նոցա հատանել անցանել զայս ամենայն պարիսպս ամրացեալս, և դառնալ միւսանգամ յե-

գիպտոս, փոխանակ ընդ մարմնոյ նոցա՝ դարձան սիրտք իւրեանց: Զի գիտակ և խելամուտ էին այսմիկ, զի եթէ դառնային, ծովն այն՝ որ իբրև զբարեկամս գիտաց զնոսա, յանցանել անդ նոցա՝ իբրև զթշնամիս ճանաչէր զնոսա, թէ դառնայցեն: Արդ իբրև ետես Մովսէս՝ թէ զօրագոյն է զէնն զոր ետ ա̃ծութի̃ն, և կարող է բռնութի̃ն Փարաւոնի հնազանդել նովաւ, և խստութի̃ն Իսրայէլի զի կակղասցի նովաւ, դարձաւ նա տեսանել թէ իցէ պատերազմող զօրագոյն քան զնա, զի զգեցցի նա զզէնն նորա:

Այլ յայնմիկ՝ զի ասէ "Առաքեա դու յոյր ձեռն առաքելոց ես„. զի լաւ թուէր Մովսիսի՝ փոխանակ թէ ինքն եղիցի փրկիչ, թէ այնու որ զօրագոյն իցէ քան զնա՝ փրկեսցի ժողովուրդն. որպէս զի եղիցի փրկութի̃ն կատարեալ այնմիկ՝ որ նեղեցաւ նեղութի̃ կատարեալ: Սակայն ա̃ծ՝ ոչ եթէ զօրութ̃բ զօրաւորաց տուեալ լինի յաղթութի̃ նորա, այլ տկարութեամբ տկարաց քարոզի առաքինութի̃ նորա. զի ոչ եթէ պատուական ամանովք արբուցանէ ա̃ծ զդեղ կենաց, զի մի թողուցուն ըմպօղքն զըմպելին և զարմասցին ընդ անօթմն. և ոչ եթէ կշռաւոր մեծամեծ առամբք ցուցանէ զփրկութիւն իւր, զի մի թողուցուն զյաղթութի̃ և զարմասցին ընդ երկարս հասակաց: Այլ ետ պտուղ կենարար յանարգ արմատոյ, զի երկպատիկ յաճախեսցեն բազմասցին փառք նորա, թէ որպիսի մեծութիւն յորպիսւոյ գանձուց, և որպիսի սքանչելի յորպիսւոյ տկարութենէ: Զի թագաւորաց յորժամ փառաւորեալ լինին հրեշտակք իւրեանց, նոքին իսկ թագաւորքն մեծացեալ բարձրանան նոքօք. այլ ա̃ծ զնոյն իսկ զայն զոր առաքէն՝ կամի մեծացուցանել, և ընդ նմա և 'ի ձեռն նորա և զայնոսիկ ևս՝ առ որս առաքի նա:

Արդ եթէ տկար ես դու, ով Մովսէս, ահա տկարութի̃դ քո մեծացուցանէ զքեզ, և զժողովուրդդ քո և զթշնամիսն քո զարմացուցանէ. զի ա̃ծն քո փառաւորեալ գովէ՝ զի դու մեծացեալ բարձրանաս: Զի կակազոտ ծանրախօսն՝ որ ոչ կարէր խօսել զճշմարտութի̃ առաջի իւրոյ, խօսեցան նշանքն և սքանչելիքն փոխանակ ընդ նորա զփրկութիւնն՝ որ

առաքեցաւ 'ի ձեռն նորա ։ Եւ իբրև լեզուն թոթով 'ի բերան նորա, խօսէր գաւազանն լռութբ՝ զոր ունէր 'ի ձեռին իւրում. զի յորժամ լեզուն նորա հատկոտոր էր ձայնիւ, գաւազան նորա մեծ էր գործով. զի բան բերանոյ Ահարոնի էր, բայց զգործ բանին գաւազանն ցուցանէր ։ Զի յորժամ արուեստգիտութի բանիցն պատերազմէր, լեզուն Ահարոնի պարտաւորէր զնա. և յորժամ թերահաւատութին մարտնչէր, գաւազանն նշանօքն կշտամբէր զնա ։

Սակայն զնոյն իսկ զգաւազանն յերկրին եգիպտացւոց Ահարոն ունէր 'ի ձեռին. որպէս զի եղիցի որոշեալ մեկնեալ և զատեալ պատիւ փառաց այնորիկ՝ որ զգեցեալ էր զզէնն, քան զայն՝ որ բարձեալ ունէր զզէնն. զի Ահարոն՝ մարգարէ էր Մովսիսի և կապարճակիր ։ Եւ այս են զարմանք սքանչելեաց, զի ամենայն պատերազմօղք յորժամ զգեցեալ են զզէնս իւրեանց՝ պատերազմին. բայց Մովսէս յորժամ այլք բարձեալ ունէին զզէնն նորա՝ մարտնչէր. այլ ոչ եթէ նա մարտնչէր, այլ զէնն մարտնչէր ընդ նորա. որպէս զի յայտնի եղիցի՝ թէ որչափ ինչ պատուական էր Մովսէս, զի եղբայրն նորա խօսէր ընդ նորա, և գաւազանն նորա մարտնչէր ընդ նորա ։ Այն՝ զի ասաց "Առաքեաց յոյր ձեռն առաքելոց ես դու". և այսպէս կարծեաց նա՝ թէ արք հզօրք պիտոյ իցեն մյ. ուսոյց նմա՝ թէ և ոչ զայս՝ զոր կարէր Մովսէս առնել, ետ նմա առնել ։ Զի ամբառնալն զգաւազանն իւր և հարկանել, և առնուլ հող և ցանել ընդ երկինս կարօղ էր նա ։ Թէպէտ և կարօղ էր, և ոչ որովք կարողս էր՝ աշխատ ինչ արար զնա. զի յայտ արասցէ նմա՝ թէ ինքնին իսկ քնարն յանձնէ իւրմէ երգեաց աղեօք իւրովք փրկութի իսրայելացւոց ։

Այլ քանզի և ոչ եթէ ամօթ ինչ էր նմա բառնալ զխորհուրդս տեառն իւրոյ, յետ ելից նոցա յերկրէն եգիպտացւոց Ահարոն այլ 'ի գաւազանն ոչ մերձեցաւ. որպէս զի յայտնի եղիցի՝ թէ 'ի զարդ երկուց եղբարցն տուաւ գաւազանն՝ խորհուրդ խաչին և փայտին միածնին ։ Այլ բարձեալ ունէր զնա Ահարոն յերկրին եգիպտացւոց, զի ծանիցեն եգիպտացիքն՝ թէ որչափ պատուական է Մովսէս քան զԱ-

Հարոն ։ Բայց բարձեալ ունէր զնա Մովսէս յանապատի անդ , զի գիտասցէ Իսրայէլ՝ թէ որչափ պատուական է որդի քան զծառայ ։ Զի եթէ Ահարոն յերկրին եգիպտացւոց իբրև հրամանաւ Մովսէսի գնայր՝ մեծացեալ բարձրանայր նշանօքն զոր առնէր , որչափ ևս առաւել բարձրացեալ մեծանայր Մովսէս , զի զնշան որդւոյ բարձեալ ունէր ։ Արդ ոչ հար Մովսէս նովաւ զգետն փոքր յերկրին եգիպտացւոց , զի հանդերձեալ էր նա հարկանել նովաւ զծովն մեծ ․ և ոչ համբարձ զնա 'ի վերայ ջրշեղջաց և ջրժողովից , զի հանդերձեալ էր նա համբառնալ զնա 'ի վերայ վիմին , զի բղխեսցէ գետս ։

Արդ տես դու , զի ած միով յայսցանէ՝ զոր և խօսեցաւ Մովսէս , ոչ բարկացաւ ․ բայց յայնմիկ զի ասաց՝ բայ “Առաքեաց յոյր ձեռն առաքելոցն ես „ ․ զի զզօրութիւն զոր ընտրեաց Մովսէս , տկարութիւն զայ ցուցանէր ։ Զի եթէ հզօրոք կարող է ած փըրկել , ով Մովսէս , դու զիա՞րդ տեսեր զմորենին տըկար , զի ոչ այրէր 'ի սուրբ հրոյ անտի ։ Այլ այն՝ որ ետ մորենւոյն զի մի՛ վնասիցի 'ի հրոյ անտի , մեծասցի և փառաւորեսցի քան զամենայն ծառս փառաւորեալս , նա ետ և քեզ , զի այսու առաքինութեամբ մեծասցիս և փառաւորեսցիս քան զամենայն պնդակազմ հզօրս ։ Եւ ընդէ՞ր բարկացաւ 'ի վերայ նորա ած ։ Այլ մինչև առաքեալ էր ղյ զծանրախօսն վասն փրկութե , ետ նմա օրինակ 'ի լուռ մորենին , զի ոչ վնասեալ լինէր նա 'ի խօսուն հրոյ անտի ։ Զի զոր օրինակ հաղորդ եղև մորենին ըստ սիրոյ հրոյն՝ զի արար զնա հաղորդ զօրութե իւրում , սոյնպէս հաղորդեաց զնա ընդ ինքն աստուածութին 'ի մէջ մորենւոյն զայն՝ զոր ասաց արտաքոյ քան ըզմորենին ․ “Առաքեաց յորս ձեռն առաքելոցն ես „ ։ Եւ այս յետ բազում նշանացն՝ զոր ցոյց նմա , ասաց “Առաքեա յոր ձեռն առաքելոցն ես „ ։ Արդ յայտ արար նմա , զի ոչ եթէ նովաւ ինչ կարօտեալ էր ած , այլ զի ինքն Մովսէս մեծասցի , և եղիցի նա ած՝ այն որ բնութբ իւրով ոչ էր ած ․ այս է ած մեր՝ որ նեղէ սիրովն իւրով զմահկանացուս , զի եղիցին ածք ։

Զոր թուեցաւ նմա վասն Մովսիսի, զի ոչ կամեցաւ իշխանել լինել ած 'ի վերայ Փարաւոնի. և ոչ վասն Մովսէսի բարեկամի միայն, այլ և վասն Փարաւոնի թշնամւոյ. զի 'ի տեսանելն Փարաւոնի թէ որպիսի սքանչելիս կարող են հաւատք գործել, հաւատասցէ նա՝ թէ կարող է ողորմութի բարերարին քաւել և արդարացուցանել զբազում չարիսն նորա: Բայց Մովսէս պաշտելով պաշտէր, այլ Իսրայէլ պաշտելով պաշտեցաւ. զի 'ի կարծել մեծամեծացն՝ թէ պատուականք իցեն, ծանիցեն և գիտասցեն կրտսերքն [1], թէ ինքեանք են պատուականք, այս է Մովսէս՝ ճրագ օրինակ Լուսաւորին մերոյ՝ որ պաշտեաց յերկրին եգիպտացւոց զխաւարեալ տեղին. զի յայտ արասցէ վասն լուսոյն՝ որ հալածեաց զխաւարն մեր 'ի մէնջ. այս է Մովսէս՝ որ բանիւ առանց աշխատութե մեծամեծ սքանչելիս որպէս զած առնէր, այն որ յառաջագոյն զփոքր նշանս առանց աշխատութե առնել ոչ կարէր: Զի իշխանութի ունէր ձայն բարբառոյ իւրոյ լուծանել զառաջինն նշանսն, զի անցցեն. և կոչէր զվերջինն նշանսն, զի եկեսցեն: Զի զառաջինսն ողորմութբ սահմանէր վասն խստանալոյն Փարաւոնի, և զվերջինսն արդարութբ ածէր վասն զրկելոյն Փարաւոնի:

Այլ այս՝ որ յաղթեաց ամենայն եգիպտացւոց, յաղթահարեցաւ նա վասն թերահաւատութե [2] իւրոյ 'ի վերայ ծովուն: Այլ ստոյգն իբրև ետես զԱստուածն Փարաւոնի՝ թէ երկեաւ նա յերեսաց Փարաւոնի, յանդիմանեաց զնա՝ թէ այ 'ի մարդկանէ երկնչել չէր արժան: Զի՛, ասէ, անկեալ կաս դու հզօրդ առաջի տկարի. արի և արկ ամա 'ի ծով զգա և զամենայն զօրս դորա, զի ծանիցէ եթէ որչափ յոյժ բազում է զօրութի գաւազանին քան զզօրութի մարդոյն: Արդ համբարձ դու զձեռն քո 'ի վերայ ծովուդ իբրև զած: Իսկ արդ դու երբ համբարձեր զձեռն քո 'ի վերայ արարածոց, և ոչ տագնապեալ փութացան յերեսաց զինուդ՝ որ 'ի ձեռին քո: Զի գրեցաւ նմին Փարաւոնի. անուն այ տան

1 Յօրինակին կրտսերքն :

2 Յօրինակին Թերահաւատութեան :

հարուածովքն, որպէս և տասն նշանօքն, զի նոքօք կոչեսցէ և ծանիցէ զայն՝ զոր ոչն ճանաչէր։ Խրատեաց զնա Մովսէս իբրև զվարդապետ մի քաջ. և զի ոչ կամեցաւ ընդունել զվարդապետութիւն Մովսիսի, առ ընկալաւ զնա ծովն, և խրատեաց զնա 'ի մէջ ալեաց իւրոց։ "Փախիցուք, ասեն, յերեսաց Իսրայելացւոցն, զի Տէր ինքնին ետ պատերազմ ընդ զօրսն Եգիպտացւոց"։ Արդ տես դու, զի այն ինչ որ եղև յերկիրն Եգիպտացւոց, անդէն յԵգիպտոս ոչ ծանեան, մինչև եկին ուսան զայն 'ի մէջ ծովուն։ Բայց հեբրայեցի ասէ. "Փախիցուք յերեսաց Իսրայելացւոց, զի այս այն Տէր է՝ որ արար մարտ պատերազմի փոխանակ նոցա յերկրին Եգիպտացւոց"։ Արդ 'ի սպանանել և արու մանկանցն՝ որդիքն Իսրայելի ոչ սպառեցան, և Մովսէս ոչ սպանաւ։ Սոյնպէս և 'ի Քրիստոսին ոչ եսպան զարու մանկունսըն, զի էգ մանկունքն եղիցին ստացուածք նորա. և ոչ գիտէր եթէ 'ի նոսա ծածկեալ էին պնդակազմ նահատակքն, որ հարին վանեցին զնա. զի թէպէտ և զպտուղն ապականէր նա, սակայն ակամայ կամօք պահապան լինէր արմատոցն նորա. և ստուգութիւն համբարձաւ վրէժ խնդրել 'ի նոցանէ։ Եւ 'ի ժամ առաւօտու, զի 'ի նմա թագաւորէ լոյս՝ և գործք նորա 'ի վերայ խաւարի, զգայլն ժպրհութիւն իւր եթող զնա, և գաւազանաւն [1] խաղաղութե եղև կործանումն նորա. և զժանիսն նորա զչարչարիչս խըզեաց ընկեց ստուգութիւն, և 'ի խզելն նոցա ճաշակեցոյց նմա զչարչարանսն, զի ամենայնի ճաշակեցուցանէր նա զչարչարանսն։ Ոչ մնաց մնացորդ յազգէ նորա, և ոչ ապրեալ զերծեալ 'ի տոհմէ նորա. 'ի վերայ ամենայնի ամբարտաւանեաց նա մեղանչել, և առ յամենեցունց ելանէր հեծութիւն վասն նորա. վասն այսորիկ յամենայն տեղիս արկ կործանեաց զնա աջն։ Ուրախ եղեն թելակալք ընդ լուծթի, և խոստովան եղեն հովիւք ընդ կերակրչութին. և 'ի դիպել այսր ամենայնի, հաւատք 'ի հովուաց անտի ոչ գտան զրկեալ. փոխանակ զի խորհեցաւ նա հինգ

1 Յօրինակին գաւազան։

չարչարանս 'ի վերայ ժողովրդեանն, մինչև եկն եհաս 'ի վերայ տասնհարուածեան ցասումնն. և ընդ միոյ երկու հատուցաւ նմա: Եւ որդիք ազգի ժողովրդեան իւրոյ, զի զլացան զորկեցին զվարձս աղխասարկին, թօթափեցան 'ի գանձից իւրեանց. կամ զի մի՛ դարձցին նոքա անդրէն յերկիրն եգիպտացւոց, զօրացոյց զնոսա կապուտ կողոպուտ առնել զստացուածս նոցա. կամ զի հանդերձեալ էր հանել առնուլ 'ի նոցանէ զկեանս նոցա, հան առ նախ յառաջագոյն զստացուածս նոցա: Ապրեալք 'ի ջուրց անտի ընկղմեցին զԵգիպտոս՝ որ ընկղմէր զտղայսն. և զերծեալքն յառեւծուց անտի, սպանին զՆաբուգոդոնոսոր առեւծ:

Յետ երկերիւր հնգետասան ամի ելին նոքա յերկրէն եգիպտացւոց: Իսկ արդ ո՞ւր է այն՝ զի ասէ չորեքհարիւր. այս ինքն յօրէ անտի՝ յորմէ հետէ ասացաւ բանն. ասէ "Պանդուխտք եղիցին": Նա և եղէն իսկ նոքա. իբրև զայն՝ զի ասէ "Էին նոքա 'ի թիւ սակաւք նուազք և պանդուխտք 'ի նմա": Եւ զերեսուն ամն աւելի զոր ասաց Առաքեալ, զի 'ի ժամանակի իբրև կատարեցան չորեքհարիւր ամն՝ առաքեցաւ Մովսէս փրկել զնոսա: Եւ իբրև ետ նա զնշան փրկութեան Իսրայէլի, և զօրինակ ընկղմելոյն եգիպտացւոց՝ որպէս և Ստեփաննոս ինքնին վկայեաց, ոչ ընկալան, ասէ, զառաքելութիւն նորա, և հալածեցին զնա. վասն այսորիկ յամեցին նոքա անդէն զայն զերեսուն ամ:

Եւ առաջնորդեաց Տէր Իսրայէլի ընդ անապատ կողմն, զի մի՛ նեղեսցէ տրտմեցուսցէ զհեթանոսս յանցանելն նոցա ընդ աշխարհ նոցա. և նոքա ոչ ուղղեցին զսիրտս իւրեանց 'ի գործ պաշտաման նորա: "Իբրև ետես, ասէ, Իսրայէլ զձեռն բարձր և զբազուկ հզօր՝ զոր արար 'ի վերայ նորա, և զի սատակեցան եգիպտացիքն, յայնժամ հաւատացին 'ի Տէր և 'ի Մովսէս ծառայ նորա": "Յայնմ ժամանակի, ասէ, Մովսէս և որդիքն Իսրայէլի օրհնեցին զԱստուած զօրհնութիւնս զայս, և մատեան յասել": Զի 'ի ժամանակի իբրև զօրացան խորհուրդք նոցա, և իբրև 'ի կալթ մի 'ի Հոգւոյն սրբոյ հա-

ղորդեցան նոքա, խոստովան եղեն և ասեն. “Ո՞վ է իբրև զքեզ տէր„. այլովք հանդերձ. այս ինքն ընդդէմ Փարաւոնի՝ զի ասաց, ասէ “Ոչ գիտեմ զտէր„։ Ի նախատել իւրեանց զնա, ասեն. “Սա է իմ ա̅ծ, և փառաւոր արարից զսա„։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Ածցես զնոսա և տնկեսցես զնոսա 'ի լեառն ժառանգութե̅ քո, 'ի պատրաստութիւն բնակութե̅ քո. արարեր դու, տէր, զսրբութի̅ քո. տէր պատրաստեաց զնա ձեռօք իւրովք„, հեբրայեցի ասէ. “Տարցես զնա, և տնկեսցես զնոսա 'ի լեառն ժառանգութե̅ քո և 'ի տեղի պատրաստութե̅, զոր պատրաստեցեր, տէր, սրբութի̅. զոր պատրաստեցին ձեռք քո„։

ԳԼՈՒԽ Դ

“Ու եկն, ասէ, Իսրայէլ 'ի Մառաթ. և սկսան տրտնջել„։ Եւ զի յայտ արասցէ՝ զի ոչ եթէ վասն ջուրց տրտմեցան նոքա, այլ զի հեռացան նոքա յերկրէ անտի եգիպտացւոց. և զի մի՛ գտցի նոցա պատճառք ասել. զի ոչ գիտէաք մեք զօրէնս, “Գրեաց, ասէ, անդ. ետ նմա զիրաւունս և զդատաստանս„։ Զի՞նչ են. “Եթէ լսելով լուիջիք, ասէ, ձայնի տեառն ա̅յ ձերոյ, զամենայն ախտս չարչարանաց հարուածոցն զոր ածի 'ի վերայ եգիպտացւոցն, զայն ոչ ածից 'ի վերայ քո„։

Ու իբրև եկին դարձեալ յԵղիմ 'ի տեղին ցանկալի, յայտնի եղեն խորհուրդք նոցա և ասեն. “Ուրեմն լաւ էր մեզ եթէ մեռեալ էաք անդէն յերկրին եգիպտացւոց, զի ուտէաք անդ և յագէաք„։ Եւ զի ցուցին նոքա կարծիս՝ թէ վասն քաղցոյ իւրեանց տրտնջեցին, ոչ արգել զխնդրուածս նոցա. և ոչ որպէս խնդրեցինն միայն, այլ առանց աշխատութե̅՝ յերկնից տեղեաց նոցա, զի պատճառք ինչ մի՛ գտցի նոցա։ Սակայն նոքա ոչ համբերէին խնդրել որպէս և կարօտեալք, այլ որպէս և փորձիչք. զի եթէ ոչ տացէ նոցա զխնդրուածս նոցա, ոչ արասցեն զինչ և պատուիրեաց նոցա։ Սակայն և ոչ այսպէս պահեցին նոքա զուխտն նորա. զի նա զհաց հրեշտակաց ետ նոցա,

և նոքա զխորհուրդս մարմնաւորս ստացան ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Ընդ ցածնուլ ցօղոյն„ . հեբրայեցի, “Ամպ ցօղոյ„ ։ Եւ փոխանակ այնր՝ զի ասէ “Համ իւր քաղցր էր իբրև զխորիսխ մեղու„ . հեբրայեցի, “Համ իւր իբրև կնձիթ 'ի մեղր„ ։

Եւ զի չափով առին նոքա հրաման, զի կարձեսցին յորկորստութենէ անտի, և եղիցին նոքա 'ի ներքոյ պատուիրանին . և զի ոչ յաւելաւ՝ որ շատն քաղեաց, զի ընթացաւ նա որկորստութեան յաւելլի անդր . և որ սակաւն ժողովեաց՝ ոչ պակասեաց, զի կաց նա 'ի պատուէր հրամանին և չափով ժողովեաց ։ Զի նեխեցաւ զոր թողին, զի խնդրեցին և առին . հրամայեցաւ նոցա և ոչ պահեցին ։ Եւ զի ծանիցես թէ այս այսպէս է, ահա աւանիկ համդերձն նոցա որ բնութեամբ իւրով մաշելոց էր, ոչ մաշեցաւ . և մանանայն զի ոչ մեղանչէր, ապականեցաւ . զի պահեաց խորհուրդն, և յայտնի լիցի առակն օրինակի ։ “Մի՛ ոք, ասէ, 'ի ձէնջ եթէ 'ի վաղիւ ոք թողուցու յայնմանէ„ ։ Այն իսկ է զի ասէ . “Մի՛ հոգայք վասն վաղուի„ ։ Ոչ ինչ յաւելու՝ որ շատն ժողովեաց . և ոչ ինչ պակասեաց՝ որ սակաւն ժողովեաց ։ Խորհուրդ մարմնոյն տեառն մերոյ . զի եթէ շատ ոք առնուցու և եթէ սակաւ, մի պարգևս առնուն ։ Բայց գոյ և նմա և առակ օրինակի տկար բնութեան մերոյ . զի այն՝ որ շատն ժողովէ, ոչ ինչ երթայ ընդ նմա . սակայն և այն՝ որ սակաւն ժողովեաց, ոչ ինչ պակասեաց . զի նեղութիւնք նորա աստէն ընդ մարմնոս միան, և կարօտութիւնք նորա աստէն յաշխարհի թողեալ լինին ։ Եւ զի ասէ “Որ ինչ մնայ 'ի ձէնջ առ վաղիւ, ոյծ պահեսջիք„, հեբրայեցի ասէ . “Զոր ինչ պատրաստէք դուք՝ պատրաստեցէք մինչև յառաւօտ„ ։

“Եւ մի՛ եղանիցէք դուք, ասէ, յաւուրն եւթներորդի . և ոչ անսացին„ ։ Զի եթէ մինչ դեռ զգործն տեսանէին՝ երկմտեալ բաժանէին, եթէ զհանդերձեալն խոստացեալ էր նոցա՝ զիա՞րդ լսէին նոքա ։ Եւ այս ոչ եթէ մոլորութեան նոցա էր, այլ ապստամբութեան նոցա է ։ Եւ զոր օրինակ զնոսա բռնութեամբ հանդոյց 'ի քաղելոյ անտի մանանայէն, այսպէս բռնութեամբ նեղեաց զնոսա, զի հանգուսցէն զծառայս իւրեանց . զի այն

ագահութի՝ որ զնոսա նեղեաց զի աշխատեսցին, նոյն ագահութի դարձեալ նեղէր զնոսա աշխատ առնել զծառայսն իւրեանց։ Զի առին նոքա հրաման զի մի՛ թողուցուն, և թողին. և զի մի՛ ելցեն յաւուրն եւթներորդի քաղել, և ոչ անսացին. վասն այսորիկ զքաղուսմն սակաւացոյց 'ի չափ անդր, և զաւելին զազրացոյց յեռալ որդամբն, և զեւթներորդն սահմանեաց պատուիրանաւ։

Եւ զայս զոր արար՝ զի եղիցին նոքա 'ի ներքոյ լծոյ, և ամենայնիւ 'ի լծոյ անտի ապստամբէին. մինչև ցանկացան և խոնարհ եղեն, և նուաղեցին և մտին 'ի փորձանս։ Եւ ոչ առին 'ի միտ, զի անցին նոքա ընդ ծով առանց նաւաց, և ընդ անդունդս առանց կարկուրէից. և կապեցան ջուրքն զօրութբ, և կացին իբրև պարիսպք հրամանաւ. և գործեցաւ խորհուրդ 'ի մէջ ջուրցն, և ամենայն նշմարանք և կերպարանք իբրև ճշմարտութի երևեցաւ նոցա։ Եւ եղև յոյս ապաստանի իւրեանց 'ի տաճարն քարեղէն, և փրկութի նոցա 'ի գառն մսեղի. և սրբութի նոցա յորաչել կերակրոցն, հանդիստ նոցա 'ի բաղում արմտիս, զարդ նոցա 'ի գոյնագոյն հանդերձս, մեծութիւն նոցա 'ի ստացուածս անասնոց, պարծանք նոցա յաղթութի սրոյն՝ կոտորել զընկերս իւրեանց։ Այլ իմաստունք նոցա որոշեցին մեկնեցին զնշմարանսն՝ որ առաջի երեսաց իւրեանց. և 'ի միտ առին զառակս օրինակաց մարգարէից, և զխորհուրդս զոր դրոշմեաց Հոգին սուրբ վասն գալստեանն Քրիստոսի։ Զի թէպէտ և յառակս օրինակաց կային նոքա, սակայն ճշմարտութեանն որ հանդերձեալ էր յայտնել, ակն ունէին։ Բայց բազումք 'ի նոցանէ այսպէս կարծէին՝ թէ Մովսէս 'ի կամս իւր առաջնորդէ նոցա. և վկայեաց այն՝ զի ասէ “Կոչեաց զանուն տեղւոյն այնորիկ փորձութիք և տանջանք. եթէ իցէ՞, ասեն, Տծ ընդ մեզ թէ ոչ„։ Վասն այսորիկ գրգռեցաւ ել 'ի վերայ նոցա Ամաղէկ, զի անկցի 'ի վերայ նոցա ահ և երկիւղ հեթանոսաց, և զի եղիցին դառնալ առ Մովսէս 'ի տեսանելն իւրեանց զի 'ի ձեռն նորա փրկեալ լինէին յամենայն փորձութենէ, և նա է փրկանք կենաց նոցա, իբրև նոքա կամէին սպանանել զնա։

“Յայնմ ժամանակի, ասէ, յարեաւ ժողովեաց պատրաստեաց Ամաղէկ գալ տալ պատերազմ ընդ որդիսն Իսրայէլի„: Վասն այսորիկ Ամաղէկ սկիզբն հեթանոսաց. այս ինքն զի նա յառաջագոյն արար ընդ նոսա մարտ պատերազմի: Արդ որովհետեւ եղեւ նա սկիզբն, սատակելով սատակեսցի, կատարած նորա յաւիտեանս ժամանակաց: Սոյնպէս եւ Համան որդի նորա պահեաց զոխս, եւ նեղեաց զժողովուրդն վասն Մուրթքէի. իբրեւ զի զԵսաւ նորա ոչ էր տեսեալ՝ այն որ պահեաց զոխս յաւիտենից: Իբրեւ զնա ոչ էր տեսեալ քո, զմիտս նորա ո՞վ ուսոյց զքեզ: Արդ կամեցաւ Ամաղէկ խափանել զօրհնութիւնսն Սահակայ, քանզի երկուցեալ զարհուրեալ էր նա'ի բանէ անտի յայնմանէ՝ որ ասացաւն Իսաւայ. ասէ “Եղբօր քում ծառայեսցես„. քանզի Ամաղէկ հարճորդի էր Եղիփազու որդւոյ Իսաւայ: Եւ զի հնազանդեցոյց Սահակ զԵսաւ 'ի ներքոյ ձեռին Յակովբու փոխանակ կանանցն զոր առ նա, որ դառնացուցանէին զոգիս հարցն նորա, եւ նոքա էին դստերք Քանանու, այն որ անիծաւ 'ի Նոյէ. եւ զի կամեցաւ Ամաղէկ խափանել զանէծսն Նոյի եւ զօրհնութիւնն Սահակայ, եւ առնել մարտ պատերազմի ընդ որդիսն Յակովբու. վասն այսորիկ արդարութիւն գրեաց 'ի վերայ նորա զպատիժըս պատուհասից, զի ջնջեսցի յիշատակ Ամաղէկի 'ի ձեռն որդւոցն Հռաքէլայ: Նախ Յիշով որդի Նաւեայ յազգէ անտի Յովսէփու, եւ ապա Սաւուղ բենիամինեանց. եւ զմնացորդսն որ մնացեալ էր նորա, բարձաւ 'ի ձեռն Աղթերայ եւ Մուրթքէի:

“Եւ շինեաց, ասէ, անդ սեղան, եւ կոչեաց զանուն նորա՝ Տէր փորձեաց„. զի փորձեցին անդ հեթանոսք եւ որդիքն Իսրայէլի. այնոքիկ, զի թէ պատերազմ տացեն՝ սատակեսցին. եւ այսոքիկ, եթէ հաւատասցեն՝ յաղթեսցեն. ցոյց երկոցունց կողմանց՝ եթէ օգնութիւն այլուստ ելանէ նոցա, այս ինքն 'ի ձեռաց Մովսիսի: “Արդ ահա, ասէ, ձեռն 'ի վերայ աթոռոյն„. այս ինքն ձեռն տեառն 'ի վերայ աթոռոյն՝ յորոյ վերայ նստէր Մովսէս, զի եղիցի պատերազմ տեառն ընդ Ամաղէկ: Քանզի պատերազմ առաջին էր, շինեաց սեղան 'ի վկայութիւն Իսրայէլի

և հեթանոսաց, զի մի՛ ժպրհեսցին և համարձակեսցին առ զօրութիւն՝ որ զօրագոյն և բռնագոյն է քան զնոսա. թէպէտ և տեսին նոքա թէ 'ի ձեռս Մովսիսի կախեալ կայ օգնութիւն նոցա և մնաս նոցա, սակայն ոչ խնդրեցին ձեռն: Ասէ տուր ձեռն քաղաքաց, նախ զորս պաշարես դու:

Արդ շինեաց սեղան, սեղան 'ի տեսիլ: «Գրեա դու, ասէ, և 'ի մատեանս յիշատակաց. և զհամբաւն լուիցեն ամենայն հեթանոսք՝ թէ ջնջելով ջնջեմ ես զյիշատակ նորա». զի թէ թերևս կամ նոքա երկիցեն, կամ սոքա ապաշխարեսցեն, և դարձուսցէ 'ի նոցանէն. իբրև զայն՝ զի ասէ «Տարաւ մոյծ զգաբաւոնացիս և զմովաբացիս»: Եւ զի ասէ դարձեալ «Գրեա՛ 'ի մատեանս յիշատակաց». զի հեռագոյն էր վրէժն հատուցման. և ձեռն 'ի վերայ աթոռոյ, շարժումն և խռովութիւն աթոռոյ թագաւորութեան նորա, զի մի՛ տացէ նմա թոյլ դադարել՝ մինչև խնդրեսցի 'ի նմանէ վրէժն հատուցման: Արդ հար սատակեաց զԱմաղէկ, զի ոչ ողորմեցաւ 'ի վերայ նոցա. զի յանողորմութենէ անտի նորա ուսցին նոքա զյորդութիւն սիրոյ՝ որ առ միմեանս:

Արդ տուր իրաւ, ո՛վ որ պատուհասեսդ, և լեր միջնորդ արդար 'ի մէջ խրատչին և 'ի մէջ յանցաւորաց. մի՛թէ արժա՞ն ինչ էր Սեհոնի և Ովգայ՝ յետ ծովուն բաժանելոյ, և յետ ընկղմելոյն Փարաւոնի գալ և առնել մարտ պատերազմի ընդ զօրս՝ որոյ այսպիսի առաքինութիւնք գործեցան: Նա և օրէ՞ն ինչ էր՝ յետ բաժանելոյն Յորդանան գետոյ, և կործանման պարըսպացն յԵրիքով քաղաքի, ժպրհել համարձակել քանանացւոցն գալ և առնել մարտ պատերազմի ընդ ձեռին այնմիկ՝ որ 'ի վերայ ամենայնի իշխանն էր: Պա՞րտ ինչ էր դարձեալ՝ յետ նշանացն այնոցիկ, որ եղեն յերկրին եգիպտացւոց, և սքանչելեացն այնոցիկ՝ որ եղեն յանապատի անդ, փոխանակել Իսրայելի ընդ որթուն զտէրն նշանաց և զարարիչն սքանչելեաց: Եւ պատշա՞ճ ինչ էր դարձեալ և մեզ՝ զի 'ի լսելն մեր զվրէժ հատուցման չարաց, և զդառն տանջանս՝ որ եկին հասին 'ի վերայ մեղաւորաց, մեղս 'ի վերայ մեղաց յաւելուլ:

ԳԼՈՒԽ Ե

“Եւ եկին ելին, ասէ, յանապատ 'ի Սինէ. և խօսեցաւ տէր ընդ Մովսիսի 'ի մառախուղ ամպոյ անտի„. զի երկիցեն այնոքիկ՝ որոց խաւարեալ են սիրտք իւրեանց, իբրև ինքն Մովսէս լուսաւոր ամպոյն տեառն մերոյ արժանի եղև: Բայց 'ի Հեբրայեցի՝ մրրիկ ամպոյ գրեալ է փոխանակ մառախղոյ: Փոխանակ այնր՝ զի ասէ “Վկայեա զզուշացո ժողովրդեանն, զի մի՛ հեռասցին հայել մերձենալ„. Հեբրայեցի, “Գուցէ ժտիցին հայել մերձենալ„:

“Ես եմ տէր ա՟ծ քո՝ որ հանի զքեզ, ասէ, յերկրէն եգիպտացւոց. մի՛ արասցես դու քեզ այլ աստուածս բայց յինէն, զի ես եմ տէր ա՟ծ քո. ա՟ծ նախանձոտ եմ, հատուցանեմ զմեղս հարցն յորդիս մինչև յերիս և 'ի չորս դարս„: Հեբրայեցի “Խնդրէ զվրէժ մեղաց„. իբրև զայն զԱմովսայն՝ զի ասէ “Զի 'ի չորս չորս անօրէնութ՟իս նոցա, և առնէ զողորմութ՟ի 'ի հազար դար„. զի յիշէր նա զսէր արդարոց իւրոց, և քաւէր զմեղս որդւոց նոցա: “Մի՛ սպանանէր. մի՛ գողանար. մի՛ սուտ վկայութ՟ի վկայեր 'ի վերայ ընկերի քո„: Եւ այս սերմանեալ լի են 'ի սիրտս մարդկան 'ի սկզբանէ յաւիտենից, և սոքօք առաւելան հարքն արդարք: Բայց եղև 'ի սոսա փոփոխում՟ն իբրև սքանչելեօք յօգտութ՟ի ըստ կամացն ա՟յ. զի յայսմիկ յայտ արասցէ վասն լուծանելոյ օրինացն ա՟յ. զի գրեալ է, ասէ “Մի՛ շնար„. և դարձեալ ասացաւ մարգարէին. ասէ “Գնա և առ դու քեզ կին մի պոռնիկ և շուն„. զի այսուիկ զարմասցին, զի 'ի հարցանելն իւրեանց զնա՝ յանդիմանեսցէ զնոսա պոռնկութ՟ին իւրեանց, որ պոռնկեցան և ելին յա՟յ: Վասն այսորիկ եղեն նմա մարգարէքն 'ի նշան, այլ ոչ պղծեցաւ մարգարէն, զի հրամանաւ ա՟յ գործեաց. յայնժամ պղծեալ լինէր նա՝ թէ ոչ էր առեալ զկինն, զի զպատուէր հրամանին ա՟յ անգոսնէր: Եւ դարձեալ ասէ “Մի՛ գողանար„. և Մովսէս, և որ ընդ նմա էին՝ զեգիպտացիսն կապուտ կո-

դոպուտ արարին. և քանզի պատուէր հրամանի ա̃յ էր, ոչ եպերեցան. Թէպէտ և եգիպտացիքն տրտմեցան, և գող համարեցան զնոսա, որպէս և համարեցաւ մարգարէն պոռնիկ՝ իբրև ա̃յ իւրոյ սուրբ էր նա: Եւ դարձեալ ասէ “Մի՛ ստեր„. և Մովսէս ստեաց, և ոչ պատուհասեցաւ. ասէ “Երեքօրեայ մի գնաց Ճանապարհ երթիցուք, և եկեսցուք„. և Շմուէլ դարձեալ զոյնպէս գործեաց պատուիրանաւ յերթալն իւրում օծանել զԴաւիթ, և յասել անդ “Պատարագ մատուցանել տեառն եկի ես„: Ասէ “Մի՛ սպանաներ„. և Մովսէս նախ սպան զեգիպտացին. և զի ոչ կամեցաւ սպանանել Շաւուղ զԱգագ, անարգեցաւ յարքայութենէ իւրմէ. և Շմուէլ՝ զի պատառեաց զնա, առաքինացաւ. և Ախաբ՝ զի ոչ հար սատակեաց զԲարհադադ, ինքն սատակեցաւ. և Եղիա՝ զի կոտորեաց նախանձու իւրով զպաշտօնեայսն Բահաղու, արդարացաւ և ընդ երկինս վերացաւ. և Դաւիթ բազում արիւն եհեղ, և ոչ համարեցան նմա մեղք: Եւ եթէ ոք ասիցէ. ահա արդելաւ նա, զի մի՛ շինիցէ զտաճարն վասն արեանն, զի եհեղ: Իսկ ընդէ՞ր զամենայն թագաւորս արդարս նմա համեմատէ, և Զօրաբաբէլ 'ի նա անուանէ, և յիշատակ անուան նորա փրկեաց զքաղաքն և զթագաւորն. Թէպէտ կարի յոյժ արդար էր Եզեկիա: Բայց այն՝ զի արգել զնա՝ զի մի՛ շինեսցէ զտունն, զայս յայտ առնէ. յոյժ աշխատեցար դու, ասէ, 'ի մարտ պատերազմաց. մի՛ յաւելուր դու այլ աշխատութի̃ս քեզ: Եւ զի մի՛ տրտմեսցի նա, ուրախ արար զնա յայնմիկ՝ զի ասէ. “Որդի քո, ասէ, որ ելանէ յերանաց քոց, նա շինեսցէ„: Եւ այս ոչ եթէ պատուհասից ինչ է, այլ պատուոյ և փառաց. զի ահա աւանիկ Սողոմոն՝ որ շինեաց զտաճարն, զկուռս պաշտեաց:

Եւ զայս՝ զի ասացաք, զի յայտ արասցուք՝ զի ոչ երբէք պահեցան օրէնք՝ որ 'ի գիրս էին: Այլ ոչ երբէք լուծանելով ինչ լուծաւ ստուգութի̃ն. այլ իշխանութիւն Աստուծոյ երևեցաւ պէսպէս սքանչելեօք, որպէս կատարեցին Ճշմարտութի̃ք արարածոց. Թէպէտ և փոփոխեցան նոքա 'ի ձեռն Մովսիսի,

առ ժամանակ մի վասն Փարաւոնի ։ Բաժանեցաւ ծով, պատառեցաւ վէմ, և հան զլորամարգին, և իջոյց զմանանայն ։ Եւ յաւուրս Յեսուայ բաժանեցաւ գետ, և արգելաւ կաց արեգակն և լուսին ։ Եւ յաւուրս Եզեկիայ դարձաւ յետս արեգակն. և ոչ եթէ համապազ լինին, այլ յօգտութի եղեն յորժամ եղենն, և բնութի նոցա չէ անցեալ ։ Եւ ստուգութին թէպէտ և փոխեցաւ առ ժամանակ մի 'ի ձեռն արդարոց իւրոց վասն օգտութե, սակայն հաստատուն կայ 'ի ճշմարտութե իւրում, զի ոչ փոփոխի. և նովաւ արդարացան առաջինքն. և յայտնի եղև լուծումն օրինացն յայլակերպս լինելոյն նորա 'ի ժամանակի իւրում. և նովաւ առաքինանան ամենեքեան 'ի հեւանալն իւրեանց 'ի պահպանութեց անտի օրինաց, այն՝ որ երբեք ոչ կատարեցան, և 'ի ստուգութենէ սրտից իւրեանց արդարացան ։

Իսկ ընդէ՞ր պատուիրանքն՝ որ գրեալ էին 'ի տախտակսն, մի՛ շնար ասեն, և ոչ ասեն մի՛ պոռնկիր ։ Այլ քանզի ժողովրդեանն Իսրայէլի պատուիրեցաւ պատուէրն այն՝ զի ասացաւ 'ի միւսում պատուիրանի. ասէ “Պոռնիկ 'ի դստերս Իսրայէլի մի՛ եղիցին„. որպէս ժողովուրդ մի՝ որ արգելեալ կարճեալ իցէ 'ի պոռնկութէ, պատուէրն որ վասն պոռնկութե էր և վասն շնութեցն՝ որ լինելոց էր յերկրի նոցա, 'ի կանայս նոցա և 'ի դստերս նոցա, նովաւ ուսոյց և պատուիրեաց նոցա ։ Եւ երկու՝ զի մի՛ անուանեսցէ և անուանելով բնաւ ամենևին պոռնկութի 'ի մէջ նոցա. զի գոն իրք յորժամ պարսաւէ զնոսա բանիւք իւրովք, յիշեցուցիչ լինի նոցա, և յիշատակք նոցա ոչ ինչ բարի գործ գործեն 'ի միտս լսողի. զի չէր ինչ մարթ ամենայն լսօղաց պնդակազմ լինել մտօք խորհրդովք իւրեանց ։ Եւ խորհուրդք՝ յորժամ գտանին լուծութի յայնմ ժամու, վասն լուծութեան իւրոյ խառնեալ լինի ընդ նմանոյն, իսկ յիշատակն խոտորտելով իւրով. և իբրև տնկեալ լինի նա 'ի նմա, հարկ է զի և պտուղ ևս նորա երևեսցի 'ի նմա ։

Վասն շաբաթու։

“Յիշեսջիր դու, ասէ, զօրն շաբաթուց սրբել և փափուկ ունել զնա. զվեց օր զգործ զամենայն զքո գործեսջիր. և օրն եւթներորդ՝ շաբաթ փափուկ տեառն այ քո. մի գործեսցես դու ՚ի նմա զամենայն զգործ քո„։ Վասն է՞ր. “Զի ՚ի նմա հանգեաւ, ասէ, ած յամենայն գործոց իւրոց„։ Եւ ո՞ւր է այն՝ զի ասէ “Ոչ տառապի և ոչ աշխատի և ոչ վաստակէ„։ Այլ այն՝ զի ասէ հանգեաւ, այն իսկ է՝ զի կատարեաց զարարածս. և զի յիշեցուսցէ թէ ած է հաստիչ և արարիչ ամենայնի։ Բայց պատուիրանս այս զչարութի նոցա յայտ առնէ, և վասն անողորմ կապեալ գթութեան նոցա՝ որ էր առ անասունս իւրեանց։ “Զի հանգիցէ, ասէ, ծառայն քո և աղախինն քո„, այլովքն հանդերձ։ Արդ ասաց՝ բայ հանգեաւ, զի մեք հանգուսցուք. իբրև զայն՝ զի ասէ. “Զղջացայ զի արարի զմարդ ՚ի վերայ երկրի„. զի յայտ արասցէ թէ նա է արարիչ նորա. և զի մեք ՚ի միտս մեր զղջացեալ վշտասցուք, թէ ած զղջացաւ վասն մեր։

Արդ շաբաթու մեկնութի նորա հանգիստ է։ Եւ եթէ ՚ի հանգիստ տուաւ նա, առանց շաբաթու եթէ ոք հանգուցանէ զծառայ իւր՝ պահէ՞ նա զշաբաթ եթէ ոչ. այլ ասէ՝ ոչ հրամայեաց ած։ Իսկ արդ ե՞րբ հրամայեաց ած. ոչ ասես ինձ յԱդամա՞յ արդեւք, եթէ ՚ի Շէթայ, յԵնովքայ և ՚ի Նոյէ. զի եթէ ած ոչ արգելու յաւուրն շաբաթու զգործս իւր, զի ոչ անձրև արգելաւ ՚ի ջրհեղեղի անդ, և ոչ մինչև ցայսօր ժամանակի արգելեալ լինին գործք նորա ՚ի գընացից իւրեանց. զի արեգակն ծագէ զճառագայթս իւր յաւուր շաբաթու, և լուսին տայ զլոյս իւր, և աղբեւրք բղխեն, և գետք գնան, և աստեղք ընդ ամենայն երկիր տան զլոյս իւրեանց. արդ զի՞նչ օգուտ է խափանել շաբաթուն։ Եւ եթէ վասն թլփատութե, ցուցաք մեք՝ եթէ ինչ մի փոքր է. բայց ոչ ինչ արգելեալ լինին նոքա յաւուրն շաբաթու թլփատել. ահաւանիկ և ինքն թլփատութին տկար՝ ելոյծ

զշաբաթն խափանեալ ։ Եւ եթէ քահանայքն՝ զի առ ժամն էր փութապէս և առանց բամբասանաց պաշտել զօրէնսն, հրաման տան նմա օրէնքն գործել յաւուր շաբաթու, և փոխանակ տօնից տարեկանաց՝ որ դիպեալ պատահէին նմա, և քահանայն՝ վարդապետն օրինաց՝ ոչ պահէ զօրէնս շաբաթուն. այլ որպէս օրէնսգէտի միոջ հրաման ետ նմա գործել, իբրու նա այլոց խափանել հրամայէ ։

Որդ զի պատուհաս ետ, բամբասես դու՝ եթէ ըստ հանգստեան քահանայից գնամք մեք. և եթէ սրբութիւն շաբաթու է խափան, ահա պղծեաց նա զմեռեալ, և մտանէ 'ի նմա. և պղծեաց զգնացս գիջութէ երազոց, և լինի 'ի նմա. և ծնունդ ամենայն աշխարհի պիղծ. "Զքառասուն օր, ասէ, պիղծ է կինն որ ծնանի„. և ահա բազում շաբաթք անցանեն 'ի վերայ նորա, և ոչ կարաց արգելուլ շաբաթն սրբութք իւրով զգործման սրբութե, զի մի պաշտեսցին ։ Եւ եթէ վասն զի բնութիւք են՝ զի այսպէս են հաստատեալ. ահա բաժանեցաւ ծով, և կաց արեգակն և լուսին, զի պատուեսցեն զպատուէր հրամանի նորա. սոյնպէս և սոքա եթէ յօգտութի եղեալ էր նախ յառաջ զբնուէ նոցա, լուեցուցանէր 'ի նմա, որպէս և զայլ բնութիւնս կապեալս, զի հրամանաւ արձակեցան ։

Որդ շաբաթ զգործս բարիս անուանեաց. զի ոչ եթէ շաբաթն պահէ զմեզ 'ի բարիս, և ոչ այլ աւուրք մոլորեցուցանեն զմեզ 'ի չարիս. ոչ եթէ առնեմք մեք 'ի բարիս յաւուրն շաբաթու՝ պատուհասիմք, զոր օրինակ և ոչ եթէ առնեմք զչար յայլ աւուրս՝ պարտաւորիմք մեք ։ Զի թէ արդար են գործք բարիք՝ համապազորդ, թէպէտ և յաւուրն շաբաթու արասցեն. և չարիք կարծեալ արգելեալ են համապազօր. ո՞չ ահա աւասիկ յայտնի է այս՝ թէ վասն խստուէ պարանոցի նոցա ետ նոցա, զի դոնեայ յաւուրն շաբաթու մերձեսցին նոքա 'ի գործն բարութեց. զի շաբաթ սակաւ ինչ ժամանակս ծաղկեաց ։ Եւ դարձաւ եցոյց նա զխստապարանոցութի՝ դարձուցանել զթիկունս՝ փախստեայ գնալ տկար պարգևօքն իւրովք, և փոքր չափովն իւրով յերե-

սայ հօրն որ ծնիչն էր ամենայնի . զի նա ինքն է միաշաբաթի ։ Սա՝ որ եղև անդրանիկ գործոց և սկիզբն եղելոց, զի 'ի նմա հաստատեցան երկինք և երկիր . այս է չափ որ կապէ զլոյս իշխանութե̃ իւրով, և կրշռորդ ճշմարտութե̃ պակասէ խաւար յիշխանութե̃ իւրմէ ։ Ի նմա որոշեցան մեկնեցան աւուրք 'ի միմեանց . իբրու լեալ է նա նոցա գլուխ, և առաջնորդ միաշաբաթին ։

Արդ եթէ օգտութ̃ի ինչ լեալ էր 'ի շաբաթուանդ՝ հարցն տայր զնա, այնոքիկ՝ որ անուամբ նոցա փրկեցին ապրեցուցին զպահօղս շաբաթուցն ։ Եւ Յիշով յայտնապէս խափանեաց զնա յԵրիքով քաղաքի ամենայն ժողովրդեամբն հանդերձ . և յայտ արար մեզ, զի ոչ եթէ պահպանութիւնք ինչ շաբաթուց պիտոյ են առ կատարեալս . և եթէ յոչ պահելն շաբաթու՝ ոչ ինչ եղև արգել փրկութե̃ն լինելոց, այլ առանց ձեռացն զօրութ̃ի պարսպացն անկեալ կործանեցաւ . իբր ոչ եթէ մոռացեալ ինչ էր այ̃, զի հրամայեաց շուրջ գալ զԵրիքով քաղաքաւ . և հրամայեաց զի պահեսցի շաբաթ ։ Եւ ոչ եթէ Յիշով միայն լուծ և խափանեաց զնա, այլ և Մովսէս 'ի լերին անդ, և քահանայք 'ի տաճարի անդ, և Եղիա 'ի Քորեբ լեառն, և Դանիէլ պահօքն իւրովք, և Մակաբայեցիքն պատերազմօք . 'ի լուծանելն 'ի խափանելն զնա՝ ապա յաղթեցին . և 'ի պահելն իւրեանց զնա՝ պարտաւորեցան և յաղթահարեցան . և Աքար իբրև անց զնզովիւքն, նա ամենայն ընչիւքն իւրովք քարկոծ եղև, և ոչինչ օգնական եղև նմա շաբաթն և թլփատութ̃ին ։

Վասնզի ոչ ինչ օգուտ են զոհք հանդերձ թլփատութե̃ն և շաբաթու . զի ոչ ասաց՝ թէ որ սպանանէ՝ զոհիւք քաւեսցի, և ոչ՝ որ հայհոյէ զա̃ծ՝ թլփատութ̃ի ապրեցուսցէ . և որ զայն՝ որ պոռնկին՝ թէ շաբաթ փրկեսցէ . այլ ասէ “Սպանօղ մահու մեռցի „ . և ո՞ւր են զոհքն, զի ոչ քաւեցին ։ Եւ այն “Որ հայհոյէ, ասէ, մահու մեռցի „ . և ո՞ւր է շաբաթն, զի ոչ փրկեաց ։ Եւ զայն “Որ շնայ՝ քարկոծ լիցի „ . և ո՞ւր է թլփատութ̃ին, զի ոչ օգնեաց . և զի պատճառք ժամանակաց էին, անարգեցան և անցին ։ Արդ

ոչ կարացին քաւել զոհքն և թլփատութիւն և շաբաթ վասն սպանութե̃ց և շնութե̃ց. բայց զեղջ և ապաշաւ մտաց քաւեաց: “Մեղայ, ասէ, Դաւիթ”: Ասէ ցնա. “Եւ տէր թողցէ զյանցանս քո”:

Արդ որ մարմնով իւրով խափանեալ է 'ի չարեաց յաւուր շաբաթու, և մտօք իւրովք գործէ զչարիս, զիա̃րդ կոչեսցուք զնա՝ պահօղ շաբաթու, թէ լուծիչ օրինաց: Այլ խափանեաց զբարիսն մի օր՝ եթէ գոնեայ բռնութ̃ 'ի չարեաց անտի լռեցուսցէ զնոսա. բայց 'ի տաճարի անդ քանզի ոչ կարէին չար գործել, ոչ կապեաց զնոսա յօրէնս շաբաթուն. քանզի գիտաց եթէ կապեալ են 'ի բռնութ̃ սպասուն պաշտաման: Եւ դարձեալ, զի ուսուսցէ թէ մարմինն իւր տաճար ա̃յ է, համարձակէ մտացն նորա որպէս և քահանայի, զի պաշտեսցէ զա̃ծութին՝ որ բնակեալ է 'ի խորանի իւրում: Այլ քանզի կռապաշտութիւնն բնակեալ էր 'ի նոսա, այն զի 'ի ժամանակի իբրև վերացաւ 'ի նոցանէ բռնութիւնն Մովսիսի՝ երկիր պագին կռապաշտութեանն, և պաշտեցին զնա յայտնապէս, զայն՝ որ ծածուկն պաշտեալ լինէր 'ի նոցանէ. վասն այսորիկ կապեաց զնոսա բռնութիւն աւուրն եւթներորդի, զի կապեսցէ զձեռս նոցա խափանելով՝ զի դադարեսցեն 'ի չարեաց անտի: Եւ զի խլեսցէ զկռապաշտութին 'ի մտաց նոցա, խափանեաց զնոսա զի մի զոհեսցեն կռապաշտութեանցն. զի եթէ քահանայիցն իւրոց համարձակեաց մատուցանել զպատարագս, յայտ է ամենայն՝ զի կապեալ էին նոքա, զի կռապաշտութեն զոհէին: Եւ զի յետ ամենայն պատուիրանի երկրորդեաց նա յասել իւրում, թէ “Ես եմ տէր ա̃ծ քո”. զի յայտ արասցէ՝ եթէ որպէս մերձենայ գրովք առ պատուիրանն իւր, սոյնպէս մերձ է և գործովք առ անցանել զպատուիրանաւն: Փոխանակ այնր՝ զի ասէ “Սեղան հողեղէն շինեսջիք ինձ”. հեբրայեցի, “Սեղան յերկրի շինեսջիք ինձ”:

Իրաւունք դատաստանի ։

“Եթէ գնեսցես դու քեզ ծառայ ’ի Հեբրայեցւոց, զվեց ամ ծառայեսցէ քեզ. յամին եւթներորդի արձակեսցես զնա, և գնասցէ նա ձրի ’ի քէն„ ։ Եւ մեր է այն՝ զի ասէ “Եղիցի Քանան ծառայ նորա„. և այն՝ զի ասէ “Մի ծառայեցուսցես զեղբայրն քո զՀեբրայեցի, մի զայր և մի զկին„ ։ Այլ յորժամ վաճառիցի քեզ եղբայրն քո, այն իսկ է՝ զի ասէ. եթէ ոչ ինչ իցէ գողոյն տալ զտոյժս, վաճառեսցի ’ի գողութե իւրում. կամ այն՝ որ վասն աղքատութե իւրոյ վաճառի, վասն այնպիսւոյն ասաց. ասէ, “Յամին եւթներորդի ազատ գնասցէ ’ի քէն„ ։ Երիս պատուիրանս եդ նմա. մի՝ զի յամին եւթներորդի. և երկու՝ թէ մեռցի տէրն նորա, ոչ, ասէ, ունի նա իշխանութի ժառանգել զնա որդւոյ իւրում կամ դստեր. իբրև զայն՝ զի ասէ “Երկիրն, ասէ, ճշմարտութբ բնութբ մի վաճառեսցի, զի իմ է, և նոքա ծառայք իմ են՝ զոր հանի ես յերկրէն եգիպտացւոց. մի վաճառեսցին նոքա ըստ վաճառի ծառայից„ ։ Երրորդ՝ եթէ հասեալ իցէ ամն յոբելեան, զի նա ինքն է ամն յիսներորդ ։ “Զվեց ամ, ասէ, ծառայեսցէ քեզ, և յամին եւթներորդի ազատ գնասցէ„ ։ Ապա եթէ կապեսցի նա ’ի սէր աշխարհին և ’ի տեառնն՝ որ անուանեցաւ նմա, անցեալ է ’ի նմանէ դիր կատարեալ ազատութե իւրոյ. և ընդունի նա դրոշմ յականջի իւրում, նշան՝ որ ոչ լսէ, զի մոռացաւ նա զազգատոհմ ազատութե իւրոյ ։

“Եթէ հարցէ ոք զոք և մեռցի, մահու մեռցի ։ Իսկ եթէ որ ոչ յիւր կամս հար, այլ ա̄ծ ետ զնա ’ի ձեռս նորա, այս ինքն օրհասն եկն հաս, իբր ոչ ’ի կամս առնն պաշտեցան ’ի նմա կամք ա̄յ, փախիցէ նա ’ի քաղաքն ապաստանի„ ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Եթէ ոք հարցէ զծառայ իւր ձերբ իւրով և մեռցի ’ի ձեռն նորա, իրաւունք դատեսցեն զնա„. հեբրայեցի, “Խնդրեսցեն զվրէժ արեան նորա„ ։ “Ապա թէ կռուիցին արք երկու, և առ ոտն հարկանիցեն զկին յղի, և անկանիցի սաղմն կերպարան աննկար, այս ինքն է

թէ ոչ իցէ կատարեալ, զարժանն տուժեսցի,,: Եւ զի չէք վրէժխնդրութ՟ի անկերպարան սաղմին, զի մի՛ կորիցէ անձնն կատարեալ փոխանակ փոքր ընչի: "Եւ եթէ կատարեալ իցէ, ասէ, սաղմն նկարեալ կերպարանեալ, տացէ անձն ընդ անձին,,: Բայց հեբրայեցի՝ "Եւ առ ոտն հարկանիցեն զկին յղի, և անկանիցի սաղմն անկերպարան աննկար յորովայնէ անտի, և ինքն կինն ոչ մեռանիցի, զարժանն տուժեսցի, որպէս զինչ և արկցեն դատաւորք. ապա եթէ մեռցի և ինքն կինն հանդերձ սաղմիւն, տացէ անձն ընդ անձին,,:

Եդան իրաւունք դատաստանի, զի յաւելցին օրէնքըն արժանաւորութ՟ք: Զի եթէ մի ակն իցէ մարդոյ և կուրացելոյն՝ որ կուրացոյցն զնա՝ զակն նորա զի՞նչ արասցեն. զի ահա ոչ լինի հատուցեալ, եթէ մի ակն իւր կուրանայ. զի նա զամենայն զլոյս նորա բարձ 'ի նմանէ, և զնորա զմի կուրացուցանեն: Եւ եթէ կուրացուցանէ այն՝ որոյ մի ակնն է, զայն՝ որոյ երկուքն են, զի՞նչ ինչ է՝ արժան է զի բարձցի լոյսն նորա 'ի նմանէ: Վասն այսորիկ եդան իրաւունք դատաստանի, զի ըստ տեսանելոյն խնդրեսցեն զվրէժն: Այլ ոչ եթէ զի հատուսցեն զփոխարէն հրամայեաց, այլ զի հատցէ զժպրհութ՟ի համարձակութ՟ե զառաջնոյն: Եւ զի դէպ եղև՝ վասն էր կուրանայ միւսն ևս. զի մի՛ եղիցին նոքա կարծել՝ թէ սաստ միայն է և սպառնութ՟ի դոյզն առանց խրատու, և արհամարհեսցեն: Արդ երևի թէ վասն անձետութ՟ե մարդկութ՟ե են պատուիրանքս "Որ սպանանէ՝ մեռցի,,. վասն բազմութ՟ե մարդկութ՟ե է. զի մահուամբն միոյն զբազումս 'ի մահուանէ խնայեաց, նա և զնոյն իսկ զսպանօղն ահիւն և երկեղիւն:

Եւ այն զի ասէ "Քարկոծ լիցի ցուլն հարկանօղ,,. զի եղիցի պակասութ՟ի, և զի հանդիցէ և վրէժխընդիրն. իբրև զայն՝ զի ասէ "Քարկոծ լիցի անասունն ընդ որում մարդն պղծիցի,,. զի մի՛ յիշեսցին 'ի միջի նոցա իրքն այն: "Ապա թէ ցուլ ուրուք զցուլ սպանցէ, ցուլն կենդանի տուժեսցի ընդ մեռեալ ցլուն. և եթէ հարկանիցէ զայր, քարկոծ լիցի,,. այն իսկ է՝ զի ասէ "Ի ձեռաց ամենայն գազանաց խնդրեցից զնա,,. խորհուրդ կատարելոյն. զի պահանջէ զնա

'ի վախճանի յամենայն գաղանաց։ "Ապա եթէ զծա-
ռայ, ասէ, կամ զաղախին հարցէ, երեսուն սատեր
տացէ տեառն նորա. և ցուլն քարկոծ լիցի". խոր-
հուրդ տեառն մերոյ և Յուդայ։

"Ապ' եթէ յական գտցի գող, և հարցի 'ի գիշերի
և մեռցի անդէն, արիւնն այն 'ի մահ մի գրեսցի։
Ապա թէ արև 'ի վերայ հասցէ, գոյ նորա վրէժխնդ-
րութի. մահապարտ է՝ որ հարկանէն"։ Իբրև զայն՝
զի ասէ "Զի եթէ 'ի հալածել մերձաւորի արեանն,
եթէ գտցէ արտաքոյ քան զքաղաքն ապաստանի և
հարցէ սպանցէ զնա, անպատ լիցի. ապա եթէ արև
'ի վերայ հասցէ՝ պահանջեսցի, տուժելով տուժեսցի
ընդ միոյ չորս. և եթէ ոչ ինչ իցէ գողոյն, զնա իսկ
վաճառեսցեն"։

"Ապ' եթէ ոք ընկերի իւրում յաւանդ տացէ ար-
ծաթ կամ այլ ինչ կարասի զիւր, և գողք գողասցին
'ի տանէ առնն, եթէ գողքն 'ի մէջ եկեսցեն՝ կրկին
տուժեսցի. ապա եթէ ոչ գտցի գողօնն, առաջի դա-
տաւորաց մտցեն բանք երկոցունց, և որ պարտիցին ա-
ռաջի դատաւորաց՝ կրկին տուժեսցի ընկերի իւրոյ"։
Այս ինքն զի երկեցուսցեն զնոսա դատաւորքն պա-
տուհասիւ խրատու, զի գուցէ վասն երդման լինին
նոքա զրկել զքաղուածս, որպէս և ասէ. "Եթէ տացէ
ոք ընկերի իւրում յաւանդ գրաստ, և եզն կամ ոչ-
խար, կամ զինչ անասուն և իցէ. կամ բեկցի, կամ
մեռցի, և ոչ ոք գիտասցէ, երդումն այ եղիցի 'ի մէջ
նոցա. ապ' եթէ 'ի նմանէ գողասցին՝ տուժեսցի նա
տեառն կարասոյն. և եթէ բեկցի, բերցէ զնա 'ի
վկայութի. և ընդ բեկելոյն մի տուժեսցի"։ Փոխանակ
այնր՝ զի ասէ "Եթէ վարձու առեալ իցէ, վարձուց
իւրոց գինք են". հեբրայեցի, "Թէ վարձուց է, յա-
ւելցէ տեառն նորա 'ի վարձս նորա"։

Եւ զի ասէ "Մի մատուցես 'ի վերայ խմորե-
լոյն զարիւն զոհից քոց, զի աղտեղեալ են և շարա-
ւոտեալ". զի բազում անգամ խմոր յորժամ թթուեն
յանօթս բազումս փոփոխեն՝ որ ոչ իցէ սուրբ. կամ
թէպէտ և սուրբ իցէ, սակայն դարձեալ կարդի նա,
և այնոքիկ որ գալոցն է ոչ պահեն զնա. Իբրև զայն
զի ասէ. "Մեղր մի մատուցես պատարագ վասն մե-

դուի, զի իջանէ 'ի վերայ մեռելոտւոյ և 'ի վերայ ամենայն պղծութե̃. կամ զի ոչ անկանի 'ի նա աղ։ "Զամենայն զպատարագ քո, ասէ, աղիւ համեմես֊ ցես"։

"Մի՛ եփեսցես զուլ 'ի կաթն մօր իւրոյ"։ Կամ զի մի՛ զոհեսցէ զնա մինչ դեռ յղի է նովաւ, կամ մինչ չև լցեալ է նորա ութ օր, մի՛ պատարագեսցի նա ընդ մօր իւրում 'ի զոհս պատարագաց. քանզի գրեալ է վերագոյն քան զնա, ասէ. "Որթ կամ գառն յորժամ ծնցի, նոյն օրին մի՛ զոհեսցես ինձ. այլ զի լցցի նա կաթամբ իւրով զութ օր, և ապա մա֊ տուսցես"։ Այլ այս ինքն զի դա՛լն մօրն այրէ զգութ աղեաց իւրոց 'ի բորբոքել սիրոյ մանկանն 'ի սիրտ մօր իւրոյ։ Արդ զի մի՛ ցաւեցուսցէ զգութ աղեաց նորա, ընդերկարեաց զութ օր, որպէս զի ցածիցէ և զո֊ վասցի այրումն գթոյ աղեաց նորա, և ապա մատու֊ ցեալ լինիցի նա 'ի զոհս պատարագաց։ Սոյնպէս և զթլփատութ̃ին՝ յաւուրն ութերորդի, ասէ, թլփա֊ տեսջիք, զի մի՛ 'ի ձայնէ ճչելոյ 'ի ցաւոց անտի չար֊ չարանաց թլփատութե̃ մանկան՝ նեղիցի չարչարիցի գութ աղեաց մօր նորա. մանաւանդ զի չէ 'ի մա֊ նուկն համբերութիւն, և յանդամս նորա զօրութի̃։ Կամ պարզ ուղիղ՝ զի մի՛ ոք զենցէ ուլ և եփեսցէ զնա 'ի կաթն մօր իւրոյ. կամ զի մի՛ եփեսցեն զուլ և զմայր 'ի միասին. կամ զի կաթն սնուցիչ նորա՝ մի՛ եղիցի եփիչ նորա. այն զի և պահեն իսկ հովիւք մինչև ցայսօր ժամանակի, զի ոչ եփեն զուլ 'ի կաթն մօր իւրոյ։ Դարձեալ, մի՛ եփեսցեն զուլ 'ի կաթն մօր իւրոյ. այս ինքն զանդրանիկս խաշանց քոց վաղ֊ վաղակի մատուսցես ինձ, զի մի՛ ագահեսցես դու 'ի վերայ նորա յորժամ աճիցէ։ Այս իսկ է՝ զի ասէ. "Մի՛ գործիցես դու անդրանկօք զուարակաց քոց, և մի՛ կտրեսցես դու զանդրանիկս խաշանց քոց"։ Կամ այն իսկ է՝ զի ասէ. "Մի՛ հատուսցէ որդի զմեղս հօր իւրոյ"։

"Եւ զթիւ աւուրց քոց կատարեցից". զի ոչ եթէ կէտ ինչ էր, ոչ ամենայն մարդոյ, այլ Իսրայէլի. այս ինքն զի մի՛ եղիցի կին ամուլ, և այր անսերմն. այլ բազմասցի զաւակ քո, և մի՛ մեռցի յառաջ քան զծե֊

րանալ, այլ կատարեալ աւուրբք իւրեանց. իբրեւ զայն՝ զի ասէ Դաւիթ. «Բայց եթէ մեռցի 'ի պատերազմի, կամ տէր հարցէ սպանցէ զնա, կամ օրհաս իւր հասցէ»: Եւ եթէ օր նորա է՝ զիա՞րդ 'ի պատերազմի. և եթէ 'ի պատերազմի՝ ոչ էր օր նորա: Երիս դնէ անդ. եթէ ապրեսցի յերկուց անտի, հարկ է ծերանալ և 'ի մահիճս իւր մեռանել:

«Մեղուս, ասէ, առաքեսցէ տէր առաջի քո». զի յայտ արասցէ զքաղցրութի̃ պտղոյ երկրին պարգեւաց սիրելեաց իւրոց, և դառնութի̃ սրոյ ատելեաց իւրոց. զի քաղցրութի̃ 'ի բերանոյ նորա ճաշակեալ լինէր, և դառնութի̃ 'ի խայթոց նորա չարչարէր: Կամ զի լուան նոքա՝ թէ ազգք բազումք են, զի մի յորժամ յաղթեսցեն, ասիցեն՝ թէ մեք յաղթեցաք. իբրեւ զայն զԳեդէոնին. «Ես, ասէ, առաքեմ զօրս». իբրեւ ոք զի ասիցէ՝ իբրեւ զմարախ: «Մեղուս առաքեսցէ տէր». զայնոսիկ՝ որ 'ի ձեռս ձեր հանդերձեալ էր ա̃ծ հարկանել սատակել զնոսա վասն անհաւատութե̃ նոցա: «Առաջի մեղուաց». այս ինքն առաջի անարգ և արհամարհ մեղուաց տկարացուսցէ զնոսա: Փոխանակ այնր՝ զի ասէ «Առաքեցից զմեղուդ առաջի քո». հերբայեցի, «Առաքեցից զհարուածս իմ առաջի քո, և սատակեցից զքանանացիս», այլովք հանդերձ:

Եւ այն՝ զի ասէ «Ոչ սակաւ սակաւ սատակեցից զնոսա, զի մի գազանք անապատի բազմասցին», զայս կամեցաւ նա ասել. զի մի բազմասցին 'ի վերայ քո մեղք շնութե̃ [1]. զի նոքօք ուսանէին նոքա ոչ եթէ յայտնի պատերազմ, այլ ծածուկ. զ՛ 'ի դադարել 'ի մէնջ [2] արտաքին թշնամեացն՝ զարթիցեն 'ի վերայ մեր ներքին թշնամիք: Արդ զարթնուն 'ի վերայ յայտնի թշնամիքն, զի մի երբէք զարթիցուք և ցածուսցուք զծածուկ զթշնամիսն, և զի թերեւս ապաշխարեսցեն և հեթանոսք: ՅՅակովբ ասէ. «Ես իջից ընդ քեզ, և ես հանից զքեզ անտի»: Եւ զի ցուցցէ՝ թէ ոչ մոռացաւ զնոսա, հնազանդեցան նոքա 'ի գործ աղիւսարկին, ցոյց նոցա յետ փրկելոյն նոցա աղիւս մի շափիւղայ, այս ինքն խորհուրդ ծովու. և աղիւսն

1 Յօրինակին շնութեան:

2 Յօրինակին 'ի մէջ:

նշան հնազանդութե՟ : Եւ այն՝ զի ասէ “Իբրև զլտութիւն երկնից” . հեբրայեցի, “Իբրև զտեսիլ երկնից” . այս ինքն սուրբ : “Եւ 'ի վերայ ծերոց ոչ ձգեաց զձեռն իւր հովանի առնել 'ի վերայ նոցա, զի մարգարէասցին” . զի վասն տեսանելոյ ելեալ էին նոքա անդր : Փոխանակ այնր՝ զի ասէ “Ի վերայ ծերոց ոչ ձգեաց զձեռն իւր” . հեբրայեցի, “Եւ առ Մովսէս զարիւնն և ցանեաց, ասէ, 'ի վերայ սեղանոյն և 'ի վերայ ժողովրդեանն” . այս ինքն՝ զի ոչ կարաց նա 'ի վերայ ամենայն ժողովրդեանն ցանել զարիւնն . բայց միայն 'ի վերայ այնոցիկ որ մօտն էին առ նա, ասէ . “Եւ տեսին զա՟ծ Իսրայէլի և այլքն ևս, յորոց վերայ ոչ եհաս արիւնն . կերան և արբին և ուրախ եղեն” : Եւ այն՝ զի ասէ “Ըստ նմանութե՟ն որ երևեցաւ քեզ 'ի լերին անդ”, զի կարծիս տացէ նոցա թէ այսպէս իցէ յերկինս, զի եղիցին չքեղ և ահագին . և զի մի՛ կարծիցեն եթէ այսօր խորհեցաւ թէ եղիցի այսպէս :

ԳԼՈՒԽ Զ

“ԻԲՐԵՒ ետես, ասէ, ժողովուրդն թէ յամեաց Մովսէս 'ի լերին անդ, կուտեցան 'ի վերայ Ահարոնի և ասեն ցնա . այրն այն, ասեն, Մովսէսն՝ որ եհան զմեզ յերկրէն եգիպտացւոց, չգիտեմք զի՞ եղև նմա . արդ ո՛ն արի արա մեզ աստուածս, որ առաջնորդեսցեն մեզ” : Եւ յայսմանէ ուսաւ և Յորոբովամ, զի ոչ եթէ մի որթ միայն խնդրէին նոքա . բայց Ահարոն զմին արար, և զմիւսն արգել . զի այնու զոր արարն՝ ժողովեսցէ զանօրէն զբարոն . և այսու զոր ոչս արար՝ հաւանեցուսցէ զանձն իւր հաւատացելոց : Եւ զիա՞րդ արդեւք խնդրեաց Ահարոն իւր պատճառս՝ թէ մի է ա՟ծ, միայն արժան ձեզ առնել . զհաւանութի՟ն նորա ընկալան, և ձայն բարբառոյ նոցա 'ի բազմաց անտի ոչ դադարեաց . ասեն . “Այս են աստուածք քո, Իսրայէլ” : “Եւ ընդէ՞ր, ասեն, հաներ զմեզ յերկրէ անտի՝ որ բղխէր զկաթն և զմեղր” : Եթէ չար եղև՝ որ ելինն, թշնամանեցին

զկուռսն իւրեանց. և եթէ բարի էր, զրկեցին զաստուածն իւրեանց։ Կշռեաց ծովն զժողովուրդն և զհեթանոսս, զի մի՛ ասասցեն իբրև զայն. “Ա՟ծ լերանց է ա՟ծ նոցա„։

“Յորա դու մեզ, ասեն, աստուածս„։ Ո՛վ մոլորութիւն բազմաց. զխո՞րդ նեղէր նա զմարդն լինել նմա արարիչ աստուածոց։ Զի այն՝ որ արարն նոցա աստուածսն, զնա իսկ արժան էր նոցա առնել իւրեանց աստուած. այլ նոքա՝ որ մոլորութե՟ն կուրացան, այսպէս կարծէին եթէ մեծ իցէ գործն քան զառնելի գործոյն։ Զի այն՝ որ զմանանայն և զլորամարգին հանդերձ ամենայն բարութե՟ք՝ զոր հանդերձեալ էր և տալ նոցա, ետ նոցա. զի ոչ եթէ գնով տայր նոցա կերակուրս, այն՝ որ մեծամեծ փորձանօք գնեաց զնոսա յԵգիպտոսէ. և ոչ եթէ սըրտմնջելով տայր նոցա զվերջինսն, այն որ ողորմութե՟ք և գթութեամբ արար զառաջինսն. զի զփոխարէն չարեաց ընդդէմ Եգիպտացւոց 'ի մէջ Եգիպտոսի ընդունէին. այլ պահէր նա զբարիսն զոր առնէր. զի յառնելն նոցա եղիցին նոքա բով քննութեան առողջն իւրեանց. զի յանդիմանեալ կշտամբեսցին նոքօք եթէ այսուքիկ չէին արժանի։ “Ահա, ասեն, աստուածք քո, Իսրայէլ„։ Եւ եթէ էր նոցա պագեալ երկիր գառինն փոխանակ որթուն, գոյր 'ի նմա հաւանութիւն. թէ վասն փրկութե՟ գառինն զատկաց մոլորեցան նովաւ, և երկիր պագին նմա։ Այլ ոչ պագին նոքա երկիր գառինն զատկաց, զի տեսին 'ի նմա զխորհուրդ ա՟ծութե՟ն. առեցին նոքա զա՟ծութի՟ն և զխորհուրդս նորա, իբրև զայն՝ զի ասէ “Մի՛ մարգարէանայք դուք մեզ յանդիմանութի՟. և բարձէք խափանեցէք դուք 'ի մէնջ զսուրբն Իսրայէլի„։

“Թո՛յլ տուր ինձ, ասէ, 'ի բաց կաց. թող հարից[1] սատակեցից ջնջեցից զժողովուրդդ„։ Ես հողս զտէ՞ր, մոխիրս զա՟ծ. արարեալս զարարի՞չ, հաստեալս հաստի՞չ։ Եւ եթէ մեծարել մեծացուցանել կամիս դու զիս, յո՞յր աչս մեծացուցանես դու զիս. եթէ յաչս ժողովրդեանն, ժողովուրդ ժպիրհ յամառոտ է նա.

1 Յօրինակին հանից։

և փրկանաս դու 'ի մտօս նորա, և լինին նոքա ասել՝ եթէ ոչ Մովսէսի լեալ էր, սատակէր զմեզ յանապատի անդ։ Բայց զի ասես դու զիս՝ թող տուր ինձ. զինչ արասցես։ Զի ջնջել զժողովուրդն։ Մինթէ դարձեալ զեգիպտացւոցն՝ որ մնացինն. ոչ։ Իսկ ապա զամաղէկացւոցն, կամ զքանանացւոցն. ոչ։ Ապա թէ ոչ զո՞ ջնջես. զժողովո՞ւրդն, զզաւակն աբրահամեան, զորդւոցն Սահակայ, զծնունդս Յակովբու. զա՞յս՝ զոր հաներ դու յերկրէն եգիպտացւոց. զա՞յս՝ զոր կոտորեցեր զեգիպտոս, և սատակեցեր 'ի ծովու անդ զեգիպտացւոցն վասն դորա. զա՞յս՝ զոր փրկեցեր դու առաքինութեա՞ք. զա՞յս՝ զոր լուան հեթանոսք ամենայն զփրկութիւն դորա։

Զի՞նչ ասիցեն հեթանոսք որ շուրջ իցեն, կամ եգիպտացիքն. զրպարտեն զքեզ հեթանոսք և եգիպտացիք, և լինին նոքա ասել. ոչ գիտէր նա զայս ժողովուրդ մինչև փորձեաց և առ զչափ նորա. ապ՝ եթէ գիտէր նա զնոսա, ընդէ՞ր յետ փրկելոյն զնա դարձաւ սատակեաց զնոսա յանապատի անդ։ Եւ եթէ այս 'ի մտի էր քո, թող փրկեալ էր զնոսա դոյին փրկութեամբ, և ոչ էր զգացեալ հեթանոսաց զփրկութի՞ւն նոցա, քան այսօր՝ զի լուան հեթանոսք զառաքինութիւն զոր արարեր դու նմա. և արդ կամիս դու սատակել կորուսանել զնա։ Զի՞նչ ասիցեն. ո՞չ ահա համարին նոքա զողորմութիւնս շնորհաց քոց չարութի՞ւն, և լինին ասել՝ զի եթէ վասն այսր հան զնոսա յերկրէն եգիպտայւոց սատակել զնոսա յանապատի անդ, մինթէ գերեզմանք ո՞չ էին յերկրին եգիպտացւոց. կամ ո՞չ էին արժանի թաղել անդ, և վասն այնորիկ հան զնոսա. և զի՞նչ հարկ էր առաքինութիւնքն այնոքիկ փրկել զժողովուրդն, զի դիակունք նոցա գերեզմանաց արժանի ոչ եղեն։ Կամ զեգիպտացւոցն ընդէ՞ր կոտորեաց սատակեաց վասն ժողովրդեանն, զի այսպիսի վախճան կատարածի պահելոց էր նմա։ Կամ թերևս ոչ կարաց տանել զնոսա յայն երկիր խոստացեալ երդմամբ հարցն իւրեանց, վասն այսորիկ հար սատակեաց կորոյս զնոսա 'ի մէջ լերանց։

Զիս իսկ չարարին յամօթ եգիպտացիքն 'ի ժա-

մանակի՝ երբեւ չոգայ ես փրկել զնոսա, տեսէին զիս. զո՞վ եկեալ փրկելդ դու։ Ասեմ ցնոսա՝ զժողովուրդ քոյ։ Ասեն նոքա Ե՞րբ. յորմէ հետէ եւ այսր եղեւ այս ժողովուրդ՝ ժողովուրդ քոյ, ահա ընդ մեզ երկիր պագանէ սա կռոց, եւ առաւել եւս քան զմեզ նոքա նուիրեն նոցա։ Մուտ դու, եւ տես ՚ի սենեակս նոցա զիա՞րդ պագանեն նոքա երկիր որթուցն՝ զոր ուղղեալ եւ եդեալ է նոցա։ Եթէ ընդունիս դու զհեբրայեցիս հանդերձ որթուքն իւրեանց, ապա մի՛ փրկեր զնոսա, զի ՚ի պաշտամանէ մերմէ նոքա ոչ փոխին։ Եւ եթէ ոչ հաւանիս դու, գայ գործն ՚ի մէջ, եւ հաւանեցուցանէ զքեզ։ Երէկ ընդ մեզ որթուց երկիր պագանէին. եւ յորմէ հետէ դու եկիր եղե՞ն նոքա ժողովուրդ որոյ մի ա̃ծ է։ Զայս նախատինս լուան ականջք իմ յերկրէն եգիպտացւոց. եւ չար թուեցաւ ինձ, զի զայս ասացին նոքա յականջս իմ, քան զա՛յն՝ զոր արարին կախարդքն յանդիման իմ։ Եւ ես ՚ի բանս քո հաստատեալ կայի, զի առաքեցերն զիս. նա փոքր մի եւ ես գիտէի զնոսա, զի ընդ նոսա իսկ մնեալ էի ես։ Կարէի ես թաքչել անդէն յերկրին եգիպտացւոց. ՚ի նոցանէ իսկ երկեայ ես առաւել, քան ՚ի Փարաւոնէ. զի նոքա իսկ չարախօսեցին զինէն, եւ դառնային մատնէին զիս։ Դու առաքեցեր զիս յետ փախչելոյ իմոյ. եւ ես այսպէս ակն ունէի՝ թէ փոխեցան նոքա ՚ի բարոյից անտի իւրեանց, եւ վասն այնորիկ առաքեցեր դու զիս. եւ վասն յուսոյ ապաստանի բանիցն քոց անգոսնեցի անարգեցի զարհամարհանս եւ զչարախօսութի̃ս եգիպտացւոց։

Արդ զի՞ ասացեր դու ինձ, բամ "Թո՛յլ տուր, ՚ի բաց կաց. թող հարից սատակեցից ջնջեցից զնա"։ Եւ զբարուոքս որ են ՚ի նմա՝ եւ զնոսա՞ ջնջիցես, եւ ըզծե՞րս կորուսանիցես դու, եւ զտղա՞յս սատակիցես դու. եւ զիս զի՞նչ առնիցես դու, եւ զի՞ս սպանանիցես դու. կամ զիս միա՞յն թողուցուս դու։ Եւ ո՞չ լաւ իցէ ինձ մեռանել առաջի նոցա, քան եթէ ՚ի կեանս իմ տեսանիցեմ ես զայն աղէտ տարակոյս ապականութեան։ Թէ այդ այդպէս իցէ, ե՞ս ուրեմն մեղայ քեզ, եւ ինձ բազմացուցանել յաճախես զտանջանս չարչարանաց ՚ի թողուլ քո զիս տեսանել ինձ զպա-

զանս երկրի և զթռչունս երկնից, զի գայցեն ուտիցեն զմարմինս զայնոցիկ՝ զոր հաներ դու յերկրէն եգիպտացւոց առաքինութեամբ։ Արդ զի՞նչ արարից յետոյ, կամ յո՞ երթայց ես, կամ ո՞վ առնուցու յանձն դարձեալ ընդունել զիս. յԵգիպտո՞ս երթայց, կամ առ ամաղեկացի՞ն և առ քանանացի՞ն երթայց պանդխտութեամբ. զպաշտօ՞ն նոցա պաշտիցեմ, թէ 'ի քեզ հաստատեալ կայցեմ։

Արդ յորժամ հարցանիցեն զիս և ասիցեն. զո՞վ պաշտես դու. զի՞նչ ասիցեմ։ Ասեմ զԱստուած Իսրայէլի։ Ասիցեն զիս. զայն Աստուած պաշտես դու, որ սատակեաց կորոյս զժողովուրդն իւր. ո՞չ ահա նա ասէր՝ որդի իմ է. ո՞չ ասէր՝ անդրանիկ իմ է։ Զիա՞րդ գգուեաց սիրեաց բարձրացոյց զնա, և դարձեալ միւսանգամ անդրէն խոնարհեցոյց կործանեաց զնա. արդ դու ո՞վ ես. եթէ 'ի նոցանէն իցես դու, զիա՞րդ ոչ սատակեցար դու ընդ նոսա յանապատի անդ. և եթէ չիցես 'ի նոցանէ, զիա՞րդ պագանես դու երկիր Աստուծոյն նոցա։ Զի՞նչ ասացից նոցա. ստեցի՞ց, դանդաչեցի՞ց. ասիցեմ թէ չեմ 'ի նոցանէ. նա թլփատութիւն և շաբաթն և ընտրութիւն կերակրոցն յանդիմանեն զիս։ Եւ եթէ ասիցեմ՝ թէ 'ի նոցանէն եմ, ասեն. իսկ դու զիա՞րդ ապրեցար։ Զի՞նչ ասիցեմ ցհեթանոսսն՝ առ որս եմն երթանայցեմ. ասե՞մ Մովսէս եմ ես։ Սկսին նոքա նախատել զիս և ասել. ո՞չ շատ իցէ քեզ այն, զի աւերեցերն դու զԵգիպտոս և սատակեցեր կորուսեր զժողովուրդն. զի՞ եկիր դու դարձեալ այսր. միթէ պատրել հանե՞լ կամիս դու զմեզ յանապատ սատակել կորուսանել և զմեզ եւս, որպէս սատակեցեր կորուսեր դու զժողովուրդն՝ զոր հաներ յերկրէն եգիպտացւոց։

Արդ զայս արասցես դու ժողովրդեանն, որ չորք անկիւնք լուան զփրկութիւն՝ զոր արարեր դու նմա։ "Թո՛յլ տուր ինձ, ասէ, թող սատակեցից ջնջեցից զժողովուրդն"։ Եւ յորժամ ջնջես դու զնոսա, ես 'ի մէջ հեթանոսաց վասն օրինաց քոց և վասն այլոյ ընչի ոչ կարեմ երթալ. զի՞նչ արասցես դու զիս, եթէ շնորհս ողորմութեան առնիցես ընդ իս, յայսմիկ՝ զի միայն թողուցուս զիս. մահ լաւ իցէ ինձ քան

զայս կեանսս. Թափուր է ինձ անապատս աւերակ։ Արդ զի՞նչ առնիցես, զի մնամ ես միայն 'ի սատակման նոցա. կամ թէ զորդիս նոցա թողուցուս դու, և այն որդիքն ո՞չ ահա որդիք են նոքա հարցն այնոցիկ։

Մի՛ տրտմիր դու, ո՛վ Մովսէս. յազգ մեծ և 'ի հզօր արարից զքեզ։ Տէր, ազգին՝ որում իշխան կացուցանես զիս, ուստի՞ իցէ. յոչընչէ՞ հաստիցես զնա, թէ յերկրէ աստի ստեղծուցուս զնա. կամ թէ 'ի վերայ եգիպտացւոց դարձուցանիցես կացուցանիցես զիս, թէ 'ի վերայ քանանացւոցն այնոցիկ՝ զորս մեքն երթամք հարկանել և սատակել զնոսա վասն գործոց իւրեանց չարաց. թէ զհեթանոսս ածիցես դու 'ի հեռաստանէ, և կացուցանիցես զիս իշխան 'ի վերայ նոցա։ Եւ այն ժողովուրդ՝ զոր ածիցես դու կամ յարուցանիցես, ո՞չ մեղանչիցէ. կամ յորժամ մեղանչիցէ, և զնա նո՞յնպէս առնիցես դու։ Եւ եթէ այսպէս առնիցես դու զնա, լաւ իցէ նմա թէ ոչ հաստիցի և ոչ եկեսցէ, քան եթէ յետ հաստելոյն դարձեալ միւսանգամ այսպիսի կատարած լինիցի նմա։

Արդ զի՞արդ ընդունիցին զիս ժողովուրդն՝ զոր ածիցես դու, կամ առ քեզ զի՞արդ հաւանիցին գալ. նշանս և սքանչելիս մեծամեծս քան զայս՝ որ եղեն յերկրին եգիպտացւոց և յանապատի անդ՝ թէ առնիցեմ ես 'ի մէջ նոցա, փոխանակ զի ընդունելով ոչ ընդունիցին զիս, և դարձեալ նախատիցեն զիս և կարդայցեն զիս սպանօղ ժողովրդեան իւրոյ և սատակիչ որդւոց ազգի իւրոյ, և գալ ընդ իս ոչ հաւանիցին. և զի՞նչ քարոզիցեմ ես նոցա. զառաքինութիւն՝ որ յերկրին եգիպտացւո՞ց արարեր, թէ զսքանչելիսն՝ զոր արարեր յանապատի աստ։ Եւ յորժամ հարցանիցեն զիս և ասիցեն. ո՞ւմ եղև այս զոր քարոզես դու. արդ զի՞նչ ասիցեմ։ Ասեմ՝ ժողովրդեանն. և եթէ ասիցեն ո՞ւր է. ասեմ՝ սատակեցան. ասիցեն ո՞ւր են աւետիքն և պարգևքն տանն Աբրահամու, և ո՞ւր է այն զի ասէրն "Ի դարս չորրորդ դարձցին նոքա այսրէն". կամ զերդումնն զոր երդուաւ Աբրահամու և ասէ. "Ի զաւակի քում օրհնեսցին ամենայն ազգք"։ Զայս յորժամ երկրորդեսցեն

ինձ, զի՞նչ ասիցեմ նոցա։ Ասեմ համարձակ. վասն զի երկիր պտղին նոքա որթուն, դարձաւ և նա յայնմանէ զոր ինչ և խոստացաւ նոցա։ Եւ զի՞նչ, ասեն, հարկ էր նմա խոստանալ երդնուլ, իբրու գիտէր զնոսա՝ թէ այսպէս են։ Արդ մեզ զի՞ քարոզես դու և ասես. մտանեմք մեք ժառանգել զերկիրն զոր երդուաւ տալ Աբրահամու և զաւակի նորա։ Եւ զաւակ նորա, որ հաճոյ եղև նմա և երդուաւ նմա, ոչ կարաց մտանել, արդ զմեզ տանի՞ նա և մուծանէ այն՝ որ զայնոսիկ ոչ տարաւ մոյծ։ Եւ յայսմիկ իբրև զխաբեբայ թուիցիմ, և իբրու աղուփոխ համարիցիմ ես նոցա, և հաւանել չառնուցու յանձն։

“Թոյլ տուր ինձ, ասէ, թող կոտորեցից ջնջեցից զժողովուրդդ„. և այս՝ զի բացցէ նմա դուռն՝ խընդրել վասն նոցա։ Զի եթէ սատակել զնոսա խընդրէր, Մովսէսի ոչ յայտնէր. և եթէ ջնջել զնոսա կամէր, խրամակարկատի ժողովրդեանն ոչ ցուցանէր. դատաւորն առ խնդրող բարեխօսն ոչ գայր. և պատժարարն առ այն՝ որ ունէր զնախապետութիւն ժողովրդեանն։ “Թոյլ տուր ինձ, ասէ. թող սատակեցից ջնջեցից զժողովուրդդ, և զքեզ արարից յազգ մեծ„։ Եւ ոչ առ յանձն Մովսէս, զի եղիցի և այս ևս վասն փառաց նորա. զի փոխանակ փոքր ժողովրդեանն իւրոյ աղաչեաց զի ապրեսցին, և մեծ իշխանութեանն ակն ոչ առ. զի 'ի փորձ քննութեան մոյծ զնա և յայսմիկ ևս։ Եւ զի ետես ա՟ծ զճշմարտութիւն նորա, առ ակն աղօթից խնդրուածոց նորա։ “Արարից, ասէ, զքեզ յազգ մեծ„. և ոչ կամեցաւ նա հրաժարել յայնցանէ, որք հրաժարեցին 'ի նմանէ։ “Ո՞վ, ասեն, արար զքեզ իշխան և դատաւոր 'ի վերայ մեր„։ Ո՞չ կամիս դու քարոզել այլոց, ահա քարոզէ զքեզ ազգն մեծ։ Ո՞ր. հեթանոսք։ Եւ զօրագո՞յն է քան զժողովուրդն. այո. զի ասէ նա վասն Իսրայէլի. “Դուք նուազ էք քան զամենայն հեթանոսս„։ Եւ բանն նորա վկայեաց՝ թէ լաւագոյն է ազգն այն քան զայն, որում Մովսէսն առաջնորդէր։ Եւ եթէ վասն դարուն այնորիկ ասաց, որդիք նոցա ո՞չ ահա անդ էին. զի որդւոց նոցա ոչ էր լեալ Մովսէս առաջնորդ։ Եւ զի՞արդ ասաց “Արարից զքեզ

յազգ մեծ և 'ի հզօր քան զնոսա ,, ։ Այլ այս՝ փո-
խանակ զի տրտմեցաւ Մովսէս վասն նոցա . որպէս
Շմուէլ՝ զի տրտմեցաւ վասն Շաւուղի , ասէ ցնա .
“Երթ օծ դու զԴաւիթ ,, ։

Օ՛ի տեսին նոքա զպայթիւն երկնից , և զփայլիւն
փայլատականց , և զթանձրութի՛ ամպոցն զօրութե՛ .
և իբրև այն՝ թէ անդ միայն իցէ և ոչ ընդ ամենայն
տեղիս . այլ զի արկցէ զահ և զերկիւղ իւր 'ի վերայ
նոցա . “Քաջալերացարուք պնդ կացէք , զի փորձել ,
ասէ , եկն առ ձեզ տէր ա՛ծ . զի տնկիցէ 'ի սրտի ձե-
րում զերկիւղ զահի իւրոյ ,, ։ Թէպէտ և զայս արար
ընդ նոսա , սակայն կալ ա՛նալ զայն զքառասուն օր ոչ
կարացին համբերել ։

Ասէ ցՄովսէս . “Անօրինեցաւ , ասէ , ժողովուրդն
քո ,, ։ Եւ իբրև ետես Մովսէս՝ թէ մեղան նոքա , զի
ցրեաց զնոսա Ահարոն . և եթէ Ահարոն յանցոյց
զնոսա , զիա՞րդ ոչ ընկալաւ նա զպատիժս պատուհա-
սից ։ Այլ քանզի Մովսէս զԱհարոն և զՈվր հրա-
մայեաց 'ի վերայ ժողովրդեանն . և ինքն գնաց , յայտ
առնէ մեզ բանն Ահարոնի՝ եթէ զՈվր քարկոծելով
քարկոծեցին . յասել իւրում “Սակաւիկ մնաս ևս
քարկոծ առնէին զիս ,, ։ Եւ տրտմեցաւ Մովսէս վասն
նորա . զի երկեաւ նա , զի մի քարկոծ լիցի՝ որպէս
ընկերն իւր ։ Բայց ոչ լի կատարեալ տրտմեցաւ վասն
նորա . զի և ոչ ա՛ծ ած 'ի վերայ նորա զպատիժս պա-
տուհասից , և ոչ Մովսէս գրեաց 'ի վերայ նորա խը-
րատ ըստ անուան յանցանացն ։ Եւ զի գրեաց զկնի
նորա պակասութի՛ , իբրու չիք զկնի նորա յանցանք ,
զի մի եղիցի զրոյց նոցա գայթագղութի՛ . և կարծի-
ցեն թէ ակնառութե՛ թողեալ՝ անփոյթ արար 'ի նը-
մանէ ։ Յայնմիկ՝ զի ասէ “Սակաւիկ մնաս ևս քարկոծ
առնէին զիս ,,, յայտ արար՝ թէ աւելի քան զզօրու-
թի՛ նորա հակառակեաց կաց ընդդէմ նոցա , զի խըռ-
տամայր սիրտ նոցա . զի եթէ մեռեալ բարձեալ էր
նա յերեսաց նոցա , զի այլ առաջնորդ և գլուխ էր
հրամայեալ նոցա առ 'ի Մովսիսէ ։ Զի եթէ զեր-
կուսին քարկոծեալ էր նոցա , ո՞վ կարէր կալ առաջի
նոցա . նոյն ժամայն անդրէն դառնային , և մտանել
յԵգիպտոս փութային ։ Զօրացան 'ի վերայ եգիպ-

տացուցն. և Փարաւոն և զօրութիւնք նորա ընկղմեցան:
Եւ փոխանակ զի գոհասցին, սկսան սիրտք նոցա եր-
կիծանել մեղօքն. և 'ի նշանաց և 'ի սքանչելեաց
անտի՝ որ շուրջ պատեալ էր զնոքօք, ոչ ամաչեցին.
և 'ի Մովսիսէ ոչ երկնչէին՝ թէ գուցէ իջանիցէ վաղ-
վաղակի:

Արդ եթէ Ահարոնի զկամս նոցա չէր արարեալ,
անդրէն յեգիպտոս դառնային նոքա. վասն այսորիկ
համբեր Ահարոն յանձն իւր և հաւանեցաւ նոցա,
զի մի՛ ժողովուրդն սատակեսցի յա՟յ խստութե՟ք, և մի՛
ինքն քարկոծ լիցի, և մի՛ Մովսիսի տրտմութի՟ն եղի-
ցի: Արդ արար նա խորհրդիւ, զի մի՛ ժողովուրդն ա-
ռանց առաջնորդի եղիցին, և ապստամբեսցին. և
հնազանդ եղև կամաց նոցա: Քանզի գիտաց նա՝ թէ
այն ինչ ոչ նկարեցաւ 'ի խորհուրդս նոցա 'ի ծածուկ,
արժանի է պատժոց պատուհասից. և զի խրատեսցին
նոքա մինչ դեռ 'ի ծածուկ է, գայթակղութիւն էր
այն բազմաց: Արդ արար նա զկամս նոցա, քանզի
գիտէր իսկ եթէ վասն այնորիկ մերժեցաւ հեռացաւ
'ի նոցանէ Մովսէս առ ժամանակ մի: Եւ զի ստու-
գեալ էր՝ թէ իջանէ Մովսէս, և խնդրէ զվրէժ 'ի նո-
ցանէ, անփոյթ արար. որպէս զի յայտնի եղիցին ա-
մենայն սիրելիք որթուն:

Բայց էջ Մովսէս և պատուհասեաց զԱհարոն. ոչ
եթէ զի ոչ գիտէր՝ թէ ոչ է Ահարոն հաղորդ յան-
ցանացն նոցա, այլ իբրև ետես թէ Ովր մեռաւ, և
'ի միտ առ՝ թէ իմաստութե՟ք մեծաւ արար Ահարոն.
և ունել շնորհս նմա 'ի ծածուկ էր յիւրայէլէ, և
յայտնի էր որթն ձուլածոյ: Եւ զի ժամանակ էր
վրիժուց խնդրելոյ, զի մի՛ եղիցի տեղի կարծեաց
ակնառութեանն վասն նորա՝ իբրու նա է առնելի որ-
թուն, սակայն ազատեաց զնա 'ի բամբասանաց, և զնո-
սա սատակեաց: Նախ ընդհարաւ ընդ նա, զի իբրև
ետես Իսրայէլ՝ եթէ Ահարոնի ցասեաւ, երկեան
զարհուրեցան յոյժ տալ պատասխանի Ահարոնի: Եւ
անփոյթ առնելն ա՟յ, զի ոչ յիշեաց զյանցանս նորա,
կամ ամենայն՝ զի ոչ յիշեաց ա՟ծ 'ի վրէժխնդրութե՟ն
անդ զյանցանսն Ահարոնի, զի աղօթս մատոյց վասն
նորա Մովսէս առաջի տեառն Աստուծոյ: Զի 'ի

զգուշացուցանելն Մովսիսի զժողովուրդն յԵրկրորդ-
յօրինման, բերէ զնա 'ի մէջ իմաստութեամբ և ասէ ·
“Նա և 'ի վերայ Ահարոնի աղաչեցի ես յայնմ ժա-
մանակի „ · այս ինքն՝ ոչ եթէ ակն ինչ առ Աստ-
ուած, զի ոչ ած 'ի վերայ նորա զպատիժս պատուհա-
սից · զի ես աղաչեցի վասն նորա ։ Այլ այս՝ զի ասէ
աղաչեցի, 'ի հարցանել խնդրել եդ զնա ։ Վասն էր
զամենայն Իսրայէլ որպէս զԱհարոնն ոչ ապրեցու-
ցեր, ով Մովսէս ։ Սակայն և այս 'ի միջի եդեալ է ։
Զի եթէ գիտէր ա̄ծ՝ եթէ չարաչար խնդրեաց Մով-
սէս, ոչ առնու յանձն · և այն՝ զի ասէ “Ողորմե-
ցայց որում ողորմեցայց, և գթացայց 'ի վերայ՝ յո-
րոյ վերայ գթացայց „ ։ Եւ իբրև այն՝ զի 'ի վերայ Ա-
հարոնի և 'ի վերայ ղևտացւոց ասացեալ է՝ գթա-
ցայց · և 'ի վերայ այլոցն, զի ոչ հաւանեցան՝ ողոր-
մեսցի ողորմելով ։ Բայց ոչ դարձեալ պատուհա-
սեցաւ, զի առ յա̄յ եղև քննութիւն փորձանաց նո-
ցա · և ոչ կարէր նա արգելուլ զնա · իբրև զայն
զԴաւթին, իբրև կամեցաւ ա̄ծ խրատել զժողովուր-
դըն, ոչ եղև կարօղ Դաւիթ արգելուլ · քանզի 'ի
ձեռն նորա իսկ սկիզբն արար խրատն ամենայն ժողո-
վրդեանն ։

Արդ յանփոյթ առնելոյ անտի ա̄յ, և 'ի տալ պա-
տասխանի Ահարոնի, գիտասջիր՝ զի վասն էր ոչ ըն-
կալաւ նա զպատիժս պատուհասից, զի հազարապետ
եղև նա կամացն ա̄յ · զի կամեցաւ նա քննել զնոսա
յայն 'ի քառասնօրեայ ժամանակի ։ Արդ խելամուտ
լեր դու, զի ոչ եթէ ըստ մեծութե̄ գործոյն պատու-
հասեաց զնա Մովսէս · վասն այսորիկ և Դաւիթ, զի
գիտաց նա՝ թէ ոչ գտաւ 'ի նմա արատ ինչ, ասէ
սուրբ է Մովսէս · և ոչ դադարեաց · այլ ա̄ծ հաւա-
սարեաց ընդ Մովսիսի զԱհարոն ևս · “Եւ Ահարոն,
ասէ, 'ի քահանայս նորա „ ։

ԳԼՈՒԽ Է

Եւ իբրև ել Մովսէս 'ի լեառն, Յիշով ընդ նմա էր. ապա թէ ոչ՝ ոչ տայր նոցա թոյլ անունն Յեշովայ երկիր պագանել կռոց: Այլ իբրև ելին նոքա 'ի լեառն անդր, Յիշով մնաց 'ի խոնարհ անդր, և Մովսէս ել 'ի վեր. զի ահա 'ի դառնալ անդ Մովսիսի և իջանել ասէ ցնա Յեշով. "Ձայն պատերազմի լսեմ ես 'ի բանակէ անտի": Զի եթէ 'ի բանակի անդ լեալ էր նորա՝ զայն ոչ ասէր, զի գիտէր նա թէ որթու երկիր պագին. և եթէ ընդ Մովսիսի էր՝ զայս ոչ երկրորդէր նմա, զի լսէր նա զայն. զի ասաց "Անօրինեցաւ ժողովուրդն քո": Փոխանակ այնր՝ զի ասէ "Զձայն բարբառոյ մեղաց լկտութեան լսեմ". հեբրայեցի, "Ձայն բարբառոյ երգոց լկտութե":

Եւ եղև իբրև մերձեցան 'ի բանակ անդր, հայեցաւ ետես, ասէ, Մովսէս զորթն, և շուրջ զնովաւ զկաքաւիչս պարուն. բարկանայր 'ի սրտմտութի իւր, զձեռն զձերբ ածէր, և ընկենոյր զտախտակսն քարեղէնս՝ խորտակէր անդէն առ ստորոտ լերինն: Ընկէց զտախտակսն ընտիրս, զի ձեռք պիղծք զնա մի ընկալցին. ջնջեաց զգիրն սրբութե, զի աչք պիղծք ընդ նա մի հայեսցին. ընկէց զօրէնսն 'ի ձեռաց իւրոց, զի անիծեալ բերանովն՝ որով զորթն համբուրեաց, մի ընթերցցի զնա. զոր օրինակ ոք զձեռն զօձեօք արկանէ և զպատմուճան պատառէ՝ յորժամ տեսանիցէ թշուառութի ինչ 'ի տան իւրում, սոյնպէս և Մովսէս բուռն հար և ձգեաց յինքն, և պատառեաց զպատուիրանսն իբրև զպատմուճան մի 'ի տեսանել նորա զկուռսն, որ կապուտ կողոպուտ արարին զսիրտ որդւոց ազգի ժողովրդեան իւրոյ: Իբրև ետես չարն զնծութիւն՝ թէ 'ի ձեռն տախտակացն իջանէ և խառնի ընդ մարդկութի, 'ի ձուլել որթուն խառնեաց զնոսա ընդ կռապաշտութի:

Խորտակեաց Մովսէս զտախտակսն սրբութե, զի յայտ արասցէ՝ թէ ոչ եղև ժողովուրդն վասն տախտակացն, այլ տախտակքն վասն ժողովրդեանն. սոյն-

պէս և տաճարն և քահանայութ՟ին և թագաւորու-
թ՟ին ։ Ոչ եթէ հրեշտակ գրեաց զպատուիրանսն 'ի
վերայ տախտակացն, զի ոչ եթէ նա է տուիչ օրի-
նաց. կոփածն մարդոյ, և գիրն ա՟յ. զի յայտնի լիցի
եթէ հաղորդեալ է ա՟ծ ընդ մարդոյ օրինօքն. ա՟ծ 'ի
տալ իւրում, և մարդ 'ի պահել իւրում ։ Ետ նա
մեզ զգիր օրինաց, զի տացուք մեք նմա զպահել օրի-
նացն. գրեաց զնա ձեռնն տիրացեալ, զի թեւակոխի-
ցի նովաւ ազատութ՟ին տիրացեալ. գրեաց զնա ա՟ծ,
իջոյց զնա մարդ ։ Մովսէս քանզի ա՟ծ էր ժամանա-
կեան միոյ, և կտակարանք ժամանակեան տուան 'ի
ձեռս նորա. այլ տէր մեր քանզի ա՟ծ կատարեալ է,
և կտակարանք նորա յաւիտենից են ։ Վասն Մով-
սիսի ասէ. “Ետու ես զքեզ աստուած Փարաւոնի”.
բայց վասն Որդւոյ ասէ. “Ա՟ծ ամենայն երկրի կոչես-
ցի” ։ Կտակարանքն Մովսիսի անկեան միոջ գաւա-
ռի միոյ փոքու. և Որդւոյ կտակարանք ամենայն ծա-
գաց երկրի ։

“Եւ առ, ասէ, Մովսէս զորթն՝ զոր արարեալ էր,
այրեաց զնա 'ի հուր, և խարտեաց զնա մանր և ցա-
նեաց զնա 'ի վերայ ջուրցն, և արբոյց որդւոցն Իս-
րայէլի” ։ Եւ իբրև մտին ջուրքն աղացեալ որթուն
առ սիրտ նոցա, այն՝ որ սիրեաց զորթն, պատահեաց
որթն աղացեալ սիրով իւրով, և գոչեաց նա 'ի մէջ
որովայնից նոցա թէ այս սէր՝ սէր մեղաց է. և իբր ոք
զի ասիցէ, զի բերան չիցէ նորա խօսելոյն, իբրու զգլու-
խըս իւրեանց առաջի նորա խոնարհեցուցանէին, որ-
պէս իբրև բանիւ արգելցէ և կարճեսցէ զժպրհութ՟ին
համարձակութ՟ե նոցա ։ Իբրև եղև նմա տեղի և առ-
սեղան 'ի պատուէր հրամանի, յայտ արար զկամս
բնութ՟ե իւրոյ, զի ոչ հաւասարէր նա ցանկութեան
ժպրհութ՟ե համարձակութ՟ե նոցա ։ Արդ գոչեաց
նա յորովայնի այնոցիկ՝ որք սիրէյին զնա, և մեծաւ
նախանձու զերկրպագուս իւր հեղձ պայթոյց. այս է
որթ՝ որ ծնաւ պոռնկութ՟ք, և աղացաւ նախանձու,
և արբաւ օրինօք, և յղացաւ 'ի քննութիւն. զի ա-
մենայն սիրտ ամուլ՝ որ ոչ ընկալաւ զսերմն զամուս-
նութ՟ե սիրոյ նորա, ոչ ապականեաց զնա նշանն քըն-
նութ՟ե. քանզի ոչ գոյր 'ի նմա յղութիւն պաշտա-

մամն նորա ։ Նա և աստի իսկ տուաւ օրինօքն , և հաստատեցաւ պատուիրանն , զի ամենայն կին որ զանցանիցէ զարամբ իւրով , եկեսցէ նա առ քահանայն . զի 'ի գալն նորա առ քահանայն , 'ի ցուցանել զյատակ նախանձ իւր որդւոյն Ահարոնի՝ թէ առեալ ես ըղջնութիս , և ոչ եմ ես հաճեալ ընդ ումուսնանալ ինչ կնոջն իմոյ՝ եթէ անցցէ նա ըստ ճանապարհ ամուսնութե իմոյ , եղիցի 'ի յիշել և յիշեցուցանել զպոռնկութիւն որթուն ։ Զի յայտնել կնոջն նորա , ջուրբքն քննութե զգուշասցի ինքն յանցանելոյ ըստ ճանապարհ այ իմոյ . մանաւանդ զի նախանձուն իւրով ազատի նախանձն այ . և 'ի գալն նորա առ քահանայն , բարձցէ զեպերանսն յայնմանէ՝ որ արդարութբն խնդրեաց զվրէժն պոռնկութե ժողովրդեան իւրոյ ։ Վասն այսորիկ գրէ 'ի ժամանակի իբրև յափըշտակեցին հեթանոսք զժողովուրդն նորա յասել իւրում . “ Նախանձեցայ ես 'ի Սիոն նախանձ մեծ „ ։

“ Օ եսող առ , ասէ , Մովսէս առաջի դրան բանակին և ասէ . հապա , եթէ ոք 'ի տէր պանձացեալ իցէ , առ իս մատիցէ ։ Յայն վայր վաղվաղակի հասանէին որդիքն Ղևեայ ։ Սկսաւ խօսել Մովսէս և ասէ ցնոսա . այսպէս ասէ տէր ած Իսրայէլի . լցէք կատարեցէք զձեռս ձեր այսօր տեառն յարենէ եղբարց ձերոց , զի տուեալ լիցի 'ի վերայ ձեր օրհնութի „ ։ Ո՞րայն զօր ասաց , զի զեղբարս իւր ոչ ծանեաւ , դիցէ նա խունկս 'ի բարկութե քում ։ Եւ զիա՞րդ , ով տէր Մովսէս . առ վրէժխնդրութի անձին քո հեզ և հանդարտ ես դու , և առ գործ այ խիստ և սաստիկ ես դու ։ Սակայն նմին իսկ Աստուծոյ նման լինին երկըրպագուք [1] նորա . այն որ զիւրն անփոյթ առնէ , և զծառայից իւրոց վրէժ խնդրէ ։ Զի թող նա այնոցիկ՝ որք երկիր պագին որթուն , և առ խընդրեաց զվրէժ յայնցանէ՝ որք բամբասեցին զՄովսէս . սոյնպէս և Մովսէս ։ Իբրև աղաչեաց Մովսէս , եթող ած զմեղս ժողովրդեանն ։ Էջ Մովսէս , և առ խընդրեաց զվրէժ հատուցման 'ի նոցանէ նշանաւ ջուրբքըն քննութե , և 'ի սուր սայր սուսերի զևտացւոցն ։

1 Յօրինակին Երկրպագուք ։

Թեպէտ և սպանութ̄ի պղծիչ է սպանողի, սակայն առ որդիսն Ղևեայ սուրբ է և յստակ, զի 'ի սպանանելն իւրեանց արդարացան, և 'ի հեղուլ իւրեանց զարիւն քաւեցան. որպէս Մովսէս 'ի սպանանելն իւրում առաջինացաւ. և Փենեհեզ յաշտիճան մեծութ̄ե քահանայութ̄ե եհաս. և Եղիա զքուրմս, և Շմուէլ զԱգագ։

"Եթէ Թողուս նոցա, ասէ, զյանցանս Թող. ապա Թէ նոցա զյանցանսն ոչ Թողուս, և զիս ջնջեա 'ի դպրութ̄է քումմէ՝ զոր գրեցեր կենաց"։ Բայց բազմացաւ գութ ողորմութ̄ե ա̄յ քան զաղօթս խնդրուածոց նորա. զի պատրաստեալ էր բարերարն հաշտել՝ յասել իւրում. "Թոյլ տուր ինձ". սակայն Մովսէս եղև ձեռնկալու շնորհացն ողորմութ̄ե նորա, զի մի՛ յառաջագոյն կանխիցէ Թողուցու ողորմածն իբրև չիցէ միջնորդ՝ որ խնդրիցէ 'ի նմանէ. և լինելն այնուհետև բազում չար գործել։

Նա ընդէ՞ր յետ Թողութ̄ե յանցանաց էջ Մովսէս կոտորեաց զժողովուրդն. և յետ Թողլոյն տեառն գրեալ է, ասէ "Հար տէր զժողովուրդն անհնարին հարուածովք". փոխանակ զի պաշտեցին նոքա զորթ, և երկիր պագին նմա։ Զի եթէ էր Թողեալ զնոսա Մովսիսի առանց պատժոց պատուհասից, ժպրհէին համարձակելին նոքա յապստամբութ̄ի, և ուսուցանէին ևս որդւոցն իւրեանց զժպրհութ̄ի համարձակութ̄ե անօրէնութ̄ե մեղացն իւրեանց. վասն այսորիկ առ խնդրեաց զվրէժ հատուցման 'ի նոցանէն։ Եւ եթէ ոչ էր առեալ նոցա զպատուհաս խրատու յա̄յ, այսպէս կարծէին՝ Թէ Մովսէս 'ի կամս իւր խընդրեաց զվրէժն 'ի նոցանէ, և ա̄յ ընդունելի լինէր գործըն նոցա։ Մովսէս եղբարբքն իւրովք որդւովքն Ղևեայ կոտորեաց զնոսա, և ա̄ծ նշանաւ ջուրբքն քըննութ̄ե խայտառակեաց զնոսա։

"Եթէ ոչ, ասէ, դու ինքնին երթիցես առաջի մեր, մի՛ հաներ զմեզ աստի։ Եւ զիա՞րդ, ասէ, գիտասցեն"։ Եւ իբրև հաւանեցաւ առ յանձն, ասէ. "Ցոյց ինձ զփառս քո"։ Զիա՞րդ լինիցիմք մեք որոշեալ մեկնեալ զատեալ յամենայն հեթանոսաց. այնոքիկ՝ որ հրեշտակք նոցա 'ի սպասու առաջնորդու-

թէ, եթէ ոչ դու ինքնին երթիցես առաջի մեր ։ « Եւ կոչեցի զքեզ յանուն իմ տէր » . իբրև զի ասէ . "Արարի զքեզ ած Փարաւոնի » ։ Եւ աստ կատարեաց արդեամբք յայնմիկ, զի իջին նստան փառք 'ի վերայ երեսաց նորա ։ " Քաւեմ զանօրէնութի և զմեղս և զանիրաւութի, և ոչ առնեմ անպարտ զպարտաւորն » . հեբրայեցի, "Եւ խնդրելով ոչ խնդրեմ, ածեմ զմեղս հարց յերիս և 'ի չորս դարս » ։ Ոչ եթէ զմեղս հարց կուտէ 'ի վերայ նոցա, այլ մինչև յերիս և 'ի չորս դարս ներէ և երկայնամիտ լինի առ նոսա . յիշեցուցանէ զնա 'ի վերայ նոցա, զի խնդրեսցէ 'ի նմանէ, յայնմիկ զի ասէ . "Ոչ երթամ ես ընդ ձեզ, այլ հրեշտակ իմ » ։ "Տեսէք, ասէ, մի մեղանչիցեք . գուցէ ոչ թողուցու զմեղս անօրէնութե ձերոյ » ։ Ես, ասէ, թողում . և 'ի մէջ այսց ասէ . "Ես եմ տէր ած ողորմած և գթած, հատուցանեմ զմեղս յերիս և 'ի չորս դարս ատելեաց իմոց » . այս ինքն այնոցիկ՝ որ կատարեալ լինին 'ի կարգս մեղաց հարցն իւրեանց քանանացւոց [1] ։ Այն իսկ է՝ որ Աբրահամուն ասացաւ . ասէ "Հնազանդեսցի զաւակ քո զչորեքարիւր ամ » ։ "Եւ յորժամ լնուն, ասէ, մեղքն ամուրհացւոց, ապա ելցեն նոքա 'ի դար չորրորդ » ։ Զի չոգաւ նա ներելովն և երկայնմտութեն իւրով ընդ մեղաւորս մինչև 'ի դար չորրորդ . և իբրև ոչ դարձան յապաշխարութիւն, առ խնդրեաց զվրէժ հատուցման 'ի նոցանէն ստուգութիւն նորա ։ Փոխանակ այնր՝ զի ասէ "Ցոյց ինձ զճանապարհ քո, և ծանեայց զքեզ » . հեբրայեցի, "Ցոյց ինձ զճանապարհ քո » . այս ինքն յաւուրցն Ադամայ ։ Եւ անդ, ասեն, յայտնեցաւ նմա այն՝ որ գրեաց վասն արարածոց ։

Իսկ զի ասէ "Տեսցես զթիկունս իմ » . այս ինքն յետ հաստատելոյ աշխարհիս ։ "Եւ երեսք իմ քեզ մի երևեսցին » . մինչ չև հաստատեալ էր աշխարհ . տխմարքըն մտօք ասեն զայս . տէր մեր ասէ այն որ է առ ած մտօք իւրովք, նոյն իսկ է նմա տեսիլ առ աներևոյթ ած ։ Արդ Մովսէս ոչ եթէ տեսանել զած գոյիւ իւրով խնդրէր, այլ 'ի պատճառս խնդրելոյ նորա տե-

[1] Յօրինակին քանանացւոց ։

սանել զնա, քարոզեսցի՝ թէ ոչ երեւեցաւ եւ ոչ երեւի։ Իբրեւ զայն՝ զի ասէ “Թոյլ տուր ինձ, թող ջնջեցից զնա”. եւ մատեաւ նա խնդրել ստուգութ̃ք. իբրեւ այն՝ թէ արդարեւ խնդրէր Աստուած ջնջել զնա. բայց եթէ ոք ժողովեսցէ զնոսա ամենեսին 'ի հարցանել, 'ի հարկէ մնացեալ լինին։ Մովսէս իբրեւ լուաւ զձայնն ա̃ծեղէն, իմացաւ թէ այս ձայն օտար է 'ի լսելեաց իւրոց, եւ գովելի է. վասն այսորիկ ասէ “Ցոյց ինձ զփառս քո”։ Եւ զի ասէ “Ոչ կարէ տեսանել զիս մարդ եւ ապրել”. եւ զոր օրինակ օտար են լսելիք քո այնմ ձայնի՝ զոր լուար դու, սոյնպէս եւ օտար է ակն քո այնմ տեսլեան՝ զոր խնդրեցեր դու տեսանել։ Մուտ նա յայրն, փայլեաց 'ի վերայ նորա լոյս. եղեւ նմա իբրեւ երկինք, անկաւ 'ի վերայ նորա ահ եւ երկիւղ. սկսաւ աղաղակել եւ ասել. “Տէր ա̃ծ ողորմած եւ գթած”, այլովքն հանդերձ։

Բայց դարձեալ զի յօժարէր նա տեսանել զա̃ծ, վասն սիրոյ կարծէր նա՝ թէ եւ տեսանել կարեմ. քանզի սէրդ ըստ ամենայն չափս զանցանէ։ Այլ ա̃ծ իբրեւ ետես զնա թէ ոչ մնայ 'ի խնդրուածոց իւրոց, եւ ոչ տեսանել զնա բովանդակ է վասն բնութ̃ե իւրոյ, ցոյց նմա որպէս եւ կարող էր տեսանել։ Եւ զի յայտ արասցէ՝ եթէ այն՝ որ հայր ընդ ա̃ծ՝ ծնեալ լինի նա վերստին, զի եղիցի նա իբրեւ զորդիս ա̃յ, մոյծ զնա յայրն իբրեւ յորովայն. եւ ծնաւ այլ ծնունդ զգեցեալ փառօք՝ որ ոչ 'ի բնութ̃ե իւրում։ Եւ զի ասէ “Ցոյց ինձ զփառս քո”. զայս կամեցաւ խնդրել նա, զի ընդ նմա ճշմարտապէս խօսեցեալ լիցի յա̃յ, եւ ոչ միջնորդաւ. այս ինքն կամ հրով, կամ հրեշտակաւ, կամ բարբառով. այն իսկ է, զի խօսեցաւ ընդ նմա բերան 'ի բերան, եւ ձեռն 'ի ձեռն դէմ յանդիման։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Առաջի իմ երթիցես դու, զետեղեցից զքեզ”, հեբրայեցի՝ “Ես ինքն իսկ երթայցեմ առաջի քո”։ Եւ փոխանակ այնր՝ զի ասէ “Յականէ յանուանէ գիտեմ ըզքեզ”. հեբրայեցի, “Ծանուցից քեզ” ասէ. իբրեւ զայն զԴաւթին, ասէ “Արարից քեզ անուն”։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Փառաւորեցան երեսք Մովսիսի”, հեբրայեցի՝ լուսաւորեցան. այս ինքն իբրեւ զարեգական։

Եւ զի երկիցս անգամ քառասուն քառասունս մնաց 'ի լերինն, ուսուցանելով, ասեն, ուսուցանէր նմա՝ թէ զինչ արասցէ 'ի սպաս պաշտաման խորան ժամուն ։ Եւ ահա ոչ կարէր նա ուսանել առանց պարգեւաց. և եթէ պարգեւօք ուսանէր, յական թօթափել ուսանէր. ամենայն իմաստութեամբ խելամուտ առնէր զնա ։ Այլ զայս ասասցուք, եթէ վասն քըննութեան ժողովրդեանն արգել զնա անդ զքառասուն օր զառաջինն ։ "Գնա էջ դու աստի, ասէ, զի անօրինեցաւ ժողովուրդն քո,, ։ Եւ էջ խորտակեաց զտախտակսն, և ոչ պատուհասեցաւ. զի ժողովուրդ պիղծ և անօրէն էր ։ Եւ քառասուն ևս օր վասն էր. զի մի եղիցին նոքա ասել՝ թէ չեն այս նոյն օրէնք ։ Զի եթէ էր նա իջեալ վաղվաղակի, լինէին նոքա ասել՝ թէ զի՞նչ է, զի առաջին կտակարանքն քառամօրեայ ժամանակօք տուան, և վերջինն փոքր աւուրբք. ոչ են հաւասար վերջինքս առաջնոյն ։ Մանաւանդ զի յայսմ ուխտի աղաչել վասն նոցա ելեալ էր նա, զի մի թեթև իցեն աղօթք նորա որ վասն նոցա. կաց մնաց զքառասուն օր, որպէս զի մեծասցին և յանցանք նոցա յաչս իւրեանց ։

Եւ զի յերկուս տախտակսն տուան օրէնքն, առակ օրինակի երկուց կտակարանաց, իբրու մի է տուիչ նոցա ։ Եւ զի տախտակքն փոխանակ տախտակաց տուան, երկուս ժողովուրդս յայտ առնէ. այն՝ որ խոտեցաւն անարգեցաւ, և եկեղեցի՝ որ ընտրեցաւ ։ Բայց է դարձեալ, զի մի՛ արհամարհեսցին տախտակքըն վերջինք Մովսիսի քան զառաջինսն այ, զգեցոյց նմա շուք փառաց և անուն երկրպագեալ. զի անդ ասացաւ նմա, ասէ "Կոչեցից զքեզ յանուն տեառն,,. զի ըստ նմանութեան այ եղիցի նա ։ Յորժամ գիշերի ելանէր Մովսէս, խաւարն յամենայն յանապատէ անտի փախուցեալ հալածական լինէր, և լոյս 'ի վերայ ամենայն անապատին սփռեալ տարածեալ լինէր ։ Զի լոյսն՝ որ յերեսաց նորա ծագէր, հալածական առնէր զխաւարն յերեսաց յաչաց իւրոց ։ Այլ իբրև տեսանէին զնա որդիքն Իսրայէլի և քանանացիքն, ոչ նոքա երկնչէին և տային զանձինս իւրեանց 'ի ձեռս նորա, և ոչ սոքա հաւանէին աշա-

կերտել նմա ։ Վասն այսորիկ քանանացիքն , զի ոչ ետուն ձեռն Մովսիսի, հրաւիրեցան նոքա 'ի սուր սուսերի յեչովայ աշակերտէ նորա ․ և որդիքն Իսրայէլի աշակերտեցան նմա , հար սատակեաց զնոսա հրամանն ա̄յն Մովսիսին ։ Այլ աչացն Մովսիսի լոյսն որ 'ի նոցանէն հաղորդեալ էր ընդ տեսանելիս նոցին ․ այս ինքն լոյս՝ որ ոչ 'ի բնութ̄ե ընդ տեսանելիսն՝ որ 'ի բնութ̄ե ․ զի ամենայն աչաց տեսիլ գոյ , այլ ոչ ամենայն աչաց լոյս գոյ ։ Սոյնպէս ոչ են կարօտ աչք արդարոց լուսով , զի լոյս նոցա խառնեալ է ընդ հայելիս նոցին ․ որպէս և Մովսէսն , զի մուրացեալ լուսոյ ոչ էր կարօտ , և մարմինն նորա զայսպիսի փառս զգեցեալ էր , զամօթ խայտառակութ̄են Ադամայ ոչ ստացաւ ։

Տասն պատուիրան յերկուս տախտակս ․ հինգ մի՝ և հինգ միւս ․ և համեմատին ընդ միմեանս այսպէս ։ Առաջինն ընդ վեցերորդին ․ երկրորդն ընդ եւթներորդին ․ երրորդն ընդ ութերորդին ․ չորրորդն ընդ իններորդին ․ հինգերորդն ընդ տասներորդին ։ Առաջին՝ Ես եմ Տէր ա̄ծ ։ Երկրորդ՝ Մի՛ արասցես դու քեզ այլ ա̄ծ ։ Երրորդ՝ Մի՛ երդնուցուս յանուն տեառն ։ Չորրորդ՝ Յիշեսջիր դու զօրն շաբաթու սրբել ։ Հինգերորդ՝ Պատուեա դու զհայր քո և զմայր ։ Վեցերորդ՝ Մի՛ սպանաներ ․ եթէ ես եմ , մի՛ սպանաներ ։ Եւթներորդ՝ Մի՛ շնար , պոռնկութ̄ի է քեզ խոտորել յԱստուծոյ քումմէ ։ Ութերորդ՝ Մի՛ գողանար ․ եթէ գողանաս երդնուս ։ Իններորդ՝ Մի՛ սուտ վկայութիւն վկայեր 'ի վերայ ընկերի քո ․ ապ' եթէ չաւատաս դու՝ թէ նա արար զերկինս և զերկիր , վկայութիւն ստութեան վկայես ։ Տասներորդ՝ Մի՛ ակն դներ տան ընկերի քո ․ և որպէս պատուես դու զհարսն քո , սոյնպէս պատուեսցես զընկերն քո ։ Եւ մի՛ ակն դներ ամենեւին զինչ ընկերին քո իցէ ։ Այն իսկ է՝ զի ասէ "Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո „ ։

ԿԱՏԱՐԵՑԱՒ ԵԼՔ ԴՊՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐԱԾՈՑ

ՍՐԲՈՅՆ ԵՓՐԵՄԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ՂԵՒՏԱՑԻՈՑ

ՏԵԱՌՆ

ԵՓՐԵՄԻ

ԽՈՐԻՆ ԱՍՈՐՒՈՅ

ԴՊՐՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

ՂԵՒՏԱՑԻՈՑՆ

ԳԼՈՒԽ Ա

ԱՍՏՈՒԱԾ, զի առ յանձն զպատարագն Իսրայէլի, թէ գուցէ լուեալ իւր 'ի զոհից անտի օգնական ապստամբութեան նոցա լինիցի, և եղիցին նոքա այնուհետև զոհել դիւաց. զի յիշէին նոքա զփափկութիւս իւրեանց՝ որ յերկրին եգիպտացւոց, դառնային նոքա յերկիւղէ նորա, 'ի տալ նոցա ձեռն յայսմիկ իսկ եղև քաւութիւն մեղաց: «Ինձ, ասէ, զոհեսջիք». այս ինքն ըստ օրինաց՝ զոր պատուիրեմ. և անասուն՝ զոր որոշեաց մեկնեաց և զատեաց նոցա, զոր զոհիցեն նոքա[1]. զի ծանրասցին իրքն յաչս նոցա, և մեծասցին քան զհեթանոսայն. զի մի՛ կարծիցեն թէ զոհք դիւաց սուրբ են քան զա̃յ, և զգուշութեամբ մատուցեալ լինին. և դառնայցեն նոքա: Զի թէ ասացեալ էր նոցա անասուն մատուցանել, զայն զոր ոչ մտօք մարդկան ախորժէին, այն զի ոչ դիւաց մատուցեալ լինին նոքա, զի՞արդ ոչ դառնային նոքա առ նոսա: Ապա թէ ոք ընդդէմ դարձցի և ասիցէ՝ թէ վասն դիւաց առ նա յանձն զոհսն Իսրայէլի. Իսկ Աբրահամ, Նոյ և Հաբէլ, որ յառաջ

[1] Յօրինակին նոցա:

քան զօրէնսն մատուցին պատարագ, զի՛նչ են ։ Այլ զայս ասասցուք. զի ուսուսցէ զԻսրայէլ՝ թէ ոչ նոր ինչ է այս, և երկմտեալ բաժանեսցի նա՝ թէ յառաջագոյն են զոհք հեթանոսաց քան զնորայն ։ Սակայն և ոչ առաջնոցն ասաց նա ըստ գրոց մատուցանել զոհս պատարագաց. այլ և զայս ևս արար նա, զի մի՛ պարծիցէ Իսրայէլ՝ թէ 'ի հեթանոսաց ուսան և ընկալան նոքա. անուանեաց 'ի վերայ առաջնոցն, զի յընթեռնուլ իւրեանց զգիրս՝ ծանիցեն և գիտասցեն, թէ յառաջագոյն է հարց նոցա քան զհեթանոսաց ։

Զի բազում են զոր պատուիրեցին օրէնք՝ զոր ուտիցեն, և զոր ոչ ուտիցեն. որպէս սովորութիւնն հաւանեցուցանէ, և 'ի նոցանէ անխայեաց ։ Զի զայն ինչ՝ որ ոչ իցէ նոցա սովորութիւն, մի՛ ուտիցեն. զի քաղցրասցի նոցա օրէնսդրութ̄ին, և ուրախ եղիցին 'ի նա 'ի մեծարել իւրեանց զնա. և զորս բարձն 'ի նոցանէ, զի եղիցի օտար փոքր մի և նորոգ յաչս նոցա. և 'ի նոցանէ հրամայեաց, զի կերիցեն զայնոսիկ՝ որոց եգիպտացիքն երկիր պագանէին ։ Զի 'ի զենուլն իւրեանց զնոսա, իմասցին և գիտասցեն 'ի ձեռն չարչարանաց նոցա՝ թէ ընդունայն և տարապարտուց երկրպագութ̄ի նոցա, այն՝ որ են զուարակք և ոչխարք և այլ ևս ։

Բայց զայնոսիկ՝ որ յերկրին եգիպտացւոց առանց կարգաց 'ի պէտս իւրեանց զնային, և որկորստութ̄ե ագահութ̄ե ուտէին, հեռանալ 'ի նոցանէն հրամայեաց, և զնոսա 'ի նոցանէ կարձեաց. զի նա ինքն է խոզ, այն զի խնդրեցին յանապատի անդ ։ Բայց դարձեալ, քանզի միտք մարդկան կանխեցին յառաջագոյն խոտեցին անարգեցին զբազումս 'ի պատճառս պատճառս, և զնոյն իսկ զսովորութ̄ին յորում կապեալ էին նովաւ դարքն կարգելովն ոչ շրջեցին օրէնքն. բայց զայս նեղեցին, զի կերիցեն զայնոսիկ՝ որոց երկիրն պագանէին եգիպտացիքն. և զայս զի մի՛ կերիցեն, զորս ագահութ̄ե և որկորստութեամբ ուտէին յերկրին եգիպտացւոց. զի բնաւ ամենայնիւ խլեսցէ զեգիպտոս 'ի մտաց նոցա հանդերձ զօհիւք իւրովք ։

Բայց ոչ եթէ մի կարգ էր զոհիցն և պատարագացն. զի է՝ որ փոխանակ զոհից և վասն սրբութե, և է՝ վասն օրհնութե կամ շնորհ ունելոյ, և է՝ որ ըստ կարգի մասին, և է՝ վասն ողջակիզաց։ Զի յորժամ 'ի հիւանդութէ, կամ 'ի պատերազմէ, կամ եթէ պատճառք ինչ ապրելոյ 'ի նեղութէ մատուցանէ, իբրու յիշեցուցանէ զայն զԴաւթայն. "Զի՞նչ տաց, ասէ, տրիտուր տեառն ընդ ամենայնի զոր ետ ինձ„։ Եւ զայս զի ետ նոցա, զի որոշեսցեն. ոչ եթէ սուրբ էին նոքա քան զհեթանոսս։ Զի ահաւանիկ և ոչ զամենայն՝ որ սուրբ էր, հրամայեաց նոցա ուտել. ասէ "Զճարպ դոցա մի ուտիցէք, այլ 'ի վերայ սեղանոյ հանջիք։ Եւ զարիւն, դարձեալ, մի ուտիցէք. 'ի վերայ սեղանոյն սրսկեսցի„։ Եւ տես դու՝ զի արիւն պիղծ է առ ուտել, և ճարպ սուրբ է. և երկոքին 'ի վերայ սեղանոյ ելանեն։ Եւ իբրև համարեցաւ զսուրբսն, համարեցաւ անդ և զայծեամն և զեղջերու։ "Եւ 'ի վերայ սեղանոյ, ասէ, մի հանիցէք, այլ 'ի տան քում կերիցես զնա։ Եւ զճարպ նոցա, դարձեալ, մի ուտիցէք„։ Նա և զմեղր սուրբ արար առ յուտել. "Եւ 'ի վերայ սեղանոյ, ասէ, մի մատուսցեն„։ Եւ կին մարդ սուրբ է յամուսնութի բնութե, և պիղծ է նա պոռնկութբ արտաքոյ բնութեն. զի ամենայն ինչ պատուիրանաւ որոշի։ Եւ 'ի տեղի ուրեք զամենայն զծնունդ այգւոյ պղծէ, և առ պատարագս սուրբ է։ Եւ Սամփսոն ոչ պատուհասեցաւ, զի եկեր նա զմեղրն 'ի նեխեալ 'ի մեռելոտի մարմնոյ անտի պիղծ գազանի։ Եւ յայսմիկ յայտ եղև՝ թէ ոչ լի կատարեալ սրբէին նոքա 'ի ձեռն այնր՝ զի ոչ հրամայեաց նոցա մատուցանել պատարագ 'ի նոցանէ։ "Անասուն, ասէ, անարատ մատուսցես„. խորհուրդ այնորիկ՝ որ առանց մեղացն էր, որ քաւեաց զմեղս մարդկութեան։ Ոչ անասուն արատաւոր կարէր քաւել, և ոչ մեղաւորն և լի արատով պիտոյ էր մեռանել փոխանակ մարդկութե։

Արդ տես դու զի և Յոթոր քրմապետ էր հեթանոսաց, և արդարացաւ. և գաբաւոնացիքն յոյս ապաստանի արարին զժողովուրդն. և զի կամեցաւ Շաւուղ կոտորել զնոսա, արգելան երկինք 'ի ցօղոյ.

և զբարկութի՟՝ զոր խորհեցաւ նա 'ի վերայ նոցա , յեւթն որդիս նորա ել ։ Եւ Ովբար եդովմայեցի՝ օրհնեցաւ տուն նորա , փոխանակ զի պատուեաց նա ըզտապանակն կտակարանաց առաւել քան զքահանայս ։ Եւ Աթի գեթացի կերակրեաց զԴաւիթ 'ի ժամանակի երբև հալածական էր նա յերեսաց Աբիսաղոմայ որդւոյ իւրոյ ։ Եւ Աբեդմէլէք քուշացի հնդիկ հան զԵրեմիայ 'ի գբոյ անտի տղմոյ , զի արկին զնա անդր որդիք ժողովրդեան իւրոյ . նոքա գերեցան , և նա ապրեցաւ ։ Եւ Ուրիա քետացի մի յիշխանաց էր Դաւթի . և Ռահաբ յազգն Յուդայ յարեցաւ , և 'ի տոհմ տանն Դաւթի խառնեցաւ . և Հրութ մովաբացի , և Նեեմի ամոնացի ։ Սոյնպէս և ոչ եպերեցան որք ընկալան զնոսա , այլ 'ի նոցանէ ծնան թագաւորք օծեալք և մարգարէք , և ոչ կարաց կալ ընդդէմ նորա պատուիրանն . այն՝ զի Մո-սէ "Մի մտցէ ամոնացի և մովաբացի 'ի ժողովուրդ տեառն"։ Եւ ոչ 'ի դար տասներորդ . այլ զոր ինչ ստուգութիւն հատանէ վասն օգտակարութե՟ , ողորմութի՟ արձակէ վասն ապաշխարութե՟ . զի առանց օրինաց է ։

Արդ քանզի մի արարիչ է այս , որ զամենայն զոր և արար բարի է յոյժ , եթէ անուանեաց սրբութիւն և պղծութի՟՝ յայտ է թէ պատճառք են այս . այսպէս և 'ի նմին յօրինաց . զի ահա աւասիկ որք ընտրեցինն և կերան , ոչ արդարացան . և որք անփոյթ արարին , վասն նոցա ոչ պատուհասեցաւ արդարութի՟ նոցա . և ահա սուրբքն՝ եթէ մեռելոտի լինին , պղծին ։ Արդ ո՞ւր է սրբութի՟ նոցա . և զոր զենուին , ոչ լինէր պղծեալ՝ թէ այսպէս էր , զի երկաթ սրբէ զնոսա , և ոչ երկաթն դարձեալ սրբէ զնոսա . զի եթէ պեղծ է այն՝ որ զենուն , նովաւ պղծուի է . և 'ի մերձենալ սրբոյն 'ի պղծութի՟ պղծեալ լինէր ։ Թէ այդպէս է , զօրագոյն է պղծութի՟ քան զսրբութիւնն ։ Այլ յայտ է այս՝ թէ առակք օրինակաց և պատճառք ինչ են . զի ահա Եղիա ոչ պղծեցաւ յագռաւուց անտի և 'ի մսոյն , այն զի չէր իսկ յայտնի թէ ուստի էր , կամ երևէր . և յօրէնս ասէ . "Ետու ես ձեզ զամենայն միս" զպիղծն և զսուրբն , որպէս

զայծեամն և զեղջերու ։ Եւ ահա արիւնն՝ որով պղծեալ լինէր մեռեալն, նովաւ սրբէր սեղանն, և 'ի վերայ նորին սրսկեալ լինէր, և ոչ ինչ էր այ̄ պիտոյ. ասէ “Ոչ ուտեմ ես միս զուարակաց, և ոչ զարիւն նոխազաց ըմպեմ ես„ ։

Արդ տեսցուք եթէ կացին մնացին սուրբքն և պիղծքն 'ի կարծիս իւրեանց ։ Արդ գիտեմք՝ եթէ անիծաւ օձն, զի եղև նա պատճառք մահու, և ապա յետոյ եղև նա պատճառք կենաց ։ “Ամենայն որ հայէր, ասէ, ընդ օձն պղնձի, կայր և ապրէր„ ։ Արդ յայտ եղև՝ եթէ պատուիրանն եթէ վասն պատճառանաց ընչի պիղծ է՝ և սրբէ, և ոչ եթէ բնութի̄ նոցա պիղծ է ։ Եթէ բնութեամբ չար էին օձք, զապստամբօղս պահէին, և զհլուս ապականէին. զոր օրինակ և առեւծքն զի պահեցին զԴանիէլ, և կերան զչարախօսսն՝ ոչ եթէ որպէս պիղծք, այլ որպէս և ստոյգք և արդարք. և ագռաւուցն դարձեալ զԱխաբ արժան էր կերակրել և ոչ զԵղիա ։ Այսու իրիք 'ի վերայ ամենայն սողնոց թռչնոց և գազանաց հաւանեցուցաք՝ եթէ չիք պղծութի̄ 'ի բնութե̄, այլ կամք են. և պատուիրանն ընտրեաց և անարգեաց զզոհս ։

Արդ եթէ օգուտ ինչ էր ընտրութի̄ կերակրոց, ահա զքառասուն ամ յանապատի անդ զմանանայն կերան, և ոչ կարաց սրբել զհիւանդացեալ միտս նոցա ։ Եւ տապանն սրբեաց զամենայն՝ որ 'ի նմա, զի հաւատովք ապրեցան 'ի ջրհեղեղէ անտի ։ “Եւ զի՞նչ, ասէ, պիտոյ է ինձ բազմութի̄ զոհից ձերոց. և զճարպ գառանց և զարիւն ցլուց և նոխազաց ձերոց ոչ կամիմ տեսանել. յագեալ եմ ձեօք„. չիք հնար յայսմ հետէ, այլ ոչ ևս ներեցից մեղաց ձերոց ։ Եւ զազրացաւ նա և յայնցանէ՝ որ զպատարագսն մատուցանէին, յայնմիկ՝ զի ասէ “Մերժեցից զնոսա յերեսաց իմոց„. և զի ասէ “Ընաւ ո՞ իսկ խնդրեաց զայդ 'ի ձեռաց ձերոց. կոխել դուք ամենևին այսուհետև զգաւիթս իմ մի՛ յաճախիցէք ։ Եթէ մատուցանէք դուք զնաշիհ պատարագ, այն զուր է ձեզ. եթէ արկանէք դուք ինձ խունկս, և այն պիղծ համարեալ է ինձ„ ։ Եւ համարեցաւ զնոսա իբրև սպանութիւն, յայնմիկ՝ զի ասէ “Բայց անօրէնն՝ որ

մատուցանէ ինձ եզն պատարագ՝ այնպէս իցէ, որպէս զի հարկանիցէ ոք զկառաւին մարդոյ»: Եւ համարեցաւ զսուրբսն իբրեւ զպիղծս, յայնմիկ՝ զի ասէ «Եւ որ մատուցանէ ոք զոչխար պատարագ՝ այնպէս իցէ, որպէս թէ մորթիցէ ոք զշուն. և որ մատուցանէ ոք զնաշիհ պատարագ՝ այնպէս իցէ, որպէս հեղուցու ոք զարիւն խոզի». յայնմիկ՝ զի անարգեալ է նա 'ի սրսկելոյ, Եթէ բնութ̃ն իւրեանց սուրբք և պիղծ էին, ոչ փոփոխեալ լինէին նոքա. այլ պատճառք են, զի նոքօք մերձեսցին տգէտք 'ի գիտութ̃ի ճշմարտութ̃ե:

Արդ պատարագք վասն նշանակի տուան. զի ահա ոչ արդարք կարօտ եղեն նոքօք, և ոչ մեղաւորացն օգուտ ինչ եղեն նոքա. յայնմիկ՝ զի ասէ «Մի՛ քաւիցին մեղք և անօրէնութիք տանն Հեղեայ զոհիւք և պատարագօվք 'ի ձեռն տօնիցն զոհից»: Յայտ արար զզոհսն օգտակարս, յայնմիկ՝ զի ասէ «Լաւ է լուր քան զպատարագ»: «Մատո Աստուծոյ պատարագ օրհնութ̃ե». և «Պատարագ խոնարհ և սիրտ աշխատեալ»: Եւ զի հպարտացեալ էին 'ի տաճարն, «Տաճար էք դուք, ասէ, տեառն Աստուծոյ՝ եթէ հաճոյ արասցէք զգործս ձեր». և այսու խափանեաց զտաճարն: «Եւ ես յո՞ հայեցայց և բնակեցից, բայց 'ի հեզս և 'ի խոնարհս և յայնոսիկ՝ որ դողան 'ի բանից իմոց»:

Ապա եթէ ասիցեն. եթէ պատարագք արդարոց ընդունելի եղեն, զի՞նչ օգուտ է յանասունսն՝ զի զմեղաւորս ոչ արդարացուցին. և արդարոցն եթէ ոչ էր զոհեալ, ոչ մեղանչէին. առանց զոհից առաւելան և առաքինացան, և յիշատակք նոցա օգնական եղեն այնոցիկ՝ որ զզոհսն մատուցանէին. և 'ի զոհսն չիք ինչ պէտք: Եւ զի հրամայեցան զոհքն վասն նշանակի գիտութ̃ե ա̃յ. զի Մովսէս ոչ եթէ զոհիւք հաշտեցոյց զա̃ծ 'ի ժամանակի՝ իբրեւ մեղաւ ժողովուրդն, բայց աղօթիւք հանդերձ այլովք առաքինութ̃բք: Եւ Եզեկիա ոչ եթէ զոհիւք հաճոյ եղև ա̃յ և փրկեաց զքաղաքն, այլ աղօթիւք: Եւ Յեսու ոչ եթէ զոհիւք հանդերձ բաժանեաց զՅորդանան, և կործանեաց զպարիսպն Երիքովի քաղաքի, և արգել զարե-

դակն և զլուսին , և հար վանեաց զԹագաւորս , այլ
'ի տարածանել ձեռաց աղօԹիւք ։ Եւ Փենեհէս ա֊
ղօԹիւք առաքինացաւ առանց զոհից ․ և Եղիա
ցլովք հանդերձ ։ Զի ոչ քաւեցին զոհք վասն սպա֊
նուԹեց և շնուԹեց , բայց զեղջ և ապաշաւ ոգւոց
քաւեաց ։ "Մեղայ , ասէ , ԴաւիԹ ,, ։ Ասէ ցնա ․ "Եւ
տէր Թողցէ զմեղս յանցանաց քոց ,, ։

Քանզի զոհէին նոքա դիւաց 'ի դաշտս , ասէ , և
'ի լերինս , հրամայեաց զի նմա զոհեսցեն ․ զի 'ի
ձեռն այսր՝ կապեսցին նոքա 'ի սէրն նորա ․ զոր օրի֊
նակ և տօնքն զի պատուիրեցան , զի յիշեսցեն զո֊
ղորմուԹի շնորհաց նորա , և խոստովան եղիցին նմա
այնոքիկ՝ որ կատարեալն են սիրով նորա ․ բարձրա֊
գոյն են նոքա 'ի պատճառանաց օրինաց ։ Տօն առա֊
ջին բաղարջակերաց , զի խոստովան եղիցին այնմիկ՝
որ փրկեաց զնոսա յերկրէն եգիպտացւոց ։ Եւ տօն
երկրորդ պէնտակոստէից , զի 'ի նմա տուան նոցա օ֊
րէնք , զի մի՛ մոռասցեն զտէր պատուիրանաց ։ Եւ
տօնն երրորդ 'ի սկիզբն տարւոյն ըստ Թուոյ ամաց նո֊
ցա , զի խոստովան եղիցին տէառնն կենաց իւրեանց ։
Եւ տօնն չորրորդ յաւուրն տասներորդ յամսեանն
եւԹներորդի ․ պահք , խոնարհուԹի , որ վասն որ֊
Թուն ․ "Պահեսցեն , ասէ , վասն ամենայն մեղաց և
յանցանաց իւրեանց ,, ․ զի յիշեսցեն նոքա զատուգու֊
Թիւն՝ որ խնդրեաց 'ի նոցանէ զվրէժն , և արգելեալ
կարճեսցին նոքա 'ի մեղանչելոյ ։ Եւ տօն հինգերորդ
տաղաւարահարաց , զի մի՛ մոռասցին զայն՝ որ ծած֊
կեաց զնոսա 'ի ներքոյ ամպոյն յանապատի անդ ։
Արդ վասն յիշատակի դժուարին մտաց նոցա տուան
նոցա տօնք տարեկանաց , զի 'ի պատճառս տօնից նո֊
րոգեսցէ 'ի նոսա զսէրն այ իւրեանց , որպէս և ա֊
սաց իսկ ․ ասէ "Ամենայն՝ զի ետու ես զօրէնս զայ֊
սոսիկ , զի ծանիցես դու զտէր ած քո ,, ։

Դէ Թողցուք անդր զօրէնս , և տեսցուք յետ
այսորիկ 'ի ձեռն աղօԹից ։ Ի՞ւ եղև փրկուԹիւն գե֊
րոյն ․ ո՞չ ահա աղօԹիւք Երեմիայի ․ այն՝ որ յորո֊
վայնէ մօր իւրոյ սրբացեալ էր 'ի կերակրոց ․ այն զի
ասէ "Եւ ոչ Մովսէս և Շմուէլ , որք ընտրեցինն իսկ
զկերակուրս , Թէպէտ և կացցեն յաղօԹս առաջի իմ

յայսմ ժամանակի, սակայն ոչ լուայց նոցա,,։ Եւ տունն Անանիայ թէպէտ և ունդս ունէին, սակայն ոչ կարացին ապրեցուցանել զորդիս ժողովրդեան ազգին իւրեանց յերկրպագութէ անտի պատկերին, բայց միայն զանձինս իւրեանց։ Եւ Եսթեր, զի ուտէր 'ի խորտկաց անտի թագաւորին, և ըմպէր 'ի գինւոյն նորա, և ննջէր 'ի ծոց նորա, կաց յաղօթս զերիս աւուրս, և լսելի եղեն աղօթք նորա. և ոչ համարեցաւ նմա պղծութիւն։

Այլ զայս դարձեալ ասասցուք. եթէ վասն կերակրոյ՝ որ մերժեալ ընկեցեալ լինի յորովայնէ արտաքս, ցոյց եթէ պղծէ զայն՝ որ կատարէ զպէտս իւր նոքօք, որչափ ևս առաւել պղծեն գործք չարք որ 'ի կամաց լինին։ Զի եթէ որք ոչ 'ի կամս մեր պատահեն մեզ, պղծիմք մեք. արդ յորժամ լինի 'ի մարմինս մարդոյ արիւն կամ աղտեղութի դաշտանի, կամ աղտեղութի սերման ելանելոյ գիշերի, և եթէ մերձենայ 'ի նոսա՝ որ սուրբն իցէ՝ պղծեալ լինի նա, որչափ ևս առաւել արժան է մեզ զգուշանալ 'ի սպանող մեղաց՝ որ կամաւ գործեալ լինին։

ԳԼՈՒԽ Բ

ԸՆՏՐԵՑԱՒ ժողովուրդն յամենայն ժողովրդոց. ընտրեցաւ տոհմն յամենայն տոհմաց. ընտրեցաւ ազգ յամենայն ազգաց. ընտրեցաւ այր յամենայն արանց առանց արատոյ։ Արդ տես դու որչափ ընտրութիք են, զի եղիցի ընտրութին կատարեալ. և եթէ էր արատ ինչ յանձն քահանային, կամ եթէ լինի արատ 'ի մարմին նորա, և տես դու զիա՞րդ մարդ՝ յորում արատ գուցէ 'ի մարմին նորա, մատուցանէ պատարագ՝ յորում լիցի արատ, և ընդունելի լինի։ Եւ մարդն անարատ մարմնով իւրով մատուցանէ պատարագ՝ յորում արատ իցէ, և ոչ լինիցի ընդունելի։ Եւ իբրև այս հոգաբարձութի եղև 'ի վերայ քահանայից, մեռան նոքա յօտար հրոյ անտի, և ընտրութի նոցա ոչ ինչ օգնեաց նոցա։ Արդ վասն ժամուն նշան եղև խորանին. և ժողովուրդն որ խա-

փանեցաւ, եկն տաճարն և խափանեաց զխորանն, և զտաճարն քակեցին թշնամիք. և քահանայն խորհուրդ Քրիստոսի է, զի չիք 'ի նմա արատ. զի արատ մարմնոյ՝ խորհուրդ է յանցանաց անդամոց ոգւոյ։ Արդ զոր օրինակ մերժէ երիտասարդու̃ի զաղայու̃ի, և ծերութ̃ի զերիտասարդութ̃ի, սոյնպէս մերժեաց անցոյց հրէութ̃ի զհեթանոսութ̃ի, և քրիստոնէութ̃ի զհրէութ̃ի. որպէս մերժեաց անցոյց կրտսերութ̃ի զանդրանկութիւն։

Եւ զզոհս զոր սիրէր՝ զայն մատուցէք նմա. այն զի յայտնի զոհքն 'ի վերայ նոցա վկայեն՝ եթէ հայելի են արարածք գեղոյ ծածուկ պատարագին, զի 'ի նմա կապեալ լինիցի խորհուրդք, սէր, գութ և աղօթք մատուցողացն։ Եւ յորժամ ընդունելի լինիցի, եղիցի վկայութ̃ի 'ի վերայ ծածուկ և գեղեցիկ մտացն մատուցչին նորա. և յանարգելն նորա դարձեալ, յայտնապէս եղիցի վկայութ̃ի յայտնի առաջի ժողովրդեանն, որ ատեայ զներքին պատարագս, և ընթանայ հաճոյ լինել արտաքին պատարագօք։ Արդ արտաքին պատարագօքն հանապազորդ մերձաւորութ̃քն իւրեանց յանդիմանիչք ոչ են այնոցիկ՝ որ ոչն են հանապազորդ ներքին պատարագօք։ Սոյնպէս սեղանն արտաքին՝ մարգարէ է ամենայն իրօք ծածուկ սեղանոյն. և քահանայն՝ խորհուրդ է ծածուկ քահանային։

Արդ ժողովեցէք զանդամս ձեր, և արարէք նմա մի խորան սրբութ̃ե, և զխորհուրդս ձեր պատարագ հաճոյութ̃ե, և զկնձիւն ձեր արարէք սեղան հաշտութ̃ե, զի 'ի վերայ նորա նուիրեսցէ սիրտ զծածկեալ խորհուրդս իւր հատուցչին ծածկելոց։ Զի ամենայն յստակ խորհուրդ եկեղեցի է 'ի ծածուկ, և սիրտ՝ սեղան ընտրութ̃եց եղեալ է 'ի նմա։ Յանդիմանեա զնոսա յայսմիկ. զի եթէ մարմնոյ նոցա տաճար ա̃յ լինեալ էր, ոչ լինէր ա̃ծ հակառակ անձին իւրոյ՝ թէ 'ի տաճար քարեղէն պաշտեալ լինիցի, և տաճար մարդկութ̃ե ոչ պաշտեսցի։ Վասն այսորիկ եդ զնշանս իւր 'ի վերայ պատկերի մերոյ, զի յայտ արասցէ՝ եթէ նա է յամենայն մարմնոյ խորան ա̃ծութեան։ Արդ ամենայն պատարագք կրկին դառնան

առ մատուցիչն իւրեանց, զի խնդրուածք իւրեանց ոչ են կարօտ նոցօք. զի վասն պատճառանաց բարեաց անուանեցաւ կարօտութիւն 'ի միջի, զի նովաւ եղիցի մեզ համապազորդ յորդորումն բարեաց նորա : Զի 'ի տաղն մերում նմա, զարթուսցուք 'ի վերայ մեր զպարգևսն նորա. և 'ի թօթափեղն մերում զգանձսըն մեր փոխ տալ նմա, փախուսցուք զնա 'ի խղճէ աստի 'ի տուն գանձի նորա : Եւ զի եղեալ է 'ի վերայ պատարագաց մերոց անուն կարօտութեան նորա, և յանփոյթ առնելոյ ստուգութեան նորա՝ երկեցուսցէ զտուրսն մեր, զի մի՛ ննջեսցեն, կապեաց դարձեալ զզօրհս պատարագաց նոցա 'ի միում վայրի. և յայտ արար նոցա, զի եթէ բարկացուսցեն՝ համանէ նա զարմատսն՝ յորում կապեալն են, և լուծեալ արձակեալ և խափանեալ լինին տեղեաւն հանդերձ :

Բայց հանդերձն՝ որ էր 'ի վերայ լանջաց քահանայապետին, զոր օրինակ դատաւորք՝ զի ածեն սուր ընդ մէջ իւրեանց վասն ահի երկեղի իշխանութեան իւրեանց, և վասն պատժոց պատուհասից անցելոցն զօրինօք, սոյնպէս և այն՝ որ եղեալ էր 'ի վերայ լանջաց քահանայապետին, կատարումն իշխանութեան նորա և խոստումն պատժոյն պատուհասից անցելոցն զպատուիրանօքն : Արդ ամենայն հանդերձն լանջաց նորա իրաւունս դատաստանի քարոզէ :

Թէպէտ և պատուական էր քահանայն յայտնի հանդերձիւն, սակայն յոյժ փառաւոր և քան զնա քահանայն ծածուկ : «Քահանայ, ասէ, յորժամ մտանիցէ 'ի խորան, գինի մի՛ արբցէ» : Բայց ուխտաւորն բնաւ ամենևին գինի և ցքի մի՛ ճաշակեսցէ, և բնաւ որ ինչ ծնունդ որթոյ իցէ : «Եւ առ մեռեալ, ասէ, մի՛ մտանիցէ, քանզի պսակ այ իւրոյ 'ի վերայ գլխոյ նորա» : Յայսմ վայրի յայտ արար մեզ՝ եթէ առաւել է պսակ ուխտաւորին, որպէս և քահանայապետին. զի պսակ այ իւրոյ 'ի վերայ գլխոյ նորա՝ այս ինքն աղօթք ուխտի նորա :

Օծութիւն յայտնեցաւ 'ի վերայ առաջին զոհիցն 'ի խորանի անդ, և հուրն էր և կեր. և նոքա հպարտութեամբ պարծանօք արբեցան փոխանակ ընդ գինւոյ,

և չոգան արկանել նոքա խունկս առանց հրամանի․ քանզի ոչ էր նոցա զենեալ։ Զի զնոխազն զվասն մեղաց յերկիւղէ իւրեանց ոչ կերան, այլ այրեցին զնա․ բարկութեան, ասէ, եղև․ կամ զի յամեցին նոքա 'ի գինւոջ, շիջաւ հուրն․ այն զի պատուիրեցաւ նոցա հանապազօր դարման ունել նմա փայտիւ։ Եւ վասն այսորիկ բերին նոքա հուր օտար արտաքուստ․ և վառեցաւ բորբոքեցաւ 'ի նոսա, և անդէն սատակեաց․ զի ոչ պատուեցին նոքա զպաշտօնն իւրեանց քան զգինի․ և "Որ զիմն, ասէ, պատուիցեն, պատուեցից զնոսա․ և որ զիմն անարգիցեն, անարգեցից զնոսա"։

Դարձեալ ասի․ զի ոչ եթէ շիջաւ հուրն, այլ իբրև արբեցան նոքա յանցանել զգինեաւն իւրեանց, ասեն այր ցընկեր․ արի՛ք թող արկցուք խունկս․ և 'ի պատճառս խնկոցն արկանելոյ, արկին նախ ըստ սովորութեան բնութեան իւրեանց հուր օտար 'ի բուրուառս իւրեանց․ այն զի արժան էր նոցա 'ի ներքուստ առնուլ․ և վասն այնորիկ այրեցան նոքա։ Եւ 'ի սուրբն սրբոց մտին նոքա, ուր ոչ ունէին նոքա իշխանութիւն մտանել․ զի սեղանն խնկոց և սեղանն ողջակիզաց արտաքոյ էր, և անտի 'ի ներքուստ էր հուրն․ և վասն այսորիկ ասէ․ "Ի ժամանակի իբրև մտանիցէ քահանայն, յոր ժամ և իցէ, գինի մի՛ ըմպիցէ"․ զի դոյր ժամանակ՝ թօթափել զսպասն մտանէր։ Զի եթէ վասն հրոյն շիջանելոյ ոչ խունկս մուծանէին բուրվառօքն՝ այլ հուր, քանզի հրամայէր նա վասն հրոյն՝ զի մի՛ շիջցի, զի՞նչ օգուտ էր այն՝ զի ասէ "Մի՛ ըմպիցէ գինի՝ յորժամ մտանիցէ"։ Ապա թէ յառաջ քան զմտանելն շիջեալ էր, գողցուք բնաւ թէ ծարաւի իսկ էին։

Արդ յայնմանէ զի պատուիրեաց նա Ահարոնի՝ զի մի՛ եղիցի մտանել 'ի ներքս քան զվարագոյրն, զի մի՛ մեռանիցի, յայտ է թէ 'ի սուրբս սրբոցն, համարձակեցան ժպրհեցան մտանել արկանել խունկս։ Բայց դարձեալ, խունկքն հանապազօր ընդ առաւօտս եդեալ լինէին, նա և եդեալ իսկ էր այնր աւուր Ահարոնի, և աւելի իմն գործ գործեցին որդիք նորա։ Այլ 'ի մէջ սրբոյն սրբոց և ընդ սրահն արտաքին սենեակ էր, զի 'ի նմա եդեալ էր սեղանն

համապազորդ հացիցն, և սեղան ոսկի խնկոցն, և աշտանակքն վեցոստեան, խունկքն համապազորդք, և հացն պատարագաց շաբաթէ շաբաթ, և ճրագարանքն մշտնջենաւորք։ Բայց 'ի ներքս մի անգամ 'ի տարւոջն մտանէին խնկովք և արեամբք. բայց Մովսէս համապազոր մտանէր, զի ժամադիր լինիցի նմա անդ, զի խօսեսցի ընդ նմա. և վասն այնորիկ ասէ. “Ամենայն 'ի տան իմում հաւատարիմ է. բայց ընդ ձեզ երազովք և տեսլեամբք”։

Բայց յետ այսորիկ իբրև լաց ժողովուրդն 'ի վերայ այրեցելոցն, մատոյց զնոխազն վասն մեղաց. և առին Եղիազար և Իթամար որդիքն Ահարոնի և ոչ մատուցին զնա, այլ պահեցին. վասն այսորիկ գրէ. ասէ “Եւ զնոխազն զվասն մեղացն խնդրելով խնդրեաց Մովսէս”։ Ի բորբոքել նախանձուն իւրոյ, յայտ առնէ՝ թէ ժողովրդեանն էր, յասել իւրում. “Զնա, ասէ, ետու ես ձեզ”. զի բարձցէ զմեղս ժողովրդեան. և քաւել վասն նորա։ “Առէք դուք, ասէ, զնշխար ողջակիզաց պատարագաց ընծայիցն տեառն, և կերիջիք դուք բաղարջ առաջի սեղանոյն, զի սուրբ սրբոց է. զի օրէնք են քեզ այդ, և որդւոց քոց”։ Եւ բարկացաւ նա 'ի վերայ որդւոցն Ահարոնի, զի ոչ մատուցին Ահարոնի առ սեղանն՝ զի քաւեսցեն մեղք բանակին. և կերիցեն զայն նոքա։ Ասէ ցնոսա Մովսէս. եթէ նոխազ էր նա, որ մատուցեալ լինէր յողջակէզ պատարագաց, բարւոք անփոյթ առնէիք. զի յայսմ ոգի մտանել 'ի սուրբ սրբոց ոչ կամէիք դուք. այլ ըստ մեղաց՝ սոյնպէս և պատարագ նորա. այլ թող կերեալ էր ձեր զնա 'ի տեղւոջ մի սուրբ, այս ինքն 'ի սրահի անդ վրան ժամուն։

Ահարոն իբրև ետես զՄովսէս թէ սաստիւ խօսի, ետ նմա պատասխանի որտմութ՟բ խոնարհութ՟բ, զի քաղցր բարբառովն և աղերս բանիւք խոնարհեցուցէ և ձգեսցէ զգութ ողորմութ՟են Մովսիսի առ տրտմութ՟ին իւր։ Ահա ասէ, տէր, որ ութերորդ է օծման իմոյ այսօր, զի 'ի սմա եղև յորդիս իմ խրամ. զի այսօր մատուցին պատարագ զվասն մեղաց և զողջակէզդ առաջի տեառն, այս ինքն ժողովուրդն։ Եւ այնպիսի ինչ անցք անցին ընդ իս։ Որպիսի՞։ Որդիքն

իմ, զի այրեցան բարկութ՟ք․ միտք իմ, զի վառեալ բորբոքեալ են 'ի սէրն նորա, և չիք նմա մխիթարութիւն սփոփութե՟ 'ի սահմանէ անտի զոր եդիր դու՝ ոչ զգլուխ իմ բանալ, և ոչ զհանդերձ իմ պատառել, և ոչ ձայնս արկանել, և ոչ 'ի խորանէ անտի ելանել, և ոչ զորդեակս իմ համբուրել և թաղել զնոսա։ Այս ամենայն յետ ողջակիզացն մատուցանելոյ անցք անցին ընդ իս։ Եւ յայսմիկ, տէր, բարձեալ են միտք մեր, և չիք 'ի մեզ միտք հաստատուն առողջութե՟։ Ի տրտմութ՟է աստի նուաղեցաւ սիրտ իմ յայս ինչ՝ զոր ետես անձն մեր․ խռովեաց զմեզ սորջումն յանկարծակի, զի 'ի մէնջ սկիզբն արար տէր տիրել հարուածովք, զի չիցէ նորա բժըշկութ՟ի․ և գելոյն աղիք մեր, զի այսօր մատուցին ժողովուրդն զողջակէզսն զվասն մեղացն, և ոչ ինչ յամեաց պատուհասն խրատու, և արբեցոյց զմեզ 'ի բաժակէ անտի բարկութե՟ տեառն։ Եւ արդ ահա աւասիկ պահանջէ զմեզ նախանձդ քո․ մարդ՝ որ բնաւ իսկ և գիտեն ոչ զանձինս իւրեանց՝ ուր իցեն։ Այլ դու, տէր, բարւոք և արդարութ՟ պատուիրեցեր․ և զի՞րդ մարթեաք ուտել այն օրէն զպատարագ՝ որ վասն մեղացդ էր․ գուցէ արդեւք ոչ հաճէր տէր։ Իբրև լուաւ Մովսէս, և հաճեցաւ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Ոչ մտանէ արիւնն նորա առաջի սըրբութե՟„․ հեբրայեցի, “Ոչ էր արիւնդ դորա մտեալ առաջի սրբութե՟․ թող կերեալ էր ձեր զդա„։

Քահանայութի՟ն՝ որդւոցն Ահարոնի, այլ սպաս պաշտաման խորանին վկայութեանց և այլ ևս որդւոցն Ղևեայ։ Ասէ Մովսէս ցԿորխ․ “Ո՞չ շատ իցէ ձեզ այդ, զի ընտրեաց և զատեաց զձեզ ա՟ծ յամենայն ժողովրդենէ աստի, և մերձեցոյց առ իւր պաշտել զպաշտօն վրան ժամուդ, կալ յանդիման խորանիդ և սպաս ունել դմա, նուաճել ինքն զքեզ և զորդիս քո և զեղբարս Ղևեայ ընդ քեզ․ արդ քահանայութեա՟ն ևս ցանկայք„։ Իսկ արդ զորդիսն Մովսիսի ո՞ր պատճառք կոչեցին զի 'ի քահանայութիւն մի՛ մերձեսցին։ Թերևս ասիցես․ ընդ մօրն իւրեանց դարձան անդրէն 'ի Մադիամ․ զի կամեցաւ մայրն՝ թէ զպաշտօն հարց իւրոց եղիցին պաշտել

որդիքն, սակայն և հայրն նորա կատարեալ էր զկնի Մովսիսի։ Ապ՛ եթէ այդ այդպէս իցէ, ո՞ր պատճառք կոչեցին զնոսա թողուլ զպատիւ հարց իւրեանց, և երթալ 'ի տուն մօր իւրեանց։ Նա և ոչ տունն մօր իւրեանց փոքր ինչ էր, զի քրմապետ էր նա ամենայն մադիանացւոց։ Եթէ պատճառք պատուոյ էն, յոյժ փոքր էր հայրենի տունն նորա քան զՄովսիսին. եթէ վասն պաշտաման հօր իւրոյ, նա և ինքն հայր նորա կատարեալ էր զկնի Մովսիսի. ապա եթէ վասն թլփատութե՟ նոցա, թլփատեալ էին. և եթէ վասն նեղութե՟ց երկնչէին, միանգամ գնաց և եկն կինն։ Եւ եթէ պիտոյ ինչ իցէ այս յաւել, նա և որդիքն Ահարոնի ընդէ՞ր ոչ մտին ամենեքին 'ի քահանայութի՟, բայց միայն Եղիազար. նա և ոչ որդիքն Մարեմու յայտնապէս։

Յանէրևութէ աստի փոքր մի ճաշակս ցուցից քեզ։ Քանզի հօրեղբօրն իւրեանց որդի Կորխ է. զի եթէ նա եղբայրաթիւ հեռաւոր էր, լռութե՟ լրբեցաւ յափշտակել առնուլ զքահանայութի՟ն Մովսիսի։ Բայց զի՞նչ ասասցուք վասն Կորխայ. նա և Ահարոն իսկ և Մարիամ նախանձեցան ընդ նա. զոր օրինակ և Աբեշաղովմ ապստամբեաց 'ի Դաւթայ, իբրու որդի աղեաց էր նորա։ Սոյնպէս եթէ էր տըւեալ Մովսիսի պատճառս լինել որդւոց իւրոց քահանայք, հպարտացեալ բարձրանային նոքա 'ի վերայ նորա և 'ի վերայ ամենայն ժողովրդեանն. մանաւանդ զի Ահարոն ընտրեցաւ, և ոչ որդիք նորա։ Եւ դարձեալ, զի զաւակ էին նոքա Մադիամու, և սնունդ մայրենի 'ի տանն իւրեանց, վասն այսորիկ ոչ մերձեցոյց զնոսա. բայց զի անարգեաց զնոսա, անխայեաց զանձն իւր 'ի տրտնջելոյ անտի ժողովրդեանն։ Եւ մի՛ դարձեալ պակասութի՟ ինչ լինիցի նմա, իբրև զայն՝ զի փոքր մի իրք արգելլին զնա յերկրէ անտի պարգևաց։ Արդ անխայեաց նա զանձն իւր յաշխատութե՟ բծոց. զի 'ի պատճառս որդւոցն Շմուէլի խնդրեաց ժողովուրդն թագաւոր, և 'ի պատճառս որդւոցն Հեղեայ եղև բարկութի՟ 'ի վերայ որդւոցն Իսրայէլի։ Կամ զի անուանեցաւ նա ա՟ծ, ոչ մոյծ զորդիս նորա՝ զի եղիցին քահանայա-

պետք, զի պակաս էր նա 'ի կատարելոյ. զի Որդին Այ՟ միայն եղև քաւհանայապետ, և քաւեաց զմեղս աշխարհի իբրև զայն զԱհակայն ։

Բայց հրամայեաց վասն մեղու, զի մի՛ մատուցեալ լիցի նա 'ի պատարագս, զի ոչ անկանի 'ի նա աղ. ասէ “Զամենայն զպատարագս քո աղիւ համեմեսցես” ։ Կամ զի իջանէ հանգչի մեղու 'ի վերայ մեռելոտւոյ և 'ի վերայ ամենայն պղծութեան՝ որ ըստ օրինացն պղծէ ։ Բայց եբրայեցի փոխանակ այնր՝ զի ասէ “Զամենայն խմորեալ, զամենայն մեղրեալ”. “Զամենայն խմոր և զամենայն մեղր” ։

ԳԼՈՒԽ Գ

“Այն, ասէ, եթէ յղասցի և ծնցի արու մանուկ, պիղծ կացցէ զեւթն օր և երեսուն և երիս աւուրս” ։ Եւ վասն էգ ծննդեան չորեքտասան օր և վաթսուն և վեց ։ “Եւ ապա եկեսցէ նա առ դուռն խորանին վկայութե՟ մատուցանել պատարագ. և ապա իշխեսցէ նա կալ յաղօթս 'ի տեղին սրբութեանց” ։ Իսկ ընդէ՞ր 'ի ծնանել արու մանկանն նստի նա յաղտեղութի՟ պղծութե՟ իւրոյ զքառասուն օր, և 'ի ծնանել էգ մանկանն զութսուն օր ։ Զի 'ի քառասուն օր կատարի մանուկն կերպարանօք իւրովք, և աղջիկն զութսուն օր. վասն այսորիկ 'ի կատարել ժամանակին մինչ չև կատարեալ էր այն ինչ՝ որ յորովայնի նորա էր, նստցի յաղտեղութի՟ պղծութեան իւրոյ մայրն. զի արգելեալ էր 'ի նմա մեռեալ ։ Զի մինչ չև կատարեալ էր մանուկն կերպարանօք իւրովք, ոչ փչեցեալ լինի 'ի նմա ոգի, և ընկալեալ լինի զկենդանութի՟ ։ Արդ որչափ ժամանակս զի ոչն էր 'ի նմա կենդանութի՟, նա մեռեալ էր, և մայրն նորա գերեզման էր ։ Արդ զայս ամենայն աւուրս որչափ եղև նա գերեզման դիականն՝ որ 'ի միջի նորա, ըստ թուոյ աւուրցն նոցա եղիցի նա պիղծ, և մի՛ իշխեսցէ նա մերձենալ 'ի սուրբ ինչ ։ Եւ վասն էգ մականն զութսուն օր ։ Եւ ընդէ՞ր էգն յութսուն, և արուն 'ի քառասուն. քանզի յաջակողման է արուն

իբրեւ պատուով, եւ յառաջագոյն կանխէ հասանէ նա 'ի հաստուցանելոյ անդի ղեղոյն. այլ էգն մանուկն, քանզի 'ի ձախս կողմն կայ հանդարտութ՟բ, ընդ երկար առնու զաճումն մննդեանն. զոր օրինակ երկուք մասամբք հեռի է արուն 'ի ղեղւոյ անտի, նոյնչափ եւս հեռի է 'ի նմանէ եւ էգն:

Այլ յայտնեսցուք զառակս օրինակաց՝ որ 'ի միջի նորա. քանզի պահեաց Մովսէս զքառասուն օր, եւ Եղիա զքառասուն, զի տացեն առակ օրինակի եկեղեցւոյ: Զոր օրինակ Մովսէս արգելաւ անդ զքառասուն օր, թէպէտ եւ ոչ 'ի սկզբանն վասն այլոց ընչի, զի հանդերձեալ էր նա գործել, զի չեւ եւս էր լիեալ նոցա արժանի ընդունել զկտակարանսն: Վասն այսորիկ եւ ոչ կնիքն կտակին լի կատարեալ գործեցաւ. այլ կրկնեցան աւուրքն, զի մի՛ պակասեալ տկարացի խորհուրդն եւ ասիցէ՝ թէ տկարագոյն եւ թերի այս քան զառաջինն. զի առաջինն 'ի քառասուն օր տուաւ, եւ այս 'ի քանի եւ իցէ: Արդ ծնաւ յաւուրս քառասուն, եւ փառաւորեցան դէմք երեսաց նորա, զի նկարեսցին 'ի նմա երկոքին. զի եկեղեցի 'ի նմանն արու մանկանն, զի 'ի քառասուն օր փառաւորի պահովք իւրովք, եւ ընդունի զոգի 'ի ջուրց անտի աւազանին մկրտութ՟են, որպէս եւ մանուկն զոգի. եւ ժողովուրդն Իսրայէլի որպէս էգ մանուկն յութսուն օր, զի յետ ութսուն աւուր՝ եւ ապա եղեւ արժանի ընդունել: Ընդ օրէնքն պղծու՟ն ընդ երկար, եւ աստ սրբութ՟ի մերձաւոր:

“Այս, ասէ, օրէնք են բորոտու՟ե, որով սրբեսցի. առցեն 'ի սրբելոյն հաւս երկուս կենդանիս, եւ փայտ նոճի„. այլովք հանդերձ. զի եղիցին իբրքն չքեղ, եւ զի անկցի 'ի նմա պատճառս նոցա հոգի Աստուծոյ. եւ զի գնեսցէ զնա, զի մի՛ եղիցի անարգ ձրի:

Վասն կանանց:

Այլ վասն կանանց հրամայեաց, ասէ “Առ դուռն խորանին վկայութ՟ե կայցեն յաղօթս, եւ 'ի ներքս մի՛ մտցեն„. իբրեւ զայն՝ թէ սրբութիւն կանանց պիղծ է, եւ քան զայր ոք գոյզն: Մի՛ եթէ ծնունդ կանանց

այր լիցի ։ Իսկ արդ ո՞ր է այն՝ զի ասէ “Թողցէ այր զհայր իւր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքեան 'ի մարմին մի „։ Արդ ոչ եթէ վասն պղծութ՟ե արգելան կանայք զի մի՛ մտցեն 'ի խորան վկայութ՟եց, այլ վասն այլոց պատճառանաց ։ Ապ՝ եթէ պիղծ լիցի կին մարդ, իսկ ընդէ՞ր էջ հանգեաւ Հոգին 'ի Մարիամ քոյրն Ահարոնի. և զԴեբովրայ ընտրեաց և առաքինացոյց. և Հողդի մարգարէ էր. և Խաննա մայրն Սամուէլի առաքինացաւ. և դուստրն Փանուէլի մարգարէացաւ, հանդերձ այլովք՝ յորս պաշտեցան կամք ա՟յ։ Ապ՝ եթէ վասն աղտեղութ՟ե դաշտանի արգելեալ են նոքա, նա և արանց լինի այսպիսի իրք ։ Կամ վասն յղութ՟ե՞ արդեւք արգելան. նա և արանց իսկ սերմն 'ի նոսին կայ ։ Եւ եթէ յղութ՟ի պղծութ՟ի լիցի, ո՞ր է այն՝ զի ասէ ցԵրեմիայ. “Մինչ չև նկարեալ զքեզ իցէ՝ յորովայնէ ծանեայ զքեզ. և մինչ չև ելեալ իցէ քո յարգանդէ՝ սրբեցի զքեզ „։

Ապա եթէ ա՟ծ նկարէ մանկունս յարգանդի, ո՞ր է պղծութիւն. և “Ես եմ, ասէ, որ ծնուցանեմ և արգելում„ ասէ ա՟ծ. և ո՞ր է այն՝ զի ասէ “Սփռեցից յոգւոյ իմմէ 'ի վերայ ծառայից իմոց և 'ի վերայ աղախնաց իմոց. և մարգարէասցին ուստերք ձեր և դստերք ձեր„։ Եւ եթէ այս ճշմարիտ է, ընդէ՞ր արգելան կանայք 'ի խորանէ անտի վկայութ՟եց. միթէ զի մի՛ պղծիցեն զօրէնսն կտակարանաց ։ Եւ առաւե՞լ արդեւք իցեն օրէնքն քան զտուիչ օրինացն. և ահա խոստացաւ նա՝ թէ խափանելոց են, և նոր կտակարանք տալոց են ։ Այլ թերևս ասիցեն. անէծքն օրինաց խափանելոց են 'ի դարձի անդ, և ոչ եթէ օրէնքն ամենայն ։ Սակայն ոչ տայ թոյլ մարգարէն յասել իւրում. ասէ. “Առաջինն մի՛ անկցի 'ի սիրտ. և տաց նոցա իբրև զայն զհարցն իւրեանց„։ Եւ յայտ է թէ հարցն նոցա ամենայն օրէնքն լի կատարեալ տուան օրհնութ՟եք և անիծիւք. և ամենայնիւ խափանի և անցանէ, և ապա տուեալ լինի մեւս ևս այլ. զի նա ինքն է գիտութ՟ի սրտի, որպէս և գրեալ է. ասէ. “Ի փոքրկանց մինչև ցմեծամեծս ծանիցեն զիս„։

Այսուհետև 'ի սիրտս երևի ած և պաշտի, և չիք պղծութի՝ եթէ յայտնիցի արանց և կանանց, որպէս և ասէ. «Սփռեցից յոգւոյ իմմէ 'ի վերայ ծառայից իմոց և 'ի վերայ աղախնաց իմոց. զոր օրինակ և առաջին օրէնքն հասարակաց տուան, և եդան 'ի սուրբն սրբոց վասն նոցա. զի ահա հրամայեաց Յեշուայ առնել սեղան, և գրել 'ի նմա յայտնապէս զամենայն օրէնսն, և ոչ արգել ընթեռնուլ օտարաց: Ոչ եթէ զի զրկեալ էին նոքա 'ի նոցանէ, այլ զի եղիցին նոքա յիշեցուցիչք օրինացն մտացն նոցա: Եւ յայտ եղև թէ ոչ ինչ աւելի ետ նոցա. զի ահա օրէնքն նոցա յանապատի անդ յանդիման ամենայն մարդոյ գրեցաւ: Այլ յաւելուածքն թլփատութեան և շաբաթուցն և ընտրութե կերակրոցն հանդերձ այլովք՝ որ յաւելան 'ի վերայ օրինացն մտաց, վասն յանցաւորութե 'ի ստուգուէ անտի. այն՝ որ բղխեր և գնայր յաւիտենից 'ի սկզբանէ 'ի միտս ամենայն արդարոց: Վասն այսորիկ յաւել նոցա մանունս, զի 'ի պատճառս նոցա պահեսցին մեծամեծք: Եւ յօժարեցութիւն մարգարէից եղև 'ի վերայ նոցա, մինչև երևեցաւ զաւակն՝ որ խոստացաւ ած Աբրահամու, զի 'ի նա օրհնեսցին ամենայն ազգք հեթանոսաց. և ընտանեան զգիտութի ճշմարտութե, և յիշեն զօրէնս բնութե իւրեանց, զի 'ի նմանէ դատելոց են. և առնուն [1] զհատուցումն ամենայն որդիք մարդկան, լուսաւորս և կատարեալս: Յորժամ զգենոյր քահանայ, ընդունէր նա զգիտութի և զյայտնութի. կամ զլուսաւորսն և զկատարեալս դարձաւ կարդաց գիտութիւն և ճշմարտութիւն:

Վասն բորոտութեան և այլոց արատոց:

Դարձեալ հրամայեաց. ասէ. «Յորում արատ ինչ մարմնոյ իցէ, մի մերձեսցի 'ի սեղան»: Եւ այս ոչ եթէ 'ի մէջ մեղաց և արդարութեան որոշէն. զի խեղութիք արատոյ յոյ են, և մեղք անօրէնութե 'ի կամաց են. և ազատութիւն առնու զհատուցումն,

1 Յօրինակին առնու:

և նոյն դարձեալ պատուհասի։ Ապ՛ եթէ ոչ, եթէ ամենայն յորում խեղութիւն արատոյ իցէ, խոտեալ անարգեալ է, թէպէտ և յառաջագոյն ընտրեալ էր։ Թէ այդ այդպէս իցէ, Սահակ՝ զի շլացան աչք նորա՝ խոտեալ անարգեա՞լ է. և ահա 'ի խեղուի̃ արատոյն իւրոյ առաւել ևս եղև նա ընդունելի. օրհնեաց և եղև հաւատարիմ։ Նա և Յակոբ յետ ընդարմանալոյ ամոլաջլի իւրոյ՝ և եղև 'ի նմա արատ կաղութե̃, արժան էր նմա լինել խոտան անարգ, և ոչ շինել սեղան ա̃յ, և ոչ տասանորդել, և ոչ ստուգել օրհնութեցն մարգարէութե̃. և առաւել ևս յետ կաղալոյն իւրոյ կոչեցաւ անուն նորա Իսրայէլ։ Եւ Մովսէս կակազոտ էր, ընդէ՞ր ոչ անարգեցաւ. և ոչ բժշկեաց զնա ա̃ծ, թէպէտ և կարի շատ խնդրեաց 'ի նմանէ. այլ հաւանեցուցանէ զնա և ասէ. "Ո՞յր տուեալ է մարդոյ բերան, կամ ո՞յր արարեալ է զհամերս և զխուլս և զականիս և զկոյրս. ո՞չ ես տէր ա̃ծ,,։ Եւ իբրև ընտրեաց զնա, զգեցոյց զնա բորոտութե̃, և այլ արատ 'ի վերայ արատոյ նորա յաւել նմա. և ոչ միայն զի ոչ անարգեցաւ նա, այլ առաւել ևս հաւատարիմ եղև, և տուաւ նմա առնել նշանս և սքանչելիս։ Եւ Հեղի իբրև ծերացաւ և շլացաւ աչք նորա, ընդունելի էր ա̃յ, և 'ի քահանայութե̃ կայր. և որդիք նորա՝ զի ողջք էին, խոտեալ անարգեցան։ Եւ Դանիէլ և ընկերք իւր, և նոքա ներքինիք էին և արատ գոյր 'ի նոսա. և ոչ միայն զի ոչ անարգեցան նոքա, այլ և առաքինացան ևս։ Եւ որդիքն Իսրայելի հնազանդեցան ծառայեցին Եգղոմ արքային մովաբացւոց 'ի ձեռն Աւովդայ, որոյ ձեռն իւր աջ կարկամեալ էր. և եղև փրկութի̃ ամենայն ողջոյն։

Եւ յայտնիկ յայտ եղև՝ թէ ոչ եթէ արատք մարմնոյ անարգեալ են յա̃յ, այլ գործք չարք որ 'ի կամաց լինին։ Եւ օրէնք զի հրամայեցին՝ ոչ եթէ վասն ողջոց, այլ վասն տղայոց անմեղաց. զի յայտնի տեսելեամբ չքեղացուսցէ զպաշտօնն յաչս նոցա. և զի ուսուսցէ նոցա 'ի ձեռն յայտնի արատոցն, զի զգուշասցին ծածուկ արատոյ անձի ոգւոց։ Այլ 'ի նմանէ ոչ եղեն պղծեալ. զի ահաւանիկ ոչ արգել և կար-

ձեաց զնոսա ուտել 'ի պատարագաց անտի խւրոց, այլ վասն տղայոցն անմեղաց ասէ՝ արտաքս մի՛ երևեսցին ։ Զի ոչ եթէ պատիժք պատուհասի եդեալ են 'ի վերայ արատոյ մարմնոյ, այլ 'ի սպասուէ անտի պաշտաման մերժէ զնոսա և հեռացուցանէ վասն լքանելոյ լուծուն տեսողաց. և ոչ եթէ սպանանելով սպանանեն արատք մարմնոյ ։ «Որ գնայ, ասէ, ոչ եթէ անարատ մարմնով, այլ ճանապարհ անբիծ, նա պաշտեսցէ զիս»։ Եւ զԱբրահամ այսպէս ասէ. «Հաճոյ լեր առաջի իմ». մարմնով արդեւք, եթէ հոգւով ։ Եւ «Լեր դու անարատ». մօրօք արդեւք, թէ մարմնով ։ Ո՞չ ահա յայտնի է այս՝ թէ գործովք և ոչ անդամովք ։

Լուդ արատք մարմնոյ հանդերձ դաշտանի վասն տղայոց անմեղաց. և վասն զի խորհէին զայն 'ի մէջ հեթանոսաց, եւ և նոքա, զի մի՛ կարծիցեն թէ պաշտօն կռոց սուրբ է քան զն̃յ. և վասն այնորիկ ետ նոցա քնարս և սաղմոսարանս և զամենայն երգս արուեստականաց. այլ սրբեաց նա զճարպն, զի նա ինքն յստակութի̃ և սրբութի̃ մտոյ. և պղծեաց զբորոտութի̃, զի չիք 'ի նմա արիւն, զի նա սրբէ զսեղանն և զսպաս նորին ։ Եւ զի նա ինքն է կեանք մարմնոյ, և առանց նորա մեռեալ է նա ։ Եւ զի եւթն ազգասաց վասն բորոտուէ̃. 'ի յաճախել անդ և 'ի տուն ուրուք, ասէ, և յանօթ, 'ի մեծացուցանել անդ, և կարծեսցի թէ ինչ աւելի կայցէ նոցա քան զհեթանոսաց, զի կապիցին 'ի նա իբրև զայն, զի առյանձն զզոհն նոցա. զի արգելցէ զնոսա առ 'ի դիւաց՝ զի 'ի նմա կապեսցին, առաջի խորանին, ասէ, վկայութեց. և բանիւ քահանային սոյնպէս. և այն երկուցն հաւուց. ահա, ասէ, սրբիք դուք. որպէս զի ուրախ լինիցին ընդ քաւութին՝ որ լինի նոցա 'ի ձեռն թռանելոյ հաւուն ։ Եւ իբրև զայն զնոխազն ազազայելի. և իբրև զայն զի ասէ «Բարձցէ զմեղս մեր և ընկեսցէ 'ի խորս անդնդոց ծովու»։ Այլ քանզի 'ի խորհուրդս գրեցան՝ զոր դրոշմեալ է Մովսէսի, զի վկայէ նորին հնոյն՝ թէ «Այս գրեցաւ վասն մեր, զի ոչ եթէ, ասէ, վասն եզանց ինչ փոյթ էր ա̃յ» ։ Արդ բորոտն այն որպէս իբրև զխորհրդին յառնուլ զսբր-

բութիւնն եղև պատարագ վասն նորա փոխանակ քաւութե̃ նորա։

Հաւն որ զենեալ լինէր և հեղեալ լինէր արիւն նորա 'ի վերայ ընկերին իւրոյ, այն զի ոչ հաւասարեալ լինէր ընկերութե̃ մահուն նորա, խորհուրդ նկարեալ էր նա 'ի ծննդոցն Ադամայ. զոր օրինակ լի էր բորոտութեամբ մարմին նորա, սոյնպէս և Ադամ մահուամբն իւրով։ Եւ զոր օրինակ պիտոյ լինէր կենդանի վասն պարտեաց նորա, զի կորուսցէ զկենդանութիւն իւր փոխանակ սրբութե̃ բորոտին, սոյնպէս պիտոյ էր միջնորդ 'ի սրբութիւն հին մարդոյն. զի եթէ հաւն, զի ոչ էր մերձ 'ի բորոտն, և դատապարտեցաւ 'ի մահ, սոյնպէս և Որդի իբրև զմեղս ոչ գործեաց. "Ոչ, ասէ, գործեաց զանօրէնութիւն„. և "Ո՞ 'ի ձէնջ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց„, ետ զանձն իւր վասն սրբութե̃ պղծութե̃ հօրն մերոյ, այն՝ որ բորոտեալն էր մահուամբ։ "Թագաւորեաց, ասէ, մահ և 'ի վերայ այնոցիկ՝ որ ոչն մեղան„։ Արդ ո՞ր խորհուրդ առաւել է քան զայս, կամ առակ օրինակի՝ որ յայտնապէս ցուցանէ զխորհուրդս նորոյն կտակարանաց։ Իբրև զայն՝ զի բորոտն սրբեցաւ իբրև զԱդամ, և քահանայն իբրև զՅովհաննէս։ Աղբիւրն իբրև զմկրտութե̃ աւազանի, փայտ նոճի իբրև զփայտ խաչին. և երկու հաւքն՝ մին որ զենեալ լինէր, և միւսն որ ոչն մեռանէր, երկու զօրութի̃ք մարմնեղէնք և ա̃ծեղէնք։

Իսկ քանզի ցայնժամ նշմարանք էին և ոչ մարմինք, և խորհուրդք էին և ոչ լրումն ճշմարիտ, ակնարկեաց 'ի ձեռն խորհրդոցն գործ հին հանդերձեալ. զի ամենեքին այնոքիկ՝ որք կային 'ի վերայ աղբերն, որոշութե̃ առն որ անդ՝ մի եղեն և խառնելով։ Եւ զի հանդերձեալ էր տէր մեր մատնել զմարմին իւր 'ի մահ, զի ոչ կարէր տիրել 'ի վերայ այնր բնութեան գաւազան ժպրհին, յառաջագոյն կանխեաց նկարեաց 'ի հաւսն երկոսին. զի այն՝ որ մեռանէրն, եղիցի օրինակ մարմնոյն. և փայտն՝ որ թանայր արեամբն նորա, եղիցի խաչն՝ որ ընդունի զարիւն 'ի կողից նորա. և աղբեւրն խորհուրդ աւազանին մկրտութե̃։ Եւ զի բարձ այն՝ որ ոչն հա-

ղորդեցաւ 'ի մահն նորա, զչարչարանս արեանն այնորիկ որ զենաւն : Որպէս և ա̃ծութի̃ն, զի կարծեցաւ թէ չարչարեցաւ ցաւովք խաչին. որպէս զի եզիցի կենդանի մեռեալն արեամբ՝ որ հեղեալ է 'ի վերայ թիկանց հաւուն թռուցելոյ. խորհուրդ տեառն մերոյ, զի վերացաւ ելնստաւ ընդ աջմէ աթոռոյն ա̃ծութեան :

Արդ եւ 'ի խաչ Որդի, իբրու ա̃ծութի̃ն ոչ չարչարեցաւ. որպէս հաւն՝ զի բարձեալ ունէր 'ի վերայ թևոց իւրոց զչարչարանս մեռելոյն և թռչէր : Այլ չարչարեցաւ, զի զարիւն չարչարանաց բարձեալ ունէր 'ի վերայ թևոց իւրոց. այլ ոչ չարչարեցաւ, զի ահա կենդանութի̃ նորա քարոզ է 'ի վերայ զրպարտութե̃ն՝ որ եդեալ էր 'ի թիկնամէջս նորա : Եւ Յովսէփու հեզի խոնարհի, զի բարձ տարաւ պատմուճանն նորա զչարչարանս մահու առ հայրն նորա. և ցաւք ուլոյն առ եղբարս նորա : Զի զոր օրինակ նկարեալ էին նշանքն տեառն մերոյ 'ի Յովսէփ, սոյնպէս դրոշմեալ էր խոնարհութի̃ նորա յուլն՝ որ ընկալաւ զմահ նորա : Զի թէպէտ և արիւն ուլոյն 'ի վերայ պատմուճանին Յովսէփու հեղաւ 'ի ձեռաց անտի եղբարցն իւրոց, սակայն 'ի միտսն Յակովբու հօրն իւրեանց Յովսէփ սպանեալ էր : Իբր ոչ կարացին սպանանել զՅովսէփ, զվկայութի̃ բերանոյ իւրեանց առ հայրն իւրեանց հաստատէին՝ եթէ զարիւնն զոր հեղին ձեռք իւրեանց, Յովսէփու է. զոր օրինակ և Հրեայքն որդիքն նոցա ժխտէին՝ թէ զայն զոր արարին ընդ նա, յայն՝ զոր խոստովանիմքն մեք՝ թէ ա̃ծ է նա, մարդոյ գործեցին : Այլ ոչ Յովսէփ վնասեցաւ, և ոչ ա̃ծութիւնն չարչարեցաւ :

Փոխանակ այնր՝ զի ասէ “Աղուամազ„. 'ի հեբրայեցի, “Մազ խարտեաշ„ : Եւ փոխանակ այնր՝ զի ասէ “Զբերան իւր պատեալ կրեսցէ„. հեբրայեցի, “Յաղբևս նստցի„ : Փոխանակ այնր՝ զի ասէ “Յառէջ կամ յողունն„. հեբրայեցի, “Յառէջ կամ 'ի թեզան„ : Ի հայելեաց անտի կանանց, 'ի տեղւոջ յորում եդեալ էր զաւազանն արուրի 'ի վերայ աշտիճանացն պղնձեաց, զի 'ի նմանէ արբուցանէին զջուրն քննութե̃. կամ 'ի հայելեաց անտի, զի դային կա-

նայք յաղօթս կային առ դուռնն վրան ժամուն, զի տեսցեն զնա կանայք և երկիցեն ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Ձենցեն զհաւն 'ի վերայ աղբեր ջուրցն կենդանեաց”․ հեբրայեցի, “Զենցէ զհաւն յաման մի՝ յօրում իցէ ջուր աղբեր կենդանի”։

Վասն մեռելոյ։

“Որ մերձենայ, ասէ, 'ի մեռեալ, պիղծ կացցէ”։ Եւ ընդէ՞ր եկն լուացի և սրբեսցի, և եթէ մարմին պղծէ․ թէ այդ այդպէս իցէ, ամենայն սըրբութի՟ ոգւոյ իցէ ։ Կամ զի՞արդ ոչ սրբեաց նա ըզմարմին 'ի մերձենալն իւրում․ և եթէ այս այսպէս իցէ, ընդէ՞ր պղծին կենդանիք վասն արատոյ և մեղաց․ և ընդէ՞ր անուանք և մարմինք Աբրահամու Սահակայ և Յակովբու սուրբ են համդերձ ոսկերօքն Յովսեփու և Դաւթի և Եղիշայի, համդերձ այլովքն ։ Այլ յայտ է այս՝ թէ ամենայն որ արդարքն էին գործովքն իւրեանց, և մարմինք իւրեանց սուրբ և սիրելի են․ և այնոքիկ որք մեղաւորքն էին 'ի կեանըս իւրեանց, և յիշատակ նոցա ատելի է, և զազրացեալ աղտեղեալ են մարմինք նոցա իբրև զԱխաաբուն, զՄանասէին և զԵրոբովամուն համդերձ այլովք ։ Եւ Եղիշայի մարմինն առաւել քան 'ի կեանս իւր առաքինացաւ ։ Մովսէս ոսկերօքն Յովսեփու առաւելաւ, և ած թաղեաց ծածկեաց զնա․ և չիք պղծութի՟ առ առողջս ։ Եւ Սամփսոն իշու ոսկերովքըն առաքինացաւ․ և ոչ պղծեցաւ, բայց իբրև մեղաւ և անց ըստ ուխտ իւր, և լաւ թուեցաւ նմա կինն իւր քան զա՟ծ ։ Եւ Եղիշայ 'ի մերձենալն իւրում առ մեռեալն նա և ոչ պղծեցաւ, 'ի ժամանակի իբրև եդ զբերան առ բերան և զամենայն առ ամենայն, այլ սրբութիւն նորա ևս քան զևս յաճախեաց և բազմացաւ, և մարմնով վերացաւ ընդ երկինս ։ Արդ գործք սրբեն և պղծեն, և ոչ եթէ մեռելութիւն և կենդանութի՟, այլ պատուիրանն՝ զի տուաւ ։

Եւ վասն կերակրոցն զի զգուշացոյց, ասէ “Զմեռելոտի մի՛ ուտիցէք”․ և ահա յառաջ քան զօրէնսն

այս սովորութ՟ի սուրբ մտացն , և երկու՝ զի յուսելոյ . անուի իւրոյ ծանրանան մարմինք ։ Իբրև զայն՝ թէ ընդ-մեռելութ՟ի նորա հաղորդին , «Բնաւ , ասէ , ամենևին մի մերձենայք » . զի յայտ արասցէ ինչ մի նոր զի չիցէ 'ի մէջ հեթանոսաց , սրբութ՟ի պարկեշտութ՟ե , սի-րեցեալ 'ի վերայ բնութ՟ե ։ Քանզի զերկրաւորս խոս-տացաւ ժողովրդեանն այնմիկ , պարտ էր՝ թէ 'ի վե-րայ այսր սրբութ՟ք պարկեշտութ՟ք պատուիրեսցէ ։ Արդ զգուշութ՟ի 'ի բորոտութ՟է և յայլոց արատոց անուի՝ վասն խիթի խղճի նոցա , զի երկիցեն յԱյ ։ Իբրև զայն զշնութ՟էն , ասէ «Որ շնայ , մեռցի » . զի յերկիւղէ պատժոցն պատուհասից պահեսցէ նա զպատուիրանն ։ Արդ որ առին զարատն , խնդրեն յԱյ զի փրկեսցին . և որ ոչն առին , աղաչեն զի ապրես-ցին . և զի յամենայն ժամ յիշեսցի արդարութ՟ին , այս ինքն Ած առաջի երեսաց իւրոց ։

«Դիցէ , ասէ , Ահարոն 'ի վերայ երկուց նոխազաց վիճակս երկուս . վիճակ մի յանուն տեառն , և վի-ճակ մի ազազայելի[1] յանապատ » ։ Մինն երթայր և դառնայր տարոյ տարի ։ Կարմիրն մանեալ զի սպի-տականայր . և զի ոչ հաւատան այլք , զենցի նոցա միւսն ևս 'ի քաւութ՟ի ։ Իբրև զայն՝ զի ասէ . «Թէ եղիցին մեղքն ձեր իբրև որդան կարմիր . և եթէ ե-ղիցին իբրև զձանձրախարիթ , իբրև զձիւն սպիտակ արարից ։ Եթէ ախորժեսջիք և լուիցէք ինձ բանից իմոց , զերանութ՟ի երկրի կերիցէք » . որպէս նոխազն զի արածի զերանութ՟ի երկրի և դառնայ . այլ ոչ եթէ զօրութ՟ի ինչ այլ է ազազայել , այլ որպէս ա-նապատն Կադէս ։ Կամ իբրև զայն՝ զի ասէ «Բարձ-ցէ զմեղս մեր և ընկեսցէ 'ի խորս անդնդոց ծովու , և իբրև զմատեանս յԵփրատ » ։ Բայց դարձեալ ա-սասցուք . և զոր օրինակ ետ նոցա զտօնս տարեկա-նաց , զի նոքօք յիշեսցեն զսքանչելիս նորա՝ որ առ նոսա . և 'ի միտ առցեն զի ոչ ընդդէմ մեղաւորաց փակեաց զդուռն , և ոչ յապստամբողաց արգել զխը-րատ իւր ։ Սոյնպէս և ազազայել , զի յիշեսցեն ըղ-սաստկութ՟ի նորա և զքարկութ՟ի նորա՝ որ եղև 'ի վե-

1 Յօրինակին ազազէլի . ուղղեցաւ ըստ այլ տեղեացն ։

րայ նոցա յանապատի անդ. և արդելցին նոքա 'ի մեղաց, զի ազազայելդ՝ սաստկութ̄ի ա̄յ անուանի։ Արդ ուսոյց նոցա նովին գործովն ա̄յ։

Իսկ զի եդ նա զօրէնսն, այլ ոչ եթէ 'ի ներքոյ ուխտի օրինաց իւրոց է նա, յորժամ անցանեն զուխտիւ նորա։ Խոստացաւ հարցն նոցա. ասէ “ 'Ի դարս չորրորդ մտցեն յերկիրն քանանացւոց „։ Եւ փոխանակ զի անցին նոքա զուխտիւ նորա, առ ցրուեաց զոսկերս նոցա յանապատի անդ։ Եւ ցոյց նոցա ըզսաստկութ̄ի իւր, իբր ոչ սուտ նա զուխտ իւր. զի յամենայն ժողովրդենէ անտի զերկուսն տարաւ մոյծ։ Մնացորդք են, որչափ և էն, 'ի դարէ անտի յայնմանէ. արժանի արար երկրին պարգևաց, զի զուխտն իւր հաստատեսցէ, և 'ի ժողովրդենէ անտի վրէժ խնդրեսցէ, և վկայքն մի՛ զրկեսցին։

Ո՛ այս անապատ, որ այսպիսի իրք գործեցան 'ի սմա, և զայս սաստկութիւն ստուգութ̄ե, զի ոչ անխայեաց 'ի նոսա, արար զի յիշեսցեն յանապատի անդ՝ յորում հարութող լինէր նոխազն։ Եւ զի մի՛ լքցին մեղաւորք 'ի կենաց իւրեանց յորժամ լսիցեն զսաստկութ̄ի նորա, և հատցեն զյոյս անձանց իւրեանց, ետ նոցա նշանակ շինութ̄ե 'ի պատարագել նոխազին զենլոյ. զի թէպէտ և իցէ ա̄յ սաստկութ̄ի, զի ոչ ընդունի զգոհս պատարագաց առանց արդարութ̄եց ողորմութ̄ե, սակայն գոյ նորա և ողորմութ̄ի, զի հրամայեաց նա մատուցանել զգոհս պատարագաց՝ անասուն փոխանակ մարդկան։ Զի երկու իրօք՝ որ միմեանց ոչ նմանեն, զի անկեալ կայցեն նոքա 'ի մէջ ծփանաց, զի մի՛ յողորմութիւն նորա ապաստան լինիցին վասն սաստկութ̄ե նորա. և մի՛ 'ի խստութենէ անտի նորա զարհուրեալ երկիցեն վասն քաղցրութ̄ե նորա. և զի մի՛ 'ի պատարագսն ապաստան լինիցին առանց արդարութեան. և մի՛ 'ի ստուգութ̄է անտի զարհուրեալ երկիցեն յորժամ յապաշխարութիւն ապաստան լինիցին, որպէս և յայլում վայրի գրէ. ասէ. “Հատուցանէ զմեղս հարց յորդիս՝ յերիս և չորս դարս „։ Եւ զի եղև ժպրհութին որ գողութ̄քն ոչ հաստատեաց առ Աքար զխոստովանողն իւր։ Եւ 'ի միւսում վայրի լոյծ զուխտ օրինաց իւրոց ար-

դարութ՟ , որ պատահեաց նմա 'ի ժամանակի իբրև անարգեաց զՀեղի , և ընտրեաց զՇմուէլ ։ Զի այնոքիկ որ լսեն՝ թէ մինչ 'ի չորս դարուն ներէ և երկայնամիտ լինի , և լքանին լուծանել 'ի մեղանչել , զարհուրեալք երկիցեն 'ի հարուածոց անտի Աքարայ • զի ոչ ապրեցան որդիքն նորա՝ որ հեռի էին 'ի յանցանաց անտի նորա՝ 'ի բարկութէ անտի , որ եկն 'ի վերայ նորա ։ Եւ քահանայքն որդիքն Ղևեայ , թէ կարծիցեն՝ զի իբրև մեղաւորք իցեն , փութացեալ ընթանան աւետիքն պարգևաց Ահարոնի առ նոսա , արգելեալ կարճեսցին Շմուէլիւ ղևտացւով , որ ընտրեցաւ 'ի քահանայութիւն ։ "Որ զիս պատուիցեն , ասէ , պատուեալ լիցին • և որ զիս անարգեսցեն , անարգեալ լիցին ,, ։ Իբրև ակնարկեաց դարձեալ վասն տեառն մերոյ , զի նոխազն՝ որ փոխանակ յանցաւորաց զենեալ լինէր , զԱդամ երկրորդ նկարէր • զի փոխանակ մեղաց դարուց նորա 'ի խաչ մատնեալ լինէր ։ Իբրև զայն զուարակին , զի արտաքոյ բանակին այրեցեալ լինէր , այլ և Քրիստոս արտաքոյ բանակին յանձն առ զչարչարանս ։ Եւ զի վիճակ որպէս ա՟յ ելանէր նմա , զի յայտ արասցէ վասն այնորիկ որ ծածկեալն էր • և կարմիրն մանեալ՝ նշան արեան նորա , զի բառնայր նոխազն զմեղս և ելանէր • իբրև զայն՝ զի ասաց մարգարէն վասն Որդւոյ • ասէ • "Նա զմեղս բազմաց բարձցէ և ընդ անօրէնս համարեսցի ,, ։ այլովք հանդերձ ։

ԳԼՈՒԽ Դ

"ՅԱՄՍԵԱՆ , ասէ , եւթներորդի 'ի տասն ամսոյն պահեսջիք և խոնարհեցուսջիք զանձինս ձեր • ամենայն ինչ գործ գործուն յայն աւուր մի՛ գործիցի ,, ։ Եւ եթէ յայս պահս, որ տարւոյ տարի լինի , ամենայն մեղք թողեալ լինին • զոհք և քաւութիւք ընդէ՞ր ։ Արդ ոչ եթէ 'ի պատճառս որթուն են այս պահք միայն , այլ վասն ամենայն մեղաց և անօրէնութեան նոցա ։ Որ օր եւթն և տասն էր մարգաց ամսոյ , էջ 'ի լեռնէ անտի Մովսէս , և խորտակեաց զտախտակ-

ոլն, և խարտեաց մանրեաց զորթն. և ամիսն ութներորդ, զի 'ի նմա ետ նոցա պատուէր հրամանի պահել զպահսն, հուրի ամիս է։ Փոխանակ այնր՝ զի ասէ "Որ ոք և արկցէ զսերմն իւր 'ի կին օտար". հեբրայեցի, "Մի՛ տացես 'ի սերմանէ քումմէ պատիւ Մեղքոմայ". այս ինքն, զի դստերք հեթանոսաց յառաջ մինչև արանց լինէին, նախ պոռնկէին և ապա արանց լինէին, և զվարձս պոռնկութեան կուսութէ իւրեանց կռոցն նուիրէին։ Ասէ "Մի՛ տացես դու 'ի սերմանէ քումմէ Մեղքոմայ". զի նա ինքն է Թարհաթայ կուռքն որդւոյն Ամովնայ։

"Այր ոք, ասէ, որ և տացէ զանձն իւր 'ի խառնս անասնոյ, մահու մեռցի, և զանասունն քարկոծ արասցեն"։ Զի այն օրէնսդիրն, որ զքարշնան զգեցեալ բորոտութեամբ հրաման ետ խլել յօրմոյ՝ զի յստակեցուսցէ և պարզեսցէ զմիտս բնակչաց աշխարհին, նա դարձեալ հրամայեաց քարկոծ առնել զանասունսն՝ որ պղծեցաւ. զի մի՛ միասիցին 'ի դնել մտաց իւրեանց տեսողքն նորա, և զի մի՛ դարձեալ յիշեսցին 'ի մէջ նոցա իրքն այն։

"Դուստր քահանայի, ասէ, եթէ յաղտեղութէ պղծութեան հայհոյիցի, կենդանւոյն այրեսցեն. և դուստր դոյզն մարդոյ դոյզն մահու մեռցի"։ Բայց նա քանզի 'ի սրբութէ անտի ուտէր, ո՞րչափ ևս առաւել այն՝ որ ուտէ զմարմինն կենդանի, կամ պղծէ զխորանն սրբութէ։

Վասն ափնեաց և հասկաքաղաց և ճռաքաղի զոր պատուիրեաց, զի ուսուսցէ նոցա ողորմութիւն, զի հաղորդեսցին որոց ոչն իցէ աստ ընդ այնոսիկ՝ որոց իցէ։ Եւ զի ոչ ետ սրբանալ քահանայիցն յամուսնութէ, զի մի՛ խափանեսցին, և նուազեսցին զաւակ քահանայութէ. զի ահա հրամայեաց զի մի՛ արբցեն քահանայքն գինի յորժամ 'ի սպաս պաշտաման մերձենայցեն. և որդիքն Յովնադաբու բնաւ ամենևին գինի ոչ արբին, և ոչ ագարակ ստացան. արդ եպերեա՞լ ինչ իցեն նոքա՝ թէ ահա յաւելլով յաւելլն յօրէնսն. ոչ։

"Այր ոք, ասէ, եթէ իշխեսցէ հայհոյել նզովել զա̃ծ, մեղք լիցին 'ի նմա"։ Այս ինքն ամենայն որ

իշխեսցէ ասել, այսպէս եղիցի տեառն ա՟յ Իսրայէլի, այնպիսին մահու մեռցի ։ Կամ որ հայհոյիցէ զկուռս 'ի կարդալ իւրում նմա զանուն ա՟յ ․ և այսպիսի ինչ եղիցի այսր անուան ա՟յ, մահու մեռցի ․ փոխանակ զի հայհոյեաց նա զանունն երկրպագեալ, և ետ զնա կռոց ։ Բայց հեբրայեցի, “Որ հայհոյեսցէ զդատաւոր իւր, մեղք լիցին նմա ․ այլ որ իշխեսցէ անուանել հայհոյութե՟ զանուն տեառն, մահու մեռցի „ ։ Եւ այն՝ զի ասէ “Յետ յիսուն ամի դարձցի մարդ 'ի սահման իւր, զի եղիցին արմտիքն յիսունն ամի 'ի տեղ գնոց ․ և ապա առցէ զսահմանս իւր „ ։

ԿԱՏԱՐԵՑԱՒ ԴՊՐՈՒԹԻՒՆ ՂԵՒՏԱՑՒՈՑ

ՍՐԲՈՅՆ ԵՓՐԵՄԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ԹՈՒՈՑ

ՏԵԱՌՆ

ԵՓՐԵՄԻ

ԽՈՐԻՆ ԱՍՈՐԻՈՅ

ԴՊՐՈՒԹԻՒՆ ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐԱԾՈՑ

ԹԻՒՔ

ԳԼՈՒԽ Ա

ԽՕՍԵԼ սկսաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ. «Խօսեաց դու ընդ որդիսդ Իսրայէլի և ասասցես. այր կամ կին որք՝ որ ոք արասցէ ինչ մի յամենայն մեղաց մարդկօրէն յանցանս, դատապարտեացի անձն այն. և խոստովան եղիցին վաղվաղակի ըզմեղս իւրեանց՝ զոր արարին, և դարձցին մեղք նորա 'ի գլուխ նորա»: Բայց Հեբրայեցի, «Մատուսցէ զվասն դողման, նախ զգլուխման, և ապա զհինգերորդմասն 'ի վերայ. և տացէ այնմիկ՝ որում յանցեաւն: Ապա թէ չիցէ ոք առնն մերձաւոր, ածցեն զնա առ քահանայն, ժողովուրդն տասանորդել ղևտացւոց. և ղևտայիքն Ահարոնի, և Ահարոն ո̃յ»: Եւ իշխան որդւոցն Գադայ, Եղիփաս որդի Հռագուէլի. անուն է Հեբրայեցերէն Յոթորայ: Որդիք Գեթսանեայ յետոյ խորանին բանակեալ էին յարևմտից կողմանէ, և դուռք նորա ընդ արևելս:

«Առն ուրուք, ասէ, եթէ ելցէ 'ի վերայ նորա ոգի նախանձու, և նախանձեսցի ընդ կնոջ իւրում, ածցէ զկինն առ քահանայն», այլովք հանդերձ: «Ապա թէ ոչ իցէ, ասէ, պղծեալ կինն, քաւեալ եղիցի, և ծնցի

արու մանուկ”: Եւ եթէ ամուլ լիցէ զիա՞րդ ծնցի. սակայն և այս ողորմութիւն նորա է: Եւ որպէս զի եղիցին վարձք զպարտութեան նորա, բանալն արգանդի իւրոյ, “Քաւեալ լիցի նա, ասէ, և ծնցի արու մանուկ”: Բայց եբրայեցի փոխանակ այնր՝ զի ասէ “Եւ ջուրս քննութեան”. “Ջուրս անիծեալս նզովեալս” ասէ: “Ապ՛ եթէ չիցէ, ասէ, պղծեալ, բերցէ նա պատարագ քաւել զինքն, և այրն անպարտ եղիցի”: Իսկ արդ կինն զի՞ մեղաւ. բերցէ զպատարագն այր նորա, որ զպարտեաց զնա: Այլ քանզի նախանձ զայրման առն իւրոյ այրն պահապանէ նորա, և ոչ կամի նա ընդ կործանելն նորա. այն՝ որ արթունն կայր վասն պահպանութեան նորա: Այլ թերևս ինքն կինն ետ պատճառս 'ի լկտութեան իւրում. զի կարծիցէ 'ի վերայ նորա, այսպէս և յանցոյց զնա. թէպէտ և յաղթեաց նա արդարութեամբ, սակայն 'ի ներքոյ բծի դնէ զնա, զի զգուշասցի նա: Եւ փոխանակ այնր՝ զի ասէ “Նաշիհ է նախանձու զայրման”. հեբրայեցի, “Պատարագ է նախանձու զայրման” ասէ. զի գարոյ չէք նաշիհ: Եւ փոխանակ այնր՝ զի ասէ “Ջուր սուրբ կենդանի խեցեղէն ամանով”. “Ջուր աղբեր” ասէ:

“Եւ խառնիճաղանճն, ասէ, որ ելեալ էր ընդ նոսա, ցանկացան զցանկութիւն յանապատի անդ. և դարձան լացուցին ևս և զորդիսն Իսրայէլի”: Այս ինքն՝ զի նոցա անօրէն գործոցն ուսան և նոքա ևս տրտնջել: Արդ տես դու, խմորն չար զիա՞րդ դառնացուցանէ զամենայն քաղցր զանգուածն. զի որչափ և հեռանայր Իսրայէլ յերկրէն Եգիպտացւոց, ևս քան զևս յաճախէին բամբասանք նորա յարժանաւոր պատճառս: Անարժան սրտմտութեամբ լնոյր նա. բայց կուրացոյց զնա սրտմտութիւն[1] տրտնջելովն իւրով: Կուրացեալ էր նա՝ զի տրտնջէր, զի դարձցի նա մտանել յերկիրն ապականիչ Եգիպտացւոց, քան մտանել յայնմ երկիր ազատութեան: Լաւ համարեցաւ նա ընտրել իւր զծառայութիւն հնազանդութեան երկրին Եգիպտացւոց, քան զլինել ներքոյ հնազանդութեան օրինաց. զի ամենայն խրատ նորա որ ընդ ամե-

[1] Յօրինակին սրտմտութիւն:

նայն տեղիս է, զի լուծն օրինաց 'ի վերայ պարանոցի նորա մի դիցի ։

Բայց իբրև ետես խրատիչն՝ թէ կամօք հաճութեամբ ոչ խոնարհեցուցանեն զպարանոցս իւրեանց 'ի ներքոյ լծոյն օրինաց, զարթոյց բռնութի 'ի վերայ կամակար կամացն. զի "Ի բազուկ, ասէ, բարձր, և մեծաւ բարկութեամբ թագաւորեցից 'ի վերայ նոցա„ ։ Ած 'ի վերայ նորա 'ի սկզբան նախ զամաղէկացին, զի երկիցեն նոքա դառնալ անդրէն յերկիրն եգիպտացւոց 'ի պատերազմէ անտի հեթանոսաց ։ Օգնական եղև նոցա 'ի ձեռն Մովսիսի, զի կարծեսցեն նոքա թէ յաղթութի նոցա 'ի ձեռն Մովսիսի, և սիրեսցեն զնա ։ Թող դարձեալ ած զմեղս յանցանաց նոցա վասն աղօթիցն Մովսիսի, զի մի ևս տրտնջեսցեն վասն նորա ։ Բնակեցոյց 'ի վերայ նորա զփառս ածութե, զի մի քարկոծ արասցեն զնա ։

"Արասցուք, ասեն, մեզ իշխան, և դարձցուք անդրէն յեգիպտոս„ ։ Ասէ ցնա տէր. "Ի բաց կաց, թոյլ տուր ինձ, թող սատակեցից և ջնջեցից զնոսա, և զքեզ արարից յազգ մեծ„ ։ Խռովեցան նոքա, զի ոչ ոք էր իբրև զՄովսէս, զի եղիցի փոխանակ ընդ նոցա բարեխօս ։ "Զինչ, ասէ, առնեմ ես զժողովուրդս զայս, զի սակաւիկ միւս ևս քարկոծ առնեն զիս„ ։ Զգեցոյց նմա զփառս ած, զի փոխանակ քարկոծելոյն երկրպագութի մատուսցեն նմա ։ Սրբեաց զնոսա զերիս աւուրս, և խօսեցաւ ընդ նոսա որոտմամբք և փայլատակմամբք. զի կարծիցեն թէ փառք ինչ յորդեցան 'ի վերայ նոցա, զի եղիցին չքեղ անձինք իւրեանց յաչս իւրեանց ։ Նա և այն՝ որ ընդունի զպատիւ փառաց նախապետութե և թագաւորութեան, չքեղանայ անձն նորա յաչս նորա ։ Եւ խնայեաց նա 'ի պատիւ փառաց իւրոց. զի յիրս անարգս մի թեթևացուսցէ զնա ։

Ի ժամանակի իբրև սկսան նոքա տրտնջել, յայտնեցաւ նոցա սիւն. զի ծանիցեն եթէ այն՝ որ երևեցաւ 'ի սիւն հրոյ եգիպտացւոց և խռովեաց զնոսա, ոչ եթէ խստագոյն էն նոքա քան զնա ։ Այլ այն՝ որ յայսմ նշանի խրատեաց զժպիրհսն յամառոտս, նովին իսկ ցոյց զողորմութի գթութե իւրոյ ։ Իբրև

ոչ տանջին նոքա, երկեւցուսցէ զնոսա. զի 'ի գնացս այնոցիկ՝ որ տանջեցան, մի՛ հասցեն ։ Եւ եղեւ սահման նոցա դարձեալ Եգիպտոս եւ Սոդոմ. մի՝ որ տանջեցաւն, եւ միւս եւս՝ որ կործանեցաւն. զի 'ի լինել նոցա սահմանք երկրի նոցա յայտնապէս, եղիցին եւ սահմանք խորհրդոց նոցա 'ի ծածուկ. զի կործանումն Սոդոմայ եւ տանջանքն Եգիպտոսի յիշեցուցանէին նոցա յամենայն ժամու, զի զգործս եգիպտացւոց եւ սոդոմայեցւոց մի՛ գործեսցեն ։

Զոր սատակեաց նա զանդրանիկս եգիպտացւոց, եւ կապեաց զյիշատակս ելից նոցա 'ի գաւին անդ ։ Հերձ բաժանեաց զծովն, կապեաց զյիշատակ փըրկութեան նոցա յօրհնութի անդ ։ Քաղցրացոյց զջուրսն դառնութե՛, կապեաց զքաղցրութի նոցա 'ի դըրնել օրինացն եւ իրաւանց դատաստանի ։ Փրկեաց զնոսա յամաղէկացւոց անտի, կապեաց զյիշատակ յաղթութեան նոցա 'ի մատեանսն յիշատակաց ։ Ետ նոցա զմանանայն, կապեաց զյիշատակս նոցա 'ի սափոր անդ ։ Եւ բժշկեաց զնոսա 'ի հարուածոց օձից անտի, կապեաց զյիշատակ բժշկութեան նոցա յօձն պղնձի ։ Եւ զոր օրինակ 'ի բարձրանալ օձին 'ի վերայ փայտին, կեցին եւ ապրեցան այնոքիկ՝ որ հայէին յօձն պղնձի անխծեալ, սոյնպէս 'ի բարձրանալ մարմնոյն տեառն մերոյ 'ի վերայ խաչափայտին, կեցին եւ կեան ամենեքին ոյք հային ընդ այն՝ որ եղեւ անէծք վասն մեր ։

Փոխանակ այնր՝ զի ասէ “Ակն նորա իբրեւ զակն բիւրեղ„. հեբրայեցի, “Իբրեւ զտեսիլ մարգարտի„ ասէ ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Աւնէին 'ի նմանէ նկանս„. հեբրայեցի, “Իբրեւ զշօթս„ ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Եղիցի ձեզ 'ի դառնութի„. հեբրայեցի, “Իբրեւ 'ի զազրութիւն, մինչեւ այսրէն, ասէ, ընդ քիթս ձեր դարձցի„ ։

“Վեց հարիւր հազար, ասէ, զորք են արք հետեւակք ժողովրդեանս, ուր կամս ես 'ի մէջ նոցա. եւ դու ասես. տացես նոցա միս եւ կերիցեն ամսօրեայ մի ժամանակըս. եւ զի՞նչ խաշինք, ասէ, արջառոց կամ ոչխարի բաւական լիցին դոցա. զի եթէ ամենայն հեղեղքն ձկանց որ 'ի ծովու անդ իցեն՝ ողսասցին, բաւակա՞ն

կարիցեն լինել դոցա 'ի կերակուր „: Եւ այս ոչ եթէ երկմտեաց նա, այլ զի ցուցցէ՝ եթէ այն ինչ որ մարդկան դժուարին իցէ, բանն ա̃յ բաւական է 'ի կերակրել զնա, ըստ նմանութե̃՝ այն զի ասաց Փիլիպպոս. ասէ “Հինգ հարիւր դահեկանի հաց ոչ է բաւական նոցա, իբրու առ սակաւ սակաւ կերիցեն „: Փոխանակ այնր՝ զի ասէ “Ձեռն տեառն բաւական է „. հերքայեցի, “Միթէ ձեռն տեառն տկար և փո՞քր ինչ երեւեսցի քեզ „:

“Ոչ, ասէ, կարեմ ես հանդարտել միայն ժողովրդեանս այսմիկ: Ասէ ցնա տէր, ժողովեա դու առ իս արս իւթանասուն, և առից ես յոգւոյ անտի քումմէ, և արկից զնոքօք: Եւ եղիցին նոքա քեզ օգնական՝ դիմակալ լինել նոքօք հանդերձ ժողովրդեանն, և քեզ միայն մի ծանրասցին „: Արդ այն հոգին՝ զոր բաշխեաց նոցա, զարմատս նորա 'ի մի անդ կապեաց, զի մի բաժանեսցեն զնա որդիք մարդկան 'ի բազում արմատս: Արբոյց նոցա ա̃ծ 'ի միոջէ աղբերէ անտի, զի մի արբցեն բազումք 'ի բազում աղբերաց. զի իւրաքանչիւր յեւթանասուն ծերոց անտի իմանայր և զգայր 'ի մտանել հոգւոյն՝ որ մտանէր 'ի փոր նորա, գիտէր թէ 'ի Մովսիսէ ընդունիմ: Եւ զոր օրինակ ընդունի պտուղ ծառոց զզօրութիւն ջուրցն յարմատոց անտի, վասն այսորիկ և նոքա 'ի Մովսէս իբրև պտուղ յարմատս իւրեանց ուրախ լինէին: Նա և Մովսէս իբրև ծառ մի 'ի պտուղ իւր ցնծայր:

Իսկ իբրև կամեցաւ Յեսու որդի Նաւեայ՝ զի արկցէ բաժինս 'ի մէջ պտղոյ և 'ի մէջ ծառոյն նոցա, դարձաւ ծառն խոնարհեցաւ բանիւք իւրովք իբրև ոստովք իւրովք և առ չարս, զի պատուաստեսցին նոքա յոստ նորա: “Ո՞տացէ ինձ, ասէ, տեսանել զամենայն ժողովուրդս տեառն 'ի մարգարէութի̃ դարձեալ „: Եւ զի ասէ. “Յոգւոյ քումմէ առից և արկից զնոքօք „, զի մի բարձրասցին նոքա 'ի վերայ նորա: Բայց ինքն Մովսէս զի և զայս եւս ա̃յ տացէ, ասէ. “Քանզի արկ տէր զհոգին իւր 'ի վերայ նոցա „: Բայց հերքայեցի, “Յորժամ արկցէ տէր զհոգին իւր 'ի վերայ նոցա „ գրեալ է: Զայս մարգարէանային Ելդադ և Մովդադ հանդերձ իւթանասուն ծերովքն,

յասելն իւրեանց. “Մովսէս եհան զմեզ յերկրէն եգիպտացւոց, և Յիսուս տանի յայն երկիր պարգեւաց„: Վասն այսորիկ ասաց Յեսու. “Տէր իմ Մովսէս, հրաման տուր դու արանցն այնոցիկ, զի արգելցին նոքա 'ի մարգարէութենէ անտի„: Կամ զի ահա մարգարէանային նոքա առանց քո, ասէ “Հրաման տուր և արգելցին„: Բայց լուեցոյց կարծեաց, զի գիտաց թէ նախանձու ասաց: “Մի՛, ասէ, նախանձեցուցաներ դու զիս„: Բայց հեբրայեցի՝ փոխանակ այնր՝ զի ասէ “Մարգարէացան, և այլ ոչ ևս յաւելին„. “Մարգարէացան, ասէ, և այլ ոչ ևս հատան„: Եւ փոխանակ այնր՝ զի ասէ “Որ ընաւ սակաւ ժողովեաց տասն չեղջ„. ասէ “Տասն քոռ„:

ԳԼՈՒԽ Բ

“ԵՒ սկսան, ասէ, բամբասել Մարիամ և Ահարոն զՄովսիսէ վասն կնոջն այլազգւոյ„. քանզի կին 'ի Հնդկաց ունէր Մովսէս: Եւ վասն այսր ցուցանէ և Յովսեպոս, ասէ 'ի մատեանս իւր. ասէ այսպէս: Ի ժամանակի իբրև աճեաց, ասէ, Մովսէս, առաքեցին զՄովսէս առնել մարտ պատերազմի ընդ Հնդիկս՝ ընդ թշնամիսն եգիպտացւոց. զի յուսացեալ յայս ապաստանէին Հնդիկք, եթէ ընդ ճանապարհսն անապատի ոչ ոք կարէ գալ 'ի վերայ նոցա վասն թեւաւոր օձիցն խարամանեաց՝ որ էին անդ. և զսահմանս իւրեանց՝ որ յայլոց կողմանց էին՝ պահէին զգուշութե՟: Բայց Մովսէս այսմ խելամուտ և տեղեակ էր, և ելս եգիտ նա գործոյն. և չոգաւ նա ընդ անապատ կողմն. և ածին թռչունս, զի 'ի ձայնէ թռչնոցն փախչէին օձքն թեւաւորք. և արձակեցին առաջի զօրացն: Եւ որչափ ևս լսէին զձայնս թռչնոցն օձքն թեւաւորք, տեղի տային. մինչև եկն եհաս 'ի վերայ թշնամեացն իւրեանց, և փախստեայ հալածականս արար զնոսա: Եւ զի յանկարծակի հաս 'ի վերայ նոցա և պաշարեաց զնոսա, և լուծան լքան ձեռք նոցա, և փախստական անկան 'ի կղզի մի՝ զի անուն էր նորա Սաբա. այս իսկ է՝ զի ասէ “Թագաւորք Արաբայ և

Սաբայ "․ և ապա յետոյ կոչեցաւ Մերիայ 'ի Կրամբեսասեայ ըստ անուան քեռ նորա ։ Եւ իբրև մերձեցոյց Մովսէս զզօրսն իւր առ 'ի պարիսպն մարտնչել, տես զնա Թերբաս դուստր թագաւորին Հնդկաց՝ թէ զօրապէս մարտնչէր, և ընդ գիտս խորագիտութե՜ նորա զարմանայր․ և ապա յետոյ անկաւ պարտասեցաւ նա 'ի գութ սիրոյ նորա․ և առաքեաց առ նա ։ Իբրև պաշարեաց Մովսէս զկղզին և նեղեաց զնոսա, և հուպ յառնուլ արար, սկսաւ աղաչել զՄովսէս տիկինն Հնդկաց, զի տացէ Մովսիսի զանձն իւր․ և առցէ զնա իւր կնութե՜, բայց միայն զքաղաքն մի՛ նեղեսցէ ։ Եւ ետես Մովսէս եթէ հնար ինչ դիւրին յաղթել ոչ գոյ բայց յայսմիկ, և նստել պաշարել զնոսա ընդ երկայն ժամանակս ոչ կարէր, ձեռն ետ նմա Մովսէս և առ զնա իւր կնութեան, որպէս զի տացէ զզօրսն և զաշխարհսն իւր 'ի ձեռս եգիպտացւոց ։ Վասն այսորիկ ասացին․ ասեն "Կին այլազգի արար նա " ։ Եւ գիրք ևս կնքեն վասն այսորիկ․ այո, ասեն, և կին հնդիկ արար ։ Եւ այս յառաջ քան զփախչելն յեգիպտոսէ, և յերթալ առ Յոթոր, և առնուլ զդուստր նորա զՑիփորա իւր կնութե՜ ։

Եւ միւս ևս այլ մատենագիր Յունաց, որ անուանեալ կոչի Արտեմենոս, գրէ այսպէս․ ասէ ։ Իբրև եղեն թագաւորք յեգիպտոս, թագաւորեաց Փաղմոնթէս յԱրեգ քաղաքի․ և էր նա թշնամի ազգին Հրէից ։ Եւ եղև նորա դուստր մի, զի անուն էր նորա Մառի․ և ետ զնա կնութե՜ Քանեփրայ թագաւորի մեմփեսացւոց քաղաքի, զի նա ինքն է Հռադուսա, այն՝ որ առն զՄովսէս յորդեգիր ։ Եւ իբրև զօրացաւ, ասէ, Մովսէս, և շինեաց նա զՀերմոպօլիս քաղաք․ և արար նա մարտ պատերազմի ընդ Հնդիկս և ընդ Թեբայեցիսն զտասն ամ ։ Եւ յետ մահուն այնորիկ՝ որ առն զՄովսէս յորդեգիրս, Քանեփրա այրն նորա սպառնայր Մովսիսի սպանանել զնա ։ Եւ թաղեցաւ ինքն Մառի յեգիպտոս․ և 'ի նմանէ կոչեցաւ Մուռիա քաղաք ։ Եւ իբրև գիտաց Մովսէս զնենգութիւնն Քանեփրայ, սպան նա զՔաննոթէսայն, այն որ կամէրն սպանանել զնա․ և ինքն փախստեայ

գնաց յԱրաբիա առ Հռագուէլ . և առ զդուստրն նորա իւր կնութե̄ ։

“Նաւ սկսան, ասէ, Մարիամ և Ահարոն բամբասել զՄովսէս վասն կնոջն այլազգւոյ զոր առ„ ։ Եւ ահաւասիկ պատճառքն հրաժարեցութե̄ն Մովսիսի մերձեցուցին զԱհարոն . Թէպէտ և այս այսպէս իցէ, սակայն մարգարէ անուանեցաւ աստուածոյն Փարաւոնի ։ “Զիա՞րդ ոչ, ասէ, զանգիտիցէք և ոչ զարհուրեցարուք բամբասել զՄովսէս ծառայէ իմմէ„ ։ Իբրև Մովսէս վասն այսր ոչ եղև ամբաստան, սակայն ա̄ծ ոչ անփոյթ արար . զի ստոյգքն և արդարք առ վրէժխնդրութի̄ անձանց իւրեանց հեզք քաղցունք լինէին, և ողորմութե̄ք և անմեղութե̄ք գնային[1] . բայց որ ա̄յ իրք էին, իբրև զբոց բորբոքէին նախանձուն իւրեանց . Նմա իսկ նմանօղք լինէին, զի վասն իւրոյն անփոյթ առնէ, և զծառայիցն իւրոց վրէժ խնդրէ ։ Գրեալ այսպէս է . ասէ . “Խօսեցան որդիքն Իսրայէլի զբան հայհոյութեան 'ի վերայ ա̄յ„ ։ Եւ ոչ ուրեք յայտ առնէ՝ թէ ասաց . զիա՞րդ ոչ զանգիտիցէք և ոչ զարհուրեցարուք 'ի բամբասել զինէն . որպէս և աստ ասացն, ասէ “Զիա՞րդ ոչ զանգիտիցէք և ոչ զարհուրեցարուք բամբասել զՄովսէս զծառայէ իմմէ„ ։

Փութացաւ վաղվաղակի վրէժխնդրութիւն զկնի պատգամին, որպէս զի փութացեալ տագնապեսցին տեսօղքն, և 'ի նշանն պատժոց յայտնի եղիցին յանցաւորքն ։ Արդ սկիզբն արար վրէժխնդրութե̄ն այնմիկ, զի սկիզբն արար նախանձու . և բորոտութիւնն եղև յայտնիչ և ծանուցիչ 'ի վերայ այնորիկ՝ որ վաղհասուկ եղև 'ի ժպրհութի̄ համարձակութե̄ . որպէս զի փութացեալ յօժարեսցի ապաշխարօղն յապաշխարութի̄, և ապրեսցէ 'ի բարկութե̄ խրատու ։ Արդ յայս ամենայն փառքն ա̄յ քարոզեցան, և խոնարհութի̄ հեզութե̄ Մովսիսի յայտնի եղև ։ Եւ փոխանակ զի ոչ եղև նա ամբաստան զայնմանէ՝ որ յանցեան նմա, այլ աղօթս փոխանակ ընդ նոցա մատուցանէր ։ Բայց ա̄ծ աղօթից նորա առ ժամանակ մի ոչ անսաց . ոչ եթէ զի ոչ էր հաճեալ ընդ նա, զի ահա

1 Յօրինակին գնաջին ։

ւանիկ 'ի Քորեբ լեառնն զմահն և զապականիչն սահմանեաց աղօթիւք իւրովք՝ 'ի ժամանակի իբրև փոխանակեցին նոքա ընդ որթուն զա̃ծ․ այլ զի քարոզեսցի նախ ժպրհութի̃ համարձակութե̃ Մարեմուն առաջի տեսողաց, ասէ “Խրատեսցի զեւթն օր„․ որպէս զի լուիցէ ամենայն ժողովուրդն ։ Ոչ եթէ զի խայտառակեսցէ զնա, այլ զի դիցէ ահ և երկիւղ առաջի նոցա․ զի “Ի մերձաւորս իմ, ասէ, փառաւորեցայց ես յանդիման ժողովրդեանդ„ ։ Եւ զի ցուցցէ ինքն Մովսէս՝ թէ առաւել են հաւատք քան ըղպատուէր հրամանի ։

Իբրև բորոտեցաւ Մարիամ, ոչ եթէ օրինօքն այնոքիւք՝ զոր ետ նա վասն բորոտութեանն՝ բժշկեաց զնա, այլ հաւատովք և աղօթիւք ։ Բայց Ահարոն զի ապրեցաւ, զի զղջացաւ և ապաշխարեաց ։ Զի զոր օրինակ 'ի ժամանակի իբրև եանց Ադամ զպատուիրանաւն, ոչ վաղվաղակի եդ 'ի վերայ նորա զպատիժսըն պատուհասից, այլ թոյլ ետ նմա՝ զի ապաշխարեսցէ, յայնմիկ՝ զի հարց զԵւայ, և անէծ զօձն նախ ։ Եւ զի արար նա զայս վասն յանդիմանութե̃ նորա, սակայն ոչ զղջացաւ և ապաշխարեաց․ և կարգեցան եկին հասին պատիժքն պատուհասից 'ի վերայ Եւայի, և Ադամ ոչ կակղացաւ․ ապա և զնա ևս հան ընկէց արտաքս ստուգութի̃ն 'ի դրախտէ անտի ։ Այնպէս Ահարոն․ իբրև ետես եթէ ընկալաւ Մարիամ զպատիժս պատուհասից իւրոյ, գիտաց թէ և ինքն չէ ապրելոց, զի հաղորդակից էր նա յանցանաց նորա, որպէս Ադամ ընդ Եւայի․ վասն այսորիկ փութացաւ վաղվաղեաց ապաւէն իւր արար զՄովսէս ։ “Աղաչեմ, ասէ, զքեզ տէր, մի՛ շտապ տագնապի հասուցաներ 'ի վերայ մեր, զի յանցեաք և մեղաք մեք 'ի տգիտութե̃ մերում„ ։ Եւ քանզի փոխանակ անձին իւրոյ և քեռն իւրոյ հասարակաց աղաչեաց, որպէս զայն զՇմաւոնին Վիմի․ “Զի՛նչ, ասէ, եղիցի մեզ„ ։ Եւ գթածն քաւեաց վասն յանցանաց նոցա ։ Որպէս և Դաւիթ ասաց ցՆաթան, ասէ “Մեղայ„․ ետ նմա անդրէն պատասխանի և ասէ․ “Եւ տէր թողցէ զյանցանս քո և մի՛ մեռցիս„ ։

“Ո՛հ, ասէ, եղիցի պատուհաս մինչև 'ի մահ․ որ-

պէս և մեռեալ՝ զի ելանէ յարգանդէ մօր իւրոյ , և կերեալ է կէս մարմնոյ նորա ,, . այս ինքն զի մեռաւ մորթ մարմնոյն , զի վառեցաւ նա բորոտութեբ̃ , զի ոչ զեռաց ՚ի նա արիւն կենդանի ։ Բայց ՚ի Հեբրայեցի ասէ . ասէ “Մի՛ եղիցի իբրև զմեռեալ մի , զի մինչև ելեալ իցէ նա յորովայնէ մօր իւրոյ , կերեալ իցէ զկէս մարմնոյ նորա անդէն ՚ի նմին ,, . բայց պատ-ճառք , զի տրտնջեցին նոքա վասն նորա՝ կարծիք այս են ։ Քանզի խրատատու եղև Մովսիսի աներն իւր , և հաճոյ թուեցաւ նմա խրատն նորա ։ Եւ ասէ ցնա Մովսէս . “Մի՛ թողուր զմեզ յայս անապատի . լեր դու մեր առաջնորդ ,, . այս ինքն իբրև զմարգարէ մի ՚ի նմանութ̃ի Ահարոնի ։ Եւ իբրև տեսին Ահարոն և Մարիամ նախանձեցան . քանզի Ահարոն էր Մով-սիսի ՚ի տեղ մարգարէի ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Եղեր դու մեզ առաջնորդ ,, . ասէ “Եղեր դու մեզ վկայութ̃ի ,, ։

“Առաքեա դու , ասէ , արս ընտիրս երթալ դիտել զերկիրն քանանացւոց ,, ։ Եւ այս ոչ եթէ յայտնի եղև Մովսէսի ազգն քանանացւոց՝ ասաց նմա . ասէ “Առաքեսցես արս լրտեսս անդր ,, . այլ զի հանդէս արասցէ , և զչափ առցէ զանհաւատ դառնացող ժո-ղովրդեանն . և յանդիմանեալ դսրովեսցի ՚ի Հռա-խաբ հաւատացեալ ։ Իբրու մեծամեծ սքանչելի էին նշանքն որ շուրջ էին զնոքօք , յամենայն ժամ երկմը-տեալ բաժանէր նա ՚ի նշան անդ պտղոյն , այն՝ որ ըստ համեմատի յոյժ փոքր և նուազ էր նա քան զընկերս իւր , իբրև զայն զՅեշովայն որդւոյ Նաւեայ և զՀռախաբայն ։ Բայց ողկոյզն բաժակ փրկութեան նորոցն կտակարանաց . և դարձեալ խորհուրդ խաչին որ ՚ի միջի , և երկու որ բարձեալն էին զնա , իբրև զայն՝ որ ելն ՚ի խաչ ՚ի մէջ երկուցն անօրինաց ։

“Երկիրն , ասեն , մարդածախ մարդավար է ,, ։ Եւ զիա՞րդ տեսէք դուք անդ սկայս որդիք սկայից ՚ի Հրս-կայազանց . երկիր մի՝ որոյ այսպիսի պտուղ է , զիա՞րդ է նա չար ։ Եկն պտուղն , և եղև երաշխաւոր . քան-զի սուտ համարեալ են յաչս նոցա աւետիքն և պար-գևք , հայհոյեցին վասն բարութեան երկրին այնո-րիկ . զի պտուղն՝ որ բերին յերկրէ անտի յայնմանէ ,

յանդիմանեալ կշտամբեաց զհամբաւսն՝ զոր հանէին 'ի վերայ նորա ։ Զի եթէ չար էր երկիրն այն , իսկ զիա՞րդ պտղալծով բարձին զողկոյզն և բերին ։ Եւ եթէ երկիրն արդարև մարդավար մարդածախ է , իսկ զիա՞րդ սնոյց աճեցոյց երկիրն սկայս և սկայազունս . և դուք , զի մնայք յերկիրն եգիպտացւոց իբրև նստէիք դուք առ կատսայս լի մսով , զիա՞րդ եղէրուք դուք յաչս նոցա իբրև զմարախ ։

Աբրահամու զի ասացաւ նմա , թէ “Քեզ տաց զերկիրս զայս և զաւակի քում յետ քո” , ցանկայր՝ զի 'ի քայլել ոտից զաւակին իւրոյ հաստատեսցի ուխտն այն իւրոյ ։ Եւ 'ի ժամանակի իբրև մտին լրտեսքն , զի խրամատեսցեն զցանկն հին և զսահմանն՝ որ յաւիտենից՝ զի ժողովուրդն երթիցէ մտցէ առ հարս իւր ; ընթացոյց Աբրահամ թաղեալ յերկիր զպտուղ երկրին առ որդիս իւր , որպէս աղաւնին զպտուղ ձիթենւոյն առ Նոյ արդար ։ Եւ զի ոչ էին նոքա որդիք Աբրահամու եթէ փափագիցեն և ցանկասցին , ելանել ընդ առաջ պարգևացն հօրն իւրեանց ոչ կամեցան ։ Եւ զի ոչ էին զաւակ նորա , ոչ վասն պարգևացն հօրն իւրեանց խոստովան եղեն , և ոչ աւետեաց նորա արժանի եղեն , զի սնունդ էին նոքա եգիպտացւոց և ոչ Աբրահամու ։ Առաքեաց ընդ առաջ նոցա զերկիրն օրհնեալ աւետեօքն , այն՝ որ ժողովեաց ամփոփեաց 'ի ներքոյ թևոց իւրոց զհարսն օրհնեալ , զպտուղն քաղցր և զանոյշ . խորհուրդ գործոյ հարցն նոցա՝ ստուգաց և արդարոց ։ Այլ ոչ գործոցն հարցն իւրեանց նմանօղք եղեն , և ոչ բարւոք առհաւատչէիւն ճշմարիտ աւետեաց խոստովան եղեն նոքա ։ Եւ զի ոչ եթէ զպտուղ երկրի նոցա զրկեցին նոքա , այլ զաւետիսն անգոսնեցին նոքա . ընդդէմ այնր՝ զի ասէ “Երկիր է որ բղխէ զմեղր և զկաթն” , դարձուցին յասել իւրեանց . ասեն “Երկիր մարդավար մարդածախ է” ։

Այս ողկոյզ նմանութիւն Աբրահամու , զի բարձեալ ունէր 'ի թևս իւր զժողովս խաղողոյ իւրոյ , և մտանէ առ զաւակ իւր բաժանել բաշխել ծննդոց իւրոց ըզքաղցրութիւն աւետեաց իւրոց ։ Սակայն ոչ փափագեաց և ցանկացաւ նմա ժողովուրդն . զի խաղող նոցա խա-

զօղ դառնութե՟. վասն այսորիկ մատնեցան նոքա 'ի ձեռս մահու հնձանահարին իւրեանց. փոխանակ զի անարգեցին խոտեցին նոքա զողկոյզն՝ որ մտանէր խորհրդեան, զի քաղցրացուսցէ զդառնութիւս զողկուզացն որ ելին յերկրէն եգիպտացւոց: "Խաղող նոցա, ասէ, խաղող լեղի, և ողկոյզ նոցա ողկոյզ դառնութեան": Եւ զի գիտաց Թշնամին զխորհուրդն, խռովեաց զժողովուրդն յօրինակ անդ: Այս է զլացութի առաջին որ եղև օրինակ զրպարտութեան վերջնոյ. զի հարքն զրկեցին զլացան զերկիրն և ասեն. "Մարդածախ մարդավար է". և զողկոյզն զվկայն Ճշմարիտ պարարտ երկրին. և որդիք նոցա զրպարտեցին զՄարիամ և պտուղն որ 'ի նմանէ, որ հալածէ քաղցրութեամբ իւրով զդառնութիւն հեթանոսաց: Զի վասն այսորիկ ողկոյզն խորհրդեան իւրով սահման հաստատեաց և եդ, զի զրպարտիչքն իւր յերկիրն պարգևաց մի մտցեն. զի նկարեսցէ գործովն իւրով զխաչն, այն՝ որ զժողովուրդն զլացող 'ի ժողովրդենէ իւրմէ եհան, և փոխանակ նոցա տնկեաց տունկ նորատունկ՝ որ խոնարհի յըմպելի արեանն ազատչին իւրոյ 'ի դրախտի անդ իւրում, զի նա ինքն է աւետիք պարգևաց իւրոց. զի հինն նորովն սիրեսցի, և նորն հնովն հաւատարիմ լիցի: Փոխանակ այնր՝ զի ասէ "Կենդանի եմ ես. և լցան փառքն տեառն յամենայն երկիր". հեբրայեցի, "Կենդանի եմ ես, և փառք իմ ընդ ամենայն երկիր": Փոխանակ այնր՝ զի ասէ "Եւ ընկացին զպոռնկութիւս իւրեանց". հեբրայեցի, "Զմեղս իւրեանց":

"Ամենայն որ արասցէ, ասէ, 'ի ձեռն բարձր". այս ինքն՝ որ յաճախէ մեղանչել հպարտութեամբ պարծանօք. կամ անդոսնէ՝ իբրև գիտէ թէ մեղանչէ. կամ իբրև յիշէ մեղանչէ. յակամայ խաբէութի ոչ մատուցանէ: "Հանէք, ասէ, զայրն զայն՝ որ քաղեաց զփայտն յաւուրն շաբաթու, և մեռցի": Քանզի ամենայն ժողովուրդն խափանեալ նստէր, և նա հպարտացաւ ամբարտաւանութ՟բ, որպէս զՋամբրին: Եւ զի մի խորամանկեսցին, որպէս և այրն որ զփայտն քաղեաց: "Մոռանալով, ասէ, մոռացայ ես": Ասէ "Արարէք դուք ձեզ արկանելիս քղանցա-

ւորս, զի մի՛ մոլորիցիք դուք զկնի սրտից ձերոց»:

«Ո՛վ այս գիտասջիք, ասէ, եթէ տէր առաքեաց զիս, և ոչ եթէ յանձնէ ինչ գործեցի որպէս և դուք կարծէք»: «Ասացից, ասէ, և յանուն տեառն, և եղիցի: Արդ եթէ ըստ օրահասի մահու ըստ ամենայն մարդոյ մեռանիցին մարդիկս այս, և այցելութի պատուիրանի լիցի սոցա իբրև այլոց, ապա զիս տեառն չիցէ առաքեալ գործել զայդ գործ: Իսկ եթէ արարած ինչ հաստատիցէ, և ցուցցէ զզօրութիւն տէր, և բացցէ երկիր զբերան իւր, գիտասջիք, ասէ, եթէ ոչ 'ի կամս իմ ինչ բանամ ես զբերան իմ»: Եւ եթէ բարկացողացն սրբեցան բուրվառք իւրեանց յանձինս իւրեանց, ո՞րչափ ևս առաւել սրբին մարմինք մարտիրոսաց յանձինս իւրեանց: «Մի՛, ասէ, մերձեսցի օտարածինն արկանել խունկս առաջի իմ, զի մի՛ եղիցի նա իբրև զԿորխ և զժողովուրդն իւր»: Եւ 'ի վաղիւ անդր յարեան ժողովեղեալք և թայրաթոռք և ամենայն ազգատոհմք. «Դուք, ասէ, սպանէք կոտորեցէք ջնջեցէք զայնչափ ժողովուրդն տն»․ այս ինքն, զի կացէք դուք, ասեն, յաղօթս, և արար զկամս ձեր Աստուած: Եցոյց զպարտեալն զսէր իւր զոր ունէր առ նոսա: «Առ դու, ասէ, բուրվառ մի և արկ խունկ և քաւեա 'ի վերայ նոցա»: Եւ ապա ըստուգեցաւ նոցա այն՝ զի ասէ. «Արարից զքեզ յազգ մեծ»: Փոխանակ այնր՝ զի ասէ «Զի մի՛ մտանիցեն տեսանիցեն զսրբութիւն մինչ դեռ ընկղմեսցի»․ հերբայեցի, «Մինչ դեռ յայտնի է» ասէ:

«Տուցեն քեզ, ասէ, երինջ մի կարմիր տրմուղ անարատ»: Եւ եթէ զոհիւքն կարօտ էր, իսկ մոխրովն երնջոցն՝ զոր ետ 'ի սրբութի կարօտելոցն, զի՞նչ կարօտ էր նա: Սկիզբն արար 'ի զուարակէ մինչև 'ի տատրակ, զի յայտ արասցէ՝ զի զոր օրինակ ոչ բռնադատեաց զնոսա յայտնի պատարագօքն աւելի քան զզօրութի նոցա, սոյնպէս և ոչ բռնադատեաց զնոսա ծածուկ պատարագօք. այլ թաղեաց 'ի զոհս անդ և զմոխիրն ևս երնջոյն իրս անարգս: Զի յորժամ կարծիցեն՝ թէ զոհիւք ինչ կարօտ իցէ, յանդիմանեալ կշտամբեսցին ինքնին զոհքն. և եղիցի լուծանել նոցա յանձանց իւրեանց: Սոյնպէս մոյծ թաղեաց զամե-

նայն յամենայն ինչ. զի այն ինչ զոր թաղեացն 'ի նմա, այն ինքն լուծցէ զնա։ Եւ զի ելցէ զենցէ զքօշն, 'ի վաստակէն իւրում քահանայն՝ տացէ նա զվարձս քահանայէն, այն որ սրբէն, զվարձս ոտից նորա։

ԳԼՈՒԽ Գ

«Մօսեսցես դու, ասէ, ընդ վիմիդ, և արձակեսցէ ձեզ ջուրս»։ Եւ փոխանակ զի բարկացաւ նա, և ոչ արձակեաց զջուրս իւր, յաւել ևս Մովսէս և եհար զնա, և ապա արձակեաց զջուրս իւր։ Այո, տէր Մովսէս. իսկ արդ դու ե՞րբ համբարձեր զձեռն քո 'ի վերայ արարածոց, և ոչ փութացեալ տագնապեցան 'ի զինէ անտի՝ որ 'ի ձեռին քում։ Զի եթէ կամեցեալ էր Մովսիսի առնել մի 'ի նշանաց անտի գաւազանաւն և ոչ էր լեալ, բարւոք երկմտեալ բաժանէր նա 'ի վերայ գաւազանին. ապ' եթէ յամենայն տեղիս, ուր և կամեցաւ առնել նշանս և սքանչելիս, փութացեալ վաղվաղակի լինէին, չարաչար անարգեաց թերահաւատութե՟ն իւրով զզէն՝ որ պսակեացն զնա իբրև զարդար։ Այս է Մովսէսի, զի 'ի բարձրութե՟ անտի աստուածութե՟ն իւրոյ էջ նա 'ի թերահաւատութի՟։ Ասէ. «Ի վիմէ՞ աստի յայսմանէ հանէ ձեզ տէր ջուրս». ոչ եթէ զանձն իւր միայն տկարացոյց յայսմ վայրի ինքնին աստուածն Փարաւոնի; այլ զԱստուածն ևս Իսրայէլի փոքրկացոյց ընդ իւր։ Այլ պարգևքն այն և իբրև ոչ կամէին՝ ցուցին զզօրութի՟ իւրեանց առ ասօղս իւրեանց. զի ուսուցէ, զի եթէ թերահաւատութե՟ն աստղին[1] իւրոյ այսպիսի զօրութի՟ս գործեաց, ո՞րչափ ևս առաւել հաւատովք նորա առաքինանայր նա։

Արդ «Հար, ասէ, Մովսէս զվէմն». զի ցուցցէ եթէ ոչ կարեն ելանել ջուրք փափուկք 'ի ցամաք վիմէն։ Բայց վէմն վաղվաղակի փութապէս բղխեաց գետս, զի ելցեն ջուրք և կշտամբեալ յանդիմանիցեն զայն՝ որ երկմտեալն բաժանեցաւ. զի խորհուրդ էր

1 Յօրինակին աստղէն։

նա այնորիկ՝ որ յորժամ երկմտեալ բաժանէին 'ի վերայ նորա որդիք ազգի ժողովրդեանն Մովսիսի, գործ սքանչելեացն նորա յանդիմանեալ կշտամբէր զնոսա։ Արդ փոխանակ զի երկմտեալ բաժանեցաւ նա, զրկեաց և արգել զնա յերկրէ անտի պարգևաց։ Այլ ոչ եթէ 'ի սրտի իւրում անգոսնեաց նա զպատուիրանն։ "Դառնացուցին, ասէ, զոգի նորա, և խօսեցաւ շրթամբք իւրովք։ Փոխանակ, ասէ, զի ոչ հաւատացէք դուք զիս՝ փառաւոր առնել զիս 'ի մէջ ժողովրդոցն Իսրայէլի, մի՛ մտցէք դուք յայն երկիր պարգևաց„։

Արդ Մովսէս, այն որ պէսպէս նշանս գործէր, ուղղել զսիրտ ժողովրդեանն առ Աստուածն իւր հնարէր նա գործովն իւրով՝ որ 'ի վերայ վիմին եղև, իբրև մարդ։ Այս 'ի մտաց անտի նորա վրիպեցաւ, և աղօթս նա վասն յանցանացն ոչ մատոյց. վասն այսորիկ եդաւ 'ի վերայ նորա վնաս յանցանացն, զի զժողովուրդն իւր առ Աստուածն իւր ոչ հայեցոյց նոցա. իբրու զամենայն զգործս իւր՝ որ ինչ միանգամ գործէր նա՝ Աստուծով իւրով գործէր, և առանց գայթագղութեան լինէրն նա ժողովրդեանն։ Յայսմիկ իսկ զի Աստուած մի՛ անձամբ իբրև 'ի պատիւ փառաց նորա և յաշակերտութիւն ժողովրդեանն՝ բազում սիրովն իւրով զոր ունէր առ նա՝ խօսեցաւ նմա, զի ընդ նմա և առ նմա և առաջի նորա կայցէ նա։ Իսկ նա բարկանալովն իւրով 'ի վերայ վիմին հաղորդ և կցորդ լինէր նա ուրացողացն. զի վէմն այն ցամաք որ նկարեալն էր 'ի հինն հաւատարիմ, այն որ ծնուցիչն էր օրինացն, զպտուղս զոր յղացեալ ունէր վէմն, ոչ եթէ սրտմտութեամբ ինչ արժան էր ծնուցանել զնա, և ոչ բարկութեամբ ինչ պարտ էր հանել զնոսա։ Վասն զի աղօթիւք և խնդրուածովք պարտ և պատշաճ էր խորհուրդն փառաւորեալ կատարեալ հօրն փառաւորի զխոստումն իւր 'ի ձեռնկալոյն իւրոյ կատարէր նա. և զխորհուրդն Որդւոյ դգուել Մովսիսի արժան էր։ Քանզի խորհուրդն Երրորդութեան անդ նկարեալ լինէր. զի ահա աւանիկ Հայրն անդ էր, և Ծնունդն՝ որ ոչ 'ի բնութեան 'ի խորհուրդ վիմին առաջի նորին։ "Վէմն, ասէ. զի նա ինքն է Քրիստոս„։ Եւ Հոգին՝ որ

'ի Մովսիսի անդ է, այն որ առանց Հոգւոյ մի ինչ 'ի գործոց իւրոց նա ոչ կատարեաց: Նա և մարգարէն իսկ նովին տրտմութ̃բ գործոյն այսպէս ասաց, եթէ "Դառնացուցին զՀոգի նորա, և խօսեցաւ շրթամբք իւրովք". այն՝ որ այսու գործով միայն ևեթ եպերեցաւ, զի եղև նա առանց աղօթից. զի վասն այսորիկ իսկ պատուհասեցաւ նա, քանզի ըստ օրինակի գործոյն զժողովուրդն առ ինքն դարձոյց. իբրու զի թէ ինքն զօրութ̃բ անձին իւրոյ զովացոյց զպապաքումն ծարաւոյն նոցա: Զի թէպէտ և ոչ այսպէս կամէր նա, սակայն ժողովուրդն այսպէս խորհեցաւ. զի վասն այսորիկ արգել և զրկեաց զնա յերկրէ անտի պարգևաց:

Բայց ոչ եթէ վասն այսր ինչ առաւել ցաւէր Մովսիսի արդարոյն մտանելն յայն երկիրն պարգևաց. այլ զի արգելեալ կարձեցան գնացք նորա, զի մի տարցէ մուծցէ զարդարն առ հարսն իւր, այս ինքն զՅովսէփ առ ծնանելիսն իւր. զի ոչ տուաւ նմա մտանել տարածանել զձեռս իւր 'ի վերայ տեղւոյն՝ ուր եդեալ էին հարքն իւր, և գոհասցի զայնմանէ՝ որ եդ զնոսա յերկիրն քանանացւոց մեռեալ կռապաշտութ̃ն. և պահեաց զնոսա 'ի միջի նորա իբրև շունչ 'ի մէջ մարմնոյ: Զի վասն այսորիկ գրեալ է, թէ "Սիրեաց Աստուած զերկիրն զայն". ոչ զի արժան էր նա սիրելոյ, զի ահա աւանիկ պիղծ էր նա իբրև զայլ ընկերսն իւր. այլ վասն սգայուն ամանոցն՝ որ պաշտեցաւ 'ի նոսա աստուածութ̃ին 'ի ժամանակի անդ իւրեանց: Արդ զի ոչ առ նա ակն յանցանացն Մովսիսի և ոչ աչառեցաւ նմա, զի եղիցի և այս ևս վասն փառաց նորա. զի եթէ անփոյթ արարեալ էր, կարծիք լինէին թէ և այլ ևս բազում յանցանս յանցուցեալ էր նորա, և ոչ յայտնեաց վասն նորա: Արդ 'ի պատուհասելն նորա զնա վասն այսր յանցանաց, յայտ արար թէ այլ յանցանս նորա չէր յանցուցեալ. ապա թէ ոչ՝ և ոչ զայն թողոյր նմա, իբրև զայն զԴաւթայն. զի յայտ արասցէ՝ թէ և ոչ արդարոց իւրոց ակն առնու նա:

Իսկ եթէ ասիցես, թէ ահաւանիկ և 'ի միւսում վայրի երկմտեալ բաժանեցաւ Մովսէս, զի ասէ այս-

պէս. “Զի՞նչ խաշինք արջառոյ կամ ոչխարի բաւական լիցի դոցա. զի եթէ ամենայն հեղեղքն՝ որ 'ի ծովու անդ իցեն՝ բաւական կարիցե՞ն լինել դոցա 'ի կերակուր”: Բայց այս ոչ եթէ նորա է, այլ զերկմտութի՛ ժողովրդեան առ նա յանձն, և մատոյց առ Աստուած, որպէս զի լուիցէ ժողովուրդն յա̃յ եթէ ձեռն տեառն բաւական է, և հաւատայցեն: “Փոխանակ զի ոչ, ասէ, հաւատացէք դուք փառաւոր առնել զիս 'ի մէջ որդւոցն Իսրայէլի, մի՛ մտանիցէք դուք յայն երկիրն պարգևաց”: Եւ ահաւանիկ յետ այսր կաց նոցա յաղօթս վասն այնոցիկ՝ որ խածատեցան յօձից անտի, և լսելի եղեն աղօթք նորա, զիա՞րդ վասն անձին իւրոյ ոչ լինէր նա լսելի՝ թէ արդարև յանցուցեալ էր նորա: Թէպէտ և խնդրեաց նա և վասն այսր, այլ մտանել յերկիր անդր պարգևաց խնդրեաց նա աղօթիւք, և ոչ վասն զի մեղաւ նա: Այն զի թէ արդարև ճշմարտիւ մեղուցեալ էր նորա, վասն լաւութե̃ անձին իւրոյ փոյթ յանձին ունէր նա, և ոչ եթէ մտանել յերկիրն քանանացւոց. զի լաւ էր նմա ընդունել զքաւութիւն և մեռանել յանապատի անդ, քան մտանել լի մեղօք յայն երկիրն պարգևաց: Զի թէպէտ և զայն՝ որ խնդրեաց՝ ոչ տուաւ նմա, սակայն զայն ինչ՝ որ լաւ ևս էր՝ արար նմա. զի 'ի լեռնէ անտի ցոյց նմա զայն երկիրն պարգևաց:

Արդ զի ոչ ետ Մովսէս փառս գաւազանաւն իւրով 'ի վերայ վիմին, ասէ “Խաղաց առաջ ջուր հորոց”: Արդ ժողովելով ժողովէին ծերակոյտն յօթևանաց յօթևանս, և օրհնէին 'ի վերայ գաւազանացն իւրեանց. և ապա յայտնի լինէր վէմն՝ ուստի ջուրքն բղխէին: “Եւ յայտնեցին զնա, ասէ, գաւազանօք իւրեանց”: Բայց հեբրայեցի, “Փորեցին զնա, ասէ, իշխանք ժողովրդեանն, և յայտնիչքն գաւազանօքն իւրեանց”. այս ինքն Մովսէս և Ահարոն: Եւ փոխանակ այնր՝ զի ասէ “Եւ ապա յանապատէ անտի տուաւ 'ի Մանթանին, և 'ի Մանթանեայ 'ի Մանայէլ, և 'ի Մանայէլայ 'ի Բեմոնթ”. հեբրայեցի ասէ. “Եւ յանապատէ տուաւ նոցա. և յորմէ հետէ տուաւ նոցա, էջ նա ընդ նոսա 'ի ձորսն, և 'ի

ձորոց անտի 'ի բարձունս՝ որ հայեցեալ երևին դէմ յանդիման Աշխմին անապատին ,, ։ Մանթանին՝ հեբրայեցերէն՝ տուաւ նոցա թարգմանի , և Մանայէլն՝ ձորք , և Բեմոթն՝ բարձունք ։

Առ դուռն խորանին եդ զօձն , զի դարձուսցեն զերեսս իւրեանց անդրէն, զի դարձուցեալ էին անտի. և ծանիցեն ամենեքին թէ ուստի եղանէ բժշկութիւն. Եւ զոր օրինակ նոքա որով խոցեցան՝ նովին բժշկեցան , սոյնպէս փայտիւն մեռաւ Ադամ և փայտիւն եկեաց ։ Եւ զի ժողովուրդ էր նա անիծեալ , անիծեալ օձիւն փրկեաց զնոսա . և հեթանոսք կենդանարարաւն ամենայնի բժշկեցան ։ Բայց դարձեալ, զի 'ի ձեռն օձիցն խրատեաց զնոսա . փոխանակ զի ետ օձին հող կերակուր , և ոչ տրտնջեաց , առաքեաց զնա 'ի վերայ ժողովրդեանն՝ որ ուտէին զհացն հրեշտակաց և տրտնջէին ։ Կանգնեաց հաստատեաց կացոյց նոցա զօձն իբրև զնշան , զի յայտ արասցէ՝ թէ սպասումն յուսոյն նոցա անիծեալ է 'ի նկարել անդ զխորհուրդ խաչին, այն՝ որ առ զանէծսն յանձն իւր ։

Արդ խրատու օձին մեռան մարդիկ յանցանել զպատուիրանաւն . և տեսլեամբ օձին կեցին 'ի պահել զպատուիրանն ։ Եւ զի կարծեցին տուն Ադամայ՝ թէ օձն կարող եղև լինել հակառակորդ ա՟յ , արար ա՟ծ զօձն հակառակորդ անձին իւրոյ . զի եղիցի խափանել օձն պղնձի զթոյնս հարկանող օձին կենդանւոյ ։ Եւ զի եղև նա նշան կենդանութ՟ե մարդկան , վասն այսորիկ "Որպէս բարձրացոյց , ասէ , Մովսէս զօձն յանապատի անդ ,, . և զոր օրինակ մաքառեցան առաջինքն յայսմիկ՝ թէ զի՞րդ պահեսցուք մեք և հաւատասցուք յայն յանիծեալն և 'ի սպանօղն, այլ ընդ պատուիրանն հայէին և զբժշկութիւն հայեցեալ տեսանէին , սոյնպէս արժան է և վերջնոցս՝ զի մի գայթագղեսցեն խաչիւն, այլ ընդ զօրութիւն նորա նայեսցին և դարձցին ։

Փոխանակ այնր՝ զի ասէ "Անձինք մեր վշտացան նեղեցան սակաւ հացիւս ,, . հեբրայեցի, "Բալախ հացիւս ,, ասէ ։ Եւ փոխանակ այնր՝ զի ասէ "Արա դու քեզ օձ պղնձի , և դիր զնա 'ի նշան ,, . հեբրայեցի, "Ի տեղւոջ միում 'ի բարձու ,, ։ Եւ փոխանակ

այնր զի ասէ, եթէ “Բանակեցան յականս հեբրայեցւոց„․ այլ հեբրայեցի, “Ի ձոր մի ջուրց 'ի տեղւոջ ուր հուն է„ ասէ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Վասն այսորիկ ասացեալ է 'ի դպրութե մատենից պատերազմաց տեառն„․ հեբրայեցի, “Վասն այսորիկ ահա գրեալ է 'ի միտեանս պատերազմունք տեառն„։

ԳԼՈՒԽ Դ

ԱՌԱՔԵԱՑ Մովսէս հրեշտակ առ Սեհոն Թագաւոր ամուրհացւոց 'ի պատգամս խաղաղութեան և ասէ․ “Տուր մեզ տեղի անց Ճանապարհի ընդ երկիր քո„։ Եւ եթէ էր տուեալ նոցա տեղի անցանել, ոչ կոտորեալ լինէին նոքա 'ի նոցանէն․ այլ յառաջագոյն կանխեաց գիտաց նա՝ թէ ոչ տան տեղի, վասն այսորիկ խնդրեաց նա 'ի նմանէն կերպարանս, զի մի՛ երևեսցին թէ նոքա յառաջագոյն գրգռեցան 'ի մարտ պատերազմի։ Զի թէպէտ և վճիռ հրամանին և դատակնիքն եդեալ էին 'ի վերայ նոցա, սակայն քարոզըն ցոյց զողորմութին իւր․ զի և ոչ յայնցանէ, որ չէնն արժանի, արգելեալ լինի ողորմութիւն նորա։ Զի կանխեաց յառաջագոյն խօսեցաւ 'ի վերայ նոցա սուր, և քարոզեաց նոցա զխաղաղութիւն․ զի եթէ հաւանեսցին նոքա, ձեռն շինութեան տացէ նոցա, իբրև զայն զԵրիքով քաղաքին․ զի երկայնեաց նոցա զքարոզութի 'ի ձեռն շուրջն գալոյ, և արկ 'ի վերայ խստացեալ սրտից նոցա զխռովութի և զահ և զերկիւղ զձայն փողոյն․ զի եթէ կակղասցին և խոնարհեսցին, տացէ նոցա ձեռն 'ի շինութի, զի “Հուր, ասէ, ել յԵսեբոնայ, և եկեր զՄովաբ և զպաշտօնեայս մեհենին Առնոնայ„․ հեբրայեցի, “Զտեարս քաղաքացն Առնոնայ„ ասէ։ Եւ փոխանակ այնր՝ զի ասէ “Սատակեցար ժողովուրդ Քամոշայ„․ հեբրայեցի, “Սատակեցար կորեար ժողովուրդ՝ որ ծառայէք Քամոշայ„։ Եւ փոխանակ այնր՝ զի ասէ “Իշխանութիւն տէրութե Եսեբոնայ սատակեցաւ կորեաւ„․ հեբրայեցի, “Պաշտօն կռոցն Եսեբոնեայ սատակեցաւ կորեաւ„։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Բաղաամ որդի Բաւորայ

'ի Փիթովր քաղաքէ 'ի Միջագետաց „. Հեբրայեցի, “Բաղաամ որդի Բեովրայ հարցուկ 'ի Միջագետաց „, Եւ փոխանակ այնր՝ զի ասէ “Եւ դիւթութիք իւրեանց 'ի ձեռս իւրեանց „. Հեբրայեցի, “Հրովարտակք իւրեանց 'ի ձեռս իւրեանց „ ։

Եւ զի լուաւ Բաղակ զսքանչելիսն որ եղեն յերկրին եգիպտացւոց և յանապատի անդ, առաքեաց նա զկնի Բաղաամու, զի եկեսցէ նա յանիծանել 'ի նզովել զժողովուրդն իսրայելեան. որպէս զի անէծքն և նզովքն նորա արգելեալ կարձեսցեն 'ի նոցանէն զօրհնութիւն ա̃յ ։ Վասն այսորիկ և ա̃ծ 'ի ձեռն այնորիկ՝ յորմէ սիրեացն լսել 'ի նմանէն զճշմարտութիւն արքայն մովաբացւոց, 'ի ձեռն նորուն ծանոյց նմա ա̃ծ զճշմարտութիւն ։ Եւ զի թոյլ ետ ա̃ծ Բաղաամու, ոչ եթէ վասն ժողովրդեանն միայն, այլ զի և այլ հեթանոսք դարձցին 'ի գիտութի̃ նորա, որպէս և ինքն իսկ ասաց. “Ի քեզ, ասէ, ցուցից զզօրութի̃ իմ, և քարոզեսցի անուն իմ ընդ ամենայն երկիր „։ Այլ քարոզելն՝ որպէս զի հաւատարիմ լիցի տեսչութիւն ա̃յ, կարծիցի յամենայն ժամու ։ Զի իբրև զայն՝ թէ մի գործ ևեթ գտեալ իցէ 'ի նմա, և մի ինչ ևեթ խնդրէ հաստատել և ուղղել ։ Այլ բազում ևս յայսմիկ կատարէ, զի զԱբրահամ պատուէ, յայնմիկ՝ զի զաւետիսն նորա կատարէ. և Փարաւոնի դարձեալ հատուցանէ, և զհաւատոն ա̃յ հաստատեալ ստուգէ. և հեթանոսօքն՝ որ ընդ ամենայն երկիր, զգիտութի̃ նորա 'ի ձեռն համբաւուն զսքանչելեաց իւրոց սերմանէ. և այլ պատճառս՝ որ վասն նորա արար, զի մեք նոցա խելամուտ չեմք, զի և ինքն Բաղաամ դարձցի յապաշխարութի̃ ահիւ և երկեղիւ 'ի տեսանել իւրում թէ գոյ զօրութի̃ հարուստ և սաստիկ քան զնա, յայնմիկ՝ զի զկամսն իւր առնել ոչ ետ թոյլ նմա ։ Զի շատ ինչ իրք գործեալ լինին 'ի ձեռն մեղաւորաց վասն արժանաւոր պիտոյից, որպէս և յաւուրսն Աքայաբու. զի եղև այսն պեղծ յերեսաց տեառն, և ել մոլորեցուցանել զսուտ մարգարէսն. բայց Միքեա յայտնեաց. “Թէ ելանես դու, ասէ, մեռանիս „։ Փորձեաց զնա ա̃ծ մարգարէիւքն նորա ստութե̃ք, և խնայեաց 'ի վերայ նորա

'ի ձեռն Միքէի ողորմութե̃ք ։ Սոյնպէս և երազքն Փարաւոնի երևեցան վասն կերակրելոյն՝ որ հանդերձեալն էր, այլովք համդերձ ։

Որպէս և տայր խրատ երբեմն Աքիտոփէլ Դաւթայ և լինէր, սոյնպէս և Բաղաամ ։ "Իբրև ոք զի հարցանէ, ասէ, յա̃յ ,, ։ Այլ զի խաբեսցէ և մեծացուսցէ զգոհսն Բաղաամ, զանուն ա̃յ դնէր 'ի վերայ նոցա ։ Եւ այն՝ զի ասէ "Եթէ տացէ ինձ Բաղակ լի տամբն ոսկի կամ արծաթ ,, . որպէս զի վաճառեսցէ զերթալն իւր ծանր գնոց՝ խորամանկեցաւ ։ Նա և զի գիտասցես դու՝ եթէ նիւթ շահու օգտութիւն արկ նա իւր . ահա աւանիկ ասաց նմա Աստուած, բայց "Մի երթար ,, . և յաւել ևս դարձեալ հարցանել . և յերթալն իւրում դարձեալ ասէ . "Օրհնեա ,, . և նա ետ նմա խրատ անիծից ։ Եւ եթէ ասացեալ էր՝ թէ երթ, զնոյն իսկ զոր խրատ ետ՝ տայր նմա, և նովաւ և ընդ նմա և անիծանէր ևս, և զերկոսին ընդ միմեանս յեռայր նա, որպէս և սովոր իսկ էր նա . զի յանիծանել անդ իւրում եհան նա զդստերսն մադիանացւոց 'ի պոռնկութի̃ ։

Եւ իբրև այս խորամանկութի̃ նորա սպանանէր զժողովուրդն, սակայն անմեղաց մոլորութի̃ էր այս յոյժ . ասէին՝ թէ անէծքն Բաղաամու սատակեցին զնոսա ։ Բայց իբրև արգելաւ նա՝ զի մի անիծանիցէ, գիտաց նա՝ թէ նոյնժամայն վնասեցաւ . զի ոչ ասեն մովաբացիքն՝ թէ անիծանելով անէծ . բայց սակայն նոյն իսկ նենգութի̃ խրատուն նորա կայր ։ Զի եթէ գիտէր Բաղաամ՝ եթէ ոչ է զօրութիւն 'ի խրատու անդ նորա, այլ յանէծս և յօրհնութի̃ս նորա, ոչ տայր նա խրատ չարի, զի չգոյր 'ի նմա զօրութի̃ վասն ժողովրդեանն՝ որ օրհնեցաւ 'ի նմանէ ։ Եւ զի զկնի օրհնութե̃ն ետ նմա խրատ չարի, յայտ արար եթէ խոտան և անարգ են անէծք և օրհնութիւնք նորա, զի կերպարանօք ունէր նա զնոսա . զի տացէ կարծիս մարդկան՝ թէ ա̃ծ գոյ ընդ նմա, զի մի ոք մեղիցէ նմա . և զի մեծասցի քան զիմաստունս և զխորհրդականս ։ Զի փոյթ ամենայն Բաղաամու այս էր, զի ուսցի թէ զինչ իցեն ամենայն օրէնքն՝ զոր ետ ա̃ծ ժողովրդեանն ։ Ետես նա՝ թէ այս երկու են՝ որ սա-

տակեն զժողովուրդն՛, կռապաշտութիւն՝ իբրև զորթն զի լուաւ թէ արարին և սատակեցան. և պոռնկութի՟ զի գիտաց նա՝ թէ գեղ կանանց ածցէ զնոսա 'ի բեղբեգովր: “Մի, ասէ, փեսայեսջիք դուք ընդ դըստերս նոցա, զի մի խոտորեցուսցեն նոքա զսիրտ ձեր զհետ դից իւրեանց ,,:

Որդ զի մի ասասցեն, զի եթէ էր ելեալ Բաղաամու, անիծանէր զնոսա՝ և սատակէին, ոչ արգել զնա ա՟ծ երթալ. և ոչ հրեշտակն դարձոյց զնա 'ի Ճանապարհէ անտի, իբրև զի ցուցցէ թէ 'ի ներքոյ իշխանութե՟ նորա է: “Թերևս, ասէ, հաճոյ եղիցի տեառն ,,. ապա այսուհետև տէր է՝ որ անիծանէ: “Եւ եթէ էր, ասէ, սուր 'ի ձեռս իմում, աստէն սպանանէի զքեզ,,: Ասէ ցնա էշն. վեց հարիւր հազար քանիւ եղանես դու անիծանել սատակել 'ի հեռաստանէ, ես զի անցեալ նստիմ 'ի ներքոյ քո, առանց սրոյ ո՞չ կարես դու յաղթել զօրութե՟ իմոյ: Փոխանակ այնր՝ զի ասէ “Ասաց Բաղաամ ցէշն իւր. փոխանակ զի այսպէս կատականաց արարեր դու զիս ,,, հեբրայեցի ասէ. “Փոխանակ զի չարչարեցեր Ճմլեցեր դու զիս ընդորմն ,,: Եւ փոխանակ այնր՝ զի ասէ “Տարաւ զնա 'ի քաղաքն Եծրովթայ ,,. հեբրայեցի, “Ի քաղաքս Բակաց ,, ասէ. զի Եծրովթ՝ բակք են: Փոխանակ այնր՝ զի ասէ “Հան զնա 'ի բեմովթ Բահաղու ,,. հեբրայեցի, “Ի բարձաւանդակ Բահաղու ,, ասէ:

“Շինեա դու, ասէ, ինձ աստ եւթն սեղան, և պատրաստեա դու ինձ եւթն զուարակ և եւթն խոյ ,,: Արդ զոհիւք և սեղանովք կամէր Բաղաամ խաղել զա՟ծ, որպէս ինքն խաղեցաւ պատուովքն և պատարագօք: Բայց յայտ արար նմա Աստուած 'ի վերայ զոհից իւրոց, և յամօթ արար զնա 'ի վերայ սեղանոց իւրոց, յայնմիկ՝ զի փութացոյց զնա, և եդ բանս 'ի բերան նորա, զի օրհնեսցէ: Բայց կորոյս նա զպատիւ մարգարէութեանն ագահութե՟ իւրով. զի քաղցրացան նմա իրքն մամոնայի առաւել քան զմարգարէութիւն Հոգւոյ: Բայց հաւանեցուսցէ զքեզ այս. զի զոր օրինակ իբրև ստեաց յառաջին նուագի անդ, զի ասաց նմա ա՟ծ՝ թէ “Մի երթար ,,. և նա յաւել ևս հարցանել: Եւ իբր եցոյց նմա դարձեալ հրեշ-

տակն՝ թէ մահու արժանի էր, յայնմիկ՝ զի դարձան միտք նորա 'ի ճանապարհի անդ, և խորհեցաւ նա անիծանել զնոսա. ասէ ցնա հրեշտակն. “Ելի ես լինել քեզ սատանայ, փոխանակ զի կամակորեալ են ճանապարհք քո առաջի իմ„. որպէս և գրեալ է 'ի հեբրայեցի:

Եւ իբրև դարձեալ փորձեաց զոհիւքն միանգամ և երկիցս, և գիտաց 'ի ձեռն այսոցիկ՝ թէ կամք ա̄յ այս են, զի ժողովուրդն օրհնեսցի, յերկրորդել և յերրորդել սեղանոցն իւրոց՝ զկամսն ա̄յ հնարս խնդրէր փոփոխել շրջել, զոր ինչ մարգարէքն ճշմարիտք այսպէս ոչ գործէին: Արդ զոր օրինակ զկնի այսր ամենայնի յաւել և խօսեցաւ ընդ նմա ա̄ծ ոչ վասն արդարութե̄ նորա, այլ քանզի պատշաճ իսկ էր, կապեցան 'ի նմին 'ի Բաղաամու իրքն այն, և նովին իսկ մարգարէութե̄ իւրով մարթ էր լուծանել, սոյնպէս վասն սորին իսկ այսր կամեցաւ խօսել ընդ նմա ա̄ծ 'ի սկզբանն. իբր ոչ էր սովորութիւն Հոգւոյն սրբոյ՝ եթէ պղծոյն զխորհուրդս իւր սուրբս յայտնեսցէ: Զի եթէ ոչ էր յայտնեալ նմա ա̄յ, և արգելեալ էր զնա 'ի ներքոյ ահի երկեղի իւրոյ, 'ի տեսանելն Բաղաամու՝ զի ոչ ետ նմա ա̄ծ պատասխանի, գտանէր իւր պատճառս, և երթայր անիծանէր զնոսա. և լինէր այնուհետև գրգռութի̄ 'ի մարտ պատերազմի 'ի մէջ եղբարցն: Զի եթէ իբրև ա̄ծ յայտնեցաւ և հրեշտակ երևեցաւ և էշն խօսեցաւ, նա զթոյնս իւր դառնութե̄ իւրով չար խորհրդովք իւրովք որպէս և չար խայթոցիւք արկանէր, և քսան և չորս հազարս 'ի նոցանէն սատակէր, ո՞րչափ ևս առաւել արկանէր նա զթոյնս իւր՝ եթէ ոչ էր տեսեալ նորա զայս ամենայն. այլ եկն նա հարցանել, իբրու այն թէ զա̄ծ պատուիցէ:

Յայտնեցաւ նմա ա̄ծ, և արգել և փակեաց զնա 'ի ներքոյ պահի և երկիւղի. իբրու էր անդ բեւր խորամանկութի̄ 'ի միջի: Զի եթէ արգելեալ էր զնա ա̄յ, բռնութե̄ թագաւորեալ լինէր մոլորութիւնն յարգելով անդ նորա. և լինէին նոքա ասել. վասն զի զօրութի̄ գոյր յանէծս նորա, արգել զնա ա̄ծ, զի մի՛ երթիցէ նա: Եւ եթէ կամեցեալ էր հրեշտա-

կացն ասել վասն նորա մինչ դեռ հեռի էր՝ թէ անէծ նա զժողովուրդն, նա և այսպէս խռովեալ լինէր Իսրայէլ. և լինէին այնուհետև ճշմարիտ անէծք նորա 'ի վերայ նոցա 'ի պարտաւորութ՟ի ։ Վասն այսորիկ հնարեաց իմաստութ՟ին բարձանց, լոյծ իմաստութ՟բ զամենայն կամակորութ՟իս՝ որ մի ըստ միոջէ, զԲաղաամու, զԲաղակայ և զԻսրայէլի ։ Բայց եկն Բաղաամ պահանջել զվարձս իւր, և սպանին զնա 'ի Մադիամ, զի առաւել ևս լուծցի մոլորութ՟ի օգնականին Բաղակայ. զի անձին իւրում նա ոչ կարէր օգնական լինել ։ Եւ յայնմ ժամու իբրև եկն եհաս Իսրայէլ 'ի վերայ մադիանացւոցն մարտիւ պատերազմաւ, ո՞չ արդեւք անիծէր և պարտաւորէր նա զԻսրայէլ, և օրհնէր և տայր յաղթութիւն մադիանացւոցն, գոնեայ վասն անձին իւրոյ՝ զի մի՛ մեռցի ։

Փոխանակ այնր՝ զի ասէ “Եւ գնաց նա ուղղորդ ընդդէմ„. հեբրայեցի, “Եւ գնաց նա միայն առանձինն„ ասէ ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Ի հեթանոսս մի՛ համարիցի„. հեբրայեցի, “Եւ ընդ հեթանոսս մի՛ խառնեսցի, ասէ, որպէս զի եղիջիք դուք ինձ սիրելիք քան զամենայն հեթանոսս„ ։ Եւ փոխանակ այնր՝ զի ասէ “Ո՞ համարեսցի զհամարս յակովբեան զաւակին„. հեբրայեցի, “Զհող նորա, ասէ. կամ ո՞ կարասցէ զթիւ ունել զչորրորդ մասին զիսրայէլեան գնդին„. այն իսկ է՝ զի ասէ. “Իբրև զհող բազում եղիցի զաւակ քո„ ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Ըստ ժամանակի ժամանակի խօսեսցի և այլ ևս„. հեբրայեցի, “Ոչ գոն հմայք 'ի տան Յակովբու, և ոչ դիւթութ՟իք 'ի մէջ Իսրայէլի. այլ ըստ ժամանակի ժամանակի խօսեսցի ընդ Յակովբու և ընդ Իսրայէլի զինչ գործելոց էր ընդ նոսա ա՟ծ„. այն իսկ է զի ասէ. “Ոչ ինչ առնէ տէր տէրանց, թէ ոչ յայտնէ նախ զխորհուրդս իւր մարգարէից„ ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Այնր՝ որոյ յայտնի է ակն իւր„. հեբրայեցի, “Այն՝ որում ծածկեալքն յայտնի էին նմա„ ։ Եւ փոխանակ այնր՝ զի ասէ “Այր որ տեսանէր զտեսիլն ա՟յ աչօք բացօք„. հեբրայեցի, “Այրն որ պագանէր երկիր 'ի վերայ երեսաց իւրոց, և երեւէր նմա„ ։

“Իբրև ետես նա, ասէ, զբանակսն Իսրայէլացւոց, զի գունդագունդ բանակեալ էին ՚ի դաշտի անդ, ասէ. Իբրև զի գեղեցիկ են բանակք քո, Յակովբ, և պարկեշտ են խորանք քո, Իսրայէլ„։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Իբրև ուղխք զի գնան, և իբրև զբուրաստան առ ափն գետոյ„. Հեբրայեցի, “Իբրև զբուրաստան լի ծաղկաւ վտակալից առ ափն գետոյ„։ Եւ փոխանակ այնր՝ զի ասէ “Իբրև զխորան՝ զոր ձեռին տեառն կանգնեալ„. Հեբրայեցի, “Իբրև զդարաստան տօսախոյ յանցս վտակաց՝ զոր տնկեաց տէր„։ “Յարիցէ այր յորդւոց նորա„, Շաւուղ։ “Եւ զաւակ նորա ՚ի ջուրս բազումս„. զի զօրացաւ և մեծացաւ նա ՚ի վերայ մարդկայնոցն։ “Եւ բարձրասցի առաւել քան զԱգագ թագաւոր, և բարձցի թագաւորութիւն նորա„. այս ինքն սպառեսցի։ Ընդէ՞ր. փոխանակ զի կոտորեաց սատակեաց նա զգաբաւոնացիսն ՚ի ժամանակի իբրև կոտորեաց նա զԱբիմելէք և զտուն հօր նորա։ Եւ գաբաւոնացիքն որ հաղորդք էին սեղանոյն, զի փայտաքաղք էին նոքա և ջրբերք։ Բայց Հեբրայեցի, “Բարձրասցի առաւել քան զԱգագ թագաւոր նորա, և մեծասցի թագաւորութիւն նորա„։

“Բայց եկ յայտնեմ քեզ զինչ գործ գործեսցեն զօրքս այս ընդ զօրս քո յետին աւուրց ժամանակի„. այն իսկ է՝ զի ասէ. “Հարցէ սատակեսցէ զիշխանսն Մովաբու„։ Եւ իբրև զայս լուաւ Բաղակ, նմա այսպէս թուեցաւ՝ թէ հասեալ է սատակումն նորա ՚ի կարծել իւրում դարձեալ՝ թէ Բաղաամու է այս և ոչ Աստուծոյ. ասէ ցնա Բաղակ. “Ես ասացի՝ բամ մեծարելով մեծարեցի զքեզ, արդ կորոյս ՚ի քէն տէր զփառս քո„։ Ասէ ցնա Բաղաամ. մի՛ այդպէս փութացեալ տագնապիր դու. ոչ եթէ սատակումն քո է. թէպէտ և խրատիս դու սակաւիկ մի, սակայն ոչ եթէ բարձեալ լինի թագաւորութիւն քո. զի հայեցայ ես յայնմիկ՝ որ առնեն քեզ սատակումն. և ոչ է մերձ, այլ յետ բազում դարուց։

“Ծագեսցէ աստղ Յակովբայ, և հարցէ սատակեսցէ զիշխանսն Մովաբու„, այլովք հանդերձ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Յարիցէ այր յորդւոց նորա, և զաւակ նորա ՚ի ջուրս բազումս„. Հեբրայեցի,

"Ելցեն ջուրք 'ի բաշխաց նորա, և զաւակ նորա իբրև ջուրս բազումս"։ Եւ փոխանակ այնր՝ զի ասէ "Եղիցի 'ի Սէիր ժառանգութիւն թշնամեաց իւրոց". հեբրայեցի, "Եղիցի Սէիր ժառանգութի թշնամեաց իւրոյ"։ Փոխանակ այնր՝ զի ասէ "Զօրասցի և զարթիցէ 'ի Յակովբայ, և սատակեսցէ զմնացորդս քաղաքի". հեբրայեցի, "Եւ իջցէ տկարութիւնն տանն Յակովբայ, և սատակեսցէ զքաղաքն, և մի ոք մնասցէ 'ի նմանէ մնացորդ". իբրև զայն՝ զի ասէ "Սակաւաւորն հազարաւոր եղիցի". իբրև զայն՝ զի ասէ "Մինն հալածէր զհազարս, և երկու զբեւրս"։

Արդ իբր ոչ կարաց Բաղաամ ապուել գերփել 'ի ձեռն աղտեղի արուեստագիտութե̃ իւրոյ զշահ և զօգուտ անօրէնութե̃ ըստ սովորութե̃ իւրոյ, յայնմիկ՝ զի ոչ ետ նմա ըստ կամաց նորա օրհնել, խորհուրդ խորհեցաւ նա ընդ Բաղակայ և ասէ. Որչափ, ասէ, զա̃ծն իւրեանց յոյս և ապաւէն արարեալ է նոցա, ոչ կարէք դուք յաղթել զօրութե̃ նոցա. այլ առէք զարդարեցէք դուք զդստերս ձեր. և ահա այնուհետև կապին նոքա յերկրպագութի̃ կռոց դստերացն ձերոց, և հարկանէք կոտորէք դուք զնոսա 'ի վերայ դստերացն Մադիամու։ Բայց զնոյն զմադիանացիսն կոտորեցին, և ոչ զմովաբացիսն. այլ ա̃ծ ոչ զԻսրայէլ եթող առանց վրիժուց խնդրելոյ. և ոչ զԲաղաամ եթող առանց պատժոց պատուհասից։ Բայց զժողովուրդն իւր ինքն խրատեաց, և զմադիանացիսն 'ի ձեռն ժողովրդեան իւրոյ կոտորեաց սատակեաց։

Եւ զի ոչ եղև ա̃ծ երկայնամիտ առ Իսրայէլի 'ի ժամանակի իբրև պոռնկեցան նոքա ընդ դստերսն մադիանացւոց. զի կատարեսցէ երկուս, մի՝ զի յանդիմանեալ կշտամբեսցին օրհնութի̃ւքն Բաղաամու, և միւս ևս՝ զի պատիժքն պատուհասից փութացեալ կարճեսցէ զնոսա 'ի պոռնկութե̃ անտի։ Բայց ուսան անդ զճշմարտութիւն սիրելիք ճշմարտութե̃. զի ոչ յօրհնութի̃ւն նորա պէտք ինչ էին, և ոչ յանէծս նորա, այլ ստուգութե̃ տեառն հատուցմանց. ուսան՝ թէ որչափ իշխանութի̃ ունին աղօթք քան զմոլորութի̃, այս ինքն նախանձայոյզ Փենեհեսայ քան

զԲաղաամու գիւթի։ Նա և ժողովուրդն կոյր իբրև լուան զի ասաց նմա Աստուած, բայ "Օրհնեալ է ժողովուրդն, մի՛ անիծաներ դու զնա", նոքա այսպէս կարծեցին 'ի միտս իւրեանց. ասեն. Թէպէտ և պոռնկիցիմք, սակայն օրհնեալ եմք, ոչ ինչ պատուհասիմք։

Բայց ա՟ծ ուսոյց մովաբացւոցն և ամենայն հեթանոսացն՝ թէ ամենայն հեթանոսք զի անիծեալ են վասն գործոց իւրեանց. ահաւանիկ տեսէք զինչ անցս անցոյց ընդ օրհնեալսն՝ որ պոռնկեցան։ Եւ զի յայտ արասցէ ժողովրդեան իւրում, զի եթէ մեղք իւրեանց ոչ պարտաւորեն զնոսա՝ չիք այն ձեռն՝ որ կարէ տիրել 'ի վերայ նոցա։ Եւ եթէ ոչ կուրացեալ էին մովաբացիքն, դիւրին էր նոցա դառնալ ընդդէմ Բաղաամու և ասել, թէ զիա՞րդ հարկանիս նոքա պոռնկութե՟, ազգ մի՝ զոր դու ինքնին օրհնեցեր զնոսա։ Եւ այս վկայ իսկ էր, զի գիտակ և խելամուտ իսկ էր Բաղաամ՝ թէ չիք զօրութի՟ յօրհնութի՟ և յանէծս նորա։ Եւ զի յայտ արասցէ՝ թէ ստուգութե՟ ասաց Բաղաամ, այն զի ասէ. "Զոր ինչ ասէ ինձ տէր, զայն գործեմ"։ Ասէ. "Մի՛ մըտցէ ամոնացի և մովաբացի 'ի ժողովուրդ տեառն, փոխանակ զի ոչ հանին ընդ առաջ ձեր հաց և ջուր, և փոխանակ զի 'ի վարձու կալան վասն քո զԲաղաամ յանիծանել 'ի նզովել զքեզ, և ոչ կամեցաւ տէր լսել նմա. և դարձոյց զանէծսն նորա յօրհնութիւնս"։

Արդ իբրև հպարտացեալ մեծացաւ Բաղաամ, եցոյց ա՟ծ եթէ ելեալ էր հրաման վասն նոցա, ասել զկնի նորա դարձեալ. "Հանդէս արա, համար կալ զօրաց ժողովրդեանդ այդորիկ 'ի քսանամենից և 'ի վեր". յետ սատակմանն նոցա։ Զի վասն այսորիկ ոչ ետ նմա թոյլ անիծանել զնոսա, զի մի՛ ասիցեն՝ թէ յանէծսն Բաղաամու սատակեցան, և ոչ 'ի մեղս իւրեանց մեռան։ Արդ նախատէ բանն. զմեռեալսն, ասէ, սպանանես դու, ո՛վ Բաղաամ, և ոչ զկենդանիս։

Երկայնագոյն է մարգարէութի՟ Բաղաամու քան զՄովսիսի. զի Մովսէս զպատմութի՟ն դառնացչութե՟

նոցա ցուցանէ՝ զանցելոյն զմերձաւորացն. զի յօրհնութե̃ իւրում այսպէս ասէ. «Մեղան՝ այլ ոչ եթէ նմա». զի զինքեանս ապականեցին. բայց ազգ թեւր եւ կամակոր վասն հանդերձելոցն։ Զի ահա աւանիկ յանդիմանէ զնոսա եւ ասէ. «Ո՞չ սա ինքն է հայր քո՝ որ ստացաւ զքեզ եւ հաստատեաց զքեզ»։ Յիշեաց զօրէնսն որ յաւիտենից։ Իբրու յայտ առնէ թէ վասն որոյ ժամանակի ասաց. ասէ «Բնակեցոյց զնա 'ի վերայ զօրութե̃ երկրի, եւ ջամբեաց նմա կերակուր 'ի վայրէ»։ Զի մինչ դեռ յանապատի անդ էր, մեղր 'ի վիմէ ցոյց նմա՝ յասել իւրում զայս ցուցանէր. «Գիրացաւ, ասէ, Իսրայէլ եւ կիցս ընկեց. գիրացաւ յօրացաւ եւ մոռացաւ զարարիչ իւր, եւ անարգեաց զա̃ծ որ ստացաւն զնա, եւ հայհոյեաց զԱստուած փրկիչ իւր»։ Իբրու յայտ առնէ դարձեալ, եթէ հանդերձեալ ծառայել կռոցն օտարոտեաց. ասէ «Գրգռեցին զնա օտարոտեօք իւրեանց, եւ կռովք իւրեանց բարկացուցին զնա»։

Արդ գտանի մարգարէութի̃ն Բաղաամու երկայնագոյն քան զՄովսիսի. ասէ «Տեսի զնա, եւ ոչ առ արդ. եւ հայեցայ 'ի նա, եւ ոչ էր մօտ». Հեռի է ասէ. զի քաջալերեսցէ զայն՝ որ ածն զնա 'ի յայտնել իւրում նմա։ Ասէ ոչ եթէ արդէն լինիցի սատակումն քո. զի հայեցայ ես այնմիկ՝ որ առնելոց է քեզ սատակումն, եւ ոչ է մօտ։ «Ծագեսցէ, ասէ, աստղ 'ի Յակովբայ, եւ յարիցէ իշխան 'ի յԻսրայէլէ, եւ հարցէ սատակեսցէ զիշխանս Մովաբու»։ Եւ զի յայտ արասցէ նմա՝ եւ զի ոչ եթէ նմա միայն ասաց, այլ եւ ամենայն որդւոցն Շէթայ. այս ինքն որդւոցն Ադամայ։ Քանզի Ադամ անիծաւ եւ Կայէն երեր եւ տատան եղեւ, եւ Հաբէլ մեռաւ անորդի, կոչեցաւ Շէթ՝ Ադամ։

Արդ ծագեսցէ 'ի վերայ Զօրաբաբէլի. զի Երեմիայ այսպէս ասէ. «Ծագեցից Դաւթի ծագումն, եւ կոչեսցեն զնա Տէր բաժին մեր». այս ինքն մասն մեր։ «Եւ ահա այր, եւ անուն նորա ծագումն»։ Եւ այս ամենայն 'ի վերայ նորա կատարի. զի յերկրորդում ձեռինն, այս ինքն՝ զի նա կաց 'ի տեղի Յեշովայ որդւոյ Նաւեայ, եւ նա ժառանգեցոյց զնոսա յերկրո-

դում նուագի անդ զերկիրն պարգեւաց. և նա դարձեալ նորոգեաց զտաճարն երկրորդում. և 'ի ձեռն նորա էին սատակելոց հեթանոսքն այնոքիկ, ամովնացիքն և մովաբացիքն և այլք. «Եւ սատակեսցէ զքաջքն», զի նա ինքն է Եսաւայ. զի վասն սորին իսկ այսպ ասաց Դանիէլ. ասէ. «Տեսանէի ես զգազանն զի սատակեցաւ և կորեաւ մարմին նորա». այս ինքն չիք ուրեք։

Արդ Մովսէս զսատակումն Իսրայէլի յայտ արար. «Օրհնեցէք, ասէ, ազինք ժողովրդովք նորա, և դարձուցանէ զվրէժ հատուցման 'ի վերայ ատելեաց իւրոց»։ Բայց Բաղաամ, «Ծագեսցէ աստղ և սատակեսցէ զորդիսն Եսաւայ»։ Եւ այն՝ զի ասէ. «Եթէ եղիցի Հռաքաղեալ կինացին, մինչև յասորեստան վառեսցի»։ Եւ փոխանակ այնր՝ զի ասէ «Լեգէոնք ելանել». հեբրայեցի, «Ելցեն գեզրացիք 'ի կիտացւոց». այս ինքն է Յոյնք։ «Եւ հարցեն և չարչարեսցեն զասորեստան և զՄիջագետս»։ Եւ զի ասէ «Ինքեանք անդէն միանգամայն առ հասարակ սատակեսցին». զի ոչ հաստատեցաւ թագաւորութիւն արքայութեան նոցա. կամ 'ի վերայ տանն Անտիոքայ, զի հարին կոտորեցին սատակեցին զհեբրայեցւոյն յաւուրս մակաբայեցւոցն։

Արդ գտանի զի յառաջագոյն է քան զԲաղաամ Մովսէս յասել իւրում զկատարած սատակման Իսրայէլի. զի իբրև ետես զնոսա խաղող լեղի և ողկոյզ դառնութեան, և լցան նոքա սրտմտութեամբ վիշապաց. «Սրտմտութիւն, ասէ, վիշապաց սրտմտութիւն նոցա»։ Եւ զի յայտ արասցէ՝ թէ հատուցանէ նոցա, յասել իւրում. «Իմ է հատուցումն զոր հատուցանեմ ես նոցա»։ Ե՞րբ. 'ի ժամանակի իբրև սխալեսցին նոցա։ Ոչ, ասէ, հեռի է, այլ մերձ է ժամանակ կորստեան նոցա. և փութացուցանէ որ ինչ պատրաստեալ է նոցա։ Այլ իբրև մերձեցաւ ժամանակն, ասէ վասն նոցա. «Համբարձի յերկինս զձեռն իմ և երդուայ յաջ իմ և ասացի. կենդանի եմ ես յաւիտեան»։ Եւ զի յայտ արասցէ՝ թէ սրով բարկութեամբ սատակէ զնոսա, փոխանակ զի պաշտեցին նոքա զկուռս, ասէ. «Սրեցից իբրև զփայլակն զսուր

սուսերի իմոյ, և բուռն հարեալ կալցի 'ի դատաստանի ձեռն իմ„. այս ինքն ստուգութեան ձեռն իմ։ “Եւ արբեցուցից զնետս իմ յարենէ, և սուր իմ կերիցէ զմարմինս յարենէ վիրաւորաց և գերեաց, և 'ի գլխոց թագի թշնամեաց„։ Այլ այս 'ի Յեշովայ մինչև 'ի Նաթանայէլ որդի Մակաբէի գործեալ լինէին նոցա յորժամ յանցանէին. այս ինքն յիշխանաց իւրեանց։

Եւ երբև խրատեաց զնոսա սրով իւրով, բարկացաւ 'ի վերայ նոցա յաւիտեանս ժամանակաց։ Ասէ 'ի թողուլն զնոսա, և յերթալն իւրում 'ի մէջ հեթանոսաց, “Օրհնեցէք ազինք ժողովուրդք նորա, զի խնդրէ զվրէժ արեան ծառայից իւրոց, զմարգարէիցն, զքահանայիցն և զարդարոցն՝ որ հեղաւ 'ի մէջ ազգաց նոցա„. այն զոր երկրորդեաց փրկիչն մեր յասել իւրում. “Զի եկեսցէ 'ի վերայ նոցա արիւնն ամենայն արդարոց„։ Եւ դարձուցանէ, ասէ, զվրէժ հատուցման 'ի վերայ ատելեաց իւրոց, և վրէժ հատուցման ամենեցուն. որոց բանքն իւրեանց հասանեն, ասէ. թէպէտ և ողորմէր 'ի հրամանն անարգութեան, սակայն ետ նոցա զանարգն և զխոնարհըն՝ որ մեռանէր և արդարացուցանէր զարդարս։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Առակելով առակեսջիր զնոսա առաջի տեառն յանդիման արևու„. “Կանգնեա զնոսա յանդիման արևու„։

ԳԼՈՒԽ Ե

ԲԱՅՑ Քասբի դուստր էր թագաւորի. և ուր խորանն հարեալ էր նորա, ներքինիք շուրջ կային ըզնովաւ։ Եւ տես զնա Զամբրի, և մուտ առ նա։ Եւ ասէ ցնա կինն. ես Մովսիսի կամ միոյ ումեք 'ի գլխաւորաց անտի հրաման ունիմ տալ զանձն իմ։ Ասէ ցնա Զամբրի. ես լաւ ևս եմ քան զնոսա։ Ասէ ցնա կինն. Եւ գիտացից։ Ասէ ցնա. ահաւասիկ առաջի նոցա ցուցանեմ ես զի մտանեմ, զոր ինչ այլք 'ի ծածուկ գործեն։ Եւ “Զոգաւ մուտ, ասէ, յանդիման Մովսիսի և յանդիման ծերակոյտ ժողովրդեանն„։ Եւ

ետես Փենեհեզ և խրոխտացաւ 'ի վերայ նորա ։ Ներքինիքն այսպէս կարծէին՝ թէ 'ի պոռնկել մտանէ, և ոչ ետուն նմա թոյլ ։ Ասէ ցնոսա. մտէք ասացէք նմա, թէ Փենեհեզ կամի մտանել այդր ։ Նա իբրև լուաւ, ուրախ եղև. նա այսպէս կարծեաց 'ի միտս իւր, թէ ամենայն ժողովուրդն 'ի պոռնկութի̄ դարձաւ. և մուտ խոցեաց զնոսա զերկոսին, և բարձ եդ զնոսա 'ի վերայ ուսոյ իւրոյ ։ Վասն այսորիկ առնու քահանայ զթեկնն և զծնօտն ։

Փենեհեզ խոցեաց զնոսա, և հին համար թուոյն սատակեցաւ սպառեցաւ. վասն այսորիկ մեծացաւ Փենեհեզ, զի կաց նա 'ի մէջ նորոցն՝ որ ժառանգելոցն են, և 'ի մէջ հնոցն՝ որ ոչն ժառանգեցին ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Եղեն որ մեռան յանկարծակի 'ի մահուանէ անտի„. “Որ մեռան բարկուք„ ասէ ։ “Փենեհեզ, ասէ, նախանձեցաւ զնախանձ 'ի միջի ձերում„. ասէ ցնա Մովսէս ։ Եւ յայնմիկ և զՄովսէս ես 'ի ներքս արկ. ասէ “Յանդիման Մովսիսի և յանդիման ծերակոյտ ժողովրդեանն„. զի ոչ եթէ վասն չար խօսելոյ զնմանէ ասեմք մեք զայս, այլ զգրեալն երկրորդեմք մեք ։

Արդ Մովսէս, այն որ լինել էր առաջնորդութիւն նորա ժողովրդեանն՝ որպէս և ոգիք զի բարձեալ ունիցին զմարմինն, զիա՞րդ տկարացաւ նա քան զնախանձն Փենեհեզայ 'ի ժամու անդ ցորժամ պոռնկեցաւ ժողովուրդն ընդ դստերսն Մադիամու, որպէս 'ի յընթերցուածոյ աստի ։ Մովսէս կամ վայրապար կայր, կամ խղճիւ և հեռիւ էր վասն գործոյն Փենեհեզայ ։ Արդ զիա՞րդ դադարէր նա, և վասն էր եթէ էր նա 'ի ժամու՝ յորում արհամարհեալ լինէին օրէնքն, զոր եդ նա ։ Զի առաջի ամենեցուն եդ նա զպատուէրն յասել իւրում. “Մի՛ եղիցի պոռնիկ 'ի դստերացդ Իսրայէլի„. և զկնի բանին ժողովուրդն իւր յոչ ժողովուրդ զգործ պոռնկութեան գործէր ։ Այլ զայն ասասցուք. զի Փենեհեզ, այն որ այսու միով գործովս իւրով առաքինացաւ, մի 'ի գործոց իւրոց ուրեք ոչ առնէ յայտ՝ եթէ պսակեցաւ նա ։ Բայց Մովսէս յամենայն գնացս իւր առ խնդրուածըս մերձենալ ունէր զանձն իւր, և գործ մատակա-

բարութե՛ նորա 'ի կատարածի իւրեանց զկնիք աղօթից նորա առնուն . Թէպէտ և մինն գործ ցասման իւրոյ կարաց կողոպտել յափշտակել զնա ։

Արդ այն՝ որ յամենայն տեղիս աղօթիւք նորա առաքինացան, և ուրեք 'ի նախանձու իւրմէ յետս նա ոչ եկաց, զիա՞րդ 'ի ժամու անդ՝ յորում լուծեալ լինէր բանն նորա, և անարգեալ անգոսնեալ լինէր պատուէր հրամանի նորա, և հայհոյեալ բամբասեալ լինէր ա͞ծն նորա, դադարէր նա 'ի գործոյ անտի՝ որ պարտուպատշաճ էր նախանձու նորա ։ Բայց սակայն քանզի գործով իւրով ոչ էր տկար, և այն որպէս այր մի՝ զի չիք նորա ընկեր, ընտրեալ էր նա յայնմիկ՝ զի իբրև զնա խոնարհ 'ի ժողովրդեան նորա ոչ գտաւ 'ի ժամու անդ՝ յորժամ ժողովուրդն նորա 'ի համարձակութե՛ պոռնկութե՛ գայթագղեցաւ . զի ժողովուրդն որ ոչ անսայր բանից, 'ի տիղմ պղծութեան իւրոյ եթող, և առ տէր իւր աղօթս և խնդրուածս մատուցանէր, և իբրև դաստիարակ իմաստուն զաղօթս իւր առաջի տեառն իւրոյ սփռէր ։

Արդ տես դու զցաւն խրատ՝ որ տարածեցաւ 'ի ժողովուրդն նորա . և հարուածքն խստութե՛՝ որ տիրեցին 'ի վերայ նոցա, ուղղեաց զանձն իւր և դիմեաց հոգաւ առ բժիշկն, զի փութացեալ ընթասցի եկեսցէ սուր բժշկութիւն 'ի վերայ անդամոց ։ Արդ ժողովուրդն պոռնկէր, և Մովսէս աղօթս մատուցանէր, և Փենեհէզ ընկեր լինէր ա͞յ նախանձու իւրոյ ։ Զի ետես նա՝ թէ մահ տիրեաց, և Մովսիսի չև էր յաղօթիցն յարուցեալ . զի կամեցաւ նա՝ թէ զօրացեալ սաստկասցի խրատն ժողովրդեանն, որ դառնացոյց զա͞ծն իւր պոռնկութե՛ իւրով . և խորհեցաւ Փենեհէզ զի ընկեր եղիցի Մովսիսի, և հաղորդ գտցի ա͞յ, սպան ընդ ա͞յ, և կաց յաղօթս ընդ Մովսիսի ։

“Յարեաւ, ասէ, Փենեհէս կաց յաղօթս, և արգելաւ մահ„ . զի ոչ եթէ հակառակորդ ինչ եղև Փենեհէս Մովսիսի գործովն իւրով՝ թէ Մովսէս յաղօթս կայր վասն սատակման ժողովրդեանն, և Փենեհէս խնդրուածս խնդրէր վասն փրկութեան ժողովրդեանն . այլ Մովսէս իբրև արբեալ մի 'ի գործ իւր հանապազորդ զբաղեալ էր . և Փենեհէս 'ի տեսիլն

չարութե՟՝ նախանձուն իւրով իբրև հրով վառեալ բորբոքեալ էր. և դիւակունք յամենայն կողմանց անկեալ դնէին: Բայց տեղն որ հարեալ կարեցաւ ընդ լանջս այնոցիկ, եղև իբրև սահման անչափ հեղեալ բարկութե՟ ստուգութե՟ն. և շտապ տագնապի և գոչումն աղաղակի ժողովրդեանն զՄովսէս յաղօթից անտի դարձոյց, զի հանգիցէ նա 'ի տրտմութե՟ անտի իւրմէ, և ելցէ տեսցէ զխրամատութիւն որ եղև 'ի դիւակունս նոցա: Արդ երրորդութե՟ առ դու 'ի միտ, վասն զի ոչ հաւասարութե՟ համեմատին. զի 'ի ժամու յորժամ տեսանէր զանկեալ վիրաւորս, աղօթիւք իւրովք զա՟ծն իւր ցածուցանէր 'ի բարկութե՟. զոր օրինակ և Փենեհէզ 'ի հաղորդութիւն գործոյն մերձեցաւ, որպէս եղև հրամանաւ բանին իւրոյ Ահարոնի բուրուառաւն 'ի խնդրուածս աղօթից իւրոց: Այլ ոչ ետ յայտնապէս Մովսէսի զփրկութի՟, զի մի՛ տկարացեալ աղքատասցին խորհուրդքն Փենեհէզի, այն որ զայս գիւտս նախանձու հնարեաց գտանել վասն պսակելոյ անձին իւրոյ:

Բայց Մովսէս, այն որ առաքինութիւքն բազում էին, ոչ եթէ միով այսուիկ մեծանան պարծանք գովութե՟ նորա. զի մի գործ էր երկոցուն. և եթող զմին և գովեաց զմիւսն միայն առանձինն: Զի յետ գործոյն գրեցաւ. և փրկութի՟՝ զի սովոր է ողորմութի՟ն կերակրել զբազումս իբրև զմի, և միով որպէս և բազմօք. զի 'ի վաստակել յաշխատելն իւրեանց յայտնապէս՝ գոն ընդ նոսա հաղորդք իւրեանց 'ի ծածուկ. զեւթն հազար եղեալ էին այ՟ իբրև 'ի գանձի 'ի ծածուկ հանդերձ միովն յայտնի մշակաւն, որ կարծեաց թէ վասն աղօթից իւրոց եղև նա լսելի, 'ի ժամանակի իբրև կոտորեաց նա զքուրմսն Բահաղու, և ոչ գիտէր նա՝ թէ գունդ մի մեծ է նոցա յաղօթս խնդրուածոց իւրոց: “Ահա, ասէ, թողի անձին իմոյ եւթն հազար ». այս ինքն ընտրեցի ես 'ի սպաս պաշտաման իմոյ զայնոսիկ՝ որք արժան իսկ էին ընտրութեան:

Փոխանակ այնր՝ զի ասէ “Որդիքն Կորխայ 'ի թիւ համարու ոչ մտին ». հեբրայեցի, “Եւ որդիքն Կորխայ, ասէ, ոչ մեռան »: Եւ զի ամենայն մարդ յաղ-

զի տոհմի իւրում սերմացի, զի մի եղիցին խառնել ազգքն ընդ միմեանս ։ Եւ այն՝ զի ասէ “Մինչեւ մեռա-ցի մեծ քահանայն„ . վասն է՞ր . այլ զի զգուշացուս-ցէ զնա, զի ընաւ ամենեւին մի փրծանիցի երկաթ՝ զի եղիցին զգուշացեալք յամենայն ինչ ։ Եւ դար-ձեալ, զի ասէ “Յորժամ մեռցի քահանայն մեծ, դարձցի սպանօղն անդրէն յերկիր ժառանգութեան իւրոյ„ . ակնարկէ մեզ յայնմիկ՝ զի 'ի մեռանել մեծ քահանային դառնայ Ադամ'ի դրախտն ժառանգու-թե՛ իւրոյ ։

ԿԱՏԱՐԵՑԱՒ ԹԻՒՔ ՈՐԴԻՈՑՆ ԻՍՐԱՅԵԼԻ

ՍՐԲՈՅՆ ԵՓՐԵՄԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ

ՏԵԱՌՆ

ԵՓՐԵՄԻ

ԽՈՐԻՆ ԱՍՈՐՒՈՑ

ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ

ԳԼՈՒԽ Ա

Որպէս անձրեւ կանուխ զի զարթուցանէ զսերմանիս, եւ գայ հասանէ անձրեւն անագան կատարէ ըզմնունդս նորա, սոյնպէս իբրեւ լուան զօրէնն ՚ի լերանն Սինայ իբրեւ զանձրեւ կանուխ ընկալան զնա. եւ զերկրորդ զօրէնսն իբրեւ զանձրեւ անագան. զի զտարերս զարդարէ եւ ծաղկաց զփառս զգեցուցանէ: Վասն այսորիկ “Ցօղեսցէ իբրեւ զանձրեւ վարդապետութիւն իմ, եւ իջցէ որպէս ցօղ խօսք իմ„: Կամ զի եղծան ապականեցան յետ առաջնոյ որթուն, յաւելաւ նոցա երկրորդումն. զի եթէ էր կատարեալ նոցա զպահպանութիւն առաջնոյն, ոչ լինէր պէտս նոցա երկրորդն: Կամ զի այնոքիկ՝ որ լուան զառաջինն սատակեցան ըստ հրամանին՝ որ ել ՚ի վերայ նոցա, հարկ եղեւ նորոգել առ որդիսն նոցա յերկրորդելն նորա ՚ի զգուշացուցանել զնոսա, զի մի՛ եղիցին որպէս եւ հարք իւրեանց: Փոխանակ այնր՝ զի ասէ “Եւ հալածիցեն զձեզ իբրեւ զմեղուս ծխալիցս„. Հեբրայեցի, “Իբրեւ զմեղուս՝ որ հալածիցին„: Փոխանակ այնր՝ զի ասէ “Ոմմացիք յառաջագոյն բնակեալ էին ՚ի նմա„. Եբրայեցի՝ սկայս ասէ. եւ դարձեալ մովաբացիք սկայս

կարգան նոցա ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Վիճակ երգոքայ„. Հեբրայեցին ասէ, Վիճակ դերբկի„ ։

Իսկ այն՝ զի ասէ. “Տէր ա̄ծ քո որոշեաց զնոսա„. վասն մօտաւորութե̃ Իսրայէլի և վասն հեռաւորութե̃ հեթանոսաց՝ կամեցաւ ասել զիւրաքանչիւր ՚ի հեթանոսաց ։ Ընտրեցին կալան իւրեանց կուռս, և նա ոչ բռնադատեաց զնոսա. բայց զի որոշեաց զնոսա՝ ոչ եթէ զի երկրպագեցին. զի եթէ վասն երկրպագելոյ եղեն, ահաւանիկ բազում հեթանոսք են՝ որ ոչ պագանեն երկիր լուսաւորաց՝ քան զայնոսիկ՝ որ երկիր պագանեն նոցա ։ Եւ հեբրայեցւոց ոչ հրամայեցաւ երկիր պագանել լուսաւորաց զի՞մրդ պագանէին նոքա երկիր. զի ահա աւանիկ Եզեկիէլ, զի պագին նոքա երկիր արեգական, յանդիմանէ զնոսա. և Երեմիայ զայնոսիկ, որ արկանէին զխունկս պաշտամանն երկնից, կշտամբեաց զնոսա. և Մանասէ ՚ի սրահ տաճարին տեառն շինեաց սեղանս ամենայն զօրութեց երկնից. և Ամովս, զի առին նոքա զվրանն Մողոքայ և Քեմանայ պատկեր զաստղն՝ զոր արարին իւրեանց աստուած, նախատեցին զնոսա այլովք հանդերձ ։

Իսկ եթէ յայտնի՝ եթէ հեթանոսք ազգի ազգի կռոց երկիր պագին, յայտ է եթէ այն որոշեաց զնոսա, զի եղիցին նոքա լուսատու հեթանոսաց՝ ասացան, և ոչ եթէ զի երկրպագեսցին նոքա ՚ի նոցանէ ։ “Եւ զքեզ, ասէ, մերձեցոյց առ իւր տէր ա̄ծ առաւել քան զամենայն հեթանոսս„. իբրև զայն՝ զի ասէ “Ոչ արար այսպէս ամենայն ազգաց„. այս ինքն նշանս և սքանչելիս՝ զոր արար առ նոսա ։ “Եւ զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա„. որպէս և ցոյց նոցա որդւոցն Յակոբեայ ։ Վասն պարծանաց Իսրայէլի ասացաւ այսպէս. և զի բարձր արասցէ զգլուխ նորա. իբրև զայն՝ զի ասէ “Եթէ լուա՞ւ այլ ժողովուրդ ըզձայն ա̄յ, որպէս զի տէր ա̄ծ մեր մերձ է առ մեզ„ ։ Զի ՚ի ցուցանելն նոցա՝ թէ որպիսի տէր գոյ նոցա, զի մի թողցեն և դարձցին առ կուռս հեթանոսաց ։

Բայց դարձեալ, զի որոշեաց զնոսա՝ իբրև զայն զՓարաւոնին ։ “Ես, ասէ, գրգռեցի զնա„. զի եթէ նա գրգռեաց, իսկ էր ընդդէր դատի. և եթէ որոշեաց, իսկ ընդդէ՞ր պատուհասէ ։ Բայց հեբրայեցին այսպէս

ասէ զբանն յայտնապէս. “Մի՛, ասէ, յորժամ հայիցիք դուք ընդ երկինս, տեսանիցէք դուք զարեգակն և զլուսին և զաստեղս և զամենայն զարդ երկնից, պակչիցիք յիմարիցիք մատչիցիք երկիր պագանիցէք նոցա, կամ սպաս պաշտաման տանիցիք նոցա, զոր հաստեաց տէր ա̃ծ ձեր,,. այս ինքն հաստատեաց կացոյց զնոսա 'ի սպաս պաշտաման ամենայն հեթանոսաց՝ որ 'ի ներքոյ երկնից, հեթանոսաց և ժողովրդեանն։ Եւ զի ասէ. “Զձեզ ընկալաւ ա̃ծ, և հան զձեզ 'ի հնոցէ երկաթոյ 'ի միջոյ Եգիպտոսի,,. հնոց զնեղութիւն անուանէ, և երկաթ զԻսրայէլ, կամ զԵգիպտոս և զխստութիւն նորա՝ որ հնազանդէ զլեառն որպէս և զերկաթ։

Փոխանակ այնր՝ զի ասէ “Կամ փորձեցին զա̃ծ, զի չոգաւ նա և առ իւր ազգ մի յազգէ միջէ,,. հեբրայեցի, “Եթէ իցէ՞ յազգաց ուրուք, ասէ, լուեալ զձայն ա̃յ կենդանւոյ 'ի միջոյ հրոյ. կամ փորձեա՞ց ա̃ծ երբէք մտանել առնուլ հանել իւր ազգ մի յազգէ միջէ փորձանօք նշանօք սքանչելեօք և արուեստիւք, որպէս և արար մեզ տէր ա̃ծ մեր, և հան զմեզ յԵգիպտոսէ,,։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Սիրեսցես զտէր ա̃ծ քո յամենայն սրտէ քումմէ,,. հեբրայեցի, “Յամենայն մտաց քոց,,։ Փոխանակ այնր՝ զի ասէ. “Եղիցին այս պատուիրանք նշան 'ի ձեռին քո,,. հեբրայեցի, “Իբրև զնշան 'ի վերայ ձեռին քո,,։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Առաքեցից զպիծակն և զմեղուդ առաջի երեսաց քոց,,. հեբրայեցի՝ հարուածս ասէ։

Որպէս ցուցանէ յերկրորդ օրէնսն, երիցս անգամ պահեաց Մովսէս քառասուն քառասուն օր։ Այն զի ասէ. “Կացի ես յաղօթս առաջի տեառն,,. “Յամենայն տեղի, ուր և, ասէ, յաղօթս կացի, պահեցի,, գրեալ է 'ի հեբրայեցի։ Եւ զոր օրինակ վասն ժողովրդեանն պահեաց, սոյնպէս և վասն Ահարոնի զքառասուն օր պահեաց։ Զի մեղք քահանայի քան զամենայն ժողովրդեանն խիստ է. զի փոխանակ ժողովրդեանն ամենայնի զուարակ մի մատուցեալ լինէր, և փոխանակ քահանային զուարակ մի։ Արդ ասաց նա “Եւ 'ի վերայ Ահարոնի, ասէ, բարկացաւ տէր

սատակել զնա, և վասն նորա պահեսցի„։ Արդ զառաջինն զոր պահեաց, զի առ զօրէնս. և զերկրորդն վասն ժողովրդեանն. և զերրորդն վասն Ահարոնի։

Նա զի ասէ. “Չարչարեաց խոնարհեցոյց զքեզ և սովաբեկ արար զքեզ, և ետ ուտել քեզ զմանանայն յանապատի անդ՝ հաց խոնարհութեան տառապանաց, զի յայտ արասցէ քեզ՝ թէ ոչ հացիւ միայն կեայ մարդ„։ Բայց հաց խոնարհութեան և տառապանաց՝ զի ասէ, զի չափով կշռով հրամայեցաւ նմա ուտել օր ըստ օրէ։ Վասն այսորիկ կարդաց նա հաց խոնարհութեան տառապանաց, զի ոչ տուաւ նոցա համարձակութիւն՝ թէ ըստ կամաց իւրեանց առցեն և կերիցեն. և հաց խոնարհութեան՝ զի ասէ. “Անձինք մեր ձանձրացեալ նեղեալ են 'ի հաց սակաւ„. այս ինքն բալախ հացիւս, որպէս և գրեալ է 'ի Հեբրայեցի. այլ “Ամենայն բանիւ„, ասէ։ Զի եթէ անձրև ոչ իջանիցէ, և երկիր զպտուղ իւր ոչ տացէ. և դուք զհաճոյս առաջիք, մի կարճամիտ լինիցիք դուք՝ թէպէտ և անցեալ իցէ ժամանակ հնձոց. զի ամենայն բանիւ կարող է կեցուցանել զձեզ. այս ինքն, զի եթէ քարանց հրամայիցէ հաց լինել, կամ երկնից հնարս լիութեան կարող է։

Փոխանակ այնր՝ զի ասէ “Ոչ պահէ ատելեաց իւրոց„. Հեբրայեցի, “Ոչ յամէ առ ատելիս իւր„։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Երկիր է, որ տէր ած քո վրէժխնդիր է նորա„. 'ի Հեբրայեցի, “Այցելու է նորա„։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Տացես դու օրհնութիւնս[1] 'ի վերայ լերինն Գարիզի, և զանէծս տացես 'ի լեառն Գեբաղ„. Հեբրայեցի, “Ի Գարիզին և 'ի լեառն Գեբաղ յամենայն տեղիս, ասէ, ուր և անուանիցես զանուն իմ, եկից իջից և օրհնեցից զքեզ„։

Յայնմիկ՝ զի ասէ “Մի՛ ժտիր դու, ոչ ունիս իշխանութիւն մատուցանել քեզ պատարագ յամենայն տեղիս անխտիր„. տես զի արգելու և կարճէ զնոսա, զի մի՛ յաճախեսցեն զոհեսցեն և ջեռացին 'ի զոհսն։ Այլ զի մի՛ զոհեսցեն, զաղօթսն՝ որ ընդ ամենայն տեղիս

1 Յօրինակին յօրհնութիւնս։

է, ոչ արգել: "Եւ յորժամ արասցես, ասէ, զայս ամենայն, և կատարեսցես զպահպանութիւնս օրինաց որպէս պատուիրեցի քեզ, եկից իջից ես առ քեզ յամենայն տեղիս ուր և յիշեսցես զանուն իմ 'ի նեղութեան և յանդորրութեան, և օրհնեցից զքեզ ամենայն որ պիտոյն իցեն,,: Եթէ այդ այդպէս իցէ, 'ի սկզբանէ գրեցաւ յայնմանէ 'ի սուրբ անասնոց անտի Նոյի:

Արդ տեսցուք թէ իբրու գիտէր զնոսա Նոյ յառաջագոյն պատուիրեցաւ, ապա թէ ոչ զզոհսն զայն զոր զոհեցին արդարքն առաջինք, թերևս 'ի պիղծ անասնոց անտի էին: Եւ եթէ գիտէին թէ այդ այդպէս իցէ, վասն զի մոռասցին և այն քերցն իւրեանց և զշաբաթուց և զմկրտութեանց և թլփատութեան. և զոր օրինակ ոչ յայտնեաց անթլփատիցն Ենոքայ և Նոյի՝ եթէ հանդերձեալ է նա պղծել զթլփատութիւն, և ոչ Սեթայ և Ենովսայ՝ և եթէ սրբելոց իցէ նա զշաբաթն. սոյնպէս ոչ յայտնեաց՝ եթէ հանդերձեալ է նա լուծանել զշաբաթն, և արձակել զթլփատութիւն: Եւ եթէ ոչ էր յայտնի արդեւք, յանձանց իւրեանց՝ իբրև մեղք էին առնուլ զքոյրս իւրեանց՝ առնոյին: Սոյնպէս անփոյթ արար զառաջինսն և կապեաց զմիջինսն և թոյլ ետ վերջնոցն. զի յայտ արասցէ զիշխանութիւն իւր օրէնսդիրն, ոչ յայտնեաց մինչև ինքեանք օրէնքն յայտնեցան, իւրաքանչիւր օրէնքն 'ի ժամու իւրում: Եւ եթէ դարձեալ հատեալ և յայտնեալ յառաջ քան զժամանակն՝ եթէ անցանելոց են, անարգեալ անգոսնեալ էին 'ի ժամանակս իւրեանց, և փութացեալ ընթանային առաջինքն թլփատել 'ի տարաժամ ժամանակի. կամ լուծանէին միջինքն զթլփատութիւն 'ի ժամանակի իւրում. ոչ է արժան լուծանել, եթէ յայտնեալ էր նոցա՝ թէ խափանելոց է զնոսա: Եթէ լուծեալ էր զթլփատութիւն յանապատի անդ, ո՞չ ահա յոյժ անմտութիւն էր: Իսկ զի՞ տայր զնա յայնմ ժամանակի, զի ոչ ինչ էր պիտոյ. և եթէ պիտոյ էր, զիա՞րդ լուծանէր զնա միանգամայն և յաւիտեան: Սոյնպէս դարձեալ զշաբաթն. այսպէս և զամենայն ժամանակեան օրէնսն: Այլ կուրացոյց զնոսա յայնմիկ, զի

անցանելին զօրինօքն, և ոչ լինելին պատուհասեալ։

Որդ 'ի լուծանելն աւուրց աւուրցն կամ ժամ ընդ ժամ, յայտ առնէր վասն օրինացն՝ թէ ոչ էին յաւիտենից։ Արդ օրէնքն բազում են, և 'ի զոհս անդ կապեալ են. և ընդ լուծանելն նորա, լուծանին նոքա. ոչ ունիս իշխանութիւն յամենայն տեղիս անխտիր մատուցանել։ Այլ օրէնքն ճշմարիտք՝ առանց սեղանոյ, առանց պատարագաց, ամենայն տեղի՝ տեղի իւրեանց է, և ամենայն ժամ՝ ժամ իւրեանց է։ Արդ երկիցուք մեք 'ի թոյլ տալոյ փոքունց, դուցէ մեծամեծ բիծ դնիցեմք յանձինս մեր. զի ահա աւանիկ յորմէ հետէ պատուէրն եդաւ, յաւելլով յաւելաւ առաջինն 'ի միջինն, և միջինն 'ի վերջինն։ Զոր ինչ մեկնեաց որոշեաց Նոյ 'ի կերակուրսն, պահեաց Աբրահամ թլփատութեամբն, և զշաբաթն՝ որ 'ի Մովսիսէ, կապեալ է 'ի թլփատութեան անդ՝ որ յԱբրահամէ։ Եւ ընդէ՞ր Մովսէս՝ որ ետես զօրինակ խորանին, ոչ տուաւ նմա զի շինիցէ զտունն. այլ զխորանն անցոյց տաճարն, և զտաճարն քակեաց ձեռն թշնամւոյ։

"Յամենայն քաղաքս, ասէ, և 'ի գեօղս՝ որ պիղծն իցէ 'ի քեզ և որ սուրբն իցէ, 'ի միասին կերիցեն առհասարակ". այլ ոչ եթէ վասն պիղծ գազանաց ասաց՝ և որ սուրբ իցէ և պիղծ, այլ վասն մարդկան ասէ. "Ամենայն որ սուրբ և պիղծ իցեն 'ի գեօղս քո, կերիցեն զնա"։ Քանզի յանապատի անդ հրաման ետ նոցա և ասէ. "Ամենայն որ զենուցու ոչխար կամ զուարակ, առաջի սեղանոյն մատուսցէ զնա զի սրբեսցին, և ապա կերիցեն"։ Աստ ասէ. "Յորժամ մտցես դու յերկիրն, զորս տէր Աստուած քո տացէ քեզ, զեն և կեր ըստ ցանկութեան անձին քո. բայց միայն արիւն մի՛ ուտիցես"։

Եւ այն՝ զի ասէ. "Թէ յարիցէ 'ի մէջ քո մարգարէ 'ի տեսիլս երազոց, և տացէ նշան, և եկեսցէ նշանն մոլորութեան զոր խօսեցաւ նա ընդ քեզ, եթէ երթիցուք դիցս օտարոտեաց երկիր պագցուք՝ զոր ոչ ճանաչիցէք, մի՛ հաւատասցես վասն նշանին մոլորութեան նորա, այլ վասն ճշմարտութեան քո երկիր պագցես դու Տեառն քում. զի ես տէր մոլորեցուցի զնա. և սատակեսցես կորուսցես զնա 'ի միջոյ ժողովրդեանէ իմմէ"։

Արդ ուսուցանէ քեզ օրինակ սպանանել զայնոսիկ. զի Աստուած ոչ եթէ 'ի նշանայ անտի իւրոց արժան է երկրպագել: Երկու բանք աննմանք միմեանց 'ի վերայ երկուց մարգարէից. մի այն՝ որ խոտորեցուցանէն, գայ հասանէ բան նորա և կատարի, բայց յանդիմանեալ կշտամբի նա յայնմիկ՝ զի խոտորեցուցանէ զքեզ. և միւսն այն՝ որ համարձակի ժպրհէ և ոչ ուրացուցանէ զքեզ, կշտամբեալ յանդիմանի յայնմիկ՝ զի ոչ կատարի բան նորա:

Փոխանակ այնր՝ զի ասէ թէ “Մի՛ ցտիցէք զմարմինս ձեր„. հերքայեցի, “Մի՛ մոլեգնիցէք, որպէս և այնոքիկ՝ որ մոլեգնեցանն, մինչև հեղաւ արիւն նոցա 'ի վերայ նոցա„: “Մի՛ անկիցես դու քեզ պէսպէս տունկս ծառոց„. իբրև զայն՝ զի ասէ “Մի՛ խառնիցէք 'ի խառնս այլազգի զանասունս ձեր. և մի՛ սերմանիցէք զայգիս ձեր խառնակ սերմանեօք„. զի զերկիրն ազատեսցէ յաւելի աշխատութե̃ անտի, և ըղտէր երկրին 'ի բազում ագահութե̃: “Դու մի՛, ասէ, լծիցես դու զեզն և զէշ 'ի միասին„. մինն անթըլփատ, և միւսն թլփատեալ: Ողորմուե̃ նորա է այս. զի չէ ինչ իշոյ 'ի լուծ մտանել և ձգել յակօս, զի զօրագոյն է եզն քան զնա. և եզն վաստակէ, զի չիք իբրև զնա 'ի վար լծոյ, և էշ տկարանայ և մաշի:

Եւ վասն հանդերձից դարձեալ հրամայէ՝ եթէ խառնուածոյ մի՛ զգենուցուն. զի ամենայն գնացիւք իւրեանց զգուշացեալք լինիցին նոքա յօրինաց անտի պահել զնոսա: Զի ամենայն, ուր և գնայցեն նոքա, օրէնքն ընդ առաջ դիպեսցին նոցա. առաւել ևս յայնմիկ, զի ուսուսցէ նոցա՝ թէ ընդ հեթանոսս մի՛ խառնակեսցին և գնացից նոցա մի՛ ցանկասցին. իբրև զայն՝ զի ասէ “Արասջիք ձեզ արկանելիս քղանցաւորս, և Ճամուկս դարձիւք„:

Եզամբ դարձեալ և իշովն զոր պատուիրեաց, բայ “Մի՛ սերմանիցես նոքօք միանգամայն„, զի զորդիս ժողովրդեանն իւրեանց մի՛ ստանայցեն իւրեանց ծառայս յաւիտեան, իբրև զօտարս: Եւ այն՝ զի ասէ “Զարտավար ձեր մի՛ սերմանիցէք խառնակ սերմանեօք„, զի զդստերս իւրեանց հեթանոսաց մի՛ տայցեն: “Եւ մի՛ սերմաներ զայգի քո խառնակ սերմանեօք, զի մի՛ նը-

ւիրիցի ծնունդ սերմանեաց երկրի քո ,,. զի լինի նա այնուհետև նզով երախայրեաց բաժին քահանայիցն։

ԳԼՈՒԽ Բ

"ՄԱՐԳԱՐԷ մի, ասէ, 'ի միջոյ եղբարց քոց կանգնեսցէ քեզ տէր ա̃ծ քո իբրև զիս ,,։ Զի զոր օրինակ ետ նա զկտակարանն, այնպէս տացէ այն որ գալոցն է՝ կտակարանս նորս։ Եւ եթէ ասիցեն, թէ վասն Յեսուայ որդւոյ Նաւեայ, կամ վասն Սամուէլի ասացեալ է, յանդիմանեալ կշտամբելն նոքա յայնմանէ, զի մարգարէ ասաց նա, և ոչ բազում մարգարէս։ Եւ առաւել ևս, զի ոչ եթէ կտակարանք ինչ նորոգեցան 'ի ձեռս նոցա, և ոչ պահպանութ̃իք և ոչ սահմանիչք եղեն նոքա մարգարէութ̃ե։ Արդ յայտ եղև՝ թէ մարգարէ իբրև զՄովսէս՝ վասն տեառն մերոյ ասացեալ է. զի զնոր կտակարանն ետ նա՝ որ գրեալ են 'ի տախտակս սրտից։ "Ոչ, ասէ, իբրև զայն՝ որ ետու ես նոցա 'ի ժամանակի իբրև 'ի ձեռն առի ես զհարս նոցա հանել զնոսա յերկրէն եգիպտացւոց. այլ տաց ես զօրէնս իմ 'ի խորհուրդս նոցա, և 'ի վերայ սրտից նոցա գրեցից զնոսա ,,։ Եւ յայնմիկ՝ զի ասաց բայ նոր՝ զառաջինն հնացոյց։

Արդ զայս ասասցուք, թէ 'ի ժամանակի՝ յորում հան զնոսա Մովսէս, թող նա զճանապարհ կարճոյն և զդժուարինն՝ որ յեգիպտոսէ 'ի հրէաստան պարզ ուղեղ տանէր, և յանապատի անդ քառասուն ամ շրջեցոյց զնոսա. որպէս զի ընդ երկար ժամանակօքն փոխեսցին նոքա 'ի սովորութ̃է անտի չարութ̃են իւրեանց՝ զոր ունէին նոքա յերկրին եգիպտացւոց։ Իբրև յաւելու նոցա օրէնս ևս՝ զի խառնեսցին 'ի նոսա, որպէս զի 'ի մոլորութ̃է անտի կռոցն կարասցէ փոխել զնոսա։ Զի գլուխն պատուիրանաց նորա այս է՝ եթէ "Մի՛ եղիցին քեզ աստուածք բաց յինէն։ Մի՛ արասցես քեզ կուռս պատկեր նմանութեան, որ ինչ յերկինս կամ յերկրի ,,.

Եւ զի գիտաց Մովսէս՝ թէ ոչ կարէ ընաւ ամենեւին լուծել զցաւսն և զսովորութ̃ի զերկրպագութ̃ե

կուոյն 'ի մտացն անտի նոցա, հրաման ետ նոցա զոհել, այս ինքն անուան ա̄յ․ զի գոնեայ զկէս ցաւոյն հատցէ և խափանեսցէ․ և վասն ուղղութե̄ միւսոյն և կիսոյն յայլում ժամանակի 'ի ձեռն այլոյ ուրուք, որպէս և արժան իցէ, լինիցի ։ “Նմին, ասէ, մարգարէին լուարուք„․ զի յորժամ յայտնեսցի 'ի ժամանակի, յորում կարիցեն նոքա լսել՝ զի ա̄ծ զողորմութի̄ս կամի և ոչ զպատարագս ։ Եւ որք միանգամ յանձն առնուն և անսան նմա, արժանի եղիցին նոքա կենացն յաւիտենից․ և որք միանգամ ոչ հաւատասցեն, 'ի սուր 'ի սատակումն մատնեսցին նոքա ։

Արդ քանզի ինքն իսկ գիտութի̄ն ուղղութի̄ն մարգարէին կարօտ էր, ժամանակն՝ յորում պարտուպատշաճ էր առ նա յայտնել, նախ խրատեաց զնոսա լուել դադարել նոցա 'ի զոհից անտի ։ Եւ զի մի՛ կարծեսցին նոքա՝ եթէ զրկեալ լինիցին նոքա 'ի թողութե̄ անտի փոքր մեղացն՝ որ 'ի ձեռն զոհիցն լինէր նոցա, և կարճեալ լինիցին նոքա 'ի հաւատոց անտի, ետ նոցա մկրտութի̄․ զի 'ի ձեռն ջուրցն զճշմարիտ քաւութի̄ն արասցէ ամենայն մեղաց նոցա ։ Եւ ոյք միանգամ միաբանին նմա, 'ի կեանսն յաւիտենից պահեսցէ զնոսա․ և յորժամ ա̄յ հաճոյ լինիցին[1] ըստ կամաց նորա, ապրեալ լինիցին նոքա ։ Եթէ և սոքա այսպէս հեռացեալ մերժեցան, սակայն մարգարէն երևեցաւ, և նշանս գործեաց․ և նախ զերկոտասանսն ընտրեաց և ապա զիւթանասուն և զերկուսն, թէ գոնեայ այսպէս 'ի ձեռն նմանութեանն Մովսիսի իմասցին ժողովուրդք նոցա՝ թէ այս այն մարգարէ է՝ զոր Մովսէսն քարոզեաց ։ Այլ թերևս թիւ ամենայն ումեք դիւրին է առնել, բայց նշանս և սքանչելիս դժուարին է գործել․ այլ ահա աւանիկ աւելի քան զնշանսն զՄովսէսի 'ի մէջ ժողովրդեանն՝ անթիւ և անբաւ նշանս և սքանչելիս ցոյց նա ։

“Յորժամ, ասէ, ելանէք դուք 'ի գործ պատերազմի, մի՛ երկնչիք դուք․ զի տէր ա̄ծ ընդ ձեզ է„ ։ Եւ ասէ դարձեալ, եթէ “Կայցեն, ասէ, դպիրք օրինադիրքն ժողովրդեանն, և ասիցեն․ եթէ իցէ կին

1 Յօրինակին լինիցի ։

ղք որում խօսեցեալ իցէ նորա, և չիցէ աճեալ, դարձցի անդրէն՝ զի մի՛ մեռցի „, այլովք հանդերձ: Եթէ տէր ա̃ծ է ընդ նոսա, զի՞րդ կարէ մի 'ի նոցանէ մնասել. այլ զի մի՛ երկմտեալ բաժանեսցին միտք նորա, և դիցէ գայթագղութի̃ սրտից ընկերաց իւրոց, և առնիցէ զնոսա 'իբրև զինքն, իբրև այն զԳեդէոնին: Զի իբրև ոչ առին նոքա յանձն մնալ 'ի պատերազմէ անտի ըստ բանի նորա, իջոյց զնոսա 'ի վտակն ջուրց, և որոշեաց զնոսա, որպէս զի յայտ լիցի՝ եթէ ոչ բազմութի̃ զօրաց առնէ զյաղթութի̃. քանզի տեառն ա̃յ է պատերազմ: Եւ զի ասէ "Տէր ա̃ծ քո երթիցէ առաջի քո „, զի քաջալերեսցին նոքա 'ի վերայ հեթանոսաց. զի ահաւանիկ դարձաւ ասաց նա՝ բայ "Գուցէ մեռանիցի, և այլ այր երթեալ նաւակատիս առնիցէ „:

Եւ զի ասէ "Մի՛ մտցէ բոզորդի 'ի ժողովուրդ տեառն „. զի յամօթ եղիցին հայր և մայր նորա: Եւ զի ասէ "Ղա̃ն գինք և բոզի կապէնք „. զի անուամբ մեկնեսցէ վասն շանն և վասն յորջորջման նորին, և յանուն շան զպատարագ բոզին գարշեցոյց: "Մի՛, ասէ, տարցիս զնոսա 'ի տուն ա̃յ քո „, զպատարագ պիղծ 'ի գիջութենէ: Եւ զի ասէ "Լուասցեն զձեռս իւրեանց 'ի վերայ երընջոցն „. զի յայնմիկ որ իբրև զերդումն եղև նոցա՝ երկնչին և քննեն զիրսն, զի մի՛ գտցին սպանօղ. և զի մի՛ ննջեսցեն նոքա յայսմ վրիժու խնդրելոյ և 'ի քննութէ̃: Բայց հեբրայեցի փոխանակ այնր՝ զի ասէ "Եւ զենցեն զերինջ 'ի ձոր անդըր „, "Հատցեն զգլուխ նորա „ ասէ:

"Ապա եթէ իցէ ուրուք որդի խեռ և անզգամ և հակառակօղ, և ոչ լուիցէ ձայնի հօր և մօր իւրում, կալցեն զնա հայր և մայր իւր, և ածցեն առաջի ծերակոյտ ժողովրդեանն. և դիցէ զձեռն իւր 'ի վերայ գլխոյն, և քարկոծ լիցի „: Երևի՝ թէ առանց ողորմութե̃ց է, այս ինքն զի ողորմութի̃ է: Եւ զի ցուցցէ՝ թէ հայրն ծերունի եթէ յանցանիցէ, խրատեսցեն զնա. ապա թէ առանց յանցանաց ատիցէ զորդին իւր, ոչ միաբանին ընդ նմա ծերակոյտ ժողովրդեանն, բայց եթէ մեծ ինչ իցեն յանցանք որդւոյն, մինչ զի յայտնի կալցին զմիջնորդսն՝ աճել նոցա 'ի

վերայ նորա զպատիժ պատուհասից: «Դիցեն, ասէ, հայր և մայր նորա զձեռս իւրեանց 'ի վերայ գլխոյ նորա»: Ջուգեաց զերկոսին զնոսա, զի ոչ կարեին երկոքին միաբանել և լինել առանց ողորմութեան. որպէս զի արդարև ոչ նա կարէ զերկոսին ատել լի կատարեալ. զի այն՝ որ ոչ լի կատարեալն ատեցաւ, ոչ կարէ լի կատարեալ ատիլ:

«Եւ յորժամ գտանիցես դու, ասէ, ձագս մարքն հանդերձ, զմայրն արձակիցես, զի բարի լիցի քեզ». որպէս զի բարի արար նա հաւուն, բարի առնէ նմա Ա̃ծ. և որպէս բազմացոյց նա զկեանս հաւուն, բազմանան կեանքն իւր: Ա̃ծ՝ այն որ երևեցաւ առանց ողորմութե̃ առ յանցաւորսն, այսպիսի սփռեալ սէր նորա 'ի վերայ թռչնոյն: Զի եթէ 'ի վերայ թռչնոց ասաց քեզ ողորմել, քանի՞ ևս առաւել մարդոյ. և եթէ առ հաւու անդ բարի է քեզ, առ մարմնակիցսն քո քանի՞ ևս առաւել:

Եւ եթէ ճշմարտիցի 'ի վերայ կնոջ շնութիւն, քարկոծ լիցի. և եթէ ճշմարտեսցի զրպարտութիւն 'ի վերայ առն, տուժեսցի նա հարիւր կշիռ արծաթոյ: «Մի՛, ասէ, իշխեսցէ անարգել զնա զամենայն աւուրս կենաց իւրոց». զի թէպէտ և ոչ կարաց ըսպանանել զնա յայտնի զրպարտելովն իւրով, սակայն սպան զնա ծածուկ ատելութե̃ն իւրով, և օտարացեալ մերժեցաւ կինն զրպարտեալ վասն դիւրութե̃ իրիք, այն՝ զի տացէ նմա թուղթ ապահարզանի: Տես դու ե՞րբ սպանանէին նոքա զկանայսն իւրեանց զրպարտութե̃: «Մովսէս, ասէ, վասն խստասրտութե̃ ձերոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր»:

«Եթէ ոք գտցէ, ասէ, զկին կոյս՝ որ ոչ իցէ խօսեալ առն, և բռնադատիցէ զնա, տացի հօր աղջկանն յիսուն սատեր արծաթոյ, և կինն նմա լիցի»: Կուսութի̃ կուսին օգնեաց նմա: Իսկ այրն՝ որ չնացաւ գիջութե̃ն իւրով, կարօղ էր նա առնուլ զնա օրինօք, զի չէր նմա խօսեալ ումեք: Իսկ առնակոյսն որ 'ի խօսման կայ, և առնակին յետ գլորմանն՝ սուր սուսերի կայ 'ի վերայ այնորիկ՝ որ անկանին. զի ծարաւի է սուր սուսերի արեան այնորիկ՝ որ արբ զջուրս օտարս: Առնակինն վասն զի ամուսնացաւ

յայտ համարձակ և զանց զամուսնութին, չնութե պարտաւորեցաւ. աւելին զոր գողացաւ և եկեր, երգիծ զնա։ Իսկ կուսութին վասն զի քաղցեալ էր և ոչ գոյր նորա, և վասն քաղցութե իւրոյ գողացաւ, և զի ոչ գոյր նորա ուտել, եգիտ զողորմութիւն, նա և զգօղօնն 'ի ծանրութի բռնութէ կուսութեանն։ Ծանրութիւն կամաց է կուսութի. թէ իջանէ յաստիճան ամուսնութե, ամօթ է նմա. և ամուսնութի՝ թէ իջանէ յաստիճան պոռնկութեան, մահ է նմա։ Իսկ եթէ յաստիճան ամուսնութե գտանիցի կուսութի, ամօթ է նմա և նախատինք. յաստիճան չնութե և պոռնկութե եթէ գտանիցի, որպիսի՞ ամօթ բաւական իցէ նմա։ Զի եթէ ուր գովեալն լինի ամուսնութին, կուսութի անդ ամօթալից լինի, ուր և ինքն ամուսնութիւն ամօթ կրէ, կուսութիւն ո՞ւր գտանիցի։

“Մի՛, ասէ, գարշիցիս դու յեդովմայեցւոց անտի, զի եղբայր քո է. և մի՛ յեգիպտացւոց անտի, զի պանդուխտ լեալ էիր դու յերկրի նոցա„։ Ծնունդք՝ որ ծնանին նոցա 'ի դարի անդ չորրորդում, մտցեն 'ի ժողովուրդ տեառն. զի 'ի փոփոխել նոցա 'ի դարէ 'ի դար, մինչև 'ի չորրորդ դարս փոփոխեսցին սովորութիք նոցա, և կրթութիւնն չարաչար վարդապետութե հարց նոցա։ Եւ զի մի՛ զրկիցէ զեղբայրութի Եսաւայ, և մի՛ զեգիպտացւոց. զի ձեռնկալու եղեն նոքա նոցա յաւուրսն Յովսեփու։

“Մի՛ մատնիցես զծառայ 'ի ձեռս տերանց իւրեանց՝ որ 'ի քեզ ապաստան գայցէ 'ի հեթանոսաց. այլ բնակեցուսցես դու զնոսա առ քեզ 'ի միում ուրեք 'ի քաղաքաց քոց„ ըստ օրինաց Հռոմոց և Պարսից. այն իսկ Սողոմոնին. վասն որդւոց ժողովրդեան իւրոյ ասաց նմա, զի մի՛ լաւասցի զկորուստ ընկերին իւրոյ։ “Սոյնպէս, ասէ, արասցես դու զեզն և զգրաստ և զծառայ և զաղախին ընկերի քո„։

“Եւ յորժամ, ասէ, մտանիցես դու յայգի կամ 'ի հունձս ընկերի քոյ, առ դու, ասէ, 'ի ձեռն. և մանգաղ, ասէ, մի՛ արկանիցես յոճ ընկերի քո„։ Զգեա, ասէ, զձեռն քո վասն քաղցութե։ Համարձակեաց թողացոյց վասն քաղցութե, և արգել կար-

ձեռաց զագահութի ։ Զորովայն քո լցցես դու լիութք
վասն քաղցութե իւրոյ, բայց գոգքն քո ունայն լի-
ցին. զի ունայն լիցի խորհուրդ քո յագահութէ ։ Մի՛
կամիր դու՝ թէ ունայն իցեն ձիթենիքն քո 'ի ձեռոյ,
զի մի՛ ունայն գտցին նոքա. և 'ի բերոյ անտի պտղոյն
թող սակաւիկ մի, զի գտցես բազում. զի բազմաւն
զոր առեր դու, յաճախեսցէ օրհնութիւն քո. և սակա-
ւուն զոր թողուս դու, համբիցէ աղքատն և տնանկն ։

Եւ զի համարձակեաց նոցա արձակել զկանայս
իւրեանց՝ որ ատեցեալ լինէին 'ի նոցանէ, զի անխայ-
եսցէ զկանայս 'ի սպանմանէ, և զարմն 'ի վրիժուց
խնդրելոյ սպանմանն և 'ի պոռնկութենէ. զի երե-
քին այս եկեալ հասանէին 'ի վերայ նորա, և եթէ
ոչ էր թողեալ զնա ։ Բայց զայս ոչ եթէ Աստուած
հրամայեաց, այլ Մովսէս. զի բազում ինչ եդ նա
յիւրմէ վասն խստասրտութե ժողովրդեանն ։ Եւ վկայէ
այն՝ զի ասէ, եթէ "Մովսէս, ասէ, վասն խստա-
սրտութե ձերոյ հրամայեաց արձակել ձեզ զկանայս
ձեր, բայց 'ի սկզբանէ ոչ այսպէս էր„ ։ Եթէ երթի-
ցէ, ասէ, կինն այն և լինիցի առն այլում, և մեռցի
այրն յետին՝ որ առ զնա, մի՛ իշխիցէ այրն առաջին՝
որ արձակեացն զնա՝ դառնալ առնուլ զնա իւր կնու-
թե 'ի վերայ պղծութե նորա. ապա թէ համարձա-
կեսցի ոք և առնուցու զնա, ահա բնակեալ է նա
խեթիւ և խղճիւ. զի թերևս դառնայցէ սիրտ նոցա
առ միմեանս, և նա դարձեալ արկանիցէ զձառս
վերջին առն իւրոյ ։ Եւ եթէ ոք ոչ համարձակի առ-
նուլ զնա յայնմանէ՝ զի երկնչին, ահա ելանէ նա 'ի
դերև. զի ոչ այրն իւր դառնայ առ նա, և ոչ այլ
այր առնու զնա ։ Եւ եթէ էր ասացեալ օրինացն
եթէ յետ մահու առնն վերջնոյ դարձցի նա առ ա-
ռաջինն անդր, սակայն և այնպէս խեթիւ և խղճիւ
բնաւ էր 'ի կնոջէ անտի իւրմէ վասն կենաց իւրոց.
կամ 'ի նենգութէ առն առաջնոյ, և զրպարտութի
լինէր այնուհետև, թէպէտ և յօրհաս իւրում մե-
ռանէր նա. և ամենայն զի եհատ նա, զի մի՛ դար-
ձեալ դարձցի լինիցի նա առն առաջնում. զի բնա-
կեսցին նոքա խաղաղութք, զի երկեցուցէ՝ զի մի՛ ոք
թողցէ զկին ։

“Մի՛ իշխան լինիցիս երբեք զրկել զվերին երկանն և զներքին. մի՛ հատաներ զլոյս ընկերի քո, զի իբրև զոգիս գրաւէ այն՝ այնպիսին որ գրաւէն„. այս ինքն զի հատեր զլոյս նորա, և զի չիք պէտք ինչ օգտի ՚ի վերին երկանն միայն։ Ապ՝ եթէ գրաւեսցես դու ըզվերին երկանն, և զներքին զսատար նորա խափանես դու, և զվարձս նորա պահանջես դու. իբրև զայն, “Եթէ կալցես գրաւ զանասուն„։ Զայս ասասցուք, թէ ողորմութիւն ուսոյց նոցա յայնմիկ. իբրև զայն՝ զի ասէ “Ընդ երեկս աւուր ժամանակի դարձուսցես նմա զգրաւն„. բայց հեբրայեցի, “Մի՛ գրաւեր զերկանն և զլուծ նորա„ ասէ։

“Զգոյշ լեր դու, ասէ. հայեաց յանձն քո ՚ի նըշանեալ բորոտութենէ. և պահեսջիք զնոսա յոյժ. և յուշ լիցի քեզ զինչ արար տէր ա̃ծ քո ընդ Մարիամ ՚ի ճանապարհի անդ„։ Զի թէ ես, ասէ, և Ահարոն և Մարիամ պահեցաք, դուք ո՞րչափ ևս։ Եւ եթէ Մարիամ պատուհասեցաւ՝ զի այսպն արար, ո՞րչափ ևս առաւել դուք։

“Եթէ ոչ, ասէ, կամիցի եղբայր առն իւրոյ առնուլ զնա, մատիցէ կին եղբօրն նորա առաջի ծերակոյտ ժողովրդեանն, և հանցէ կօշիկ յոտանէ և թքցէ ընդ երեսս նորա„։ Ոչ եթէ ընդ երեսս եղբօր առն նորա, այլ ընդ կօշկին, այս ինքն ընդ ներբանս կօշկի նորա. վասն զի պատուիցէ նա զայն՝ որ ըստ նմանութե̃ պատկերի կերպարանաց ա̃յ հաստատեցաւ, ասէ՝ թքցէ ՚ի կօշիկ նորա. “Եւ անուանեսցի, ասէ, անուն նորա ՚ի մէջ Իսրայելի՝ տուն բոկացելոյ„։

Փոխանակ այնր՝ զի ասէ “Յասորեստան վարեցաւ հայր իմ„. հեբրայեցի, “Ասորի էր կորուսեալ հայր իմ„. որպէս և հեթանոսք մոլորեալ, խոստովանելով խոստովանի։ Եւ զի ասէ “Ոչ կերայ ես ՚ի նմանէ ՚ի սգաւորութեան իմում„. հեբրայեցի, “Ի ցաւս իմ„։ Եւ զի ասէ “Քննեցի ես զսրբութի̃ իմ„. “Կատարեցի ես„ ասէ. այս ինքն հանի ես զտասանորդել պտղոյն, և ետու ես անտի ղևտացւոյն, և տասանորդեցի ես զնա, և ապա կերայ։ “Եւ ոչ սփռեցի ես զնոսա ՚ի պիղծս„. այս ինքն սրբեցի ես ՚ի տասանոր-

դելն իմում զնա ։ “Եւ ոչ ետու ես անտի մեռելոյ „ ․ այս ինքն սեղանոյն , որ դնէին մեռելոցն ըստ սովորութե̃ն՝ որ գործէին 'ի մէջ հեթանոսաց ։

Պարձեալ ասէ ցնոսա ․ “Եթէ պահիցէք դուք զօրէնս զայս , եկեսցեն 'ի վերայ քո օրհնութիւքս այս , և գացեն զքեզ „ ․ իբրև կնքէ և մարգարէն յասել իւրում ․ “Զի եթէ լուեալ էիր քո պատուիրանաց իմոց , եկեալ էր այնուհետև խաղաղութի̃ քո իբրև զգետ , և արդարութիւն քո իբրև զալիս ծովու , և եղեալ լինէր զաւակ քո իբրև զաւազ առ ափն ծովու „ ․ իբրև զգուշացուցանէր զնոսա յասել իւրում ․ “Նայեցարուք , ասէ , ընդ Աբրահամ հայր ձեր , և ընդ Սառայ՝ որ ծնաւն զձեզ , զի մի էր նա , և կոչեցի բազմացուցի զնա „ ։

Իսկ եթէ այս իցէ ճշմարիտ օրհնութի̃ օրինացն , եթէ այդ այդպէս իցէ՝ ամենայն հեթանոսք՝ որ հեռի իցեն յօրինաց , ոչ ծնանին և ոչ սերմանան ։ Եւ եթէ տեսանեմք մեք , զի ամենայն հեթանոսք որ 'ի ներքոյ երկնից են , առաւել են քան զիսրայէլ ծննդգօք , խաղաղութ̃բ և լիութ̃բ , և նոքա 'ի գերութե̃ ․ և լաւ են քան զնոսա մովաբացիքն , զի ոչ երբէք վարեցան 'ի գերութի̃ ․ լուեալ է , ասէ , և դադարեալ , և հանգուցեալ են նոքա 'ի մանգութե̃ իւրեանց , և նոքա համբերին զգերութի̃ և զանզաւակութի̃ որովայնի ։ Եւ եթէ ասիցեն , եթէ իբրև զորդիսն Իսրայէլի խրատեաց զմեզ ա̃ծ , ահա աւանիկ և ծուրացիքն խրատեցան և ցրուեցան ․ և 'ի կատարել եսթանասուն ամին՝ դարձոյց բնակեցոյց և շինեաց զնոսա ․ և որպէս զի մարգարէացան վասն նոցա մարգարէքն , սոյնպէս և վասն հեթանոսացն ․ և ահա աւանիկ ասէ “Իբրև որդիք Հնդկաց էք դուք ինձ որդիք Իսրայէլի „ ։

Արդ ո՞ր առաւելութի̃ գտանին առ նոսա՝ որ օրինօք պարծին ։ Եւ եթէ օրհնութի̃ն ամուսնութեան ընտրեալ էր ա̃յ ; ընդէ՞ր պատուիրէր նա վասն սրբութե̃ ։ “Սրբեա, ասէ , դու զժողովուրդն, զի մի՛ մերձեսցին ինչ 'ի կին մարդ ․ և ապա երևեցայց ես նոցա „ ։ Եւ յայսմ վայրի գարշեցոյց նա զամուսնութիւն ։ “Եւ քահանայն , ասէ , յաւուրս ժամանակի պաշտա-

ման իւրոյ 'ի կին իւր մի մերձեսցի ,,: Եւ ընդէ՞ր զրկեաց զպաշտօնէայսն իւր յօրհնութենէ անտի օրինաց: Եւ ահաւասիկ ոչ միայն զի մի մերձեսցին 'ի կին մարդ՝ պատուիրեաց նոցա, այլ թէպէտ և յերազս ոք տեսանէ, պարտաւորեալ լինի: Եւ զի՞նչ ևս ասասցուք. զկա՞մս նորա գարշեցոյց, եթէ զգործս նորա անարգեաց: Եւ ահա աւասիկ նա ինքնին զուգեաց զնոսա: Այլ զի յայտնիկ ուսցին նոքա զգաստութիւն հեզութեան: Զի թէպէտ և նա ետ զամուսնութիւն, սակայն զի մի զանցանիցեն մոլեբար իբրև զգազանս աղտեղիս, և ուսցին դարձեալ թէ սուրբ է նա և պաշտօնեայք իւր: Վասն այսորիկ և քահանայիցն հրաման ետ նա՝ թէ յորժամ մատչիցին նոքա 'ի պաշտօն նորա, սրբեսցեն զանձինս իւրեանց: “Մի՛, ասէ, ասասցէ ներքինին՝ թէ ես եմ փայտ չոր. քանզի տաց ես նոցա 'ի տեղւոջ իմում անուն՝ որ առաւել իցէ քան զուստերաց և զդստերաց յաւիտեանս ժամանակաց ,,: Եւ Եղիսէէ առաւելաւ յայնմիկ՝ զի ոչ ամուսնացաւ. և Եղիա վերացաւ յերկինս. և Դանիելի հրեշտակք իջին յողջայն նորա: Եւ եթէ ասիցեն՝ եթէ ունիցին նոքա կանայս, և ահա գրեալ է վասն Եղիսէի՝ թէ սուրբ էր և յայնմիկ, զի նախատեաց նա զԳեհեզի վասն ստացուածոց. յայտ է թէ ինքն չունէր ինչ ստացուածս, և յամենայն երկրաւոր գնացից ազատ էր: Սոյնպէս դարձեալ և Եղիա: Եւ առաւել համարեցաւ ա̄յ՝ սրբութ̄ի քան զամուսնութ̄ի. յայնմիկ՝ զի ընդ սրբութ̄ին խօսեցաւ, և նմա հրամայեաց մերձենալ 'ի սպաս պաշտաման իւրոյ. ետ նմա անուն՝ որ առաւել իցէ յաւիտեանս ժամանակաց: Զայս ընդդէմ այնոցիկ ասացաք, որ օրինօքն պարծին. այլ մեք զերկոսին ընդունիմք ըստ կամաց ա̄յ. զի նա ինքն է տէր ամուսնութ̄ե, որ նկարէ մանկունս յարգանդի. և նա ինքն է Աստուած սրբութեան, և բնակի և հանգչի 'ի սուրբս՝ որք յաղթեցին բնութեան իւրեանց կամօք իւրեանց, և նմանօղք եղեն հրեշտակաց:

ԳԼՈՒԽ Գ

ՀՐԱՄԱՆ ետ Մովսէս և ասէ․ “Յորժամ անցանիցէք ընդ Յորդանան գետ, կանգնեսջիք դուք անդ արձանս․ և բռեսցես զնոսա բռով, և գրեսցես ՚ի վերայ նոցա զպատճէն օրինաց, և թողջիք զնոսա անդր․ և շինեսցես անդ սեղան ՚ի բոլորակ վիմաց, և մի մխեսցես ՚ի ներքս երկաթ„։ Եւ ահա աւանիկ տախտակք՝ որ գրեալ էին ՚ի վերայ նոցա, ՚ի տապանակի անդ եդան․ և նա և սեղանն՝ որ գործեալ էր երկաթով Բեսելիէլի որդւոյ Ովրայ, անդ էր ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի։ Իսկ օրէնքն՝ որ թողան ՚ի մէջ հեթանոսաց, զի ճաշակեսցեն հեթանոսք զշնորհս և զողորմութիւն՝ որ եղեն ՚ի մէջ որդւոցն Իսրայէլի․ զի յորժամ ընթեռնուցուն նոքա զօրէնս, մեծասցի նոցա գիւտք օրինացն, կամեսցին նոքա դառնալ առ Աստուած, իբրև տայ ձեռն անթլփատութեան նոցա սեղանն՝ որ շինեցաւ ՚ի բոլոր վիմաց, զի չիցէ մխեալ ՚ի նոսա երկաթ։ Եւ զի ակնարկեսցէ, զի և հեթանոսաց տուեալ լինէին օրէնքն և սեղան ՚ի վախճան ժամանակի։ Զի ահա աւանիկ ՚ի սկզբանէ իսկ առ ինքեանս թողին զնոսա, զի թևակոխեսցին նոքօք․ վասն այսորիկ և ասէ․ “Շունք ուտեն և ՚ի փշրանաց սեղանոյ անտի տեառն իւրեանց և կեան„։

Եւ քանզի գործեցաւ նա ՚ի լուր խրատուն եգիպտացւոց ՚ի զգուշացուցանել անդ՝ զի մի մեղիցեն, ոչ կաց մնաց նա մինչև յայսմ միայն․ զի որ միանգամ զխրատ զոր լուեալ էր նոցա, թէպէտ և մեծամեծք էին, սակայն ոչ խռովեցուցանէին․ վասն այսորիկ ասէ ցնա․ “Եթէ ոչ լուիցես դու ձայնի տեառն այ քո, ածցէ տէր ած ՚ի վերայ քո„․ ոչ դադարեաց․ “Այլ և զամենայն ախտս չարչարանաց՝ որ չիցէ գրեալ ՚ի գիրս օրինացս այսոցիկ„․ իբրև զայն՝ զի ասէ, եթէ “Ահա աւասիկ ես հաստատեմ ՚ի վերայ ձեր չարիս, և նիւթեմ ՚ի վերայ ձեր զխորհուրդս բարկութե„։ Զոր օրինակ և գործեցաւ իսկ արդեամբք։ “Զի եթէ, ասէ, արարածս նոր հաստատեսցէ ած, և բացցէ

երկիր զբերան իւր և կլցէ զնոսա ,, , այլովքն համեմատ գրեմ։ Զի յորժամ լուիցէ նա զպատուհանն բանիւ , և ընկալցի զպատիժս պատուհասից արդեամբք , խրատեսցին նոքա պահել զպատուիրանս ։ " Եւ զայլ ախտս չարչարանաց , ասէ , որ ոչ իցէ գրեալ , ածցէ 'ի վերայ քո ,, ։ Եւ եթէ առ չարիսն ունի ա̃ծ յաւելուլ 'ի վերայ խրատուն առաջնոց՝ որ չիցէ գրեալ , քանի՞ ևս առաւել առ արդարսն ունի ա̃ծ յաւելուլ զբարիս՝ զոր ինչ ակն ոչ ետես , և ունկն ոչ լուաւ , և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ ։

Իսկ զի ասէ "Հարցէ[1] զքեզ տէր ա̃ծ քո 'ի բոց և յայրուածս ,, ․ հեբրայեցի ասէ ․ "Ի սաստուկ սաստկացեալ ջերմամբ ,, ։ Եւ զի ասիցէ "Ընդ մի ճանապարհ եկեսցեն 'ի վերայ քո թշնամիք քո , և ընդ եւթն ճանապարհ փախիցեն յերեսաց քոց ,, ․ յաւուրս Դաւթայ և Եզեկիայ ։ Եւ իբրև մեղան նոքա՝ դարձաւ եղև 'ի վերայ նոցա յետս ընդդէմ ․ զի փախեան նոքա ընդ եւթն ճանապարհ յերեսաց թշնամեաց իւրեանց ։ "Սերմն բազում հանցես , ասէ , և սակաւ ինչ ժողովեսցես ,, ․ այն իսկ է՝ զի ասէ ․ "Քոււս սերմանեսցես , և արասցես գրիւ մի , և դարձուսցէ զքեզ տէր ա̃ծ անդրէն յերկիրն եգիպտացւոց հազարաւոր զօրօք ,, ․ այս ինքն թշնամեաց՝ որ գերեն զքեզ ։ Եւ զի ասէ "Ո՞չ ետ ձեզ տէր սիրտ գիտել , և աչս տեսանել , և ականջս լսել ,, ․ յայլ բարբառ ասի այս ․ այս ինքն ետ ձեզ ․ զի ասէ իսկ զկնի նորա , եթէ "Համդերձք ձեր ոչ մաշեցան և կօշիկք ձեր ,, և այլն ևս ։

Իսկ զի ասէ "Պաշտեցին նոքա զաստուածս՝ որ ոչ գիտացին նոքա ,, ․ այս ինքն յերկրպագութի ․ այն իսկ է զի ասէ ․ "Բաժանեաց ետ զնոսա ա̃ծ հեթանոսաց ,, ։ Փոխանակ այնր՝ զի ասէ "Ոչ եթէ ընդ ձեզ միայն կացուցանեմ զուխտս զայս , այլ և ընդ ամենեսին որ աստ իցեն ,, ․ հեբրայեցի , "Այլ և ընդ այնոսիկ որ չիցեն աստ ընդ ձեզ ,, ․ այս ինքն ընդ այնոսիկ որ ոչն իցեն ծնեալ ։ Այն զի ասէ , եթէ "Եղիցին ցրուեալք քո ,, ․ եղև յաւուրս Զօրաբաբէլի ։ Եւ զի ասէ "Եղիցին երկիւղք 'ի վերայ քո պղնձի ,, , յաւուրս

1 Յօրինակին հարցցէ ։

Աքայաբու ։ Եւ զի ասէ “Մի ՚ի ձէնջ հալածիցէ զհազարս ”, յաւուրս Գեդէոնի և Դաւթայ ։ Եւ զի ասէ “Նախանձեցուցի զձեզ յազգս անպատուս ”, վասն ազգին քրիստոնէից . այն է զի ասէ . “Օրհնեցէք հեթանոսք ժողովուրդ նորա ”։

“Ի ժամանակի իբրև բաժանէր , ասէ , բարձրեալն զազգս ամենայն , և սփռէր զորդիս մարդկան , կացոյց զսահմանս հեթանոսաց ՚ի թիւ որդւոցն Իսրայէլի ”. բայց հեբրայեցի , “Ըստ թուոյ որդւոցն Իսրայէլի ”։ Վասն զի իւթանասուն լեզու բաժանեցան հեթանոսք ըստ նմանութեան իւթանասուն ոգւոցն՝ որ իջանէին յԵգիպտոս ։ Բայց դարձեալ կացոյց սահմանս հեթանոսաց , վասն եւթն ազգացն՝ որ բաժանեցան ՚ի ժառանգութիւն ըստ թուոյ որդւոյն Իսրայէլի ։ Եւ զի սահմանեցան դարձեալ հեթանոսք ՚ի ձեռն երկոտասան առաքելոցն ։ Զի դարձեալ միւսանգամ յերկրի զկռապաշտութիւն փայտեղէն քարեղէն կռոցն նոքա մի՛ ելցեն ։

Փոխանակ այնր՝ զի ասէ , թէ “Տէր արգել զնոսա ”. հեբրայեցի ասէ , “Արհամարհեաց զնոսա , և թշնամիք մեր վրէժխնդիրք մեր ”. այն է զի ասէ . “Սոքա ժողովուրդ են ոյ ”։ Եւ զի ասէ “Բուռն հարեալ ունիցի ձեռն իմ ՚ի դատաստանի իբրև զլուծ կշռոց , զի չափիցէ նոցա և թշնամեաց նոցա ”, որպէս Մովսէսն զԱմաղէկն և զԻսրայէլ . խորհուրդ խաչին՝ որ հատուցանէ իւրոցն և թշնամեացն իւրոց ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Եւ ընդ նմա ՚ի բիւրոց սրբոց ”. հեբրայեցի ասէ “Եւ գայ նա ՚ի մեծ սրբութենէ ”. այս ինքն ՚ի լեռնէ անտի ՚ի Սինէ . այն է զի ասէ . “Ի տեղի ուր հասեալ կաս դու ՚ի վերայ նորա , սուրբ է . և յաջմէ նորա հուր կիզելոյ ”։ ‘Նշան ետ մեզ , այն է հուրն՝ որ ՚ի գլուխ լերինն երևեցաւ ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Նոքա հասանեն յոտս քո ”. հեբրայեցի ասէ , “Եւ նոքա երթան և յոտս նորա , և ընդունին ՚ի բանից անտի նորա զօրէնս՝ զոր պատուիրեաց Մովսէս ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Եւ եղիցի ՚ի մէջ Իսրայէլի նշան , և եղև ՚ի մէջ Իսրայէլի իբրև զթագաւոր ”. վասն նորին Մովսիսի ասէ , ՚ի ժողովել իշխանացն ժողովրդոց ՚ի միասին ազգօքն հանդերձ Իսրայէլի ։

Օրհնեաց Սահակ զՅակովբ 'ի յերկրին քանանացւոց։ Օրհնեաց Յակովբ զերկոտասանսն յերկրին եգիպտացւոց, զի ցուցցէ եթէ Յուդայէ է ընտրութ̃ի թագաւորութ̃ե. և զի քաջալերեսցէ զնոսա ելանել նոցա յերկրէ անտի եգիպտացւոց։ Եւ Մովսէս յանապատի անդ օրհնութ̃ք իւրովք. զի զօրացուսցէ և յորդորեսցէ զնոսա 'ի մտանելն նոցա յերկիրն պարգևաց, և յերկիրն եգիպտացւոց մի՛ դարձցին նոքա։

Օրհնութ̃ք Մովսէսի 'ի վերայ որդւոցն Իսրայէլի երկոտասանիցն։

Գործեաց ստուգութիւնն 'ի ժամանակ խրատու որդւոյն արդարոյ մինչև ցայս վայր։ “Կեցցէ, ասէ, Ռուբէն„։ Եւ օրհնութիւնք Յակովբայ, “Ժողովեցարուք զի պատմեցից ինչ ձեզ զինչ պատահելոց է ձեզ յաւուրս յետինս ժամանակաց„։ Իբրև կիսուց 'ի նոցանէ անէծք են, ընդէ՞ր եղև Մովսէս հակառակ ընդդէմ Յակովբայ, յայնմիկ՝ զի ասէ՝ բայ “Կեցցէ Ռուբէն„։ Բայց ոչ եթէ զօրհնութ̃իս նորա փոխէ, այլ զանէծս նորա։ Սակայն և ոչ արժան իսկ էր Մովսիսի անիծիւք սկսանել առ Ռուբէն. զի պարտէր նա նմա զվարձս խրատուն նորա՝ որ եղև առ Յովսէփ. վասն այսորիկ իբրև աղօթիւք ասաց. ասէ “Կեցցէ Ռուբէն և մի՛ մեռցի„։ Զի 'ի ժամանակին իբրև մեղաւ Ռուբէն, գիտացին զնմանէ հայրն և եղբարք նորա։ Իսկ իբրև արդարացաւ նա Յովսէփաւ, ոչ ոք գիտէր զնմանէ. բայց ա̃ծ որ սրտագէտն է։ Եւ զի գիտէր ա̃ծ՝ եթէ կորզէ նա զՅովսէփ 'ի ձեռաց նոցա, ոչ դիպեցոյց զնա անդ 'ի ժամանակի իբրև վաճառէին զնա. վասն այսորիկ ոչ ծածկեցաւ ապաշխարութ̃ի նորա. այնմիկ՝ որ թէպէտ բաժակաւ ջուր ցուրտ տացես դու յանուն նորա ծառայոյ՝ ոչ զրկէ զքեզ։ Այլ կարաց ոչ Ռուբէն հանել զՅովսէփ 'ի գբոյ անտի. զի խորհուրդք եղբարցն Յովսէփու յայնմ ժամու սպանման էին. և եթէ էր նորա մեռեալ, ազգ մի ընջեալ լինէր 'ի թուոյ անտի երկոտասանիցն։ Վասն այսորիկ “Կեցցէ Ռուբէն„. վասն զի կամեցաւ նա կեցուցանել։ “Եւ եղիցին թիւք նոցա 'ի համար ազգաց„. զի խորհեցաւ նա պահել զազգ մի թուովք իւրովք։

Եւ տես իսկ Մովսէս՝ եթէ ընկալաւ զաւակ նորա ըզպատիժս պատուհասից իւրոց, Դադան և Աբիրոն որդիք Եղիաբու որդիք Ռուբէլայ, ետ նմա կեանս. և այն Յակովբայն ոչ խափանեցաւ, և ոչ շնորհքն՝ որ եղեն առ Յովսէփ՝ զրկեցան ։

Որդ Մովսէս ասաց նախ 'ի վերայ Ռուբէլի վասն անդրանկութեցն. ապա 'ի վերայ Յուդայի վասն թագաւորութեց. և ապա 'ի վերայ Ղևեայ վասն քահանայութեն. ապա 'ի վերայ Բենիամինի վասն տեղւոյն թագաւորութե և քահանայութեան. ապա 'ի վերայ Յովսեփու դարձեալ վասն թագաւորութեն ։ "Եւ զայս, ասէ, ասաց Յուդայի" զկնի այնր Ռուբէլայն ։ Եւ յայսմիկ զի ած յարեաց և խառնեաց զնա ընդ նմա, յայտ է՝ թէ և զնա ևս 'ի չար իրաց ընչէ անցուցանէ նա. այս ինքն յայնմանէ, զի եմուտ Բենիամին փոխանակ ընդ նորա ։ Եւ վասն զի գողացաւ Յուդայ 'ի քաղաքէ անտի յանդրանիկ քաղաքացն՝ որ տասանորդեցաւ, գողացեալ եղև նա 'ի թագաւորութէ անտի Յուդայ զքառասուն ամ ։ "Եւ 'ի ժողովս նորա, ասէ, ժողովեսցին, զի ձեռք նորա ընտրեսցեն նմա. ինքն զինքն դատիցի". լսի այս և վասն այնր՝ զի բարձաւ թագաւորութին Բենիամինի, և եմուտ Յուդայն. և վասն դարձին որ 'ի Բաբելոնէ, զի յելանելն նորա անտի նա թագաւորեաց ։ Բայց հեբրայեցի փոխանակ այնր՝ զի ասէ "Եւ 'ի ժողովս նորա ժողովեա զնա", "Հան զնա" ասէ. այս ինքն տիրեցո զնա ։ Եւ փոխանակ այնր՝ զի ասէ "Ձեռք նորա ընտրեսցեն նմա, և օգնական 'ի թշնամեաց իւրոց լեր նմա". հեբրայեցի ասէ. "Ձեռք նորա խնդրեսցեն ըզվրէժ նմա 'ի թշնամեաց իւրոց, և օգնականք և պաշտպանք եղիցին նմա" ։

Որդելաւ Շմաւոն յորհնութենէն, զի մի արդելցէ նա զբազումս 'ի յորհնութենէ. և եղև նա 'ի կողմ անիծչացն, զի մի ընկալցին բազումք զանէծ ։ "Զայր, ասէ, անօրէն որդիք իւր արդարք անիծցեն". զի վասն նորա եղեն նոքա նախատ յաշխարհի. բայց ստուգութին [1] իբրև խորհրդիւ անէծ զՇմաւոն 'ի բերան

1 Յօրինակին զտպագրութեանն ։

Մովսիսի, յայնմիկ՝ զի զօրհնութիւնն Ղեւեայ հնա-
րեցաւ արար զնա անէծս Շմաւոնի։
“Խորտակեա դու, ասէ, զզօրութիւն թշնամեաց
նորա„ ասաց վասն Ղեւեայ։ Զի թէպէտ եւ կատարի
այս 'ի վերայ Մովսիսի, որ կոտորեաց նա յանցս Յոր-
դանան գետոյ զթագաւորսն ամուրհացւոց, սակայն եւ
ոչ առ Փենեհէս օտար է այս, այն որ ցցեաց զտէգն
իւր 'ի քամակ Զամբրեայ նահապետին շմաւոնեանց
գնդին՝ թշնամւոյն Ղեւեայ։ Եւ եթէ ասիցես, ընդէ՞ր
ոչ քաւեաց Մովսէս զՇմաւոն որպէս զՌուբէն, յիշեա
դու՝ զի սկիզբն երազոյն Յովսեփու ամենայն ընդդէմ
Ռուբէնի անդրանկան էր. եւ փոխանակ զի նա ատեա-
ցէ աւելի քան զեղբարսն իւր, աւելի քան զամենեսին
սիրեաց զնա։ Արդ տես դու՝ զի որպէս Յովնաթանն
յաղթեաց նախանձու եւ ատելութե̃ տանն Կայենի,
ջանացաւ ապրեցուցանել զՅովսէփ, եւ ոչ կարաց։ Եւ
զի ետես Մովսէս զլալիւնն եւ զարտասուս Ռուբէնի
'ի վերայ գբոյն Յովսեփու, քաւեաց զնա։ Կամ վասն
Զամբրեայ ոչ օրհնեցաւ Շմաւոն։ Զի զոր օրինակ
Յակոբ հան զՌուբէլ 'ի թուոյ անտի ազգաց մինչեւ 'ի
Մովսէս, զի ած խառնեաց զնա, սոյնպէս վասն Նա-
քովրայ յապաղեալ խափանեցաւ թագաւորութի̃ն
Յուդայ 'ի Նմանէ մինչեւ 'ի Դաւիթ։ Սոյնպէս եւ
պատճառքն՝ որ մերժեցին զՇմաւոն, չէին սակաւ
ինչ. զի քսան եւ չորք հազարք սատակեցան 'ի պատ-
ճառս նորա։ Արդ թող նա, զի մի՛ եկեսցեն 'ի մէջ
յանցանք նորա, եւ անիծիւք նզովեսցի նա։ Կամ
վասն այսր ոչ օրհնեցաւ Շմաւոն 'ի Մովսիսէ, զի
կացցեն մնասցեն 'ի վերայ նորա անէծքն Յակովբու
հօր իւրոյ։ Եւ եթէ ասիցեն՝ թէ ահաւանիկ Ղեւի
ընկեր նորա օրհնեցաւ, այլ Ղեւի ելոյծ զանէծս հօր
իւրոյ գործով նախանձուն իւրով 'ի Քորեբ լերին.
զի զեղբարսն իւր նա ոչ ծանեաւ։

“Կատարումն քո, ասէ, եւ լոյս քո առն արդարոյ„.
այս ինքն գիտութի̃ն քո եւ ճշմարտութիւն քո իբրեւ
առն կատարելոյ։ “Փորձեցի զնա, ասէ, 'ի վերայ
ջուրցն հակառակութե̃, զի արբոյց նոցա. եւ վասն
զի զհայր իւր եւ զմայր իւր ոչ ծանեաւ, պահեցին
նոքա զպատուիրանս քո„. զայն ինչ՝ որ ասացաւն նո-

ցա գործել, եթէ «Հարէք սատակեցէք, ասէ, իւրաքանչիւր զեղբայր իւր»: Վասն այսորիկ «Ուսուցեն զիրաւունս քո Յակովբայ», զի մի մեծասցին նոքա, և երկու՝ զի նոցա վայելէր ուսուցանել: Որովհետև ուսուցին նոքա, «Դիցեն խունկս բարկութեան քո ՚ի հանգիստ», յորժամ անցանիցէ Իսրայէլ զվարդապետութեամբ նոցա: «Եւ կատարումն ՚ի վերայ սեղանոյ քո», նոյն իսկ է: Եւ որպէս և նոքայն ոչ ծանեան զհարս իւրեանց, «Խորտակեա և դու զզօրութիւնս թշնամեաց նորա», ՚ի վերայ փղշտացւոցն՝ որ խորտակեցան առաջի Սամուէլի որդւոյ Ղևեայ. և Յոյնքն դարձեալ, զի ոչ կացին առաջի տանն Յուդայ Մակաբէի:

Եւ ցԲենիամին ասէ. «Սիրեցեալն ՚ի տեառնէ բնակիցէ յուսով. և Աստուած հովանի իցէ ՚ի վերայ նորա, և ՚ի մէջ ուսոց իւրոց հանգուսցէ զնա». քանզի Երուսաղէմ միջնորդ է սահմանաց, և հանգիստն անդ է՝ ուր Հռաքէլն մեռաւ ՚ի սահմանս Բենիամինի:

Զ Յովսէփ օրհնեաց Մովսէս աւելի քան զՅակոբ զօրհնութիս զերկնից և զերկրի և զանդոց և զցօղոյ և զարեգական և զլուսնի և զդրախտի և «Ի գլխաւոր լերանց արևելեց». հեբրայեցի ասէ, «Եւ ՚ի քաղցրութենէ լերանց առաջնոց»: «Անդրանիկք, ասէ, զուարակաց գեղ նորա». փոխանակ մեծամեծ պարգևացն՝ զոր մատուցանէ նա իբրև զթագաւոր, և ոչ եթէ ուլս և ամիկս իբրև զտնանկս և զաղքատս. կամ վասն պարգևացն զոր առնու նա ՚ի ժողովրդենէ անտի: Բայց հեբրայեցի ասէ. «Իբրև զանդրանիկս զուարակաց գեղեցիկ է նա, և եղջերք նորա իբրև եղջերք միեղջերոյ». վասն թագաւորութեանն՝ զոր թագաւորէ նա:

Բայց դարձեալ, նա՝ թէ ունի և տիրէ, մեկնէ զնա յասել իւրում, թէ «Այս բիւրաւորք Եփրեմի». Յեսու որդի Նաւեայ, որ կոտորեաց զբիւրս հեթանոսաց, որ կոտորեաց զհազարս Գեդէոն յազգէ անտի Մանասէի. իբրև զայն՝ զի ասէ «Ետուն Դաւթայ զբիւրս, և ինձ զհազարս. և նորա է արքայութի»: Սոյնպէս և Եփրեմի վասն բիւրուցն: Բայց դարձեալ, «Եղջերք նորա իբրև եղջերք միեղջերոյ», զի ոչ ՚ի վե-

րայ միեղջերոյ լուծ, և ոչ 'ի վերայ Եփրեմի հնազանդութի: “Եւ նոքօք զհեթանոսս խեթկեսցէ”, իշխանութբ անձին իւրոյ. Եւ զի ասէ “Մինչև 'ի ծագս երկրի”, զի յայտ արասցէ՝ զի եթէ նոքա արդարասցին, 'ի նմանէ չիք ինչ արգելումն ինչ 'ի ծագս երկրի: “Այս բիւրաւորք Եփրեմի”. զի նա թագաւորեաց, այս ինքն Յորոբովամ: Եւ զի ոչ ցուցցէ՝ թէ յաւուրսն՝ յորում թագաւորէ Յորոբովամ, պատատի 'ի նմանէ եղբայրն իւր լինել ընդ Հռոբովամու: Իբրև ակնարկէ վասն պատուոյ փառացն, որ լինէր նմա վասն իշխանութե տէրութե զոր առնոյր նա 'ի վերայ եղբարց իւրոց, ասէ “Այս բիւրաւորք Եփրեմի, և այս հազարաւորք Մանասէի”:

“Ուրախ լեր Զաբուղոն յելս քո”. այս ինքն 'ի վաճառս քո: Յորոշելն իւրում 'ի վերայ ծովու, զի 'ի վերայ նաւահանգստացն բնակեալ նստէր նա 'ի շաւեղս հեթանոսաց. մուտս արմտեաց՝ որ մտանէին նմա 'ի նաւաց անտի. զի յամենայն ազգաց հեթանոսաց առնոյր նա և զպտուղ տուրեւառ բազում աշխարհաց. “Վասն այսորիկ զկաթն հեթանոսաց ծծեսցէ նա”:

Բայց Իսաքար, “Յարկս քո գեղեցիկ բնակութբն իւրով”. հեթանոսքն՝ որ շրջին 'ի ծովու անդ, ուխտս ուխտիցեն նաւահանգստին. վասն զի զլրութիւն ծովուն դիւիցեն նոքա: Տեարք լերին, և նաւք՝ որ թաղեալ են աւազով յորժամ թափէին զերանութիւնս, բառնային աւազ և գնային՝ զի մի տապալիցին: Բայց հեբրայեցի, “Նաւք որ կայցեն 'ի վերայ աւազոյ, և հեթանոսք 'ի լեառն անդր կարդայցեն զմիմեանս. զի ժամադիր լիցին, և երթիցեն 'ի նաւահանգիստն տանն Իսրայելի, և զոհեսցեն անդ զտուրս ողորմութե իւրեանց”: Եւ դարձեալ. հեթանոսք 'ի լեառն անդր կարդասցեն ըստ սովորութե նաւավարաց՝ որ երթան և կարդան, եթէ յոր քաղաք երթայցեն:

Իսկ “Անդ զոհեսցեն զզոհս արդարութե”. Զաբուղոն և Իսաքար, զի լինի հաւասարութի միաբանութե յերկրի նոցա. այս ինքն՝ զի մեծանան յղփութբ կարօտեալք, և յագին լիութբ քաղցեալք: Ընդէր ասէ: Այլ քանզի լիութիւն մեծութե ծովուց

դիւեն նոքա ։ Բայց դարձեալ հեթանոսք 'ի լեառն անդըր կարդայցեն . այս ինքն 'ի տեղւոջ՝ ուր յարկքն Խաքարու էին , որ անցանէին ընդ ծով և հային ընդ լեառնն Խաքարայ . զի անտի ելանէր նոցա օդ խաղաղութեան , և լինէր նոցա ցածուցմն և դադարուցմն հանգստեան ։ Եւ քանզի 'ի հանդիպէ անտի նորա գըտանէին հեթանոսք հանգիստ նաւաց իւրեանց , իբրև խոտորէին անդ հանգչել , ելանէին 'ի լեառն զոհել ։ Եւ քանզի հրէութն չառնուին յանձն աշակերտել զոհել նոցա յԵրուսաղէմ , ոչ տային նոցա թոյլ՝ զոհել դիւաց , այլ անուանն այ ։ Եւ զի յանձն առնուին նոքա , յայսմիկ ասաց Մովսէս վասն զոհից նոցա՝ թէ արդարութն էին ։ Եւ յայնմիկ՝ զի յորժամ ելանէին բնակիչք ծովուն 'ի լեառնն 'ի յարկս Խաքարու գնէին և վաճառէին , թէ զլիութն մեծութե դիւցեն նոքա . այս ինքն բնակիչք աշխարհին ։ Խառնեաց ած զանէծս 'ի բերան Յակովբու , և ցանեաց 'ի մէջ ամենայն Իսրայէլի 'ի ձեռն Շմաւոնի և Ղեւեայ ։ Խառնեաց դարձեալ ած զօրհնութիս 'ի բերան Մովսիսի 'ի ձեռն Խաքարու և Զաբուղոնի , և սերմանեաց 'ի մէջ ամենայն հեթանոսաց՝ որ զոհեն զզոհս արդարութե ։

“Օրհնեալ է այն , որ ընդարձակեաց Գադայ յաշխատութե անտի „ . քառասուն ամ նախկին նա հանգեաւ , խորտակեաց զբազուկ և զիշխան յայն կողմ Յորդանան գետոյ , և յայս կողմն կոտորեաց նա ։ “Եւ ետես , ասէ , նա [1] 'ի նմա . զի նա նախ ժառանգեաց զառաջինն . զի անդ թաղեալ վիճակ մարգարէին „ . այս ինքն զի անդ թաղեալ է Մովսէս ։ Եւ փոխանակ այնր՝ զի ասէ “Ետես նա 'ի նմա „ . հեբրայեցի “Ետես այլ ես՝ որ արժան էր նմա , զի անդ թաղեալ է բաժին մարգարէութեան . և գայ նա զօրավարօք զօրացն ժողովրդեան „ . վասն Նափթեթայ ։ “Զարդարութիս տեառն գործեաց „ . զի մատոյց նա զդուստր իւր պատարագ ։ “Զիրաւունս և զօրէնս նորա 'ի մէջ Իսրայէլի „ . այն՝ իսկ է՝ որ երթան դստերքն Իսրայէլի տարուօջէ 'ի տարի , և լան վասն դստերն Նափթեթի ։

1 Յօրինակին նախ նմա . ուղղեցաւ ըստ յաջորդին ։

“Դան կորիւն առեւծու„, որդի ՚ի Մանթանեայ ՚ի թագաւորութ̃է անտի Ովգ արքայի, դիէ զբարութ̃ի: Բայց դարձեալ “Դան կորիւն առեւծու„, Սամփսոնն. որ առնոյր աւար ՚ի Մենթենայ, այս ինքն ՚ի փղշտացւոց անտի:

“Նեփթաղիմ յագուրդ յագեալ, լցեալ բարւօք կամօք ա̃յ. ծով և հարաւ ժառանգութիւն նորա„: Եղև նա նաւահանգիստ ծովու, և բանակետղ ՚ի ցամաքի. վասն այսորիկ յագեցան կամք նորա ամենայն բարութ̃բ, և լի է օրհնութեամբ տեառն, և տայ նա զպատարագս բարիս, զի օրհնեաց նա գովութ̃բ զթագաւորս: “Նեփթաղիմ յագեալ կամօք„, վասն Բարակայ որ օրհնեցաւ, և Դեբովրայ:

“Օրհնեալ յորդիս Ասեր„, զի տասանորդէր. զի զամենայն զոր միանգամ տացես ինձ, տասանորդելով տասանորդեցից քեզ: “Եւ եղիցի, ասէ, ընդունելի կամքն յեղբարս իւր„. զի գտանին կամք նոցա առ նա: Եւ զի եմուտ Ղևի փոխանակ ընդ նորա, նա ոչ նախանձեցաւ. վասն այսորիկ օրհնեաց նա: Եւ զի ետ նա զօծումն իւր եղբօր իւրոյ, “Մխեսցէ ՚ի ձէթ զոտն իւր„. ցոյց թէ պարարտ է երկիր նորա և հզօր: Եւ քանզի քահանայութ̃ի և թագաւորութ̃ի էր՝ առաջնորդութ̃ի խառնեալ է ՚ի նմա, և հզօր է նա իբրև զերկաթ և զպղինձ՝ զի խառնեալ են ընդ միմեանս, ասէ ցնա. “Երկաթ և պղինձ կօշիկք քո„. զի կոխիցես զթշնամիս քո: “Որպէս աւուրք քո, ասէ, զի բազում իցեն, բազմասցի զօրութ̃ի քո„: Կամ զի երկիր նորա ապամացւոց երկիրն էր, ասէ “Մըխեսցէ ՚ի ձէթ զոտն իւր„: Եւ զի մերձ էր նա ՚ի կողմանս մարաացւոց, ասէ “Երկաթ և պղինձ կօշիկ քո„: Փոխանակ այնր՝ զի ասէ “Որպէս աւուրք քո և զօրութիւն քո„ և այլ և.ս. Հեբրայեցի, “Որպէս մանկութ̃ի քո, ծերութ̃ի քո„:

“Ոչ գոյ իբրև զա̃ծ Իսրայէլի, որ նստի յերկինս վասն օգնականութ̃ե քո՝ և մեծվայելչութ̃բ իւրով զբարձունս հնազանդէ. ա̃ծ նախ և ՚ի ներքոյ ըզբաւունս աշխարհի„. այս ինքն զպատերազմօղս: Իբրև զայն զԵսայեայն՝ զի ասէ “Հրամայեսցէ տէր ա̃ծ ՚ի վերայ զօրութեանց բարձանց ՚ի բարձունս, ՚ի վերայ

Թագաւորութե՛ց երկրի յերկիր ”: Փոխանակ այնր՝ զի ասէ “Օգնական իցէ քեզ տէր ա՟ծ քո, և ոչ եթէ 'ի սուր սուսերէ պարծանք քո ”. Հեբրայեցի, “Վահան է նա, ասէ, օգնականութեան քո, և սուր պարծանաց քոց ”:

Յակովբ զյանցանս Ռուբէնի յիշատակէ [1], վասն զի պղծեաց զանկողինս նորա: Իսկ Մովսէս վասն բարուք խրատուն՝ զոր ետ նմա վասն Յովսէփու, քաւեաց զմեղս նորա, և ած խառնեաց 'ի թիւ համարուց:

Յակովբ զՇմաւոնի և զՂևեայ դարձեալ զյանցանսն երկրորդէ. և զի՞նչ ասէ. “Ցրուեցից զնոսա ”: Դառնայ այնուհետև յօրհնութիւն Մովսէս, մեկնէ զնա գործովն՝ որ եղև 'ի Քորեբ լեառն, և ստուգէ զբանն Յակովբայ իբրև ցարդ չև ևս լեալ էին քահանայք: Զի միաբանեցին, ասէ, քահանայքն, և դիցեն խունկս 'ի բարկութե՛ քում. և զի ասէ բաժանեցից զնոսա. Ղևեայ ոչ տուաւ ժառանգութի՛ Շմաւոնի, զի սակաւ էր. ետուն նմա վերադիր յիւրաքանչիւր ժառանգութե՛է եղբօրն իւր:

Յակովբ վասն Յուդայի ասէ. “Ի սպանմանէ, որդեակ, ելեր ”. վասն այնր Թամարայն և Յովսէփու: Մովսէս ասէ. “Լուր, տէր, ձայնի Յուդայի, և 'ի ժողովս նորա ժողովեա զնա ”. յայտ առնէ զգերութի՛ նորա: “Ձեռք նորա ընտրեսցեն նմա ”. զի ինքն յինքենէ թագաւորեսցէ:

Եւ Յակովբ ասէ Զաբուղոնի և Իսաքարու վասն ժառանգութե՛ նոցա. մարգարէացաւ՝ զի Զաբուղովն 'ի նաւահանգիստ բնակեալ էր, և Իսաքար 'ի ծովեզերի և 'ի լերին. և Զաբուղոնի դարձեալ 'ի նմին լերին մինչև 'ի Սիդոն: Մովսէս թարգմանէ զնա. “Ուրախ լեր, ասէ, Զաբուղոն, յելս քո. Իսաքար, յարկս քո. հեթանոսք՝ որ առ լեառն՝ կարդասցեն ”. և այլ ևս:

Յակովբ ասէ. “Դան դատեսցէ զժողովուրդ իւր ”, վասն Սամփսոնի: Մովսէս մեկնէ զնա. “Դան կորիւն առիւծու ”. որդի է 'ի Մենթանոյ:

Յակովբ վասն Գադայ ասէ. “Ընդ աւազակս ել-

1 Յօրինակին յիշատակէ:

ցէ, և նա առաջնորդեսցէ գնացից նոցա ”. քանզի 'ի ժամանակի իբրև ժառանգեցուցանէր Մովսէս զՌուբէն և զԳադ, ասաց՝ թէ անցէք առաջի եղբարց ձերոց, և հարստութի վերջնոյն 'ի զօրութի առաջնոյն գտեալ լինէր : Մովսէս մեկնէ զնա. “Օրհնեալ այն՝ որ ընդարձակեաց Գադայ ” :

Յակովբ վասն Ասերայ ասէ. “Ի պարարտութեան հացի, և համբարակ դնէ զնա թագաւորաց ”: Մովսէս թարգմանէ զնա. “Եւ եղիցի, ասէ, ընդունելի յեղբարս իւր, և մխեսցէ 'ի ձէթ զոտն իւր ”. ցոյց՝ թէ պարարտ է երկիրն նորա և հզօր :

Յակովբ վասն Նեփթաղիմայ ասէ. “Հրեշտակ թեթև երագութեամբ ”: Մովսէս թարգմանէ զնա, “Նեփթաղիմ յագեալ կամօք, և տայ զխօսս՝ զի օրհնեաց նա զթագաւորս ” :

Յակովբ վասն Յովսէփայ յայտ առնէ՝ թէ ոխացան ընդ նմա եղբարք իւր, և օրհնէ զնա օրհնութի զերկնից և զերկրի և զանդոց [1], իբրև յայտ առնէ եթէ մինչև յոյս անդր մշտնջենաւոր բարձանց մինչ 'ի դրախտն անդր : Մովսէս թարգմանէ զնա, և օրհնէ զնա աւելի քան զՅակովբ՝ օրհնութի զերկնից և զերկրի, զարեգական և զլուսնի և զդրախտի, իբրև յայտ առնէ՝ եթէ թագաւոր լինելոց է 'ի նմանէ : “Եղջերք նորա, ասէ, իբրև միեղջերոյ եղջերք. այս բիւրաւորք եփրեմի ”. զի թագաւորէ նա :

Յակովբ զԲենիամին գայլ յափշտակօղ դնէ վասն իրաց հարձին, կամ վասն Ամաղէկայն և Շաւուղի : Իսկ Մովսէս ասէ. զամենայն աւուրս 'ի մէջ ուսոց իւրոց հանգստեան, որ էր յԵրուսաղէմ. զի նա ինքն է 'ի մէջ սահմանաց՝ ուր Հռաքէլն մեռաւ 'ի սահմանըս Բենիամինի :

Յօրինակին զանդընդոց :

ԳԼՈՒԽ Դ

«Եւ ասէ տէր ցՄովսէս. Ել դու 'ի լեառն, և նայեաց տես զամենայն երկիրն քանանացւոց, և ժողովեաց դու առ հարս քո յազգի քում»: Են ոմանք՝ որ ասեն թէ անցուցանելով անցոյց ա̄ծ զերկիրն առաջի նորա, և ետես նա զնա: Այլ չէ ինչ նման այս. ոչ եթէ զի ա̄յ դժուարին է այս, զի այն՝ որ ետ զգենուլ զփառս երեսաց նորա, նա ետ նմա աչս լուսաւորս իբրև զարեգական տեսանել զայն երկիր պարգևաց, որպէս զի ետես նա զնմանութիւն խորան ժամուն 'ի լերին անդ, և որպէս զի ետես նա զդրախտն փափկութեան 'ի Ճանապարհի անդ: «Ել դու, ասէ, 'ի լեառն անդըր և մեռիր»: Եւ ոչ ասաց նմա թէ ա̄ծ արարեր զիս, ոչ մեռանիմ. այլ ուրախ եղև նա ընդունել զմեռելութի պահելով զպատուիրանն, և ոչ ա̄ծութիւն անցանելով զպատուիրանաւն: Նա և Պաւղոս և Բառնաբաս՝ 'ի ժամանակի իբրև արարին զնոսա աստուածս, ոչ կամեցան թաքուցանել զա̄ծութիւնն զայնորիկ՝ որ զնոսայն առաքեաց. այլ յայտնեցին նոքա զա̄ծութիւն նորա, և ոչ թաքուցին զմարդկութիւնն իւրեանց. պատառեցին զհանդերձս իւրեանց և ասեն. «Եւ մեք, ասեն, իբրև զձեզ մարդիկ եմք»:

Փոխանակ այնր՝ զի ասէ «Եւ ել Մովսէս յԱրաբովթ Մովաբու». հեբրայեցի ասէ «'Ի դաշտէ անտի Մովաբու»: Եւ զի ասէ «Ոչ վատեցին աչք նորա, և ոչ թարշամեցան երեսք նորա». խորհուրդ աշխարհի նորոյ նկարեաց մեզ: Եւ զի ծածկեցաւ գերեզմանն Մովսիսի, զի մի եղիցի հայհոյութի 'ի վերայ ա̄յն նորա. մանաւանդ զի Աստուծոյ իսկ արժան էր թաղել զաստուածն. այս ինքն՝ այն Ճշմարիտն զայս, որ ըստ կրելոյն տուեալ էր: Եւ զի մի դարձեալ նուաղեալ գտցի մեծութին օրինաց յայնմ ժամու, զի տեսանէր ակնն գայթագղեալ զլոյսն զայն՝ որ սփռեցաւ 'ի վերայ երեսացն Մովսիսի, 'ի ժամանակի իբրև նուաղեալ շիջանէր առ սակաւ սակաւ: Կամ զի մի կանգնիցեն արձան 'ի վերայ գերեզմանի նորա,

և պագանիցեն նմա երկիր . կամ զի մի՛ եկեսցեն մո-վաբացիքն և հանցեն զոսկերս նորա և ցրուիցեն . զի մի՛ հեբրայեցիքն արտաքոյ կարգի պատուիցեն զնա , և հեթանոսք անարգեսցեն զնա ։ Փոխանակ այնր՝ զի ասէ “Մեռաւ Մովսէս , և թաղեաց զնա ա̃ծ „ . հեբրայեցի , “Մեռաւ Մովսէս ըստ բանի տեառն „ ։ Անուանդն Մովսիսի և թաղելն նորին՝ երկոքին ա̃յ էին ։

Ըտապեալ տագնապեալ զարհուրէին մարգարէքն և երկնչէին , իբրև հոգին՝ որ 'ի նոսա էր , 'ի ներքոյ այսր չարչարանաց չէր եղեալ ։ Զի ոչ եթէ ինքն 'ի նոսա փոփոխեալ լինէր , այլ զնոսա զկնի կամաց իւրոց ձգէր . զի պարգև էր նա՝ որ բնակեալ էր ընդ ազատութ̃ն . և զազատութ̃ին բանի ոչ վարէր նա . թէպէտ և խօսել զայն ինչ զոր կամէին նոքա՝ ստիպէր ոչ զնոսա , սակայն գործք՝ զայն ինչ զոր կամէին նոքա՝ բռնադատէր զնոսա 'ի հնազանդել զքեզ բնութեան մարգարէութեան իւրում . այլ ոչ հնազանդէր զազատութ̃ի նոցա բռնութ̃բ 'ի գործ պաշտաման իւրոյ ։ Նա և այս է , զի հնազանդեաց զբերանս մարգարէիցն խօսից իւրոց , զի ետես նա՝ զի հնազանդեցին նոքա զկամս իւրեանց օրինացն նորա , և որպէս բանից իւրոց զձայնս նոցա , և խօսից իւրոց զբերանս նոցա , սոյնպէս պարգևքն հաւատոցն նոցա , և հարցմունքն նորա վաստակոց նոցա , և յաղթութիւնն հօգւոյն՝ մարտից նոցա ։ Եւ զի միանգամ բնակեալ էր 'ի նոսա ա̃ծութիւնն , կայր 'ի վերայ նոցա և կարգ մարգարէութ̃ . թէպէտ և բնակեալ էր 'ի նոսա հօգին ծածկոյթ , սակայն տեղի տայր նա , զի մի՛ մարգարէութ̃ին խափանի , և զի մի՛ զրկեսցի ա̃ծութ̃ին յիւրոց անտի ։ Եւ եթէ զի յանդիմանեալ կշտամբեսցի փոքրկութ̃ին , և մի՛ տրտմեսցին . այլ վասն զի յայտ լիցի խառնեալ մեծութ̃բ , և ընդ նմա է՝ իբրև ամփոփէր հոգին զպարգևս 'ի նոսա ։ Եւ էր՝ որ սփռէր զնոսա արտաքս քան զնոսա , և զինքն նոցա ոչ յայտնէր . և էր՝ որ և այլոց ընդ նոսա յայտնէր , զի և մարգարէն եղիցի կատարեալ , և լսօղքն եղիցին փափագեալ . և ծանիցի մարգարէն՝ թէ շնորհաց է այս , և գոհասցէ զնմանէ ։ Գիտասցէ և լսօղն՝ թէ ստացուած է սա հասարակաց , և յանկասցի նմա ։

Մարգարէք վարուք իւրեանց առ հոգւոյն առաքեալ լինէին, և նա առ նոսա նշանօք հաւատարիմ լինէր։ Ցուցին մարգարէքն գործօք իւրեանց զչարչարանս վասն նորա. և հոգւոյն 'ի ձեռն նշանաց ըղպսակուամն պատերազմի. զի 'ի ժամանակի իբրև համբեր Մովսէս փափկասուն խիստ հովուութե̄ զքառասուն ամ, չարչարանքն էին նմա 'ի մարտ պատերազմի։ Այլ և դարձեալ եղև նա հրամանատար զքառասուն ամ մարդկեղէն խաշին։ Այս հատուցումն է այսորիկ՝ որ փախչէր նա 'ի Փարաւոնէ, մարտ պատերազմի եղեալ վասն ժողովրդեանն ա̃յ։ Եւ իբրու հարկանէր զծովն, և նա փախչէր յերեսաց նորա, այս փոխանակ իւր փախստեանն լինէր։ Սոյնպէս և ամենայն մարգարէքն ընդունէին զպսակն 'ի Հոգւոյն սրբոյ։

ԿԱՏԱՐԵՑԱՒ ԴՊՐՈՒԹԻՒՆ ՎԵՐԾԱՆՈՒԹԵԱՆ
ԱՐԱՐԱԾՈՑ ՄԵԿՆՈՒԹԵԱՆՍ

ՍՐԲՈՅՆ ԵՓՐԵՄԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ՅԵՍՈՒԱՑ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ՅԵՍՈՎԱՅ

ՈՐԴՒՈՅ ՆԱՒԵԱՅ

ԶՈՐ ԱՐԱՐԵԱԼ Է

ՏԵԱՌ՚Ն ՍՐԲՈՅ ԵՓՐԵՄԻ

ՅԱՆՁՆ եղև ժողովուրդն Յեսուայ տանել ժառանգեցուցանել նոցա զերկիրն պարգևաց։ Եւ խոկ և խոկ առաքեաց լրտեսս յԵրիքով, զի հզօրացուսցէ զփոքր թերահաւատութի՟ ժողովրդեանն։

Բաժանեաց զգետն. զի արկցէ զահ և զերկիւղ քանանացւոցն, զի մի՛ եկեսցեն մարտնչել ընդ նմա և կոտորեսցին 'ի սուր սուսերի նորա։

Թլփատեաց զժողովուրդն կրկնակի։

Կործանեաց զպարիսպն Երիքովի։

Քարկոծեաց զԱքար, և արար զխնամս ողորմուե՟ 'ի վերայ Ռահաբու։

Կոտորեաց զթագաւորսն քանանացւոց, զի ժըպրհեցան յանդգնեցան մարտնչել ընդ նմա։

Արար ողորմութի՟ գաբաւոնացւոց, զի երկեան և ապաւինեցան 'ի նա։

Արգել զարեգակն և զլուսին, զի տացէ զհաւանութի՟ քանանացւոց. կամ զի եթէ աշակերտեսցին նմա, կամ զի եթէ առցէ զտեղի 'ի գալոյ անտի մարտնչել ընդ նմա։

Նա զերկիրն պարգեւաց որ ՚ի յԱբրահամէն եւ այսր խոստացեալ էր նոցա. բաժանեաց ազգաց ժողովրդեանն, որպէս եւ հրամայեցաւ նմա։

Զայսոսիկ եւ որ սոցին նման են եւ որ ինչ եղեւ ՚ի ձեռն նորա՝ գրեաց։

Ի ՍԿԶԲԱՆ ԲԱՆԻՑ ԻՒՐՈՑ ԱՍԱՑ ԱՅՍՊԷՍ

ԳԼՈՒԽ Ա

“ՅԵՏ մահուն Մովսիսի ասաց տէր ցՅեշով պաշտօնեայ Մովսէսի ,,։ Զայս զի ասաց՝ եթէ “Պաշտօնեայ Մովսիսի ,,, խոնարհութիւն է Յեշովայ. քանզի 'ի ժամանակի իբրև հաւասարեաց զնա ա՟ծ ընդ Մովսիսի՝ ասէ ցնա, եթէ “Որպէս եղէ ընդ Մովսէսի, եղէց և ընդ քեզ ,,։ Բայց ոչ կամեցաւ համարել զանձն իւր գոնեայ աշակերտ Մովսիսի, այլ պաշտօնեայ Մովսիսի։ “Անց դու, ասէ, և ժողովուրդս այս ընդ Յորդանան ,,։ Եւ ամենայն գաւառ՝ զոր կոխեսցեն ոտք ձեր, ճշմարտեալ հաւատասջիք, զի լինի նա վիճակ ժառանգութե՟ ձերոյ, որպէս և խոստացայ ես Մովսիսի. զի յանապատէ անտի՝ որ եղերուքն դուք քառասուն ամ, և լեառնս այս Լիբանանու զոր տեսանեն աչք ձեր, և մինչև ցգետն մեծ Արածանի, եղիցի սահմանք ձեր։ Բայց ոչ կամեցան նոքա ժառանգել մինչև յԱրածանի. քանզի և ահա և յաւուրսն իսկ Դաւթի մինչև յանցս Արածանւոյ գետոյ կոտորեցին և հրձիգ արարին։ Բայց զի “Մի՛ ոք կացցէ առաջի ձեր զամենայն աւուրս կենաց ձերոց ,,. այլ և այնմ ազգի՝ որ ժառանգեաց զերկիրն 'ի ձեռն Յեսուայ, որ զկնի նորա գալոց էն, որ պահեն զպատուիրանս տեառն իբրև զԴաւիթ՝ խոստացաւ։ Եւ զոր օրինակ եղէ ընդ Մովսիսի զօրութե՟ք և նշանօք, եղէց և ընդ քեզ, և ոչ թողից զքեզ 'ի ձեռանէ, և ոչ անտես արարից զքեզ յամենայն մարտ պատերազմի, մինչ զի ժառանգեցուսցես զերկիրն ժողովրդեանն, որպէս խոստացայ ես աբրահամեանց հարց նոցա։ Բայց այսու ուխտիւ եղէց ընդ քեզ, որպէս եղէ

ընդ Մովսիսի, “Եթէ պահեսցես զամենայն օրէնս՝ զոր պատուիրեաց քեզ Մովսէս ծառայ իմ”. որպէս և ինքն իսկ Մովսէս պահեաց զնոսա։

“Անց Յեսու ցժողովուրդն. պատրաստեցէք ձեզ պաշար իւրաքանչիւր”։ Եւ զի՞նչ պիտոյ էր նոցա պատրաստութիւն, զի մանանայն մինչև ցայնժամ ոչ էր արգելեալ 'ի նոցանէն. այլ վասն զի ընդ գետն անցանէին նոքա, ետ նոցա հրաման աւուրբ յառաջ պատրաստել պաշար իւրաքանչիւր 'ի մանանայէ անտի, որպէս զի պարապորդք լիցին կալ և տեսանել զսքանչելիսն՝ որ լինելոց էր 'ի գետ անդ 'ի վաղիւ անդր։ Եւ զգունդն Ռուբէնի վառեաց ընդ իւր քառասուն հազար կուռ վառեալ. այլ զի գուցէ մնալոյն իւրեանց յայն կոյս Յորդանան գետոյ բեկցեն զսիրտս եղբարց իւրեանց։

Եւ զի առաքեաց երկուս արս, և լրտեսեցին զԵրիքով. Թէպէտ և առ 'ի քաջալերել ժողովրդեանն առաքեցան, այլ վասն Ռահաբու պոռնկի առաքեցան արբանեակքն յՅեսուէայ. զի 'ի դէմս բազմաստուած բազմախիղեխն Ռահաբու՝ որ 'ի ձեռն կարմիր նշանին՝ որ 'ի փայտն էր, միում[1] Աստուածոյ և միում առն համարեցաւ և անուանեցաւ, նկարագրեսցի խորհուրդ բազմապատկեր եկեղեցւոյ։ Զի 'ի ձեռն երկոտասան առաքելոցն Յիսուսի հանդերձեալ էր օտարանալ յամենայն կռոց և յամենայն չարեաց, և 'ի մի ա̅ծ բարի գործովքն՝ զոր ընտրեալն է իւր՝ ապաւինելոց էր։

Ռախաբ՝ որ իջոյց սպարանօք զառաքեալսն Յեսուայ ընդ պատուհան պարսպին, զխորհուրդն եկեղեցւոյ գրեալ նկարէր, այն որ զՊաւղոս առաքեալն Յիսուսի իջոյց վանդակաւ ընդ պարիսպն Դամասկոսի։ “Գիտացի, ասէ, զի մատնեաց տէր զերկիրս 'ի ձեռս ձեր”. և մեք և ամենայն բնակիչք երկրին քանանացւոց զահի հարեալ 'ի մեծ երկիւղի կամք յերեսաց ձերոց. վասն զի լուաք մեք զի բաժանեաց զջուրս Կարմիր ծովուն առաջի որդւոցն Իսրայէլի 'ի քառասուն ամէ և այսր, երկիրս այս ձեր է։ Եւ արդեւք

1 Միւս օրինակն միում յ̅ոյ և միում առն։

վասն զի ապաշխարեսցուք , ընակեցաք 'ի սմա մինչև ցայսօր • այլ յօրէ՝ զի բաժանեցաւ ծովն և կոտորեցան երկու Թագաւորքն ամովրհացւոց , զահի հարեալ դողացին սիրտք մեր , և ոչ մնաց 'ի մեզ շունչ ։ Եւ սակաւ ոք 'ի ձէնջ՝ եթէ անցեալ յայս կոյս միով փոքր գնդաւ՝ կարող էիք ունել զամենայն երկիրս քանանացւոց ։ Արդ ա՟ծն ձեր նա իսկ է յերկինս 'ի վերուստ • այնու զի իջոյց զհուր և զկարկուտ յերկնից 'ի վերայ եգիպտացւոցն ։ Եւ նա ինքն է յերկրի 'ի ներքոյ , զի բաժանեաց զներքին անդունդս ծովու առաջի ազգաց ձերոց ։ Արդ այսուհետև եկայք երդուարուք ինձ • մի 'ի կուռս և 'ի պատկերս Երիքովի զոր անարգեցի , այլ երդուարուք ինձ 'ի տէր՝ եթէ հաստուցանէք ինձ շնորհս երախտեացս այսոցիկ , և կեցուցանէք զիս 'ի ժողովրդեանն ձերում ։ Եւ որպէս կեցուցի ես զձեզ 'ի մէջ քանանացւոց , կեցուսջիք և դուք զիս և զհարս և զեղբարս իմ վասն հաւատոց նոցա , որ կարմիր նշանաւն 'ի պատուհանի կապեմ ես , և վասն դառնալոյն նոցա 'ի կռոց պատկերաց , և վասն հաւանութ՟ե նոցա՝ որ գալոց են 'ի մեծ հաւանութ՟ի ճշմարիտն Աստուծոյ ։

Ասեն ցնա , զի եթէ այսօր ոչ կարեմք մեք հատուցանել քեզ զշնորհ երախտեացն զոր արարեր մեզ • այլ յորժամ մատնէ տէր զերկիրն քանանացւոց 'ի ձեռս մեր , հատուսցուք քեզ յայտնապէս 'ի լոյսն արեգական զփոխարէնս շնորհիդ՝ զոր արարեր մեզ 'ի ժամս խաւարի • բայց միայն կապեսջիր 'ի պատուհանիդ քում զնշանն ։ Մի՛ զայլ գոյն՝ որ պատշաճ և պիտոյ է նշանի և ոչ խորհրդոյ • այլ զկարմիր նշանն՝ որ պատշաճիցի՝ յերկոսին դէմս ։ Եւ զի զգուշացուցին՝ եթէ որ ելցէ 'ի տանէ անտի յայնմանէ՝ ուր նը-շանն կապեալ է՝ և մեռցի , արիւն նորա 'ի գլուխ իւր , յայտ արար և եցոյց՝ թէ զոր օրինակ ամենայն որ արտաքս քան զտունն գտանէր , ոչ կարէր գտանել զկեանս ժամանակեանս • սոյնպէս և ամենայն՝ որ 'ի խորհուրդն անդր Քրիստոսի չհաղորդի , ոչ կարէ գտանել զկեանս յաւիտենից ։ Ի տանն Ռախաբու

1 Միւս օրինակն պաշտէսցի ։

կեանք ժամանակեան, և արտաքս քան զնա մահ ժամանակեան ։ Իսկ յեկեղեցւոջ գոն կեանք յաւիտենից, և արտաքս քան զնա դարձեալ մահն յաւիտենից ։ Եւ որ հանդուրժէր ժուժկալել 'ի կարմիր նշանն, 'ի ժամ կործանման պարսպացն ոչ երկնչէր նա ։ Սոյնպէս և որ 'ի խաչն հաւատայ 'ի ժամանակի զի կործանին և քակտին արարածք, ոչ զարհուրի և ոչ շտապի ։ Ի ժամուն զի կապէր Ռախաբ զնշանն 'ի փայտի, զխորհուրդ ժողովրդեանն՝ որ կապելոց էր զորդին միածին 'ի փայտի՝ նկարէր նա ։ Ո՞ Ռախաբ դուստր հեթանոսաց. զի մտանելովն իւրով՝ գրէր նկարէր զելանել այնոցիկ՝ առ որս երթայրն, մինչ չև խառնեալ էր ընդ ժողովուրդս նոցա. համ ընկեց զժողովուրդս նոցա ։ Եւ քանզի ոչ գրեալ անուն իւր 'ի համար բանակի նոցա, թուղթ ապահարզանի գրեաց և ետ բանակի նոցա ։

Արդ 'ի ժամուն իբրև առ նա զնշանն կարմիր 'ի ձեռն իւր, օտարացաւ նա 'ի կռոց պատկերաց. զի նկարեսցէ և նշանակեսցէ զխորհուրդ խաչին. զի ամենայն կուռք և պատկերք հանդերձեալ էին խափանել յամենայն հեթանոսաց ։ Ձեռք նորա կալան ընդ նշանն կարմիր, այլ ոչ մերձեցան 'ի զոհս դիւաց ։ Եւ 'ի ժամանակէն զի ներկեաւ [1] սէր նշանին 'ի սիրտ նորա, փարատեցաւ 'ի սրտէ նորա սէր բազում հոմանեաց՝ որ 'ի սրտի նորա տնկեալ կայր ։ Զգաստացոյց սրբեաց զանձն իւր, և սպասէր և դէտակն ունէր Յեշուայ կուսանի, զի նկարեսցէ զխորհուրդն եկեղեցւոյ, այն՝ որ սրբովքն և ընտրելովքն իւրովք սպասէ և դէտակն ունի Ճշմարիտ Յիսուսի ։

Արդ լրտեսքն չոգան պատմեցին որ ինչ դէպն տուաւ նոցա, բայց ոչ բեկին զսիրտս եղբարց իւրեանց իբրև զընկերս իւրեանց՝ որ ասէին թէ “Համարեցաք մեք յաչս նոցա իբրև մարախ„ ։ Այլ թէպէտ և դառն նեղութի պատահեցաւ նոցա, սակայն քաջալերեցին զժողովուրդն և ասեն. եթէ մատնեաց տէր 'ի ձեռս մեր. ոչ զերկիրս միայն, այլ և զամենայն երկիրն քանանացւոց. ահաւասիկ ուսաք և տեղեակ եղեաք,

[1] Միւս օրինակն անյա ։

զի և 'ի համբաւոյն մերմէ անգամ զահի հարեալ և 'ի դողման կան բնակիչքն քանանացւոց յերեսաց մերոց :

ԳԼՈՒԽ Բ

Զու արարին ժողովուրդն, և եկին հասին յափն Յորդանան գետոյ. բանակեցան զերիս աւուրս զգետովն, և այսր ոչ անցին. զի գուցէ թէ լուիցեն բնակիչք Երիքովի, երկիցեն բնակիչք Երիքովի և խնդրեսցեն զաջն խաղաղութե̃ Յեսուայ և կեցցեն : Եւ զի յաւելցէ և աճեցէ ա̃ծ զահ և զերկիւղ յամենայն ազգն քանանացւոց, զի մի՛ եկեսցեն մարտնչել ընդ զօրութե̃ն: Որ բաժանեաց զծովն կարմիր 'ի ձեռն Մովսէսի, յաւել բաժանեաց զգետն Յորդանան 'ի ձեռն Յեսուայ որդւոյ Նաւեայ. զի գիտասցեն և ծանիցեն զի եթէ գան մարտնչել ընդ զօրութե̃ն՝ որ բաժանեաց զՅորդանան առաջի Յեշուայ, կոտորէ զնոսա իբրև զամովրհացիս զօրութիւնն այն՝ որ բաժանեաց զծովն կարմիր առաջի Մովսիսի : Եւ վասն զի հանդերձեալ էր բառնալ[1] 'ի նոցանէ ամպն և սիւնն հանդերձ մանանայիւն, ցոյց նոցա զի յայսմ հետէ տապանակն կտակարանաց երթալոց էր առաջի նոցա : Ետ նոցա հրաման հեռանալ 'ի տապանակէ անտի իբրև երկուս հազարս կանգուն. վասն զի մեծաշուք արասցէ յաչս նոցա, և զի մեծաւ պատուով փառաւորեսցի սուրբ զօրութիւն որ բնակեալ էր 'ի նմա : Հրամայեաց նոցա դարձեալ սրբել զանձինս իւրեանց աւուրբք յառաջ վասն սքանչելեացն՝ որ լինելոցն էր 'ի Յորդանան գետ. որպէս զի նշանակեսցէ զխորհուրդն սրբութե̃, որ 'ի ձեռն Ճշմարիտ Յիսուսին տարածանելոց էր ընդ ամենայն ազգս ազգաց :

Եւ իբրև չուեաց խաղաց տապանակն կտակարանաց, և ժողովուրդն զկնի նորա, ասաց տէր ցՅեշով. "Յայսմ օրէ և անդր սկսայց,,, այս ինքն 'ի նշանէ աստի յայսմանէ, զոր առնելոց եմ ես 'ի ձեռն քո այսօր, "Սկսայց յարգել փառաւորել զքեզ յաչս ամենայն

1 Միւս օրինակն բաժանել. . . զամպն և զսիւնն :

Իսրայէլի ». զի գիտասցեն և ծանիցեն՝ թէ որպէս եղէ ես ընդ Մովսէսի 'ի բաժանել անդ ծովուն, սոյնպէս լինիմ ես ընդ քեզ 'ի բաժանել աստ գետոյդ:

Արդ տապանակակիրքն եկին հասին 'ի Յորդանան. և իսկ և իսկ իբրև հասին ոտք նոցա 'ի ջուր անդր, կացին և զտեղի առին ջուրքն, այս ինքն է բաժանեցան: Քանզի ջուրքն ստորինք՝ որ իջանեն[1] 'ի ծովըն արևմտից՝ հատան սպառեցան, և ջուրքն վերինք դարձան անդրէն զանձամբք. որպէս զի բացէ 'ի բաց պահեսցին[2] 'ի տեղւոջէ անտի ընդ որս անցանէին ժողովուրդն: Զի մի զահի հարեալ երկիցէ ժողովուրդըն վասն յողդողդմանն կուտակադէզ մերձաւորութեան ջուրցն վերնոց, իբրև 'ի տիկս արգելեալ կային: Բացէ 'ի բաց հեռացան յերեսաց նոցա, որպէս զի և ակամբ անգամ մի տեսցեն. զի քաջալերութեամբ վըստահասցին անցանել ընդ գետն: Բայց ոչ միայն քաղաքքն, որ նստէին յստորին ափն Յորդանանու՝ որ տեսին զցամաքել գետոյն՝ գիտացին եթէ բաժանեցան, այլ որ և զվերին կողմն նստէին՝ իբրև տեսին զանհաւան խաղաց բնութեան ջուրցն՝ որ յետս ընդդէմ գնայր՝ գիտացին եթէ բաժանելով բաժանեցաւ:

Մեծ սքանչելի էր այն, զի ցամաքեսցի ստորին կողմըն գետոյն. բայց ոչ էր իբրև զայն զարմանալի, զի մեծահոսան ջուրքն անդրէն կուտակեալ յետս դարձան, զի մի իբրև խաղասցէ ըստ իւրում սովորութեան, բազմասցի կուտակադէզ ջուրցն պարսպեալք, ելցէ և գերփեսցէ զքաղաքսն 'ի հեղեղատէ ջուրցն մթերելոց՝ որ 'ի հնէն և 'ի վեր նստէին. և իբրև դիմեսցեն դարձեալ ջուրքն իջանել ըստ իւրեանց գնացիցըն, յորդութեամբքն իւրեանց հեղեղատեսցեն զգեօղս և զագարակս՝ որ զներքնակողմն ափն գետոյն կարգեալ նստէին, դարձան ջուրք վերինք ընդ արևելս զի հեռասցին բացուստ 'ի բաց յԱրամ գեղջէն, որ էր առ կողմն Ճարթանուն[3], տեղի անցանելոյ՝ ընդ որ անցին ժողովուրդն: Եւ արգելան յորդաբուխ ջուրքըն Յորդանանու. զի գուցէ թէ ժողոված ջուրցն

1 Միւս օրինակն իջանէին 'ի ծովըն արևմտից:

2 Միւս օրինակն պահանջէսցին:

3 Միւս օրինակն Ծարթանայ:

կուտածոյ լինիցի ծով երկրորդ, և լինիցի փոսս վերնակողմանցն և ներքնակողմանցն. և զի ցուցցէ և յայտ արասցէ, զի ոչ յաւելան ջուրքն, վասն զի արգելաւ և զտեղի առ բղխումն ջուրցն։

Ասաց՝ թէ դարձան ջուրքն Յորդանանու 'ի տեղիս իւրեանց, և գնացին իբրև յառաջագոյն ափամբք ընդ ամենայն երկարութիւն գետոյն Յորդանանու վերուստ 'ի վայր։ Եւ զի ոչ միայն ազգքն հեթանոսաց, յորոց աւուրս բաժանեցաւ Յորդանան, գիտասցեն զբաժանել գետոյն, յաւել և եհան երկոտասան վէմս 'ի գետոյ անտի. զի տեսլեամբն իւրեանց լիցին քարոզք ամենայնի որ անցանէ՝ եթէ բաժանեցաւ գետն Յորդանան 'ի ժամանակին՝ զի ժառանգեցին հեբրայեցիք զերկիրն քանանացւոց, և տապանակ կտակարանացն երթայր առաջի ժողովրդեանն մինչև ցՅորդանան։ Իբրև էջ 'ի գետ անդր, կաց և զտեղի առ 'ի մէջ նորա, որպէս զի տեսլեամբ տապանակին կտակարանաց՝ որ կայր ընդ երեսս ջուրցն վերնոց, քաջալերեսցին փութասիրտքն և ծանծաղասիրտ կանայք և տղայք՝ յապահով յաներկիւղ անցանել ընդ Յորդանան։

Եւ իբրև անց ժողովուրդն ամենայն, քահանայքն տապանակակիրք՝ որ ընդ իջանել նոցա 'ի ջուրս անդր՝ բաժանեցան ջուրքն գետոյն, դարձեալ և ընդ ելանել նոցա 'ի ցամաք անդր դարձան ջուրքն Յորդանանու 'ի խոնարհակողմն անդր ընդ ճանապարհ ճապաղ գնացից իւրեանց։ Բայց ջուրքն գետոյն զի բաժանեցան վասն քանանացւոց, զի զահի հարեալ երկիցեն և մի կոտորեսցին 'ի սրոյ սուսերի Յեսուայ որդւոյ Նաւեայ. որպէս և ջուրքն ծովուն զի բաժանեցան վասն ամովրհացւոց, զի դողասցեն զանգիտասցեն և մի սատակեսցին. ոչ երկեան քանանացիքն, որպէս և ոչ ամովրհացիքն։ Եւ զոր օրինակ եկին ամովրհացիքն յետ ծովուն բաժանելոյ տալ զմարտ պատերազմի ընդ Մովսիսի և կոտորեցան, սոյնպէս և ժողովեցան քանանացիքն յետ բաժանելոյ Յորդանան գետոյ գալ միագունդ միահամուռ 'ի մարտ պատերազմի ընդ Յեսուայ և սատակեցան։

Արդ 'ի սմին յայսմ ժամանակի հրամանն Թլփա-

տութեան, որ խափանեալն էր յանապատին քառասուն ամ, դարձեալ նորոգեաց զնա 'ի ձեռն Յեսուայ որդւոյ Նաւեայ: Եւ իբրև մտանէին[1] խառնակել ընդ ազգսն հեթանոսաց, թլփատեաց Յեսու զանթլփատսն՝ որ ծնեան յանապատին. վասն զի անթլփատութ̃ին իւրեանց պահեաց զնոսա 'ի ժամանակի՝ զի մահն իշխեցեալ տիրէր 'ի վերայ թլփատութեան վեց հարիւր հազարին: Եւ զի հրամայեաց նոցա թլփատել գայլախազիւն, վասն զի դիւրին է հարուած նորա, և արագագոյն էր առ 'ի բժշկել քան զվէրս երկաթոյ, և դարձեալ ամենայն մարդոյ գտանէր. և զի 'ի ձեռն գայլախազին զարտաքին անդամս նոցա դրոշմէր, զի սիրտք նոցա գայլախազեայ կակղասցին, և օրինօքն ոչ անթլփատութ̃ին նոցա թլփատէր:

Արարին զզատիկն, և արգելաւ մանանայն. զի գուցէ թէ որպէս փոխանակեցին զնա հարք նոցա յանապատին ընդ խստորոյն և ընդ սոխոյն, արհամարհեսցի նա և յաչս որդւոցն յերկիրն պարգևաց, յորժամ տեսանեն զերկիրն ժառանգութեան իւրեանց լի ամենայն երանութ̃ք[2]:

Եւ իբրև թլփատեցաւ ամենայն ժողովուրդն նորոգապէս, և նստան յիւրաքանչիւր տեղիս անխիղճ մինչ զի բժշկեցան, ասաց տէր ցՅեսու եթէ “Այսօր անցուցի զնախատինս եգիպտացւոց 'ի ձէնջ„. կամ զի թլփատեալ էին, և չէր ոք որ հալածէր զթլփատութիւնն իբրև զտղայսն յԵգիպտոս, զի վասն թլփատութ̃ն ընկենուին զնոսա 'ի գետ. կամ զի յայնժամ պանդխտութ̃ք նստէին 'ի մէջ եգիպտացւոց, և այսօր կոխեցին ոտք իւրեանց զերկիր ժառանգութ̃է իւրեանց. և կամ վասն զի նախատէին զնոսա յանապատի անդ եկն և խառնակն Եգիպտոսի՝ որ էին ընդ նոսա թլփատեալք, զայսոսիկ՝ որ ոչ էին թլփատեալ. և զի կոչեաց զանուն տեղւոյն այնորիկ Գեղգով. այս ինքն է բլուր. անուն բոլորակ

1 Աստի մինչև ցհազարին այսպէս ունի միւս օրինակն. մտանէին 'ի մարտ պատերազմի ընդդէմ հեթանոսաց, թլփատեաց Յեսու զանթլփատսն. զի յանապատի անդ ստափոխեցան անթլփատքն. և վասն այնորիկ թլփատեաց զնոսա. և 'ի ժամանակին . . . 'ի վերայ անթլփատութ̃ն վեց հարիւր հազարին:

2 Միւս օրինակն երանութեամբ:

թլփատութե, զի յայնմ տեղւոջ նորոգեցաւ թլփատութին 'ի վեց հարիւր հազարս նոցա ։

Եւ իբրև անդ էին նոքա, երևեցաւ Յեսուայ այր մի զի կայր ընդ երկինս և ընդ երկիր, իբրու ունէր 'ի ձեռին իւրում սուսեր մերկացեալ ։ Եւ զի մի ընտապեսցի ժողովուրդն տեսլեամբ նորա, ոչ ցոյց զանձըն իւր ժողովրդեանն. զի յայտ լիցի Յեշուայ և գիտասցէ, թէ հրեշտակ երթայ առաջի աչաց նոցա կոտորել զթշնամիս իւրեանց, նմա միայն յայտնեցաւ. և ապա յետ այսորիկ նովաւ եղև ազդ ամենայն ժողովրդեանն ։ Բայց Յեշուվ իբրև ետես զայն, համարեցաւ նմա թէ մի ոմն 'ի դիցն հեթանոսաց ժպրհեցաւ երևել նմա 'ի ձեռն սուսերի, որպէս զի արկցէ 'ի վերայ նոցա զահ և զերկիւղ ։ Բայց թէ գիտացեալ էր զնմանէն՝ եթէ նա է զօրագլուխ զօրաց տեառն, 'ի վերայ երեսաց իւրոց խոնարհ երկիր պագանէր նմա. և եթէ զինչ հրամայէր տէր ծառայի իւրում՝ ասէր ցնա, և ոչ եթէ՝ 'ի մէնջ ես դու, և կամ 'ի թշնամեաց մերոց՝ հարցանէր ցնա ։ Եւ զի ասաց հրեշտակն՝ եթէ "Զօրագլուխ եմ ես տեառն", զի ուսուսցէ զնա, և տեղեակ արասցէ նմա՝ թէ հրեշտակն գլխաւոր եկեալ է 'ի թիկունս երկնաւոր օգնականութեան մանկանց ժողովրդեան նորա ։

Եւ զի ասաց՝ եթէ "Այժմ եկի", յայտ արար եթէ որչափ յանապատին էիք դուք առանց մարտի, ոչ եկի ես. բայց այժմ, զի սկսարուք դուք տալ ճակատ և իջանել 'ի մարտ պատերազմի ընդ քանանացիս, ահաւասիկ եկեալ հասեալ եմ 'ի թիկունս օգնականութե ձերոյ ։ Եւ զի ասաց ցնա՝ թէ "Լոյծ զկօշիկս քո յոտից քոց", այս ընկեր է այնր՝ որ ըզսուսերն ցոյց նմա ։ "Լոյծ, ասէ, զկօշիկս քո հարկանել հնձան դիթաւալ դիականցն՝ որ հանդերձեալդ ես կթել 'ի ձեռն մերկ պողովատիկ սուսերիս այսորիկ՝ որ ցուցի քեզ" ։

Եւ զի ասաց՝ եթէ "Տեղիդ յորում կաս դուդ սուրբ է", զի ցուցցէ նա թէ առաջի ոյր կայր նա. զի զոր օրինակ այն՝ որ բնակեալն էր 'ի մորենին՝ ա͞ծ էր, զի 'ի ձեռն հրեշտակին որ յայտնեցաւ 'ի նա՝ ասաց

զՄովսէս հանել զկօշիկս 'ի յոտից իւրոց. իջանել կոխել հարկանել հնձան զեգիպտացիսն, սոյնպէս և աստ մեծութիւնն բիւրապատիկ որ բնակեալ էր 'ի զօրագլուխ զօրաց տէառնն, որ երևեցաւս քեզ՝ հրամայէ քեզ հանել զկօշիկս քո յոտից քոց՝ հարկանել վանել կոտորել սատակել և քեզ զքանանացիս՝ որպէս և կոտորեաց Մովսէս զեգիպտացիսն և զամովրհացիսն։ Բայց գաւառքն սուրբք որ անուանեցան, յայտ եղեն վասն ածութեանն՝ որ 'ի մորենին[1], և'ի զօրագլուխ անդ՝ որ եկեալ էր. և զի գիտասցեն քանանացիքն՝ եթէ գան մարտնչել ընդ նոսա, կոտորին սատակին նոքա յետ բաժանելոյն Յորդանանու։ Վասն այնորիկ յաւել դաշտաձև կործանեաց զպարիսպն Երիքովի. որպէս զի կործանեալ պարսպօքն և 'ի խրախոյս բարբառոյ ժողովրդեանն զահի հարցին քանանացիքն, և մի եկեսցեն 'ի մարտնչել ընդ նմա յանկարծակի պատերազմաւ։ Արար զքաղաքն ծղօվ, վասն զի անցցեն նովաւ ընդ փորձ հանդիսի հեբրայեցիք։ Եւ զի պարտ և պատշաճ էր քաղաքն առաջին զոր աւերեցին նոքա 'ի քանանացւոց անտի, տալ մի 'ի տասանէ այնմիկ՝ որ ետ նոցա զերկիրն ամենայն քանանացւոց։

Եւկն պատեաց պաշարեաց ժողովուրդն զքաղաքն առաջին օրն և զերկրորդն և մինչև ցվեց օրն լռելեայն, և ոչ դողացին և զահի հարան որդիքն Երիքովի։ Եւ յեւթներորդ աւուրն յորում ակն ունէին եթէ ոչ պաշարեն զնոսա հեբրայեցիքն վասն աւուրն շաբաթու, գտան նոքա՝ զի նոքին անձամբ իւրեանց լուծին զշաբաթն իւրեանց յառաջին մարտ պատերազմի. զի գուցէ վառեսցին պատրաստեսցին հեթանոսք գալ տալ ընդ նոսա ճակատ յաւուր շաբաթու։ Լուծին այսուհետև զշաբաթն 'ի սկիզբն յառաջին մարտին իւրեանց. զի ազդ լիցի հեթանոսաց և գիտասցեն, թէ երբ և եկեսցեն՝ պատրաստ են հեբրայեցիքն ելանել ընդդէմ նոցա 'ի մարտ պատերազմի։ Որդիքն Երիքովի ելին 'ի պարիսպ անդր վասն նոր գործոյն զոր գործեցին հեբրայեցիքն. զի բազում անգամ շուրջանակի պատեալ պաշարէին զքաղաքն.

1 Միւս օրինակն 'ի մորենւոյն, և զօրագլուխն։

մանաւանդ վասն այնր կարի, զի դիտէին և վստահ էին, զի ոչ նետիւ և ոչ քարիւ մարտնչէին ընդ նոսա արտաքինքն արտաքուստ 'ի ներքս ։ Իսկ պարիսպքն, իբրև բարձին համօրէն միահամուռ զընակիչս քաղաքին, ներքուստ 'ի վեր անկան կործանեցան 'ի խրախոյս բարբառ աղաղակի արտաքնոցն, և սպանին զորդիս իւրեանց որպէս զի արդելցեն զեբրայեցիս յաշխատութե̃ անտի կորստեան թշնամեացն իւրեանց ։

Բայց պարիսպն այն՝ յորում Րախաբն նստէր, ոչ կործանեցաւ. զի եթէ կործանեալ էր, կորուսանէր զՐախաբ և զտունն հօր իւրոյ ։ Արդ հրամանն՝ որ կործանեաց զպարիսպն Երիքովի, իբրև ետես զնշանն կարմիր՝ որ կապեալ էր 'ի փայտի անդ, արգելաւ կաց և զտեղի առ ։ Եւ այն՝ որ զաշտարակսն յաղթս և բարձրապարիսպսն կործանեաց, զմահարձանս պարսպացն՝ յորում Րախաբն նստէր, վասն խորհրդոյն՝ որ փայտիւն 'ի պատուհանի անդ կապեալ էր՝ ոչ շարժեաց ։ Բայց ոչ միայն 'ի ժամ կործանմանն պարսպին պահեաց խորհուրդն զպարիսպն, զի մինչև ցայսօր իսկ կան. այլ վասն զի եղիցի նա վկայ խորհրդոյն՝ որ պաշտեցաւ 'ի նմա ։ Քանզի ինքն խորհուրդն յամենայն ազգս պահէր զնա, իբրև տրւչութե̃ ազգի ազգի եղիցի նա կարգեալ զպատմութե̃ի նորա. հանին զՐախաբ և զտունն հօր իւրոյ յԵրիքովէ ։ Եւ յորում աւուր Աքար յուդայեանց 'ի թուոյն Յուդայի ջնջեցաւ, Րախաբ 'ի հեթանոսաց 'ի թիւ ազգին Յուդայի խառնեցաւ ։ Եւ զի նստուցին զտունն Րահաբու արտաքոյ բանակին, մի՝ զի սրբեսցի 'ի պղծութենէ պոռնկութե̃ զոր պաշտէրն. և դարձեալ զի թլփատեսցին արուք նոցա, և ուրասցին 'ի ձուլածոյ դրօշեալ կռոցն իւրեանց, և ապա խառնեսցին ընդ նոսա ։

Յայսմ աւուր անէծ Յեշով զայրն՝ որ յարիցէ յետ անցանելոյ ժամանակաց, և շինեսցէ զԵրիքով. մի՝ վասն զի ժպրհեցաւ մարտնչել ընդ նոսա յետ բաժանելոյն Յորդանանու. և երկրորդ՝ զի զեւթն օր երկայնամիտք եղեն տալ զաջ խաղաղութեան առ 'ի կեալ զկեանս իւրեանց, և ոչ կամեցան ։ Եւ վասն զի արար զնա նզով յաւիտենից, խորհեցաւ նստուցանել զնա 'ի վերայ ապականութե̃. հատ և զդատա-

վճիռն մահու և 'ի վերայ որդւոցն այնորիկ՝ որ շինեսցէ զնա · զի վասն գթոյ աղեացն խնայելոյ որդւոց իւրոց արգելցի այն՝ որ կամիցին շինել զնա ։

ԳԼՈՒԽ Գ

Որ Աքար յուդայեանց 'ի նզովածոյ անտի և թաքոյց · բարկացաւ տէր 'ի վերայ ամենայն ժողովրդեանն առ հասարակ ։ Եւ որք յառաջ քան զնզովսն պարիսպքն Երիքովի մարտնչէին ընդ նոցա ընդ բնակիչսն Երիքովի, յետ նզովածոյ անտի ձախողակի շաւափնատ[1] կապարճս դարձուցեալ փախստեայք լինէին յերեսաց բնակչացն Գեհայ[2] փոքր և սակաւազօր քաղաքին սկայազունք և քաջամարտիկքն իսրայէլացւոց ։

Արդ սորին Գեհայ զի իշխեցաւ Իսրայէլ յետ յաղթութեանն իւրեանց՝ որ եղև յԵրիքով, զխորհուրդ աւերածին իւրեանց 'ի քանանացւոց՝ որ ուխտէին ընդ նոսա ուխտ՝ գրէր և նշանակէր նոր կոտորածին որ եղև 'ի ժողովրդեան անդ, եղէն իբրև ջուր յերկեւղէ իւրեանց ։ Անդ պատառէր Յեշով զհանդերձսն իւր, անկանէր 'ի վերայ երեսաց իւրոց հանդերձ ծերակոյտ ժողովրդեամբն մինչև յերեկոյ, և ասէր ցտէր · անցուցեր զմեզ ընդ Յորդանան՝ մատնել զմեզ 'ի ձեռս ամովրհայեցւոց[3] · և դու զի՞նչ արասցես զանուանդ քո մեծ զոր երդուարն առնել զմեզ քեզ ժողովուրդ սեփհական յաւիտենից ։

Բայց ոչ կամեցաւ ած լսել Յեշովայ և ծերակոյտ ժողովրդեանն զօրն ամենայն · զի թերևս եկեսցէ Աքար և խոստովանեսցի, և ապաշխարութբ իւրով անցուսցէ զբարկութի յանձնէն և յընտանեացն իւրոց ։ Աղերսէր Յեշով, վասն զի ոչ գիտէր խիղճ ինչ մնաց յանձին իւրում · և ասէր՝ թէ այժմ լսեսցէն քանանացիք եթէ տկար որդիքն Գայեայ կոտորեցին զմեզ, և վաղվաղակի զօրաժողով լինին կորուսանել

1 Միւս օրինակն չաւափնաւ ։
2 Յօրինակին 'ի լուսանցսն Գայեայ ։
3 Միւս օրինակն հեթանոսաց ։

զմեզ, և դու զի՞նչ արասցես զանուանդ քո, այն՝ որ յեգիպտոսէն ամենայն նահատակութիւնք կոչեցաւ և անուանեցաւ 'ի վերայ մեր:

Ասէ տէր ցՅեսու. զի՞ անկեալ կաս դու 'ի վերայ երեսաց քոց զօձիս արկեալ՝ պատառեալ զզգեստ քո, իբրև ցարդ ես այն՝ վասն որոյ անկան վիրաւորեցան սպանեալք 'ի պատերազմի, զխորտն իւր ոչ կամեցաւ պատառել. արդ մի՞ կարասցեն որդիքն Իսրայելի ունել զդէմ թշնամեաց իւրեանց. բայց եթէ անցուսցեն զնզովն 'ի միջոյ իւրեանց: Զի ցուցցէ և յայտ արասցէ Աքարայ, զի եթէ ապաշխարութիւնն իւր յայնմ գիշերի ոչ ապրեցուսցէ զնա, վիճակն ստուգութեան մատնէ զնա և զընտանիս իւր 'ի մահակողմն անդր ընդ մերկ լուսանալ առաւօտուն:

Ասա նմա հրաման մատուցանել նմա զազգս և ըզտոհմն և զտունս և զարս. այրն՝ զոր որսասցէ տէր, կորիցէ նա և ամենայն տունն իւր հանդերձ ամենայն ընտանեօքն իւրովք: Յաճախեցոյց արկ նմա սպառնալիս, զի երկիցէ. և յուել և զայն ես՝ եթէ «Զոր տէրն յանդիմանեսցէ». զի ճշմարտեալ գիտասցէ Աքար՝ եթէ ոչ կարասցէ զերծանել և ապրել: Իսկ իբրև յանդիմանեցաւ ազգն Աքարայ՝ և Աքար ոչ երկեաւ, յանդիմանեցաւ և ազգատոհմն՝ և նա ոչ զահի հարաւ, յանդիմանեցաւ և տունն իւր՝ և նա ոչ ամաչեաց, ապա իբրև ձեռն արկին և կալան զԱքար, այն՝ որ առանձինն ընդ ինքն և ընդ Յեսու ոչ կամեցաւ խոստովանել վասն իւրոյ գողութեն, յանդիման Յեսուայ և ամենայն ծերակոյտ ժողովրդեանն ակամայ կամօքն՝ իբրև ոչ կամէր՝ եկն խոստովանել վասն նզովածին, որ 'ի վրանի նորա թաղեալ կայր:

Իսկ կինն և որդիքն նորա զի՞ մեռան: Վասն զի գիտակ էին գողութե նորա, և ոչ կամեցան խոստովանել: Եւ զի՞ քարկոծեցան դարձեալ ստացուածք նորա: Զի արկցէ զահ և զերկիւղ 'ի վերայ ժողովրդեանն. զի իբրև տեսցէ ժողովուրդն թէ զորպիսի զինչս և զմեծութի ունէր նա, յաճախեսցի ցասումն սպառնալեաց նոցա 'ի վերայ նորա: Զի ոչ եթէ վասն աղքատութե ինչ անց նա ըստ նզովն, այլ վասն ագահութեն. քարկոծեաց զնա ժողովուրդն, զի բաւա-

կան լեցին նմա քարակոյտն՝ որում ոչն եղև նմա բաւական ստացուածքն որ յեգիպտոսէն էին և որ 'ի Թագաւորացն ամովրհացւոց աւարի առեալ էր նորա։

Իսկ իբրև անցուցին զնոսա 'ի միջոյ իւրեանց, ելին 'ի վերայ Գեհայ և հրձիգ արարին զնա։ Եւ զի հրամայեաց նստել 'ի գարանի 'ի վերայ փոքր քաղաքին, վասն զի ուսուսցէ որդւոցն Իսրայէլի զտեղեկութ̃ի ճարտարութ̃ե պատերազմի։ Եւ զի հրամայեաց դարձուցանել զնիզակն զոր ունէր 'ի ձեռին իւրում Յեսու, նշան ետ այնոցիկ՝ որք դարանամուտքն էին, եթէ յորում ժամու պատշաճ էր նոցա ելանել 'ի դարանէ անտի իւրեանց։ Եւ զի ասաց՝ եթէ “Ոչ դարձոյց Յեսու զձեռն իւր՝ որով բարձեալ ունէր զնիզակն, մինչ զի կոտորեցին զամենայն բնակիչսն Գեհայ„. իբրև այն՝ զի ասէ, թէ “ի կարկառուլ ձեռացն Մովսիսի կոտորեաց Յեսու 'ի սուր սուսերի համօրէն զամաղէկացիսն„։

Իսկ սեղան՝ զոր շինեաց Յեսու տեառն 'ի լերին անդ Գաբաղայ, թէպէտ և զհրամանն Մովսիսի կատարէր նա, այլ ոչ եթէ առ 'ի մատուցանել զողջակէզսն շինեաց զնա. զպատուիրանսն օրինացն գրեր 'ի վերայ նորա, զի ցուցցէ և յայտ արասցէ, զի թէպէտ և օրէնք էին ժամանակեան, այլ և օրէնք էին հասարակաց։ Քանզի ժողովրդեանն, տախտակօք՝ որ 'ի տապանակի անդ էր, ետ զօրէնսն. հեթանոսաց, քարամբքն՝ որ 'ի վերայ սեղանոյն եդեալ էր, գրեաց և ետ զնա։ Ընթերցան անդ առաջի ժողովրդեանն զօրէնս, զի և այսու զհրամանս Մովսիսի կատարեսցէ։ Ընթերցաւ դարձեալ զօրհնութիւս և զանէծս նորա. զի վասն օրհնութեանն փութասցին պահել զպահպանութ̃ի օրինացն, և վասն անիծիցն նորա զահի հարեալ երկիցեն՝ առ 'ի հարկանել ընդոտն զհրամանս պատուիրանի օրինացն։

Սամ եղին, աղդ արարին քանանացիք գալ միագունդ միահամուռ միաժողով տալ զմարտ պատերազմի ընդ Իսրայէլի։ Իսկ բնակիչք գաբաւոնացւոց[1] ոչ անկան 'ի խորհուրդս հեթանոսաց՝ որ շուրջ

1 Միւս օրինակն Գաբաւոնացւոց։

զնոքօք բնակեալ էին, վասն զի պարհուրեցան 'ի դիպաց անտի՝ որ ինչ եղև որդւոցն Երիքովի և որդւոցն Գեհայ: Եւ խորամանկեցան պաշարեալն և խաբեպատիր զգեստուք և սուտ բանիւք, զի մարթասցեն գտանել զհնարս խաղաղութեան յՅեսուայ և յիսրայելացւոց, որով կարիցեն կեալ զկեանս ժամանակեան: Բայց ամենայն խորամանկութիւնք նոցա, յոր ապաւինեցանն, եթէ 'ի հեռի աշխարհէ եմք մեք. վասն զի լուան զի ասացաւ Մովսիսի՝ եթէ "Մի դիցեն ուխտ ընդ բնակիչսն քանանացւոց, այլ կոտորելով կոտորեսցեն զնոսա. և ընդ այնոսիկ՝ որ յանդս Արածանի գետոյ իցեն, արասցեն խաղաղութիւն, եթէ կամեսցին լինել նոցա հարկատու՝ կալ նոցա 'ի ծառայութեան": Իսկ իբրև տեսին որդիքն Իսրայելի զգաբաւոնացիս, վասն բանիցն իւրեանց և զգեստին, և պաշարին, հաւատացին եթէ 'ի հեռաստանէ են նոքա. ետուն նոցա զօրհնութիւն[1], և արարին ընդ նոսա խաղաղութիւն, մանաւանդ զի ասացին ևս թէ 'ի լուր տեառն եկաք մեք. "Լուաք, ասէ, զամենայն ինչ զոր արար յԵգիպտոս և ընդ երկուս թագաւորս ամովրհացւոց": Ետուն նոցա զաջն խաղաղութեան՝ իբրև ոչ հարցին 'ի բերանոյ տեառն:

Արդ յետ երից աւուրց եկին որդիքն Իսրայելի և բնակեցան 'ի գեօղս նոցա. եղև ամբոխ մեծ 'ի ժողովրդեանն սպանանել զնոսա ըստ հրամանացն Մովսիսի. բայց ոչ թողլին մեծամեծք ժողովրդեանն վասն երդմանն՝ զոր երդուան նոցա: Եւ զի ապրեցուսցէ զնոսա Յեսու 'ի տրտնջոյ ժողովրդեանն, յանիծանել անդ իւրում օրհնեաց զնոսա, արար զնոսա փայտաբերս և ջրկիրս 'ի տուն[2] տեառն: Զի այնոքիկ որ ոչ կամէին թողուլ զնոսա կենդանի 'ի մէջ իւրեանց, յանուն անիծից արար զնոսա կցորդս և զովօղս սպասաւոր քահանայիցն տան տեառն:

Արդ գաբաւոնացիքն որ հազիւն ապրեցան 'ի սրոյ սուսերի իսրայելացւոց, գրգռեցան թագաւորքն քանանացւոց ելանել կոտորել հրձիգ առնել զքաղաքսն գաբաւոնացւոց: Քանզի երկեան զահի հարան 'ի գա-

1 Միւս օրինակն հաստատութիւն: 2 Միւս օրինակն յանուն:

քանանացւոց անտի՝ զի գուցէ միաբանեսցին ընդ Իսրայէլի , ուխտ դնիցեն և դաշինս կռիցեն՝ յորում աւուր գայցեն նոքա մարտնչել ընդ որդիսն Իսրայէլի ։ Առաքեցին այդ արարին գաբաւոնացիքն Յեսուվայ , եկն եհաս 'ի թիկունս օգնութեան նոցա ։ Եւ իբրև հարին վանեցին կոտորեցին զնոսա , և բազում եղեն մեռեալքն որ մեռան 'ի քարանց անտի կարկտի՝ զոր արկ տէր 'ի վերայ նոցա , քան զկոտորեալսն և զվիրաւորսն՝ որ կոտորեցին որդիքն Իսրայէլի 'ի սուր սուսերի , ձայն ետ և խօսեցաւ Յեսուվ առաջի տեառն և առաջի գնդին իսրայէլացւոց ։ Արգել զարեգակն և զլուսին առաջի սպանողացն և անկելոցն . զի անկեալքն ջնջեսցին նոքօք , և սպանօղքն՝ որ տեսանեն զյաղթութիւն նոցա , մի խաբեսցին 'ի նոսա ։ Արդ զդիմն հեթանոսաց և ղհեթանոսմն առ հասարակ յաղթեաց . զի ցուցցէ և յայտ արասցէ , եթէ Յեսուին՝ որ յաղթեաց զզոյգսն աստուածոցն 'ի ժամ ճակատին , խորհուրդ էր Յիսուսի , այն որ հանդերձեալն էր յաղթել զամենայն դիս դիւակունս հեթանոսաց 'ի ձեռն խաչին իւրոյ ։

“Կաց , ասէ , արեգակն 'ի Գաբաւոն , և լուսին 'ի դաշտ Իլոնի ,,։ Արդ նոքա գնան ըստ բանին Յեսուվայ , և ոչ եթէ երկինք շրջին . զի եթէ երկինք շրջէին , ոչ հրամայէր նա կալ և զտեղի առնուլ լուսաւորացըն , զի [1] զսաստիկ շրջուածսն երկնից արգելոյր նա ։ Այսուհետև լուսաւորքն գնան . և վկայէ այն՝ որ բանիւն արգել զնոսա ։ Եւ զի եթէ երկինք շրջէին , զերկինն և զլուսաւորս միանգամայն արգելոյր . զի գուցէ 'ի կացուցանելն արեգականն 'ի Գաբաւոն , և արգելուլ լուսնին 'ի դաշտ Իլովնի , զերկինս շրջանակաւն իւրով յայլ տեղի ածիցէ նա ։ Իսկ երկու աւուրքն զոր արար Յեսուվ մի օր , զխորհուրդն զայնը նկարէր՝ որ 'ի միջէ օրէ երկուս աւուրս հանդերձեալ էր առնել յաւուր խաչելութեանն իւրոյ ։ Եւ զի ասաց՝ եթէ “Գրեալ էր 'ի դպրութիւն օրհնութեանց ,, , արդեւք այն իսկ է՝ զի արեգակն և լուսին կացին 'ի յարկս երկնից , այս ինքն արգելան և

1 Միւս օրինակն այսպատիկ շրջանս երկնից ընդ լուսաւորսն արգելոյր նա գնա ։

կացին 'ի շաւղաց գնացից իւրեանց ։

Արդ կոտորեցին զԹագաւորսն հանդերձ զօրօքն իւրեանց․ և նոքա՝ որ կոտորեցան վասն պատուիրանազանցութեան, երեսուն և երկու արք կոտորեցան 'ի նոցանէն 'ի ձեռն որդւոցն Գայեայ ։ Իբրև պահեցին զհրաման պատուիրանին մեծ կոտորածիւն՝ զոր արարին 'ի զօրսն բազմաժողովսն հինգ Թագաւորացըն, ոչ մի այր յիսրայելացւոցն վնասեցաւ [1] ։ Զայսոսիկ Թագաւորս հանդերձ զօրօք իւրեանց կոտորեաց Յեսուն, և զաշխարհս նոցա հար վանեաց 'ի սմքակս երիւարաց, և ոչ մնաց գտանեալ գեօղ մի փոքրիկ՝ որ ապրեցաւ 'ի նոցանէն՝ բայց Թէ Գաբաւոն, զորս ինքն կացոյց պաշտել ծառայել Իսրայելի ։

Իսկ զի ասաց՝ եԹէ "ի տեառնէ եղև այս,,, զի հզօրասցի սիրտն Թագաւորացն քաջալերութեամբ տալ զմարտ պատերազմի ընդ Իսրայելի․ յայտ արար և ցոյց՝ զի այնոքիկ որ հարցուկքն և դիքն իւրեանց խոստացան նոցա յաղԹութիւն, և ոչ գիտացին զի և այս 'ի տեառնէ եղև՝ ելանել կոտորել սատակել 'ի սուր սուսերի, լինել անժառանգ ։ Վասն զի ոչ հաւանեցան աշակերտել այնմիկ՝ որ զծովն բաժանեաց, և ընկլոյզ զՓարաւոն, և կոտորեաց զամովրհացիս, բաժանեաց զՅորդանան, կործանեաց զպարիսպս Երիքովի, արգել զարեգակն և զլուսին․ դիքն անարիք անուանիքն՝ յորս հպարտացեալն էին քանանացիքն ։ Եւ զի յաւել և ասաց՝ վասն զի կոտորեսցին և մի՛ եղիցի 'ի վերայ նոցա աղաչանք [2] և պաղատ․ այսինքն՝ զի մի՛ եղիցի 'ի վերայ նոցա խնայութիւն 'ի ժողովրդենէ անտի ։

Յետ այսորիկ կոտորեաց զսկայազունսն զլեռնայինսըն 'ի Քեբրոնէ և 'ի լեռնէն Յուդայի և Իսրայելի, և ոչ մնաց այր յերկիր որդւոցն Իսրայելի, բայց Թէ 'ի Գազա և 'ի ԳաԹ և յԱսեդովԹ փղշտացւոց․ և այսոքիկ կամ վասն Աբիմելէքայ և Փիքողայ՝ որ պատուեցին զաբրահամեանսն, և կամ զի փորձեսցին նոքօք որդիքն Իսրայելի, որպէս և ասացեալ իսկ է վասն նոցա ։ Իսկ իբրև ծերացաւ Յեսու, և ոչ կոտորեաց

1 Միւս օրինակն պակասեցաւ ։ 2 Միւս օրինակն հառաչանք և աղէտ ։

զերկիրն ամենայն կարի, մանաւանդ զի և բաւական իսկ ոչ էին երկրին որդիքն Իսրայէլի, խոստացաւ Նմա տէր, և հանգոյց զնա՝ եթէ «Ես կոտորեցից զթագաւորսն հեթանոսաց որ մնացին»: Բայց 'ի ժառանգութին Ռուբէնի սպան Իսրայէլ զԲաղաամ գիտուն, իբրև կոտորեցին զԻշխանս Սեհոնի՝ որ բնակեալ էին յերկրին: Արդ կէս երկրին որդւոցն Ամոնայ՝ զոր ժառանգեցին ազգքն Գադայ, ոչ եթէ յորդւոցն Ամոնայ առ զնա Մովսէս, այլ Սեհոն արքային Եսեբոնայ առեալ էր զնա. և առ 'ի Նմանէն, և ետ որդւոցն Գադայ: Եւ ժողովուրդն թլփատեցաւ 'ի Գաղգաղայ. անդ նստան մինչև կոտորեցին զամենայն թագաւորսն քանանացւոց անդէն 'ի Գաղգաղայ:

Ասաց Քաղէբ որդի Յեփոնեայ ցՅեսու. դու քեզէն գիտես զպատգամն՝ զոր խոստացաւ տէր վասն իմ և վասն քո. այս ինքն, զի մեք միայն մտցուք յերկիրն պարգևաց յամենայնէ՝ որ ելին յԵգիպտոսէ. և ետու Ճշմարիտ պատասխանի Մովսիսի, որպէս էր 'ի սրտի իմում, և ոչ ինչ զահի հարայ խօսել զայլ ինչ 'ի շրթունս իմ յերկիւղէ ժողովրդեանն՝ որ խռովեցուցին լրտեսք ընկերք իմ: Եւ վասն զի ասաց Մովսէս, եթէ «Երկիրն զոր կոխեսցես դու ոտիւք քովք՝ քեզ և որդւոց քոց եղիցին յաւիտեան», և ահա եղև աւասիկ: Արդ քառասուն և հինգ ամ է յորմէ հետէ ասաց տէր զբանս զայս. և այս օր ութսուն և հինգ ամ է իմ, և կար զօրութեան իմոյ յայնժամ և այժմ նոյն է 'ի մարտ պատերազմի. այս ինքն, որ մանկացոյց զգեղ կերպարանացն Մովսիսի վասն վայելչութեան փառացն զոր ընկալաւ ինքն, մանկացոյց և զզօրութիւն իմ վասն օրհնութեան նորա: Եւ այժմ տուր ինձ զլեառնդ զոր ասաց տէր, և դու քեզէն լուար, այս ինքն «Զտեղի զոր կոխեսցեն ոտք քո՝ քեզ տաց»: Թէպէտ և անուանիք քաջութեամբ և սկայազունք 'ի մարտ պատերազմի, և քաղաքք ամրաշէնք ամրապարիսպք անյաղթք թուին՝ եթէ կայցեն անդ, բայց սակայն դու տուր ինձ քոյովբանիւդ, զի եղիցի տէր ընդ իս, որպէս և խոստացաւ. և կոտորեցից զնոսա, և ժառանգեցից զերկիր նոցա, որպէս զի ասաց ցիս յայնմ աւուր իբրև դարձաք մեք 'ի լրտեսուէ երկրին:

Եւ ետ Յեշով Քաղեբայ զՔեբրոնն 'ի ժառանգութիւն, այնոցիկ՝ որ 'ի վերայ տկար և անպիտան որդւոցըն Գեհայ զահի հարեալ երկնչէին ելանել 'ի վերայ Քեբրոնի սկայազանցն՝ յաներկիւղ յանհոգ յապահով վստահութեամբ փութացեալ ելանէին մարտընչել. կոտորեաց Քաղեբ 'ի սուր սուսերի իւրոյ զերիս որդիս սկայազանցն։ Դարձեալ թէպէտև զթագաւորն Յեբուսայ սպան Յեշով, այլ զբնակիչսն յեբուսայեցւոց՝ զի նա ինքն է Երուսաղէմ՝ ոչ կոտորեցին որդիքն Յուդայ։ Եւ եփրեմեանք ոչ կոտորեցին զքանանացիս որ 'ի Գազարն [1] էին. բնակեցան ընդ նոսա և եղեն նոցա հարկատուք 'ի ծառայութիւն։

ԳԼՈՒԽ Դ

ՅԱՅՆՄ ժամանակի ժողովեցան որդիքն Իսրայէլի 'ի Սելով, և եդին անդ զվրան ժամուն, և չոգան արք յազգաց և գրեցին զգեօղսն յեւթն բաժինս. և վիճակեաց նոցա Յեշով վիճակս 'ի Սելովմ առաջի տեառն։ Առ և Յեշով գեօղ մի 'ի լեառնն եփրեմեան, և շինեաց և բնակեցաւ 'ի նմա։ Եւ զի ասաց դառնալ սպանողին՝ որ սպանանէ ակամայ կամօքն 'ի մեռանել մեծի քահանային, յայտ արար և ցոյց՝ զի զգուշասցին և յայնոցիկ չարեաց՝ որ ակամայ կամօքն մարդոյն գործին։ Եւ իբրև զատան մեկնեցան քաղաքքն ապաւինութեան, ետուն զքաղաքս 'ի մէջ ազգացն առ 'ի բնակութիւն քահանայից որդւոցն Ահարոնի՝ երեքտասան քաղաքս գեղիւք և ագարակօք հանդերձ։ Եւ այլոց որդւոցն Կահաթու գեօղս և քաղաքս տասն ագարակօք հանդերձ։ Եւ որդւոցն Գեթսոնի երեքտասան քաղաք ագարակօք հանդերձ։ Եւ որդւոցն Մերարեայ երեքտասան քաղաքս ագարակօք հանդերձ։ Եւ ետ տէր ա̄ծ Իսրայէլի զերկիրն ամենայն և ժառանգեցին, և ոք 'ի թշնամեաց նոցա ոչ կալաւ զդէմ նոցա, որպէս և խոստացաւ. և ոչ խափանեցաւ բան մի յամենայն բարեացն՝ զոր ասաց

1 Միւս օրինակն 'ի Գադդարն։

տէր տամն Իսրայէլի ։ Բայց նոքա զուխտին՝ որ ուխտեցին պաշտել զտէր, մօտ 'ի մօտոյ վաղվաղակի անդրէն անցին, և փոխեցին զդիմս դիակունս ընդ ա̃յ կենդանւոյ ։

Օրհնեաց դարձեալ տէր և զգունդն Ռուբէնի, զի անցին առաջի եղբարց իւրեանց կազմս վառեալս 'ի թիկունս ազգի իւրեանց, արձակեալ զնոսա դառնալ 'ի վիճակ ժառանգութե̃ իւրեանց ։ Եւ իբրև բաժանեցաւ երկիրն ինն և կէս ազգաց, բայց սակայն ընչիւք և մեծաւ աւարաւ դարձան. որպէս և 'ի Մովսէսէն կանխեցան և օրհնեցան ։ Արդ 'ի դալն իւրեանց 'ի ժառանգութի̃ անդր, շինեցին իւրեանց սեղան, և առաքեցին առ նոսա ինն և կէս ազգքն զՓենեհէս քահանայ, և զտասն նահապետսն ազգաց, և ասեն ցնոսա. ընդէ՞ր 'ի ձեռն սեղանոյդ զոր շինեցէք, ցուցէք վասն ձեր և յայտ արարէք՝ եթէ զատեալ և որոշեալ էք դուք յերկրպագութե̃ն տեառն ։ Քանզի համարեցան նոքա, եթէ նախանձելով ինչ նախանձեցաւ Ռուբէլ անդրանիկ ընդ կրտսերոյն Բենիամինի, զի բնակեալ էր տէր 'ի մէջ ուսոց նորա, և վասն այնր շինեաց զսեղանն յիւրում ժառանգութե̃. զի վասն այսորիկ պահանջէին նոքա զպատասխանի տալն 'ի նոցին գնդէն ռուբէլեանց ։

Արարին նոքա անդրէն պատասխանի և ասեն. եթէ զԻսրայէլ՝ որ երկիր պագանէ առաջի ճշմարիտ սեղանոյն, թէ զիարդ և կամ որպէս պագանէ, ինքն ծածկագէտն գիտէ. և զմեզ թէ վասն էր շինեցաք զայս սեղան, ինքն գիտէ. զի ոչ եթէ առ 'ի դառնալ 'ի տեառնէ շինեցաք զնա, այլ զի մի՛ ասիցեն վաղիւ որդիքն ձեր ցմեր որդիսն՝ եթէ ոչ գոյ ձեզ մասն և բաժին 'ի յարկս տեառն, ահաւադիկ Յորդանան զատանէ և որոշէ ընդ մեզ և ընդ ձեզ ։ Շինեցաք մեզ 'ի նմանութի̃ սեղանոյ, զի եղիցի առ 'ի վկայութի̃ որդւոց մերոց. զի առաջի այնր ճշմարիտ սեղանոյն երկիր պագանէին հարքն մեր 'ի ձեռն պատարագաց խոյոց և զուարակաց, և առաջի այսր 'ի ձեռն պատարագաց մտաց և խորհրդոց ։ Արդ 'ի նշան արարաք. շինեցաք զսեղանս զայս, զի գիտասցեն ծանիցեն ազգքն մեր՝ զի տեառն պագանեմք երկիր, և

գնասցեն ընդ հետ շաւղաց գնացից մերոց. և ոչ եթէ զի արդէն իսկ խոտորիցի մք 'ի տեառնէ՝ շինեցաք զնա որպէս դուք կարծէք։ Արդ զի մի՛ ասասցեն ցնոսա բուբինեանք՝ եթէ ձեզ զի՞ փոյթ է եթէ դառնամք 'ի տեառնէ, ցուցին նոքա՝ զի վասն անձանց նոցա տրտում էին, զի մի՛ հարցին և մաշեսցին։ "Ոչ, ասէ, սրբեցաք մեք 'ի մեղացն Փեղփեգովրայ„. այս ինքն ոչ կատարեցաւ խրատն՝ որ եկն 'ի վերայ մեր ամենեցուն վասն նուազ սակաւուցն՝ որ երկիր պագին Փեղփեգովրայ, և ոչ առ մխիթարութիւն ժողով բանակացն մերոց յանկելոց վիրաւորացն՝ որ կոտորեցանն 'ի մէնջ վասն մեղացն Աքարայ։ Նոքա առին կալան զնոցա հաւանութիւն, և եկին միաբանեցին ցածուցին զմանկունս ժողովրդեանն իւրեանց, որք ժամ եդեալ ժողովեալ պատրաստեալ էին գալ կորուսանել սատակել զնոսա։

Մերձեցան աւուրք Յեշովայ մեռանելոյ, և ասէ ցնոսա. տեսէք աւադիկ, զի ոչ ինչ պակաս արարի ձեզ, և ոչ մի բան յամենայն բանից բարեաց զոր ասաց տէր ածել 'ի վերայ ձեր զբարիսն՝ զոր խոստացաւ ձեզ։ Սոյնպէս ածէ 'ի վերայ ձեր զդատավճիռն չարեացն՝ զոր հատ համառօտիւք 'ի վերայ ձեր, եթէ անցանիցէք զպատուիրանօք նորա։ Եւ հեթանոսքն ազգացն՝ որ մնացին, եթէ խառնիցէք ընդ նոսա խնամութե՟ք փեսայ լինել և հարսն առնուլ 'ի նոցանէն, ոչ կոտորեսցէ զնոսա տէր յերեսաց ձերոց, որպէս և խոստացաւն ձեզ. և լինիցի ձեզ յորոգայթս պռնկութե և 'ի գայթագղութի կռապաշտութե, և կորնչիցիք յերկրէ. վասն զի նմանեցարուք դուք գործովք ձերով բնակչաց երկրիս։ Եւ ժողովեաց զնոսա Յեշով 'ի Սիւքէմ առաջի վրան ժամուն՝ ասելով ցնոսա. "Այսպէս ասէ տէր. յանդս Արածանւոյ գետոյ բնակեցան Թառա և Նաքովր, և պաշտեցին զդիս դիւկունս. և ետ Աբրահամու և որդւոց նորա զՔանան, և Եսաւայ զլեառն Սեիրա„։ Եւ սկսան այնուհետև երկրորդել զգործսն և զերախտիսն՝ որ եղեն առ նոսա 'ի ժամանակէն Յակովբու մինչև յօր մահուանն Յեշովայ։ Եւ յետ այսորիկ ասէ ցնոսա. "Անցուցէք զդիսն օտարոտիս, որոց տունն Նաքովրայ՝ որ 'ի Խառ-

ուան [1], երկիր պագանէր նոցա, և հարք ձեր յեգիպտոս պաշտեցին զնոսա, և պաշտեցէք զտէր։ Արդ ընտրեցէք ձեզ մինչ ես կենդանի եմ, զո՞ պաշտէք. զդիմն զոր պաշտեցին հարքն ձեր, եթէ զաստուածս ամովրհացւոց՝ որ մտէք և բնակեցէք ՚ի մէջ նոցա „։ Եւ զի յորդորեսցէ զնոսա երթալ զկնի նորա, ասաց՝ թէ “Ես և տուն իմ զտէր պաշտեմք „։

Ուխտ եդին և դաշինս կռեցին և ընդ Յեշուայ յերկիրն քանանացւոց, որպէս և ուխտեցին ընդ Մովսէս յանապատի անդ պաշտել զտէր։ Եւ ասեն ցնա. “Զտէր պաշտեսցուք, և նմա երկիր պագցուք, որ կորոյսն առաջի մեր զամովրհացիսն, և աստուածքն նոցա ոչ կարացին լինել նոցա թիկունք օգնականութեան „։ Երկրորդեցին դարձեալ և ասեն առ ՚ի հանգուցանել զկամսն Յեշուայ, եթէ ոչ լինի մեզ այլ պաշտօն դից դիականն, բայց եթէ զտէր պաշտեսցուք, և զձայն նորա լուիցուք։ Եւ կացոյց Յեշու զուխտ կտակարանաց ժողովրդեանն յաւուր յայնմիկ։ Եւ զորպիսի՞ կտակարանս. բայց եթէ զայս՝ զի ուխտեցին և երդուան եթէ զտէր պաշտեմք մեք։ Եւ իբրև գրեաց զբանս նոցա, կանգնեաց զարձանն ՚ի տան սրբութե̃ և ասէ. “Արձանս այս՝ որ ոչ անցանէ, եղիցի ՚ի վկայութի̃. վասն զի ինքնին լուաւ զբանս տեառն՝ որ խօսեցաւ ինև ընդ ձեզ, զի մի՛ ստեսջիք յամենայն բանիցն՝ զոր խօսեցայք առաջի նորա այսօր „։

Պաշտեցին որդիքն Իսրայէլի զտէր զամենայն աւուրս կենաց Յեշուայ և ծերակոյտ ժողովրդեանն՝ որ կեցին ըստ նմանէն։

[1] Յօրինակին խաւան։

ԿԱՏԱՐԵՑԱՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԵՇՈՒԱՅ ՈՐԴՒՈՅ ՆԱՒԵԱՅ

ՍՐԲՈՅ՛Ն ԵՓՐԵՄԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ԴԱՏԱՒՈՐԱՑ

ՏԵԱՌՆ

ԵՓՐԵՄԻ

ԽՈՐԻՆ ԱՍՈՐՒՈՑ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ԳՐՈՑ ԴԱՏԱՒՈՐԱՑ

ԳԻՐՔ ազգաց դպրութիւն է դատաւորաց, որ կացին 'ի ժողովրդեանն յետ մահուանն Յեսուայ որդւոյ Նաւեայ ։

Գրեցան 'ի գիրս յայսմ առաքինութիւնք նահատակութեանց, և փրկութիւնք զոր արար մի մի 'ի նոցանէ 'ի նահապետաց անտի ժողովրդեանն և 'ի հեթանոսս ։

Գրեաց և զժամանակս առաջնորդութեան նոցա՝ թէ զորչափ ինչ ամս մի մի 'ի նոցանէ դատեաց զժողովուրդն ։ Քանզի որպէս յար է սկիզբն առաջնորդութեան Յեսուայ 'ի կատարումն մարգարէութեան և առաջնորդութեանն Մովսիսի, սոյնպէս և խառն է սկիզբն առաջնորդութեան և դատաւորութեան դատաւորացն՝ որք կացին յետ Յեսուայ, 'ի կատարումն առաջնորդութեան և դատաւորութեան Յեսուայ ։

Զայս և որ սոցին նման են, գրեալ է 'ի դպրութեան դատաւորաց ։

ԵԻ

Ի ՍԿԻԶԲՆ ԲԱՆԻՑ ԻՒՐՈՑ ԱՅՍՊԷՍ ԱՍԱՑ

ԳԼՈՒԽ Ա

“ԵՒ յետ մահուանն Յեշուայ խնդրեցին որդիքն Իսրայէլի 'ի տեառնէ և ասեն. ո՞վ ելցէ մեզ զօրագլուխ 'ի մարտ պատերազմի տալ ճակատ ընդ քանանացիսն: Եւ ասէ տէր. Յուդայ ելցէ„ .քանզի 'ի նմա իսկ խոստացեալ է առաջնորդութիւն նահապետութեանն ըստ օրհնութեանցն Յակովբու: “Եւ պատասխանի Յուդայ և ասէ ցՇմաւոն. եկ ընդ իս յիմում վիճակիս 'ի թիկունս օգնականութեան 'ի մարտ պատերազմի„. այս ինքն եկ ընդ իս տալ ճակատ ընդ քանանացիսն, որ բնակեալ նստին 'ի ժառանգութեանն՝ որ եհաս ինձ վիճակաւն. և ապա յետ այսորիկ տացուք ճակատ և մարտիցուք ընդ ընկերս նոցին, որ բնակեալ նստին 'ի ժառանգութեանն՝ որ եհաս քեզ 'ի վիճակի անդ:

Զու արարին խաղացին գնացին կոտորեցին զքանանացիսն. հատին զթաթս ձեռաց և զոտից զարքային Բեզեկայ, որ եւթանասուն թագաւորք թաթահատք ձեռաց և ոտից իւրեանց քաղէին հաց 'ի ներքոյ սեղանոյ նորա: Արդ այսու միով, որ յայտնեցան անօրէնութիւնք նորա ընդ բաժին պատուհասից՝ որ եկն 'ի վերայ նորա, յայտ եղև՝ թէ ամենայն քանանացիքն՝ որ կոտորեցան 'ի մէջս և յանօրէնութիւնս իւրեանց, սատակեցան ջնջեցան յերկրէ իւրեանց: Եւ վասն զի ոչ կամեցան որդիքն Իսրայէլի ջնջել սատակել զքանանացիսն, որպէս և հրամայեցաւ նոցա, եկն հրեշտակ տեառն 'ի Գաղգաղայէ: Կամ Յեշով էր այն, որ ցարդ ևս 'ի բանակի անդ էր՝ որ բնակեալ նստէր 'ի Գաղգաղայ. և կամ այլ մարգարէ էր, զի

Վասն արքանեկութեանն իւրոյ կոչեցաւ հրեշտակ. և կամ ճշմարտիւ իսկ հրեշտակ էր, զի առաքեցաւ առ նոսա 'ի նմանութիւն առն։ Զի թէպէտ և ասաց 'ի սկիզբն գրոցն ազգաց, եթէ "Յետ մահուանն Յեսուայ" 'ի սկզբան անդ գրոց, այլ գոյ ճառն Յեսուայ 'ի սկիզբն պատմութեանն. և ապա դառնայ և գրէ զմահուանէ նորա։ Յանդիմանեաց զնոսա վասն քանանացւոցն, զի թողին. և լաց ժողովուրդն առաջի տեառն, վասն զի ցարդ ևս ոչ էր թողեալ նոցա։

Խօսել սկսաւ տէր և ասէ. "Վասն զի անց ժողովուրդն զուխտիւ իմով, ոչ կորուսից սատակեցից զհեթանոսսն՝ զոր եթող Յեսու"։ Եւ արդ ո՞ր ուխտ էր այն՝ զորով անցին, բայց եթէ զայնու՝ զոր ուխտն եդին և դաշինս կռեցին, զի մի՛ արկցեն խնամութիւն ընդ քանանացիսն։ Քանզի հեթանոսօքն որ մնացին, նոքօք փորձէր զնոսա տէր՝ եթէ պահեն զճանապարհս տեառն ըստ ուխտին զոր ուխտեցին, եթէ ոչ։ Բայց հեթանոսք որ թողան՝ այնք են, որ ընաւ ամենևին ոչ մարտեաւ ընդ նոսա Յեսու. վասն զի ոչ էր կարօտեալ ինչ ցարդ ևս յերկիր նոցա. զի ասէր, թէ գիտասցեն և իմասցին ազգն որ 'ի յետոյն գալոց են՝ ուսանել զմարտ պատերազմի. քանզի ոչ գիտէին առաջինքն զտեղեկութ՟իս ճակատի 'ի մարտ պատերազմի, վասն զի ինքն մարտնչէր փոխանակ նոցա, և առանց աշխատութ՟ե և խորամանկութ՟ե մատնէր զթշնամիս իւրեանց 'ի ձեռս նոցա։

Արդ խօսեցին որդիքն Իսրայէլի խնամութ՟ի ընդ քանանացիս. 'ի նոցանէն առին, և նոցա ետուն, և խոտորեցան զկնի Բահաղու և դիցն օտարոտւոց, և մատնեցան 'ի ձեռս Քուսարսաթեմայ արքային ասորւոց, և ծառայեցին նմա ութ ամ։ Եւ կացոյց տէր փրկիչ զԳոթոնիէլ զորդի Կենեզեայ՝ զեղբայր Քաղեբայ զկրսերն։ Եւ սպան զՔուսար անօրէն՝ որ անօրինեցաւ 'ի ժողովրդեանն։ Եւ հանգեաւ երկիրն քառասուն ամ։

Դարձեալ արարին որդիքն Իսրայէլի չար առաջի տեառն, և մատնեաց զնոսա տէր 'ի ձեռս Եգղով արքային մովաբացւոց։ Կացին 'ի ծառայութեան, և պաշտեցին զնա ութ և տասն ամ։ Ապա բողոք կալան

որդիքն Իսրայէլի առաջի տեառն այ, և յարոյց նոցա տէր փրկիչ զԱւովդ որդի Գերեայ՝ որդւոյ Ամենեայ ։ Եւ սպան զԵգղովն արքայ մովաբացւոց, և տասն հազար այր վառեալ 'ի զօրաց անտի նորա ։ Եւ դադարեաց երկիրն ութսուն ամ ։ Ապա յետ սորա եղև նոցա Սամեգար որդի Անաթայ՝ փրկիչ, այն՝ որ կոտորեաց յայլազգեացն վեց հարիւր այր մաճիւն արօրոյ ։

Ապա դարձեալ յաճախեցին որդիքն Իսրայէլի գործել զչարիս առաջի տեառն ․ և մատնեաց զնոսա 'ի ձեռն Յաբինն արքային քանանացւոց և զօրավար զօրացն նորա Սիսարա ։ Եւ հար վանեաց հնազանդեաց զժողովուրդն իսրայէլացւոց, և կացոյց 'ի ծառայութե քսան ամ ։ Եւ Դեբովրա մարգարէ՝ կին Աղփիդովթայ, և վասն մարգարէութե իւրոյ ինքն դատէր զԻսրայէլ ։ Եւ կոչեաց զԲարակ և ասէ ցնա ․ ո՞չ հրամայեաց քեզ տէր, յայտ արար՝ եթէ քեզ ետ տէր հրաման վարել ընդ քեզ տասն հազար յորդւոց Նեփթաղիմայ յազգէ քումմէ, և յորդւոցն Զաբուղոնի սահմանակցացն քոց, և եկեսցեն ընդ քեզ 'ի մարտ պատերազմի 'ի վերայ Սիսարայ, և մատնեցից զնա 'ի ձեռս քո ։ Բայց մի՛ իցէ եթէ պարծեսցիս ինչ, վասն զի 'ի ձեռն կնոջ, այս ինքն 'ի ձեռն Յայելի կնոջ Քաբերայ կենացւոյ աներոյն Մովսիսի մատնեսցէ տէր զՍիսարա ։

Իսկ իբրև հրձիգ եղեն և կոտորեցան, և առին յաւարի զկառսն Սիսարայ 'ի ձեռն Բարակայ, և մեռաւ Սիսարա 'ի ձեռն Յայելի, օրհնեցին Դեբովրա և Բարակ որդի Աբենէեմայ յօր փրկութե իւրեանց յասել ։ Եւ զիա՞րդ օրհնեցին երկոքեան իբրև ինքն Դեբովրա օրհնէր և մարգարէանայր ․ բայց օրհնեաց Բարակ և ոչ օրհնեաց ․ օրհնեաց ընդ նմա 'ի սկզբան օրհնութե՝ զոր ասէր ընդ նմա 'ի յօր կոտորածին Սիսարայ, իբրև զայն՝ թէ “Օրհնեցէք զտէր, զի փառօք փառաւորեալ է ,, ․ զոր օրհնեաց Մարիամ համդերձ կանամբք յօր ընկղմելոյ եգիպտացւոցն ։ Բայց ոչ օրհնեաց ընդ նմա ․ վասն զի Դեբովրայ էր օրհնութին և ոչ Բարակայ ։ “Վրէժխնդրութին, ասէ, զոր խնդրեաց Իսրայէլի օրհնութե ժողովրդեանն՝ որ օրհնեցին զտէր ,, ․ յայտ արար, զի վասն վրէժխնդրու-

թեն՝ զոր խնդրեաց Իսրայէլի 'ի Սիսարայ և 'ի զօրացըն՝ օրհնեցին ժողովուրդն զօրհնութիս զայս տեառն : Արդ զայս 'ի սկիզբն օրհնութէն ասացին երկոքեան ․ և աստի և անդր ինքն Դեբովրա ասէր զոր ինչ ասաց :

"Լուարուք թագաւորք՝ որ նմանէքդ Յաբինայ, և պարծուկ¹ պետք և զօրավարքդ՝ որ նմանէքդ Սիսարայ ․ ես զտեառն օրհնութի օրհնեցից „ ․ վասն գործոյն զոր գործեաց ընդ հալածիչս ժողովրդեանն : "Եւ տամնաղեաւն սաղմոսարանաւն սաղմոս ասացից Աստուծոյ „ ․ վասն որոյ իրիք համդերձեալն է առնել աստի և անդր ընդ թշնամիսն իսրայելացւոց : Եւ արդ սկսաւ 'ի պատճառ այսր փրկութէ յիշատակել զառաջին երախտիս փրկութեանն : "Տէր, ասէ, յելանելն քում 'ի Սէիրայ „ ․ վասն առաջին փրկութեանն՝ որ եղև Յակովբու հօր նոցա, Իսաւայ՝ որ բնակեալ նստէր 'ի Սէիր, յիշատակէ : "Եւ սուրբն 'ի Փառան լեռնէ „ ․ զփրկութի այն՝ որ եղև յեգիպտոս, յիշատակէ : "Իբրև գնացեր դու 'ի մէջ անդաստանացն եդովմայեցւոց՝ երկիր շարժեցաւ „ համդերձ այլովք ․ զնոյն զապրուստ, որ եղև Յակովբայ յԻսաւայ և յայլոց թագաւորաց հեթանոսաց՝ որք ոչ ինչ մեղանչեցին նմա վասն կոտորածոյն Սիքեմայ, յիշատակէ : "Լերինք շարժեցան առաջի տեառն, և լերինք դողացան իբրև զլեառն Սինայ „ ․ զհսկայազունսն՝ որ էին ընդ Եսաւայ, և զթագաւորսն հեթանոսաց՝ որ բնակեալ նստէին շուրջ զՍիքեմաւ, յորջորջեաց 'ի լերինս :

"Յաւուրս Սամագարայ որդւոյ Քառնաթայ „ ․ այն որ մաճիւն արօրոյ կոտորեաց յայլազգեաց վեց հարիւր այր յաւուրս Յայէլի՝ որ առաքինեցաւն և սպան նահատակութեն զՍիսարա : "Հատան կորեան ճանապարհք քաղաքացն և ճանապարհքն ընդ որս երթային „ ․ տեղին՝ ուր բնակեալն էր սրբութիւնն, թողան լքան շաւիղքն հորդեալք, և գնացին զարտուղի յերկիւղէ կառացն Սիսարայ : "Հատան մնացին դաշտք Իսրայելի„ ․ այս ինքն 'ի Գաղութ ․ Եկին 'ի բնա-

1 Միւս օրինակն պարուկ :

կուէ գեօղքն և քաղաքքն և ագարակքն՝ որ անպարիսպ բնակեալ նստէին . մինչ զի եկի հասի կացի ես Դեբովրա, և մարգարէացայ և զօրացուցի զԲարակ ։

“Ընտրեսցուք ա̃ծ նոր, կամ Յայէլ նոր ” . վասն զի 'ի ձեռն զածածկողին [1] սատակեաց ա̃ծ զՍիսարա զհսկայազնն հեթանոսաց ։ Կամ զի թէ 'ի ձեռն դըրտերն հեթանոսաց եղև փրկութի̃ն հեբրայեցւոցն, կամ մարգարէն որով մարգարէացաւ յաւուրս փըրկութե̃ Բարակայ վասն մեծ փրկութե̃ն՝ որ հանդերձեալ էր լինել 'ի ձեռն Գեդէօվնի . քանզի և անդ նոր գործեցաւ, զի 'ի ձեռն ջուրցն փորձեցան և ընտրեցան սակաւքն և նուազքն, փորձեցան քննեցան և բազումք անարգեցան ։ Եւ կամ թէ այսու նորն սափորոցն և կանթեղացն և փողոցն, “Ընտրեսցուք, ասէ, Աստուած նոր ” . այս ինքն եղիցի նոր ինչ, այնու՝ որ 'ի ջուրսն եղև, և կամ այնու՝ որ 'ի կանթեղսն և 'ի փողսն եղև ։ Եւ ապա եղիցի կոտորածն 'ի մադիանացիս . այն՝ որ առակեցաւ 'ի նկանակն գարեղէն ։ “Եւ սուսեր և գեղարդն մի́ երևեսցի 'ի մէջ քառասուն հազարացն Իսրայէլի ” . վասն զի այս քառասուն ամ, զոր տիրեաց նոցա Բարակ, հանգչելոց էին 'ի պատերազմէ . և ոչ էր երևելոց 'ի մէջ նոցա սուսեր և գեղարդն, այն որ վառեցոյց Յեշով զքառասուն հազարն՝ որ առաջի որդւոցն Իսրայէլի անցին յերկիրն պարգևաց ։ Իսկ ըստ հեբրայեցի բարբառոյն փոխանակ այսորիկ զոր ասէս, թէ “Ընտրեսցուք ա̃ծ նոր ”, ասէ “Ընտրեսցէ ա̃ծ նոր դատաւորս, և ուղղեսցէ նոքօք զիրաւունս և զարդարութի̃ . սուսեր և գեղարդըն մի́ երևեսցի 'ի մէջ քառասուն հազարացն Իսրայէլի ” . յայտ արար՝ եթէ յորժամ կան ուղիղ դատաւորքն, իշխէ սուր նոցա 'ի թշնամիս իւրեանց . որպէս և յաւուրս Յեշովայ, զի վառեցոյց զքառասուն հազար ։

Եւ այն՝ եթէ “Սիրտ իմ ասաց ցքննիչ ” ; յայտ արար եթէ սիրտս իմ միաբան է ընդ վարդապետս Իսրայէլի, որք մեկնէնլ և ընտրեն 'ի միտս իւրեանց 'ի ժողովրդեանն օրհնեն զտէր ։ “Եւ որք նստիք յէշս

1 Միւս օրինակն ծածկողէն ։

սպիտակս, և որ բնակեալն են յապարանս, և որք ճանապարհորդքն են, ընդ միտ ածէք 'ի բանից այտի քննողաց ». յայտ արար՝ եթէ մեծամեծք և փոքունք՝ և որ 'ի չէնս նստին, և որ ընդ ճանապարհս անցանեն, առ հասարակ օրհնեն յորժամ տեսանեն զի կատարի արդեամբք կոտորածն Սիսարայ՝ որ կանխեցաւն և ասացաւն 'ի ձեռն բանի: Եւս առաւել անկանի զարմացումն յօրհնիչս և յերգարկս[1], յորժամ տեսանեն եթէ 'ի ձեռն վատթարի և ծանակի[2] անկաւ պարծոյկ քաջամարտիկն հեթանոսաց: Իսկ ըստ հեբրայեցւոց բարբառոյն փոխանակ այնր՝ թէ «Ընդ միտ ածէք 'ի բանից քննողացն », ասէ՝ թէ «Ընդ միտ ածէք 'ի բարբառոյն փայտահարացն և ջրկրացն[3] սեղանոյն ամենայն Իսրայէլացւոց »: «Ա՟նդ տացեն զարդարութի՟ տեառն ». և զի ասաց՝ թէ որ հեծեալ յէշս, հանդերձ այլովք, յայտ արար՝ թէ երկիրն շինի, և լինին գաբաւոնացիքն փայտակիրք[4] և ջրբերք. և օրհնէ ժողովուրդն և վասն այսր առաջի դրան վրան ժամուն: «Եւ ապա եկն էջ ժողովուրդն 'ի դուռն տեառն ». վասն զի փախստեայք եղեալ էին, և 'ի դառնալն իւրեանց եկին իջին 'ի դուռն վրան ժամուն օրհնել զտէր:

«Զարթիր Դեբովրա և մարգարէաց, զարթիր զարթիր և քաջալերեաց զԲարակ, զարթիր և զարթո երթալ գերել զգերիչս իւր ». այս ինքն աւերել յաւարի զաւարիչս իւր: «Յայնժամ էջ զօրագլուխն զօրավարն օրհնել առաջի տեառն ». յայտ արար և ցոյց՝ եթէ գալոց է Բարակ հատուցանել զխոստովանութի՟ այ, զարթոյց զօրացոյց զնա 'ի վերայ Յաբինն արքային քանանացւոց: Բայց ըստ հեբրայեցւոց բարբառոյն փոխանակ այնր՝ եթէ «Էջ ապրեցուցիչն օրհնել », ասէ «Յայնժամ իշխեսցէ մնացորդն որ գտանիցի յԻսրայէլ 'ի հսկայազնն հեթանոսաց, զի էջ ընդ իս արամբն յեփրեմէ, և գործք իւր յԱմաղէկ ». Յեշուն՝ որ կոտորեաց զամաղէկացիսն յանա-

1 Միւս օրինակն յերգակս:

2 Միւս օրինակն ծանայ և պարոյկ քաջամարտիկն:

3 Միւս օրինակն ջրակրացն:

4 Միւս օրինակն փայտաբերք:

պատի ։ “Զկնի քո Բենիամին սիրով քո „, Սաւուղ, այն՝ որ կոտորեաց սատակեաց և ինքն զմնացորդս ամաղեկացւոց ։ “Ի Մաքերայ եւ քննիչն „ · այս ինքն վարդապետ և ուսուցիչ ։ “Եւ 'ի Զաբուղոմնէ որ գրեին յեղեգն գրչի՝ դպիրք են նոքա „ · յայտ արար և ցոյց՝ թէ դպիրքն վարդապետքն , որ մեծամեծք Իսաքարայ, միաբանեին 'ի մարտ պատերազմի ընդ Դեբովրայ և ընդ Բարակայ ։ Եւ Իսաքար իբրև առակի 'ի հեթանոսս · վասն զի և նոքա իբրև զԲարակն քաջ եղեն 'ի մարտ պատերազմի ։

“Ռուաքեցաւ յոտս իւր բաժինն Հռուբէլի „ · այս ինքն 'ի բաժինն Հռուբէլի նահապետ եղբարց իւրոց կարգեցաւ երթալ մարտնչել Բարակ նեփթաղիմեանց, միջնորդ եղբարց իւրոց ։ “Մեծամեծք են ճշգունք քննութե սրտի „ · վասն զի քննեցին հռուբէլեանք զսիրտ որդւոցն՝ որ ոչն էին ծնեալ, թէ “Մի՞, ասէ, ասասցեն որդիքն ձեր ցմեր որդիսն „ ։ Սկսաւ ուսուցանել նմա, թէ “Զի՞արդ նստիս դու 'ի մէջ շաւղաց լսել զխանչիւն ցուոց „ · այս ինքն է, զի թէ մեղիցէք և խոտորիցիք 'ի տեառնէ, և երթիցէք 'ի վերայ թշնամեաց ձերոց ընդ մի ճանապարհ, ընդ եւթն ճանապարհ փախստեայք լինիցիք յերեսաց նոցա ։

“Գաադ յանդս Յորդանան գետոյ բնակեալ է „ 'ի բաժինն Ովգայ · և յաղթ և հզօրագոյն է քան զամենայն թագաւորս ։ Եւ Դան, զի անուանեցաւ օձ խարամանի[1], որ հարկանէ զգարշապարս երիվարաց ։ 'Հա գայ[2] նաւովք իջանել լինել պանդխտութեամբ 'ի մէջ սոցա յերկիւղէն քանանացւոց ։ “Ասեր բնակեալ էր զծովեզերաւ · զի յորժամ լսէ զհամբաւն, և նա փախստեայ լինիցի, և բնակեսցէ 'ի խորամատս նորա „ · այս ինքն յամենայն աւերակս նորա բնակեսցէ զօրութե յերկիւղէ գերեվարացն ։ “Զաբուղոմն՝ ժողովուրդն որ նախատեաց զանձն իւր 'ի մահ „ · այս ինքն զի խրոխտացաւ և ընկեց զանձն իւր 'ի մահ ։ “Նեփթաղիմ յետ յաղթութեն իւրոյ 'ի բարձունս ագարակաց բնակեսցէ „ հնձել զհունձ, և կթել զկութ ·

1 Միւս օրինակն խորամանկ ։

2 Միւս օրին. գամ առաւել իջանել ։

և ոչ եթէ 'ի մէջ նաւաց նստել պանդխտութք : “Եկին թագաւորքն ժողովեցան ” ․ յաւուրսն Յեշովայ : “Եւ եղև բեկումն նոցա 'ի վերայ Ջուրցն Մեգեդոմնեայ ” ․ զի 'ի վերայ նոցա ժողովեցան : “Զարծաթ և զոսկի ոչ առին ” ․ վասն զի կոտորել յօժարէին և ոչ յաւարել : “Աստեղք ետուն ճակատ ըստ իւրաքանչիւր կարգաց ” ․ կամ զի զտունն Բարակայ առակեաց յաստեղս , իբրև եղբարքն Յովսեփու՝ որ առակեցան յաստեղս 'ի ձեռն երազոյն Յովսեփու ․ և կամ զի 'ի ձեռն աստեղացն ծանուցէ , զի յերկնից եղև նոցա փրկութիւն 'ի ձեռն Բարակայ : “Գերփեաց զնոսա ձորն Կիսոնի ” ․ կամ Ջուրքն որ բըղխէին 'ի նմա , կամ արեամբն որ հեղաւ 'ի նմա ․ Նա և Դաւիթ իսկ ցուցանէ՝ եթէ 'ի ձորն Կիշոնի կոտորեցան սիսարայեանք : “Հաս անձն իմ 'ի զօրութե վերայ ” ․ այս ինքն ստացաւ զզօրութիւն : “Յայնժամ անկան կոբեան սմբակք երիւարաց սիսարայեանց , և մռնչիւն զօրութեան պատերազմողացն Բարակայ : Նզովեսջիք զՄերովզ ասաց հրեշտակն տեառն ” ․ որ էլ 'ի գլուխ[1] տասն հազարացն Բարակայ : “Նզովեսջիք զնա և զբնակիչս իւր, զի ոչ ելին ընդ արս յօգնականութիւն ժողովրդեանն տեառն ” :

“Օրհնեսցի 'ի կանայս Յայէլ ” ․ ոչ յամենայն կանայս՝ որ յերկրի են, այլ “'ի կանայս որ 'ի վրանի են ” : Քանզի Յայէլ՝ որ սպան զթշնամին ժողովրդեանն , տիպք եղեն Մարիամու ․ զի 'ի ձեռն պտղոյն՝ որ 'ի նմանէն եղև , վանեցաւ թշնամին սատանայ հեթանոսաց և ժողովրդեանն : Մարիամ օրհնեսցի յամենայն կանայս ․ վասն զի 'ի ձեռն որդւոյն՝ որ 'ի նմանէն ծնաւ , եղև փրկութիւն ճշմարիտ ամենայն բնակչաց երկրի : “Օրհնեսցի 'ի կանայս Յայէլ կին Քեբրայ կինացւոյ աներոյն Մովսիսի ” ․ զի ետ Աստուած փրկութիւն 'ի ձեռս նորա , զի եղիցի նոցա պարծանք 'ի մէջ ժողովրդեանն՝ ուր նստէինն 'ի պանդխտութե , և 'ի հեթանոսս՝ զի նախատէին զնոսա ․ վասն զի թողին զերկիրն և զգիւս նոցա , և եկին բնակե-

1 Ցօրինակին դժուարընթեռնլի էր բառդ ․ և 'ի միւս օրինակն պակասէր ամբողջ բանն :

ցան 'ի մէջ իսրայելացւոց։ Արդ "Գտին, ասէ, զաւար, և բաժանեցան [1] իւրաքանչիւր առ այր ջորի": Արդ նայեաց և տես, զի զոր ինչ ասացն՝ եթէ "Մի՛ տայք զանասունս ձեր 'ի խառնս", զնա առաւել փութացաւ առնել ժողովուրդն. և ողորմութիւնք նորա իբրև ծագել արեգական տապեռանդն զօրութ՟ե իւրով, յայտ արար՝ զի 'ի վերայ ամենայնի սփռեալ են ողորմութիւնքն ա՟յ. զի իբրև ծագումն արեգական, զի անկանի համօրէն 'ի մարգաց ամենեանն 'ի վերայ ամենայնի գոլախառն տապն արեգական։

ԳԼՈՒԽ Բ

Յետ այսորիկ տիրեցին մադիանացիքն 'ի վերայ ժողովրդեանն զեւթն ամ վասն մեղաց ժողովրդեանն. և ոչ տային նոցա նստել բնականալ յերկիր ժառանգութ՟ե իւրեանց, վասն զի խաղացեալ գային ամենայն մադիանացիքն ոչ իբրև գերիչք՝ որ գերեն և թողուն մնացորդ, այլ գային հասանէին ամենայն ստացուածովք իւրեանց, և լինէին անդ բազում ժամանակս. զի որ ինչ 'ի նոցանէն մնայր, աւերէր անասուն նոցա։ Բողոք բարձին ժողովուրդն վասն այսր առ տէր. և առաքեաց առ նոսա մարգարէ, և եկն պատմեաց վասն մեծի փրկութ՟են զոր արար նոցա յեգիպտոսէ. և վասն զի զրպարտեցին զնա, և կցորդեղեն կուոցն ամովրհացւոց,ած 'ի վերայ նոցա զայս ամենայն։ Եւ երևեցաւ հրեշտակն տեառն Գեդէովնի, և խոստացաւ նմա՝ զի 'ի ձեռն նորա փրկէ տէր զժողովուրդ իւր։ Իբրև եբեր զպատգամն, մատոյց զողջակէզն, վառեցաւ հուր 'ի վիմէ անտի, և եկեր զպատարագն, և վերացաւ։ Եւ վասն զի երկեաւ Գեդէոն՝ զի գուցէ մեռանիցի 'ի տեսլենէ անտի հրեշտակին, ասէ ցնա տէր 'ի տեսլեանն, և կամ 'ի ձեռն մարգարէի որ յաւուրս նոցա էր. "Ողջոյն ընդ քեզ, մի՛ երկնչիր, ոչ մեռանիցիս": Դարձեալ քակեաց զմեհեանն Բահաղու՝ որպէս ասացաւ նմա, և կոտորեաց

[1] Միւս օրինակն բաժանեաց իւրաքանչիւր այր ջուրի։

զանտառն. և զի մատնեաց զանձն իւր 'ի մահ, ապրեցոյց հայր իւր 'ի ձեռաց ժողովրդեանն, որ կամեցան սպանանել զնա։

Յայնմ ժամանակի ժողովեցան մադիանացիքն. և խնդրեաց Գեդէոն նշան, որ պաշտէր զպէմս փրկութ̃ե նոցա, և նկարէր 'ի նմա խորհուրդ յաւիտեան խոտելոյ նոցա։ Քանզի գեղմ̃ն ասու, զոր խնդրեաց տեղալ 'ի վերայ նորա միայն անձրև, Երուսաղէմ էր. զի 'ի նմա միայն բնակեալ էր սրբութիւնն քան յամենայն քաղաքս. և զի մզեցաւ և լցաւ 'ի նորմանէ կրաւ միաւ ջուր, յայտ արար և եցոյց՝ զի մերկացաւ և կաց խայտառակ. վասն զի թողին զխորհուրդն մկրտութ̃ե՝ որ նկարեալ էին 'ի նմա։ Եւ զի երկրորդեաց և խնդրեաց՝ թէ 'ի վերայ ամենայն երկրի եղիցի անձրև, և 'ի վերայ գեղմանն ոչ, նոյն ինքն է Երուսաղէմ. զի ել սրբութ̃ի 'ի միջոյ նորա. և փոխանակ միոյ սեղանոյն, որ կանգնեալ էր 'ի նմա, սեղանք բազումք եղեն ընդ ամենայն երկիր, այս ինքն է ընդ ամենայն եկեղեցիս Քրիստոսի ահա կազմեալ կարգին։

Եւ զի մի՛ պարծեսցին ժողովուրդն՝ թէ բազմութ̃բն իւրեանց յաղթեցին մադիանացւոցն՝ և ոչ օգնութ̃բն տեառն, և զի ծանուսցէ նոցա՝ թէ պահէն զօրէնս ճշմարտիւ, պաշտի 'ի նոսա այն՝ զոր ասացն՝ թէ “Մինն 'ի ձէնջ զհազարսն հալածեսցէ, և երկուքն զբիւրսն„, դարձոյց անդրէն զքսան և զերկուս հազարսն վատասիրտս. և տասն հազար՝ որ մնացին, զատան մեկնեցան 'ի ջուրսն քննութ̃ե. զի որք լափեսցեն զջուրսն լեզուաւ իւրեանց, նոքա են տիրասէրք իբրև շունք միամիտք, և նոքա են արժանի հաղորդել քեզ 'ի փրկութ̃ե յայս՝ որ լինի 'ի ձեռն քո որդւոցն Իսրայէլի։ Զի եթէ ոչ էին նոքա հաւատացեալք, ոչ իջանէին նոքա երեքարիւր արամբ 'ի վերայ բանակին՝ որ բազում էր իբրև զմարախ, ընդ որում ամենայն զօրք նոցա միահամուռ զահի հարան մարտնչել ընդ նոսա. վասն զի մեկուսի եղև Գեդէոն 'ի զօրուէ անտի զոր ժողովեաց, զի քաջալերեսցի 'ի վերայ մադիանացւոցն։ Առաքէ 'ի բանակ անդր լրտես, զի լուիցէ թէ զինչ ինչ մարգարէանան

տեսիլքն Մադիանացւոց ։

Արդ 'ի նկանակ գարեղէն 'ի փոքրն և յանարգն առակեաց զսուր իւր. վասն զի նուաղովք և սակաւուք կոտորելոց էր զմեծ բանակն Մադիանացւոց ։ Իսկ իբրև լուաւ Գեդէոն զերազն և զմեկնութիւն երազոյն, և ետես զի սուրն նորա առակեցաւ 'ի նկանակ գարեղէն, նկանակն գարեղէն՝ զոր կանխեաց մարգարէացաւ Դեբովրա վասն նորա, դարձաւ և ասաց՝ եթէ մատնեաց տէր 'ի ձեռս ձեր զբանակն Մադիանացւոց. ոչ կարէր համարձակել և ասել՝ եթէ մատնեաց տէր զբանակն 'ի ձեռս ձեր, եթէ ոչ զի ամենեքին ճշմարտիւ հաւատացեալ էին 'ի տէր ։

Եւ զի բարձցէ զպարծանսն հպարտութեան և 'ի սոցանէ, առ 'ի նոցանէն զսուսերս իւրեանց, և եդ 'ի ձեռս նոցա զփողս և զկանթեղս. զի 'ի բարբառոյ աղաղակի նոցա զարթիցէ Մադիան և վառեսցի 'ի պատերազմ, և 'ի լուսոյն կանթեղաց ելցէ այր ընդ սուր ընկերի իւրոյ ։ Բարբառեալ կոչէին սուր. ոչ զզօրուն իսրայէլացւոց՝ որ երկեաւ և փախեաւ, այլ տեառն՝ որ զԳեդէոն առաքեաց ։ Եւ Գեդէոնին՝ զի ասէին, վասն զի 'ի ձեռն նորա կամեցաւ տէր փրկել և տալ զնահատակութիւն ժողովրդեանն ։ Եւ զի ցուցցէ և յայտ արասցէ ա՟ծ, զի եթէ մատնեալ զՄադիամ 'ի ձեռս ժողովրդեանն պատժէր, իւթոյլ տայ փախստեայ լինել երկուց զօրավարացՄադիամու, զի եղիցին ձերբակալ լինել 'ի ձեռաց եփրեմեան գնդին ։

Արդ նոքա փոխանակ զարմանալոյ ընդ մեծ հաւատս առնն, որ երեքարիւր մերկանդամ արամբքն քաջալերեաց ելանել 'ի վերայ կուռ վառեալ բանակին, որ բազում էր իբրև զաւազ առ ափն ծովու, և թէ զիա՞րդ ինքն զինքն կոտորեաց Մադիամ, և անձամբ կոտորածոյն ետ զնահատակութիւնն Գեդէոնին, եկին վասն երկուց փախստէից նորա նկանս 'ի ձեռս նոցա. Ճառ արկեալ և կագէին ընդ նմա կագ չար, և ասեն՝ եթէ "Ընդէ՞ր ոչ կոչեցեր զմեզ յերթալն քո 'ի վերայ Մադիանացւոցն 'ի մարտ պատերազմի" ։ Իսկ Գեդէոնին արար իւր թիկունս և տուն ապաւինութե՟ զխոնարհութիւն իւր. զի գուցէ՝

թէ ապրեցաւ նա 'ի մադիանացւոցն, սպանանիցեն զնա գունդն եփրեմեան, ետ պատասխանի և ասէ, եթէ "Լաւ է ճռաքաղութիւն Եփրեմի, քան զկութս իսրայէլեան": Այս ինքն, լաւագոյն է փրկութիւն՝ որ եղև ժողովրդեանս 'ի ձեռն այդ երկուց փախստէիցդ զոր կալարուքդ, քան զբեւրսն և զհազարսն մադիանացւոց, որ կոտորեցան 'ի կանթեղաց և 'ի բարբառոյ մերոյ: Այսու միով բանիւ խոնարհութեան փարատեաց յիւրմէ զմահաբեր սպառնալիսն:

Որդ Գեդէոնին՝ այն որ կանթեղօքն և աղաղակաւ կոտորեաց 'ի գիշերին հարիւր և քսան հազար, առաջի արկեալ փախստեայ տանէր 'ի տուէ զհնգետասան հազարսն որ մնացին: Եւ ասէ ցորդիսն Սակքովթայ և ցընկերս նոցունն, զի տացեն հաց զօրուն՝ որ նքողեալ էին 'ի սովոյն: Դարձուցին նոքա նմա անդրէն անարգանս փոխանակ ընդ հացին: Բայց ոչ համբերէր նոցա իբրև զեփրեմեան գնդին. վասն զի իբրև կալաւ Զեբէէ և Սաղմանա զթագաւորսն Մադիամու, որովք նախատեցաւն, մերկաց զոգիսն 'ի մարմնոյ նոցա 'ի ձեռն սրոյ սուսերի, վասն զի ոչ կամեցան արկանել զոյժ զօրութեան 'ի ձեռն հացին արանցն որ ընդ նմա էին. սպան և զտունն Զեբէեայ: Վրէժխնդիր եղև 'ի նոցանէն երկոցունց զվրէժ արեան եղբօր իւրոյ, որ սպանին սրով: Եւ հանգեաւ երկիրն յաւուրս նորա ամս քառասուն:

Յետ Գեդէոնի կայ Աբիմելէք հարճորդին Գեդէոնի երիս ամս, և սպան զեւթանասուն զեղբարսն իւր. բայց Յովաթամ միայն ապրեցաւ: Բայց որդիքն Սիքէմայ և ընկերքն իւրեանց, որ թագաւորեցուցին զնա, կոտորեցան 'ի նմանէն. սատակեցաւ և ինքն 'ի ձեռաց նոցա: Եւ եղև 'ի նոցանէն վրէժխնդրութիւն որդւոցն Գեդէոնի՝ զորս սպանն Աբիմելէք 'ի ձեռն ապիրատ մարդոց զոր վարձեացն եւթանասուն արծաթոյ. այսոքիկ որ 'ի Բագնեայ կռոցն իւրեանց թոշակեցին նոքա: Ապա յարեաւ յետ Աբիմելէքայ Թովա որդի Փուայ, և դատեաց զժողովուրդն Իսրայէլի քսան և երիս ամս: Եւ յետ նորա յարեաւ Յայեր գաղաադացի, և առաջնորդեաց Իսրայէլի քսան և երկուս ամս:

Ապա յետ նորա գործեցին որդիքն Իսրայէլի զչարիս առաջի տեառն, և մատնեցան 'ի ձեռս որդւոցն Ամովնայ ութ և տասն ամ։ Ապա բողոք բարձին որդիքն Իսրայէլի առաջի տեառն, և ոչ լուաւ նոցա։ Առաքեցին առ Յափեթ գաղաադացի գալ լինել նոցա զօրավար զօրաց 'ի մարտ պատերազմի. և վասն զի տես նա՝ զի անարգեաց ժողովուրդն զիւրաքանչիւր կուռսն, և ոչ եղեն ընդունելի առաջի տեառն, մատուցին զպաղատանս, և ոչ լուաւ։ Ասէր ընդ անձն իւր, թէ ես իսկ ո՞վ իցեմ, զի ինձ լուիցէ այն՝ որ ոչ լուաւ ամենայն Իսրայէլի. զի յաղօթս կաց և խնդրեաց 'ի նմանէն. և վասն զի ուխտել զանասուն անարգ էր, և ուխտել զմարդ բամբասելի էր. և թէ իւ ցուցից զսէրն իմ առ նա, զայն ոչ գիտեմ։ Ահաւասիկ բանամ զբերան իմ 'ի ծածուկ առ նա, թէ որ ելցէ 'ի տանէ իմմէ ընդ առաջ իմ, մատուցից նմա պատարագ։ Եւ արդ այսուհետև 'ի ձեռս այ̃ է, զի պատրաստեսցէ զպատարագն 'ի փառս ծառայից իւրոց, որպէս զի և երբեմն պատրաստեաց ըզգառն իւրում պատարագին։

Իսկ իբրև յաղթեաց և դարձաւ, և ուխտեաց յայտնապէս զոր ուխտեալն էր 'ի ծածուկ։ Զի թէ ուխտեալ էր զնա յայտնապէս մինչ դեռ երթայր 'ի պատերազմ, լսէին զհամբաւ ուխտի նորա, և զգուշանային ընտանիք նորա յելանելոյ ընդ առաջ նորա. նա և բարեկամքն իսկ և հարազատքն յետ յաղթութե̃ն որք ընթանային 'ի տունն անդր, զի պատրաստեսցեն հանել ընդ առաջ նորա որ ինչ պատշաճ էր առ 'ի մատուցանել զպատարագ ուխտից իւրեանց։ Նա և աւետաբերք յաղթութեան նորա պատմէին վասն ուխտից նորա, և կարծէր դուստր իւր յելանելոյ ընդ առաջ նորա։ Արդ ո՞վ հան զդուստր իւր ընդ առաջ նորա, եթէ ոչ աւետաբերք յաղթութե̃ նորա։ Արդ այնոցիկ՝ որ ընթացան առնուլ զառհաւատչեայն, որ զաւետիսն յաղթութե̃ բարձեալ ունէին, եթէ գիտակ էին ուխտից նորա՝ յառաջ քան զտալ աւետեացն՝ նախ զգուշութի̃ տային ընտանեաց նորա, զի մի՛ մեռցին։

Արդ ուխտեաց զդուստր իւր, և ոչ ուխտեաց.

ուխտեաց զնա, զի ընդ բնակիչս տան իւրոյ համարեալ էր նմա իբրեւ ուխտերն. բայց ոչ ուխտեաց զնա, զի ոչ զանուն դստերն իւրոյ ասաց յայտնապէս 'ի ժամ ուխտից իւրոց: Ծածուկ էին ուխտքն Նափեթայ. և առ 'ի փորձել մտացն նորա եւ միամօրն ընդ առաջ նորա. և իբրեւ կարէր [1] ծածկել զուխտն, ոչ ծածկեաց զնա, այլ տրտմեցաւ. զի ցուցցէ զսէրն իւր առ դուստրն իւր: Եւ դարձաւ ուխտեաց զնա յայտնապէս առաջի ամենայն ժողովրդեանն 'ի ժամանակի՝ զի ամենայն զքօսանք ալեաց ստութէ յարուցեալ էին 'ի վերայ նորա ծածկել զուխտ ուխտից իւրոց:

Ընդ որդիքն Եփրեմի ոչ վասն յաղթութէ նորա, և ոչ վասն տրտմութեան դստերն իւրոյ զոր ուխտեաց՝ զի մատուցանէր զնա պատարագ՝ պատկառեցան, այլ եկին մարտ եդին, սկսան կագել ընդ նմա. որպէս և կագեցան վասն Գեդէոնի. վասն զի ոչ կոչեաց զնոսա յերթալն իւրում 'ի մարտ պատերազմի: Արդ ոչ եթէ Նափեթայ էր այս, զի կոչեսցէ զնոսա, վասն զի հալածական էր նա. և զնա իսկ կոչելով կոչեցին յաւուր Ճակատին, յորում աւուր եկեալ հասեալ էր 'ի մարտ պատերազմի 'ի թիկունս նոցա: Վասն զի ոչ եթէ կագելով միայն կագեցան ընդ նմա, որպէս և ընդ Գեդէոմնի, այլ և զտուն նորա այրել կամեցան: Մարտեան ընդ նոսա գաղայադեան գնդաւն, և կոտորեաց 'ի նոցանէն քառասուն և երկուս հազարս: Եւ վրէժխնդիր եղև 'ի նոցանէն զամբարտաւանութեանն՝ որ յետ պատերազմին 'ի վերայ քաջացն յաղթողացն հպարտանային նոքա: Դատեաց Նափեթ զԻսրայէլ զվեց ամ:

Ապա կաց իշխան յետ նորա Եսեբոմն 'ի Բեթղեէմ գեղջէ, և առաջնորդեաց Իսրայէլի ամս եւթն: Ապա առաջնորդեաց յետ նորա տանն Իսրայէլի Ելովմ զաբուղոնեան, և կաց նա իշխան 'ի վերայ տանն Իսրայէլի ամս տասն: Ապա կաց իշխան յետ նորա 'ի վերայ տանն Իսրայէլի Ղաբդոն որդի Սիգլմայ ափրաթոնացւոյ, և առաջնորդեաց տանն Իսրայէլի ամս ութ:

1 Միւս օրինակն կարծէր:

ԳԼՈՒԽ Գ

ԴԱՐՁԵԱԼ անօրինեցան որդիքն Իսրայէլի առաջի տեառն, և մատնեցան 'ի ձեռս այլազգեացն քառասուն ամ։ Աւետարանեցաւ Սամփսոնն 'ի հրեշտակէ, զի ծնցի յամուլ կնոջէ անտի. և երևեցաւ հրեշտակն երկրորդ անգամ կնոջն վասն խնդրուածոցն Մանուեայ առն իւրոյ, զի յայտ արասցէ և ցուցցէ՝ եթէ հրեշտակ ասաց ցՄանուեա, զի եթէ մատուցանիցես զողջակէզս՝ տեառն մատուսջիր։ Եւ զի ցուցցէ դարձեալ, եթէ ա̃ծ յայտնեաց [1] նովաւ, ասաց "Զի՞ հարցանես վասն անուան իմոյ, զի նա է սքանչելի"։

Իսկ իբրև ծնաւ մանուկն և եղև այր երիտասարդ, եղև 'ի կամաց տեառն առնուլ նմա կին 'ի դստերաց այլազգեաց։ Նա իբրև իջանէր յայլազգիս ընդ հօր և ընդ մօր իւրում վասն այսր իրաց, և ահա կորիւն մի առեւծու գոչեաց ընդդէմ նորա. վառեցաւ 'ի նա հոգին զօրութեա̃ն զոր զգեցեալն էր, և հեղձոյց զնա իբրև զուլ մի, և հօր և մօր իւրում ոչ ցոյց։ Իբրև դարձաւ յետ աւուրցն առնուլ զկինն զոր խօսեցաւ, խոտորեցաւ 'ի ճանապարհէ անտի երթալ տեսանել զոսկր յայլըն առեւծու. և տեսանէր զի գնդակ մեղուաց պարս տուեալ էր 'ի բերան առեւծուն, և այն լի էր խորսխով մեղու. մատեաւ վաղվաղակի և յինքն կթեաց զխորիսխն մեղու. գնայր գայր և ուտէր։ Եկն առ հայր և մայր իւր, և ետ նոցա 'ի խորսխէ անտի մեղու. առին կերան և նոքա, բայց նա ոչ պատմեաց նոցա եթէ յառեւծու բերանոյ առեալ բերէր նոցա զմեղրն. քանզի թէ յայտնեալ էր նոցա, ոչ ուտէին նոքա զմեղրն՝ եթէ 'ի բերանոյ առեւծուն բերէր նա. վասն զի զօրէնս լուծանէին մեղուն, զի 'ի մեռեալ մարմնոյ առեւծուն ուտէին։ Արդ քաղցր մեղրն որ 'ի դառն առեւծն գտաւ, խորհուրդ նկարէր զայնորիկ՝ որ 'ի ձեռն սպանող մարմ-

1 Միւս օրինակ յայտնեցաւ։

նոյն գտանէր զկեանս ամենայն որդւոց մարդկան ։

Արդ առակեաց զառակն, և յայտնեաց զնա կնոջ իւրում, և թափեցին զնա 'ի նմանէն, զի զխորհուրդս սրտի իւրոյ այլ կնոջ մի յայտնեսցէ ։ Բայց սակայն վառեցաւ 'ի նա հոգւի զօրութե՛, և հատ յուղկամնէն այլազգեաց և եդ 'ի բերան նոցա. այսու՝ զի 'ի ձեռն կոտորելոյն զոր կոտորեաց 'ի նոցանէն, նոքօք հատոյց նոցուն զպարտս պատմուճանացն. վասն զի նենգեաց զնա կինն իւր, զի պարտաւորեսցի յիւրոց սպասաւորացն ։ Արդ իբրև կոտորեաց զերեսուն այրն այլազգի, և աղուեսօքն այրեաց զամենայն արմտիս անդաստանացն նոցա, եկին հասին այլազգիքն 'ի վերայ տանն Յուդայի, և կապեցին մատնեցին ըզ Սամփսոն այլազգեացն ։

Իսկ իբրև յարեան այլազգիքն սպանանել զՍամփսոն, նա հատ կոտորեաց զկապանս իւր, և ծնօտիւ իշոյն՝ զոր եգիտ նա առաջի իւր՝ սպան 'ի նոցանէն հազար այր ։ Արդ ծնօտ իշոյն՝ որ 'ի ժամ պատերազմին ելից նմա զտեղի սրոյն սուսերին, 'ի ժամ ծարաւոյն դարձաւ և եղև նմա քաղցր աղբերակն ։ Արդ այն՝ որ սակաւիկ միւս ևս յառաջ զաղբեւրս արեանն հոսէր 'ի մարմնոցն այլազգեաց, յետ սակաւ մի ինքն անձամբ անձին աղբեւր հով ջուրց գտեալ լինէր առ 'ի հանգուցանել զծարաւն Սամփսոնի ։ Արդ այն՝ որ 'ի ժամ կոտորածոյն մերկանայր զոգիսն 'ի մարմնոցն այլազգեացն, 'ի ժամ աղբերն զնուաղեալ ոգին արկանէր 'ի մարմինն Սամփսոնի ։ Ունայն էր ծնօտն, և լի էր. ունայն էր 'ի ժամ պատերազմին, և լի էր 'ի ժամ ծարաւոյն ։ Արդ այն՝ որ յաջողեաց զնա 'ի ձեռն Սամփսոնի կոտորել նովաւ հազար այր, ինքն մեծացոյց յղփացոյց զնա բղխմամբ աղբեր, որով բաւական եղև յագեցուցանել զմեծ ծարաւն Սամփսոնի ։ Արդ ծնօտն որ հզօրացոյց զնա ջուրքն կակուղք՝ որ էին 'ի ներքոյ նորա, ոչ կարացին ծակել և ելանել արտաքս քան զնա, զկառափունս իշխանաց այլազգեացն խորտակէր, և զմարմինս նոցա յարիւն գլխոցն իւրեանց լուանայր ։

Անց գնաց անտի 'ի Գազայ ։ Ազդ եղև գազացւոցն. եկին պատեցին պաշարեցին զքաղաքն զգիշերն

ամենայն․ և վասն զի յուսացեալ էին եթէ այսուհետև անկաւ նա 'ի ձեռս նոցա, վասն զի մուտ նա 'ի քաղաքն՝ որոյ դրունքն աղխիւ փակեալ էին, յարեաւ զարթեաւ 'ի կէս գիշերի, և բարձ զդրունս քաղաքին սեմօքն և դռնափակօքն հանդերձ․ առ ըստ անձին, և բարձ գնաց տարաւ եհան 'ի վեր 'ի լեառնն, և անդ 'ի գլուխ լերինն կանգնեաց դէմ յանդիման Քեբրոնի, և ինքն գնաց։

Արդ չափով զօրութեն Սամփսոնի՝ զանչափ զօրութի տեառն իւրոյ նկարէր, որ զանյաղթ նիգս դժոխոց խորտակեալ հանդերձեալ էր։ Սամփսոն զարմանալեօքն զոր արար, զանձն իւր միայն ապրեցոյց 'ի մահուանէ․ իսկ տէր մեր զմարմին իւր ապրեցոյց, և զամենայն մարմին ըստ նմանութեան իւրոյ մարմնոյն ապրեցուցանէ յիշխանէն մահու յօր գալստեան իւրոյ։ Իսկ իբրև սիրեաց զԴալիլա, և նեղեաց զնա զի յայտնեսցէ նմա թէ իւ է մեծ զօրութի նորա, խաբեաց զնա եւթն զուարակեան ներդիւք դալարովք, և եւթն կարիւք նորովք՝ որ բնաւ ոչ էր 'ի գործ մատուցեալ, և եւթն գիսակօքն գլխոյ իւրոյ յուսանելովն [1] աղբամբն ընդ նիւթս ոստայնւոյ։ Իսկ իբրև յաճախեաց բազմացոյց առ նմա զպատրանս խաբէութեն, այլ ծածկամիտ և խորախորհուրդ՝ որ հարցն իւրոց ոչ յայտնեաց վասն հեղձուցանելոյ առեւծուն, և վասն մեղուն՝ որ գտաւ 'ի նմա, պոռնկին առ յայտնեաց զուխտաւորութին իւր։ Արբեցոյց և տքնեցոյց զնա․ արկ զնա 'ի քուն խոր, և գերծ զգէսս գլխոյ նորա։ Եւ վասն կաշառոյն զոր ընկալաւ յայլազգեացն, զհսկայազն և զքաջամարտիկն Իսրայէլի իբրև զաղուէս մատնէր 'ի ձեռս այլազգեացն։ Արդ զոր օրինակ զօրութին Սամփսոնին՝ զօրութին տեառն նկարեցաւ, սոյնպէս և խոնարհութի վատթարութեն նորա՝ կորստախառն խոնարհութի աշխարհիս նկարեցաւ։ Քանզի որպէս Սամփսոն առաջի Դալիլայի 'ի ժամ գերծելոյն գլխոյ իւրոյ, այսպէս տկարացեալ վատթարեալ էր աշխարհս առաջի մեղացն և անօրէնութեանն՝ 'ի ժամանակի զի ժողովուրդն

1 Միւս օրինակն 'ի հիւսելոյն։

և հեթանոսքն կորացուցանէին զգլուխս իւրեանց առաջի ամենայն կռոցն և պատկերաց ։

Ճեպեցին փութացան այլազգիքն և բրեցին զաչս նորա առ 'ի խնդրել զքէնս վրիժուցն զանուանի Հազար առնն՝ որ կոտորեաց 'ի նոցանէն ։ Ազդ արարին ժողովեցան մատուցանել զողջակէզս դիցն իւրեանց ․ վասն զի մատնեաց զթշնամին 'ի ձեռս նոցա , այն՝ որ հրձիգ արար զերկիրն յարմտեաց ․ բազմացոյց յաճախեաց զսպանեալս և զվիրաւորեալս նոցա ծնօտիւ իշոյն ։ Արդ 'ի կուրութեան անդ շարժեաց զերկուս սիւնս տաճարին , և կործանեաց 'ի վերայ բազմականացն , և արկ միատարած զամենեսին առ հասարակ ։ Եւ բազում եղեն մեռեալք վիրաւորք մահուամբն նորա քան զայն՝ զոր սպան 'ի կենդանութե̃ իւրում ։ Նոյն ինքն Սամփսոնս այս առաջնորդեաց Իսրայէլի քսան ամ ։

Իսկ Միքայն՝ զի ասաց ցմայր իւր , եթէ հազար և հարեւր արծաթն որ կորեաւ քո , այս ինքն զոր գողացանն 'ի քէն , և երդուար և ասացեր յականջս իմ, զի եթէ գտից՝ արարից 'ի նոցանէն պատկեր ձուլածոյ , ահա արծաթն քո ․ իմ առեալ էր զնա ․ առ զքոյն 'ի քեզ , և արա 'ի նմանէն պատկեր ձուլածոյ , որպէս և ուխտեաց բերան քո ։ Օրհնեաց զնա մայր իւր ․ ոչ վասն զի դարձոյց անդրէն զարծաթն , այլ զի ասաց ցնա՝ թէ արա պատկեր ձուլածոյ ։ Եւ արար կինն պատկեր ձուլածոյ քանդակագործ դրօշեալ , և եդ զնա Միքա 'ի բագնին կռոց՝ զոր շինեաց նա 'ի տանն իւրում , արար և վակաս 'ի նմանութի̃ ճշմարիտ վակասին ։ Եւ եկն մի ոմն յղևտացւոցն և ետ զինքն 'ի վարձու տասն արծաթոյ լինել քուրմ տանն Միքայի ։ Արդ եկին հասին որդիք դանեան գնդին , և առին բռնաբար զպատկեր ձուլածոյ , ոչ թէ բեկանել խորտակել զնա , այլ առնել իւրեանց կուռս օտարոտիս ։ Տարան եդին զնա 'ի քաղաքն Գէս[1] , և զոր գերեցին ․ և կոչեցին զանուն նորա Դան՝ զամենայն աւուրս որչափ եղև տունն Աստուծոյ 'ի Սելով ։

1 Միւս օրինակն Գէսէք ։

Յետ այսորիկ էր այր մի, և ունէր հարճ. և պոռնկեցաւ հարճն նորա, և փախեաւ 'ի նմանէ։ Իբրև չուզաց ածել զնա 'ի տուն իւր, ետ պատասխանի և ասէ ցպատանին իւր. մի՛ մտցուք ուրեք 'ի քաղաք՝ որ ոչ է յԻսրայէլի։ Եւ եկին հասին 'ի Գաբաա Բենիամինի 'ի ժամ երեկորին. և ոչ էր ոք՝ որ մուծանէր զնոսա։ Տես զնոսա այր մի ալևոր յեփրեմեան գնդէն անտի, և տարաւ զնոսա 'ի տուն իւր։ Եւ իբրև կերան և արբին, և ուրախ եղեն, ազդ եղև արանցն քաղաքին այնորիկ. եկին պատեցին առ հասարակ զտունն, սկսան խորտակել զդրունսն, և ասեն ցալևորն. հան արտաքս զայրդ՝ որ եմուտ առ քեզ 'ի տուն քո, զի գիտասցուք զդա՝ ով է դա։ Իսկ իբրև խօստացաւ ալևորն զդուստրն իւր կոյս և զհարճ առնն՝ և ոչ կալան յանձին, կալաւ այրն զհարճն իւր և հան զնա արտաքս առ նոսա։ Տարան չարչարեցին զնա զգիշերն ամենայն։ Իբրև այգ եղև, յարեաւ այրն երթալ զճանապարհ իւր. տես զհարճն իւր զի անկեալ կայր զսեմօք դրացն, արկ զձեռն իւր 'ի դաշոյն և պատառեաց զնա յերկոտասան մասունս, և ետ տանել ընդ ամենայն սահմանս Իսրայէլի։

Իբրև ետես զայն ժողովուրդն Իսրայէլի, նախանձայոյզ եղեն ամենայն ժողովուրդն առ հասարակ։ Ազդ ետուն ժողովեցան 'ի Մասեփա չորեքհարիւր հազար այր վառեալ. առաքեցին առ որդիսն Բենիամինի տալ 'ի ձեռս զվրիժագործսն չարեաց, և ոչ կամեցան. կամ զի թէ ամենեքին իսկ այնպէս էին, և կամ զի թէ 'ի պատճառ գրգռութե՛ կնոջն լցի վրէժխնդրութի՛ յայնցանէ՝ որ մոլորեցան 'ի պատկերն Միքայի. զի յազգէն Դանայ առին զնա։ Ազդ ետուն, ժողովեցան գունդն բենիամեան 'ի մարտ պատերազմի. և եղև քսան և հինգ հազար և եւթն հարիւր։ Հարցին գունդն իսրայէլեան ցա՛ծ թէ ո երթիցէ մեզ զօրավար զօրաց 'ի մարտ պատերազմի։ Ասէ ցնոսա տէր. Յուդայ։ Եւ վասն զի 'ի պատկերսն և 'ի կուռսն ձուլածոյս յառաջինսն՝ զոր արարին՝ ոչ նախանձեցան, և վասն պատկերին՝ զոր առ ազգն դանեան 'ի տանէն Միքայի, ոչ նախանձեցան, և վասն պոռնկին՝ որում փոխարէնն հատուցաւ՝ նա-

խանձեցան ։ Վասն զի ծուլացան 'ի մեծամեծսն, և վասն փոքուն առ 'ի կորուսանել որդւոցն Բենիամինի փութացան ժողովել, տայր նոցա հրաման ելանել 'ի մարտ պատերազմի . ոչ զի խրատեցին բենիամինեանք՝ որպէս և կարծեցան, այլ զի նոքա խրատեցին 'ի ձեռն նոցա . զի էր հակառակ նոցա կարծեացն ։

Իսկ իբրև կոտորեցան յիսրայելէ յառաջին կոտորածին քսան և երկու հազարք, և ոչ իմացան ընդմիտ ածել՝ թէ ընդէր կոտորեցան, տայ նոցա միւսանգամ հրաման ելանել 'ի վերայ նոցա 'ի մարտ պատերազմի ։ Զի եթէ գիտացեալ էր նոցա յառաջին կոտորածին զյանցանս իւրեանց, յերկրորդ հարուածի աստ ոչ կոտորէին նոքա . և զի ետուն ըղպարտութի̃ն իւրեանց դիւաց և ոչ ա̃յ, յաւելան կոտորել կրկին անգամ, և անկան 'ի նոցանէն երեքտասան հազար ։ Իսկ իբրև սատակեցան՝ որ եղեն պատճառ առաջին կռոցն և ձուլածոյն պատկերին տանն Միքայ, և խնդրեաց զիւր վրէժսն ստուգութի̃ն 'ի չարացն և յանօրինացն 'ի ձեռն այնոցիկ՝ որ չարն էին և անօրէն քան զնոսա ։ Ապա յետ լալոյն և ծոմելոյն նոցա, և զողջակէզսն մատուցանելոյն 'ի ձեռն փենեհէս քահանայի առաջի տեառն, ետ նոցա հրաման յերրորդ նուագին ելանել 'ի պատերազմ ։ Իբրև խոստանայր նոցա զճշմարիտ յաղթութիւնն, ապա խորհուրդս խորհեցան և դարանամուտ եղեն առ Գաբայ Բենիամինի, որպէս և 'ի վերայ Գայեայ ։ Հարին վանեցին կոտորեցին 'ի Բենիամինէ քսան և հինգ հազար և հարիւր այր ։ Եւ վեց հարիւր այրն՝ որ ապրեցան, փախստեայք եղեն և արարին ապաւէն զքարանձաւսն Ռեմովնեայ ։ Եւ յետ կոտորածոյն ազգին բենիամեան հանդերձ կանամբքն և որդւովք և ընչիւք իւրեանց, երդուան երդուան և դաշինս կռեցին, զի մի տայցեն զդստերս իւրեանց կնութե̃ որդւոցն Բենիամինի ։

Որդ յետ երդմանն անկաւ զիղջ և ապաշաւ 'ի միտս նոցա . եկին սկսան լալ և մեղ դնել, ոչ մեղացն իւրեանց, այլ տեառն ։ “Ընդէ՞ր, ասեն, տէր՝ եղև այս, բնաջինջ լինել գնդի միոյ 'ի միջոյ իսրայէլացւոց ” ։

Եւ վասն զի մի՛ ստեսցեն զերդումն իւրեանց, և գտին ՚ի տանէ Յաբիսայ Գաղայադու չորեքարիւր աղջիկ կոյս՝ որ ոչ գիտէին զայր, հարին սատակեցին զբնակիչսն Յաբիսայ գաղայադացւոյ ՚ի սուր սուսերի. վասն զի ոչ ելին ընդ նոսա ՚ի մարտ պատերազմի ՚ի վերայ Բենիամինի. և զչորեքարիւր կուսանսն զոր գտին ՚ի նոցանէն, և ետուն զնոսա որդւոցն Բենիամինի: Ետուն զհաւանութ̃իս և այլոցն՝ որ ոչ առին յառնուլ իւրեանց ՚ի դստերաց Սելովմայ, իբրև տայցեն ժողովուրդն պատասխանի ընդ նոսա որդւոցն Սելովմեայ՝ զի ոչ եթէ կանայս տարան ընդ իւրեանս և չոգան փախստեայք, և արդ եկին յուսան առնուլ զկանայս ՚ի վերայ այլոց կանանցն: Բայց չինեցին ազգըն Բենիամինի գեօղս և բնակեցան ՚ի նմա: Եւ ՚ի սակաւ ամս հազարքն որ կոտորեցան, նուազունքն որ մնացին՝ լցին զհետս նոցա: Աստուծոյ՝ որ կացոյց զդատաւորս ՚ի ժողովրդեան անդ՝ մինչև զի սահմանեցան թագաւորք և կարգեաց զթագաւորս. դարձեալ մինչև բովանդակեցաւ մինչև ՚ի տէրն թագաւորութ̃եց՝ որ էն օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԿԱՏԱՐԵՑԱՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՑՆ

ՍՐԲՈՅՆ ԵՓՐԵՄԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Ա. ԵՒ Բ. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ

ՏԵԱՌՆ

ԵՓՐԵՄԻ

ԽՈՐԻՆ ԱՍՈՐԻՈՑ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ՍԱՄՈՒԷԼԻ

ԳԻՐՔ Սամուէլի, որ պատմէն զԵղկանայէ և զերկուց կանանցն նորա ։

Վասն ծննդեանն Սամուէլի և աղօթիցն Աննայի մօրն նորա ։

Վասն ագահութեան որդւոցն Հեղեայ, և քահանայութեան անարգելոյ՝ որ յազգի նոցա կարգեալ գայր ։

Վասն յայտնուէլն այ̃ առ Սամուէլ, և սպանման որդւոցն Հեղեայ ։

Վասն գերի երթալոյ տապանակին կտակարանաց, և հարուածոց յայլազգիսն և 'ի դիս նոցա և յերկիր նոցա ։

Վասն դառնալոյ տապանակին առ հեբրայեցիս, և անարգելոյն Սամուէլի 'ի ժողովրդենէն՝ խնդրելոյ զթագաւորն իւրեանց ։

Վասն յանդիմանութեան Սաւուղի մատուցանել զողջակէզսն 'ի Գաղգաղայ ։

Վասն յանցանելոյն Յովնաթանու ըստ նզովս հօրն իւրոյ. և ապրեցոյց զնա ժողովուրդն 'ի ձեռաց հօր նորա, զի մի սպանցէ զնա ։

Վասն առաքելոյն Սաւուղի կոտորել զամաղէկա-

ցիսն, և զի կեցոյց զԱգագ արքայն, և անխնայեաց 'ի գեղեցիկ խաշինս ամաղեկացւոց ։

Վասն օծման Դաւթի. և զի խնդրեցին զնա մատնել 'ի տունն Սաւուղի ։

Վասն սպանանելոյն Դաւթի զՀսկայազնն այլազգեացն, և զի գովեցին յարգեցին զնա կանայք յերգըս վիպասանաց, և նախանձեցաւ ընդ նմա Սաւուղ ։

Վասն փեսայ լինելոյ նորա Սաւուղի յերկու դըստերցն նորա. և զի ձգեաց նմա զգեղարդն միանգամ և երկիցս. և զի փախոյց զնա Մեղքող դուստր Սաւուղի, և եդ ընդ նորա պատկեր 'ի գահոյսն. և զի չոգաւ առ Սամուէլ. և զի չոգան հրեշտակք Շաւուղի և Շաւուղ զկնի նորա և մարգարէացան. և զի չոգաւ ինքն և խնդրեաց հաց և սուսեր, և կոտորեցան քահանայքն վասն նորա. և զի մուտ 'ի Գաղայաթ և ել պատգամաւ տեառն 'ի նմանէն, զի մի մատնեսցեն զնա 'ի ձեռս Շաւուղի բնակիչք քաղաքին. և զի ել Սաւուղ 'ի խնդիր Դաւթի, և ագաւ յայրին. և զի հատ Դաւիթ զգրօշակ վտաւակաց Սաւուղի և զղջացաւ ։

Վասն մահուն Սամուէլի, և անարգութեն Նաբաղայ, և իմաստութե կնոջ նորա ։

Վասն ելանելոյ Սաւուղի զկնի Դաւթի, և քունն 'ի տեառնէ անկանելոյ 'ի վերայ նորա. և զի առ նա զստոմանն և զգեղարդն Սաւուղի, և նա ոչ գիտաց ։

Վասն երթալոյ Դաւթի առ Անքուշ արքայն այլազգեաց, և նստելոյ 'ի Սիկելակ ։

Վասն երթալոյ Սաւուղի յԱգդոյիր և հարցանելոյ զվհուկն ։

Վասն երթալոյն Դաւթի 'ի Սիկելակ, և գտանելոյն զնա հրձիգ աւարեալ ։

Վասն առնն՝ որ եկն ետ զաւետիսն Դաւթի ։

Վասն մահուն Սաւուղի և Յովնաթանու ։

Վասն ոգալոյն և ողբս ասելոյ Դաւթի զերկոցունց ։

Վասն թագաւորելոյն Դաւթի 'ի Քեբրոն, և զի խաղացին մանկտին 'ի գնդէն Աբեններեայ ընդ մանկտի գնդին յովաբեան, և դարձաւ խաղ նոցա 'ի սուր սուսերի ։

Վասն գրգռելոյն Մեմփիսթեայ ընդ Աբեններեայ 'ի պատճառս հարճին Սաւուղի․ և զի եկն նա ուխտ եդ ընդ Դաւթի դարձուցանել առ նա զամենայն Իսրայէլ։

Վասն մահուն Աբեններեայ, զի սպան զնա Յովաբ․ և վասն մահուն Մեմփիսթեայ, զի մեռաւ նա 'ի Բաանեայ և 'ի Հռաքեբայ։

Վասն գալոյն Դաւթի յԵրուսաղէմ։

Վասն հանելոյ տապանակին․ և սատակելոյ Ոզայ քահանայի՝ որ ձգեաց զձեռն իւր յարկղն կտակարանացն առ 'ի կանգնել զնա։

Վասն զի կամեցաւ Դաւիթ շինել տուն տեառն և արգելաւ։

Վասն մեղացն՝ որ մեղաւ յՈւրիա քետացի։

Վասն պատերազմին՝ որ արար յԵդոմ, և ետ ճակատ ընդ որդիսն Ամովնայ հանդերձ այլովք հեթանոսօք։

Վասն անարգելոյն Ամովնի զԹամար, և մեռանելոյն յԱբեսողովմայ։

Վասն փախստեայ լինելոյ Աբիսողովմայ։

Վասն կնոջն Թեկուացւոյ՝ որ իմաստութեն հաճեցոյց զնա ընդ Դաւթի։

Վասն ապստամբելոյն Աբիսողովմայ և Աքիտոփելի։

Վասն փախստեայ լինելոյն Դաւթի յերեսացն նորա, և զի անարգեաց զհարճս հօրն իւրոյ։

Վասն Սիբայ, որ պատուեաց զԴաւիթ 'ի հալածմանն։

Վասն Մեմփիսթեայ՝ որ խնդրեաց զթագաւորութեն Սաւուղի։

Վասն ելանելոյն Աբիսողովմայ զկնի հօր իւրոյ։

Վասն մեռանելոյն Աբիսողովմայ, և սուգ ունելոյ հօրն վասն նորա։

Վասն ամբարհաւաճելոյն Յովաբու 'ի վերայ Դաւթի։

Վասն դառնալոյն Դաւթի 'ի հալածմանացն, և ընդ առաջ լինելոյն Սեմեայ առ ափնն Յորդանանու։

Վասն հակառակելոյն ազգաց ցուցանել զսէրն իւրեանց առ Դաւիթ յետ մահուանն Աբեսաղով-

մայ, որք յուրաստն եղեն յամենայն երախտեացն Դաւթի 'ի կեանսն Աբիսողովմայ ։

Վասն ապստամբելոյն Սամուսայ, և զի հատին զգլուխ նորա և ընկեցին զպարսպէ, և ապրելոյն քաղաքին ։

Վասն սովոյն, որ եղև զերիս ամս ։

Վասն որդւոյն Սաւուղի զորս սպանին ։

Վասն զի նախանձ առ սպանանել զգաբաւոնացիս ։

Վասն բանիցն օրհնութե, թէ սիրեցի զքեզ տէր զօրութի իմ և ապաւէն իմ, և վասն այլոց բանիցն Դաւթի ։

Վասն անուանց նախարարացն Դաւթի՝ որ բազմէին 'ի բարձի ։

Վասն գրգռելոյ տեառն զնոսա առ 'ի թուել համարել զժողովուրդն ։

Վասն մարդամահին՝ որ կոտորեաց 'ի նոցանէն յառաւօտէն մինչև 'ի վեց ժամն եւթանասուն հազար այր ։

Վասն սեղանոյն՝ որ շինեաց 'ի կալն Արանայ յեբուսացւոյ ։

Վասն ընդունելոյ պատարագին նորա, և զի արգելաւ մարդամահն 'ի ժողովրդենէն նորա ։

Զայս ամենայն և որ սոյին նման են՝ գրեալ է 'ի դպրութին Սամուէլի ։

ԵԻ

Ի ՍԿԻԶԲՆ ԲԱՆԻՑ ԻՐՐՈՑ ԱՅՍՊԷՍ ԱՍԱՑ

ԳԼՈՒԽ Ա

"ԱՅՐ մի էր յարիմաթեան Սիփայ յԵփրեմ լեռնէ„ • այս ինքն զի բնակեալ էր նա 'ի լեառնն Եփրեմի ։ "Եւ անուն նորա էր Եղկանա որդի երեմիայեանց Թովկեայ 'ի Նասիփ Եփրեմի„ ։ Արդ զի համարեաց զանուանս նոցա, զի յայտ արասցէ և ցուցցէ՝ թէ քահանայ իսկ էր, և 'ի ցեղէ անտի ղեւտացւոց • որպէս և գիրք Մնացորդացն գրէ և ցուցանէ ։ Եւ վասն այսորիկ ուխտեաց Աննա զՍամուէլ տեառն • քանզի ոչ տային որդիքն Հեղեայ Սամուէլի կալ 'ի սպասու 'ի տաճարին տեառն, եթէ ոչ զի յազգէ անտի քահանայից էր նա ։ Այլ զի ինքն իսկ Սամուէլ հանդերձեալ էր համարձակիլ մատուցանել զպատարագսն տեառն, վասն զի յորդւոց անտի Ղեւեայ էր նա ։ Եւ զի ելանէր Եղկանա հանդերձ կանամբք իւրովք Աննայիւ և Փեննայիւ 'ի տօնս տարեկանս մատուցանել զպատարագ տեառն 'ի Սելով ։ Արդ նայեաց և 'ի միտ առ, զի ոչ եթէ մի'ի տասանէ բերէր նա մատուցանել, զի ինքն զայլս տասանորդէր • այլ զպատարագս փոխանակ մեղաց անձին իւրոյ գայր մատուցանել, որպէս և առեալ իսկ էր հրաման քահանայիցն յօրինաց անտի ։ Բայց մատուցանէր զպատարագսն իւր 'ի ձեռն Ոփնեայ և Փենեեսի որդւոցն Հեղեայ քահանայից՝ որ պաշտէին 'ի ժամանակին յայնմ ։

Արդ Փեննա՝ կին Եղկանայի յայնմ աւուր ուրախութե՟ նախանձաբեկ առնէր զԱննա բարկութ՟ • և զի ծանուցէ եթէ ամլութ՟ն նորին նախատէր զնա, ասաց • "Ցասուցանէր, ասէ, զնա„ • վասն զի տրտ-

մեացի նա, զի փակեաց տէր զդուռն արգանդի նորա։ Եւ զի մի՛ ոք ընդ միտ ածիցէ, եթէ երբէք ուրեք ինչ յանկարծակի տրտմեցոյց զնա, ասաց՝ եթէ այսպէս սարտուցանէր Փեննա զխաննա ամ յամէ յամենայնի յորժամ ելանէին նոքա մատուցանել զպատարագս առաջի տեառն։ Արդ իբրև եղև մի յաւուրց անտի, և տրտմեցոյց զնա ներքն իւր, անդստին 'ի տեղւոջէ անտի եղև նմա մխիթարել 'ի տեառնէ իւրմէ։ Քաջալերել սկսաւ Եղկանա զխաննա և ասէ. “Ո՞չ լաւ եմ ես քան զտասն որդի”։ Արդ իբրև եկեր և յագեցաւ՝ ոչ անչափ, այլ իբրև առ 'ի հանգուցանել զկամս առնն իւրոյ, անց մուտ նա 'ի տունն ա̃յ, և արկ զանձն իւր առաջի տեառն։ Եւ իբրև ուխտեաց տեառն յաղագս այնորիկ՝ որ եբաց զբերան նորա, կաց և ասաց. զի եթէ տեսանելով տեսցես զանարգութ̃ի անձին իմոյ 'ի ներքէ անտի իմմէ, և տացես ինձ զաւակ մարդոյ, և բացցես զանկար որովայն ամուլ արգանդի իմոյ, տաց զնա առաջի քո ուխտաւորութեամբ փոխանակ այսորիկ՝ որ պաշտեն զքեզ որկորստութեամբ։

Իսկ Հեղի վասն յերկարելոյ աղօթիցն նորա, և զի ոչ եթէ բարբառելով իբրև զդստերս ժողովըրդեանն մատուցանէր նա զաղօթսն՝ զի արտասուօքն և անմռունչ պաղատանօքն իբրև զդստերս հեթանոսաց աղաչէր նա, և վասն զի շառագունեցան երեսք նորա եռանդմամբն սրտի, այլակերպեցաւ նա յաչս Հեղեայ. և համարեցաւ զնա եթէ գինի կալաւ զխելըս նորա 'ի տաճարի անդ, զայն՝ որ ընդունելութ̃ի աղօթից նորա ոչ թողոյր նմա կատարել զաղօթս նորա։ Իսկ իբրև անարգեաց զնա Հեղի, և կոչեաց զնա արբշիռ, զայն՝ որ արբեալն էր 'ի սէր աղօթիցն, կնքեաց զաղօթսն իւր, զի տեառն իւրում մատուցանէր զնա. և ետ վճիռ պատասխանատուութ̃ե քահանային՝ որ գայթագղեցաւ 'ի նա։ Բայց ոչ բամբասեաց նա զայն՝ որ բամբասեացն զնա՝ որով չէրն բամբասելի։ Փութացաւ բառնալ զգայթագղութ̃ի, ընկէց զինքն առաջի քահանային՝ որ գայթագղեցաւ 'ի նա։ “Կին, ասէ, վըշտագնեալ և ոչ եթէ արբեալ. զի 'ի յաղօթից աստի հեղեալ է անձն իմ առաջի տեառն, և ոչ եթէ

'ի գինւոյ . արդ մի՛ համարեսցիս զաղախին քո դուստր ժանտ . զի ոչ եթէ իբրև յայլում ումեքէ խնդրեցի ես որդի, այլ յԱստուծոյ . և ոչ ելից ես 'ի տեղւոջէս յայսմանէ մինչև առից զոր խնդրեցի 'ի նմանէ»: Վասն զի ոչ պատմեցի ես ումեք զհանապազորդ տրտմութիւն իմ 'ի ներոյ անտի իմմէ մինչև ցայս ժամ: Արդ յայտնի պատասխանի տալովն եցոյց զծածուկ գայթակղութիւն իւր . և փոխանակ զի տրտմեցոյց զնա անարգանօքն, մխիթարեաց զնա օրհնութեամբքն:

Եւ իբրև անց գնաց 'ի տուն իւր, և այլ ոչ ևս տրտմեցաւ նա, յայտ արար և եցոյց՝ եթէ 'ի յաղօթից անտի նորա և 'ի ձեռն օրհնութեան քահանային՝ ծննդեան կապեալ դուռն արգանդի նորա բացաւ: Իսկ իբրև յղացաւ և ծնաւ, ել գնաց Եղկանա ըստ աւուրցն սովորութեան մատուցանել զպատարագս ուխտից իւրոց, այս ինքն ըստ իւրում սովորութեան: Բայց Աննա կաց մնաց և զտեղի առ մինչ զի հատոյց զմանուկն 'ի ստենէ: Եւ ած կացոյց զորդին իւր առաջի երեսաց տեառն, որպէս և ուխտեաց զնա յաւուրն խնդրուածոյ:

Արդ զաղօթսն Աննայի են ոմանք որ ասեն՝ եթէ գոհանալով գոհացաւ, և ոչ եթէ մարգարէացաւ: Արդ ոչ 'ի միում յիրս 'ի գրոց ուրեք, և ոչ յայսմ վայրի կոչեցաւ մարգարէ . բայց աղօթք նորա որ խոստովանութիւն է նորա՝ որպէս ոմանք ասացին, և կամ զի թէ մարգարէութիւն է նորա՝ որպէս և այլք ասեն, վասն անձին իւրոյ ասաց: Եւ վասն զի մեռան որդիք ներոյ նորա 'ի սերմանալ բազմանալ ամլութեան նորա, և վասն զրպարտութեան նորա 'ի ներոյ անտի իւրմէ՝ իբրև զի թէ արար ինչ գետս մեռանելոյ և սատակելոյ որդւոց ներոյ նորա, և վասն յորդելոյ մեծանալոյ որդւոյն իւրոյ, և վասն մեծամեծ փրկութեանցն որ լինելոցն էին 'ի ձեռն նորա ժողովրդեանն, և զի յեղջերէն նորա օծանելոց էին թագաւորք, վասն այսորիկ և որ սոցին նման են՝ բաց զբերան իւր 'ի գոհութիւն խոստովանութեան, և կամ 'ի մարգարէութիւն, և ասէ այսպէս:

«Ցնծացաւ սիրտ իմ 'ի տէր» . այն որ յամենայն ժամ ներին իմ զայրացուցանէր զիս: «Եւ բարձրա-

ցաւ եղջեւր իմ,, որդւովս՝ որ եղև ինձ, այն որ զամենայն աւուրս իմ ամլութիւնն իմ կափէր զիս. և բացաւ բերան իմ 'ի վերայ թշնամեաց իմոց, այն որ զայսչափ ամս իմ անձեռնտուութիւնս իմ առաջի նոցա ափիբերան կայր։ Եւ զի ուրախ արարեր զիս 'ի փրկութեան քում. վասն զի փրկչիւս զոր ետուր ինձ, փրկեցայ ես յայնմանէ՝ որ յամենայն ամս նախատանօքն իւրեանց այպանէին զիս։ Ձիք սուրբ իբրև զտէր 'ի կուռս օտարոտիս. նա և ոչ 'ի դիմն անուանիս գոյ այլ՝ բաց 'ի նմանէ. և ոչ հզօր դարձեալ իբրև զայն՝ որ բանայ զդուռն արգանդի զայնորիկ՝ որ ամաց բազմաց նախատ եղեալ էր 'ի ներոյ անտի իւրմէ։ Արդ մի 'ի խափանելդ ձեր 'ի նախատանաց սերանալովս և բազմանալովս իմով, և այլ մի ինչ խօսեսջիք զմեծամեծս վասն մահուան որդւոցն ձերոց։ Մի 'ի վախճան լինել ձաղանացդ ձերոց սկսնուցուք կախարդութեամբ զրպարտել զիս, զի տէր է գիտութեանց և ծածկագէտ՝ եթէ ոչ եմ բամբասելի առաջի նորա այդու՝ որով 'ի ձէնջ զրպարտեալ եմ ես, և ոչ մտանելն առաջի նորա խորամանկութեամբք խորհրդոց ձերոց։

“Զօրաց հաստ աղեղունք խորտակեցին„. այս ինքն՝ լեզուք նախատչաց իմոց լռեցան և կարկեցան։ “Եւ տկարք վառեցան զօրութեամբ„. այս ինքն զօրութեամբն խոստովանութեան, և ոչ զրպարտութեան։ “Յագք և լիք հացիւ նուաղեցան, և քաղցեալք յաւելլին զհաց„. այն էր, զի ամուլն ծնաւ և յագեցաւ, և բազմածինն նուաղեաց 'ի ծննդս իւր։ Տէր մեռուցանէ զորդիս քո, և կեցուցանէ զիմս, և ոչ եթէ մարդ։ Տէր աղքատացուցանէ զհզօր վարազաթեւսդ քո, և մեծացուցանէ զգօդս անձեռնտուութեանս իմոյ։ Նա տկարացուցանէ զբարձր եղջերւրդ քո, և բարձրացուցանէ զիմս խոնարհացեալ. և զի “Բարձր առնէ զտնանկն յաղբեաց„, հանդերձ այլովքն, վասն անձին իւրոյ և վասն ժողովրդեանն մատուցանէր զաղօթսն։ “Եւ նստուցանէ զնոսա ընդ իշխանս„. այս ինքն բարձրացուցանէ զխոնարհեալ գլուխ նոցա առաջի այլազգեացն, որպէս զՍամփսոնին, Նափեթայն և Գեդէոնին՝ զառաջին իշխանաց նոցա. վասն զի տեառն են հովիտք

երկրի[1], և հաստատեաց 'ի վերայ նոցա զաշխարհս ։ Ցայտ արար և եցոյց՝ եթէ փոյթ է նմա վասն ամենայն աշխարհիս. զի նա արար զաշխարհս լրիւ իւրով ։ Զոտս հեբրայեցւոց զարդարոց իւրոց հաստատէ 'ի պատերազմի, և այլազգիքն ամպարիշտք 'ի խաւարի լռեսցին, այս ինքն 'ի դժոխս արգելցին ։ Վասն զի ոչ եթէ զօրութբ իւրով զօրանայ հզօրն . զի առ խըրատ ժողովրդեան մերոյ յաղթեն այլազգիքն 'ի պատերազմի ։ Տէր խորտակէ զայլազգիսն դառնացօղս, և 'ի վերայ նոցա որոտացէ յերկնից առ 'ի սատակումն կորստեան նոցա ։ Տէր դատի զազգս երկրի, այս ինքն՝ արասցէ զդատաստանս յերկրէն այլազգեաց. և տայ զօրութի թագաւորաց մերոց, և բարձր առնէ զեղջեւր օծելոյ իւրոյ ։ Արդ թէպէտ և Աննա վասն քահանայիցն օծելոց և վասն թագաւորութեն՝ զի թագաւորեցաւ 'ի տան անդ Յուդայ՝ մատուցանէր զաղօթս, այլ վասն Քրիստոսի՝ որ հանդերձեալն էր ծագիլ 'ի տանէն Դաւթի, յաղօթել անդ իւրում՝ որ և ոչ էր գիտակ՝ մարգարէանայր ։

Արդ Սամուէլ պաշտէր առաջի տեառն, և որդիքն Հեղեայ պաշտէին զորովայնս իւրեանց նոր երեքժանի մսահանաւն՝ զոր արարին, 'ի մեծամեծ կատսայիցն հանէին նոքօք, և 'ի փոքր պուտանց ոչ հեղգային հանել ։ Իսկ զհում մին զոր առնուին, վասն զի յաղեսցի և եղիցի նոցա առ 'ի պէտս կամաց իւրեանց ։ Եւ յառաջ քան զմատուցանելն պատարագին առնուին նոքա վասն բռնութե իշխանութեն՝ զոր ունէին նոքա ։ Քանզի ընդ քահանայութեն զոր ունէին նոքա, ունէին նոքա և զառաջնորդութիւն ժողովրդեանն . զի վասն իշխանութեն զոր ստացեալ ունէին նոքա՝ յարժանի և յանարժանի՝ բռնաբար ունէին նոքա ։ Վասն այսորիկ և որ սոցին նման են, եղեն մեղք մեծք յոյժ մանկանցն առաջի տեառն ։

Իսկ զմեկնոցն զոսկեհուռ, զի արար Աննա Սամուէլի մանկանն, տիպք էր այնորիկ՝ զոր զգենոյր քահանայն ըստ նմանութե խաչին . զի ոչ նմանութիւն նորա հեռի էր, և ոչ ճշգրտութի նորա գտեալ էր .

1 Յօրինակին Երկ. եդաւ ըստ միւս օրինակին ։

Իսկ Հեղի իբրև ետես թէ որպիսի համբերութ՟ի գը-
տաւ 'ի մայրն Սամուէլի, զի առանց որդւոց հատաւ
որոշեցաւ յայնմանէ, զի օտարք փափագէին տեսա-
նել զնա, օրհնեաց զԵղկանա և զկին նորա. և ասէ,
թէ տացէ քեզ տէր զաւակ, ոչ 'ի Փեննայէ, այլ
յայսմ կնոջէ որ անջատեցոյց զանձն իւր յորդւոյն
իւրմէ. վասն զի տեառն ետ զօրհնութիւն զոր ետ
նմա տէր:

Բայց սերմն զոր սերմանեաց ուխտն շրթանցն Խան-
նայի, եւթն ընդ միոջ հնձեաց զնա 'ի ձեռն օրհնու-
թ՟ե՝ որ օրհնեցաւ 'ի լեզուէ անտի քահանային: "Եւ
լուաւ, ասէ, Հեղի զոր ինչ առնէին որդիքն իւր ընդ
ամենայն Իսրայէլ". զի անարգէին զկանայսն՝ որ
գային յաղօթս կալ 'ի վրան ժամուն: Բայց զոր ինչ
առնէին նոքա Իսրայէլի, այնոքիկ են՝ որ ինչ 'ի վերուստ
գրեալ են. այս ինքն զի ապահութ՟ն իւրեանց զա-
մենայն որ մատուցանէր զպատարագն՝ տառապեցու-
ցանէին նոքա: Եւ զի անարգէին զկանայսն, ոչ եթէ
պոռնկութ՟բ, և ոչ եթէ բանիւք անարգութ՟ե, այլ
զի գային նոքա 'ի հեռի վայրաց. և բազում անգամ
հետի գային հանդերձ անդրանկօքն իւրեանց մատու-
ցանել զուխտս իւրեանց: Եւ վասն զի էր ժամ՝ զի
ընդ տօթաժամանակն գային նոքա, և երբեմն ընդ
ցուրտ ժամանակս, և ոչ գոյր քահանայ՝ որ ընդու-
նէր զանդրանիկս և զուխտս նոցա, և արձակէր զնո-
սա 'ի տունս իւրեանց. զի զբաղեալ էին նոքա զու-
տելովն և զըմպելովն. և կամակորութ՟բն և հպար-
տութ՟բն իւրեանց արհամարհելով արհամարհէին
զնոսա և անկանէին, և անարգէին զնոսա. և 'ի տօթ
անդր և յանձրև, վասն զի նիրհայր հոգի նոցա իբ-
րև նստէին և ունէին զուխտս իւրեանց, և սպասէին
շուայտեալ քահանայիցն 'ի կերակուրս:

Որդ էին 'ի վրան ժամուն ոչ կանայք լկտիք, այլ
որք յաղօթս գային կալ. այս ինքն՝ որ գային հա-
տուցանել զխոստովանութ՟իս և զպատարագս փոխա-
նակ անդրանկաց իւրեանց տեառնն անդրանկաց: Կո-
չեաց զնոսա Հեղի և ասէ. ընդէ՞ր գործէք դուք զայսպի-
սի գործս. զի լսեմ ես զչար համբաւ ձեր. և ոչ յատե-
լեացն ձերոց, և ոչ 'ի միջէ և յերկուց, այլ յամենայն

ժողովրդենէն ։ Եւ զի ցուցցէ՝ թէ որով աստ եթէ զկանայսն անարգէին . “Ոչ բարւոք է , ասէ , լուրս այս՝ զոր լսեմ ես „ . զի խափանէք դուք զժողովուրդն տեառն այսու՝ զի զբաղեալ էք յուտել և յըմպել . և խափանեալ նստին արք և կանայք՝ որ բերեն մատուցանել զպատարագս փոխանակ անդրանկաց և մեղաց իւրեանց ։ Եթէ մեղիցէ այր առն , խնդրէ 'ի տեառնէ զի արասցէ զդատն երկոցուն , և թողեալ լինի . իսկ որ տեառնն մեղանչէ , յումմէ՞ խնդրէ զի քաւեսցէ զնա ։ Եւ “Ոչ , ասէ , լուան ձայնի հօրն իւրեանց „ . վասն զի խրատելով խրատեաց զնոսա , և ոչ եթէ ցասմամբ և տանջանօք ըստ արժանի յանցանաց յամառութեն նոցա խօսեցաւ ընդ նոսա ։ Եւ զի ասաց՝ եթէ վասն զի կամեցաւ սպանանել զնոսա տէր , ոչ եթէ զի վասն այսր ոչ ապաշխարեցին , այլ վասն զի ոչ զղջացան՝ սպան զնոսա ։ Եւ մանուկն Սամուէլ փառաւորեցաւ առաջի տեառն և որդւոց մարդկան . և որչափ որդիքն Հեղեայ անարգեցան յաչս տեառն և ժողովրդեանն , սոյնպէս և Սամուէլ յարգեցաւ և մեծարեցաւ ։

Եւ եկն այր տեառն , այս ինքն մարգարէ տեառն , եկն առ Հեղի և ասէ ցնա . Այսպէս ասէ տէր . յայտնելով յայտնեցայ ես յԵգիպտոս 'ի վերայ տանն Ահարոնի հօր քո , և ընտրեցի զնա յամենայն ազգաց ելանել առ սեղան և դնել զխունկս առաջի իմ ։ Արդ փոխանակ խնկոցն զոր առի , ետու նմա զպատարագս , վեց հարիւր հազարացն որդւոցն Իսրայէլի . և ընդէ՞ր անօրինեցար 'ի պատարագս իմ . զի՞ պատուեցեր զորդիսն քո քան զիս , ընտրել առնուլ զարժանն ձեր , ոչ զկնի իմ , այլ ընդ իս , և յառաջ ևս քան զիս ։ Արդ փոխանակ այսր զոր արարէքս , այսպէս ասէ տէր , թէպէտ և ասացի թէ դու իբրև զտուն հօր քո պաշտեսցես առաջի իմ յաւիտեան , այլ արդ քաւ ինձ , եթէ անարգեցից ձեւք զփառաւորիչս իմ . այլ դուքդ որ անարգիչքդ էք իմ , անարգեսջիք ։ Արդ խորտակեցից զբազուկ քո և զհօր քո . այս ինքն կոտորեցից զզաւակ քո 'ի սուր սուսերի , և եղիցին կարճակեացք և վաղամեռք՝ որ մնան , զի մի՛ եղիցի այր ալևոր 'ի տան քում ։

Բայց զի ասաց՝ թէ “Մի՛ պակասեսցէ քո այր 'ի սեղանոյ իմմէ”, այս ողորմութեան է. վասն զի մի՛ սպառասպուռ շիջուսցէ զզաւակն ազգի միոյ որդւոցն Ահարոնի։ Քանզի մինչ 'ի Սողոմոն Եղիազար և զաւակ նորա պաշտէր. և 'ի Սողոմոնէ և անդր Սադովկ որդի Իթամարու յազգէն Ահարոնի։ “Խաւարեցուցանելոց է զաչս քո”, զի տեսանէ զպատիւ և զշուք սադովկեանց և յոդւոց ելանէ։ Եւ այս է քաջ նշան, զի անցանէ յետ ժամանակի քահանայութ̃ին 'ի զաւակէ քումմէ, որպէս և ասացիս այսօր. զի ընդ հուպ ժամանակս Ոփնի և Փենեէս 'ի միում աւուր մեռցին, և կացուցից ինձ քահանայ հաւատարիմ ըստ սրտի իմում զՍադովկ. և շինեցից նմա տուն հաւատարիմ, զի եղիցի կարգեալ զաւակ քահանայութ̃ե նորա մինչև յաւիտեան. և գնասցէ առաջի Սողոմոնի օծելոյ իմոյ զամենայն աւուրս. և ամենայն որ մնայ 'ի տան քում, փոխանակ ագահութ̃են պատարագաց, զի պակշոտեալ տկարասցի, և իջցէ մինչև 'ի վարձս արծաթոյ. այս ինքն մինչև 'ի նաքարակիտ մի, և 'ի նկանակ, և 'ի փոքր պատառ հացի։

“Եւ պատգամն տեառն, ասէ, ծանր էր յաւուրսն յայնոսիկ”, որպէս և յաւուրսն Ոզիայ։ Անդ վասն զի կամեցաւ թագաւորն առնուլ իւր զքահանայութ̃ին. և աստ՝ վասն զի անօրինեցան քահանայքն 'ի քահանայութեան անդ, ոչ գոյր սուտ տեսիլ վասն յայտնի մեղաց տան Հեղեայ։ Եւ կոչեաց տէր 'ի բարբառն Հեղեայ զՍամուէլ. և ընթացաւ առ Հեղի, և ասէ. աւասիկ եմ։ Եւ զի կոչեաց զնա երիցս անգամ 'ի գիշերի անդ. մի՝ զի լիցի պատգամն ահաւոր, և երկրորդ՝ զի երևեսցի զուարթութիւն նորա երիւք վկայութ̃ք, և զի զարթիցէ 'ի բարբառոյ Հեղեայ յոր սովոր էր պատրաստել 'ի վարդապետութենէն Հեղեայ, առ 'ի լսել զձայնն ա̃յ յոր ոչն էր սովոր։ Իսկ իբրև իմացաւ Հեղի եթէ տէր կոչեաց զպատանեակն, զոր ինչ ոչ իմացաւ Սամուէլ վասն տխմարութ̃ե իւրոյ, հրամայեաց նմա երթալ ննջել։ Եւ եթէ կոչեսցի 'ի բարբառն Հեղեայ, այլ մի՛ եկեսցէ առ Հեղի, այլ ասասցէ՝ եթէ “Խօսեաց տէր, և լուիցէ ծառայ քո”։

Իսկ իբրեւ յայտնեցաւ տէր, ոչ 'ի բարբառն Հեղեայ, եւ ոչ դարձեալ միով բարբառով իբրեւ զառաջին անգամն կոչեաց զնա, այլ կոչեաց երկիցս անգամ։ Ասաց եւ Սամուէլ որպէս եւ հրամայեցաւն, եթէ “Խօսեաց տէր, եւ լուիցէ ծառայ քո”։ Ասաց տէր ցՍամուէլ. “Ահաւադիկ առնեմ ես զպատգամ բարկութեան. զի ամենայն որ լուիցէ զնա, հնչեսցեն ականջք նորա 'ի վրիժուցն զոր արարից. եւ յարուցից 'ի վերայ Հեղեայ զամենայն զոր ասացի ածել 'ի վերայ տան նորա 'ի ձեռն մարգարէին տեառն. սկիզբն յՈփնեայ եւ 'ի Փենեէսեայ, եւ կատարումն յաւուրս Սադովկեայ. եւ ցուցից եւ յայտ արարից, զի դատիմ ես զտունն նորա յաւիտեան. այն զի անցանէ քահանայութիւն 'ի զաւակէ նորա յաւիտեան”։ Գիտէր զի անարգեն որդիք նորա զկանայսն, եւ ոչ յանդիմանէր զնոսա՝ որպէս եւ արժան էր. վասն այսորիկ սատակեաց զտունն Հեղեայ։ Եւ ուխտիւք եւ պատարագօք, զոր մատուցանէին 'ի ժամանակի՝ զի կայր քահանայութիւն նոցա, մի՛ քաւեսցին մեղք եւ անօրէնութիւնք նոցա յաւիտեան։

Բայց Սամուէլ՝ վասն զի ասացաւ այս ամենայն ցՀեղի 'ի ձեռն առնն տեառն, վասն զի ոչ տուաւ նմա հրաման ասել կամ չասել, երկեաւ նա յայտնել Հեղեայ զխիստ դատավճիռն դառն պատուհասին՝ որ կայր 'ի վերայ տանն նորա. մանաւանդ զի գիտէր թէ պատարագօք ոչ քաւի, թէպէտ եւ ապաշխարութեամբ անձինն քաւէր. քանզի ոչ ասաց թէ ապաշխարութեամբ մի՛ քաւեսցի, այլ թէ պատարագօք մի՛ քաւեսցի։ Իսկ իբրեւ երդմնեցոյց Հեղի զՍամուէլ, եւ յայտնեաց նմա, ասէ Հեղի. տէր՝ որ ետ զքահանայութիւնն զառաջինն Եղէազարու մինչեւ ցայսօր, եթէ կամի տալ այլում զաւակի, որպէս եւ հաճոյ իցէ յաչս նորա՝ արասցէ։ Եւ ոչ արկ Սամուէլ յամենայն բանիցն տեառն 'ի վերայ երկրի, 'ի ժամանակին զի անարգէին որդիքն Հեղեայ զպատուիրանս տեառն. եւ գիտաց ժողովուրդն այսու յայտնութեամբ, եթէ հաւատարիմ եղեւ Սամուէլ, զի հանդերձ առաջնորդութեամբ ժողովրդեանն եղիցի մարգարէ տեառն։

ԳԼՈՒԽ Բ

ԵՒ կարգեցաւ Ճակատեցաւ 'ի մարտ պատերազմի Իսրայէլ դէմ յանդիման այլազգեացն. բերին ընդ իւրեանս և զտապանակ կտակարանացն, զի 'ի պատճառս նորա առցեն զյաղթութիւն 'ի վերայ գնդին Թշնամեաց. և վասն զի անարգեցին զտուն սրբութեան, և առին տարան զնա ընդ իւրեանս, զի նովաւ ապրեսցին 'ի ժամ պատերազմին: Իբրև խրախոյս բարձեալ հեբրայեցւոց առաջի նորա 'ի ձայն փողոյ մեծաբարբառ աղաղակէին, զահի հարան դողացին այլազգիքն. բայց ոչ ինչ երկեան 'ի բարբառոյ նոցա, այլ 'ի զօրութենէն որ բնակեալ էր 'ի տապանակն կտակարանաց՝ որ էր ընդ նոսա: Զայն ետուն և ասեն ցմիմեանս. "Այս է ա̅ծ՝ որ եհար զեգիպտոսն 'ի հարուածս մեծամեծս. զոր ինչ հեբրայեցիքն որթագլխին հանել զնոսա յեգիպտոսէ վկայէին: Քաջ լերուք պինդ կացէք, ասէ, մի զանգիտէք. զի ա̅ծ եկն 'ի բանակն նոցա. հզօրեցարուք, ասէ, այլազգիք 'ի վերայ հեբրայեցւոցն, զի գուցէ դարձեալ ծառայիցէք այնոցիկ՝ որ ձեզն ծառայեցին":

Իսկ իբրև կոտորած մեծ արար ա̅ծ 'ի զօրու անդ, և անկան 'ի նոցանէ երեսուն հազար, և գերեցաւ տապանակն կտակարանաց, և մեռան երկու որդիքն Հեղեայ, եկն եհաս բօթաբերն. գոյժ առ տալ մեծիւ աղաղակաւ, և ցոյց քաղաքին և Հեղեայ որ ինչ անցք անցին ընդ զօրս իսրայէլացւոց. զրոյց ետ և զգերել տապանակին, և զմեռանել երկուց որդւոցն Հեղեայ: Եւ յիշեաց Հեղի զտապանակն կտակարանաց որ առ զնահատակութիւն 'ի քահանայից, զի արհամարհեցաւ 'ի ձեռն այլազգեացն, անկաւ կործանեցաւ և անդէն մեռաւ: Նա առաջնորդեաց Իսրայէլի քառասուն ամ: Իսկ նուն նորա առ չտապ տագնապի նեղութեան կոտորածի, ստիպեցին զնա երկունք նորա. և իբրև մեռանէր ընդ ծնանելն, ետ պատասխանի և ասէ. "Անցին փառքն յԻսրայէլէ". վասն զի գերեցաւ տապանակն կտակարանաց՝ որ տայր զքաջութիւն և զառաքինութիւն Իսրայէլի:

Որդ այլազգիքն տարան եդին զտապանակն կտակարանաց իբրև 'ի պատուի 'ի բանտի Դագոնայ դիցն իւրեանց ։ Իսկ տապանակն որ թեթևացոյց զինքն 'ի ձեռն այլազգեացն, ծանրացաւ և չքեղացաւ 'ի բագնին նոցա . նա հատակեցաւ և յաղթեաց զդիս նոցա, և արկ զնա 'ի վերուստ 'ի վայր 'ի վերայ երեսաց իւրոց ։ Եւ զի մի կարծեսցեն նոքա եթէ դէպ տուեալ, դարձեալ 'ի միւսում ևս աւուր՝ իբրև ուղղեցին և հաստատեցին յիւրում տեղւոջն, չոգան գտին զնա ոչ միայն անկեալ յերեսս իւր, այլ և զգլուխն հատեալ, և կտրեալ զթաթս նորա, զորմէ կարծէին այլազգիքն թէ զօրութ̃ն նոցա մարտնչէին նոքա ։ Եւ իբրև ոչ հաւանեցոյց զնոսա հարուածն՝ զոր ած 'ի վերայ դիցն նոցա առաքել զտապանակն կտակարանաց 'ի տեղի իւր, հար զնոսա յերաստանս իւրեանց ։ Եւ իբրև տարան 'ի Գէթ, և առաքեցին յԱկկարոն, և հարան յերաստանս իւրեանց 'ի թանչս, տարան եդին զտապանակն յանդաստանի . ապականեցան անդաստանք նոցա 'ի ձեռն մկանցն . զի վասն այնորիկ արարին զերաստանսն ոսկի և զմկունսն ոսկի, և առաքեցին հանդերձ տապանակաւն 'ի սայլակին . զի քարոզեսցին թէ 'ի ձեռն անարգ մկանցն և աղտեղի երաստանացն տանջեաց ա̅ծ, և վատթարեաց ըզսաստիկ թագաւորութիւնն այլազգեաց ։

Բայց առաքեցին զտապանակն մեծաւ պատուով 'ի ձեռն մատաղորթ և անդրանկածին երընջոցն ։ Իսկ իբրև տեսին զբչիւն երընջոցն և որթուցն իւրեանց, զի առանց ուրուք բռնութեան ոչ դառնային 'ի միմեանս, զի յաղթեաց ծածուկ բռնութ̃ին որ շտապէր զնոսա, զի մի դարձցին, զբուռն գութ աղեայն իւրեանց՝ որ ստիպէր զնոսա դառնալ, ապա գիտացին թէ տէրն որ հար վանեաց զնոսա և զերկիրն և զդիսն իւրեանց, նա մատնեաց զտապանակն 'ի ձեռս նոցա ։ Վասն այսորիկ իսկ մարդիկն Բեթշամիւշ գեօղջն իբրև տեսին զտապանակ կտակարանացն, ուրախ եղեն և ցնծացան յոյժ ։ Եկին իջուցին զտապանակն ղևտացիքն, և զփունդսն ոսկեղէն մկանցն, և տարան եդին առ մեծ վիմին, և մատուցին զողջակէզս և զպատարագս ։

Արդ այլազգիքն իբրև տեսին զերինջսն՝ թէ ոչ կացին և զտեղի առին ուրեք՝ մինչև եկին կացին յանդաստանին Հոշեայ, ապա և ճշմարտիւ գիտացին թէ տէր գերեաց զտապանակն կտակարանաց վասն մեղաց ժողովրդեանն, և նա դարձոյց զնա մեծաւ առաքինութե̃՝ զոր արար առ այլազգիսն յերկնէ հարուածովք՝ զոր ած հասոյց 'ի վերայ նոցա։ Արդ տապանակն զի եկն 'ի հեթանոսաց, և արգելաւ կաց յանդաստանին Հոշեայ, զխորհուրդ մարգարէութեանն նշանակէր՝ որ սահմանեցաւ խաչիւն Յիսուսի։ Իսկ մարդիկն Բեթսամիւսայ վասն զի երկեան և զահի հարան տանել առ իւրեանս զտապանակն վասն անցիցն անցելոց՝ զոր լուան եթէ անցոյց ընդ իշխանս այլազգեացն, հար զնոսա 'ի հարուածս, և յաւել հար յիսուն և հինգ հազար և զեւթանասուն այր 'ի ժողովրդեանն. վասն զի ոչ եղեն նախանձայոյզ տանել զտապանակ կտակարանացն 'ի Սելով։

Տարան զտապանակն առ իւրեանս մարդիկն Կարիաթարիմ գեղջն, և բերին զնա, ոչ եթէ յանդաստան, այլ 'ի տուն Ամինադաբայ ղևտացւոյ 'ի Գեբաաթ, և սրբեաց զորդին իւր՝ զի պաշտեսցէ զտապանակն կտակարանաց։ Իսկ իբրև նստաւ անդ զքսան ամ, և դարձան որդիքն Իսրայէլի առ տէր, ասաց Սամուէլ ցժողովուրդն, եթէ “Բոլորով սրտիւք ձերովք դարձարուք առ տէր, 'ի բաց արարէք զկուռս օտարոտիս, և ապրեցուսցէ զձեզ 'ի ձեռաց այլազգեաց„։ Իսկ իբրև թողին զԲահաղ և պաշտեցին ըզտէր, ժողովեաց Սամուէլ զժողովուրդն 'ի Մասեփայ՝ մատուցանել աղօթս վասն նոցա, զի հաշտեսցի ընդ նոսա տէր վասն դառնալոյ նոցա. և այնոքիկ՝ որ դառնացուցին զնա, վասն զի դարձան և խոտորեցան 'ի նմանէն, բերին ջուր և հեղին առաջի տեառն՝ յասելն իւրեանց. իբրև զայս ջուր հեղցի արիւն մեր 'ի ձեռաց այլազգեացն՝ եթէ այլ դարձցուք 'ի տեառնէ։

Իսկ իբրև պահեցին վասն մեղացն զոր մեղանն, և դատեցաւ զնոսա անդ Սամուէլ, այս ինքն զի յանդիմանեաց զնոսա, վասն զի պաշտեցին զԲահաղ և զմեհեանս։ Յաւելին զօրաժողով լինել այլազգիքն

գալ հասանել 'ի վերայ ժողովրդեանն 'ի մարտ պատերազմի։ Եւ մինչ դեռ Սամուէլ հանէր զողջակէզսն և մատուցանէր զաղօթսն ժողովրդեանն, զի զահի հարեալ երկնչէին, կարգեցան ճակատեցան այլազգիքն 'ի պատերազմ։ Որոտաց տէր յերկնից և խռովեաց զնոսա։ Անդ զօրանայր Իսրայէլ 'ի վերայ այլազգեացն․ փախստեայ տանէին զնոսա ժողովուրդն, որ երբեմն 'ի նոցանէ փախստեայ լինէր։ Առ Սամուէլ վէմ մի մեծ, և եդ ընդ Մասեփայ և ընդ Բեթիա նշան, և ասաց՝ թէ “Մինչև ցայսր օգնեաց մեզ տէր„․ վասն զի 'ի Մասեփայ մինչև ցայս վայր օգնեաց մեզ տէր կոտորել զայլազգիսն։

Նկէին ժողովեցան ծերակոյտ յուդայեանց, որք ակն ունէին մի մի 'ի նոցանէն թագաւորել 'ի վերայ ժողովրդեանն։ Ճառ արկին, սկսան խօսել և ասեն ցՍամուէլ․ “Ահաւասիկ դու ծերացար և հասեր 'ի չափ աւուրց քոց, և չես կարող արդ յայսմ հետէ մտանել և ելանել ընդ մեզ 'ի մարտ պատերազմի, և որդիքն քո զոր կացուցեր 'ի վերայ մեր դատաւորս՝ ոչ գնան 'ի ճանապարհս քո, վասն զի խոտորեցան սիրտք նոցա զկնի կաշառոց․ տուր մեզ թագաւոր, զի դատեսցէ զմեզ իբրև զամենայն ազգս„։ Չար թուեցաւ զրոյցն յաչս Սամուէլի, ոչ վասն զի անարգեցին զնա և զորդիս նորա, և ոչ վասն զի խնդրեցին զթագաւոր, զի 'ի Յակովբու ժամանակացն իսկ խոստացեալ էր․ այլ զի ասացին թէ դատեսցէ զմեզ իբրև զամենայն ազգս, այսինքն՝ զի թողացուսցէ նոցա պաշտել զամենայն աստուածս՝ զոր և կամիցին։

Յաղօթս կաց Սամուէլ, զի գիտասցէ թէ ուստի է պատգամս այս՝ զոր խօսեցաւ ժողովուրդն։ Ասաց տէր ցՍամուէլ․ “Լուր ձայնի ժողովրդեանդ․ վասն զի ոչ թէ զքեզ անարգեցին թագաւորաւն՝ զոր խնդրեցին, այլ զիս անարգեցին, զի մի՛ թագաւորեցայց քև 'ի վերայ նոցա„։ Իբրև զի մի գործ է 'ի չար գործոցն՝ զոր արարին իբրև ելին յԵգիպտոսէ, զԲահաղ և զՓեղփեգովը, որպէս և թողին զիս և պաշտեցին զաստուածս օտարս, սոյնպէս արարին և քեզ։ Բայց այնոքիկ՝ որ երկեան 'ի փոքր գողունիցն՝ զոր գողացան որդիքն քո գաղտուկ 'ի քէն, ցոյց նոցա՝ զոր

ինչ առնու յայտնապէս 'ի նոցանէ թագաւորն որ թագաւորէ 'ի վերայ նոցա ։

Իսկ իբրև համարեցաւ առաջի նոցա զընթանալ որդւոցն առաջի կառացն, և գործել զգործ նորա և հնձել զհունձ նորա, և զտանել դստերաց նոցա յուտայնանկս և մլաղայս և հացեփեացս առնուլ զայգեստանս և զձիթաստանս նոցա, տասանորդել զարդիւնս արմտեաց նոցա հանդերձ այլովք բազմօք. զի վասն բազմութեան հարկացն բողոքեսցեն առաջի թագաւորին՝ զոր ընտրեցին. և մի՛ լուիցէ նոցա տէր ։ Իսկ իբրև վասն այսր ամենայնի ոչ կամեցան հրաժեշտ առնուլ 'ի թագաւորէն՝ զոր խնդրեցին, յայտ եղև զի ոչ եթէ վասն փոքր փոքր կաշառոց որդւոցն Սամուէլի հրաժարեցին 'ի նոցանէ, այլ վասն զի զթագաւորութիւնն խնդրէին իւրեանց, որպէս և Մովսէսն կանխեաց մարգարէացաւ 'ի վերայ նոցա ։ Եւ զի եղիցի նոցա 'ի ձեռն թագաւորին՝ զոր ընտրեցին՝ համարձակութիւն երկիր պագանել ամենայն կռոց զոր և կամիցին ։ Եւ վասն զի կամեցան կորզել առնուլ զթագաւորութիւն յիւրեանս, անարգին խոտին ազգքն ամենայն հանդերձ յուդայեան ազգաւն, և ընտրէ զՍաւուղ 'ի փոքր ազգէն Բենիամինի ։

Արդ իբրև առաքեցաւ նա 'ի հօրէ անտի իւրմէ խնդրել զէշսն որ կորեան. և հաս յայս պատճառ մինչ առ Սամուէլ ։ Եւ ահա Սամուէլ մատուցեալ ելանէր 'ի Բամայ, այս ինքն 'ի տեղի երևելի. զի յօր պատարագին իւրեանց անդ ճաշէին ։ Հրաման առ Սամուէլ աւուրբ յառաջ օծանել զորդին Բենիամենի՝ որ գալոցն էր առ նա 'ի վաղիւ անդր ։ Տեսի, ասէ, զժողովուրդ իմ, և մուտ բողոք նոցա առաջի իմ վասն այլազգեացն և ամոնացւոցն, որպէս և եմուտ բողոք հարցն նոցա առաջի իմ վասն եգիպտացւոցն ։ Զոգաւ Սաւուղ առ Սամուէլ, և եցոյց նմա վասն իշոցն որ գտան. մարգարէացաւ նմա և վասն թագաւորութեան, այն զի ասաց ցնա, եթէ "Իսկ ո՞յր իցեն բարութիւնք ամ̃ Իսրայէլի, եթէ ոչ քո և տան հօր քոյ" ։ Իսկ Սաւուղ թէպէտ և մտ̃ հեռի իրացն՝ զորմէ յայտնեաց նմա՝ հաւատայ, այլ սակայն զթագաւորութե̃ մտ̃ կրտսեր ազգին իւրոյ երկմտեալ էր ։

Արդ իբրև եկեր և արբ Շաւուղ ընդ Սամուէլի, և ետ զմասն զոր պահեալ էր նմա յառաջ քան ըզտեսանելն զնա, խօսեցաւ ընդ Շաւուղի վասն ընտանեացն՝ որ ինչ աւուրբ յառաջ 'ի տեառնէ ասացաւ ցնա: Եւ իբրև իջանէին՝ հարց զպատանեակն իբրև ոք զի յայտնեսցէ նմա զպատգամս տեառն. և արկ զիւղն 'ի գլուխ նորա, և համբուրեաց զնա: Եւ վասն զի երկմտեալ էր Սաւուղ վասն կրտսերութե̃ն տոհմին իւրոյ, ետ նմա նշան զերկուց արանցն՝ որ պատահելոց էին նմա 'ի ծիծղայ, և մատուցանէն նմա աւետիս վասն իշոցն որ գտանն, և զերից արանցն՝ որ ելանէին 'ի տուն ա̃յ: Եւ զի պատահելոց էր նա 'ի Հռամայ ա̃յ դասուն մարգարէից՝ որ մարգարէանային թէ Սաւուղ թագաւորեցաւ 'ի ժողովրդեանն: Նա և դու իսկ՝ որ երկմտեալդ ես վասն այսր, մարգարէանաս ընդ նոսա վասն նորին իրի: Հրամայեաց նմա դարձեալ երթալ 'ի Գաղգաղա, և մնալ նմա եւթն օր, մինչև եկեսցէ առ նա մատուցանել զողջակէզս, և ցուցանել նմա զինչ առնելոց իցէ:

Իսկ իբրև դարձաւ նա 'ի Սամուէլէ, փոխեաց ա̃ծ զսիրտ նորա; ոչ զարդարութե̃՝ այլ զզօրութե̃: Եւ արար Սամուէլ զօրաժողով 'ի Մասեփայ: Եւ մինչ դեռ խորհէին և զմտաւ ածէին ազգն յուդայեան՝ եթէ նոքա թագաւորեն, ընտրեցաւ ազգն Բենիամենի, և ընտրեցաւ Սաւուղ յազգի անդ: Խնդրեցաւ և ոչ գտաւ. իսկ իբրև յայտնեցաւ տերամբ վասն նորա՝ ածին զնա, զի թաքուցեալ էր ընդ կարասեաւն, և թագաւորեցուցին զնա: Միաբանեցան հաւանեցան հաւասարեցան ընդ նմա սակաւքն և նուազունքն՝ որ ոչն խնդրէին զնա: Եւ որդիքն անօրէնութե̃ որք խնդրեցին զնա՝ նայեցան յազգ և 'ի տոհմ նորա, զի կրտսեր էր. ետուն պատասխանի և ասեն ընդ միմեանս՝ թէ "Որո՞վ իւիք կարիցէ փրկել զմեզ յայլազգեաց և յամովնացւոցն": Եւ վասն զի արհամարհեցին զնա, թոյլ ետ ա̃ծ Նախաշու ամովնացւոյ, և եկն բնակեցաւ առ Աբիշ գաղայադացւոց, և խորհեցաւ առնել զնա ձաղ ժողովրդեանն, այսուիկ՝ զի խնդրեաց 'ի նոցանէն կուրացուցանել զաջ ակն իւրեանց. և ապա ուխտեսցէ ընդ նոսա

զուխտ և դաշինս կռեսցէ ։

Իսկ իբրև առաքեցին բնակիչքն Աբիշ քաղաքի 'ի Հռամայ առ Սաւուղ, և ցուցին նմա զայսոսիկ բանս և լային զլալիւն մեծ, վառեցաւ հոգին զօրութե̃ 'ի վերայ Շաւուղայ․ և կալաւ պատառեաց զեզինսն իւր, և ետ տանել ընդ ամենայն Իսրայէլ, զի անկցի նոցա ահ և երկիւղ, և միահամուռ ելցեն զօրաժողով առ Սամուէլ և առ Սաւուղ ։ Յորում աւուր ակն ունէին կուրացուցանել ամոնացիքն զաչս որդւոցն Իսրայէլի, որ 'ի նմին աւուր եղեն կեր սուսերի ։ Եւ նահատակեցաւ նախ 'ի նոսա առաջին Թագաւորն՝ որ եկաց 'ի ժողովրդեանն ։

Չու արարին և եկին իջին յետ այսորիկ 'ի Գաղգաղա նորոգել զթագաւորութիւնն ։ Եւ վասն զի մարգարէ էր Սամուէլ և նահապետ և դատաւոր, ասաց զի գգուեսցէ զանձն իւր առաջի ժողովրդեանն և առաջի Թագաւորին․ զի յոյժ և անչափ հեռի էր նա յայնմ իմեքէ՝ որով իւիք բամբասէին զնա որդւովքն իւրովք ։ “Զո՞յր, ասէ, զեզն առի վարել նովաւ, և կամ թէ կասուլ․ և զո՞յր գրաստ վարեցի ադալ նովաւ, և կամ թէ կրել„ ։ Եւ իբրև վկայեցին ամենեքեան առ հասարակ՝ եթէ “Ոչ զրկեցեր զմեզ և ոչ բռնի վարեցեր„, այլովք հանդերձ, ետ պատասխանի և ասէ ցնոսա․ “Դատեցայց զձեզ առաջի տեառն„․ այս ինքն յանդիմանեցից զձեզ առաջի տեառն ։

Եւ սկսաւ այնուհետև համարել նոցա զնահապետսն յԵգիպտոսէ՝ որ կացեալ էին 'ի ժողովրդեանն, և զի յամենայն նեղութե̄ց փրկեալ էր զնոսա 'ի Թագաւորացն՝ որ շուրջ զնոքօք բնակեալն էին ։ Եւ արդ այժմ ոչ էր պարտ և պատշաճ երկնչել ձեզ յամոնացւոցն, և խնդրել ձեզ զթագաւորն․ վասն զի մինչև ցայսօր ոչ եթէ Թագաւորաւ փրկեաց ըզձեզ, այլ 'ի ձեռն դատաւորաց․ գիտացէք զի չարիքն ձեր եղեն, զի խնդրեցէք ձեզ Թագաւոր․ ահա տամ ձեզ նշան 'ի ձեռն որոտման և անձրևոյ, զի տեղասցէ 'ի հունձս ցորենոյ ։ Ետուն պատասխանի և ասեն․ “Աղօթս արա 'ի վերայ մեր, վասն զի մեղաք մեք զի խնդրեցաք Թագաւոր„ ։ Ասէ ցնոսա․ “Քաւ ինձ՝ եթէ մեղայց տեառն, և հատուցից զփոխարէնդ ձեր„․

այս ինքն՝ թէ մատուցից վ՟ն ձեր պատարագ առաջի տ՟ն։

Դարձեալ յետ ժամանակիս այսորիկ եկին հաւին այլազգիքն 'ի վերայ հեբրայեցւոց 'ի մարտ պատերազմի. և Սաւուղ ցարդ ևս 'ի Գաղգաղա էր։ Իբրև կաց մնաց եւթն օր, որպէս պատուիրեաց նմա Սամուէլ, ցրուեցաւ ժողովուրդն առ 'ի նմանէն։ Բայց յամելն Սամուէլի առ 'ի փորձ հանդիսի էր Սաւուղի, զի եթէ կա՞յ մնայ առ պատուիրանին՝ որ ինչ 'ի Սամուէլէն հրամայեցաւ նմա։ Իսկ Սաւուղի այսպէս թուեցաւ՝ եթէ զոր օրինակ առ ազգն նորա զտեղի թագաւորութեն 'ի Յուդայէ, սոյնպէս առնու և զքահանայութիւն 'ի յղևտացւոց անտի։ Իսկ իբրև ժպրհեցաւ և մատոյց զողջակէզսն, որ ոչ էր նմա հրաման, եկն Սամուէլ և ասէ ցնա. "Յանցեար, զի ոչ պահեցեր զպատուիրանս տեառն՝ զոր պատուիրեաց քեզ տէր 'ի ձեռն իմ"։ Եւ վասն զի խորհեցար առնուլ զերկոսին, արդ և զթագաւորութիւդ զոր ունիս՝ մի՛ ըմբոշխնեսցես. քանզի ընտրեաց իւր տէր զայր Դաւիթ՝ իբրև զսիրտն իւր, առնել զիրաւունս և զարդարութի ժողովրդեանն։

Ըստ պատասխանի Յովնաթան և ասէ ցկապարճակիրն իւր. "Եկ անցցուք 'ի վերայ այլազգեացն". և խնդրեաց նշան 'ի բերանոյ այլազգեացն։ Եւ իբրև ետես՝ եթէ տուաւ նմա նշան, այն զի ասացին եթէ եկայք առ մեզ, ելին 'ի վերայ նոցա. և անկան այլազգիքն առաջի նորա։ Եւ եղև անդ սուր առն 'ի վերայ ընկերին իւրոյ, որպէս և 'ի Մադիամն։ Եւ այլազգիքն և հեբրայեցիքն սիրով էին իբրև յերէկն և յեռանդն, և շուրջ նստէին. այս ինքն ուրախ էին լինել խաղաղութե ընդ Իսրայէլի և ընդ Շաւուղի։

Ըստ պատասխանի Սաւուղ և ասէ. "Անիծեալ է այր՝ որ կերիցէ հաց մինչև ցերեկոյ, մինչ զի խնդրեցից վրէժ 'ի թշնամեաց իմոց"։ Եւ Յովնաթան ոչ լուաւ. և կարկառ զնիզակաբունն իւր, և թաթաւեաց 'ի մեղու անդ, և եդ 'ի բերան իւրում, և բացան աչք նորա. և շուայտեցաւ ժողովուրդն յաւար անդր. այս ինքն զի ժլատացան [1] և տարան զխաշինս

1 Միւս օրինակն շլափացան որպէս և 'ի յաջորդսն։

և զանդեայս, և զենին 'ի վերայ երկրի, և կերան հանդերձ արեամբն. վասն զի ոչ ել 'ի ճարպոյ և յարենէ նորա 'ի վերայ սեղանոյն: Եւ շինեաց Սաւուղ սեղան տեառն, և հան 'ի վերայ նորա զարիւնն և զճարպ զոր զենուին, և կերան: Արդ խնդրեաց Շաւուղ 'ի տեառնէ իջանել 'ի վերայ այլազգեացն, և ոչ լուաւ: Եւ հրամայեաց Շաւուղ ժողովրդեանն արկանել վիճակ ընդ ինքն և ընդ ժողովուրդն և ընդ Յովնաթան:

Եւ ուստի՞ գիտաց Շաւուղ եթէ անց ժողովուրդն ըստ նզովմն. քանզի ոչ գոյին նմա մեղք կանուխ քան զայս, այն՝ զի հան զողջակէզսն իբրև ոչ էր իշխան: Եւ եթէ այս և որ սոյին նման է՝ ոչ կասեցոյց զյաղթութի՟ նորա, այս փոքրիկս Յովնաթանու՝ զի ոչ լուաւ իբրև երդմնեցուցանէր հայրն նորա զժողովուրդն, զի՞արդ արգելոյր զնա: Այլ տէր գրգռեաց զնա զի պահանջեսցէ զայս. որպէս զի նովաւ և 'ի նմանէն դատեսցի զնա: Զի եթէ նա՝ վասն զի անց որդի նորա ըստ նզովմն նորա՝ սպանանէր, վասն զի եկեր լիաբերան պատառ մի խորսխոյ՝ իբրև չէր գիտակ՝ 'ի կենաց անտի հատանէր, ինքն զի անց ըստ պատուիրանն ա՟յ՝ ո՞րչափ ևս արժան էր մեռանել նմա: Նա դարձեալ և առ 'ի փորձ հանդիսի ժողովրդեանն եղև այս, զի ապրեցուցին զՅովնաթան 'ի մահուանէ, որպէս զի ընդ միտ մտցեն հօրն նորա. և զքահանայսն որ կոտորեաց, ոչ ապրեցուցին ընդ միտ մտանել ա՟յ:

Եւ յետ այսորիկ առաքեաց զնա Սամուէլ կոտորել 'ի սուր սուսերի զամաղէկացին, և հրձիգ առնել զամենայն ինչս նոցա: Եւ դատեաց զօրութ՟. այս ինքն յանդիմանեաց զզօրութ՟ն: Իսկ կենացւոցն զի՞ ոչ խնայեաց: Զի աներք էին Մովսիսի, և զերախտիսն զոր արարին ժողովրդեանն՝ այն իսկ է, զի սպանին զՍիսարա զխռովիչսն հեբրայեցւոց: Արդ չու արար խաղաց գնաց Սաւուղ յԱմաղէկ, և կոտորեաց զամաղէկացին 'ի սուր սուսերի իւրոյ, որպէս և հրաման տուաւ նմա: Կեցոյց զԱգագ և զգեղեցիկ ստացուածս խաշանցն ամաղէկացւոցն առանց հրամանի: Ասէ տէր ցՍամուէլ. "Զղջացայ ես, զի

թագաւորեցուցի զՍաւուղ„: Զայս զի ասաց՝ եթէ զղջացայ, յայտ առնէ և ցուցանէ՝ եթէ ոչ գոյր ընդ նմա այլ՝ ուսուցանել զեղջ և ապաշաւ այնմիկ, որ զղջութի̃ն հեռի էր 'ի նմանէն:

Յաղօթս կաց Սամուէլ վասն Սաւուղի: Եւ զի էջ ընդ առաջ Սաւուղի 'ի Կարմելոս, և ահա նա կազմէր տեղի ողջակիզաց, իբրև ոչ իշխէր և 'ի տեղի ուր ոչ էր հրամայել նմա: Ասէ Սաւուղ ցՍամուէլ. “Օրհնեալ է տէր՝ որ հաստատեաց զպատգամ իւր„. կամ զայն՝ զոր ասաց 'ի ձեռն Մովսէսի՝ եթէ “Գլուխ ազգաց Ամաղէկ. վախճան կատարածի նորա կորիցէ յաւիտենից„. և կամ զայս՝ զի 'ի ձեռս քո հրամայեաց ինձ իջանել յԱմաղէկ և կոտորել զնա: Արդ եթէ տէր արար 'ի ձեռս քո զոր ինչ ասացն ցքեզ, դու ընդէ՞ր ոչ արարեր զայս զոր պատուիրեացս քեզ: Խնայելովդ զի խնայեցեր յԱգագ արքայ Ամաղէկայ, մահապարտ ես. և զի ցանկացար յաւար, չարիս գործեցեր առաջի տեառն: Իսկ իբրև ստեաց Սաւուղ և ասաց, եթէ “Մատուցանել պատարագ տեառն ածաք զխաշինսդ„, ասէ ցնա. “Կոտորել հրամայեաց, և ոչ մատուցանել. քանզի լաւ է զբանն առնել ա̃յ, քան մատուցանել զողջակէզս պատարագաց„: Բայց կասկածեմ ես, և 'ի խղճի են միտք իմ. գուցէ յայսմանէ եկեսցես 'ի մեծ քան զայս, որպէս եցոյց ինձ տէր յայսմ գիշերի: Բայց զայս գիտասջիր, զի մեղք դիւթի դառնութիւն է և բարկացողութիւն:

Իսկ վասն զի խորամանկեցաւ Սաւուղ զի 'ի ձեռն պատարագին վայելիցէ և օգտեսցի յաւարէ անտի, և զի ցուցցէ նմա Սաւուղ՝ եթէ գիտաց զխորհուրդ նորա, յայտնեաց նմա և ասէ, եթէ զինչ որ զօդէ մարդ 'ի սրտէ անտի իւրմէ յետ ընդունելոյ պատուիրանին, այն դառնութի̃ է և ստութի̃: Ասէ. պատրաստեցար յղենալ, զի տեսցես զպատկեր մեռելոյ, և հարցցես 'ի նմանէն. այն իսկ է, զի Ամաղէկ եղև սկիզբն անարգելոյ նորա և դիւթութեան և խլումն թագաւորութե̃ նորա. “Վասն զի անարգեցեր դու զբանն տեառն, յայսմ օրէ և անդր անարգեսջիր 'ի թագաւորութե̃դ„: Ստեաց միւսանգամ Շաւուղ

և ասէ, թէ “ի ժողովրդենէ այտի երկեայ, զի մի քարկոծեսցեն զիս վասն ագահութեան իւրեանց. և թողի ես զխաշինս և զանդեայս. այլ դարձ ընդ իս և երկիր պագից տեառն„: Եւ իբրև բուռն հարեալ ունէր Սաւուղ զՍամուէլէ, պատառեաց զմեկնոցն նորա: Ետ պատասխանի և ասէ ցնա Սամուէլ. ըստ այսմ նմանութեան՝ զի պատառեցեր զմեկնոցս իմ, պատառեցաւ թագաւորութիւն քո 'ի քէն. և եղիցի յայսմ հետէ թագաւոր 'ի տանէն Յուդայի որ լաւն է քան զքեզ: Արդ մի խնդրեր յինէն երկիր պագանել և մատուցանել ընդ քեզ աղօթս, զի հաշտեսցի ընդ քեզ տէր. վասն զի անլոյծ դատավճիռն ել 'ի վերայ քո, և ահա տակաւին ասացաւ. այս ինքն է, թէ որ ինչ ասացաւն 'ի Յակովբայ, ոչ լինի սուտ, եթէ ոչ թագաւորէ: Իսկ իբրև կարի աղաչեաց և նեղեաց զնա, զի “Գոնեայ թէ առաջի ծերակոյտ ժողովրդեանս՝ զի մի անարգեցայց՝ պատուեա զիս և եկ ընդ իս„, հարկ եղև նմա. և դարձաւ Սամուէլ, և պատառեաց զԱգագ առաջի տեառն:

Արդ հարցանէր Սաւուղ խորամանկ ցՍամուէլ յստակամիտ, զի յայտնեսցէ նմա թէ ով է այն՝ որ թագաւորելոցն է զկնի նորա և ընդ նմա: Իսկ Սամուէլ զի ոչ ասաց ցնա՝ թէ այս անուն է, զի գուցէ թէ սպանանիցէ զնա. ծածկէ զանուն նորա, զի ըզգուշասցի 'ի կեանս նորա. և քարոզէր զթագաւորութիւն նորա, զի մի ստեսցի բան նորա: Այն, ասէ, որ հատանէ զդրօշակ վտաւակաց քոց, որպէս պատառեցեր զիմս, նա թագաւորէ ընդ քեզ և զկնի քո: Բայց սակայն և ոչ Սամուէլ գիտէր ցարդ եւս եթէ ով թագաւորէ. բայց զոր ինչ գիտէրն եթէ թագաւորելոցն է՝ ասաց նա. այլ եթէ ով թագաւորէ, զոր ոչն գիտէր, ոչ ասաց ցնա:

Ասէ տէր ցՍամուէլ. “Մինչև ցե՞րբ սգացեալ ես վասն Սաւուղի՝ զոր անարգեցի[1], զի հաշտեցայց. անց երթ, օծ մի 'ի յորդւոցն Յեսսեայ. վասն զի 'ի նոսա տեսի ես ինձ թագաւոր„: Ծածկեաց զանունն Դաւթի, զի եղջերքն յայտնեսցէ զնա, և զի ապրե-

1 Յօրինակին անարգեցին :

ցուցէ զնա 'ի նախանձուէ եղբարց իւրոց, և զի թէ հարցցի 'ի Սաւուղէ՝ երդուիցէ եթէ ոչ գիտեմ զայն՝ որ հանդերձեալն է օծանիլ: Եւ վասն զի երկեաւ Սամուէլ երթալ՝ եթէ գուցէ լուիցէ Սաւուղ, և սպանանէ զՍամուէլ և զԴաւիթ և զամենայն տուն հօր նորա, ետ նմա պատճառ՝ որով զնա 'ի ստութ̃է անտի արգելցէ, և զԴաւիթ և զտունն Յեսսեայ ապրեցուսցէ 'ի մահուանէ: Իսկ իբրև տեսին զսայլն զոր տարաւ ընդ իւր ծերակոյտ Բեթղեհեմ գեօղջն, զահի հարան և երկեան. թուեցաւ նոցա եթէ սպանումն ինչ գտաւ 'ի սահմանակից գեօղջն իւրեանց, և եկեալ է տեսանել՝ զի 'ի ձեռն սայլին գիտասցէ, եթէ 'ի սահմանս որոյ գեօղջ գտաւ: Ասաց զճշմարիտ զրոյցն ծերակոյտին՝ որ հարցին զնա. և ած զնոսա 'ի պատարագն: Եւ զի երկմտեցան 'ի բանէ նորա, ցոյց նոցա արդեամբք զգործն: Իսկ իբրև արտաքս քան զօրէնսն հրամանաւն տեառն օրինաց մատոյց զպատարագն 'ի տեղի՝ ուր ոչ էր համարձակ նմա, արձակեաց զծերակոյտն:

Ած անցոյց Յեսսէ զամենայն որդիսն իւր զառաջեաւ. և ոչ հաճեցաւ տէր և ոչ ընդ մի ոք 'ի նոցանէն: Իսկ իբրև եկն Դաւիթ, և յայտնութ̃ի եղև 'ի վերայ Սամուէլի՝ եթէ այս է, եռաց եղջերն 'ի ժամուն՝ իբրև օծանէր, որպէս ոմանք ասեն: Սպան զարջն և զառեւծն. զի այս երկու առաքինութ̃իք՝ զոր արար յետ օծմանն իւրոյ, վկայեսցեն վասն երգոցն զոր երգէր նա: Քանզի յորում աւուր բնակեցաւ հոգին 'ի Դաւիթ, 'ի նմին աւուր անց 'ի Շաւուղէ. և փոխանակ նորա այսն չար չարչարէր զնա: Եւ վասն զի՝ որպէս ասենն՝ դև մոլեկանաց էր, վասն այսորիկ խնդրեցին ծառայքն նորա զԴաւիթ, զի 'ի ձայն քաղցր քնարին նորա եղիցի անդորրութ̃ի Սաւուղի: Իսկ իբրև անդորրեցոյց Սաւուղի, և անց 'ի նմանէն այսն չար, դարձաւ նա առաջնորդութե̃ն ա̃յ 'ի տուն հօր իւրոյ:

ԳԼՈՒԽ Գ

Ի ՅՄԻՆ ժամանակի եղև մարտ պատերազմի ընդ այլազգիսն և ընդ հեբրայեցիսն։ Առաքեաց Դաւիթ 'ի հօրէ անտի իւրմէ տեսանել զողջոյն եղբարց իւրոց։ Եւ իբրև ետես զԳողիադ զի նախատէր զիսրայէլ, հար ձեռն յանձին սպանանել զայլազգին. վասն զի գիտէր զի ոչ մեռանէր, մինչև Թագաւորի զօրութե̃՝ զոր ընկալաւ 'ի ձեռն հոգւոյն։ Ոչ էջ զինուն Սաւուղի՝ զոր ընկալաւ 'ի վերայ այլազգւոյն. վասն զի ոչ էր փորձեալ նորա եթէ նովաւ հաճեսցի տէր օգնել նմա։ Իսկ իբրև սպան զԳողիադ, հարցանէր Սաւուղ ցԱբեններ, եթէ "Ո՞յր որդի է պատանեակս այս"։ Եւ ահա կապարճակիր էր նորա յառաջ քան զպատերազմն զայս, և յօր պատերազմին առաջի նորա կայր՝ իբրև զգեցաւ և մերկացաւ զզէն նորա, զրոյց տայր նմա և վասն առաքինութե̃ն զոր արար՝ զի սպան նա զարջն և զառեւծն։ Եւ եթէ ասիցեմք՝ եթէ զինուն այլակերպեցաւ, և ահա յառաջ քան զզինուն զգենուլն յառաջագոյն խաղաց գնաց իջանել սպանանել զհսկայազնն զԳողիադ յայլազգեաց։

Բայց են ոմանք որ ասեն՝ եթէ իբրև առաքեաց զնա հայր իւր առ Սաւուղ, 'ի զգեստս պայծառագեղս թագաւորութե̃ առաքեաց զնա, և մեծաշուք եղև 'ի մտանել անդ իւրում, գեղեցկացաւ և զուարթացաւ կրկնապատիկ քան զայն՝ որպէս և էր նա։ Իսկ իբրև դարձաւ նա 'ի տուն հօր իւրոյ, և մերկացաւ զզգեստն իւր և զգեցաւ բաճկոն, ագաւ և զձորձմոյկն[1] հովուութեան, ցրտահարեցան երեսք նորա յեղեմնախառն ցրտոյն, եղև և արևակէզ 'ի տապոյ արեգականն. և վասն զի այսու զգեստիւ և յայս գձձութե̃ ետես զնա Սաւուղ կրկին անգամ, վասն այսորիկ ոչ գիտաց զնա։

Եւ են դարձեալ ոմանք զի ասեն՝ եթէ զի որդի

1 Միւս օրինակն ֆորֆոոյկն ։

Յեսսեայ էր նա. և գիտէին և Սաւուղ և Աբբեններ, բայց կարծելով կարծէր՝ զի ինքն Դաւիթ թագաւորէ. և կամեցաւ տեղեկանալ թէ յորմէ ազգէ է. յուդայեա՞ն իցէ նա, ուստի կարգեալ լինի թագաւորութի՞ն՝ որ 'ի ժամանակացն Յակովբու խոստացեալ էր. 'ի Զարեհէ՞ իցէ, ասէ, թէ 'ի Փարեսեայ: Ասէ Աբեններ. "Ոչ եմ ես ինչ այդմ տեղեակ,,: Եւ վասն զի մեծաւ փութով կամէր գիտել զայս, ասէ ցնա. "Աղէ հարց դու յառաջագոյն թէ ո՞յր որդի է,,. և իբրև հարցին ցԴաւիթ, և ասաց՝ եթէ "Որդի Յեսսեայ եմ ես 'ի Բեթղեհեմ գեղջէ,, , ասաց զանուն հօր իւրոյ, վասն զի հարցին ցնա. բայց զանուն ազգին իւրոյ ոչ յայտնեաց, զի գուցէ թէ սպանանիցեն: Կացոյց զնա Սաւուղ զօրագլուխ 'ի վերայ գնդին պատերազմողաց. և ուր երթայր՝ յաղթէր նա. զի վասն այսորիկ քաջութե՛ց և առաքինութե՛ց հաճոյ թուեցաւ յաչս ժողովրդեանն և նախարարացն Սաւուղի:

Իսկ իբրև գովեցին և յարգեցին զնա կանայք 'ի յերգս վիպասանաց, չար թուեցաւ Սաւուղի. վասն զի լաւացուցին քան զնա: Եւ "Ետուն նմա, ասէ, բեւրս, և ինձ հազարս. և դարձեալ նորա է թագաւորութի՛ն,,. այս ինքն յայսմ հետէ թագաւորութի՛ նորա է: Արդ զայն՝ զոր 'ի Սամուէլէն կամէր գիտել և ոչ յայտնեցաւ ինձ, ահաւասիկ 'ի ձեռն վիպասան երգոցս կանանց ժողովրդեանն յայտ եղև ինձ: Քանզի իբրև թագաւորի, որ մեծ իցէ քան զընկեր իւր, ետուն յաներկիւղ յանխիղճ բիւրս Դաւթայ, և հազարս Սաւուղի: Եւ յորմէ օրէ հետէ գովեցաւ Դաւիթ, 'ի նոյն օրէն սկսաւ լինել բամբասելի Դաւիթ յաչս Սաւուղի:

Եւ յետ աւուրց վառեցաւ, այս ինքն մուտ այսն չար 'ի Սաւուղ, և մարգարէացաւ: Եւ արդ ուստի՞ ունիցի այսն պիղծ զմարգարէութի՛ն. և զի՞նչ ինչ արդեւք իցէ մարգարէութի՛ն: Մարգարէութի՛ն նորա այս էր, ասէ՝ Դաւիթ թագաւորէ: Արդ զսոյն զայս լսելով լուաւ այն՝ որ խօսէրն 'ի նմա. և ոչ եթէ մարգարէանալով մարգարէացաւ: Եւ կամեցաւ ձգել զգեղարդնն Դաւթի. և շրջեցաւ Դաւիթ ծպտեցաւ ճմլեցաւ

կրկին անգամ յաջ և յահեակ և ապրեցաւ ։ Արդ-
թեպէտ և յայսմ աւուր ոչ ձգեաց 'ի նա , այլ իբրև
արար զնա իւր փեսայ յերկուս դստերացն իւր՝ զի արկ-
ցէ զնա 'ի ձեռս այլազգեացն , 'ի հարկանել վնին [1] իբ-
րև փարատէր 'ի նմանէն զտենդ տապոյն նեղութե՟ դի-
ւին չարի՝ որ տառապեցուցանէր զնա , սակայն 'ի նոյն
օր ձգեաց 'ի նա զգեղարդնն ։ Բայց դարձեալ Ճօճե-
ցաւ Ճաղպատեցաւ և պրծեաւ ապրեցաւ 'ի գիշերին
յայնմիկ ։ Եւ հար գեղարդեամբն ոչ զմարմինն Դաւ-
թի՝ որպէս ինքն կամէր , այլ 'ի յորմ անդ սենեկին՝
որպէս ոչն կամէր ։

Արդ առաքեաց Շաւուղ արս 'ի պահու առնուլ
զնա , և սպանանել 'ի վաղիւ անդր ։ Իջոյց զնա Մեղ-
քող 'ի պատուհանէ անտի ։ Եւ զի մի առաքեսցէ
Շաւուղ զկնի նորա սպանանել զնա 'ի Ճանապարհի
անդ ընդ երթալն , առ եդ զպատկերն 'ի գահոյս
անդ . և ասաց՝ եթէ չարամոյն կայ 'ի մեծ ախտի ։
Զի մինչ երթան դահիճքն և ասեն ցՇաւուղ , և դառ-
նան անդրէն , երթայ հասանէ Դաւիթ առ Սամուէլ
և ապրի ։ Յայսմ աւուր պատմեաց Սամուէլ Դաւ-
թի՝ եթէ ասացի ես ցՇաւուղ , եթէ այն՝ որ հատա-
նէ զդրօշակդ քո , որպէս և պատառեցեր դու զիմս ,
նա թագաւորէ զկնի քո ։

Առաքեաց Շաւուղ հրեշտակս ածել զԴաւիթ .
և տեսին զդասն մարգարէից , զի մարգարէանային՝
եթէ թագաւորէ Դաւիթ . մարգարէացան զսոյն
զայս և հրեշտակքն Շաւուղի ։ Իսկ իբրև յաւել ա-
ռաքեաց հրեշտակս կրկին անգամ և երիցս , մարգա-
րէացան՝ եթէ Դաւիթ թագաւորէ ։ Յարեաւ ինքնին
Շաւուղ և չոգաւ . և քանզի չև էր հասեալ , մար-
գարէացաւ՝ եթէ Դաւիթ թագաւորէ . մերկաց ըզ-
պատմուՃանս արքայութե՟ն իւրոյ , և ետ նոքօք զթա-
գաւորութի՟ն Դաւթի ։ Իսկ դասուն մարգարէից , որ
պատահեցանն Շաւուղի և մարգարէացան թագաւո-
րութե՟ն իւրում , նոքօք կամեցաւ տալ նմա զհաւա-
նութի՟ն զթագաւորութե՟ն՝ զոր ետ նմա 'ի ձեռն Սա-
մուէլի . և վկայէ նմա և դաս մարգարէիցն , զի վկայ-

1 Յօրինակին վնին . եդաւ ըստ միւս օրինակին ։

եցին վասն Դաւթի, որպէս վկայեաց ինքն Շաւուղ և հրեշտակք նորա և դասն մարգարէից՝ որ մարգարէանային առաջի Սամուէլի :

Ըկն եհաս Դաւիթ առ Յովնաթան. իմացոյց նմա՝ զի իմացի զմիտս հօր իւրոյ : Եւ վասն զի մի փակեսցէ զնա հայր իւր ընդ երդմամբ, և զի մի յայտնեսցէ Դաւթի զխորհուրդ նորա, զօդեաց յօդեաց ըզպատճառ պատմնեկին և զնետին ձգելոյ. զի իբրև փախուսցէ նա զԴաւիթ, եղիցի նմա համարձակութիւն յերդումին՝ եթէ ոչ յայտնեաց Դաւթի զչարիսն հօր իւրոյ. քանզի յորում աւուր երդմնեցոյց Յովնաթան զԴաւիթ, թէ մի պակասեսցէ շնորհքդ քո 'ի տանէ իմմէ յաւիտեան, 'ի նմին աւուր երդմնեցոյց Մեղքող զԴաւիթ, զի եղիցի յիշել զնա յաւիտեան :

Ըկն եհաս Դաւիթ 'ի Նաքիմա առ Աքիմելէք քահանայ. զարմացաւ սխրացաւ, վասն զի եւես զզօրագլուխն և զփեսայ արքայի յայնպիսի գձձութէ, և ասէ ցնա. զի՞ դու, զի՞ ընդ քեզ, զի՞նչ զրոյց է, զի միայնդ ես դու : Վասն զի զգուշացաւ՝ թէ իբրև յայտնեսցէ նմա եթէ փախչելով փախուցեալ է, հասանիցէ լուրն առ Սաւուղ, և սպանանիցէ զԱքիմելէք. վասն զի գիտաց՝ և ոչ կալաւ զնա : Ստեաց և ասէ. "Արքայ, ասէ, առաքեաց զիս, և ետ ինձ պատուէր՝ եթէ մի յայտնեսցես ումեք վասն որոյ առաքեալդ եմ զքեզ" : Բայց զպատանիսն զի թաքոյց, վասն զի մի 'ի տեսանել անդ նոցա խռովեսցի գեօղն : Խնդրեաց հինգ նկանակ, վասն զի երկեաւ նա յայլմէ խնդրել՝ թէ գուցէ տեսանիցեն.[1] քանզի համարեցաւ նա՝ զի թէպէտ և եղիցի և գիտասցէ արքայ վասն Աքիմելէք քահանային, որ ետ նմա զհացն, սակայն ոչ համարձակի սպանանել զքահանայսն : Ետ պատասխանի Աքիմելէք և ասէ, եթէ "Չիք այլ ինչ աստ, բայց եթէ հացն սրբութեան". այս ինքն հաց պատարագին՝ որ դնի 'ի վերայ սեղանոյն շաբաթէ 'ի շաբաթ : Ասէ ցնա Դաւիթ. "Ո՞չ ապաքէն այսօր օրէն է մեզ ուտել 'ի պատարագէ, զի յերեկէ և յեռանդէ և այսօր պա-

1 Միւս օրինակն Վեռոնիցին :

տանիքն որ ընդ իս են՝ սուրբ են, և Նոքա և զգեստք իւրեանց, և զի ինքն Ճանապարհն արձակ է ,,: Յայտ արար՝ եթէ 'ի հարկէ Ճանապարհին և քաղցին եդին ծերակոյտն զօրէնս զայս ուտել զսրբութիւնն, զի մի սովեսցին և մեռցին մարդիկն: Վասն զի կանխեաց Հոգին սուրբ 'ի Դաւիթ, և համարձակեաց զհացն սրբութեան որ 'ի տաճարի անդ դնէին. զի ուսուսցէ եթէ հանդերձեալ էր 'ի վերայ սեղանոյն եկեղեցւոյ մարմինն Քրիստոսի ելանել փոխանակ հացի պատարագին՝ որ 'ի վրան ժամուն և 'ի ժամանակեան տաճարի անդ եղև:

Իսկ իբրև առ զհացն և զսուսերն, եկն Դովէկ եդովմայեցի և եցոյց Շաւուղի. ևած զԱքիմելէք և զտուն հօր նորա, և կոտորեաց զնոսա Դովէկ 'ի սուր սուսերի իւրոյ, և ոչ ապրեցոյց ժողովուրդն զքահանայսն 'ի մահուանէ, որպէս ապրեցուցին զՅովնաթան 'ի մահուանէ: Ապրեցաւ Աբիաթար որդի Աքիմելէքայ: Ասէ ցնա Դաւիթ, թէ "Ես եմ մեղապարտ,, . այս ինքն ես եղէ պատճառ մահու տան հօր քո, զի մի է թշնամի մեր երկոցունց: Նիստ ընդ իս. վասն զի պահապանն որ առաքեաց օծանել զիս, զի թագաւորեցայց, ընդ իս է. և վասն այսորիկ ասաց Սամուէլ ցՍաւուղ, և մարգարէացան մարգարէքն և հրեշտակք Սաւուղի, և ինքն Սաւուղ՝ եթէ թագաւորէ Դաւիթ, և Սաւուղ ոչ հաւատաց:

Իբրև չոգաւ խնդրել զնա, յայրին ագաւ՝ ուր դաւթեանքն էին. և հատ Դաւիթ զդրօշակ վտաւակաց նորա վասն երկուց, մի՝ զի ցուցցէ և յայտ արասցէ ամենայն ժողովրդեանն՝ եթէ ոչ կամի նա ընդ մահն նորա, զի ահաւասիկ մատնեցաւ 'ի ձեռս նորա, և ոչ սպան զնա. և երկրորդ՝ զի ցուցցէ և ծանուսցէ նմա 'ի ձեռն նշանին՝ զոր ետ նմա Սամուէլ, յորում աւուր պատառեաց զմեկնոցն նորա, եթէ Ճշմարտիւ հանդերձեալ է Դաւիթ թագաւորել: Իսկ իբրև ել Սաւուղ յայրէ անտի, ձայն ետ Դաւիթ, կոչեաց և ասէ ցնա. ահաւասիկ մատնեաց զքեզ տէր 'ի ձեռս իմ. ոչ եթէ սպանանել զքեզ, զի ոչ խնդրէի իսկ ես զայս, այլ զի քև մեծարեցայց ես յաչս ժողովր֊

դեամն՝ եթէ ոչ կամէի ես ընդ մահ քո․ բայց ասացեալ է յառաջին առակս նախնեաց, եթէ «Յամպարշտէ ելցէ ամպարշտութիւն»․ այն իսկ է, եթէ որ փորէ խորխորատ ընկերի իւրում, անձն իւր լցցէ զնա։ Բայց Սաւուղ իբրև ետես եթէ պատառեցաւ դրօշակ վտաւակացն նորա, ճշմարտեաց նա և հաւատաց վասն նշանին՝ որ ետ նմա Սամուէլ՝ թէ արդարեւ ճշմարտիւ Դաւիթ թագաւորէ։ Ասաց Շաւուղ, թէ «Արդ գիտացի՝ եթէ թագաւորես, և հաստատի ՚ի ձեռս քո»․ այս ինքն է ՚ի ձեռն քո զաւակի կարգի թագաւորութեան։ Երդուաւ Դաւիթ եթէ ոչ ինչ վնասեսցէ զաւակին Շաւուղի, յետ արդեամբք ցուցանելոյն՝ զի ընդ մահ նորա և ընդ մահ զաւակի նորա նա ոչ կամէր։

Իսկ յետ ժամանակի իբրև մեռաւ Սամուէլ և թաղեցաւ ՚ի Հռամայ, առաքեաց Դաւիթ առ Նաբաղ՝ ոչ վասն արծաթոյ և ոչ վասն ոսկւոյ, այլ վասն հացի միայն յղեաց առ նա՝ որով իւիք կեցցէ։ Այս ինքն, յերկայնամիտ Դաւթէ ողջոյն քեզ և ընտանեկացն քոց․ տուր զոր ինչ կամիս ծառայից քոց, զի մեծ ժամանակս պահեցին զհօտ քո ՚ի լերին աստ։ Իբրև թօշակեաց նա զծառայսն Դաւթի անարգանօք փոխանակ օրհնութեան հացին, վառեցաւ Դաւիթ ՚ի մեծ ցասումն զառն բարկութեան կորուսանել սատակել առնել հրձիգ զնա և զընտանիս նորա և զամենայն ինչս իւր։ Այգ եղև և լուաւ կինն Նաբաղու․ փութացաւ յարեաւ եկն ընդ առաջ Դաւթի պատարագօք հացին և պատիր բանիւքն հրապուրանաց։ «Խօսեսցի, ասէ, աղախին քո վասն առն․ վասն զի ըստ անարգ անուան նորա սոյնպէս և նա»։ Վասն զի մեկնութիւն Նաբաղու՝ անարգիչ է․ նա և այսօր իսկ ասէ՝ եթէ նաբաղեմ ես զքեզ, այս ինքն՝ եթէ անարգեմ ես զքեզ։ «Վասն զի հանդերձեալ է առնել տէր զտէր իմ տուն հաւատարիմ»․ այս ինքն տայ քեզ զճշմարիտ թագաւորութիւնն՝ որ ՚ի զաւակի այդր քում կարգեալ է, լինի մինչև ՚ի վախճան կատարածին․ և չար ինչ ոչ գտաւ ՚ի քեզ, իբրև առ Սաւուղ՝ յորմէ օրէ եղև մինչև ցայս օր․ և Շաւուղ մարդ ոչ կարայ հալածել զքեզ․ և եղիցի իբրև արասցէ զքեզ տէր առաջնորդ իւրում

ժողովրդեանն, որպէս և խոստացաւն քեզ, մի՛ եղիցի քեզ այս 'ի գայթագղութիւն և 'ի խիղճ մտաց քոց՝ եթէ հեղեր դու զարիւն ընտանեացն Նաբաղու առանց յանցանաց. և յորժամ արասցէ քեզ տէր բարի, ապա յիշեսցես զաղախին քո՝ եթէ բարի խրատ խրատեցի զքեզ:

Իսկ Դաւիթ առ ընկալաւ զհաւանութիւն նորա. ընկալաւ և զպատարագ նորա, արձակեաց զնա 'ի տուն իւր խաղաղութ՟բ, և չոգաւ ցոյց Նաբաղու. և մեռաւ սիրտ նորա 'ի փորի իւրում: Եւ վասն զի առաքեաց նա Դաւթի բեռն նախատինս, եղև սիրտ նորա իբրև քար, և մեռաւ յետ տասն աւուր: Եւ զի ոչ սպան զնա Դաւիթ վասն հաւանութ՟ե կնոջն իւրոյ, սպան զնա ստուգութ՟ին տեառն, և ետ զԱբիգաղ Դաւթի. քանզի պիտոյ են շնորհք ստուգութ՟են, և պատիր բանքն Աբիգաղու հաշտեցուցիչք խիստ դառն բարկութեան թագաւորութեանն: Առ Դաւիթ կանայս 'ի կնութ՟ե. զի զառաջին կանայսն ետ զնոսա հայրն իւրեանց այլոց արանց. և զի եղիցի օրինակ այնոցիկ՝ որք առնուն զկանայս բազումս, զի մի՛ անկցին 'ի հեթանոսութիւն զկնի կանանցն իւրեանց: Եւ զի ծածկեցաւ երախտիքն զոր արար Դաւիթ Սաւուղի յայրի անդ, և կարծեցին թէ վասն զի 'ի ներքս էր հանդերձ արամբքն իւրովք, վասն այնր ոչ սպան զթագաւորն:

Կաց դարձեալ յաղօթս առ ա՟ծ, զի դարձեալ մատնեսցի 'ի ձեռս նորա. ոչ զի սպանցէ զսպանողն իւր, այլ զի յարգեսցի յաչս ամենայնի՝ եթէ թիկունք և պահապան նորա եմ, և ոչ եթէ սպանող նորա: Արդ իբրև ննջէր Շաւուղ յանապատի անդ, և Աբեններ սպարապետ զօրօքն հանդերձ շուրջ ըզնովաւ պահ ունէին, էջ նա և Աբիսէ քեռորդին իւր. և կամեցաւ Աբիսէ սպանանել զՍաւուղ, և ոչ եթող Դաւիթ: Եւ զի մի՛ հանապազ ձանձրացուսցեն և աշխատ արասցեն զնա, երդուաւ 'ի տէր և ասէ, եթէ "Ոչ սպանից զնա. բայց եթէ սպանցէ զնա տէր": Առ զտռամանն և զգեղարդնն, և անց գնաց: Եւ կաց 'ի բարձր բարձաւանդակին, և ոչ ոք գիտաց, վասն զի քունն տեառն անկաւ 'ի վերայ նո֊

ցա: Իսկ այնոքիկ՝ որ խնդրէին որսալ զԴաւիթ, քնոյն նոցա ետ հրաման պահապանն Դաւթի որսալ ունել անձամբ զանձինս և մատնել 'ի ձեռս Դաւթի: Սոքա եղեն այնք՝ որ քուն աչաց իւրեանց եղև նոցա շղթայ ձեռաց, և ընկղմուածն քնոյն իւրեանց՝ եղև նոցա կապանք, զի մատնեսցէ զնոսա 'ի ձեռն անխայլիչն կապելոց շնորհօք ողորմութե̃ն: Եւ ասաց Դաւիթ ցՍաւուղ. եթէ տէր գրգռեաց զքեզ ընդ իս, եկ երկոքին մատուսցուք պատարագ. տեսցուք 'ի ձեռն ընդունելու̃ պատարագաց՝ եթէ արդարեւ տէառն լիցի զքեզ ընդ իս գրգռեալ, ճենճերեսցի ճարպն քո. ապա եթէ որդիք մարդկան գրգռեցին զքեզ ընդ իս, անիծեալ են. այս ինքն չար են. քանզի առ 'ի նոցանէն իբրև 'ի հեթանոսութիւնն հեթանոսաց անկեալ էի ես. զի 'ի հալածանս հեթանոսաց ահա հալածեցին զիս: Եւ անց գնաց Դաւիթ առ Աքիշ արքայն այլազգեաց, և նստաւ բնակեցաւ 'ի Սեկելակ:

Եւ եկին ժողովեցան այլազգիքն 'ի մարտ պատերազմի, և եկին բանակեցան 'ի Սիւքէմ: Եւ Սաւուղ և զօրքն իւր բանակեցան 'ի Գաղգաղա: Եւ երկեաւ Սաւուղ յայլազգեացն. հարց 'ի տէր և 'ի տեսիլ և 'ի հուր. այս ինքն հրովն խնկոցն զոր մուծանէր քահանայն 'ի սուրբ սրբութե̃ն. զի թերևս 'ի միջոյ քրովբէից անտի յայտնեսցի և խօսեսցի ընդ նմա: Եւ իբրև հարցաւ 'ի ձեռն մարգարէին կենդանւոյ, և ետես զի ոչ լուաւ նմա տէր, մերկաց ըզգեստ իւր և այլակերպեցաւ, և չոգաւ մուտ առ վհուկն 'ի գիշերի, և ասէ ցնա. “Հան ինձ զՍամուէլ մարգարէ,,: Եւ ասէ ցնա. “Ո՞չ դու քեզէն իսկ գիտես՝ զինչ արարին որդիքն Իսրայէլի, զի ջնջեցին յերկրէ զգիտունս և զհարցուկս,,: Եւ վհուկն երկրորդէ աւասիկ առաջի այսր յայտնեալ Սաւուղի զառաջին առաքինութե̃ց անտի իւրոց զվարս, և ոչ ամաչեաց: Զկնի նորա դարձեալ անգոսնեաց յայսմանէ, զի երկրորդէր զառաքինութիւն Սաւուղի առաջի Սաւուղի, և ոչ գիտէր զնա: “Ընդէ՞ր, ասէ, որսաս զանձն իմ կորուսանել զսա,,: Արդ եկ տես աւասիկ, քանի՞օն զահի հարեալ երկնչէր 'ի մահուանէ,

այն՝ որ զկեանս մեռելոց խոստանայր ։ Բայց արդ ա-ղէ զիա՞րդ՝ եթէ զիւր օրհասն ոչ գիտաց նա , ո՞րպէս կարէր գիտել ճանաչել զայլոց օրհասն ։ Իսկ նա քաջալերեաց զնա և ասէ . “Կենդանի է տէր , ասէ , եթէ ոչ եղիցի քեզ վնաս ինչ 'ի պատգամիս յայսմիկ „ ։ Իսկ կինն ոչ իբրև կանխագէտ՝ որ գիտէր զառ յապայսն , դարձոյց անդրէն պատասխանի և ասաց , եթէ իսկ դու ո՛վ ես՝ որ երդնուս , զի մի՛ լիցի յիս վնաս ինչ . եթէ լուիցէ Սաւուղ՝ դու ո՛վ ես՝ որ ապրեցուցանես զիս 'ի ձեռաց այնորիկ , զի ոչ կարացին ապրեցուցանել զառաջինն կախարդսն և զգիտունսն որ կոտորեցանն ։ Ասէ ցնա կինն . “Զո՞ կամիցիս դու եթէ հանիցեմ քեզ „ ։ Եւ ոչ զմտաւ ած և իմացաւ Սաւուղ՝ եթէ ոչ գիտաց , և ոչ զոր խնդրէրն հանել 'ի նմանէն ։ Ասէ ցնա՝ եթէ “Հան ինձ զՍամուէլ „ ։ Եւ արդեւք ասաց նա , եթէ քաւ ինձ՝ եթէ յարուցից ես զՍամուէլ , այն՝ որ իջին 'ի ձեռն խրատուն նորա ամենայն հարցուկք և գիտունք 'ի ներքին սանդարամետս երկրի ։ Խնդրել իցիւ քո գոնեայ՝ թէ զի մեռուցից զՍաւուղ ; և ոչ զի կեցուցից զՍամուէլ ։ Զայս ասացեալ իցիւ եթէ զՍամուէլ հանէր նա , բայց ոչ ասաց . քանզի գիտէր՝ զի յանուն Սամուէլի զդեն զայն՝ զոր ցուցանէր նա ։ Արդ ետես կինն ոչ զՍամուէլ , այլ զայն՝ որ նմանեցաւն Սամուէլի . և ճչեաց և ասաց ցՍաւուղ . “Ընդէ՞ր նենգեցեր զիս , դու ես Սաւուղն „ ։

Ո՛վ կին նենգաւոր , զի՞ կոչեցեր զՍաւուղ . և եթէ նա՝ վասն զի ծածկեաց զանձն իւր 'ի քէն՝ նենգաւոր իցէ քան զքեզ , դու՝ զի յանուն Սամուէլի զայլ ընդ այլոյ առեալ ածես նմա , ո՞չ ահա նենգաւոր ես և դու ։ Ապա եթէ երկոքեան նենգաւոր էք , և 'ի միմեանց նենգութե՞ց 'ի վերայ ոչ կարացէք կալ , իսկ արդ զիա՞րդ գիտիցես զառ 'ի յապայսն՝ ուր նենգութեանն Սաւուղի չեղէր հասու ։ Սաւուղ իբրև ետես զկինն զի ճեպեալ շտապեցաւ 'ի նմանէն , որ վատթարեալն կայր յերեսաց նորա , և անկեալ կայր 'ի կոր կորացեալ , քաջալերեաց զնա և ասէ . “Մի՛ երկընչիր , զի՞նչ ինչ տեսանես „ ։ Ասէ ցնա կինն . “Տեսի ես աստուածս , զի ելանեն յերկրէ „ ։ Եւ ընդէ՞ր փոխա-

նակ Սամուէլի՝ զոր խնդրեացն 'ի քէն, հանես նմա աստուածս՝ զոր ոչ խնդրեաց 'ի քէն. փոխանակ միոյն զոր խնդրեաց, առեալ ցուցանես նմա երկուս: ԶՀաւուղ ուրեմն ետես ընդ Սամուէլի, և վասն այնր ճչեաց. քանզի զոր օրինակ ետես զՍամուէլ 'ի ըզ-գեստ քահանայութեանն, այնպէս ետես զՍաւուղ 'ի զգեստ թագաւորութեան: Սաւուղ իբրև ետես զի և ոչ զայն՝ զոր յարոյցն գիտէր նա, ասէ ցնա. “Զի՞նչ տեսիլ է այնորիկ որ ելանէն„: Ասէ. “Այր ալևոր ելանէ արկեալ կրկնոց„: “Եւ գիտաց, ասէ, Սաւուղ՝ եթէ Սամուէլ է. և անկաւ խոնարհ երկիր եպագ նմա 'ի վերայ երկրի„:

Արդ ուստի՞ գիտաց Սաւուղ եթէ Սամուէլ է. զի ահա կինն՝ որ յարոյցն զնա՝ ոչ գիտաց. զի եթէ գիտացեալ էր՝ փոխանակ աստուածոյն զի ասաց, ասէր նա զանունն Սաւուղի. և փոխանակ զի ասաց՝ այր, և երկրորդեաց՝ ալևոր, և երրորդեաց՝ եթէ մեկնոց արկեալ էր, մեկնակ իսկ ասէր՝ եթէ Սամուէլ յարեաւ: Ապա եթէ կինն՝ որ զօդեաց զնա և փչեաց 'ի նա շունչ՝ ոչ գիտաց՝ ոչ եթէ զոյր զօդեաց, և ոչ եթէ զոյր շունչ ած և փչեաց և արկ 'ի մարմինն, իսկ դու ուստի՞ գիտացեր եթէ Սամուէլ է: Թուեցաւ քեզ եթէ Սամուէլ է, անկար յերեսս քո 'ի վերայ երկրի զի՞ պագեր նմա երկիր: Եւ եթէ 'ի կենդանութեանն պատուեցեր, բարւոք արարեր, զի ոչ ինչ նուաղեցեր թերացուցեր զպատիւ մահու նորա քան զկենդանութեանն՝ մինչ կայր նա. ապա եթէ 'ի կենդանութեանն մինչ դեռ կենդանի էր, և ոչ երթալն տեսանել զնա թուէր քեզ բարւոք, և զի՞արդ 'ի մահուանն նորա պագանես երկիր այնմ՝ զոր դառնացուցերն և իջուցեր զնա 'ի դժոխս իբրև որտմեալ սգացեալ էր վասն քո:

Ասէ Սամուէլ ցՍաւուղ. “Ընդէ՞ր խռովեցեր հաներ զիս„: Արդ եթէ ոչ էր Սամուէլ այն, թէ այդպէս է՝ ստելով ստեաց յայսմ վայրի, զի ասաց՝ եթէ “Ընդէ՞ր խռովեցեր հաներ զիս„. քանզի ահաւասիկ ոչ եթէ յերկրէ ել: Ապա թէ Սամուէլ էր, ընդէ՞ր դարձաւ 'ուսաւ 'ի Սաւուղէ զայն ինչ՝ զոր Սաւուղն 'ի նմանէն կամէր ուսանել. զի փոխանակ հար-

յանելոյն ցնա Սաւուղի, ինքն ցՍաւուղ հարցանէր՝ եթէ “Ընդէ՞ր խռովեցեր հաներ զիս”։ Իսկ իբրեւ ոչ գիտաց թէ վասն է՞ր էր, ասէ ցնա Սաւուղ. “Այլազգիքն եկեալ մարտնչին ընդ իս. Աստուած անց 'ի բաց յինէն, եւ ոչ լուաւ ինձ. եւ արդ եկեալ իմ կարդացի առ քեզ, զի ցուցցես ինձ զինչ առնելոց իցեմ”։

Ո՛վ Սաւուղ, գրեսցուք թէ Սամուէլ յարեաւ, կարես ասել ցնա՝ եթէ տէր 'ի բաց եկաց յինէն, եւ ոչ լուաւ ինձ. եւ արդ Սամուէլ լուէ՞ քեզ։ Երկրորդեա նմա՝ եթէ 'ի ձեռն կենդանի մարգարէին հարցի ցնա եւ ոչ յայտնեցաւ ինձ. եւ մեռեալ մարգարէին՝ զի յայտնեսցի 'ի վերայ քո՝ դէտ ա՞կն ունիս. եւ գոնեայ թէ լռեցեր, եւ ոչ ասացեալ իցիւ եթէ “Տէր անց հեռացաւ յինէն, եւ ոչ լուաւ ինձ”. արդեւք մոռաբերէր Սամուէլ ասել ցքեզ. ապա եթէ տէր անց հեռացաւ 'ի քէն, Սամուէլ ծառայ նորա զիա՞րդ լուէ քեզ. եւ կամ ո՞չ գիտես զի զա̅ծ բարկացուցանէր քեւ, եթէ որ ինչ ծածկեալն էր 'ի քէն՝ յայտնէր քեզ։ Ասաց եւ Սամուէլ ցՍաւուղ, եթէ “Տէր անց հեռացաւ 'ի քէն”. եւ այս ոչ եթէ նորա ինչ է. զայն երկրորդեաց՝ զոր Սաւուղն իսկ ասաց ցնա, թէ “Տէր անց հեռացաւ յինէն, եւ ոչ լուաւ ինձ”։ Եւ զի ասաց, եթէ “Եղեւ ընդ ընկերի քում, որպէս եւ ասացն 'ի ձեռն իմ”, արդարեւ Ճշմարիտ 'ի ձեռն սորա ասաց տէր վասն Դաւթի։

Ապա եթէ այս ոչ է Սամուէլ, ընդէ՞ր յափշտակեաց առ իւր զանուն մարգարէութե̅ն՝ իբրեւ ոչ ունէր նա զմարմինն իւր եւ զշունչ մարգարէին։ Եւ ընդէ՞ր, իբրեւ անձամբն իւրով այս չար էր, յորջորջեաց զանձն իւր աման Հոգւոյն սրբոյ։ Եւ զի ասաց՝ եթէ “Պատառեաց տէր զթագաւորութի̅դ 'ի քէն, եւ ետ ընկերի քում”. եւ զայս գիտէր ինքնին Սաւուղ. վասն զի լուաւ 'ի Սամուէլէ, զի ասաց եթէ “Պատառեաց տէր զթագաւորութի̅դ 'ի քէն, եւ ետ ընկերի քում”։ Եւ զի ասաց դարձեալ, եթէ “Մատնեսցէ տէր զԻսրայէլ 'ի ձեռս այլազգեաց”, վՃիռ արար արդեւք եւ հրամայեաց իբրեւ ա̅ծ, եթէ մարգարէացաւ իբրեւ մարգարէ։ Եթէ հրամայելով հրա

մայեսցէ՝ ա՟ծ է, և ոչ է Սամուէլ. ապա եթէ մարգարէանալով մարգարէացաւ, ճշմարտիւ Սամուէլ է։ Ապա եթէ ոչ է Սամուէլ, տեսիլ և բարբառ Սամուէլի զի՞նչ առնիցեն առ նմա. և զի ասաց՝ եթէ "Վաղիւ դու և որդիք քո առ իս"։ Արդ եթէ արդարեւ մարմին Սամուէլի յարեաւ և անկաւ, ճշմարիտ է բան դիւթին՝ զոր ասաց եթէ "Դու և որդիք քո առ իս"։ Ապա եթէ դիւթն ոչ մեռանի, և սաւուղեանքն մեռան, զիա՞րդ եղեն սաւուղեանքն վաղիւ անդր առ նմա. զի ահա կինն և վհուկ 'ի մէջ կենդանեաց, և Սաւուղ և որդիքն իւր 'ի մէջ անկելոց վիրաւորաց։

Իսկ զի՞ փութացաւ Սաւուղ և անկաւ 'ի վերայ երկրի յերկիւղէն զոր երկեաւ, և ընդէ՞ր վասն էր երկեաւ 'ի մահուանէն՝ որ վհուկն յարուցիչ մեռելոց գոյր նորա։ Ապա եթէ զնա՝ որ մեռաւն 'ի վաղիւ անդր՝ ոչ յարուցանէր, զիա՞րդ յարոյց զմանրեալ ոսկերսն Սամուէլի. զի եթէ ճշմարիտ է բան դիւթին, ճշմարիտ է և յարուցելութիւն նորա. և մի՛ երկիցէ Սաւուղ 'ի մահուանէն, զի 'ի վաղիւ անդր վհուկն յարուցանէ զնա. ապա եթէ բան վհկին ճըշմարիտ է և յարութի՟ նորա սուտ, և զիա՞րդ գտանիցի 'ի սուտ յարութենէն ճշմարիտ բանն։ Զի կամ մի՛ երկնչիր 'ի բանէ նորա, զի չիք ճշմարտութի՟ 'ի բանի անդ, և կամ փախիր խոյս տուր, և մի՛ երթար 'ի ճակատ անդր, զի 'ի վաղիւ կոտորելոց է 'ի սուր սուսերի։ Զի եթէ լինի ես պատերազմ վաղիւ, ահա Աբեններ և որդի քո Յովնաթան հանդերձ եղբարբքն անդ են. եթէ սոքա կան 'ի գլուխ զօրուն հրաման տալ կարգել ճակատել 'ի մարտ պատերազմի, դու ընդէ՞ր երթիցես և լինիցիս նոցա յուղարկիչ 'ի դժոխս։ Զի եթէ զյաղթութիւն խոստացաւ քեզ վհուկն, բարւոք երթայիր դու. ապա եթէ գրեաց և ետ քեզ մահ և որդւոց քոց և բազում զօրացն Իսրայէլի՝ որ ընդ քեզ են, զի՞ է զի ոչ փախչիցիս մինչև անցցէ օրն ճակատի, և ապա եկեսցես 'ի զօրս անդր։ Զի եթէ սուտ համարեալ էր զվըհուկն, ոչ երկնչէր նա. և եթէ ճշմարտեալ հաւատացեալ էր նմա, ոչ դառնայր 'ի բանակ անդր։ Նա

և կինն իսկ սուտ արար զտեսիլն, այնու՝ զի սպան նմա զորթն դիեցիկ զոր սնուցեալն էր իւր։ Զի եթէ ոչ անկեալ էր 'ի խիղճ մտացն՝ եթէ գուցէ յաղթէ և դառնայ վաղիւ, ոչ կաշառէր նմա զորթն դիեցիկ, այնմ՝ որ կոտորիչ սատակիչ էր դիւթացն և կախարդացն՝ որ հրաւիրեցաւ 'ի մահն այլազգեացն։

Իսկ իբրև դարձաւ եկն 'ի Գաղգաղա 'ի բանակ անդր, այլազգիքն որ բանակեալ էին 'ի Սիւքէմ, չու արարին և եկին յԱփեկ։ Եւ իսրայելացիքն դարձեալ, յորում աւուր ասաց վհուկն՝ թէ “Դու և որդիք քո առ իս”, չուեցին 'ի Գաղգաղայէ և եկին բանակեցան առ աղբեւրականն Յեզրայելի։ Ահաւասիկ գտաք մեք որպէս 'ի գրոյ, զի անց օրն այն, և ցարդ ևս ճակատ ոչ եղև. վասն զի բանակքն անդրէն չուելով անցին գնացին յաւուր յայնմիկ։ Եւ եթէ յայնմ աւուր ոչ եղև մարտ պատերազմի, վասն զի ցարդ ևս ոչ տեսեալ էր բանակացն զերեսս միմեանց, սուտ եղև բան վհկին՝ զի ասաց թէ “Դու և որդիք քո վաղիւ առ իս”։ Արդ որպէս գիրն ցուցանէ՝ յերկրորդում [1] աւուր եկին այլազգիքն 'ի Յեզրայէլ, ուր բանակեալ նստէին որդիքն Իսրայելի։ Ոչ եթէ յերրորդում աւուրն եղև պատերազմն՝ ասեմ ես, այլ զի երեք աւուրք անցին, և ցարդ ևս պատերազմն ոչ էր եղեալ։ Զի թէպէտ և տեսին զունդքն երկոցունց կողմանցն յերրորդում աւուր զմիմեանս՝ ցուցանէ գիր, այլ զի թէ մարտեան յերրորդում աւուրն՝ զայն ոչ ցուցանէ։ Արդ որովհետև գտաք մեք որպէս և 'ի գրոյ, զի անցին երեք աւուրք և պատերազմ ոչ եղև. և յառաջ քան զամենայն յայտ եղև՝ եթէ սուտ է բան վհկին, զի ասաց՝ եթէ “Վաղիւ դու և որդիք քո առ իս”։

“Եկն, ասէ, Դաւիթ գնդաւն իւրով 'ի Սեկելակ յաւուրն երրորդում, և եգիտ զնա հրձիգ եղեալ, և գերի վարեալ զորդիս և զկանայս իւրեանց”։ Եւ յետ իջանելոյն նորա 'ի վերայ ամաղէկացւոց, և կոտորելոյն զնոսա և թափելոյ զաւարն, և ածելոյ զնոսա 'ի Սեկելակ և լինելոյ անդ նորա զերիս աւուրս,

1 Միւս օրինակն յերրորդում։

ապա եկն յերրորդում աւուրն բօթաբերն գուժկանն հող 'ի գլուխ, պատառեալ զպատմուճանն, և եցոյց Դաւթի զմահն Շաւուղի և զորդւոյ նորա: Հողն գլխոյ և ապարանջանն Շաւուղի զոր ունէր՝ վկայեն զի 'ի նմին աւուր մեռաւ Սաւուղ: Եկն ինքն այս գուժկան առ Դաւիթ, և գտաւ զի յետ բազում աւուրց մեռեալ էր նա: Ապա եթէ բազմօրեայ եկն գուժկանն 'ի ճակատատեղւոյն 'ի Սեկելակ, բազմօրեայ եկն Դաւիթ գնդաւն իւրով 'ի Սեկելակ: Քանզի ոչ էին երագունք վեց հարիւր այրն որ ընդ Դաւթին էին քան զամաղէկացին՝ որ ճեպեալն ընթացեալ գայր. զի զոր ինչ մեծ էր քան զապարանջանս և զպսակն, առցէ 'ի Դաւթէ զօրէնն աւետեաց: Եւ արդ որչափ և շրջեցուցես զբանն, գտեալ լինի՝ զի 'ի բազում աւուրս գործեցաւ իրքն Շաւուղի և որդւոյ նորա, զոր ինչ ասաց վհուկն՝ եթէ վաղիւ գործի:

Իսկ աւետաբերն՝ որ կարծեաց եթէ ընդ միտ ինչ մտանէ Դաւթի, այնու՝ զի ասաց եթէ "Յարեայ 'ի վերայ Շաւուղի՝ և սպանի զնա", իբրև ետես զի դըժկամակ եղև և տրտմեցաւ Դաւիթ վասն սպանողին իւրոյ, փոխեաց զբանն իւր անդրէն և անդ, և ասէ. "Վասն զի գիտացի եթէ ոչ էր ապրանաց յետ գլորմանն իւրոյ". այս ինքն յետ խոցուածոյ վիրացն իւրոց: Սպան զամաղէկացին իբրև սպանօղ. վասն զի բերանն իւր պարտաւորեաց զայն՝ որ ոչ մերկաց ըզսուսեր իւր 'ի վերայ պարանոցին արքայի:

Ողբք Դաւթի վասն Սաւուղի և Յովնաթանու:

Եւ արդ ողբս առեալ Դաւթի լայր զՇաւուղ և զՅովնաթան. և ասէ ուսուցանելով որդւոցն Յուդայ զկորովութի̅ս աղեղանց. ահա գրեալ է 'ի դպրութ̅ի Ասերայ, այս ինքն՝ 'ի դպրութի̅ս օրհնութե̅ց: "Այծեամ̅ն Իսրայէլ 'ի վերայ բարձանց քոց սպանեալք". վասն զի ժողովուրդն իբրև զկնի այծեմանց հալածէին ըզհետ թշնամեաց իւրեանց: Բարձունք Գեղբոնայ, ահա լցեալ լինի 'ի վիրաւորաց իւրեանց: "Լերինք, լերինք Գեղբոնի, մի իջցէ 'ի վերայ ձեր անձրև". վասն զի արբէք դուք զարիւնն Սաւուղի. "Եւ մի անկցի 'ի

վերայ ձեր ցօղն առաւօտին „ . վասն զի օծայք դուք ՚ի ձարպոյն Յովնաթանու և եղբարց նորա ։ Զի ասաց “Անդաստանս խայտառակեալս „ , զի խայտառակեալ անդաստանաց նմանեցոյց զխայտառակեալ դիակունսն Շաւուղի և որդւոցն ։ Վասն զի անդ բեկաւ խորտակեցաւ ապաստանն [1] Շաւուղի՝ սկայազնն Իսրայելի ՚ի մահու անդ իւրում, ապաստանն Շաւուղի՝ որ օծեալն էր իւղով յարենէ անկելոց վիրաւորաց և ՚ի ձարպոցն հսկայից . վասն զի յարենէն և ՚ի ձարպոց անկելոցն վիրաւորելոց Շաւուղի օծանէր յամենայն ժամ ապաստանն Շաւուղի ։ Աղեղն Յովնաթանու զի ոչ դառնայր անդրէն դատարկացեալ . աղեղնաւոր էր ձարտար կորովաձիգ ։ Երագունք քան զարծուիս ՚ի հալածելն իւրեանց . սաստկագոյնք գազանասիրտք քան զառեւծս ՚ի կոտորելն իւրեանց ։ Դստերք Շաւուղի , լացէք ՚ի վերայ Շաւուղի . զի զգեցուցանէր ձեզ զգեստս կարմիրս յաւարէն հեթանոսաց , զոր բերէր յառ յապուռ , և հանէր զնըկարս ոսկեքանդակս զոսկենկարս զգեստս . յայսոսիկ զոր ինքն բաժանէր ։ Յովնաթան ՚ի վերայ լերանցքոց վիրաւորեալ . զի յամենայն մարտ պատերազմի խառն ՚ի խուռն դիմեալ ՚ի ներքս անկանէիր ։ Զիա՞րդ անկան կործանեցան սկայազունք քաջամարտիկքդ , որ յամենայն պատերազմունս առնուին զնահատակութի՞ն յաղթութե՞ , և կորեան չքացան անօթք զինու պատերազմի . վասն զի նոքօք յաղթէին մանկունք ժողովրդեանն , իբրև զինուք պատերազմի թշնամեաց իւրեանց ։

ԳԼՈՒԽ Ե

ՀԱՐՑ Դաւիթ ՚ի տեառնէ . ետ նմա հրաման ելանել թագաւորել ՚ի Քեբրոն . և օրհնեաց զմարդիկն Յաբիս գաղաադացւոց՝ որ թաղեցին զՇաւուղ և զորդիսն ։ Եւ Աբեններ թագաւորեցոյց զԱբիսող զորդին Շաւուղի ՚ի վերայ Եփրեմի և Բենիամինի ։ Եկին պատահեցան ՚ի դիմի հարան գունդն յովա-

1 Միւս օրինակն ասպարն . որպէս և ՚ի յաջորդսն ։

բեան գնդին Աբեններեայ ։ Զայն ետ, խօսել սկսաւ Աբեններ ընդ Յովաբու, և ասէ ցնա․ “Յարիցեն մանկտիդ խաղասցեն առաջի մեր„։ Եւ յարեան անցին երկոտասան 'ի գնդէն Յովաբու, և երկոտասան 'ի գնդէն Աբեններեայ․ և իւրաքանչիւր ձեռք իւրաքանչիւր առն 'ի գլուխ ընկերի իւրում, և իւրաքանչիւր վաղակաւոր 'ի կուշտ ընկերի իւրոյ․ և անդէն սատակեցան բեկան և 'ի պարտութի մատնեցան գունդն Աբեններեայ առաջի ծառայիցն Դաւթի ։ Արդ պատմիքն իբրև սկսան խաղալ, իբրև յաղթէին և լինէին յաղթեալք 'ի միմեանց, դարձաւ խաղալն նոցա 'ի մարտ պատերազմի․ սկսան իբրև 'ի խաղալոյ անտի հմայս հմայել, հարցուկս հարցանել՝ ո՞յր կողմ յաղթիցէ, և ո՞յր կողմ զօրագոյն իցէ ։ Անկան 'ի տանէն Դաւթի Ասայել հանդերձ երկոտասան արամբք ։

Դարձաւ Աբեններ և ասէ ցԱսայել․ դարձ դու և առ քեզ կապուտ զինու միոյ ուրուք 'ի զօրականաց այտի զոր և կամիս, և շատ է քեզ այս՝ որչափ զի առաքինացիս և ցուցցես 'ի նա զքաջութիւն քո․ զի սպաներ և առեր զկապուտ զինու սպանելոյն ։ Իբրև ոչ կամեցաւ ցուցանել 'ի լոկ ոք զառաքինութի քաջութեան իւրոյ, բայց եթէ 'ի նա, ապա կքեաց Աբեններ և հար զնակուշտն Ասայելի 'ի տեղ նիզակի իւրոյ և անդէն սատակեաց ։ Անկան 'ի գնդէն Աբեններայ երեքարիւր և վաթսուն այր ։ Զայն ետ, սկսաւ կոչել Աբեններ զՅովաբ և ասէ․ եթէ զզօրականսդ՝ որ սկսան խաղալ զխաղ՝ սուրն կոտորեսցէ, ո՞չ գիտես դու զի դառնութի լիցի վախճան գործոյն․ այս ինքն յորժամ դարձցի թագաւորութին առ Դաւիթ ։ Ապա յետ այսորիկ ետ հրաման Յովաբ փողոյն հարկանել, և զտեղի առնուլ գնդին առ հասարակ 'ի կոտորածոյ եղբարցն իւրեանց ։ Վասն զի այսու կոչեաց զնա պարտութի, 'ի վերայ Աբեններեայ համարեցաւ ։

Արդ սկսաւ բամբասել Ասբիսող զԱբեններ, վասն զի մտաներ նա առ հարճ հօր նորա ։ Ասէ ցնա Աբեններ․ “Զի՞արդ՝ շանագլուխ եմ ես այսօր 'ի տուն յուդայեան„․ այս ինքն՝ զի ես միայն կայի ընդ ե-

րեսաց քոց և ընդ երեսաց բարեկամաց քոց հակառակ ընդդէմ տանն Յուդայի ։ Եւ արդ յիշեցէ՛ր 'ի վերայ իմ փոքր յանցանս աղջկան միոյ վատթարի ։ Բայց Աքիտող՝ զի յամենայն ժամ խիղճ մտաց նորա խիթէր զնա, զի գուցէ թէ 'ի ձեռն հարճին Սաւուղի առցէ նա 'ի նմանէ զթագաւորութ՟ին Սաւուղի ։ Սկսաւ Աբեններ բանս արկանել առ Դաւիթ ։ Առաքեաց առ նա Դաւիթ և ասէ ․ "Մի՛ տեսանէր զերեսս իմ, բայց եթէ ածցես առ իս զՄեղքող դուստրն Շաւուղի ,,, որ բազում անգամ ապրեցոյց զիս 'ի ձեռաց հօր իւրոյ՝ զի մի՛ սպանցէ զիս ։

Եւ եկն Աբեններ, և սպան զնա Յովաբ յարիւն Ասայելի եղբօր իւրոյ ։ Եւ ելաց վասն նորա Դաւիթ և ասէ ․ "Ըստ մահուն Նաբաղայ մեռաւ Աբեններ,, ․ վասն զի զնա սպան երկիւղն, և զսա նենգութիւնն ։ Եւ իբրև բերէր 'ի մէջ աղերսանօք զմահն Նաբաղու, ուսուցանէր նա՝ եթէ ոչ կամէր նա ընդ մահն նորա ։ "Ձեռք քո ոչ էին կապեալ 'ի շղթայս առ 'ի մարտնչել ․ և ոտք քո ոչ էին կապեալ 'ի շղթայս առ 'ի փախչել ․ իբրև կործանեալ առաջի որդւոց անօրէնաց անկար դու ,, ․ այս ինքն իբրև պարտաւոր անկար կործանեցար ․ ոչ առաջի պատերազմողաց, այլ առաջի որդւոցն անօրէնութ՟ե՝ որ նենգեցին զքեզ ․ զի դու 'ի պատերազմի սպանէր զեղբայր նորա, և նա զքեզ դաւաճան դաւաբեր նենգութ՟ին ։ Ողջոյնն 'ի բերան Յովաբու, և վաղակաւորն 'ի ձեռին ։ Արդ մեռաւ Աբեններ որ եկն դարձուցանել զԻսրայէլ առ Դաւիթ ․ զի մի՛ ասիցեն եթէ մարդ ետ նմա զթագաւորութ՟ին, և ոչ ա՟ծ ։ Սպանին դարձեալ Հռեքաբ և Բանի զԱքիտող, և բերին զգլուխ նորա առ Դաւիթ ։ Եւ սպան զնոսա Դաւիթ ․ և զգլուխն Աքիտողի տարաւ թաղեաց առ Աբեններայ ։

Եւ թագաւորեաց Դաւիթ 'ի վերայ ամենայն Իսրայէլի ։ Եւ եկին 'ի վերայ Երուսաղեմի ․ զի նա ինքն է Յեբուս ։ Եւ ասեն յեբուսացիքն ցԴաւիթ ․ "Մի՛ մտանէր այսր, բայց եթէ անցուսցես զկոյրս և զկաղս,, ․ այս ինքն, զոր օրինակ ոչ կարես դու անցուցանել զայսոսիկ յերկրէ, սոյնպէս և ոչ 'ի Յեբուս ամրապարիսպ ապստամբեալ կարես մտանել դու ։ Եւ ա-

ասէ Դաւիթ․ «Ամենայն որ սիրելի է յեբուսացւոց, և
մարտնչի վահանաւ ընդ կոյրս և ընդ կաղս, ատելի
է նա Դաւթի»։ Վասն զի ամենայն որ սիրէ զյեբու-
սացիս, և կամ թէ մարտնչի վահանաւ ընդ կոյրս և
ընդ կաղս, որպէս և կամեցան յեբուսացիքն, ատելի
են Դաւթի։ Յաճախեաց պահեաց Դաւիթ զնոսա․
վասն զի ասացին յեբուսացիքն՝ թէ մի՛ մտցէ կոյր և
կաղ 'ի տուն։ Վասն այսորիկ ասեն իբրև նախատա-
նօք, թէ «Մի՛ մտցէ կոյր և կաղ 'ի տուն»։

Եւ հան Դաւիթ զտապանակն կտակարանաց տեա-
ռըն 'ի Գաբայէ։ Եւ վասն զի յանցեան քահանայքն,
և եդին զնա 'ի սայլի, իբրև կարկառ Ոզա զձեռն իւր
ուղղել զնա անդրէն 'ի տեղի իւր զայն՝ զոր հրամայ-
եացն բառնալ 'ի վերայ ուսոց, հար զնա տէր և ան-
դէն սատակեաց զնա։ Եւ երկեաւ Դաւիթ տանել
զտապանակն 'ի քաղաքն իւր․ և տարաւ իջոյց զնա
'ի տանն Աբեդադայ գեթացւոյ։ Եկին ասեն ցԴա-
ւիթ․ օրհնեցաւ տունն Աբեդադայ գեթացւոյ յե-
րիս ամիսս, զի եղև տապանակն կտակարանաց տեառն
առ նմա։ Եւ զգեցաւ Դաւիթ զոսկեհուռն բեհե-
զի, զի ուսուսցէ ժողովրդեանն սրբել զանձինս իւ-
րեանց ըստ նորա նմանութե̃ն․ և տարաւ զտապա-
նակն կտակարանաց 'ի տուն իւր։ Եւ զի բաց զբերան
իւր Մեղքող և անկոմնեաց զԴաւիթ վասն կաքա-
ւաձև պարուցն՝ որ զուարճացեալ գայր առաջի տա-
պանակին, փակեցաւ վասն այսորիկ դուռն արգան-
դի նորա։

Եւ ասաց Դաւիթ ցՆաթան մարգարէ շինել ըզ-
տուն տեառն ա̃յ։ Ասէ ցնա Նաթան մարգարէ․ շի-
նեա։ Իսկ Նաթան՝ զի յօժարեցոյց զԴաւիթ 'ի կամս
անձին իւրոյ շինել զտունն հրամանաւն ա̃յ, արգե-
լաւ նա՝ զի մի՛ շինեսցէ․ բայց ոչ բարկութեամբ և
ոչ վասն յանցանաց ինչ, այլ ասաց ցնա՝ թէ արա-
րից քեզ անուն ըստ անուան ազգաց մեծամեծաց,
որ իցեն 'ի վերայ երկրի․ «Յորժամ կատարեսցի,
ասէ, թիւ աւուրց քոց, և ժողովեսցիս դու առ հարս
քո խաղաղութ̃ք, յարուցից զզաւակ քո զկնի քո, և
նա շինեսցէ տուն անուան իմոյ․ և 'ի յանցանս իւր
յանդիմանեցից զնա գաւազանաւ առն»․ այս ինքն

գաւազանաւն Աբրահազարու եզովմայեցւոց ։ «Եւ 'ի տանջանս որդւոց մարդկան » . այսինքն խրատուն այնորիկ՝ որ խռովիչքն էին թագաւորութեան ։ «Եւ զաթոռ քո 'ի ձեռն զաւակի քո կանգնեցից մինչև յաւիտեան »։

Եւ եկն Դաւիթ և նստաւ առաջի տեառն, և ասէ . «Տէր իմ տէր իմ, ո՞վ եմ ես, զի հասուցեր զիս մինչև ցայս վայր . փո՞քր ինչ է այս՝ զոր ասացեր 'ի վերայ տանն ծառայի քո 'ի հեռաստանէ » . այսինքն՝ կամ 'ի ժամանակէն Յակոբու, և կամ այս զոր այսօր խոստացար՝ կարգել 'ի զաւակի իմում զթագաւորութիւն մինչև յաւիտեան . այսինքն՝ առ ուսումն մարդոյն՝ զի հաւաստասցէ յայն ինչ՝ որ 'ի քէնն խօսեցեալ է նմա ։ «Եւ դու յայտնեցեր յունկն ծառայի քոյ շինել զտուն անուան քո » . այսինքն՝ զի կարգեսցի զաւակ թագաւորութեան քո մինչև յաւիտեան ։

Եւ իբրև գնայր Դաւիթ 'ի վերայ տանեաց ապարանից արքայութեան իւրոյ, ետես նա կին մի զի լուանայր . այսինքն զի սրբէր ջուրբքն 'ի դաշտանէ անտի իւրմէ . քանզի 'ի ժամ երեկորի սրբէին կանայքն հեբրայեցիք ըստ օրինացն ։ Բայց սա ինքն այս կին դիտելով դիտէր զարքայն Դաւիթ՝ թէ յորում վայրի անկցի 'ի վերայ նորա խաբեպատիր գեղովն իւրով . ոչ եթէ արհամարհութեամբ ինչ, այլ զի կորզեսցէ հանցէ 'ի նմանէն զգանձն՝ որ ծածկեալն էր 'ի նմա ։ Իսկ իբրև ետես զնա Դաւիթ, և որսացաւ 'ի գեղ նորա իբրև 'ի ծուղակս, առաքեաց ածել զնա . և նա ոչ հպարտացաւ և ոչ մեծամտեցաւ, և ոչ գոնեայ թէ սակաւ բանիւք անհաւանութեան աշխատեցոյց զսենեկապանսն, որ չոգանն զնմանէն ։ Յարեաւ գնաց վաղվաղակի 'ի կամս կամաց իւրոց առանց պարգևաց . վասն զի և այս իսկ էին աղօթք նորա, զի յաղթահարեսցի 'ի գեղոյ նորա յղել զնմանէն ։ Իսկ իբրև եկն եմուտ առ նա, և չոգաւ 'ի տունն իւր, առաքէ առ նա՝ եթէ զայս գիտասջիր՝ զի յղի եմ ես ։ Զի եթէ դարձեալ մտեալ էր առ նա, ինքն իսկ ասէր ցնա, և ոչ եթէ 'ի ձեռն այլոյ առաքէր . և զի գիտասցես եթէ 'ի հիւր[1] ժամու էր, և ոչ մեղք

[1] Միւս օրինակն հիւր ։

օրացի ։ Եւ վասն զի մի՛ մեռցի կինն, և կնաւն խայ-
տառակեսցի արքայն պատուական՝ գրէ առ Յովաբ,
զի արձակեսցէ առ նա զՈւրիա ։

Իսկ իբրև եկն, յղեաց զնա Դաւիթ 'ի տունն իւր,
և ոչ չոգաւ ։ Իսկ իբրև արբեցոյց զնա և ետ նմա
պարգևս, սակայն և 'ի ձեռն պարգևացն ոչ մտա-
բերեաց երթալ 'ի տուն իւր. այլ և ասաց ևս և ցաւե-
ցոյց զԴաւիթ իբրև ոչ գիտէր. "Տապանակն կտա-
կարանաց տեառն, ասէ, և Իսրայէլ և Յովաբ զօ-
րօքն հանդերձ 'ի դաշտի անդ բնակեալ են, և ես եր-
թա՞յց 'ի տուն իմ, և ննջեցի՞ց ընդ կնոջ իմում. քաւ
ինձ ննջել ընդ կնոջն իմում վասն տապանակին կտա-
կարանաց, զի բանակեալ է 'ի դաշտի անդ,, ։ Իբրև
մեղք իմն համարեցան նմա գործն արժանաւոր օրի-
նացն առնն և կնոջն ։ Բայց ոչ խորամանկեցաւ
Դաւիթ ընդ ածել կնոջն նորա առ իւր, որպէս
զայրն՝ որ խորամանկեցաւ, զի մի՛ անջրպետեսցի նա
յառնէ անտի իւրմէ ։ Արդ իբրև ոչ բանիւքն արքայի
լուաւ, և ոչ 'ի բանս կնոջն պատրեցաւ երթալ 'ի
տուն իւր, վասն զի մի՛ կինն մեռցի, և 'ի ձեռն կնոջն
խայտառակեսցի և արքայն պատուական, և 'ի պատ-
ճառս արքային ջեռնուցու ամենայն Իսրայէլ 'ի չնու-
թ̃ի պոռնկութ̃ե, խորհի մեծ մտայոյզ խորհրդովք՝
մեռանել օտարին՝ և ոչ ընտանւոյն, քետացւոյն՝ և
ոչ կնոջն հեբրայեցւոյ, միոյն՝ և ոչ երկուցն ։ Գրէ
արդ աւասիկ ոչ կամօք թուղթ առ Յովաբ՝ կացու-
ցանել զնա զօրավար զօրուն 'ի ձգնական տեղւոջ,
զի հարցի և անդէն սատակեսցի ։ Իսկ Յովաբ իբրև
ետես զթուղթն, գիտաց վասն ոյր հրամայեաց սպա-
նանել զնա ։ Առ պահեաց առ իւր զթուղթն. և
թուէր նմա եթէ զարիւնն Դաւթի ծրարեալ ունի
'ի բուռն իւրում ։

Իսկ ա̃ծ ամենագէտ և կանխագէտ, ծածկագէտ
և յառաջագէտ՝ գիտէր զինչ ինչ արար Յովաբ խո-
րամանկ ։ Առաքէ զՆաթան առ Դաւիթ, զի խայ-
տառակեսցի արքայն 'ի ձեռն ա̃յ ողորմածի, և ոչ
'ի ձեռն անօրինին և ամպարշտին, չարին և խորա-
մանկին Յովաբու մարդոյ ։ Եկն եհաս Նաթան մար-
գարէն. և զի ոչ գոյր այլ ոք՝ եթէ դատեսցէ զԴա-

ւիթ, հնարի իմն առնել զնա դատաւոր անձին իւրոյ։ Արդ մատուցեալ զօդէր զպատմութիւս և ասէր ցնա, իբրև տրտմեալ և տխրեալ 'ի հոգւոց ելանէր. այսպիսի ողորմուկս արկ նմա պատմութեամբքն իւրովք, մինչ զի արտաքս քան զօրէնսն հնարեցաւ հանել ըդխորհուրդս նորա։ Քանզի զայն՝ զոր ասացն Դաւիթ, թէ “Զորս ընդ միոջն տացէ որ սպան զորոջակն”, այն յօրինացն էր. բայց եթէ մահապարտ էր, այն չէր յօրինացն։

Իսկ մարգարէն իբրև ետես զարքայն զի պարտաւորեաց զոմն, յայնժամ 'ի տրտմութենէ անտի 'ի բարկութիւն փոխեցաւ. քանզի իբրև զիւրն ասէր 'ի դէմս՝ որ ինչ պատշաճ է իւրում՝ ասէր նա, զի զիւրն յիւրայոց տոհմականաց ծանուսցէ. իսկ իբրև զտեառն երկրորդեաց զբարկութիւնն՝ որ պատշաճ և պիտոյն էր բանիցն տէրունի, ըստ տէրունական հրամանին զգեցաւ նա. այլափոխեցաւ նա 'ի կակղութենէ 'ի խստութիւն անդր և ասէ՝ ոչ եթէ զի դու, արքայ, արարեր զայդ, այլ զի “Այր դու, դու քեզէն իսկ արարեր զայդ։ Արդ այսպէս ասէ տէր. ես, ասէ, ետու քեզ զդստերս տերանց քոց, և զկանայս տեառն քո ննջեցուցի 'ի լանջս քո. արդ դու աւադիկ զՈւրիա քետացի սպաներ 'ի սուր սուսերի, և զկին նորա ածեր քեզ կնութենէ. ահա յարուցից անդստին 'ի տանէդ քումմէ 'ի վերայ քո զչարիս, և հանից քո յանդիման զկանայսն քո 'ի քէն, և տաց զդոսա ընկերի քում, և մտցէ առ դոսա առաջի արեգականդ այդորիկ”։

Իսկ Դաւիթ իբրև ետես՝ եթէ եղև դատաւորն դատելի, և այն՝ որ արքայն էր՝ կոչեցաւ այր, և տէրն կոչեցաւ ծառայ, ոչ ծածկեաց զմեղսն իւր յայ, այլ խայտառակեաց անձամբ զանձն իւր առաջի մարգարէին այ և ասէ. “Մեղայ”։ Իսկ Նաթան՝ այն որ մեծ խրոխտանօքն մատուցեալ յառաջ դնէր զդատավճիռն բարկութեան 'ի վերայ արքային, փոխեաց զնա անդէն և անդ հոգին 'ի քաղցրութիւն. և ընդ կրուկն բանին՝ այն որ ասացաւն 'ի Դաւթէ՝ թէ “Մեղայ տեառն”, ասաց և հոգին 'ի բերան մարգարէին, թէ “Եւ տէր անցոյց զյանցանս քո”. զի վասն թո-

ղութե̃ն բեր զյանցանսն 'ի մէջ. զի որք ընթեռնուն զմեղս նորա, ժամանեսցեն նոցա քաւութի̃ն նորա, և զի քարոզեսցի դարձեալ յազգ և յազինս՝ թէ այս մի միայն յանցանք գտան առ Դաւթի զքառասուն ամ թագաւորութեան նորա: Եւ զի ուսուսցէ դարձեալ, եթէ 'ի վերայ Դաւթի սիրելւոյն իւրոյ ոչ խնայեաց՝ այլ խայտառակեաց զնա, արդ 'ի վերայ ո՞յր խնայիցէ՝ թէ մեղանչիցէ:

Եւ յետ թողութե̃ յանցանաց նորա ասաց՝ թէ վասն զի բարձրացուցեր դու զթշնամիս տեառն, այս ինքն վասն զի բացեր զբերան՝ ոչ զուղղոց զստուգաց զարդարոց զքաջաց զլաւաց զառաքինեաց, այլ զամպարշտաց զանօրինաց զամբարհաւաճից զուրացողաց զհայհոյչաց, այսու գործովս զոր գործեցեր՝ և որդին որ ծնանելոց է քեզ 'ի կնոջէս յայսմանէ, մեռանելով մեռցի: Ահա ամուլ էր առ առնն ամուսնին իւրում. զիա՞րդ օրհնեցաւ արգանդն նորա յանիծեալ պոռնըկութէ անտի: Իսկ մանուկն որ մեռաւն՝ թէպէտ և բարկութե̃ մեռաւ, այլ մահն նորա ողորմութե̃ց էր. քանզի նախատ լինէր նա ժողովրդեանն, և ոչ կարէր շինել զտաճարն սրբու̃. այն զի և ոչ մտանել իսկ իշխէր նա 'ի տաճարն սրբութե̃ և ոչ ժողովուրդն իսկ ունէր յանձին թագաւորել զպոռնկորդին 'ի վերայ իւրեանց: Արդ զի մի հարքն նոցա վաղիւ նախատիցին նովաւ, և զի եղիցին ափիբերան կարկեալ պապանձեալ՝ որ հանդերձեալն էին մեղանչել: Եւ զի չէր պարտ և պատշաճ պոռնկորդւոյն շինել զտաճարն սուրբ այ̃, վարեաց զնա տէրն իւր 'ի դէմս բարկութե̃: Զի այնմ՝ որ ոչ ետ զթագաւորութիւնն ըստ երդմանն Դաւթի, տարցի տացէ նմա զարքայութի̃ն երկնից ըստ կամացն Դաւթի: Բայց մխիթարեաց Դաւիթ զԲերսաբէ, և մուտ առ նա և ծնաւ զՍողոմոն. և տէր սիրեաց զպատանեակն: Եւ առաքեաց զՆաթան և կոչեաց զանուն նորա Յեդիդա, այս ինքն է սիրեցեալ սիրելի:

Եւ սիրեաց Խեմ̃ոն զԹամար քոյրն Աբեսողովմայ: Խօսել սկսաւ ընդ նա Յովնադաբ բարեկամ̃ն իւր և ասէ. զի՞ դու՝ զի՞ ընդ քեզ, զի՞ այսպէս մաշեալ մաշիս յառաւօտէ յառաւօտ. այս ինքն է, զի՞

է զի օր ըստ օրէ երթաս և տժգունիս ։ Եւ ուսոյց նմա խորամանկութիւն Յովնադաբ, և վարեցաւ նովաւ, և բռնադատեաց զաղջիկն և անարգեաց զնա ։ Եւ սպան զնա Աբիսողոմ վասն այսորիկ, և փախստեայ եղեւ առ Մեխոլթ արքայն Գաշորայ ։

Եւ յետ երից ամաց ած Յովաբ զկին մի Թեկուացի ․ և արդ առեալ կարգեալ դնէր բանս 'ի բերան նորա ։ Եմուտ խօսեցաւ կինն 'ի դէմս անձին իւրոյ զկրս Դաւթի և զԱբիսաղոմայ խորամանկութ̃ք, և պարտեաց զԴաւիթ աշտիճանէ յաշտիճան աղերսանօք ողորմ ողորմ ձայնիւ, մինչ զի փակեաց զնա ընդ երդմամբ խորամանկութ̃ք ։ "Կենդանի է, ասէ, տէրանց տէր, եթէ ոչ անկցի մազ մի 'ի հերոյ գլխոյ որդւոյ քո 'ի վերայ երկրի" ։ Եւ վասն զի զայս ետ Դաւիթ 'ի մտի իւրում, զի մեղք են՝ եթէ հաշտի նա ընդ Աբեսաղովմայ, ասաց կինն՝ եթէ "Յանցանքս այս 'ի վերայ իմ և 'ի վերայ տան հօր իմոյ ․ և թագաւոր և աթոռ նորա քաւեալ եղիցի" ։

Արդ իբրև գրաւեցաւ այրն երդմամբ, սկսաւ ապա կինն ասել զճառն, մերթ յայտ՝ մերթ 'ի ծածուկ, զի առ սակաւ սակաւ ցածուսցէ զբարկութ̃ի թագաւորին, անդէն և անդ ճառին մեղմասցի և իջցէ ցասումն նորա ընդ պատմութ̃ե խօսիցն ։ "Ընդէ՞ր, ասէ, խորհեցար իբրև զայս 'ի վերայ ժողովրդեանն այ̃" ․ որպէս զի ցուցցէ և յայտ արասցէ Դաւթի, եթէ զամենայն ժողովուրդն տրտմեցոյց ․ վասն զի պարծանք էր ամենայն ժողովրդեանն Աբիսողովմ ․ ոչ գոյր իբրև զնա յամենայն ժողովրդեանն Իսրայէլի ։ Զի եթէ վասն պատանեկին ոչ, գոնեայ զի վասն ժողովրդեանն ջրեսցի ոխութ̃ին Դաւթի ընդ Աբիսաղովմայ ։

Եւ խօսեցաւ, ասէ, Դաւիթ զպատգամս զայս իբրև զպարտ, զի մի՛ դարձցի արքայ մոռասցի զնա ․ այս ինքն՝ ընդէ՞ր, զի իբրև զպարտական՝ զի ոչ կարէ արդարանալ՝ ասացեր զբանն, և ոչ կամիս դարձուցանել ։ Մեռանելով, ասէ, մեռանիմք մեք ․ այս ինքն՝ որ մեռաւն, ասէ, մեռաւ ․ որպէս և դուն իսկ ասացեր վասն որդւոյն Բերսաբեայ ։ Արդ որպէս ուսայն 'ի քէն, ուսուցից քեզ ․ և զոր ինչ լուայն՝ զոր ասա-

ցեր, ասացից քեզ. և ոչ առնու ա̅ծ զոգի և խորհի
զխորհուրդս, զի իբր ոչ էր արժանի՝ առ զսոսա և
թող զմիւսն ։ Եւ արդ ահա այժմ ասացից ցարքայ՝
զոր ինչ ուսայ 'ի նմանէն, և զոր ինչ լուայն 'ի նմա-
նէն՝ երկրորդեցից առաջի նորա ։ Իսկ զայն զոր ասաց
'ի վերուստ և.ս, եթէ "Կամին շիջուցանել զկայ-
ծակն՝ որ մնացիմ,, , զի թէպէտ և յորդորեսցին գութք
աղեացն 'ի միտս լսողաց՝ ասաց ցնա, այլ և զճառս
թագաւորութե̅նն նշանակեաց 'ի նա . զի "Մի, ասէ,
պակասեսցին որդիք քո, զի նոքօք յարմարի թագա-
ւորութիւնդ քո,, ։ Եւ գիտաց Դաւիթ՝ թէ Յովաբ
քաջաբանիկ՝ է խրատտու գործոյս այսմիկ . և չոգաւ
ած զԱբիսողոմ, և զերեսս արքային նա ոչ ետես ։

ԳԼՈՒԽ Զ.

Րնց գնաց Աբիսողոմ 'ի Քեբրոն և ապստամ-
բեցաւ . և փախստեայ եղև հայրն յերեսաց նորա ։ Եւ
եկն եհաս Սիբա պատարագաւ առ Դաւիթ, և ե-
ցոյց նմա վասն Մեմփիբոսթեայ որդւոյն Յովնաթա-
նու՝ զի պահանջէր 'ի նմանէն դարձուցանել առ ինքն
զթագաւորութիւնն տանն Սաւուղայ ։ Եւ Դաւիթ
Սիբայի երախտաւորի զամենայն ինչ՝ որ և էր Մեմ-
փիբոսթի ապախտաւորի և շնորհակորուսի ։

Թշնամանէ դարձեալ Սեմէի զԴաւիթ արեանցն
տանն Շաւուղի, յորում աւուր որդին Յովնաթա-
նու՝ որ մնացն առ սեղան նորա՝ կամէր առնուլ զթա-
գաւորութի̅ն Դաւթի ։ Ասէ Դաւիթ ցորդիսն Ծո-
րիայ քեռ իւրոյ . թողէք լէք, թող անարգէ և դըր-
րովէ զիս . վասն զի թէպէտ և զարիւնն Շաւուղի ոչ
հեղի, սակայն զարիւնն Ուրիայ քետացւոյ անօրէնու-
թ̅ք հեղի ։ Արդ տէր՝ որ հրամայեաց զայս ամենայն
'ի վերայ իմ 'ի ձեռն Նաթանու մարգարէի, նա գըր-
գռեաց ընդ իս զՍեմէի . բայց տայր ոք ցիս ասացեալ
եթէ վասն էր եղև ինձ այսպէս . վասն այնր արդեւք
Ուրիայն՝ որ յայտնէ ինձ, եթէ և այլ ևս ինչ պար-
տիցիմ, և ծածկեալ իցէ յաչացս իմոց ։ Եւ վասն զի
բանիւք և արդեամբք մեղաւ Դաւիթ ընդ Ուրիա,

բանիւք և արդեամբք խրատեաց զնա Ած. այս ինքն բանիւքն Սեմեայ, և գործովքն Աբեսողովմայ: "Թողէք, ասէ, լլէք. Թող անարգէ զիս. արդեւք տեսցէ տէր և հատուսցէ ինձ զբարին,,: Եւ ահա պարտելով իսկ պարտիս դու, տէր Դաւիթ: Այլ եցոյց, զի առ Ած ամենայն ապաշխարող՝ որ հատուցանէ սովին այսու՝ զոր հատուցանէս, և փոխ տայ՝ զի առցէ 'ի նմա-նէն: Արդ հատոյց նմա զգործսն և զարդիւնսն, զի նստոյց զնա յաթոռն թագաւորութե, և հատոյց նմա զբանսն. յաւել դարձեալ և խօսեցաւ զօրհնութիւնս սաղմոսարանին:

Խօսել սկսաւ Աբիսողոմ և ասէ ցԱքիտոփէլ. խրատ տուր ինձ զի՛նչ ինչ առնեմ, որով զաշխարհս ունել մարթացից: Իսկ Աքիտոփէլ քանզի գիտէր եթէ ամենայն խիղճ մտացն և երկիւղ նորա՝ եթէ և հաշտի վաղիւ Աբիսողովմ ընդ հօր իւրում, ընկեց զիւր մտացն զխիղճն և զվնաս անձին իւրոյ խորա-մանկութե 'ի վերայ ժողովրդեանն. "Զահի հարեալ է, ասէ, ժողովուրդդ և երկնչին, գուցէ թէ հաշտի-ցիս դու վաղիւ ընդ հօր քում. այլ մուտ դու առ հարճս հօր քում, և ահա հզօրանան ձեռք ամենե-ցուն որ ընդ քեզ են, գալ զկնի քո վստահութե, և լինել քեզ թիկունք օգնականութեան և ծառայք մտերիմք,,: Եւ զայս զի՞ արար. զի գարշեցուսցէ զազ-րացուսցէ զնա յաչս հօր իւրոյ. և զի ասասցէ ցնա դարձեալ յետ այսորիկ՝ թէ հայր քո այլ ոչ է հաշ-տելոց ընդ քեզ. զի եթէ Յակոբ ոչ հաշտեցաւ ընդ Հռուբէնի վասն միոյ յանցանացն, թէպէտ և կարի շատ յաճախեաց պարտեաց զնա Յովսէփու, դու՝ որ զեղբայրն քո սպաներ, և անարգեցեր զկանայս հօր քո, զիա՞րդ հաշտի ընդ քեզ: Եւ զի յուսացուսցէ եթէ 'ի տեսանէ է թագաւորութի նորա, ահա, ա-սէ, այն ինչ զոր ասացն Նաթան մարգարէ, գործե-ցաւ առ Դաւիթ 'ի ձեռն Աբիսաղովմայ: Արդ ե-մուտ լկտին պոռնկութ, և անարգեաց զամենեսեան. զի եթէ ոչ էր նա աղտեղի և յայրատ և ճակաճան, կարէր նա անարգութե միջն տալ կարծիս՝ թէ զա-մենեսին անարգեաց:

Դարձեալ խրատեաց զնա Աքիտոփէլ վարել ընդ

իւր գունդ մի զօրու. և անկանել 'ի վերայ գնդին Դաւթի: Իսկ Հոշի իբրև ետես՝ թէ Դաւիթ անց գնաց 'ի Գաղուլթս, քանզի համդերձ կանամբք և որդւովք գնաց նա, և վասն զի գիտաց՝ զի եթէ հալածեն մեծահանգոյց և վառեալ գունդն զկնի փախստէիցն, ժամանեն և կոտորեն զնոսա, ետ պատասխանի և ասէ ցԱբեսողոմ. «Ոչ բարւոք խրատեաց զքեզ Աքիտոփէլ, եթէ յայսմ ժամանակի պնդեալ երթանայցեմք զկնի Դաւթի»: Եւ արդ սկսաւ յարգել գովել բերել 'ի մէջ զքաջութիւնս Դաւթի և զսեփհական գնդին. դու, ասէ, քեզէն գիտես զչափ հօր քո և զչափ սեփհական գնդի նորա, զի արք են դառնաշունչք և դառնահոգիք, գազանք և գազանասիրտք իբրև առեւծք իբրև արջք՝ որ գտանիցեն ընդգէմ յանապատի: Եւ հայրն քո՝ զոր ասաց Աքիտոփէլ եթէ զնա միայն սպանցուք, և ոչ ինչ այնպէս կարի անմիտ է նա՝ եթէ յայսմ ժամանակի առ զօրուն ագանիցի նա: Եւ վասն զի զառաջին անգամն մարտնչիմք մեք, եթէ թշնամեաց զառաջին անգամն լինի մեզ կոտորած ինչ՝ եթէ կայցէ ոք 'ի մեզ որ ունիցի զսիրտ առեւծու, հարկանելով հարկանի յերկիւղէ անտի և անդէն սատակի. քանզի ամենայն իսկ Իսրայէլ գիտէ զչափ հօր քո, և զչափ քաջամարտիկ արանցն որ էին ընդ նմա, զի 'ի բազում պատերազմունս առեալ է նոցա զանուն քաջութեան: Բայց զքեզ յայսմ առաջին մարտի փորձեն. և քեզ պարտ և պատշաճ է իմանալ, յորժամ միագունդ միահամուռ միաբան ժողովեալ իցեն առ քեզ ամենայն Իսրայէլ. և ապա չու արասցուք խաղասցուք գնասցուք և երթիցուք բանակեսցուք 'ի վերայ նորա, որպէս զի անկանիցի ցօղն առաւօտին, և ոչ ապրեցուսցուք 'ի նոցանէն և ոչ մի:

Իսկ Աքիտոփէլ իբրև ետես՝ եթէ զիարդ խափանեաց որպիսի խորհուրդն զայնպիսի խորհուրդն, և գիտաց եթէ որովհետև այս եղև՝ արդ չիք հնար յաղթելոյ զԴաւիթ, և վասն զի ոչ կարէր յետ յաղթութենէն բառնալ զաչս իւր և նայել ընդ նա, անց գնաց արկ խեղդ և անդէն մեռաւ: Եւ ասէ Դաւիթ ցգունդն իւր. եթէ փախչիմք մեք, ո՞չ ահա զայս ա-

ծէն ընդ միտ՝ եթէ երկեաք ինչ մեք 'ի նոցանէն, և պնդին զկնի մեր յոր վայր երթամք. և արդ այժմ թէպէտ և շատ իցէ մեզ տասն հազար վառեալք, այլ լաւ իցէ մեզ առնել թիկունք ապաստանի զզօրն հետեւակ շինական 'ի գեղից անտի. զի թէպէտ և եղիցի, զի ոչ են վառեալ: Վասն զի Ճշմարտէր Դաւիթ՝ թէ ինքն յաղթէ, քանզի ժամ խրատու էր նորա՝ և ոչ եթէ ժամ մահու, տայր պատուէր ածել զպատանեակն կենդանի. և զի մի՛ հպարտասցին վաղիւ 'ի վերայ Դաւթի, սատակին մեռանին 'ի գնդէն Աբիսողովմայ քսան հազար 'ի մարդամահէ, և ուտէ 'ի նոցանէ և գազանն անտառի աւելի քան զոր ինչ կոտորեցան 'ի սուրն սուսերի: Կախեաց և զԱբիսողոմ զծայրից ոստոցն ծառոյ, զի առանց մարտի ածցեն զնա կենդանի առ Դաւիթ: Հար սպան Յովաբ զԱբիսողոմ, և ցրուեցաւ զօրն նորա՝ որ ընդ նմայն էին՝ մեծ ամօթով: Եւ զի կանգնեաց իւր պատկեր Աբեսողովմ, և ասէ. "Վասն զի չիք ոք՝ որ յիշէ զանուն իմ". զի չիք իմ, ասէ, որդեակ՝ որ ունիցի զբագ և զբաժին իմ, և ունիցի զյիշատակ անուան իմոյ: Եւ լայր և սուգ ունէր Դաւիթ 'ի վերայ Աբիսողովմայ, զի չոգաւ նա 'ի մեղս իւր և 'ի պարտիս: Եւ երկեաւ զօրն մտանել 'ի քաղաքն. այս ինքն ամաչեցին տեսանել զԴաւիթ:

Եւ ամբարհաւաճեցաւ Յովաբ 'ի վերայ Դաւթի արքայի և ասէ ցնա, եթէ "Յամօթ արարեր տրտմութըդ քո այսօր զերեսս ծառայից քոց՝ որ ապրեցուցին զանձն քո և զանձինս որդւոց և կանանց քոց": Եւ արդ ահա ոչ եթէ մարդիկ ապրեցուցին զնա: Զի՞ պարծիս պայթիս դու, Յովաբ. քանզի այն՝ որ առաքեաց 'ի վերայ գնդին Աբիսողոմայ զմարդամահն և զգազանսն, նոյն ինքն ապրեցոյց զԴաւիթ: "Ի տէր, ասէ, երդուայ. զի եթէ ոչ, ասէ, ելցես խօսեսցիս ընդ ծառայսն քո, ոչ ագանի առ քեզ յայսմ գիշերի". այս ինքն, զի վարատեմ ցրուեմ ես, ասէ, զզօրսդ առ 'ի քէն, և սակաւքն՝ որ ապրեցան 'ի գնդէն Աբիսաղովմայ, գան և սպանանեն զքեզ: Բայց զայս զի ասաց, ապաստան 'ի թուղթն զոր գրեաց վասն Ուրիայ քետացւոյ, զի ունէր ինքն

Յովաբ առ իւր․ խօսեցաւ՝ որպէս ասէ ոք՝ թէ հանեմ ցուցանեմ զթուղթն, զի վասն մեղաց քոց եկն այս ամենայն 'ի վերայ մեր և 'ի վերայ քո ։ Եկն եւ Դաւիթ յետ նախատանացն, իբրև նախատեցաւ 'ի Յովաբէ, որպէս 'ի Սեմեայն․ և խօսեցաւ ընդ զօրուն ։

Արդ արկ ա̃ծ 'ի սիրտս և 'ի միտս ազգացն ամենայն․ խօսել սկսան և ասէն, եթէ "Դաւիթ ապրեցոյց զմեզ 'ի թշնամեաց մերոց․ և արդ այժմ եկայք փախիցուք յերկրէ աստի"․ այս ինքն 'ի տեղւոջէ՝ ուր ժողովեացն զմեզ Աբիսողոմ ։ Եւ եկին միաբան առ Դաւիթ, և ընկալաւ զնոսա ։ Եւ դարձոյց Ամեսա զսիրտ տանն Յուդայ առ արքայ ։ Եւ արդ այնոքիկ՝ որ հանդերձ ամենայն ազգօքն երկմտեցան 'ի Դաւթայ, սոքին իսկ յառաջ քան զամենայն ազգսն առաքէն առ նա՝ եթէ դարձ դու․ այս ինքն դարձ դու և ծառայեա, և ընդ իմ զքեզ ։

Արդ Սիբա եկեալ արկանէր զկամուրջն Յորդանան գետոյն առաջի արքային․ և Սեմէի թաւալանէր առաջի ոտիցն Դաւթի արքայի, և ասէ․ "Ես գիտեմ, տէր, զի մեղայ․ և արդ եկեալ եմ աւասիկ յառաջ քան զամենայն տունն Յովսէփու"։ Որպէս զի ասիցէ ոք, թէ ես գրգռեցի, ասէ, զտունն Յովսէփու իջանել ընդ առաջ քո ։ Խօսել սկսաւ Աբեսսէ և ասէր․ "Ո՞չ վասն այսր յետին պարծանացս ոչ մեռցի Սեմէի, զի անարգեաց յերթալն մերում զօծեալն տեառն"։ Ետ պատասխանի Դաւիթ և ասէ․ "Այսօր ոք մի՛ մեռցի"․ և երդուաւ նմա Դաւիթ, ոչ վասն զի ստիպեաց զնա անարգութի̃ն Սեմեայ, այլ վասն զի յաղթահարեաց զնա քաղցրութի̃ն իւր ։ Բայց ոչ երդուաւ նմա՝ եթէ բնաւ ամենեւին ոչ մեռցիս դու, այլ զի այսօր՝ որպէս կարծեսդ՝ և որպէս յարեաւ 'ի վերայ քո Աբեսսէ, ոչ մեռանիս ։ Եւ ոչ թէ Սեմեայ երդուաւ, զի ոչ եթէ Սեմեայ ինչ պարտ էր երդումն, այլ աբեսսեանց երդուաւ․ զ՚ 'ի պատճառս երդմանն Դաւթի խափանեսցին 'ի սպանանելոյն Սեմեայ ։ Եւ արար նմա որպէս և երդուաւն․ և աւելի քան զայն՝ որ երդուաւն․ զի որչափ կենդանի էր, յայնոցիկ՝ որ վրէժխնդիրքն էին 'ի սպանողացն նորա՝ ապրեցոյց զնա ։

Եւ եկն էջ Մեմփիբոսթէ ընդ առաջ Դաւթի ոչ զմուրուսն իւր վերայեալ, և ոչ զհանդերձսն իւր փոխեալ մինչև ցօր գալըստն արքայի։ Եւ ասէ ցնա արքայ. ընդէ՞ր ոչ եկիր ընդ իս։ Խօսել սկսաւ առաջի արքայի և ասէ. ծառայն իմ նենգեաց զիս, զի ոչ կամեցաւ հանդերձել ինձ գրաստ. բայց սակայն ոչ կարեմ արդարանալ, և ոչ խօսելով անգամ առաջի տեառն իմոյ արքայի։ Իսկ արքայ վասն ստութե̃ն նորա, որ ասաց ցնա՝ թէ շատ խօսեցար, բայց վասն ապաշխարութե̃ նորա և վատթարութե̃ն, զի վատթարեալ կայր յերեսաց նորա, և վասն սիրոյ հօր նորա, բայց աւելի վասն Աստուծոյ, ասաց՝ թէ ընդ քեզ և ընդ Սիբա բաժանեսցին անդաստանքն։

Եւ Բարզեղիա կերակրեաց զարքայն։ Իսկ իբրև ստիպեաց զնա դառնալ ընդ իւր նմա՝ չնորհն երախտեաց նորա ասաց, “Ոչ կարեմ ես լսել զձայն ազատ մանկտւոյն և զազատ կանանցն„. հեբրայեցին ասէ, “Զձայն գուսանաց և վարձակաց„։

Արդ արկ ա̄ծ զնախանձ բարի ազգացն այնոցիկ. զի որք 'ի ժամ խռատուն Դաւթի փախստեայ լինէին 'ի նմանէն, իսկ իբրև անց ժամանակն այն՝ սկսան հակառակել 'ի մէջ իւրեանց թէ ով 'ի նոցանէն աւելագոյն սիրէ զԴաւիթ։ Քանզի ասէին տունն Իսրայէլի ցտունն յուդայեան, եթէ “Տասն մասն աւելի է մեր յարքայի„. այս ինքն ազգ եմք մեք, որ պաշտեմք զարքայ, և մեզ պարտ և պատշաճ է լինել առաջին և ածել զարքայ, այս ինքն դարձուցանել առ մեզ։ Բայց զօրացաւ սաստկացաւ բանն յուդայեան քան զբանն իսրայէլեան. վասն զի յազգէ նոցա էր, և 'ի վերայ նոցա թագաւորեաց յառաջ, և 'ի յառաջին և 'ի վերջին հալածմանն Դաւթի նոքա եղեն թիկունք նորա Աստուծով։

Եկն եհաս Դաւիթ յԵրուսաղէմ, և արգել ըզտասն կանայսն իւր որ անարգեցան՝ զի պահեսցին. և ոչ այլում ետ զնոսա, վասն զի կանայք որդւոյն նորա էին. բայց եղեն 'ի նեղութե̃, վասն զի ակամայ կամօք հրամայեցան պահել զայրութի̃ ։

Եւ չոգաւ Յովաբ զկնի Ամասայ որդւոյ Յովրեթի. վ̄ա զի կամեցաւ ապստամբեցուցանել զժողովուրդն 'ի

Դաւթէ ։ Եւ իբրեւ պատրաստեցան կազմեցան յովաբեանքն դաշտել յատակել զպարիսպ աշտարակացն , խօսել սկսաւ կին մի անդուստ արտաքս և ասէ , եթէ «Յառաջագոյն հարցանելով հարցանէին 'ի մարգարէիցն , և ապա սպանանէին , որպէս և Դաւիթ իսկ առնէր մինչև ցայսօր յամենայն մարտ պատերազմի՝ իբրև ընդ հեթանոսս մարտնչէր նա . արդ ես միա՞յն տուժապարտ եմ Իսրայէլի . զի՞ պահանջիմ ես փոխանակ այլոց յանցանաց . զի՞ կամիս դու փոխանակ միոյ սպանանել զմայր մանկամբք հանդերձ » . այս ինքն զքաղաքս բնակչօք հանդերձ ։ Եւ ընկեց առ նոսա զգլուխն Սամովայի 'ի պարսպէն , և չուեցին 'ի քաղաքէ անտի ։

Նաև եղև զերեամ սով զկնի միմեանց . և խնդրեաց Դաւիթ 'ի տեառնէ . ետ պատասխանի տէր և ասէ . «Վասն Սաւուղի , զի սպան զգաբաւոնացիս » . վասն զի նախանձեցաւ Սաւուղ ընդ գաբաւոնացիս . վասն զի մատոյց զողջակէզսն և ապրեցաւ . և եղեն անդէն նոքա պաշտօնեայք սեղանոյն փայտիւն և ջրով . բայց ասեն այսպէս , եթէ աբիմելէքեանք են նոքա ։ Եւ վասն զի պատուեցին զԱբրահամ , եղև նոցա շնորհահատոյց տէրն Աբրահամու 'ի մէջ զաւակին Աբրահամու ։ «Խնդրեաց , ասէ , Սաւուղ սպանանել զնոսա » , իբրև նախանձեցաւ՝ զի մեղացուսցէ զորդիսն Իսրայէլի և զորդիսն յուդայեան , որպէս զի ստեսցին[1] յերդումն զոր երդուանն , և մեղիցեն նոցա ։ Եւ ասաց Դաւիթ ցգաբաւոնացիսն . «Ո՛ զի՞նչ առնեմ ձեզ , և օրհնեսցին ժառանգութիքն տեառն » . զի ահա իբրև անիծիւքն սատակէր սովն զամենայն առ հասարակ ։ Ետուն պատասխանի և ասեն ցնա , եթէ «Այրն՝ որ կորոյս զմեզ զի մի՛ մնասցուք ընդ ամենայն սահմանս Իսրայէլի , տացեն 'ի մեզ զեւթն որդիսն նորա , զի մատուսցուք զնոսա պատարագ առաջի տեառն » ։ Արդ ոչ պակասեցուցին 'ի թուոյն եւթան , զի գուցէ եթէ մնացորդ մնացէ Շաւուղի . և ոչ աւելի ասացին , զի գուցէ ելցէ և սատակեսցէ զզաւակն Յովնաթանու ։ Ետ նոցա արքայն զերկուս

1 Յօրինակին ստեցին ։

որդիսն Ռասէփայ՝ զոր ծնաւն Շաւուղի, և զՀինգ որդիսն Նադաբայ դստերն Շաւուղի՝ զոր ծնաւն Ազարիէլի. մատուցին զնոսա պատարագ առաջի տեառն։ Եւ իբրև անիծիւք ոչ տուան որդիքն Շաւուղի 'ի թաղել։ Բայց նման է այսպէս, եթէ իբրև հաշտեցաւ ած ընդ երկրի, թաղեցան ընդ Շաւուղի և ընդ Յովնաթանու։

ԳԼՈՒԽ Է

Ի սկսաւ ասել Դաւիթ առաջի տեառն զբանս օրհնութեան այսորիկ։ “Սիրեցից զքեզ տէր զօրութիւն իմ”. զի քև յաղթեցից զամենայն մարտ պատերազմաց իմոց։ “Եւ ուղխք անօրէնութեան խռովեցուցին զիս”. թշնամիք նորա են. զի իբրև ուղխք դիմեալ գային 'ի վերայ նորա ասպատակաւորքն։ “Երկունք դժոխոցն շրջեցան զինև”. դառն խորհուրդքն են թշնամեաց նորա։ “Եւ կանխեցին առ իս որոգայթք մահու”. ատելիքն իմ յաւուրն տրտմութեան իմոյ իբրև զԱմաղէկ ապականիչ, աշխատեալ և վաստակեալ Իսրայէլի 'ի Ճանապարհի անդ։ “Եւ լուաւ 'ի տաճարէ իւրմէ ձայնի աղօթից իմոց”։ Եւ ահա ցարդ ևս ոչ էր շինեալ զտաճարն, զի՞ յիշէր զտաճարն. և կամ զի՞նչ անուանէ զտաճարն։ Զերկինս իսկ կոչեաց և անուանեաց տաճար։ “Ել ծուխ 'ի բարկութենէ նորա, և հուր յերեսաց նորա բորբոքեցաւ”. զնոյն բարկութիւն՝ որ հասուցանէր 'ի վերայ թշնամեացն ած, առակէ 'ի ծուխ և 'ի հուր։ “Խոնարհեցոյց զերկինս և էջ” առ 'ի պաշտպանութիւն փրկութեան նոցա։ “Եւ զմէգ եդ 'ի ներքոյ ոտից իւրոց”. վասն զի իբրև զմէգ զերկրաւ եղեն թշնամիք 'ի ներքոյ ոտից նորա։ “Ել 'ի քերովբէս՝ և էջ”. և զի ուսուսցէ զի ոչ եթէ սոքա բարձեալ կրէին զնա՝ ասայ, եթէ ասացաւ առ 'ի փրկութիւն նոցա 'ի վերայ թևոց հողմոց։ “Եդ զխաւար 'ի ծածկոյթ իւր”. զի մի երևեսցի մեծապայծառ փրկութիւն նոցա թշնամեացն։ “Եւ պատեցաւ զժողովրդեամբքն հովանիքն իւր”. խաւար ջուրցն՝ որ ստեղծանէր յօդեղէնն ամպոցն, հալածական երթայր 'ի լուսաճաճանչ հովա-

նոյ նորա ։ «Արար զամպս իւր կարկուտ և կայծակունս հրոյ » . որպէս և յաւուրսն սոդոմմացւոց և եգիպտացւոց որոտաց յերկնից 'ի վերայ թշնամեացն ։ «Առաքեաց զնետս և ցրուեաց զնոսա » . պատգամօքն հրամանի զկործանումն թշնամեացն ։ «Եւ յաճախեաց զփայլատակունս բարկութե՟ » . խռովեաց վտանգեաց և արար նկուն զատելիսն առ հասարակ ։ «Երևեցան աղբերք ջուրց , յայտնեցան հիմունք աշխարհի » . զբորբոքումն կուտակեալ սաստկութիւն թշնամեացն իւրեանց առակեաց 'ի նոսա . զի ոչ միայն զօրութ՟ի այ՟ մեղկացուցանէր զնոսա , այլ զի 'ի սաստէ և 'ի շնչել բարկութե՟ նորա սատակին կործանին ։ Եւ զի ցուցցէ՝ թէ ոչ միայն յորժամ մերձ է՝ փրկէ , ասաց՝ թէ «Առաքեաց 'ի բարձանց և ընկալաւ , դադարեցոյց զիս 'ի ջուրցն . զի նոքա են հզօր թշնամիք իմ » ։ Եւ զի ցուցցէ և յայտ արասցէ՝ թէ ոչ ակնառութ՟ք ինչ արար առ նմա՝ ասաց , «Վասն զի պահեցի ես , ասէ , զճանապարհս տեառն » , հանդերձ այլովք ։ Եւ զի ասաց՝ եթէ «Ընդ բարւոյն բարի եղիցիս , և ընդ առն ամբծի անբիծ եղիցիս » , ստուգութ՟ին օրինաց ուսուցանէ նմա փրկել զհեբրայեցիս՝ զժողովուրդն տառապեալ ։ «Եւ զաչս ամբարտաւանից հեթանոսաց խոնարհեցուսցէ ։ Եւ դու լուսաւոր առնես զճրագ իմ տէր » . այն իսկ է , մինչ դեռ սակաւիկ միւս ևս շիջանէր նա յերկրորդ հսկայէ անտի ։ «Տէր ա՟ծ իմ , լուսաւոր առնես զխաւար իմ » . այս ինքն փրկութ՟բն իւրով հալածեսցէ զհալածիչս իմ ։ Եւ վասն զի քև պնդեցայ զկնի ասպատակաւորին , հասի թափեցի 'ի նոցանէն՝ զոր ինչ յափշտակեցին և փախեան ։ «Եւ Աստուծով իմով անցից ընդ պարիսպ » ։ Զի թէպէտ և 'ի ներքոյ պարսպաց պաշարեսցեն և արգելցեն զիս , իբրև զեղջերու անցից ըստ նոսա . վասն անցելոյ ժամանակացն , իբրև վասն զաւյապա ժամանակացն՝ որ ինչ հանդերձելոց էր լինել , խօսէր . զի պաշարեսցեն [1] և զզաւակն՝ որ թագաւորելոցն էր զկնի նորա . զի եթէ գնասցեն իբրև զնա , իբրև զնա նահատակեսցին ։ «Ա՟ծ , յանբծու-

1 Յօրինակին պաշարեսցէն . եղաւ ըստ լուսանցին ։

թէ̃ են ճանապարհք իւր ” . վասն զի առանց անկնաութեան արդարացուցանէ և պարտաւորէ ։ “Բանք տեառն ընտրեալ են ” . այս ինքն ստուգութի̃ն օրինաց իւրոց ընտրեալ է, և օգնէ ամենեցուն՝ որք յուսան 'ի նա ։ “Վասն զի չիք ա̃ծ բաց 'ի տեառնէ ” , որ կարէ օգնել երկրպագուաց իւրոց . և ոչ հզօր՝ առաքինացուցանել յամենայն մարտ պատերազմաց մերոց իբրև զա̃ծ մեր ։ “Ա̃ծ՝ զի զգեցոյց ինձ զօրութի̃ ” յառաջին և 'ի վերջին հալածանս իմ ։ “Եւ եդ յանբըծութէ̃ զճանապարհս իմ ” . այս ինքն ճշմարիտ հաւատովքն՝ որ էին նորա առ ա̃ծ ։ “Եւ զի արար զոտս իմ իբրև զեղջերուի ” , ընթանալ հալածել զկնի հալածչացն, զի դարձցին 'ի մարտ պատերազմի ։ “Եւ 'ի վերայ բարձանց յաղթութէ̃ կացոյց զիս . և զի ուսոյց զձեռս իմ 'ի պատերազմի ” . զի ձգեսցեն զնետս 'ի փրկութեան, և կշռեսցեն կորովութի̃ն իբրև ընդյօդուածս զրահից ։ “Եւ հաստատեաց զբազուկս իմ իբրև զաղեղն պղնձի ” . զի մի վաստակեսցին 'ի ժամ կոտորածոյ թշնամեացն ։ “Եւ ետուր ինձ զվահան փրկութեան քո ” . վասն զի յամենայն տեղի՝ յոր և երթայր՝ յաղթէր ։ Եւ աջ քո ընկալցի զիս, և հզօրացուսցէ զիս 'ի ժամ պատերազմի, և խոնարհութիւդ քո ուսուցանելով ուսուսցէ զիս, և մի նուաղեցայց, զի մի պարտեցայց ։ Ընդարձակեցեր զգնացս իմ 'ի ստորև իմ, զի մի գայթակղեսցին պճղունք իմ . վասն զի բնակեցուցեր զիս 'ի խաղաղութեան, և ոչ շարժեցեր զհետս գնացից իմոց դողութե̃ յերկիւղէ, և զպարանոցս թշնամեաց իմոց փոխանակ երեսաց իւրեանց դարձուցեր առ իս, և զատելիս իմ 'ի ձեռն սրոյն սուսերի սատակեցից զնոսա ։ Աղաղակեցին առ տէր 'ի ժամ հարուածոյն, և մի լուիցէ նոցա ։ Մանրեցից զնոսա իբրև զհողմ . այս ինքն ցրուեցից զնոսա իբրև զփոշի ընդ երեսս հողմոյ, իբրև զկաւ գռեհից կոխեցից զդիակունս նոցա ։ Ապրեցուսցես 'ի Յովաբէ և 'ի յեղբարց նորա՝ որ դատաւորքն էին ժողովըրդեանն ։ Բայց և 'ի վերայ տեառն մերոյ կատարի այս . զի պարտաւորեցին զնա անօրէնութի̃ քահանայքն և դատաւորք ժողովրդեանն ։ Արասցէ զիս գլուխ, ոչ ազգաց, այլ հեթանոսաց . և ժողովուրդն

'ի հեթանոսաց՝ զոր ոչ գիտէի՝ պաշտեցեն զիս, և
'ի լուր ականջաց՝ իբրև ոչ տեսեալ զիս՝ լուիցեն ինձ։
Որդիքն օտարաց անթլփատից հնազանդեսցին ինձ,
և օտքին իսկ դարձեալ արգելցին 'ի կամակոր շաւ-
ղացն իւրեանց առ կուռսն օտարոտիս։ Ա̃ծ, որ ետ
ինձ վրէժխնդրութի̃ 'ի ժողովրդենէն, զի ցրուեցան
ընդ ամենայն կողմանս երկրի, և հնազանդեաց զա-
պրստամբեալ հեթանոսս ընդ ինև։ Ապրեցուցիչ իմ
'ի թշնամեաց իմոց. այս ինքն փրկիչ իմ 'ի դժոխոց
և 'ի մահուանէ յարութե̃ն յերրորդ աւուրն. և յայ-
նոցիկ՝ ոյք յարուցեալ էին 'ի վերայ իմ կասեցու-
ցանել լռեցուցանել զատելիս յարուե̃ կենաց, բարձր
արարեր զիս։ Արդ վասն այսորիկ զոր ինչ արարեր, ես
խոստովան եղէց և գոհացայց զքեն, ոչ 'ի ժողովըր-
դեանն, այլ 'ի հեթանոսս. և անուան քում սաղմոս
ասացից, յարդիչ մեծացուցիչ 'ի հեթանոսս զփըր-
կութի̃ թագաւորի իւրոյ, և առնել զողորմութիւն
ընդ օծելոյն իւրոյ Դաւթի, այլ և ընդ զաւակի նո-
րա՝ ուստի կարգեցաւ շղթայն արդարոց, և ծագե-
ցաւ 'ի նմանէն արքայն Քրիստոս։

Իյսոքիկ վերջին բանք Դաւթի. “Ասաց այր՝ որ
կանգնեաց զլուծ օծելոյ իւրոյ”. այս ինքն, զի պաշ-
տեաց զպաշտօնն օծելութեան. և Ա̃ծ Յակովբայ,
քաղցրացուցիչ երգոցն Իսրայէլի՝ որ եղ 'ի բերանոյ
քումմէ։ “Հոգի տեառն խօսեցաւ յիս զոսսա, և ըզ-
բան իւր եդ 'ի լեզուի իմում”. այս ինքն՝ բարբա-
ռեաց 'ի լեզու իմ։ “Ցիս ասաց սկայազունն Իսրայէ-
լի, որ իշխէ 'ի մարդս արդարս”. այս ինքն զի հանդ-
չի 'ի մարդս արդարս։ “Քանզի լոյս առաւօտու ընդ
ծագել արեգականն, որ իշխէ երկիւղն Աստուծոյ”.
այս ինքն որ կատարեալ է երկիւղիւն Ա̃յ, նման է
լուսոյն առաւօտու ընդ ծագել արեգական. և իբրև
առաւօտ ընդ լուսանալ առանց ամպոյ սոյնպէս փայ-
լէ, և իբրև անձրև՝ որ զարթուցանէ զերկիր, այս-
պէս զուարճանայ երկիւղիւն տեառն։ “Ոչ է այսպէս
և ընդ Ա̃յ”. այս ինքն ոչ եթէ այսպէս գործեսցի 'ի
ժողովրդեանն Ա̃յ և ուխտ աշխարհի. վասն զի ուխտն
'ի սկզբանէ՝ որ 'ի ժամանակաց Մովսիսին եդեալ՝ ա-

ռաջի աչաց իմոց ։ Եւ պատրաստ է սիրտ իմ առ ամենայն ինչ, և պահեալ է յամենայն չարեաց. վասն զի ամենայն կամք իմ և ամենայն փրկութի̃ իմ 'ի ծածուկսն և յայտնիս՝ ինքն ա̃ծ կատարեալ գործովք և արդեամբք ։ Եւ անօրէնք իբրև փուշք չարափուշք՝ զի այրին 'ի հրոյ, կոտորեսցին ամենեքեան. վասն զի ոչ եթէ ձեռն մարդոյ կարէր ժողովել զամենայն ։ Նա և միակն յորժամ մերձենայ առ նոսա մեղեխովն տապարի ժողովէ զնոսա, և ապա յետ այսորիկ այրին 'ի հուր բորբոքեալ ։ Յիշեաց Դաւիթ զԳեդէովն, թէ զիարդ փորձեաց նա 'ի ջուրսըն անդր զհաւատացեալսն. և կամեցաւ փորձել և Դաւիթ, եթէ արդարեւ իցեն և ընդ նմա հաւատացեալք ։ Եւ զի փորձեսցէ դարձեալ և զայս, թէ արդարեւ մատնեսցի բանակն այլազգեաց 'ի ձեռս նոցա ։

Խօսել սկսաւ Դաւիթ և ասէ. կամ էր ինձ եթէ տայր ոք ինձ ըմպել ջուր 'ի գբոյն մեծէ 'ի Բեթղեհէմ գեղջէ, ուր բանակեալ էին այլազգիքն ։ Եւ ծակեցին հսկայքն երից արանցն զբանակն այլազգեացն, և բերին ջուր Դաւթի. և ոչ կամեցաւ ըմպել, և առ հեղ զջուրն առաջի տեառն հաւատոց ։ Եւ արդ ջրովն գբոյն՝ զոր հեղ առաջի տեառն, հաճել կամեցաւ զպարտսն ջուրցն՝ զոր գողացաւն և արբ ։

Եւ յաւել բարկութիւն տեառն զօրանալ յԻսրայէլ. վասն զի նենգեցին 'ի վերայ Դաւթի յերթալն իւրեանց զկնի Աբեսողոմայ ։ Եւ վասն զի տեսին զաւակն Ահարոնի, զի թուեալ համարէին 'ի սպանումն մահու՝ և ոչ ապրեցուցին, գրգռէ ա̃ծ զԴաւիթ թուել համարել զնոսա, իբրև չէր գիտակ մարդամահին ։ Քանզի նման է այսպէս, եթէ նախ գրեաց զնոսա Դովեկ եդովմայեցի, և ապա սպան. զի գուցէ յանկարծ ուրեք ապրեսցի մի ոք 'ի նոցանէն 'ի պատժոցն պատուհասի ։ Եւ վասն զի կոտորած քահանայիցն 'ի պատճառս Դաւթի եղև, զի ընկալաւ զնա Ահիմելեք քահանայ, ասաց. “Զի եթէ ես մեղայ՝ զի թուեցի զնոսա, այս խաշն անմեղ զի՞ մեղաւ„. իբրև զայն՝ զի ասաց ցորդին Ահիմելեքայ,

եթէ "Ես եմ՝ որ եղէ պարտ ամենայն հոգեաց տան հօր քո":

Արդ այն զի ասաց ցնա ա՟ծ, թէ "Երթ թուեա և համարեա զժողովուրդն", իբրև զայն է՝ զի խնդրեցին նոքա ելանել 'ի մարտ պատերազմի 'ի վերայ Բենիամինի, և հրամայեցաւ նոցա յա՟յ, և ելին և յաղթահարեցան: Նա իբրև թուեաց զնոսա Դաւիթ, ասաց ցնա տէր՝ թէ "Ջերիս չարիս ածեմ 'ի վերայ քո, ընտրեա դու քեզ": Եւ կամ զի յաճախեաց բազմացոյց զնոսա ա՟ծ իբրև զաւազ առ ափն ծովու, և իբրև զաստեղս երկնից, որպէս խոստացաւն. և նոքա ստեցին զուխտն զոր կացուցին: Եւ իբրև թուէր համարէր զնոսա, և ցոյց նոցա՝ զի ոչ էր սուտ խոստումն նորա, ած 'ի վերայ նոցա զհարուածս մահու փոխարէն ըստ ուխտն անցանելոյ: Եւ իբրև ետես Դաւիթ՝ եթէ սով և գերութ՟ին առ հասարակ սատակէ զբարիս և զչարս, ընտրեաց իւր՝ զի մարդամահիւն անկցի 'ի ձեռս ա՟յ: Վասն զի գիտէր նա եթէ ա՟ծ արդարակշիռ ստուգութ՟ն իւրով առ յանցաւորս անդր գումարէ զպատիժս պատուհասից. զի եթէ Դաւիթ էր մեղուցեալ, 'ի վերայ Դաւթի գային պատիժք պատուհասից: Արդ եթէ Դաւիթ՝ որ թուեաց զժողովուրդն՝ ոչ արբ գան, և ժողովուրդն՝ որ համարեցաւ՝ զօրացաւ 'ի նա մարդամահն, ո՞չ ահա յայտ եղև՝ եթէ վասն զի ոչ ապրեցուցին զքահանայսն 'ի մահուանէ, մատնեցան նոքա 'ի ձեռս մահու: Բայց մեռան 'ի ժողովրդենէն մինչև ցվեց ժամն եւթանասուն հազար. և յայտ է՝ թէ այնոքիկ են որ յանցեանն յերկոսեան. այս ինքն զի ոչ ապրեցուցին զքահանայսն, և վասն զի հրապուրեցան 'ի հրապուրս Աբիսողոմայ:

Իսկ Դաւիթ իբրև ետես՝ զի տարածեցաւ խառնեցաւ մարդամահն ընդ ժողովուրդն, և տալ զանձն իւր փոխանակ ժողովրդեանն փոքր է, հանդերձ անձամբն իւրով՝ զոր ետ՝ յաւել ետ և զտուն հօր իւրոյ. զի նովաւ և տամբ հօր իւրոյ արգելցի մահն 'ի ժողովրդենէն: Եւ եկն եհաս Գադ մարգարէ առ Դաւիթ և ասէ, զի շինեսցէ զսեղանն 'ի կալն Արա-

նայ 'ի տեղւոջ՝ ուր կայր հրեշտակն ։ Եւ գնեաց զտե-ղին և զեզինսն, և շինեաց սեղան տեառն, և մատոյց զողջակէզս ։ Եւ յայտնեցաւ տէր ողորմութեամբ 'ի վե-րայ երկրին . և 'ի ձեռն պատարագացն Դաւթի ար-գելաւ մահն 'ի դառնացող ժողովրդենէ անտի ։

ԿԱՏԱՐԵՑԱՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՄՈՒԷԼԻ

ՍՐԲՈՅՆ ԵՓՐԵՄԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Գ. ԵՒ Դ. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ

ՏԵԱՌՆ

ԵՓՐԵՄԻ

ԽՈՐԻՆ ԱՍՈՐԻՈՅ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ

ԳՐՈՒԹԻՒՆ *Թագաւորաց գրէ զամս կենաց զՅուդայի և զԻսրայելի. և վն առաքինութեցն զոր արարին արդարքն՝ որ էին 'ի նոսա. և վասն հեթանոսութեն զի նորոգեցին անօրէնքն՝ որ 'ի նոսա էին:*

Սկսնու արդ այսուհետև և 'ի ծերութենէն Դաւթի, և գայ կարգաւ առ թագաւորութին Սողոմոնի: Եւ վասն տաճարին զոր շինեաց, և իմաստութեն զոր ընկալաւ:

Գրէ և վասն հեթանոսութեն Ախաբու. և վասն նախանձայոյզս լինելոյ Եղիայի և Եղիշայի:

Գրէ և վասն ելանելոյն Փուայ ասորեստանեայց՝ որ արկ հարկ 'ի վերայ ժողովրդեանն. և վասն ելանելոյն Թագղաթփաղսարու և Շաղմանասարու ասորեստանեայց, որ գերեաց նախ զտունն Հռուբէնի, և զնորին ընկերն զՇամրին:

Գրէ և վասն ելանելոյն արքային եգիպտացւոց, զի տարաւ իջոյց յեգիպտոս զԱհովայ զարքայն հրէաստանի:

Գրէ և վասն Նաբուքոդոնոսորայ արքային ասո-

րեստանեայց, զի եւ և գերեաց զՅովակիմ արքայ և զԴանիէլ և զընկերս իւր. և եւ կրկին անգամ և գերեաց զՅեքոնիա և զԵզեկիէլ մարգարէ. և եւ երրորդ անգամ և գերեաց զարքայն Սեդեկիա, և այրեաց զտունն սրբութեան, և հրձիգ արար զքա-ղաքն, և գերեաց զժողովուրդն ։

Օ այսոսիկ և որ սոցին նման են, գրեալ են՚ի նմա։

ԵՒ

Ի ՍԿԻԶԲՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՆ ԻՒՐՈՅ ԱՅՍՊԷՍ ԱՍԱՑ

ԳԼՈՒԽ Ա

„ԵՒ արքայն, ասէ, Դաւիթ ծերացաւ, զի անց զաւուրբք. և արկանէին զնովաւ զգեստ, և ոչ ջեռնոյր„: Վասն զի ծերութեան որդի էր, կանխեաց ծերացաւ. և վասն զօրութեան մարմնոյն իւրոյ ոչ ջեռնոյր նա. և վասն զի բառնալ զծանրութիւն զգեստիցըն՝ որ ինչ պիտոյ և պատշաճ էին ցուրտ մարմնոյն՝ ոչ կարէր հանդուրժել ծերութիւն նորա. և մնալ յզգեստից անտի՝ եթէ ոչ զգենուցու, վասն ծերութեան իւրոյ զօրութիւն որ 'ի մարմին նորա բնականայր՝ զանհնարին զցաւսն առ 'ի բժշկութեան նիւթեր մթերէր յանդամս նորա. գտին զդիւրին հնարսն իմաստունք հմուտք բժշկութեան ջեռուցանել զցուրտ մարմինն արիւնասակաւ ծերութեան 'ի ձեռն ջերմեռանդն և արիւնաշատ կուսին, իբրև տուեալ տային զհաւանութիւն զգաստ և ցածուն առն: Վասն այնորիկ ոչ ասացին՝ եթէ ընտրեսցուք կոյս մի գեղեցիկ, այլ զի „Խնդրեսցուք, ասէ, տեառն մերում կոյս մի, զի կացցէ առաջի արքայի„: Իբրև կալաւ յանձին՝ զի փորձեսցին միտք նորա 'ի փորձանս ցանկութեան, զի արգելցէ զմարմինն իւր 'ի ցաւոցն զօրութեան:

Խնդրեցին մեծաւ փութով յամենայն սահմանացն Իսրայէլի աղջիկ մի գեղեցիկ, որպէս զի վասն գեղոյն նորա զեռասցի ցանկութիւնն 'ի մարմինն Դաւթի. և ջերմեռանդն ցանկութեամբն ցուրտ զօրութիւն ծերութեան ջեռասցի: Բայց ոչ գիտաց զնա արքայն. մի՝ զի մի կարօտասցի յայլ կոյս. և երկրորդ՝ զի կոյս գեղեցիկ աղջկամբն սիլովմացով, որ համապազ սրբու-

թէ ննջէր 'ի լանջս նորա, զպարտման Բերշաբեայ՝ այն որ միանգամն պղծութ̃ն հաղորդեցաւ ընդ նմա՝ հաճեսցէ :

Իսկ Ադոնիա եղբայրն Աբեսողոմայ ոչ խրատեցաւ անցիւքն որ ինչ անցք անցին ընդ եղբայր նորա. այլ սկսաւ սայթաքել ճարտարասոյզ բանիւքն խօսել ընդ Յովաբու և ընդ Աբիաթար քահանայի, զի թագաւորութիւն՝ որ պրծեաւ յեղբօրէն նորա՝ առցէ զնա 'ի ձեռն Յովաբու սպանողի եղբօր իւրոյ : Իսկ իբրև թագաւորեցուցին սոքա երկոքին զԱդովնիա 'ի պատճառս պատարագացն և խնկոցն, ընթացաւ եկն Նաթան մարգարէն և եցոյց Բերսաբեայ մօրն Սողովմոնի : Իբրև սկսաւ խրատել զնա՝ թէ որով իւիք ապրեցուսցէ զանձն իւր և զորդին իւր 'ի մահուանէ, զի ձեռն Ադոնիայ սպառնայր նոցա, ուսոյց նմա զոր ինչ պարտ և պատշաճ էր ասել ցարքայն : Ետ նմա դարձեալ պատուէր յիշեցուցանել նմա զերդումն զժամանակին՝ իբրև գողացաւ զնա յառնէն իւրմէ, և կամ զժամուն՝ յորում գողացաւ և ինքն զնա 'ի կանանց անտի իւրոց, և երդմնեցոյց զնա :

Մուտ Բերսաբեայ մեծափոյթ փութով շտապեալ տագնապեալ, և զծածուկ երդումն որ ընդ նոսա և ընդ ա̃ծ պաշտեցաւ խրատուն մարգարէի յայտնապէս 'ի ժամուն զի թագաւորեցաւ Ադովնիա, բեր եդ 'ի միջի և յիշեցոյց նմա : Եւ մինչ դեռ մտեալ ցուցանէր՝ թէ ով են այն՝ որ զարքայն արհամարհեցին, և զի առանց խրատու նորա ետուն զթագաւորութիւնն ում և կամեցան, և մինչ դեռ կամէր ասել նա՝ եթէ յետ մահուն քո, արքայ, սպանանեն զիս և զորդեակն իմ, և ահա Նաթան մարգարէ եկն եմուտ, երկիր եպագ առաջի արքայի : Ակնարկելով Նաթանայ ել արտաքս Բերսաբէ, զի գուցէ թէ յանկարծ ուրեք զմտաւ ածիցէ և գիտասցէ Դաւիթ՝ թէ բանս ինչ եդին նոքա ընդ միմեանս, և մտին զկնի միմեանց :

Իսկ իբրև պատմեաց Նաթան վասն պատարագացն Ադոնիայ և վասն մեծ հացին զոր արար Յովաբու սպարապետին և Աբիաթար քահանայի և որդւոցն

արքայի և զօրավարացն առ Հասարակ, գազանացաւ Դաւիթ մեծաւ ցասմամբ, և Հրամայեաց կոչել զԲերսաբէէ, և նորոգեաց զՀին երդումն և ասաց. «կենդանի է տէրանց տէր, այլ որպէս երդուայ քեզ 'ի ծածուկ, սոյնպէս արարից քեզ յայտնապէս. ոչ յետ ժամանակաց, այլ 'ի սմին աւուր իսկ»: Եւ փութացոյց Դաւիթ զՍադովկ քահանայ և զՆաթան մարգարէ և զԲանէի որդի Յովիդեայ տանել օծանել զՍողոմոն 'ի Սելովա:

Իսկ իբրև արարին ծառայքն Դաւթի զՀրաման նորա, որպէս և Հրամայեաց նոցա, ազդ եղև և լուաւ Ադոնիա և Հրաւիրեալքն իւր. և մինչ դեռ ճշմարտէին գիտել՝ եթէ արդարև իցէ, Հար Հուչակ խրախոյս փողոյ 'ի քաղաքի անդ: Անդ զոտս արձակեաց Նաթան որդի Աբիաթարու վասն Հօրն իւրոյ, զի թագաւորեցոյց զԱդոնիա և զրոյց ետ վասն օծմանն Սողոմոնի: Արդ փախեան ցրուեցան յերկիւղէ ամենայն Հրաւիրեալքն Ադոնիայ. և նա անդէն դիմեալ մտանէր Ադոնիա առ սեղանն տն̃, և առնէր թիկունս ապաւինութեան զսեղանն տն̃: Արդ խնդրեաց Ադոնիա զերդումն 'ի Սողոմոնէ, և երդուաւ նմա ուխտիւ. զի եթէ եղիցի խորՀրդակից միամիտ, մի՛ մեռցի վասն առաջնոյն՝ որ կամեցաւ սպանանել զնա: Ապա թէ միւսանգամ դժխեմուք թագաւորել կամիցի, յայտ է թէ սպանանել խնդրէր զնա; և զպատիժսն պատուՀասից զոր ոչ ածի 'ի վերայ նորա, վասն երկրորդին մի՛ կարասցէ ապրել 'ի նմանէն:

Արդ իբրև մեռաւ Դաւիթ, Հրաման առեալ տայր կորուսանել 'ի թագաւորութենէ անտի զխռովիչս թագաւորութե̃ իւրոյ: Բայց նախ զայս Հրաման տայր, իբրև ԱբրաՀամ որդւոց իւրոց, պատուիրէր նա Սողոմոնի պաՀել զօրէնս տեառն, զի յաջողեսցի նմա 'ի թագաւորութեան անդ զոր ընկալաւ, և զի մի՛ պակասեսցի նմա զաւակ՝ որ կարգեալ կացցէ 'ի թագաւորութե̃ անդ: Ետ նմա Հրաման դարձեալ և վասն Յովաբայ, այն՝ որ սպան նենգութ̃բն իւրով զերկուս զօրավարսն զզօրագլուխսն Իսրայէլի: Եւ զի ամբարՀաւաճեցաւ դարձեալ 'ի վերայ Դաւթի 'ի

ժամանակի՝ զի սուգ առեալ լայր 'ի վերայ Աբիսա-
ղոմայ. և ասաց՝ թէ "Ի տէր երդուայ, զի եթէ
ոչ ելցես խօսեսցիս ընդ ժողովրդեանն, եթէ մնասցէ
ոք առ քեզ 'ի գիշերիս յայսմիկ": Եւ հրաման դար-
ձեալ և վասն Սեմեայ, զի թշնամանեաց զնա իբրև
փախստեայն երթայր յերեսաց Աբիսողոմայ: Եւ զի
ասաց ցՍողոմոն, եթէ "Արասջիր նմա ըստ իմաս-
տութեդ քում". վասն զի թէպէտ և արժան է մե-
ռանել նոցա, մինն՝ զի սպան զերկուս զօրագլուխն՝
որ լաւն էին քան զնա, և միւսն ևս՝ զի թշնամա-
նեացն զնա, և քարավէժ առնէր զարքայն, բայց սա-
կայն յանցանօքն որսասջիր սպանանել զնա ստուգու-
թեամբդ քով, որոց թողաւ առաջին յանցանք նո-
ցա ողորմութեբն Հօր քո:

Եւ զի ասաց վասն Դաւթի, եթէ "Թագաւորեաց
'ի Քեբրոն եւթն ամ". զերկուս ամս միայն զոր թա-
գաւորեցաւ Աբեսող որդին Շաւուղի՝ թագաւորե-
ցաւ 'ի նմա. բայց սակայն և զհինգ ամն զոր հալա-
ծեաց զնա Շաւուղ, թագաւոր էր նա վասն օծմանն
և Հոգւոյն սրբոյ, յորմէ օրէ օծ զնա Սամուէլ, առ
նմա էին:

Իսկ Ադոնիա՝ այն որ առ Դաւթաւ կենդանեաւն
երկնչէր նենգել զՍողոմոն եղբայր իւր, յետ մա-
հուն Դաւթի խրատեցին զնա Յովաբ և Աբիաթար
առնուլ զԱբիսակ կնութեան, որպէս զի բամբշամբն
զոր առնու բարեխօսութբ մօրն Սողոմոնի՝ առցէ և
զթագաւորութիւն Սաղոմոնի: Իսկ իբր մուտ խորա-
մանգն առ միամիտ անդր, և ստեաց և ասաց, եթէ
"Ինձ արժան էր թագաւորութիւն, և զիս կամեցաւ
ամենայն Իսրայէլ թէ եղէց թագաւոր", իբրև ոչ
էր նմա անկ թագաւորութիւն. վասն զի 'ի տեառնէ
խոստացեալ էր Սողոմոնի, և ոչ Իսրայէլ իսկ կա-
մէր ընդ նորա. վասն զի երկիրն պատառեցաւ 'ի
բարբառոյ ուրախութեն Իսրայէլի իբրև զՍողոմոն
թագաւորեցուցին:

Իսկ իբրև խնդրեաց 'ի նմանէ զԱբիսակ չիլովմայ-
եցի, և խոստացաւ յստակամիտ մտօք խնդրել և
տալ նմա յարքայէ, անց մուտ մայրն արքայի առ ար-
քայ: Արքայն իբրև ետես, ընդոստեաւ յարեաւ յա-

թուոյն իւրմէ, երկիր եպագ նմա և նստաւ. քանզի գիտէր՝ եթէ արեամբ մօրն գնեալ է զաթոռ թագաւորութ̃ն իւրոյ՝ որ 'ի տեառնէ պարգևեցաւ նմա։ Իսկ իբրև խնդրեաց նա յարքայէ՝ եթէ "Տուր զԱբիսակ շիլովմայեցի Ադոնիա եղբօր քում կնութեան", եւ պատասխանի արքայ և ասէ ցնա. ընդէ՞ր խնդրեցեր նմա կին միայն լոկ 'ի լոկոյ, և ոչ խնդրեցեր նմա յայտնապէս զթագաւորութիւնս իմ՝ զոր կամեցաւ առնուլ 'ի ծածուկ 'ի ձեռն կնոջ։ Արդ վասն զի խորհեցան Յովաբ և Աբիաթար զի 'ի ձեռն կնոջ մարթասցեն առնուլ յինէն զթագաւորութ̃իս զոր ետ ինձ տէր, ոն և ոն արասցէ ինձ տէր, այլ յորում աւուր խորհեցաւ թագաւորել, 'ի սմին մեռցի։ Արդ եղբայր նորա կամեցաւ սպանանել զհայր իւր թագաւորութ̃ն հօր իւրոյ՝ զոր յափշտակեաց ա́ռ 'ի նմանէն. և սա կամի սպանանել զորդի Դաւթի 'ի ձեռն թագաւորութ̃ս՝ որ խորամանկի կորզել հանել յինէն։ Բայց ոչ սպան զԱբիաթար քահանայ, վասն զի անարգեցաւ ընդ Դաւթի. այլ առաքեաց զնա Յանաթովթ քահանայից վարել զբաժինս անդաստանաց իւրոց, և կեալ 'ի նմանէն. և կատարեցի յԱբիաթար յազգէ Հեղեայ բանն տ̃յ, զոր ասաց 'ի վերայ տանն Հեղեայ վասն անօրէնութ̃ն զոր գործեցին որդիքն Հեղեայ։

Իսկ իբրև արար ապաւէն Յովաբ զսեղանն, գիտաց Սողոմոն զօրինացն՝ զի ասացեալ էր, թէ "Առ 'ի սեղանոյ անտի իմմէ, վարեսջիր զսպանօղն 'ի մահ"։ Եւ վասն այսորիկ սպան զնա 'ի տունն ապաւինութ̃ե իւրոյ։ Իսկ իբրև սպանին այլ մեղք զՅովաբ, որպէս և հրաման ետ Դաւիթ, ապա գիտաց Սողոմոն եթէ 'ի տեառնէ էր հրամանատուութ̃ին Դաւթի. և վասն այնորիկ կոչեաց զՍեմէի և ասաց ցնա, զի նստցի յԵրուսաղէմ 'ի տեղին սրբութ̃ե և 'ի քաղաքն արքայութ̃ե, և զժառանգութ̃ին՝ որ հաս նմա վիճակաւ։ Եւ զի մի փղձկեսցին միտք նորա և նեղեսցի, ետ նմա զկէս քաղաքին թաղել զմեռեալս իւր; և զքօննուլ յառողջութ̃ե և 'ի հիւանդութ̃ե իւրում։ Յանձն առ Սեմէի և ընկալաւ զբան հրամանի նորա, և ուրախ եղև. վասն զի ետես՝ զի փո-

խմանակ մահուն, որում արժանին էր, արար նմա առաւել պատիւ՝ որում ոչն էր արժանի։ Եւ վասն զի տեառն ետ և զայս, որպէս և հրամայեաց նմա հայրն իւր, յետ երից ամաց փախեան ծառայքն նորա։ Արդ նայեաց և տես, զի եթէ ոչ տեառն յանձն արարեալ էր զիրսն Սեմեայ, ոչ լինէր նա երկայնամիտ զերիս ամս, եթէ ոչ սպանանէր զնա։ Իսկ Սեմէի եթող գիտակ առնել և ցուցանել արքայի՝ զի առաքեսցէ թուղթս զկնի ծառայիցն նորա, և կամ զի թէ առցէ 'ի նմանէ հրաման երթալ ածել զնոսա. և ապա ապաստան յայն՝ եթէ ոչ գիտէ զայս արքայ, արհամարհեաց զերդումն զոր երդուաւ՝ թէ "Մի՛ անցցէ նա ընդ ծործորն Կեդրոնի", չոգաւ նա ածել զծառայս իւր։ Առաքեաց կոչեաց զնա արքայ, և յիշեցոյց նմա զառաջին վրէժսն զոր արար նա ընդ Դաւիթ. յիշեցոյց նմա և զերդումնն և զվերջին պատուիրանն զոր ետ նմա, և վասն ստութե̄ն նորա՝ որ ստեաց զերդումնն տեառն, և զի անարգեաց զհրամանն թագաւորի. իբրև արկ զսոսա զնոքօք, և խառնեաց 'ի մի վայր զերկուսին գյանցանսն, զստութիւն երդման, և զանարգելոյ պատուիրանին, և զթշնամանս հօրն, սպան զնա։ Եւ յայտ եղև ամենայն մարդոյ՝ եթէ ստուգութիւնն մատնեաց զնա 'ի մահն սուսերի։

Ժողովուրդն զի մատուցանէին պատարագս յաւուրս Դաւթի և Սողոմոնի 'ի վերայ մեհենիցն, ոչ եթէ այլում ումեք մատուցանէին զպատարագսն, այլ տեառն. քանզի ողջակէզք էին՝ որ 'ի Գաբաւոնն և 'ի Թափչայ աղբիւրն շինեալ էին։ Արդ այսոքիւք՝ վասն զի ցարդ ևս ոչ էր շինեալ տաճարն, մատուցանէր ժողովուրդն զպատարագս 'ի վերայ սոցա։ Եւ յայտնեցաւ տէր 'ի վերայ Սողոմոնի, և հարց ցնա եթէ զի՞նչ կամիս զի տաց քեզ։ Եւ խնդրեաց 'ի նմանէն ոչ զհոգին սուրբ՝ մարգարէանալ, այլ իմաստութ̄ի՝ դատել զժողովուրդն. զի նովաւ խօսեցաւ առակս և արկ զառասպելս մանկանց ժողովրդեանն իւրոյ՝ որ մերձն էին առ նա, և զշխոյին հարաւոյ և թագաւորացն ազգաց՝ որ հեռաւորն էին։ Քանզի որպէս ընդ դատավճիռ դատին պոռնկաց, սոյնպէս և

զարմացեալ էին որդիք մարդկան ընդ ամենայն դատաստանն՝ որ դատէր նա ։

Բաժանեաց դարձեալ զերկիրն երկոտասան գաւառապետաց. զի վասն մեծ ծախուց ռոճկաց կանանց իւրոց, և բազում երիւարացն զոր ստացեալ ունէր, բաւեսցէ մի մի 'ի նոցանէն դարմանել զարքայ համբարօք իւրովք, և զկանայսն և զերիւարս և ըզգունդն սեփհական ռոճկակեր ամիս մի յամի ։ Արդ այր՝ որոյ հրամայեցաւ թէ մի՛ յաճախեսցէ ստանալ իւր բազում երիւարս, քառասուն հազար ասպատանաց երիւարաց արար իւր. և որում ասացաւն եթէ մի՛ դու և մի՛ փեսայ լինիցիս քանանացւոցն, հազար կին յամենայն հեթանոսաց արար իւր ։ Յաճախեցաւ բազմացաւ իմաստութին Սողոմոնի առաւել քան զեգիպտացւոց խորամանկաց, և քան զԱթենայ արևելեաց, և քան զընկերաց նորա՝ որ յայն ժամանակի իմաստութըն պարծէին ։ Եւ խօսեցաւ երիս հազարս առակս, և հազար և հինգ օրհնութիս. զոր առ հեղգութէ հրէիցն, կամ վասն գերութենն՝ որ 'ի հեթանոսաց գերի երթային, կորուսին զբազումս. և սակաւ ինչ սին 'ի մնոյ յիշատակս փոյթ բարեկամացն Եզեկիայ արքայի 'ի հրէաստանի պահեցան ։ Եւ խօսեցաւ 'ի մայրիցն Լիբանանու և մինչև 'ի բուսուկ՝ որ բուսանիցի յորմ. այս ինքն զի սկսաւ ասել 'ի բարձրաբերձ մայրեացն 'ի սկզբանէ, և կատարեաց 'ի դալար մի՝ որ առ օրին բուսանի, և ելանէ 'ի դալարուտ պահանգի՝ որ արկեալ է յորմ ։

Յամին չորեքհարիւրորդի և ութսներորդի ելից ժողովրդեանն յեգիպտոսէ շինեաց Սողոմոն զտաճարն տեառն. որոյ երկայնութին վաթսուն կանգուն, և լայնութին քսան կանգուն, և բարձրութին երեսուն կանգուն ։ Եւ զի եւթանասուն հազար փայտակոփ, և ութսուն հազար քարակոփ 'ի լերինն, ինձ այսպէս թուի՝ եթէ զթիւ կաւագործին զոր հանին վասն շինուածոյ տաճարին՝ բաւանդակեաց և գրեաց գըրիչն ։ Արդ թէպէտ և բազմութի դասապետացն ոչ տայ մեզ ձեռն թուել, տեսցուք այլ և զայն ևս՝ եթէ դասապետքն ոչ թուեցան. բայց տեսցուք և զայն, զի եթէ քար ուրագի և ամենայն անօթ եր-

կաթի ոչ բախեցաւ 'ի տաճարին իբրև շինէր, այն իսկ է՝ եթէ մի՛ ձօձեսցես զձեռն քո երկաթագործով 'ի վերայ քարանց սեղանոյն, զի մի՛ պղծեսցին նոքօք: Այնդէն 'ի լերին անդ կոփէին կազմէին յօրինէին մածուցանէին ընդ միմեանս, և ապա գային բերէին և առանց երկաթոյ հանէին դնէին 'ի շինուածս տաճարին կարգել կազմել:

Արդ կատարեցաւ տաճարն, և բերին քահանայքն զտապանակն կտակարանաց և զխորանն և զսրբութիւնս նորա և զերկուս տախտակսն Մովսիսի, և եդին 'ի մէջ նորա: Եւ իբրև ել քահանայն 'ի սրբութեէ անտի, եկն լցաւ տաճարն ամպով, որպէս և յայնմ աւուր՝ զի կանգնեցաւ խորան ժամուն: Տէր, դու ասացեր բնականալ 'ի մէգ. զի՞ է ամպս այս զոր արկեր 'ի վերայ տանս այսորիկ, զոր պատուիրեցեր դու եթէ 'ի ձեռն իմ շինեսցի քեզ: Եւ մատոյց զաղօթս Սողոմոն վասն ժողովրդեանն և վասն աշխարհին, իբրև յիշատակեր զանէծսն որ գրեալ էին յօրէնս՝ գալ 'ի վերայ այնոցիկ՝ որ անօրինին, որպէս զի անցցեն 'ի նոցանէն վասն մեծ պաղատանացն՝ որ լինէր նոցա 'ի տաճարին յայնմիկ: Մատոյց դարձեալ աղօթս և վասն օտարաց, զի նկարեսցի աղօթքն որդւոյ Դաւթի. խորհուրդ տեառն Դաւթի, որ հանդերձեալ էր տալ հրաման՝ եթէ աղօթս արարէք 'ի վերայ թշնամեաց ձերոց:

Եւ մատոյց Սողոմոն պատարագս քսան և երկու հազար զուարակս, և հարիւր և քսան հազար խոյս: Արդ նման է այսպէս, եթէ զչորեքտասան աւուրս տօնին մատոյց զպատարագս զայս: Յայտնեցաւ տէր կրկին անգամ 'ի վերայ Սողոմոնի, և ուղղեաց և աւեդ զհիմունս տաճարին 'ի վերայ արդարութեէ շինողացն. եթէ յորժամ դարձցին նոքա 'ի տեառնէ, մատնեսցի և տաճարն 'ի կործանումն թշնամեաց իւրեանց:

Ազդ եղև, լուաւ դշխոյն հարաւոյ 'ի վաճառականացն Սողոմոնի և Խիրամայ զլուր Սողոմոնի և զայն իւրոյ, և կամեցաւ գալ բազում զօրօք և պատարագօք յԵրուսաղէմ: Եւ իբրև եկն եհաս յԵրուսաղէմ, և ետես զամենայն ինչ զոր լուաւն, ետես և այլ ևս

բազում՝ զոր ոչն էր լուեալ : Փորձեաց զնա հարցուածովքն իմաստութե՟, խոստովան եղև՝ զի վաւեր եղև նմա փորձն քան զլուրն : Ուրացաւ 'ի կուոցն օտարոտւոցն . խոստովան եղև յա՟ծ և ասաց, եթէ վասն զի սիրեաց տէր զԻսրայէլ, և արար զքեզ արքայ՝ առնել զիրաւունս և զարդարութի՟ առաջի նորա : Ետ դարձեալ զխունկս առ 'ի պատիւ ա՟յ՝ որում խոստովան եղև, և զոսկի և զականս պատուականս արքայի՝ յորոյ համբաւն եկեալ էր : Յերից քանքարաց՝ զի արար նա վահան մի, այս ինքն 'ի հինգ շանթ ոսկւոյ, և զի եդ զվահանսն յանտառատանն նիզակաց, այս ինքն 'ի զինու տանն նիզակաց և վահանացն ոսկւոյ : Եւ ամենայն թագաւորք վասն իմաստութե՟ նորա, պատարագօք իբրև 'ի հարկէ յամենայն կողմանց գային և պաշտէին զնա :

Եւ սիրեաց Սողոմոն զկանայս բազումս օտարազգիս . և զդուստրն Փարաւոնի իբրև ած նա կնութե՟, ոչ ինչ եպերեաց նմա ա՟ծ, վասն զի մի էր և ոչ ուրացոյց զնա . իսկ իբրև անկաւ զկնի բազմաց, որք հեթանոսացուցին զնա, եպերեաց զնա վասն այլոց բազմաց, և վասն առաջին դստերն Փարաւոնի զոր յառաջն ած կնութե՟ : Արդ զի յաճախեաց արար զկանայսն 'ի դստերաց թագաւորաց և մեծամեծաց, որպէս զի 'ի ձեռն բազում որդւոցն որ լինէին նմա, և առնուն հարք իւրեանց և սնուցանեն 'ի թագաւորութե՟ն իւրեանց, և թագաւորեցուսցեն զնոսա վասն սիրոյն որ առ Սողոմոն, և սփռեսցի ընդ աշխարհս թագաւորութիւն նորա : Արդ զթագաւորութիւնն տեառն Դաւթի, այն որ զգուշութե՟ սրբութե՟ տարածանել ընդ աշխարհս հանդերձեալ էր, որդին Դաւթի սիրոյն բազում կանանց խորամանկեցաւ առնել զնա :

Արդ զկանայս զոր սիրեաց Սողոմոն, գարշեցուցին զնա առաջի երեսաց տեառն, և հանին զնա յաչաց ա՟յ : Եւ փոխանակ թագաւորութե՟ն զոր խորհեցաւ ընդ ամենայն ազգս տիրել, և ոչ զիւրոյ ժողովրդեանն ըմբոշխնեաց . զի ազգն Յուդայի միայն մնաց առ նմա . բայց ոչ եթէ վասն լկտութե՟ն Սողոմոնի, այլ վասն երդմանն ա՟յ զոր երդուաւ հօրն Սողոմոնի :

Եւ զի խորհեցաւ՝ եթէ ՚ի թագաւորել որդւոց նորա ընդ ամենայն կողմանս՝ յամենայն կողմանց խաղաղութիւն յաճախի առ նմա, խոտորելով իւրով յա̃յ՝ անցոյց զանցոյց զխաղաղութիւնն զոր ունէր։ Վասն զի Բերհդադ, որ թագաւորեցաւն ՚ի Դամասկոս, եղև սատան Իսրայէլի զամենայն աւուրսն Սողոմոնի։

Պատառեաց Ախիա մարգարէ զնոր զգեստն իւր յերկոտասան պատառս. խորհուրդ ժողովրդեանն, որ նորոգապէս բաժանէին ազգ նոցա յերկուս թագաւորութ̃իս։ Խոստացաւ զթագաւորութ̃ին Յորոբովամու ուխտիւ. զի եթէ արդարանայ իբրև զԴաւիթ, կարգեալ հաստատի թագաւորութ̃ին նորա. ապա եթէ խոտորեսցի, եղիցի նմա ընդդէմ սորին չար հակառակ։ Եւ այլ պատգամք Սողոմոնի ահա գրեալ են ՚ի դպրութ̃ի պատգամաց Սողոմոնի, այս ինքն ՚ի դպրութ̃ի առակաց նորա՝ որ կորեանն։

ԳԼՈՒԽ Բ

ԹԱԳԱՒՈՐԵՑՈՒՑԻՆ ժողովուրդն զՀռոբովամ, և ասեն ցնա. “Թեթևացո մեզ ՚ի խիստ հնազանդութ̃է հօր քո, զի հնազանդեաց զմեզ ՚ի հարկս չարաչարս և մեծամեծս, և պաշտեսցուք զքեզ„։ Արդ ինքն փոխանակ զի մխիթարեսցէ զժողովուրդն ՚ի չարեաց անտի, զի ՚ի պատճառս եւթն հարիւր տիկնացն, և քառասուն հազար ապաստանին հնազանդեցոյց զնոսա, նա առ յաւել նոցա ցաւ ՚ի ցաւոյ վերայ. զի կրկնապատիկ քան զհարկսն հօր իւրոյ խոստանայր ՚ի վերայ նոցա՝ թէ հնազանդեմ զձեզ. պարանոցքն, որ են իբրև զաղի կակուղ զոր ընուն աւաղով, սպառնայր նոցա՝ եթէ խրատէ զնոսա. զի վասն այսորիկ եղև գրգռութ̃ին, և ապստամբեցաւ Իսրայէլ ՚ի տանէն Դաւթի, որպէս և ասացն Ախիա մարգարէ։

Իսկ Յորոբովամ թող ՚ի բաց զի կատարեսցէ ըզբան մարգարէին որ օծն զնա. և չոգաւ զկնի խորամանգութ̃ե իւրոյ։ Յարեաւ արար նա երկուս որթա֊

գլուխս ձուլածոյս, և զետեղեաց զժողովուրդն առ նոսա. զի գուցէ եթէ իբրև ելանիցէ ժողովուրդն յԵրուսաղէմ 'ի պատճառս պատարագացն և տօնից, տեսանիցեն զկազմուած գեղեցիկ յօրինեալ տաճարին, և զսպաս պաշտամանն քահանայից, և կակղանայցէ և Հռոբովամ խօսել ընդ նոսա զբանս բարւոքս, և դառնայցեն առ տէրն իւրեանց, և սպանանիցեն զիս: Խորամանկի արդ աւասիկ դարձուցանել յա̃յ, որ ետ նմա զթագաւորութի̃ ժողովրդեանն. և պատուիրեաց նմա զի մի՛ խոտորեսցին 'ի նմանէն: Եւ առ արար ոչ մի որթագլուխ իբրև զայն յանապատին, այլ երկուս. վասն զի ետես զժողովուրդն զի փոխանակ միոյն զոր արար Ահարոն, նոքա բազմաց երգէին և գովէին: Հնարեցաւ արար երկուս, և տարաւ եդ զմինն 'ի Բեթէլ, և զմիւսն 'ի Դան: Եւ ասէ ցնոսա, եթէ “Մի՛ ինչ աշխատիք դուք յամենայն կողմանց երթալ մատուցանել պատարագ յԵրուսաղէմ. երկիրս ամենայն երկիր պարգևաց է. և յամենայն վայրի ուր և մատուցանեմք պատարագ, յօրհնեալ երկրի մատուցանեմք„: Եղև. դարձեալ և քուրմ աստուածոյն զոր ձուլեացն:

Եւ մինչ դեռ ելանէր դնել զխունկս 'ի վերայ սեղանոյն, և ահա մարգարէ Ա̃յ եկն 'ի Հրէաստանէ, և ասէ ցսեղանն յանուն տեառն, եթէ որդի ծնանի 'ի տանէն Դաւթի, այն որ հրաժարեցաւ ժողովուրդն 'ի թագաւորութենէն նոցա: Եւ սեղանն՝ որ համարեցաւ ձեզ՝ եթէ 'ի պատճառս դորա ըմբոշխնէք դուք զթագաւորութիւն ձեր, Յովսիա՝ որ 'ի տանէն Դաւթի է, այրեսցէ 'ի վերայ քո, և զքուրմս մեհենից որք դնեն խունկս 'ի վերայ քո: Եւ զի տացի նշան յառաջ քան զգործն, և զի ցուցցէ նոցա եթէ 'ի տեառնէ առաքեցաւ դարձուցանել զնոսա առ իւր յերկրպագութե̃ որթագլխացն, խօսել սկսաւ և ասէ, թէ ահաւասիկ սեղանն պատառի 'ի ներքոյ Յորոբովամայ, իբրև կայ և վարի մոխիրն՝ որ 'ի վերայ նորայն էր: Վառեցաւ ցասմամբ արքայն 'ի վերայ մարգարէին, վասն այսորիկ՝ զի յանդիման ամենայն Իսրայէլի մարգարեացաւ 'ի վերայ քրմացն և 'ի վերայ սեղանոյն: Դարձաւ և ասէ. “Հապա կալարուք

զդա„։ Յաւելաւ միւս ևս նշան ժողովրդեանն և արքային. զի զբազուկն զոր ձգեաց 'ի նա, անդէն ցամաքեցաւ, և յինքն այլ ոչ կարաց տանել զնա։

Իսկ իբրև սեղանն պատառեցաւ, և ձեռն նորա ցամաքեցաւ, դարձաւ աղաչել մարգարէին՝ զի խնդրեսցէ յա՟յ վասն ձեռին նորա, և դարձցի 'ի տեղի իւր։ Եւ զոր օրինակ կաց յաղօթս Եղիա 'ի լերինն անդ Կարմեղա վասն իջանելոյն անձրևու յանդիման ամենայն ժողովրդեանն, զի գիտասցեն եթէ աղօթք նորա իջուցանեն զանձրև, և ոչ եթէ Բահաղ. սոյնպէս եկաց յաղօթս և մարգարէն՝ որ եկեալն էր 'ի Հրէաստանէ առաջի սեղանոյն յանդիման ամենայն ժողովրդեանն։ Զի հաւատասցեն եթէ ա՟ծ ցամաքեցոյց զբազուկ նորա և ողջացոյց, և ոչ եթէ որթագլուխքն՝ որոց նուիրէրն։ Նա և ինքն իսկ գիտաց եթէ չիք իսկ շահ յորթագլուխս նորա. և վասն այնորիկ խնդրեաց նա 'ի ձեռն մարգարէին 'ի ճըշմարիտ ա՟յ զբժշկութ՟ի ցամաքեալ բազկին իւրում։

Իսկ իբրև բժշկեցաւ արքայն, փոխանակ զի խոստովան եղիցի ամենայն Իսրայէլ եթէ Տէր է ա՟ծ, և ինքն դարձեալ Յորոբովամ՝ զի բեկցէ զորթագլուխսն զոր ձուլեաց, ասաց ցմարգարէն որ բժըշկեաց զնա. «Եկ ընդ իս 'ի տուն, և կեր հաց, և տաց քեզ պարգևս„։ Եւ վասն զի բարկութ՟բ առաքեցաւ նա անդ, և վասն զի ամենայն զոր ինչ և էր անդ զոր պատրաստեալ տօնին պատկերացն ձուլածոյ, պիղծ էր առաւել վասն զի պատրաստեցաւ նա. իբրև եցոյց զբարկութ՟ին որ գալոց էր 'ի վերայ աշխարհի. և զի հրաման առ 'ի նմանէն զի մի՛ կերիցէ անդ հաց. բայց թող զնոսա և ընդ այլ ճանապարհ անց երթալ յաշխարհ իւր։

Արդ եկեալ որդիք մարգարէին որ 'ի Բեթէլ, պատմէին հօրն իւրեանց զամենայն անցսն որ ինչ անցք անցին ընդ սեղանն և ընդ արքայն, և զամենայն խօսսն զոր խօսեցաւ որ ինչ լինելոցն իցէ քրմաց սեղանոյն 'ի վերայ նորին սեղանոյն ։ Եւ արդ յարուցեալ ճեպ 'ի ճեպոյ ալևոր մարգարէն հանդերձէր զգրաստ իւր, և պնդէր զկնի մարգարէին ա՟յ, և ժամանէր նմա իբրև երթեալ նստէր ընդ բևեկնեաւ

միով. և սոյն իսկ այս, զի արգել զգրաստ իւր և անդ նստաւ, խնդիր ինչ գոյ 'ի նմա. զի եթէ յումէ արգելաւ, մինչև եկեսցէ մարգարէն ալևոր զի փորձեսցի նովաւ. և վասն զի բազումք անցանէին ընդ այն ճանապարհ իբրև 'ի վաճառի աւուր: Իսկ իբրև եգիտ զմարգարէն և ուսաւ 'ի նմանէն, եթէ արդարև նա ինքն է, վասն զի թուեցաւ նմա եթէ վասն հեթանոսութեան որ էր 'ի Բեթէլ ոչ կամեցաւ ուտել անդ հաց, մատուցեալ տայր նմա զհաւանութիւնս, զի դարձցի ընդ նմա և հանգուսցէ զնա հացիւ և ջրով: Իսկ իբրև յաւել երկրորդեաց ալևորին զոր ինչ ասաց ցարքայն Յորոբովամ, ետ նմա պատասխանի՝ և ասէ ցնա. "Ես ինձէն մարգարէ եմ իբրև զքեզ, և հրեշտակ տեառն ասաց ցիս զի դարձուցից զքեզ":

Իսկ մարգարէն որ եկեալ էր 'ի Հրէաստանէ, փոխանակ զի պահանջեսցէ նշան ինչ յալևոր մարգարէէն, ոչ զի թէ մարգարէ էր և կամ չէր մարգարէ, քանզի լուեալ էր նորա եթէ մարգարէ գոյ 'ի Բեթէլ, այն զի բազում որդւոց մարգարէից յետ այսորիկ՝ որ եղև 'ի նմա, այլ զի գիտասցէ 'ի ձեռն նշանին եթէ արդարև ճշմարիտ 'ի տեառնէ առաքեցաւ. և կամ թէ ինքն իսկ նոյն մարգարէն՝ որ եկեալ էր 'ի Հրէաստանէ՝ հարցցէ ցա՟ծ, եթէ արդարև նա՞ առաքեաց զալևոր մարգարէն թէ ոչ. արդ ոչ նշան ինչ խնդրեաց, և ոչ յա՟յ եհարց. և յարեաւ դարձաւ ընդ ճանապարհն ընդ որ երթեալն էր, այնու՝ զի վասն սորին իսկ իրի առեալ էր նորա զհրաման, զի մի՛ դարձցի ընդ նոյն ճանապարհ ընդ որ եկեալն էր:

Իսկ իբրև դարձաւ ընդ ալևորին և եմուտ 'ի տուն նորա, և իբրև կերան և արբին, մինչ դեռ 'ի հացի անդ էին՝ եղև պատգամ տեառն 'ի վերայ ալևոր մարգարէին և ասէ, թէ "Վասն զի դառնացուցեր դու զբան բերանոյ տեառն, մի՛ մտցէ դիդ քո 'ի գերեզման հարց քոց": Եւ վասն զի ոչ ցոյց՝ եթէ յորում աւուր մեռանէր, և ոչ եթէ ե՛րբ, և կամ թէ ո՛ւր մեռանէր, յարեաւ նստաւ 'ի գրաստու իւրում, և դարձաւ 'ի Հրէաստան: Եւ մինչ դեռ գնացեալ երթայր ընդ աներկիւղ ապահով ճանապարհն բազմախիտ ընդ խճո-

ղեալ մարդկանն՝ որ խաղացեալն գնային 'ի վաճառուէ անտի, և իբրև այն ինչ զի եթէ երկիրն ծնաւ 'ի նմին ժամու զառեւծն, և իբրև զանց առեալ խուսէր յամենայն մարդկանէն և 'ի նմին մարգարէին գրաստուէն, և սպանանէր զմարգարէն միայն միայնուկ ։ Իսկ իբրև տեսին որք եկին դէպ եղեն և պատահեցան, զահի հարեալ երկնչէին յառեւծուէ անտի, զի զգուշացեալ պահէր զմարգարէն ։ Նոքա եկեալ ցուցանէին 'ի քաղաքի անդ ։

Եւ իբրև զայն լսէր ալևոր մարգարէն, որ նենգեաց զնա և խաբեաց և անցոյց զպատուիրանաւն, ճեպ 'ի ճեպոյ գայր հասանէր 'ի տեղի անդր ։ Եւ փոխանակ զի ինքն երկեաւ առաւել քան զամենայն մարդ, վասն զի եղև պատճառ մահու մարգարէին, ինքն միայն միայնուկ իբրև վստահ ոք որ զանձինն գիտիցէ, եկն մերձեցաւ առ առեւծն գազան՝ գազանաբարոն ։ Իսկ առեւծն դարձեալ, որ սպան զմարգարէն՝ որ անց զպատուիրանաւն, և կայր պահէր զգրաստն, իսկ 'ի մարգարէէն՝ որ պատճառն էր պատուիրանազանցութեան մարգարէին՝ ամաչեցեալ պատկառէր ․ և զգիակն զոր ոչ կալաւ յանձին տալ ամենայն անցաւորաց ճանապարհին, սմա իբրև տեառն առեալ զաւանդն դարձուցանէր անդրէն ։ Կորացեալ արկանէր զակն իւր յալևորէ անտի, զի մի երկեցուսցէ զնա ․ և հաւանեալ տայր զդի մարգարէին ցմարգարէն 'ի թաղել ․ և 'ի չէն տեղւոյ անտի՝ ուր եբեկ զմարգարէն, փոյթ 'ի փութոյ ճեպեալ երթայր վաղվաղակի 'ի դաշտ անդր անապատ 'ի կայանսն առաջինս ։ Բայց մարգարէն ալևոր լաց զընկերն իւր, և թաղեաց զնա յիւրում գերեզմանի ։ Եւ արդ առեալ տայր պատուէր որդւոցն իւրոց, զի առ ոսկերմն նորա դիցեն զոսկերս ալևորին ․ վասն զի հաստատ լինելոց է պատգամն տեառն 'ի վերայ սեղանոյն 'ի Բեթէլ, և 'ի վերայ ապարանիցն, և 'ի վերայ մեհենիցն՝ որ 'ի քաղաքին Շամրնի են ։

Արդ թէպէտ և 'ի վերայ սեղանոյն՝ որ 'ի Բեթէլն էր՝ մարգարէացաւ մարգարէն՝ որ 'ի Հրէաստանէն եկեալն էր, բայց սակայն 'ի վերայ մեհենիցն և ապարանիցն Շամրնի ոչ մարգարէացաւ նա ։ Քանզի

յայնմանէն զի ասաց՝ թէ ապրեցուցին ոսկերքն մարգարէին՝ որ եկեալն էր 'ի Հրէաստանէ՝ զոսկերս մարգարէին՝ որ եկն 'ի Շամրնէն, յայտ է՝ եթէ ինքն մարգարէս այս ալեւոր զի 'ի Շամրնէ եկն 'ի Բեթէլ, եւ նա ինքն մարգարէացաւ 'ի վերայ ապարանիցն եւ քաղաքին շամրտացւոց: Եւ վասն զի յանգէտս հեզուլթք դարձոյց զնա, եթէ եպերեալ է՝ եւ եթէ ոչ է եպերեալ, զայս ոչ գիտեմք մեք. տաց՝ թէպէտ եւ համարեսցուք եթէ եպերեալ է. վասն եպերանացն նորա զի ոչ վկայեն մեզ գիրք՝ առնուլ 'ի նմանէն ըզմարգարէութիւն նորա՝ զորմէ վկայեն նմա գիրք, ոչ կարեմք մեք գիտել:

Յետ այսորիկ անկեալ դնէր յախտն մեծ Աբիա որդին Յորոբովամու. եւ առաքեաց զկինն իւր գիտել ճշմարտել 'ի մարգարէէ անտի որ օծն զնա՝ զինչ անցք անցանելոց իցեն ընդ հիւանդ որդին նորա, զի անկեալ դնէր 'ի մեծ ախտի: Եւ վասն զի անարգեաց նա զքուրմն եւ զմարգարէսն ձուլածոյ որթուցն, եւ 'ի ճշմարիտ մարգարէէ անտի առաքեաց ուսանել գիտել ճշմարտել, վասն այսր միոջ բանի՝ զոր հրամայեաց կնոջն իւրում, եւ եմուտ դի պատանեկին 'ի գերեզման: Քանզի ամենայն որ եւ կոտորեցաւ Յորոբովամու 'ի ձեռն Բայաշու, շունք եւ թռչունք կերան զնոսա. բայց կոտորեցաւ եւ տունն Բայաշու 'ի ձեռն Զամբրեայ: Եւ թագաւորեցաւ զկնի նորա Զամբրի, այն՝ որ շինեացն զՇամրին 'ի լեառն Շեմերեայ:

Եւ թագաւորեցաւ դարձեալ Ախաաբ որդին իւր ըստ նմանէն: Եւ վասն զի փոքր թուէր յաչս նորա երկիր պագանելն ձուլածոյ որթուցն Յորոբովամայ, յարեաւ նորոգեաց ինքն առանձինն զԲահաղ, եւ շինեաց Բահաղու բագին 'ի Շամրին, եւ շինեաց զտեղի անիծիցն Յեսուայ զԵրիքով: Բայց կարի վասն այսորիկ առաւել շինեաց զնա, զի ցուցցէ եթէ չիք ինչ շահ յանէծսն Յեսուայ: Եւ վասն զի այպանեաց զբանն Մովսիսի՝ զոր ասաց, “Զի եթէ մեղիցէք տեառն, արարից զերկինս 'ի վերուստ երկաթ, եւ զերկիրս 'ի ներքուստ պղինձ„. եւ ասաց՝ զոր օրինակ ոչ եղեւ բանն Մովսիսի, սոյնպէս եւ ոչ լինի բանն Յեսու-

վայ աշակերտին նորա, քննախնդիր նախանձայոյզ լինէր Եղիա, և ձեռն յանձին հարեալ սկսաւ ասել առաջի Աքաաբու և նախարարացն նորա, եթէ «Կենդանի է տէրանց տէր՝ որոյ առաջի կացի ես մարգարէ, եթէ եղիցի յայսոսիկ ամս ցօղ և կամ թէ անձրև, բայց եթէ ասացից ես»։

Արդ 'ի ժամուն զի ասաց զայս, երկինք ամպով ծուպ 'ի ծուպ ծովացեալ կայր. քանզի ոչ եթէ յամարանի կապէր զերկինս յանձրևոյ, այլ 'ի ժամ անձրևուն արգելոյր զերկինս յանձրևոյ։ Արդ ամպքն առաջի բանին նորա մատուցեալ անգրիձէին բղխոնաւալից ստորոտս իւրեանց, և յոչ ինչ՝ ուստի եկեալըն էին՝ դէտ արարեալ դառնային։ Արդ ամպն որ փարատեցաւն 'ի նոցանէն 'ի բանէն Եղիայի առաջի դրանն Շամրնի, ոչ տեսին զնա մինչև եկն Եղիա 'ի լեառն Կարմեղա։ Եւ վասն զի մի սպանցէ զնա Աքաաբ իբրև գտցէ զնա, և կամ թէ երկինք ոչ բանայցեն զկապեալ արգանդն առ 'ի տալ անձրևոց, և կամ թէ բանն Եղիայի զոր ասաց՝ թէ մինչև ասացից ես՝ սուտ լինիցի, առնու դնէ զնա 'ի ձորն առաջի Յորդանանու 'ի դարանի, և տայ նմա հրաման ըմպել 'ի ջուրց նուաղելոց. 'ի ձորոյն ծործորակի մի արբցէ, գուցէ գտանիցէ զնա ամպարիշտ և անօրէն թագաւորուհին՝ որ 'ի խնդիրն անկեալ էր խնդրել զնա։

Իսկ զհացն և զմիսն՝ զի հրամայեաց ագռաւուցն բերել նմա, կամ 'ի տեղւոջ ուրեք լինելով լինէին և առնուին բերէին նմա, կամ իբրև թռչէինն գալ առ նա 'ի ժամ ճաշոյն և ընթրեացն՝ լինէր 'ի բերան միոյն հաց, և 'ի բերան միւսոյն ևս միս. քանզի ոչ եթէ ոմանք պատրաստէին ագռաւուցն. վասն զի ոչ ասաց եթէ քահանայիցն հրամայեցի և կամ այլոց մարդոց կերակրել զքեզ, այլ զի հրամայեցի ես ագռաւուցն կերակրել զքեզ։ Առեալ բերէր նմա ագռաւն զմիսն, և ոչ մերձենայր 'ի նա. և բարձեալ ունէր ընկեր նորա զհացն, և ոչ կրծոյր 'ի նմանէն։

Իսկ Եղիա՝ որ նախանձեցաւ զնախանձ օրինացն Մովսիսի, նա ինքն իսկ եղև լուծիչ օրինացն նորա. քանզի յագռաւուց՝ որ պղծեալն էր յօրինաց՝ ուտէր Եղիա նախանձայոյզ քննախնդիր օրինացն։ Պիղծ

ագռաւք դարմանիչք մարգարէին խորհուրդ եղեն պեղծ հեթանոսացն մկրտութե̃ն ջուրց աւազանին ։ Եւ փոխանակ հայհոյութե̃ն առեալ տանին զօրհնութիւնս ա̃յ . և ագռաւք դարմանիչք մարգարէին ՚ի մարգարէէ անտի կերակրէին նոքա , զի ՚ի նշխարաց նորա ճաշոյն և ընթրեացն կերակրէին նոքա ։ Դարմանիչք եղեալ էին նորա , և առ ՚ի զբօսանս համարեալ էին նմա . զի յորժամ դնէին առաջի նորա՝ ուտէր , ուտէին և նոքա ։ Իսկ իբրև ոչ գիտաց նախանձայոյզ մարգարէն վասն անօրէնութե̃ն Իսրայէլի զտառապանսն Իսրայէլի , ցամաքեցոյց ա̃ծ զաղբեւրն ծործորակի . և ընդ ցամաքել աղբեւրականն , և կերակուրն ագռաւուց՝ զոր բերէինն՝ արգելաւ ՚ի նմանէն ։ Քանզի զի՞նչ պիտոյ էր առանց ջուրցն . զի աւելի իմ̃ համարեալ էր նմա առանց ըմպելոյն ։

Եւ զի մի՛ իբրև թաքուցեալ կայցէ ՚ի ժողովըրդեանն՝ գտանիցէ զնա ձեռն Եզաբէլի , և կորուսանիցէ զնա և առ որս թաքուցեալն էր , առաքէ զնա ա̃ծ ՚ի Ծարփաթ հեթանոսաց , զի ցուցցէ նմա զսէրն հեթանոսաց . և ցուցցէ նմա դարձեալ՝ թէ յորպիսի նեղութե̃ տագնապեալ են անթլփատքն , որք ոչն այպանեցին զօրէնսն Մովսիսի իբրև զԱխաբ ։ “Անց երթ , ասէ , ՚ի Ծարփաթ . ահա հրամայեցի ես կնոջ այրւոյ կերակրել զքեզ „ ։ Արդ թէպէտ և ՚ի Ծարփաթ հեթանոսաց երթայր՝ հարցանել և գիտել մարթ էր նմա , ՚ի վերայ այրւոյն՝ զոր ոչ ցոյց նմա զանունն՝ զի՞արդ մարթ էր նա կալ ։ Եւ վասն զի ասաց ցնա՝ եթէ “Ահա հրամայեցի ես այրւոյն „ , թուեցաւ նմա եթէ նոյն ինքն այրին ելեալ նստիցի ՚ի դրացն Ծարփաթու , և դէտակն ունիցի նմա ։

Բայց վասն զի մի՛ թեթևասցի ծանրութի̃ն նորա՝ յորժամ մատուցեալ հարցանիցէ զայրւոյ կնոջէ անտի Ծարփաթացւոյ , խնդրեաց ՚ի տեառնէ իւրմէ զի գտցէ զնա առ դրանն քաղաքի , զայն՝ զոր յայտնութե̃ք և կամ տեսլեամբ հրամայեցաւ նմա կերակրել զմարգարէն ա̃յ ։ Քանզի իբրև խաղացեալ երթայր նա, իբրև առ մեծատուն կին երթայր ։ Քանզի իբրև եգիտ զնա զի գնայր բոկ , և զգեցեալ էր թամբատեակ մի , և քաղէր կրկուտ , և նման էր նա ՚ի քաղցէ անտի

իւրմէ խարեալ խանձողոյ, սկսաւ մտախոհ լինել Ե-
ղիա ընդ անձն և ասել. այս իցէ արդեւք կերակրիչն
մեր, առ որ պնդեալս եկեալ եմ, եթէ այլ ոք իցէ ար-
դեւք ։ Զի եթէ ճշմարտեալ հաւատասցէ թէ նա ինքն
է, տեսիլն նորա չտայր նմա ձեռն. զի եթէ զմտաւ
ածիցէ եթէ ոչ է նա, նշանն զոր խնդրեաց՝ չտայր նմա
թոյլ ։ Եւ վասն զի ամաչեաց ինքն յինքենէ խնդրել
զհաց 'ի նմանէն, խնդրեաց 'ի նմանէն ջուր ։ Եւ իբրև
ետես՝ զի ընթացաւ 'ի բերել նմա, յաւել խնդրեաց
'ի նմանէն և հաց ։ Իսկ իբրև երդուաւ կինն Ծարփա-
թացի 'ի տէր, յորում ժամանակի ամենայն Իսրայէլ
յորթսն ձուլածոյս և 'ի դիմն օտարոտիս երդնուին,
և ասաց՝ եթէ ոչ ինչ գտանի աղախնոյ քում, բայց ե-
թէ ափ մի ալեւր 'ի սափորի անդ, և սակաւ մի եւղ 'ի
սրուակի, ապա ճշմարտեալ գիտաց Եղիա՝ եթէ զոր
օրինակ կերակրեաց 'ի ձոր անդր զագռաւս դարմա-
նիչս իւր, սոյնպէս հանդերձեալ է կերակրել 'ի Ծար-
փաթ և զայրին ասպնջական զկերակրիչն իւր ։ Քա-
ջալերեաց զնա և ասէ ցնա. մի երկնչիր 'ի մահուա-
նէ որդւոյ քոյ. բայց միայն նախ ինձ արասջիր իբրև
քահանայի զպտուղ ալեւրոյն. ոչ եթէ բազմանայ
քեզ, այլ զի ոչ պակասէ քեզ ։ "Այսպէս ասէ տէր,
որ առաքեացն զիս առ քեզ. ալեւրն, ասէ, 'ի սա-
փորոյն ոչ սպառեսցի, և իւղն 'ի սրուակէն մի պա-
կասեսցէ". ոչ մինչև ասացից ես՝ որպէս ցԱխաբն
ասայի, այլ մինչև տացէ տէր անձրև 'ի վերայ երկ-
րի ։ Եւ վասն զի ետես զնեղութի̃ և զտառապանս
հեթանոսաց անդէն առ դրանն Ծարփաթ քաղաքի,
լոյծ զերդումնն զոր երդուաւն Ախաբու արքայի առ
դրանն Շամրնի ։ Եւ զի ասաց՝ եթէ "Եկեր ինքն և
նա և ընտանեակքն իւր", յայտ է՝ եթէ մեծատուն
էր կինն, և վասն մարդակոտոր սովոյն արձակեաց
զընտանեակսն իւր, զի երթիցեն հնարիցեն ուրեք ու-
րեք և կեցցեն ։ Իսկ իբրև բազմացաւ նմա ալիւրն,
ժողովեաց զայնոսիկ՝ զորս առ 'ի չգոյէ կերակրոցն
հանեալ ցրուեալ էր զնոսա ։

Արդ որպէս տրտմեցոյց զնա ա̃ծ 'ի ձոր անդր ցա-
մաքելոյ աղբեւրականն, սոյնպէս տրտմեցոյց զնա և
'ի Ծարփաթ մահուամբ որդւոյ այրւոյն ։ Բայց տըրտ-

մութ՟ն նորա յուրախութ՟ին դարձաւ . զի յարութ՟ին մանկանն զառաքինութիւն 'ի մէջ հեթանոսաց ետ նմա : Նա առ զմանուկն և հան զնա 'ի վերնատունն . և զմայրն և ոչ 'ի ժամ յարութ՟ե որդւոյն իւրոյ ետ նմա կոխել զսեմս վերնատանն : Եւ զի կշռեցաւ 'ի վերայ նորա երիցս անգամ, զի նկարեսցէ զխորհուրդըն Երրորդութ՟ե : Եւ կոչեաց և դարձոյց զոգի մանկանն 'ի մարմին անդր, զի նկարեսցէ զտիպս այնորիկ՝ որ 'ի ձայն փողոյն հանդերձեալ է արկանել զհոգիսն 'ի մարմինս ամենայն որդւոց մարդկան : “Տես ասէ, զի կեաց որդի քո ”. այն զի ամենայն աստուածքն հեթանոսաց ոչ կարէին կեցուցանել զնա : Եւ զի ասաց՝ եթէ “Այժմ գիտացի եթէ մարգարէ ես դու այ՟, և բանն տեառն 'ի բերան քո ճշմարտութ՟բ ”. վասն զի թէպէտ սափորոյն և սրուակաւն՝ զի սերացան և աճեցուցին որ ինչ արկեալ էր 'ի նոսա, և եղև խիստ տարրն անխաղաց սափորոյն և սրուակին՝ արմատք գնայունք և աճունք, և ցուցին զպտուղն զալիւրոյն և զիւղոյն՝ որպէս և ծառ զպտուղն իւր, երևեցաւ և յայտ եղև՝ եթէ դու ես այն՝ որ զերկինսն կապեաց, բայց սակայն կենդանութ՟բ մեռելոյս՝ որ գրտաւս 'ի քեզ՝ ճշմարտեալ գիտացի, զի բանիւն տեառն զամենայն ինչ զոր և կամիս՝ առնես դու . այս ինքն և զերկինս կարող ես լուծանել դու :

Արդ թէպէտ և լուծեալ էր զերդումն Եղիայի 'ի Ծարփաթ առաջի այ՟, բայց սակայն տունն Ախաբու այսմ չէին գիտակ . զի վասն այսորիկ ասաց ցնա տէր իւր . “Անց երթ տես զԱխաբ, և տաց անձրև 'ի վերայ երկրի ” : Բայց սակայն ոչ ինչ դժուարեցաւ նա, խանձայրոյզ քինախնդիրն, և ոչ երկեաւ անգամ 'ի սպառնալեաց անտի Եզաբելի . այլ անց երևեցաւ նախ Աբդիայ՝ որում արժանին էր, և առաքեաց զնա տալ աւետիս արքային և ժողովրդեանն վասն անձրևոյ : Բայց երկեաւ զահի հարաւ Աբդիա, զի գուցէ եթէ առնուցու զնա հոգին այ՟ և արկանիցէ 'ի տեղի ուրեք, որպէս 'ի ձորն և 'ի Ծարփաթ, փակեաց Եղիա զանձն իւր ընդ երդմամբ՝ զի ճշմարտեալ հաւատասցէ Աբդիու, և երթիցէ ցուցցէ արքային : Ցոյց նմա Աբդիա և զկոտորած մարգարէիցն զոր կո-

տորեացն Եղաբէլ. և զի Թաքոյց նա հարիւր մարգա-
րէ, և կերակրեաց զնոսա հացիւ և ջրով, զի աստի
և յայսմ բանէ կարի նախանձայոյզ եղև Եղիա՝ եթէ
որպէս արարն Իզաբէլ՝ արասցէ նմա. այս ինքն զի
ստուգութ՟ն կոտորեսցէ զքուրմսն Բահաղու վրէժ-
խնդրութ՟ե մարգարէիցն ճշմարտութ՟ե՝ զոր կոտո-
րեացն անօրէնութ՟բ Իզաբէլ։

Չոգաւ Աբդիու ըստ բանի մարգարէին, և ասաց
ցարքայն՝ եթէ ահաւասիկ Եղիա։ Ողն բեկեցաւ Ա-
խաբու, և եկեալ ընդ առաջ Եղիայի։ Արդ թէ-
պէտ և ընդ առաջ գալն Ախաբու թուէր այսպէս՝
եթէ պատուելով պատուեաց զմարգարէն, բայց սա-
կայն պատգամօքն բանիցն իւրոց թշնամանելով թըշ-
նամանեաց զնա. “Դու՞ ես, ասէ, խռովիչն Իսրայէլի„.
այս ինքն չարչարիչդ Իսրայէլի. իսկ Եղիա դարձոյց
անդրէն ըստ ձախող բանիցն նորա ձախողակի պատաս-
խանի և ասէ. ես ոչ ինչ խռովեցուցի զժողովուրդն,
այլ խռովեցուցեր դու և Զամբրիեայ հայրն քո. զի
նորոգեցէք դուք զերկրպագու՟ի որթուցն ձուլածոյ,
և այպանեցէք զսուրբ օրինօքն Մովսէսի. զի վասն այ-
սորիկ արգելան երկինք, և տառապեցաւ ժողովուրդս
՚ի նեղութենէ սովոյ։

Իսկ պատասխանի Եղիա՝ և ասէ ցԱխաբ. “Հրա-
ման տուր ժողովել զամենայն Իսրայէլ ՚ի Կարմե-
ղա„։ Զի իբրև ցուցցէ զսքանչելիսն առաջի ժողո-
վըրդեանն, և ծանիցէ ամենայն Իսրայէլ՝ եթէ չէ կա-
նուխգիտութ՟ին ՚ի մարգարէսն Բահաղու, այնոքիկ՝
վասն որոց կարծէինն զայս. զի եթէ գիտացեալ էր
նոցա՝ եթէ սատակին կոտորին, ոչ ելանէին նոքա ՚ի
Կարմեղա ՚ի մեծ նեղութ՟ին։ Իսկ իբրև ժողովեցանն
և եկին միահամուռ, խօսել սկսաւ Եղիա և ասէ.
մինչև ցե՞րբ բաժանեալ եմք մեք ՚ի տանէն Յուդայի.
արդ եթէ տէր է ա՟ծ, որպէս և յուդայեանքն ա-
սեն և քահանայքն և ճշմարիտ մարգարէքն նոցա,
երթիցուք զկնի նորա. և եթէ Բահաղ է, որպէս և
սուտ քուրմքն նորա վկայեն, երթայք զկնի նորա.
թողեալ լիցին ՚ի բաց նշանքն եգիպտացւոց և անա-
պատին՝ զոր ինչ արարեալն է ձեզ տեառն, և արդ
մոռացօնք եղեն։ Արդ արասցուք այժմ ես և նոքա

զողջակէզս պատարագաց առանց հրոյ․ և որ ա̄ծ իջուցէ զհուր ՚ի վերայ պատարագին, նոյն է այն՝ որ իջոյց զհուր և զկարկուտ յերկիրն եգիպտացւոց։

Իսկ իբրև արարին նոքա յառաջ և շինեցին զսեղանն, և արգելին ընդ նովաւ այր մի հանդերձ կրակաւ, ութ հարիւր և յիսուն մարգարէք էին Բահաղու, ոչ ումեք ետուն մերձենալ ՚ի ժամուն իբրև շինէին զսեղանն։ Արդ ապաստան յայրն՝ եթէ վառէ զհուրն յանկարծակի ՚ի վերայ սեղանոյն, ետուն զանձինս իւրեանց՝ որում ոչ էին սովոր՝ խնդրել զհուր յաստուածոցն իւրեանց։ Յաղօթս եկաց Եղիա ՚ի ծածուկ․ և զոր օրինակ դարձոյց ՚ի վերնատանն զոգի մանկանն ՚ի մարմին անդ, սոյնպէս մերկաց զոգիսն ՚ի մարմնոյն այնորիկ՝ որ ՚ի ձեռն հրոյն իւրոյ կամէր սպանանել զամենայն Իսրայէլ։ Իսկ իբրև այրն մեռաւ, ունչս առնէր այպանէր Եղիա զնոսա և զաստուածսն իւրեանց մինչև ցինն ժամ։

Սկսաւ ապա ինքն մատուցանել զպատարագն իւր, և ասէ ցամենայն ժողովուրդն․ եկայք մատերուք առ իս։ Եւ այսու զի մերձեցոյց զժողովուրդն իբրև շինէր զսեղանն՝ զի նոքա ոչ մերձեցուցին, այլ բացէ ՚ի բաց պահէին զնոսա։ Եւ ջուրբքն՝ որ արկ ՚ի վերայ փայտիցն սեղանոյն, յայտ արար և ցոյց՝ զի առաջնոցն ընդ սեղանովն ծածկեալ էր զհուրն․ և ցուցցէ և ծանուսցէ, զի ոչ եթէ ընդդէմ օրինաց ինչ արար նա այսու՝ զի շինեաց նա զսեղանն առ ՚ի մատուցանել պատարագին ՚ի տեղւոջ՝ ուր չէր հրամայեալ օրինացն։ Ասաց՝ թէ “Եւ այսօր ՚ի ձեռն հրոյս՝ որ իջանէ, յայտնի լիցի անուն քո, որպէս զի յայտնին եղև ՚ի ձեռն նշանացն՝ զոր արարեր ազգին աբրահամեան ՚ի ձեռն Մովսիսի․ զի դու ես ա̄ծ, և ես ծառայ քո, և ՚ի պատգամ հրամանի քո արարի ես զայս”․ այս ինքն քով հրամանաւ շինեցի զսեղանս զայս։ Եւ էջ հուր յերկնից, և եկեր զպատարագն և զքարն և զփայտն և զհողն և զջուրն․ որպէս զի ցուցցէ և հուրն վերնական երկնաւոր բարձանց՝ զի չիք ինչ նենգութ̄ի ընդ սեղանովն Եղիայի։ Ժողովուրդն իբրև ետես՝ խոստովան եղև առ ժամ մի պատ ՚ի պատէ՝ եթէ տէր ա̄ծ, տէր ած։ Հրամայեաց Եղիա ու-

նել զմարգարէսն Բահաղու. և ոչ հրամայեաց այլում ումեք սպանանել զնոսա, զի մի կորուսցէ զնոսա Եզաբէլ վրէժխնդրութեամբն մարգարէիցն: Եցոյց Եղիա 'ի ձեռն հրոյն՝ զոր իջոյց 'ի վերայ պատարագին իւրոյ՝ թէ տէր է ա̃ծ, և չիք այլ ոք բաց 'ի նմանէն: Եւ հաստեցոյց զստուգութիւն զենմամբ քրմացն Բահաղու:

Խօսել կալաւ Եղիա և ասէ. “Ձայն գոչման անձրևու„. կանխեաց մարգարէացաւ վասն անձրևուն, զի եղիցի կրկին սքանչելիքն: Եւ ել 'ի լեառն Կարմեղա ծունր դնել մատուցանել զաղօթս յանդիման ժողովրդեանն, զի ուսուսցէ թէ յաղօթիցն նորա արձակին երկինք 'ի կապանաց անտի բանին. մատոյց զաղօթս, զի ուսուսցէ թէ առ ո կայցեն յաղօթս: Եւ զի մատոյց եւթն անգամ զաղօթսն, զի խրատեսցէ զնոսա՝ զի եթէ ոչ լինին ընդունելի 'ի ժամ աղօթիցն, մի հեղգասցին մատուցանել զաղօթսն յերկար անձանձրոյթ: Դարձեալ վասն զի եւթն անգամ պաշտեցին զծառայութիւն սովոյն՝ եւթն անգամուն. որպէս և յեւթներորդ ժամուն արձակեսցէ զնոսա 'ի ձեռն անձրևուն 'ի սորկութէ[1] սովոյն:

Արդ Աւխաբ փոխանակ պատուելոյն զԵղիա վասն սքանչելեաց հրոյն և անձրևոյ, և նստուցանելոյն զնա ընդ իւր 'ի կառս անդր, արար նմա անարգութիւն մինչև ցԵզրայէլ. առաջի կառացն ընթացոյց զնա: Առաքեաց առ նա և Իզաբէլ, թէ “Օն և օն արասցեն ինձ աստուածքն, եթէ ոչ վաղիւ 'ի սոյն ժամու արարից զանձն քո իբրև զանձն միոյ 'ի նոցանէն„: Արդ վաղիւն զի՞ առաքեաց առ նա. թէ մինչ երթայ ժողովուրդն յիւրաքանչիւր տեղիս՝ որ տեսին զսքանչելիսդ. քանզի երկնչէր նա զի գուցէ քարկոծեսցեն զնա, վասն զի սպանանէր նա զմարգարէն՝ որ լոյծ զկապանս երկնից: Երկեաւ նա 'ի մահուանէ, իբրև ոչ էր հանդերձեալ նա ճաշակել զմահ, զի եղիցի նա տիպք տեառնն մահու, զի վասն մարմնոյն որ զգեցաւ՝ ընդ երկիւղիւ մահու հնազանդեցաւ նա: Զի եթէ 'ի մահուանէ երկնչէր նա, ոչ խնդրէր նա զմահն ընդ

1 Յօրինակին 'ի սասփէութէ. եդաւ ըստ լուսանցիցն:

բեւեկնեան . և եթէ դարձեալ ընդ բեւեկնեան ևս խնդրէր զմահն, ընդէ՞ր փախստեայ երթայր յերեսաց Եզաբէլի ։

Արդ փախեաւ նա 'ի մահուանէն Յեզաբէլի . զի մի՛ ասիցեն եթէ Բահաղ մատնեաց զնա 'ի ձեռն Իզաբէլի, զի առցէ 'ի նմանէն զվրէժխնդրութի՛ ութհարիւր մարգարէիցն . և խնդրեաց զմահ 'ի տեառնէ իւրմէ, զի ցուցցէ թէ ոչ երկնչի նա 'ի մահուանէ . այլ 'ի ձաղանայն որ յետ մահուն էր, երկեաւ նա և փութացաւ փախչել ։ Եւ զի ասաց ցնա տէր իւր, եթէ «Մեծ է Ճանապարհդ քան զքեզ», յայտ արար՝ զի եթէ ոչ ուտես դու այսօր և ըմպես, զօրանայ քան զկար զօրութի՛ քո թիւ քառասուն աւուրցըն, որ պատրաստեալ ես ծոմել 'ի Ճանապարհիս յայսմիկ ։ Չոգաւ հաս նա 'ի Քորեբ, ագաւ յայրին . և իբրև հարցանէր ցնա տ՛ծ, բաց նմա դուռն, զի ասասցէ վասն երթալոյն իւրոյ 'ի Քորեբ, և ասաց . Նախանձելով նախանձեցայ զնախանձ տեառն, և արգելի զերկինս . վասն զի թողին ժողովուրդն զուխտն քո՝ զոր ուխտեցին յայսմ լերին պաշտել զքեզ, և փոխեցին զքեզ ընդ Բահաղու ընդ դիւն օտարոտիս . զմարգարէսս քո սպան Իզաբէլ, և ես միայն մնացի, վասն զի ծածկեաց զիս ձեռն քո 'ի ձորն և 'ի ծարփաթ, և ահա առաքեաց առ իս առնուլ բառնալ զանձն իմ ։

Ա՛ծ իբրև ետես զնա եթէ որով նախանձու եկն 'ի Քորեբ, չարչարեաց զժողովուրդն սովով, և կոտորեաց զմարգարէսն Բահաղու փոխանակ մարգարէիցն Ճըշմարտութեան, և սակայն 'ի նախանձուէ անտի իւրմէ ոչ ինչ կակղացաւ, ասէ ցնա . «Ել դու յայրէ այտի» ։ Ել կաց առաջի տեառն, զի այնու իւիք զոր ինչ առնէրն նա, եղիցի նմա ինքն տէր օրինակ և նմանութի՛, զի նմանեսցի նա նմա ։ Ահա, ասէ, առնէ տէր զհողմ սաստիկ . բայց ոչ եթէ 'ի հողմ սաստիկ՝ որ պատառէ զլերինս, և ոչ 'ի շարժումն՝ որ շարժէ զերկիր 'ի հիմանց անտի, և կամ 'ի հուրն՝ որ այրէ զանտառս՝ յայտնի տէր 'ի վերայ քո . այլ 'ի խօսս մեղմ և 'ի կակուղ բանս, այն որ ասացն ցքեզ եթէ զի՞նչ գործես աստ, Եղիա ։ Զոր օրինակ թող

տէրն քո զաստուածութի̃ հողմոյն և զզօրաւորութիւնն ուժգնութեան շարժմանն և զգազանութիւն հրոյ , և յայտնեցաւ 'ի վերայ քո մեղմ խօսիւք և կակուղ բանիւք , և դու ըստ նմին օրինակի ընկեա 'ի բաց զնախանձն՝ որ բորբոքեալդ է 'ի քեզ անաչառ ստուգութե̃դ 'ի վերայ մանկանց ժողովրդեան քոյ , և լեր վասն նոցա բարեխօս , և մի՛ գրգռիչ :

Նաև յետ այսորիկ իբրև եղև նմանութի̃ օրինակի , զի փոխեսցի նա 'ի նախանձուէ անտի իւրմէ 'ի քաղցրութի̃ , դարձեալ ասաց ցնա . " Զի՞նչ գործես աստ , Եղիա ,, : Սակայն և յետ այնորիկ ոչ կակղացաւ և ոչ փոխեցաւ նա 'ի նախանձուէ անտի իւրմէ . զի չարախօսելով չարախօսէր նա զմանկանց ժողովրդեան իւրոյ իբրև զառաջինն : Եւ արդ զի՞նչ իցէ այս , զի 'ի տեղւոջն յորում հաշտեցոյց Մովսէս զա̃ծ ընդ երկրպագուսն ձուլածոյ որթագլխին՝ Եղիա բորբոքեալ մատուցեալ էր զցասումն նորա 'ի վերայ երկրպագուաց Բահաղու . և 'ի լերինն՝ ուր ասաց ա̃ծ ցՄովսէս , եթէ " Թո՛յլ տուր ինձ , ջնջեցից զժողովուրդս զայս ,, , 'ի նմին մատուցեալ կայր ա̃ծ 'ի խնամս ժողովրդեանն 'ի ժամանակի՝ զի խնդրէր Եղիա կորուսանել զժողովուրդն : Եւ վասն զի մեղաւ ժողովուրդն յորթագլուխ անդր , քաղցրութի̃ն Մովսիսի մատուցանէր զհաւանութի̃ անաչառ ստուգութե̃ն տեառն նոցա , զի մի՛ ջնջեսցէ զնոսա . իսկ այսօր իբրև մեղան և երկիր պագին Բահաղու և կռոցն օտարոտւոց , և մարգարէն՝ որ մնաց 'ի մէջ նոցա՝ մատուցեալ կայ ոսոխ վասն նոցունց քինախնդիր նախանձուն իւրով առաջի ա̃յ : Իսկ ա̃ծ իբրև ետես եթէ կալան կապեցան հեբրայեցիքն 'ի մեղս իւրեանց , և ոք 'ի ժողովրդենէն իւրեանց ոչ կարէր իբրև զՄովսէս կարկատել զխրամս յանցանացն իւրեանց , ինքն ա̃ծ խոնարհեցաւ յորդառատ քաղցրութե̃ն , հաւանեցոյց ընդ նոցա զստուգութի̃ն՝ որ գործովքն և արդեամբքն նախանձայոյզ քինախնդրութե̃ն բորբոքեալ էր 'ի վերայ նոցա :

Արդ առաքեաց տէր զԵղիա զի օծցէ զԱզայէլ բանիւ , և զԱհով [1] իւղով , և զԵղիշէ նափորտամբն . զի

[1] Յօրինակին 'ի լուսանցսն Յէու :

Ազայէլ կորուսցէ զժողովուրդն՝ որ ոչ հաւատաց հրոյն և անձրևոյն, և Յահու կորուսցէ զտունն Ախաբու և զքուրմսն՝ որ երկրորդեցին և կացուցին Բահաղու, և Եղիշա կորուսցէ զայնոսիկ՝ որ ապանէին զվերանալ վարդապետին իւրոյ. և եւթն հազար՝ զի թող 'ի ժողովրդենէն՝ որ էին յաւուրս Դաւթի հազարք հազարաց, ուրախ արար և խնդացոյց զԵղիա՝ եթէ գոն որ աշակերտեցան քեզ, զի մի՛ երկիր պագցեն կռոցն Բահաղու. Թէպէտ և յերկիւղէն Եզաբէլի կասկածէին յայտնապէս գոհանալ յիս: Արդ այսոքիկ եւթն հազարս՝ նոքա հաւատային մարգարէին, և եկին 'ի Շամրնէ յոր հասարակին, և կոտեցին զզօրս բազումս որդւոյ Ադերայ Բարհադադու, և զերեսուն և զերկուս թագաւորացն՝ որ ընդ նմայն էին: Եւ նոքա դարձեալ 'ի միւս ևս ամ կոտորեցին յաւուր շաբաթու հարիւր հազար հետևակ, և երեսուն և երկու զօրագլուխս՝ որ էին ընդ Բարհադադու: Արդ զԲարհադադ զայս որ կամէին սպանանել զժողովուրդն, մատնէ զսա տէր 'ի ձեռս Ախաբու, զի փորձեսցի սովաւ: Արդ Ախաբ փոխանակ ընդ սպանելոյն զնա, որպէս և տուաւ նմա հրաման, առ նստոյց զնա ընդ իւր 'ի կառսն, և խաղաղութ͞ե յաշխարհն իւր արձակեաց զնա. զի յայտ լիցի Ախաբու՝ եթէ ոչ ողորմութ͞ե ինչ արար զայն, այլ զպատուէր հրամանին որ տուաւ նմա՝ փութացաւ անարգել:

Չար կառափնատեաց մարգարէն զընկեր իւր պատդամաւն տեառն: Իբրև այն առաջին՝ որ ոչն կառափնատեացն զնա, նայելով նայեցաւ յօրէնս՝ զի ասաց, եթէ կառափնատուն փոխանակ կառափնատուէ: Եւ թուեցաւ նմա եթէ ոչ ասէ նմա 'ի ձեռն մարգարէին հակառակ ընդդէմ այնորիկ՝ որ ինչ ասացեալ է յօրէնսն: Զի վասն այսորիկ բեկ զնա առեւծ, զի պահեաց նա զօրէնսն, վասն զի կամեցաւ զտէր և զա̃ծ օրինացն ընդ օրինօք փակել: Եւ իբրև կառափնատեցաւ մարգարէն յընկերէն իւրմէ, և շաղախեաց մոխրով զերեսս իւր, զի մի՛ գիտասցէ արքայն թէ 'ի մարգարէից ոք իցէ, և ոչ առնուցու զտեղի լսել ընդատ նորա, աղաղակեաց և ասաց ցարքայ, եթէ ծա-

ռայ քո եմուտ 'ի ճակատ եդովմայեցւոց, և այր մի հեբրայեցի ած ետ ցիս այր մի յեդովմայեցւոց, և ասաց ցիս. եթէ կորիցէ այրդ, անձն քո փոխանակ ընդ նորա, և կամ քանքար մի՝ զի ոչ գոյ իմ՝ կշռեցից տաց փոխանակ ընդ նորա: Եւ ծառայ քո մինչ դեռ նայէր յայս կոյս յայն կոյս՝ ոչ յաւարել կամ 'ի ժլատել ինչ, որպէս և դատարկ ձեռքս իմ վկայեն ինձ, այլ 'ի մարտնչել և 'ի կոտորել որպէս և վէրքս գլխոյ իմոյ ճշմարտեալ ցուցանեն վասն իմ. և խնդրեցաւ այրն, և ոչ գտաւ: Եւ արդ այժմ տէր իմ, փրկեա զիս 'ի ձեռաց ազգականցին իմոյ, զի կամին առնուլ զանձն իմ փոխանակ օտարական անձինն՝ որ կորեաւն յինէն: Իսկ Աքաաբ ողորմած՝ հրամայեաց կորուսանել զանձն մարգարէին փոխանակ օտարին՝ որ մատնեցաւ 'ի ձեռս նորա, և ոչ պահեաց զնա:

Իսկ մարգարէն իբրև ետես զձախող դատավճիռ թագաւորին, անդրէն և անդ փութացաւ անցոյց զարիւնն յերեսաց իւրոց, և ասէ ցարքայն, եթէ զդատաստանաւդ զոր դատեցերդ զիս անօրէնութ՟բ, դատեսջիր դու անաչառ ստուգութ՟բ. յինէն կորնչելով կորեաւ այրն, վասն որոյ 'ի մահ հրամայեցեր մատնել զիս. բայց Բերհադադն զոր մատնեաց 'ի ձեռս քո, ոչ այլ ոք՝ այլ տէր ինքնին, նա ոչ եթէ կորնչելով կորեաւ 'ի քէն, այլ դու քեզէն քոյին արձակեցեր զնա յաշխարհ իւր խաղաղու՟բ: Մեռջիր արդ այսուհետև դու ինքնին ընդ նորա, փոխանակ զի ապրեցուցեր զայրն զամպարիշտ և զնզովեալ. և զօրդ քո զի ոչ կացին ընդդէմ քո վասն սորին իրի, կորիցեն և նոքա ըստ նմանու՟ե Բերհադադու զօրացն՝ զոր կորուսերն դու: Արդ զԱքաաբ արքայ զոր ուրախն արար յաղթութ՟քն՝ որ եղև նմա, տրտմեալ խռովեալ մեծաւ թախծիւ դարձոյց անդրէն 'ի Շամրին:

Բայց ինքն ողորմածս այս՝ որ ողորմեցաւն 'ի վերայ Բերհադադու անօրինի և նզովելոյ, և վասն զի ոչ կամեցաւ Նաբովթ այր արդար տալ նմա զայգին իւր, զի արասցէ զնա պարտէզ սերմանեաց, և դիցէ 'ի նմա զկուռս և զմեհեանս, որպէս և Եսայի իսկ մարգարէ նախատէ զնոսա՝ եթէ “Զոհէին 'ի պարտէզս, և ուտէին զմիս խոզի„, վասն սորին իրի զի

ոչ եղեն նորա կամք նիւթել զնիւթս չարեաց առ 'ի կորուստ անձին իւրոյ, և ուղղել զկուռն մեհենիւքն հանդերձ յայլոց վիճակի՝ զոր կամէրն առնուլ զբաժինն արդարոյ ժանտութեն և անօրէնութեն, գայ մտանէ 'ի տունն իւր մեծաւ տրտմութբ. մտանէր առ նա և Իզաբէլ քաջաբանիկ արբանեակ սատանայի՝ նիւթիչն մեղաց և անօրէնութե. և ընդ նա և Իզաբէլ խորհուրդ առեալ 'ի մէջ երկոցունց՝ երկուք յերկուց մատուցեալ գրէին զթուղթն խարդախութե քարկոծել զՆաբովթ հանդերձ որդւովքն վասն վիճակին ժառանգութեան արդարոյն, որում ակն եդեալ կորզէին 'ի նմանէն զժառանգութիւնն. որ փոխանակաւն և սպառասպուռ գնովքն ոչ կամեցաւ տալ նմա, ձրի՝ իբրև ժառանգորդաց Նաբովթայ դարձցի առ նոսա: Արդ թէ և արդել Նաբովթ՝ այր արդար՝ զայգին, համարեա իբրև զԲերհադադ՝ որ ասացն ցնա, եթէ "Կանայք քո և որդիք քո իմ են": Արդ եթէ զայն՝ որ մեծն էր՝ թող[1] Բերհադադու օտարին, զայս՝ որ փոքրս էր՝ ոչ թողոյր նա արդարոյն՝ ազգակցին իւրում:

Իսկ իբրև էջ Ախաբ խրատուն Եզաբէլի ժառանգել զայգին, որոյ տեարքն իւր քարկոծեալք էին, առաքեցաւ Եղիա և խայտառակեաց զգործն ամօթոյ. որ թուէր նոցա եթէ նոքա միայն միայնուկ երկուք յերկուց գիտեն զնա: Ասէ ցնա. "Ահա սպանէր և ժառանգեցեր". և ահա Իզաբէլ ինքն սպան և ժառանգեաց: Զի եթէ ոչ հաղորդեալ էր 'ի սպանման անդ, ոչ զրկէր նա 'ի ստուգութենէն՝ որ քաւիչն է զրկելոց: Իսկ իբրև եդ զդատավճիռն մարգարէն, և եդ զտունն նորա յաւէր յանմարդի, և զնա և զկին նորա շանց, վասն զի ոչ էր անդ մնասակարն նորա, ապաշխարեաց նա և պատառեաց զգեստ իւր: Իսկ ած որ ետ զհաւանութին Եղիայի փոխանակ ժողովրդեանն 'ի Քորեբ, դարձաւ ետ նմա հաւանութիս փոխանակ Ախաբու յԵզրայէլ: "Տեսեր դու, ասէ, զի ամաչեաց Ախաբ յերեսաց իմոց": Արդ վասն քրձազգած լինելոյն և բոկ գնալոյն նորա

1 Ցօրինակին Բողէ:

ոչ ածից ես զչարիս՝ զոր ասացի 'ի վերայ տանն նո-
րա զաւուրս կենաց նորա, այլ յաւուրս որդւոյ նո-
րա ածից ես զչարիս 'ի վերայ տանն Աքաբու, եթէ
իբրև լուէ զդատավճիռս զայս և ոչ ապաշխարէ առա-
ջի իմ:

Յետ այսորիկ մատուցանէր Աքաբ զհաւանութիւն
Յովսափատ արքայի, զի երթիցէ ընդ նմա 'ի Հռա-
մաթ Գաղաադ, զի բռնաբարեաց հան 'ի նմանէ Բեր-
հադադն այն զոր ապրեցոյցն: Ասէ ցնա Յովսափատ.
«Հարց տերամբ, և եթէ հրամայէ, գամ ես»: Արդ
մատուցեալ Աքաբ հարցանէր ցչորեքհարիւր մար-
գարէսն Բահաղու, և ետուն նմա հաւանութիւն՝
զի երթիցէ: Յաւել դարձեալ Յովսափատ, և խնդ-
րեաց մարգարէ ճշմարտութեան: Ասէ ցնա Աքաբ.
«Կայ աստ մարգարէ մի Միքիա անուն՝ որդի Ամղեայ.
բայց ես ատեցի զնա, զի ոչ մարգարէանայ 'ի վերայ
իմ զբարի ինչ»: Ասէ ցնա Յովսափատ. մի՛ այդպէս
ասեր արքայ և զրպարտեր զնա. առաքեաց զքեզ եր-
կիցս անգամ 'ի վերայ Թագաւորիս այսորիկ եդով-
մայեցւոց, և սակաւուքն յաղթեցեր զբիւրսն որ ընդ
նմայն էին. և եթէ զբան նորա լուեալ էր քո, և
սպանեալ էր զԲերհադադ յառաջին պատերազմին,
ահա և զքեզ և զմեզ արգելեալ էր քո յայսմ պա-
տերազմէ: Առաքեաց Աքաբ ներքինի մի, զի հաւա-
նեցուսցէ զնա, որպէս զի միաբանեսցի և նա 'ի բանին
զոր ասացին չորեքհարիւր մարգարէքն Բահաղու. և
ասասցէ նա իբրև զնոսա: Իսկ Միքիա քանզի ցարդ
ևս ոչ գիտէր զպատգամն տեառն զինչ իցէ, սահմա-
նեաց զանձն իւր ընդ երդմամբ, և ասէ յանդիման
ներքինւոյն՝ որ մատուցեալ տայր նմա զհաւանու-
թիւն, եթէ «Կենդանի՛ է տէր, բայց եթէ զոր ինչ
ասասցէ ցիս տէր՝ զայն ասացից»:

Իսկ իբրև եկն մարգարէն առ Աքաբ, և եհարց
ցնա. «Արդարեւ ասա, Միքիա, դու զի՞ ասես. երթի-
ցո՞ւք 'ի մարտ պատերազմի եթէ ոչ. օրէ՞ն իցէ, պատ-
շա՞ճ իցէ; լա՞ւ իցէ, բարւո՞ք իցէ. դու զի՞ ասես ըստ
պատգամացն տեառն»: Եւ վասն զի ոչ յայտնեցաւ
տէր 'ի վերայ մարգարէին ցարդ ևս, ասաց ըստ
բանին նորա. «Երթ, ասէ, որպէս և կամիս. և մատ-

նեսցէ զնոսա տէր 'ի ձեռս քո, արքայ ,,: Իսկ Ախաբ վասն զի կարծեաց եթէ զայս ևեթ կալաւ յանձին ասել հաւանութ̃ ներքինւոյն՝ որ չոգաւն զնմանէն , մատեաւ երդմնեցուցանել զնա բազում անգամ առ 'ի հաճել զմիտսն Յովսափատու : "Գէն քո , ասէ , փարելի քո . մի՛ զայլ ինչ ասեր , այլ զճշմարիտն՝ որ արդարն է,, : Իսկ մարգարէն իբրև ստիպեցաւ ասել զճշմարիտ զրոյցն , եդև 'ի վերայ նորա տեսիլն հոգւոյ վասն մահուն Ախաբու , և վասն ցրուելոյ ժողովրդեանն , և ասէ ."Տեսի ես զԻսրայէլ զի ցրուեալ 'ի փախուստ դարձեալ 'ի վերայ լերանց իբրև խաշինս՝ որոյ ոչ գուցէ հովիւ : Խօսել կալաւ տէր և ասէ . ոչ գոյ արքայ այսոցիկ . դարձցի ամենայն մարդ յիւրաքանչիւր տեղիս խաղաղութ̃ ,, : Իսկ իբրև վառեցաւ Ախաբ ցասմամբ 'ի վերայ մարգարէին , կրկնեցաւ անդէն տեսիլն առ նմին : Եւ փոխանակ զի ծածկեսցէ զիրսն 'ի սպանողէն մարգարէից իւրոց ընկերացն , փութացաւ յայտնեաց զնա առաջի կորուսչին իւրոյ հաղորդակցացն : "Տեսի ես , ասէ , զտէր զի նստէր 'ի վերայ աթոռոյ , և հրեշտակք կային ընդ աջմէ և ընդ ահեկէ նորա : Խօսել կալաւ տէր և ասէ ցնոսա . ո՞վ 'ի ձէնջ հրապուրէ զԱխաբ , զի ելցէ և անկցի 'ի Հռամաթ Գաղաադ ,, : Իսկ այս՝ զոր ասէս՝ թէ սա ասաց այսպէս , և միւսն ևս նոյնպէս , նոքին իսկ են կողմանքն երկոքին երկոցունց դասուցն . զի ասէին՝ եթէ ոչ հրապուրեմք մեք զնա , զի մի՛ ելցէ և մեռցի 'ի մեղս իւր . Ճշմարիտ եմք մեք խնդացօղք , ուրախ եղեալք ընդ ապաշխարօղս . և չեղեալ մեր երբէք սուտք կորուսիչք մեղաւորաց :

Իսկ իբրև փորձեցան անցին 'ի հանդիսի կողմանքն երկոքեան երկոցունց դասուցն 'ի ձեռն հարցուածոցս այսորիկ , և մի ոք 'ի նոցանէն յամենեցունց ոչ կալաւ յանձին ընտրել իւր զայս , ահաւասիկ այս չար մուտ և կաց առաջի տեառն՝ իբրև ոչ կամեցաւ , և ասէ . "Ես աւասիկ , տէր . ես պատրեմ և հրապուրեմ զնա ,, : Եւ զի ցուցցէ և յայտ արասցէ ա̃ծ , եթէ զոր օրինակ հեռի է 'ի մտանելոյն նորա , այնու՝ զի իբրև ոչ կոչեցաւ և եկն յատեան հարցուկն , սոյնպէս հեռի է և 'ի խորամանկութ̃եց նորա : Հարցա-

նէ ցնա և ասէ . «Զի՞նչ այն ինչ իցէ որով իւիք հրա-
պուրեսցեմն դու զնա . եւ պատասխանի և ասէ . ես
ելից և եղէց հոգի անօրէնութ̃ե ստութ̃ե խաբէութ̃ե
'ի բերան ամենայն մարգարէից նորա ։ Ասէ ցնա
տէր . զի եթէ մոլորութ̃ըն զոր ընտրեալն է իւր Ա-
խաբու՝ մոլորեցուցանես զնա , կարես դու և առնե-
լոց ես , ել և արա սոյնպէս» ։ Այս ինքն , ել 'ի հրա-
պուրել , և ոչ 'ի հնազանդել և 'ի հաւանեցուցանել
և ոչ վարել բռնի ։

Արդ իբրև պատմեաց Միքիա զտեսիլն , ապա մեկ-
նեաց համառօտիւ և ասաց , թէ տէր ետ զհոգին
անօրէնութ̃ե 'ի բերան մարգարէից քոց ։ Բայց սա-
կայն տէրն որ ասաց 'ի վերայ քո զչար 'ի բերան մար-
գարէից քոց , ինև բարի արար առ քեզ ։ Քանզի ցոյց
քեզ ինև որ ինչ խորհուրդ խորհեցաւ վասն քո , զի
եթէ արգելցիս և զտեղի առցես 'ի պարտուցն և 'ի
մահուանէն Հռամաթ Գաղաադու , կարձեալ լինիս
և ապրիս ։ Իսկ Աքաբ փոխանակ շնորհ ունելոյ Մի-
քիայի , զի արգել զնա 'ի մահուանէ , և զմարգարէսն
նորա 'ի սրոյն սուսերի , և զԻզաբէլ յայրութ̃է , առ-
մատնեաց զնա 'ի բանտ բաստարանին , իբրև տային
ուտել նմա զռոձիկ նեղութ̃ե , և տային ըմպել նմա
ջուր չար առ վատէ ոգեպահ առ ոգւոցն ունելոյ ։ Զի
զոր ինչ ոչ կարաց առնել նմա յառաջ քան զեր-
թալն իւր վասն Յովսափատու , արասցէ նմա յետ
դալոյն իւրոյ , յորժամ չուեսցէ և գնասցէ առ 'ի նմա-
նէն Յովսափատ ։ Եւ զի ասաց . «Եթէ դառնաս դու
խաղաղութ̃ը , այլ ոչ խօսի յիս տէր» . զի երկեցուս-
ցէ զնա և արգելցէ , զի մի երթիցէ ։ Եւ զի ասաց՝ ե-
թէ «Լուարուք ամենայն ազգք» , զազգն Յուդայի և
զԻսրայէլի՝ որ ժողովեալն էին՝ կոչեաց ազգս ։ Արդ
'ի ժամ պատերազմին զահի հարեալ երկնչէր Ա-
խաբ . և վասն խղձին մարգարէութ̃ենն՝ որ եղև 'ի վե-
րայ նորա , այլակերպի և մտանէ 'ի մարտ պատերազ-
մի ։ Եւ վասն զի թուեցաւ նմա եթէ այլակերպու-
թ̃ին ապրեցուցանէ զնա 'ի դատավճռէն , զոր ասաց
'ի վերայ նորա տէր 'ի ձեռն մարգարէին , և ահա այր
մի մատուցեալ ձգէր նետ 'ի մտաց իւրոց հանդար-
տագոյն մտադիւրութ̃ը խառն 'ի խուռն հեբրայե-

ցւոցն՝ որ փախստեայն երթային յերեսաց նոցա . և հար զԱխաբ ընդ օդս զրահիցն ։ Վասն զի յուսացաւ 'ի նա . զի թէպէտ և եկեսցէ , ասէ , նետն , սակայն զրեայքն իւր պահեն զնա ։ Մեռաւ երեկորի , որպէս զի եղիցի տեղի շանցն 'ի գիշերի լափել զարիւն նորա , և կատարեսցին նմա մարգարէութիւնն Եղիայի մարգարէի ։

ԳԼՈՒԽ Գ

Յետ այսորիկ թագաւորեցաւ Ոխոզիա 'ի վերայ Իսրայելի . և հիւանդացաւ յոյժ մեծ , և առաքեաց գիտել 'ի Բեեղզեբայ կռոցն Ակկարոնի , եթէ արդարեւ ողջանայցե՞մ ես ։ Եւ եկն պատահեցաւ նոցա Եղիա , և առաքեաց 'ի ձեռն նոցա առ տէր իւրեանց , եթէ վասն սորին իբրև վասն որոյ առաքեցեր դու գիտել ճշմարտել , մահու մեռջիր ։ Իսկ նա փոխանակ զղջանալոյ և երկնչելոյ , յարեաւ յղեաց զնորմանէն յիսնապետ մի յիսնիւք հանդերձ՝ ածել սպանանել զԵղիա ։ Եւ վասն զի սոքա և ընկերք իւրեանց 'ի նոցանէն էին , որք տեսին զհուրն իբրև էջ՝ և ոչ ապաշխարեցին , այրեաց զնոսա իջանելովն հրոյ կրկին անգամ ։ Իսկ զերրորդն վասն ապաշխարութեան իւրոյ կեցոյց հանդերձ յիսնիւքն ։ Արդ եկն էջ Եղիա ընդ երրորդումն առ Ոխոզիա , և եդ 'ի վերայ նորա զդատավճիռն մահու , իբրև կային առաջի նորա ընտանիք և նախարարք իւր . և մեռաւ նա անդէն վաղվաղակի , և թագաւորեցաւ Յովրամ զկնի նորա ։

Եւ եղև զի վերացուցանէր տէր զԵղիա , և փորձեաց զաշակերտն իւր , այսու՝ զի ասաց ցնա՝ եթէ “Կաց մնայ ինձ աստ , վասն զի տէր առաքեաց զիս 'ի Բեթէլ և յԵրիքով և Յորդանան„ ։ Արդ եկին որդիք մարգարէիցն 'ի Բեթէլայ և յԵրիքովէ , և յայտնեցին նմա վասն վերանալոյն այնորիկ . զի և ոչ 'ի նմանէն իսկ ծածկեալ էր ։ Իսկ իբրև արգել զնա երիցս անգամ , և ոչ կաց և զտեղի առ ուրեք , ասէ ցնա իբրև բաժանէր զՅորդանան և անց յայնկոյս . “Խնդրեա , ասէ , զինչ արարից քեզ„ ։ Ասէ ցնա . “Եղիցի

հոգիդ քո կրկին անգամ 'ի վերայ իմ„. քանզի այն՝ որ էր 'ի քեզ, այս ինքն գործովքն և արդեամբք հոգւոյն, զինչ արար քև՝ արասցէ և ինև 'ի ժողովրդեանն: Ասէ ցնա. կարի մեծ խնդրեցեր զնեղութիւն ժողովրդեանն. բայց արդ եթէ տեսցես զիս իբրև վերանամ ես 'ի քէն, արժանի է ժողովուրդն նեղութեցս այսոցիկ, և տուեալ լինի քեզ խնդիրն զոր խնդրեցերդ. ապա թէ ոչ տեսցես զիս, խնայեն 'ի վերայ նոցա շնորհքն, և արգելու և ոչ տայ քեզ զոր ինչ խնդրեցերդ:

Եւ մինչ դեռ նոքա խօսէին, և առեալ տայր նմա հրաման, որպէս և ամենայն արդարք որդւոց իւրեանց պահել զպատուիրանս տեառն, յափշտակեցաւ նա 'ի կառս հրեղէնս. և ճչեաց Եղիշա և ասէ. «Հայր իմ, հայր իմ, կառքդ Իսրայէլի և հեծեալդ նորուն„. վասն զի աղօթիւք նորա առնուն զքաջութիս յաղթութե հեծեալք և սպառազէնք քաջամարտիկք Իսրայէլի: Առ նա զմաշկեակն, և 'ի ձեռն մաշկեկին՝ որով բաժանեաց զՅորդանան, յայտ եղև և երևեցաւ որդւոցն մարգարէից Երիքովի՝ եթէ բնակեցաւ հոգին վարդապետին իւրոյ 'ի վերայ նորա: Եւ զի ասացին որդիք մարգարէիցն ցԵղիշա, եթէ երթիցեն խնդրեսցեն զվարդապետն քո, գուցէ թէ առ ընկեց զնա հոգին 'ի լերինս և 'ի ձորս, որպէս և առաքեաց զնա 'ի ձորն Քառիադու և 'ի Քորեբ լեառն, թոյլ տայր նոցա Եղիշա, զի նոքա անձամբ անձանց տացեն զհաւանութիս, և նոքօք ժողովուրդն ամենայն հաւատասցէ[1], եթէ Եղիա յերկինս վերացաւ:

Իսկ որդիքն մարգարէից Երիքովի իբրև տեսին զբաժանել գետոյն Եղիշայի, խնդրեցին 'ի նմանէն՝ զի օրհնեսցէ նոցա 'ի ձեռն հոգւոյն զջուրսն՝ զոր անէծ Յեշուլ հոգւով. վասն զի թէպէտ և շինեաց զնա Ախաբ, սակայն զանէծս նորա ոչ կարաց առնուլ 'ի նմանէն. զի վասն այսորիկ ասացին ցԵղիշա. զի թէպէտ և նիստ գեղջս գեղեցիկ և ցանկալի է աչաց տեսանելոյ, այլ ջուրքս չար են, և երկիրս թափուր մար-

1 Յօրինակին հաւատանէացին. եդաւ ըստ լուսանցիցն:

դալթափ նուաղեալ 'ի բնակչաց իւրոց: Եւ ասէ ցնոսա Եղիշա. “Բերէք առ իս կուժ մի նոր, և արկէք 'ի նա աղ„. խորհուրդ Մարիամու, զի նորոգապէս յղացաւ Քրիստոս յարգանդի նորա: Եւ զջուրսն զոր անէծ Յեսու, օրհնեաց զնոսա. խորհուրդ տեառն Յեսուայ: Եւ այլ ոչ եղև անդ յետ օրհնութեանն վաղամեռ և անձետ, որպէս և յառաջ քան զօրհնութիւնն:

Իսկ իբրև ելանէր նա ընդ զառ 'ի վերակն 'ի Բեթէլ, ձաղէին այպանէին մանկտեակն զվերանալ վարդապետին նորա. և վասն զի զձաղանսն մանկըտւոյն 'ի հարցն իւրեանց ուսեալ էր, և սոցուն դաձեալ քարոզեցին որդիքն մարգարէից որ էին 'ի գեօղ նոցա վասն վերանալոյն Եղիայի՝ և ոչ կալան յանձին, արդ այն՝ որ օրհնեաց զորդիսն Երիքովի, զի հաւատացին յոգին զոր ընկալաւ 'ի վարդապետէն իւրմէ, անէծ զմանկտեակն 'ի Բեթէլ, վասն զի այպանէին զվերանալ վարդապետին նորա. և կերան զնոսա արջքն՝ որ ելին յանտառէն՝ քառասուն և երկուս մանկունս: Եւ կատարեցաւ 'ի ձեռն այսորիկ բանն այն՝ որ ասացաւ բերանով վարդապետին նորա, թէ “Որ ապրեսցի 'ի սրոյն Յահուայ, սպանցէ զնա Եղիշա„:

Եւ Միշա արքայն մովաբացւոց իբրև այր մի շպետ՝ տայր զհարկս խաշանց Իսրայէլի, և ապստամբեցաւ Յովրամայ որդւոյ Աքաաբու. և հաւանեցոյց զՅովսափատ և զարքայն եդովմայեցւոց, ելանել և տալ մարտ պատերազմի միմեանց օգնականութ̃: Իբրև երթային յանապատի անդ, անցին զեւթն օր, և ջուր ոչ գտաւ: Արդ Յովսափատ՝ որպէս սովորն էր՝ սկըսաւ ասել ցարքայն Յովրամ. “Չի՞ք ոք աստ մարգարէ, զի հարցցուք զպատգամ տեառն 'ի նմանէն„. եթէ խրատելով խրատէ զմեզ տէր, եթէ վասն կորըստեան մերոյ սատակէ զմեզ ծարաւով: Պատասխանի ետ մի ոմն 'ի նոցանէն և ասէ. գոյ աստ ոչ Եղիշա՝ որ ընկալաւ զհոգին Եղիայի, այլ զի գոյ աստ պաշտօնեայն Եղիայի: Չոգան առ նա թագաւորքն երեքեան:

Իսկ իբրև ամաչեցոյց Եղիշա զՅովրամ, և յար-

գնաց գումեաց զՅովսափատ, խնդրեաց ձայնող, զի նա է գուրշ ուղղապանաց, և կամ քնար՝ որպէս և Հեբրայեցիքն ասէ. զի 'ի ձայն բախելոյ նորա ժողովեսցին առ նա զօրքն ամենայն, և լուիցեն 'ի նմանէն իբրև մարգարէանայ վասն ջուրցն և վասն կոտորածի թշնամեացն նոցա. զի յորժամ եղիցի, մի՛ տայցեն զնոսա Բահաղու և կռոցն՝ որոց երկիր պագանէին։ Եղև 'ի վերայ նորա հոգի տեառն և ասէ. եղիցի ձորս այս, զի էր նա ձեպանցոյց ջուրց, գուբք գուբք։ Եւ իսկ և իսկ նոյնժամայն եղեն գուբքն, և պատրաստեցան ջուրցն՝ որ գալոց էին 'ի վաղիւ անդր։ Ընդ մերկանալն առաւօտու անդէն ընդ մարգարէութիւն ցոյց առ նմին զսքանչելիսն. զի զսքանչելիսն զոր տեսին աչօք նոցա, երաշխաւոր լիցի նոցա վասն գալոյ ջուրցն՝ զոր լուան ականջօք իւրեանց։

Իսկ իբրև եկին հասին ջուրքն, և արբին և ընդարձակեցան 'ի մեծ նեղուէն։ Մովաբացիքն իբրև տեսին ըզջուրսն, զի կարմրացեալ էին 'ի ձեռն ծագելոյն արեգական՝ զի շողայր 'ի վերայ նոցա՝ վասն զի ոչ էր երբէք անդ բղխեալ ջուր, թուեցաւ նոցա՝ եթէ աստուածքն մովաբացւոց գրգռեցին զթագաւորսն և հանին զնոսա ընդ սուր միմեանց։ Արդ թագաւորն մովաբացւոց յառաջ քան զճշմարտել գիտել թէ արդարև արդ այս այսպէս իցէ, փութացաւ համարձակեաց զզօրսն յաւար. և վասն զի աւարել քարոզեցին նոցա և ոչ մարտնչել, և ժլատել և ոչ պատրաստել, մի մի 'ի նոցանէն զզէն անձին իւրոյ ընկենոյր յընկեր իւր, զի թեթևընթաց հասցէ 'ի բանակն հեբրայեցւոց. և այր քան զընկեր իւր ժլատեսցի յաւար անդր ժողովել յապուռ։

Արդ յարուցեալ զօրքն իսրայէլացւոցն վառեալք պատրաստեալք, և առանց աշխատութե՟ հանին ընդ սուր զզօրսն մերկանդամս մովաբացւոց։ Եւ եկին հասին դարձեալ յերկիրն նոցա, խլեցին զգեօղս, և ապականեցին զաղբերակունս, և կործանեցին զպարիսպս, մինչ զի արգել զնոսա կործանեալ քարինք նոցուն պարսպացն։ Իսկ իբրև ետես արքայն մովաբացւոց եթէ զօրացաւ զայրացաւ սաստկացաւ պատերազմն, և երթալ ապրել նմա առ թագաւորն

եդովմայեցւոց զօրքն Յուդայի և Իսրայելի ոչ տային նմա թոյլ, առ զորդին իւր զանդրանիկ, և մատոյց զնա պատարագ 'ի վերայ մեհենին 'ի պարսպի անդ. և եղև բարկութ̄ի մեծ յԻսրայելի ։

Արդ են ոմանք զի ասեն՝ եթէ կռոցն իւրոց զոհեաց զորդին իւր. և վասն զի ժուժկալեաց նա 'ի ժամ նեղութ̄ե իւրում 'ի կուռսն իւր, դարձոյց ըզբարկութ̄ին 'ի վերայ Իսրայելի. այն զի և յանդորրութ̄ե իւրում փոխանակէր զա̄ծ իւր ընդ դիսն օտարոտիս ։ Եւ են որ ասեն՝ եթէ վասն Իսրայելի մատոյց զորդին իւր պատարագ 'ի վերայ պարսպին, զի տեսցեն և ցաւեսցէ նոցա վասն նորա, և չուեսցեն 'ի նմանէն ։ Եւ վասն զի մատնեցաւ Մովաբ 'ի ձեռս նոցա, և ոչ արարին 'ի վերայ նորա ողորմութ̄ի, վասն այնորիկ դարձաւ հարուածն 'ի վերայ ժողովրդեանն ։ Եւ են որ ասեն՝ եթէ զահի հարաւ և երկեաւ ժողովուրդն իբրև տեսին զարքայն՝ զի մատոյց զորդին իւր պատարագ 'ի վերայ պարսպին. և այս, ասէ, թերահաւատութ̄ի նոցա դարձոյց զբարկութիւնն 'ի վերայ նոցուն ։ Եւ արդ եթէ կռոցն իւրոց զոհէր զորդին իւր, 'ի բագնի կռոցն առաջի կռոցն իւրոց զոհէր զնա. և քուրմքն դարձեալ զոհէին զնա, և ոչ եթէ ինքն ձեռօքն իւրովք փողոտէր զնա 'ի վերայ պարսպին ։ Եւ զի փողոտեաց զնա 'ի վերայ պարսպին, ոչ եթէ վասն զի անխայեսցէ ժողովուրդն 'ի վերայ նորա. զի թէպէտ և զծուխն տեսանէր ժողովուրդն, այլ թէ ո լինէր զոհն՝ զայն ոչ տեսանէին. և ինքն դարձեալ արքայն վասն զինուն՝ որ զգեցեալն էր, և յերկիւղէն նետից ընդ վահանաւոր սպասկօքն իբրև յառագաստի կայր, և ոչ երևէր նոցա իբրև փողոտէր զորդին իւր ։ Բայց համարեսցուք եթէ երևէր. մերձաւորացն երևէր նա, և ոչ եթէ ժողովրդեանն՝ որ ցրուեալն էր ընդ ամենայն կողմանս խլել և յաւարել յառ յապուռ ։

Արդ վասն զի ետես այս որդիս Ղովթայ զնշան ջուրցն՝ որ եղև յանապատի անդ, և գիտաց եթէ ա̄ծն այն՝ որ բղխեաց զջուրս 'ի վիմէ հարցն նոցա, նոյն ինքն ած նոցա ջուր ընդ ճանապարհն Եդովմայ. և վասն զի ետես՝ եթէ չիք այլ զօրութ̄ի եթէ առ-

նիցէ զայսպիսի սքանչելիս, որպէս արար ա̃ծ Իսրայէլի ժողովրդեան իւրում, թող նա զզուարակս և զխաշինս մատուցանել նմա պատարագ։ Արհամարհեաց նա զկուռսն իւր, և անարգեաց զտաճարս դրօշելոցն իւրոց, և մատոյց զորդին իւր զանդրանիկ 'ի վերայ պարսպին՝ ա̃յն, որ արար զնոր ծուխն 'ի հին անապատի անդ։ Իսկ ա̃ծ իբրև ետես՝ եթէ միով սքանչելեօքն ապաշխարեաց թագաւորն մովաբացւոց, և 'ի ձեռն անդրանկան սիրելւոյն իւրոյ՝ որ թագակալն էր արքայութե̃ նորա՝ խնդրեաց զի եղիցի անխայութի̃ 'ի վերայ աշխարհի իւրոյ, դարձոյց զբարկութի̃ն 'ի վերայ Իսրայէլի. այնուքիկ՝ որ յետ սքանչելեացն Ջուրցն զոր տեսին, սիրտք նոցա յորթս ձուլածոյս Յորոբովամու կապեալ կային։

Այնն դարձեալ 'ի կանանց որդւոց մարգարէիցն՝ որ մատեաւն առ Եղիշա, ասեն եթէ կին Աբդիայ էր, այն՝ որ 'ի սովի անդ փոխ առ 'ի շտեմարանաց անտի Աքաբու, և կերակրեաց զհարիւր մարգարէսն. և հարկ եղև զի 'ի ձեռն մարգարէին հատուսցի պարտիքն՝ որ մթերեցան 'ի պատճառս մարգարէիցն։ Եւ վասն զի մի̃ երթիցէ զաւակն արդարոյ պաշտեսցէ զծառայութիւնն Աքաբու, և 'ի պատճառս ծառայութեանն լծեսցին նոքա 'ի լուծ ձուլածոյ որթուցն, հրամայէ նմա խնդրել զանօթս և լնուլ զնոսա ջրով։ Եւ զի ասաց, եթէ անօթն որ լի իցէ՝ զայն ինձ հանջիր, զնոյն իսկ զանօթս զայս փոխեաց Եղիշա յեւղ. և զայլ անօթսն յայսմ իւղոյ արկ լից։ Եւ իբրև ասացին մանկունքն՝ եթէ սպառեցան անօթքն յորս արկանէրն յայնմ իւղոյ, կաց անդէն և անդ իւղն. այս ինքն փոխեցան առ հասարակ ամենայն անօթքն միանգամայն յիւղ։ Արդ ջրովքն՝ որ փոխեցան յեւղ և ապրեցուցին զազատ որդիսն, զի մի̃ ծառայեսցեն 'ի ստրկութիւն մարդոյ, խորհուրդ մկրտութե̃ աւազանին նկարէր. այն՝ որ նովաւ ապրեցան հեթանոսք 'ի ծածուկ լծոյն անօրէնութե̃։

Յետ այսորիկ մատուցեալ խրատէր կինն շիլովմացի [1] զայր իւր՝ ուղղել պատրաստել նմա վերնա-

1 Յօրինակին 'ի լուսանցսն սոմնացի։

տուն մի առ 'ի պատիւ սուրբ մարգարէին: Այն զի իբրեւ անցանէր նա ընդ այն ճանապարհ, առ նմա մտանէր նա: Իսկ սուրբ՝ զի ասաց, վասն կուսութեան իւրոյ կոչեաց զնա: Արդ կամեցաւ Եղիշա հատուցանել զսէր նորա, այնմիկ՝ որ օրհնեալն էր բարեօքն օրինաց, եւ զրկեալ էր 'ի ծննդենէն՝ զոր օրհնեցին օրէնքն: Արդ խոստացաւ նմա որդի իբրեւ ոչ խնդրեաց 'ի նմանէն. եւ ետ նմա 'ի ժամանակի՝ յորում խոստացաւ: Իսկ իբրեւ հիւանդացաւ եւ մեռաւ որդին նորա, թաքոյց զնա. եւ առ արկ զնա 'ի մահիճս մարգարէին այ, եւ փակեաց զդուրս ընդդէմ նորա, եւ չոգաւ ոչ խնդրել 'ի նմանէն, այլ եպերել եւ աղերսել նմա: Իբրեւ ոչ, ասէ, խնդրեցի 'ի քէն որդի, եւ իբրեւ ասացի ես ցքեզ՝ եթէ մի խնդրեր ինձ, ընդէ՞ր առեր արկեր զիս յերկունս Եւայի, զի ազատեալ էի ես 'ի նոցանէն. եւ իշխեցուցեր 'ի վերայ իմ զմահ, յորմէ ապստամբեալն էի եւ չհամարէի ինչ զնա. քանզի 'ի պատճառս անիծեալ ամլութեան յերկոցունց 'ի սոցանէն հեռացեալ էի ես. զի վասն երկիւղին մահու ոչ խնդրեցի 'ի քէն որդի, եւ վասն ձաղանացն մոլորելոց՝ յորում կամ ես՝ ոչ գայի ես. ասացի ցքեզ՝ եթէ մի խնդրեր ինձ որդի: Արդ թէպէտ եւ լեզուով իւրով եպերէր զնա, այլ ունելովն զոտս նորա՝ զկեանս մեռեալ որդւոյն իւրոյ խնդրէր նա: Քանզի ոչ ցաւէր նմա այնպէս վասն մահու մանկանն, որպէս ցաւէր նմա վասն ձաղանացն զոր 'ի մարգարէիցն Բահաղու հանդերձեալ էր կրել:

Առաքեաց Եղիշա զԳեեզի, եւ ետ նմա զցուպն. զի եթէ արժանի է, եղիցի 'ի ձեռն նորա յարութիւն. եւ եթէ ոչ է արժանի, եպերեսցի անձամբ յանձին. վասն զի անարգեցաւ 'ի նմա զէնն մովսէսեան. զի թէպէտ մինչ գայր կինն ընդ առաջ նորա ոչ գիտէր նա, այլ կասկածելով կասկածէր նա. եւ վասն այնր ասաց “Ողջոյն ընդ քեզ եւ առն քում եւ մանկանն”: Իսկ իբրեւ կալաւ զոտս նորա, եւ մատեաւ Գեեզի 'ի բաց առնել զնա, ասէ ցնա. “Թոյլ տուր դմա, վասն զի անձն նորա դառնացեալ է, եւ տէրն՝ որ ծածկեաց յինէն յառաջ քան զժամս, արդ յայտնեաց ինձ յայսմ ժամու”: Իսկ մայր մանկանն իբրեւ ետես ե-

թէ առաքեաց նա զԳեեզի, ոչ հաւատաց եթէ կեցուցանէ զմանուկն. և ասէ. կենդանի է տէր եթէ ոչ թողից զքեզ. քանզի ոչ եթէ Գեեզի ետ զնա ինձ յարգանդէ՝ զի յաւելցէ տացէ զնա ինձ և 'ի մահուանէ. դու խնդրեցեր և տուաւ ինձ՝ իբրև ոչ էրն նա, և դիւրին է ա̃յ քում տալ զնա ինձ'ի ձեռն քո այժմ՝ զի է նա: Իսկ իբրև տարաւ Գեեզի զցուպըն և եդ 'ի վերայ մանկանն, և ոչ եկեաց, տըրտմեցաւ վարդապետն նորա, զի անարգեցաւ 'ի ձեռն աշակերտին իւրոյ. խորհուրդ խաչին՝ որ առաքեցաւ 'ի ձեռն նորա: Իսկ Եղիշա թէպէտ և ոչ ցպոյն խորհրդով խաչին կեցոյց զմանուկն, այլ ոչ եթէ առանց խորհրդոյն խաչին յարոյց և կենդանացոյց զնա:

Արդ փոքրկացաւ ըստ տղայոյն և կշռեցաւ 'ի վերայ նորա, զի նկարեսցէ զխորհուրդն անդրանկանն՝ որ փոքրկացաւն և խոնարհեցաւ, զի բաւական լիցի նմա ծոցն մարմնոյ կուսին: Իբրև ջեռաւ դարձեալ մարմին մանկանն 'ի ձեռն առաջին խորհրդոյն զոր նկարեաց, դարձաւ միւսանգամ յայս կոյս՝ միւսանգամ յայն կոյս, զի նկարեսցէ զնացիւքն իւրովք այսր և անդր զյայտնի խորհուրդ խաչին. ապա մտին հոգիքն 'ի մանուկ անդր: Եւ զի յորանչեաց եւթն անգամ, խորհուրդ եւթներորդ հազարին, զի նովաւ կենդանանան ամենայն մեռեալք:

Ապա յետ այսորիկ խափանեաց 'ի ձեռն ալիւրոյն զմահն 'ի կաթսայէն, և յագեցոյց 'ի փոքր գարեղէն նկանակէն զհարիւր մարդարէսն, զի նկարեսցէ զխորհուրդն զայնորիկ՝ որ 'ի հինգ գարեղէն նկանակէն յագեցոյց զհինգ հազար այր. թող զկանայս և զմանկունս:

Դարձեալ Նեեման զօրագլուխն Եդովմայեցւոց, զի նովաւ արար տէր փրկութի̃ Եդովմայեցւոց, այնու՝ զի սպան 'ի ձեռն նետին զԱխաբ անօրէն՝ որ դէմ եդեալ մարտնչէր ընդ Եդովմայեցիսն: Եւ վասն զի 'ի ձեռն սպանմանն զոր սպանն, ելին յանդորր մարգարէքն՝ որ նեղեալ ղօղեալ էին յայրսն, 'ի ձեռն Եղիշայի հատոյց զպարտսն՝ զոր պարտէին նմա մարգարէքն՝ որ փրկեցանն: Բայց առ սա ոչ էլ, վասն զի շաղախեալ էին ձեռք նորա արեամբ Ախաբու արքային

իսրայէլացւոց . ետ նմա զբժշկութիւն վասն հաւատոցն իւրոց ։ Եւ վասն զի ոչ էր հաղորդ միաբան սիրտն նորա ընդ նետին որ ել հանդարտագոյն 'ի միջոյ մատանց նորա ։ Արդ ոչ եթէ վասն զի մի՛ պղծեսցի նովաւ՝ ոչ ել առ նա , այլ վասն զի յայտ արասցէ և ցուցցէ զհամբերութիւն հեթանոսաց ։ Եւ զի ասաց ցնա , եթէ “Մկրտեսցի եւթն անգամ„ . զի արգելցէ զնա ընդ օրինօքն սրբութեան բորոտին , այն՝ որ արգելեալն էր ընդ պղծութեամբ բորոտին ։ Եւ զի եւթներորդ անգամաւն ազատեսցի 'ի ծառայութենէ բորոտութենէ , իբրև ծառայ հեբրայեցի՝ որ յեւթներորդ ամին ազատէր նա ըստ օրինացն 'ի յայտնի ծառայութենէն ։

Արդ եկն Նեեման իբրև սրբեցաւ , և ետ Եղիշայի արծաթ և ոսկի և զգեստս . և ոչ ընկալաւ՝ զի 'ի ձեռն այնորիկ նկարեսցէ զխորհուրդն բժշկութեան , զի ձրի առանց գնոյ տուեալ լինի 'ի տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ամենայն աշխարհաց 'ի ձեռն առաքելոց ։ Խնդրեաց դարձեալ հող՝ առ 'ի կորանս ամաչեցուցանել զիսրայէլ . զի օտարն հաւատաց եթէ և 'ի հողն երկրին բնակեալ է Աստուած , զոր ինչ հեբրայեցիքն և ոչ 'ի մարգարէսն հաւատացին՝ եթէ բնակեալ է Աստուած ։ Արդ ընթացաւ ճեպ 'ի ճեպոյ Գեեզի աստանդել շփոթել զճշմարիտ խորհուրդ վարդապետութեանն , և ասէ ցնա , եթէ “Տէր իմ առաքեաց զիս վասն քանքարոյ միոյ արծաթոյ և երկուց պատմուճանաց „ ։ Քանզի յայնմանէ իսկ զի ստիպեաց զնա՝ և առ երկուս քանքարս փոխանակ միոյն , անդէն իսկ առ նմին բասրեաց զնա , և զծածուկ ժլատութիւն նորա յայտնի փոփոխելով բանի նորա ։ Ետես , հարց ցնա վարդապետն իւր . “Ուստի՞ գաս Գեեզի „ . զի եթէ զղջասցի և խոստովանեսցի , թողցի նմա . ապա եթէ ուրասցի , պարտ և պատշաճ է զի ընդ արծաթոյն Նեեմանու՝ զոր առ նա 'ի ծածուկ , զի և զբորոտութիւնն Նեեմանայ զգեցցի յայտնապէս ։

Յետ այսորիկ իբրև հատանէին զփայտն որդիքն մարգարէիցն , անկաւ փայտատ միոյն 'ի նոցանէն 'ի գետն անդր . և ճչեաց և ասաց . “Ահա վայ , յայլմէ

մուրացեալ էր ծառայի քո »։ Հատ Եղիշա փայտ մի, և արկ ընդ նոյն տեղի 'ի լող. և ելն երկաթն, և ընկղմեցաւ փայտն. զի նկարեսցի խորհուրդն տեառն մերոյ, որ էջն 'ի դժոխս, և հան արտաքս 'ի միջոյ նորա զԱդամ՝ որ ընկղմեալ կայր 'ի խորս նորա ։

Յետ այսորիկ պաշարեցաւ Շամրին 'ի Բենհադադայ, այն՝ զոր կեցոյց Աքաաբ արքայ, և տիրեցաւ սով 'ի քաղաքի անդ, մինչ զի կերան կանայք զորդիս իւրեանց ։ Արդ փոխանակ զի տրտմեսցի Յորոբովամ որդի Աքաաբու, և զայրասցի 'ի վերայ Աքաաբու հօր իւրոյ՝ որ կեցոյց զնա, հատանել զգլուխն Եղիշէի ձեռպեալ ընթանայր նա ։ Մարգարէացաւ նա 'ի նմին ժամանակի վասն յագութեն, և ոչ հաւատաց նմա սպայազնն՝ որ առաքեցաւ ունել զնա. և ետես աչօք իւրովք, և ոչ ճաշակեաց 'ի նմանէն ըստ անիծիցն Եղիշայի՝ որ եղև 'ի վերայ նորա ։

Յետ այսորիկ առաքեցաւ մի ոմն 'ի մարգարէիցն օծանել զԱհով՝ իբրև ոչ գիտէր զնա. և իբրև ետես զզօրագլուխն և ասաց, "Բան ունիմ ես ընդ քեզ մեծիդ", պատասխանի ետ Յահով և ասէ. "Յո՞ 'ի մէնջ ամենեցուն". ապա գիտաց մարգարէն եթէ նա ինքն է. վասն զի զայս նշան խնդրեաց նա, զի երևեսցի նա և յայտ լիցի ։ Տարաւ մոյծ զնա 'ի տուն՝ և օծ զնա և հրամայեաց նմա քինախնդիր լինել վրէժխնդրութեն 'ի տանէն Աքաաբու ։ Իսկ իբրև թագաւորեցաւ Յահով, և սպան զՅովրամ զորդին Աքաաբայ, արդ փոխանակ զի սգասցի Եզաբէլ վասն որդւոյն իւրոյ որ մեռաւն, 'ի նմին ժամու պառաւն խորշմերես[1] մատուցեալ սևացուցանէր զմացառս աչացն առ բբօքն՝ ծարրօքն. և պաճուճէր յօրինէր զգլուխն երփն երփն ներկուածովքն գունակաց առ ճակատովն, որպէս զի տեսցէ զնա Յահով և ցանկասցի և առցէ զնա կնութե ։ Բայց ստիպեցաւ ակամայ կամօք. և փոխանակ ողջունին՝ որ պատրաստեալ էր տալ նմա, անարգեաց և թշնամանեաց զնա, և ասէ ցնա. "Ողջ եկ Զամբրի սպանօղ տեառն քո" ։ Բորբոքեաց զնա այսու բանիւ 'ի բարկութիւն. զի 'ի նմանէն և յորդւոց նորա ա-

1 Միւս օրինակն ծմերէ» ։

րասցէ զվրէժխնդրութի՛ւն, որպէս արար յանդրանիկ որդւոյն նորա զոր սպանն։ Եւ զի ասաց՝ եթէ «Յերէկոյի տեսի ես զարիւն Նաբովթայ և որդւոց նորա», կամ թէ զմտաւ ինչ ածէր վասն որոյ իրիք խօսեցաւն ընդ նմա, և կամ թէ 'ի տեսլեան յայտնեաց նմա՝ զի կանխեսցէ և արասցէ զվրէժխնդրութիւնն 'ի վաղիւ անդր։

Արդ գրեաց առ որդիսն Շամրնի. կամ թագաւորեցուցանել զմի ոք յորդւոցն Ախաբու, և գալ ունել զդէմ նորա 'ի մարտ պատերազմի, և կամ հատանել և տալ բերել առ նա զգլուխս եւթանասուն որդւոցն արքայի։ Իբրև հատին և ետուն բերել, և կուտեցին զնոսա երկուս կուտոյս, խօսել կալաւ Յահու և ասէ. զի եթէ ես ապստամբեցայ 'ի տեառնէ իմմէ և սպանի զնա, զի առից զթագաւորութի՛ւն նորա, որպէս և Իզաբէլն ասաց, զորդիս արքայի ո՞վ ըսպան. զի ահա դայեակք իւրեանց սպանին զնոսա։ Եւ կատարեցաւ առ նոսա բանն Աստուծոյ՝ զոր ասաց 'ի ձեռն Եղիայի մարգարէի, թէ «Մի՛ մնասցէ Ախաբու որ դառնայցէ յորմ և հեղուցու ջուր. և որ կապեն և որ արձակեն յԻսրայէլ». այս ինքն մի՛ մնասցէ 'ի տան նորա 'ի մարդոյ մինչև 'ի շուն։ Յայնմ ժամանակի եղև վրէժխնդրութի՛ւն և յԵրուսաղէմ 'ի Գոթողիա քեռոյն Ախաբու. զի սպան զորդիս որդւոյն իւրոյ, և թագաւորեցաւ փոխանակ նոցա. որպէս զի ընաւ մի՛ մնասցէ մնացորդ յանօրէն ազգէն Ախաբու։

Արդ հիւանդացաւ Եղիշա. և եկն առ նա արքայն Իսրայէլի, և լաց առաջի նորա. նա հատոյց վաղվաղակի զվարձս արտասուաց նորա։ Ետ պատասխանի և ասէ ցնա. «Առ զաղեղն, և արկ զնետ 'ի լար անդր»։ Եւ եդ Եղիշա զձեռս իւր 'ի վերայ ձեռացն արքայի. որպէս զի 'ի զօրութէ՛ն՝ որ բնակեալն էր 'ի ձեռս մարգարէին հիւանդի, հզօրասցին թոյլ և լոյծ ձեռքն արքայի կոտորել զեդոմ, այն որ կոտորեայն և սպառեաց զժողովուրդն. քանզի յիսուն սպառազէն և տասն կառք մնացին նոցա. այնոցիկ՝ որ յաւուրս Սողոմոնին քառասուն հազար ասպաստան երիվարաց էր նոցա։ Արդ հարց մարգարէն 'ի սրտի իւրում զա՛ծ,

թէ քանի՛ անգամ ձգեսցէ արքայն զնետն իւր ընդ պատուհանն՝ զայսչափ կոտորած կոտորեսցէ յԵդոմ ։ Իսկ իբրև ձգեաց երիցս անգամ և եկաց, բարկացաւ Եղիշա. վասն զի ետես եթէ ոչ կարէ երիցս անգամ փոքր զօրուն սատակել զԵդովմայեցիսն ։ Իսկ իբրև եհար վանեաց զնոսա երիցս անգամ, և սկսաւ յաղթահարել, ապա գիտաց եթէ բարւոք և յարժանի ցասեաւ ընդ նմա մարգարէն Տ̃յ ։ Քանզի հոգւովն գիտաց եթէ ոչ կարէ երիցս անգամ կոտորել սպառել զԵդովմայեցիսն ։ Քանզի յաւուրս Ախիմ արքային իսրայելացւոց եկն Փուա արքայ ասորեստանի, ետ նմա Նախնիմ [1] հազար քանքար արծաթոյ, զի կալցի զթագաւորութիւն 'ի ձեռն իւր ։ Եւ յաւուրս Փակեայ թագաւորին իսրայելացւոց եկն Թագղաթփաղսար արքայն ասորեստանի, և գերեաց զերկիրն Նեփթաղիմեայ. այս ինքն զտունն Հռուբէլի և Գադայ և զկէս ազգին Մանասէի ։ Եւ որ ամ ինն էր Հոշեայ արքայի, հար վանեաց Սաղմանասար արքայն ասորեստանի, և կացոյց զՇամրին 'ի ծառայութ̃ի, և գերեաց զամենայն Իսրայէլ յասորեստան, բաց յազգէն յուդայեան ։ Արդ եկ համարեաց յայսմ վայրի զամենայն կուռս օտարոտիս նոցա, և զի քանի անգամ բարկացուցին զնա նոքա և թագաւորք իւրեանց, որպէս զի եղիցին առ 'ի պատասխանի տալ տուգութ̃են՝ որ գերեաց զնոսա ։

Դարձեալ յամին չորեքտասաներորդի Եզեկիայ արքայի եկն եհաս Սենեքերիմ 'ի վերայ Երուսաղէմի, և առաքեաց առ նա Եզեկիա, “Մեղայ ես, ասէ, զի ապստամբեցի 'ի քէն. դարձ համարեա, և զոր ինչ արկցես 'ի վերայ իմ, բարձից„ ։ Եւ արկ 'ի վերայ նորա երեքարիւր քանքար արծաթոյ, և երեսուն քանքար ոսկւոյ ։ Եւ ետ նմա. անդէն և անդ 'ի բաց գնաց ։ Եւ ստեաց Սենեքերիմ յուխտին յայսմիկ, և դարձաւ առաքեաց 'ի վերայ նորա զտակառապետն. անկաւ կոտորեցաւ անդէն նոյն ինքն տակառապետն, և ամենայն զօրք բանակի նորա ։

Յետ այսորիկ թագաւորեցաւ զկնի Եզեկիայի

1 Յօրինակին 'ի լուսանցսն Մանայիմ ։

Մանասէ. և վասն զի մեղաւ առաւել քան զամենայն թագաւորս, որ կացեալ էին 'ի Յուդայ, ասաց տէր՝ եթէ “Արկից 'ի վերայ Երուսաղեմի զլարն Շամրնի, և զկշիռն Աքաբու„. յայտ արար և եցոյց՝ եթէ զոր օրինակ աւերեցաւ Շամրին 'ի ձեռաց Սաղմանասար արքայի, և տունն Աքաբու 'ի ձեռաց Յահուայ, սոյնպէս աւերեցից զԵրուսաղէմ 'ի ձեռն Նաբուքոդոնոսորայ բաբելացւոց: Արդ համարեցաւ յայսմ վայրի զանօրէնութիւն Երուսաղեմի, որպէս և համարեցաւ զՇամրնին. զի տացէ պատասխանի վասն աւերածոյն Երուսաղեմի, որպէս և ետ պատասխանի վասն աւերածոյն Շամրնին: Արդ զնշանն զոր տեսաւ Յովսիա 'ի վերայ գերեզմանի մարգարէին՝ որ 'ի Հրէաստանէն էր, իբրև այրէր զոսկերս քրմացն. քանզի եթէ նա միայն կայր յամենայն գերեզմանացն՝ որ էին 'ի Բեթէլ, և կամ եթէ տեսիլ ինչ ետես 'ի վերայ գերեզմանին. զի իբր հարցցէ վասն տեսլեանն, երկրորդեսցեն նմա զամենայն զխօսսն որ ինչ խօսեցաւ 'ի մարգարէից անտի՝ որ յայնմ գերեզմանի թաղեալ էին: Եւ զի գիտասցէ եթէ մարգարէութիւն խթէր զնա 'ի ծածուկ, զի յայտնապէս կատարեսցէ զբանսն իւր 'ի ձեռն գործոցն և արդեանցն: Եւ զի սպանաւ Յովսիա արդար յանօրէն Փարաւոնէ, մի՝ վասն զի փաղփաղեաց և ել 'ի պատերազմ իբր ոչ հարց ցա̃ծ. և երկրորդ՝ զի ժողովեսցի խաղաղութեամբ առ հարս իւր յառաջ քան զչարութիւն, որպէս և ասաց Խողդէ կինն մարգարէ: Քանզի յետ երից ամաց մահուն նորա ել Փարաւոն արքայն եգիպտացւոց, և արկ զհարկ 'ի վերայ երկրին նորա. և կապեաց զՅահովախազ, և տարաւ ընդ իւր յԵգիպտոս, և մեռաւ անդէն. և թագաւորեցոյց զՅովակիմ որդի իւր ընդ նորա:

Դարձեալ որ ամ երկրորդ էր Յովակիմայ արքայի, եկն Նաբուքոդոնոսոր արքայ բաբելացւոց, և գերեաց զՅովակիմ և զդանիէլեանս, և թագաւորեցոյց զՅովաքին նորուն որդի ընդ նորա: Եւ յետ երից ամաց եկն Նաբուքոդոնոսոր կրկին անգամ և գերեաց զարքայն Յեքոնիա հանդերձ կանամբք և մեծամեծօք իւրովք, և զԵզեկիել մարգարէ, և զարս պատերազմօղս զօրու. և թագաւորեցոյց զՍեդեկիա հօրեղ-

բայր Նորուն ընդ Նորա ։ Դարձեալ յամին մետասաներորդի թագաւորութեն Ծեդեկիայ եւ Նաբուքոդոնոսոր երրորդ անգամ, և այրեաց զտունն սրբուն, և հրձիգ արար զքաղաքն առ հասարակ, և խլոյց 'ի գերութի զժողովուրդն յուդայեան ։

ԿԱՏԱՐԵՑԱՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ

ՍՐԲՈՅ՛Ն ԵՓՐԵՄԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Ա. ԵՒ Բ. ՄՆԱՑՈՐԴԱՑ

ՏԵԱՌՆ

ԵՓՐԵՄԻ

ԽՈՐԻՆ ԱՍՈՐԻՈՅ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ԻԲՐԱՄԵՆՈՒ

ՄԱՏԵՆԱԳԻՐՆ դպրութեան իբրամենու, զի է մեկնութի նորա դպրութի՝ վարուցն աւուրց թագաւորաց Յուդայ, յարարածոց և Յեշուայ որդւոյ Նաւեայ, և յազգաց դատաւորաց, և 'ի Սամուէլէ և 'ի Դաւթայ, և 'ի թագաւորութէ զօդէ յօդէ. և վասն այսորիկ թէպէտ և վասն սակաւ ինչ՝ զի գոյ 'ի սմա, որ ոչ ասացեալ է 'ի մարգարէս՝ ոբուք հասու եղաք մեք, պարտ և պատշաճ է զի հաւանեցուսցուք: Այլ վասն այնորիկ՝ որ յիւրաքանչիւր գիրս գրեալ են հաւանութիք նոցա, ընդունել կրկին հաւանութիս ասա ոչ է արժան: Զի թէպէտ և մատենագիրն՝ վասն զի արասցէ զկարգ պատմութեցն իւրոց, հարկ եղև նմա՝ զի յամենայն գրոց որ ինչ յօգուտ և 'ի պատշաճ իցէ նմա՝ բերցէ, բայց սակայն մեք ոչ եթէ զկնի կարգելոյ և շարելոյ պատմութեցն ընթանամք, այլ 'ի մեկնութի այնոցիկ՝ որ ինչ ծածկեալն է 'ի նմին պատմութե, փութացեալ եմք հասանել: Արդ թոյլ տայցուք մեք զայն ինչ, որ ինչ յայլում կողմանս մեկնեալ է մեր. և վասն սակաւուց՝ որ ինքն յինքենէ ունի առ իւր, վասն սոցուն

որպէս և արժանի արասցէն զմեզ շնորհքն, և որպէս պիտոյ իցէ տալ պատասխանի՝ տացուք ։

Արդ սկսաւ մատենագիրս այս գրել զազգս և ըզ-դարս յԱդամայ մինչև 'ի Նոյ. և գրեաց դարձեալ զազգս որդւոյն Նոյի, որք ընկալան զլեզուսն 'ի շինել աշտարակին. զի են որդիք Յաբեթայ համդերձ Յաբեթիւ հնգետասան ազգ ։ Եւ որդիքն Քամայ համդերձ Քամաւ երեսուն ազգ, թող զայլազգիսն և զկապպադովկեցիսն՝ որ էին 'ի նոցանէն ։ Եւ որդիքն Սեմայ, համդերձ Սեմաւ քսան և ութ ազգ. զի են ընդ ամենայն միանգամայն ազգքն ամենայն համդերձ այլազգեօքն և կապադովկեցւովքն եւթանասուն և հինգ ազգ ։

Գրեաց դարձեալ 'ի Սեմայ մինչև զԱբրահամ, զի լինին տասն դարք ։

Եւ գրէ դարձեալ վասն որդւոցն Աբրահամու՝ որ 'ի Հագարէն և 'ի Քետուրայէն. զի ցուցցէ և յայտ արասցէ՝ թէ յառաջ քան զծնանելն որդւոցն Յակովբու և ընդունել զօրհնութիւնն ելեալ էր 'ի ձեռն որդւոց սոցա օրհնութիւնն ընդ հեթանոսս ։ Որդիքն Իսմայելի համդերձ Իսմայելիւ երեքտասան լինին թուով. և որդիքն Կենդուրայ երեքտասան. իսկ որդիքն Եսաւայ համդերձ Եսաւաւ քառասուն և երկու ազգք ։

Գրէ դարձեալ և վասն ութ թագաւորացն՝ որ թագաւորեցին յԵդոմ յառաջ քան չև էր թագաւորեալ թագաւոր 'ի վերայ Իսրայելի. զի արդեւք ընդ նոսա նախանձեցաւ Իսրայէլ յաւուրս Սամուէլի՝ առնել իւրեանց թագաւորս ըստ ամենայն հեթանոսաց ։

Գրէ դարձեալ և վասն մետասան նահապետացն որք կացին յԵդոմ զկնի թագաւորացն ։

Գրէ դարձեալ երկոտասան ազգք յորդւոցն Յակովբու, և երկոտասան Յակովբայ մինչև 'ի Դաւիթ. այս ինքն 'ի Փարեսայ 'ի Դաւիթ համարեայ ։

Դարձեալ 'ի Դաւթայ մինչև ցՅեքոնիա արքայն, որ չոգաւն 'ի գերութին, ինն ու տասն ազգս ։ Իսկ իբրև համարէր զորդիսն Յեքոնիայ, որ 'ի գերութին չոգաւ, և հասանէ մինչև 'ի Զօրօբաբէլ, որով դարձաւ գե-

րու՟ին, և շինեցաւ տաճարն վերջին ։ Դառնայ դարձեալ գրէ զորդիսն Զորոբաբէլի, մինչ զի եկն և պատահեցաւ այնմիկ՝ յորոյ աւուրս գրեցաւ սոյն դպրութ՟իս այս իբրամենու ։

Յետ այսորիկ գրեաց վասն նահապետացն ազգաց տանն Հուբէլի, իբրև համարէ մինչև յՆբերիայ իններորդ ․ յորոյ աւուրս գերեաց Թագղաթփաղասար արքայն ասորեստանի զտունն Հուբէլի և Գադայ և զկէս ազգին Մանասէի ։

Դրէ դարձեալ և վասն փրկութեանն՝ զոր արար նոցա յառաջ քան ոչ էր գերեալ զնոսա ․ զի մատնեաց 'ի ձեռս նոցա զայնոսիկ՝ որ բնակեալ էին 'ի վրանս քրձեղէնս ․ և կոտորեցին զնոսա, վասն զի ապաւինեցան 'ի նոսա, և կարդացին առ նա ։ Եւ ապա իբրև դարձան 'ի տեառնէ, գերեաց զնոսա ասորեստանեայն, և 'ի վերայ գետոյն Գոզան գաւառին Պարթևաց տարաւ և նստոյց զնոսա ։

Յետ այսորիկ գրեաց զորդիսն Ղևեայ մինչև 'ի Մովսէս, զի նովաւ ելին նոքա յԵգիպտոսէ մինչև յԱզարիայ քահանայ, զի նա առաջին պաշտեաց 'ի տաճարին՝ զոր շինեաց Սողոմոն ․ և յԱզարիայէ համարին մինչև 'ի Յովսեդեկ[1], այն՝ որ յաւուրս նորա գերեաց տէր զորդիսն Յուդայ 'ի ձեռն Նաբուքոդոնոսորայ բաբելացւոց 'ի Բաբելովն ։

Յետ այսորիկ գրեաց վասն անուանցն ղևտացւոց զորդիսն Գեթսոնի և զորդիսն Ղևեայ, և վասն ղևտացւոցն որդիքն Ամինադաբայ՝ կայաթեանք և ղեւեանք, զի 'ի նոցանէ Շմուէլ մարգարէ ․ զի և սոքին իսկ կային 'ի պաշտաման ընդ աջմէ սեղանոյն ։

Դրէ դարձեալ զղևտացիսն զորդիսն Մերարեայ յիւրեանս, որք ընդ ահեկէ սեղանոյն ունէին զտեղիս իւրեանց առ 'ի պաշտաման ըստ իւրեանց կարգի ։

Յետ այսորիկ գրեաց վասն գիւղիցն զոր առին որդիքն Գեթսոնի և կայաթեանքն և մերարեանքն, թող զգեօղսն ապաւինութ՟ե՝ որ յամենայն ազգաց տուաւ նոցա ։

Համարեաց դարձեալ և զազգն Բենիամենի, և

1 Ի լուսանցս օրինակին Սադովկ ։

կարգեաց և ած մինչև 'ի մահն Շաւուղի և որդւոցն նորա ։

Նաև գրեաց վասն թագաւորութեանն Դաւթի 'ի Քեբրոն, և վասն գալոյն նորա յԵրուսաղէմ ։ Գրեաց և վասն նահատակութե̃ցն զոր արարին մի մի 'ի քաջամարտիկ պատերազմողացն նորա ։

Յետ այսորիկ ասաց և զթիւ զօրուն միոջ միոջ յազգաց անտի յիւրաքանչիւր գնդէ, զի ժողովեցան կացուցանել զԴաւիթ 'ի վերայ թագաւորութե̃ն ։ Եւ զի է միահամուռ բովանդակ ընդ ամենայն թիւն նոցա երեքարիւր հազար և երեսուն և եւթն հազար և չորեքարիւր ։

Նաև ասաց վասն գալոյն տապանակին յերկրէն այլազգեաց· և զի ձգեաց 'ի նա զձեռնն Ոզա քահանայ ուղղել զնա, իբրև դղրդեցաւ 'ի սայլակէ անտի անկանել· և սպան զնա տէր· վասն զի 'ի վերայ ուսոցն իւրեանց ասացեալ էր յօրինացն ցքահանայսըն՝ զի բարձցեն զնա, և ոչ եթէ 'ի սայլակի իբրև զայլ անօթս վրանին՝ զոր բառնային՝ ասացեալ էր բառնալ զնա ։

Նաև ասաց դարձեալ վասն օրհնութե̃ցն զոր օրհնեաց Դաւիթ զտէր, այն Դաւթին Ասափայ և եղբարց նորա, այնոցիկ՝ զի պսակ դասուցն նոցա պար առեալ գալոյն փառաւորէր Դաւիթ ընդ քահանայապետսն ։ Զայսոսիկ ասէր սկիզբն օրհնութեանց՝ զոր ասաց ոչ Դաւիթ և քահանայապետքն, այլ Դաւիթ· զի թէպէտ և առ նմա էին 'ի ժամանակին իբրև օրհնէր Դաւիթ, այլ ոչ եթէ ընդ նմա ասէին· զի ինքն միայն գրեալ է, զի ասէր նա ։

ԱՐԴ

ԱՍԱՑ ԴԱՒԻԹ ԱՌԱՋԻ ՏԱՊԱՆԱԿԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

ԳԼՈՒԽ Ա

ԽՈՍՏՈՎԱՆ *եղերուք տեառն, զի դարձոյց առ մեզ զտապանակն կտակարանաց. և կարդացէք զանուն նորա, և մի զանուն Դագոնայ՝ որ յաղթեցաւ պարտեցաւ 'ի զօրութ̃էն որ բնակեալն էր 'ի տապանակին կտակարանաց: Ցուցէք 'ի հեթանոսս զառաջին գործս նորա, զեգիպտացւոցն, զծովուն, զանապատին: Եւ պատմեցէք զարուեստս սքանչելեաց նորա, զքաջութիւնսն զոր արար յաւուրս մեր յայլազգիս անդր: Ուրախ եղիցին սիրտք այնոցիկ իբրև զմերս յամենայնի՝ որ խնդրեն զտէր, ըստ մերում նմանութ̃են: Խնդրեցէք զտէր և զզօրութիւնս յաղթութ̃ե նորա. և կամ քննեցէք վասն տեառն և վասն մեծազօր զօրութ̃ե նորա. և կամ նախանձիցիք 'ի նա՝ խնդրութեամբ խնդրել զվրէժ տեառն զամենայն զրկողաց նորա, այս ինքն յուրացողաց նորա՝ որք հայհոյեն զնա. որք կեանն 'ի շնորհաց նորա, և ոչ լինին շնորհահատոյցք բարութ̃եց նորա. վայելեն նորայովքն, և պատրաստեն զլեզուս իւրեանց իբրև զգեղարդունս խոցոտիչս առ 'ի նիւթել զնիւթս հայհոյութ̃ե և ուրացութ̃ե: Դալարացեալ են մարմինք իւրեանց 'ի դարմանոց բարերարին, և չորացեալ են միտք իւրեանց առ 'ի տալոյ զօրհնութիւնս ամենատեառնն: Ողկուզալիցք են առնլոյն 'ի մշտնջենաւոր շնորհացն առ 'ի հաստատութ̃ի մարմնաւոր կենացն, և խոպանացեալք են մատուցանել խոստովանութ̃իս առ 'ի մօտաւոր հոգեղէն դարմանոցն: Նախանձայոյզք եղերուք իբրև ծառայք մտերիմք վասն սաստակայաղթ զօրութ̃ե նորա: Յիշեցէք զքաջութ̃իւնն՝ զոր*

արար 'ի Թշնամիս ձեր, և պահեցէք զիրաւունս բերանոյ նորա. զի Թէպէտ և յամենայնի՝ որք տպաւորեալքն են ըստ մերում բնութե̃ս՝ կան օրէնք նորա, բայց սակայն դուք մի՛ մոռանայք զկտակարանս նորա. զի նա ինքն է, և պարգևք նորա ոչ խափանին. և կամ զի անդէն 'ի միում դարի անդ վասն այլափոխ հասակացն գտեալ լինին հազար դար: Երդուաւ այսուհետև Աբրահամու, զի զաւակի նորա տացէ զերկիրն քանանացւոց. և ետ զկտակարանս որդւոցն Սահակայ 'ի լեռնէն Սինայի: Զի իբրև սակաւքն էիք և բնակեալք էիք 'ի նմա, և իբրև իշխանք նորա բազումք էին, ոչ ետ միոջ 'ի նոցանէ մեղանչել ձեզ. և որք յանդգնեցան ժպրհութեամբ մեղանչել ձեզ, խիստ և անհնարին յանդիմանութ̃քն սանձեցան, և առին յերասանակս, և կացին առին զտեղի: "Մի՛ մերձենայք, ասէ, յօծեալս իմ", վասն Քրիստոսի՝ որ կարգելոցն էր 'ի նոցանէն: "Եւ 'ի մարգարէս իմ մի՛ մեղանչէք". այն իսկ է՝ եթէ "Մարգարէ է, և աղօթս արասցէ 'ի վերայ քո": Օրհնեցէք զտէր ամենայն երկիր և Իսրայէլ. աւետարանեցէք օր ըստ օրէ զփրկութիւն անձանց ձերոց: Պատմեցէք 'ի հեթանոսս զփառս մեծութեան նորա, այն՝ որ ահաւորն է ոչ միայն 'ի վերայ թագաւորաց նոցա, այլ և 'ի վերայ աստուածոց նոցա. քանզի նոքա և ոչ ինչ ոչ արարին, իսկ ա̃ծ մեր բանիւ իւրով զերկինս արար: Առէք դուք մանկունք ժողովրդեան նորա զպատարագըս, ոչ զպատարագս անասնոց, այլ խոստովան եղերուք նմա 'ի յաղօթս բերանոց ձերոց. և երկիր պագէք նմա 'ի ձեռն սուրբ օրհնութեանն: Դողասցեն յերեսաց նորա ամենայն երկիր հեթանոսաց, և ահա հաստատեալ ուղղի աշխարհս 'ի շարժմանց և 'ի պատերազմաց: Ուրախ եղիցին երկինք և ցնծասցէ երկիր ընդ գալ տապանակին կտակարանաց. և ասասցեն 'ի մէջ հեթանոսաց՝ թէ տէր թագաւորեաց 'ի վերայ ժողովրդեանն իւրոյ, և զահի հարեալ երկիցեն դարձեալ և այլ մարտնչել ընդ մեզ: Ցնծասցեն ծով նաւովք իւրովք, և ուրախ լիցի երկիր անդաստանօք իւրովք, և զուարճասցին ընդ մեզ ծառք անտառի յամենայն ժամ, երբ և յանդիմանէ սատու-

գութ՟ըն իւրով զհեթանոսս մնասակարս մեր ։ Արդ դուք ասասջիք. խոստովան եղերուք տեառն զի բարի է, և յաւիտեան կացցեն առ մեզ շնորհքս այս ։ «Փրկեա զմեզ տէր ա՟ծ մեր, և ժողովեա զմեզ 'ի հեթանոսաց» ։ Այնոքիկ են՝ որ գերեցան յաւուրս դատաւորացն 'ի ժամանակի՝ զի հեթանոսքն որ շուրջ էին զնոքօք՝ յաղթէին և հնազանդէին զնոսա ։

Իսկ յետ այսորիկ իբրև օրհնեաց զնա հանդերձ քահանայապետօքն 'ի մէջ քահանայիցն, ետ զպաշտօնն 'ի ձեռս քահանայիցն՝ զի եղիցին պաշտել մի մի 'ի նոցանէն յաւուր յորում հասցէ նոցա ։ Կացոյց և զԱբեդդար իդեթոմացի [1], և զընկերս նորա վաթսուն և ութ, պահել զդրունս արտաքինս ։ Եւ Հածրոն քահանայ և ընկերք նորա, զի մատուսցեն զողջակէզս զառաւօտուն և զերեկորին, և զի ուսուսցեն ժողովրդեանն զօրէնս տեառն ։ Կացոյց դարձեալ զՀաման և զնորուն ընկերս արդարս օրհնել և փառաւորել զտէր, ոչ 'ի փողս և 'ի թմբուկս և 'ի սրինգս և 'ի քնարս, այլ քաղցր բերանով և սուրբ աղօթիւք ։ Արդ 'ի ժամ հաստատութեան օրինացն մատուցեալ Դաւիթ խափանէր զօրէնսն. զի հոգեղէն օրհնութ՟իքն զորս 'ի ներքն հրամայէր արկանել զպատարագսն մարմնաւորս որ գրեալ էին 'ի նմա խափանէր ։ Իսկ իբրև ուղղեաց հաստատեաց կարգեաց կազմեաց զայս ամենայն, արձակեաց զժողովուրդն յիւրաքանչիւր տեղիս. դարձաւ և օրհնել զընտանիս իւր յայսմ օրհնեալ աւուր ։

Արդ իբրև նստէր Դաւիթ և Նաթան մարգարէ, խօսել կալաւ Դաւիթ և ասէ ցՆաթան. պարտ և պատշաճ ի՞նչ իցէ, եթէ փառաւորեսցի տունս իմ քան զտունն ա՟յ. զի ես նստիմ աւասիկ 'ի տաճարս մայրայարկս կոփածոյս և տախտակամած դրօշեալ վանդակակապ, և տապանակ կտակարանաց տեառն բնակեալ է 'ի մաշեղէն վրանի ։ Արդ առանց հոգւոյ մատուցեալ մարգարէն հարցանէր ցընկեր իւր. և առանց յայտնութեան հարցեալն հարցողին մատուցեալ վճիռ պատասխանատութ՟ե առնէր, թէ «Ջա-

1 Միւս օրինակն Գէթացի ։

մենայն ինչ որ 'ի սրտի քում է, արա. վասն զի տէր
ընդ քեզ է„։ Արդ Նաթանն՝ որ 'ի տուէն 'ի բան
կամաց անձին իւրոյ խօսեցաւ, եղև 'ի վերայ նորա
յայտնութիւն 'ի գիշերի, և եկն ասաց ցԴաւիթ, ոչ
զայն զոր ասացն՝ եթէ “Ամենայն ինչ որ 'ի սրտիդ
քում է, արա„. այլ զի “Դու, ասէ, մի՛ շիներ ինձ
տուն ասէ տէր„։ Վասն զի և ոչ միում ումեք 'ի դա-
տաւորաց անտի՝ զոր կացուցի ես 'ի ժողովրդեանն
իմում ապրեցուցանել, և ոչ ասացի թէ ընդէ՞ր ոչ
շինիցէք ինձ տուն մայրայարկս ։ Եւ այժմ թէպէտ
և եկիր դու յղելովն հօր քո տեսանելով զողջոյն եղ-
բարց քոց, այլ ես ածի զքեզ 'ի հօտէ խաշանց ։ Իբ-
րև եկիր դու 'ի բժշկութիւն Շաւուղի, և սպանանել
զսկայազնն յայլազգեաց, և արարի զքեզ թագաւոր՝
մինչև հովիւն էիր դու. ես եղէ ընդ քեզ զօրութեամբ,
զոր ինչ յամենայն մարտ պատերազմացն այնոցիկ ա-
րարեր քաջութիւն ։ Ես արարի քեզ անուն իբրև միոջ
'ի մեծամեծաց երկրի. այս ինքն իբրև զՆամրովթ՝
որ սկայն էր, և զնորուն ընկերսն՝ որ յառաջ քան
զքեզ յամենայն մարտ պատերազմաց նահատակեալ
էին ։ Եւ հաճեցայ ես յԻսրայէլի. և այլ մի՛ յաւել-
ցին որդիք անօրինացն գերել զնա յաւուրս քո, որ-
պէս և գերեցին զնա որդիքն ամոնացւոց և մադիա-
նացւոց յաւուրս Նափեթայ և Գեդէոնի ։ Եւ կար-
գեսցի թագաւորութիւն քո 'ի զաւակի քում, և շնորհք
իմ մի՛ անցցեն յորդւոյն քումմէ՝ որ ելանէ յերանաց
քոց. այս ինքն մի՛ առցի 'ի նմանէն թագաւորու-
թիւնն՝ թէպէտ և յանցանիցէ, որպէս առաւ 'ի Շա-
ւուղէն ։

Իսկ իբրև երկրորդեաց Նաթան Դաւթի զոր ինչ
'ի տեառնէ խօսեցաւ ընդ նմա, սկսաւ ասել Դաւիթ
առաջի տեառն. ո՞վ եմ ես, զի արարեր ինձ զայս
զոր ինչ ոչ արարեր երբէք միում ումեք 'ի թագաւո-
րաց երկրի. զի թէպէտ և յաչս իմ մեծ է այս՝ զի 'ի
զաւակի իմում կարգեսցի թագաւորութիւն յաւիտեան՝
որպէս և ասաց Նաթան, և կամ զի մինչև եկեսցէ
այն՝ որոյ թագաւորութիւն է, որպէս և ասաց Յա-
կոբ, այլ յաչս քո կարի փոքր է այս ։ Քանզի ոչ ե-
թէ միայն ինձ արարեր դու զառաւել մեծամեծս,

այլ զամենայն՝ որ կատարեալ են յերկիւղէդ քում, հանես զնոսա ՚ի խաւարէ ՚ի լոյս. այս ինքն ածես դու զնոսա ՚ի խոնարհութենէ ՚ի բարձրութիւն: Արդ զի՞նչ պարծեցայց սիրովս իմով առ քեզ. զի քեզ իսկ յայտնի են գործք ծառայի քո. և վասն այսորիկ բարձրացուցեր զծառայ քո: Եւ արդ այժմ զի հաներ զժողովուրդ քո ՚ի մեծամեծ նշանս և յարուեստըս, և ուղղեցեր հաստատեցեր զնա ՚ի ժառանգութեան իւրում, զի եղիցի քեզ ժողովուրդ յաւիտեան, ուղղեսցի արդ և տունն Դաւթի մինչև յաւիտեան. այս ինքն կատարեսցի գործովք և արդեամբք զամենայն զոր խոստացար ինձ ՚ի ձեռն բանի. քանզի յայտնեցեր ինձ խորհուրդ ՚ի ձեռն Նաթանայ, և վասն այնորիկ կաց յաղօթս՝ զի եղիցի գործովք: Արդ դու ես տէր Աստուած, որ խօսեցարդ զայս, օրհնեցեր և օրհնես դու յաւիտեան զտունս արդարոց:

Յետ այսորիկ կոտորեաց Դաւիթ զայլազգիսն, և առ զլար չափանի ՚ի ձեռաց նոցա: Կամ յերկրէն Իսրայէլի առեալ էր այլազգեացն յառաջ քան ոչ էր թագաւորեալ Դաւիթ, և պահանջեաց ՚ի նոցանէն Դաւիթ իբրև թագաւորեցաւ. և կամ այն իսկ է՝ զի մուտ յերկիր նոցա, և առ զԳաթ հանդերձ ագարակօքն: Կոտորեաց դարձեալ զմովաբացիս, որք հնազանդեցին զժողովուրդն նորա. և արար զնոսա ծառայս հարկատուս: Եւ սպան զթագաւորսն Մծուբնի. և եդ սահմանս ՚ի գետն Արածանի: Կոտորեաց զեդովմայեցիս՝ որ եկին հասին ՚ի թիկունս օգնականութեան Ադրահազարու, և արար և զնոսա ծառայս հարկատուս: Բայց ՚ի պղնձոյն զոր առ Դաւիթ ՚ի հեթանոսաց, զայս ամենայն արար Սողոմոն ծովըս և սիւնս և զեզինս հանդերձ ամենայն անօթօքն պղնձի: Սրբեաց դարձեալ Դաւիթ զանօթս ոսկւոյ և արծաթոյ և պղնձոյ, զոր ետ տանել նմա Փուա արքայն անտիոքացւոց հանդերձ ոսկւովն և արծաթովըն՝ զոր առ ՚ի հեթանոսաց, որ շուրջ զնոքօք էին :[1]

Առաքեաց դարձեալ հրեշտակս մխիթարել զՀա-

[1] Յօրինակին կայ թերակատար յաւելուած [illegible] որդին [illegible]. որ չերևի ՚ի միւս օրինակն :

նան արքայն վասն մահու հօրն իւրոյ ։ Արդ որդւովըն կամեցաւ հատուցանել պչնորհսն՝ զոր արար ընդ նմա հայրն նորա, իբրև յերեսաց Շաւուղի փախուցեալ էր նա ։ Իսկ որդիքն Ամոնայ թողին նայել 'ի բարեկամութիւնն՝ որ եղև յաւուրս հալածանացն Դաւթի, և նայեցան նոքա չարաչար 'ի հրեշտակսն խաղաղութե̃ն՝ որ յստակամիտ մտօքն առաքեցան առ նոսա ։ "Նենգութե̃, ասէ, առաքեցան լրտեսել զքաղաքս, և ոչ եթէ սիրով առաքեցան մխիթարել ըզքեզ"։ Իսկ իբրև արձակեցին զնոսա մեծ անարգութե̃ առ տէրն իւրեանց, զղջացան և երկեան յոյժ. և փոխանակ զի յղեսցեն բարեխօսս առ Դաւիթ, որ դիւրինն էր, առաքեցին վարձեցան հազար քանքար արծաթոյ 'ի Մծուրնէ և 'ի Խաւանէ և յԱրամայ Միջագետաց և յԵդոմայ զօրս բազումս սպառազէնս և հետևակս ։ Կոտորեցան 'ի ձեռն Յովաբու և Աբեսսեայ եղբօր նորա յառաջին անգամին. և յաւել կոտորեաց զնոսա Դաւիթ, իբրև եկին կրկին անգամ խնդրել զվրէժ ընկերացն իւրեանց ։ Պաշտեցին զծառայութի̃՝ և որք յանցս գետոյն էին՝ ժողովրդեանն. քանզի 'ի պարգևի անդ մինչև յԱրածանի խոստացեալ էր ծառայել նմա ։ Եւ ապա 'ի միւս ամին պաշարեցաւ քաղաք թագաւորութե̃ որդւոցն Ամոնայ, և ած զնոսա Դաւիթ շղթայիւք յերկիրն Իսրայէլի ։

Յետ այսորիկ ասաց, եթէ եդ սատանայ ուշ 'ի վերայ՝ ոչ 'ի Դաւիթ՝ այլ 'ի վերայ Իսրայէլի. և փութացաւ Դաւիթ համարել զժողովուրդն ։ Արդ այն՝ զի յայսմ վայրի առնու զնա 'ի վերայ սատանայի, Սամուէլիւն վասն այ̃՝ զի գրգռեաց զԴաւիթ թուել զժողովուրդն. ասաց սա. "Զօրացաւ, ասէ, բարկութի̃ տեառն յԻսրայէլ, և գրգռեաց զԴաւիթ թուել զժողովուրդն"։ Արդ եթէ բարկութե̃ եղև այս, և ստիպելով ստիպեցաւ Դաւիթ համարել զժողովուրդն. և ինքն Դաւիթ վասն այսորիկ ոչ արբ գան և կամ թէ եպերեցաւ, զի ժողովուրդն միայն արբ գան. վասն այսորիկ բարուք մեկնեցաւ այս 'ի տեղւոջ իւրում, եթէ վասն զի թուեցին համարեցին և կալան զքահանայսն 'ի սպանումն, և ոչ ապրեցուցին զնոսա, որպէս զՅովնաթան 'ի Շաւուղէ,

համարեցան նոքա 'ի կատարած սրոյ հրեշտակին ։ Հանդերձ այսու միւս ևս այլ յանցանք՝ որ սմին նման է՝ ունէին նոքա ։ Ապստամբեցան նոքա ընդ Աբիսողոմայ սպանանել զԴաւիթ. զի վասն այսորիկ անկաւ 'ի նոցանէ եւթանասուն հազար ։

Արդ եթէ 'ի սատանայէ եղև գրգռութիւն, և կամ թէ 'ի տեառնէ եղև անփութութիւն՝ զի եղիցի այս, ընդէ՞ր զօրացաւ բարկութիւնն վասն այսորիկ ։ Քանզի ահա թէպէտ և զի մի՛ համարեսցի զաւակն Աբրահամու, վասն բազմութե՟ն իւրոյ ասացեալ էր. այլ զի թէ բնաւ ամենևին մի՛ համարեսցի, ոչ էր գրեալ ։ Արդ եթէ ոչ համարեսցի, և ոչ էր համարեալ, ուստի՞ յայտ լինէր և երևէր՝ եթէ ոչ մտանէր նա 'ի թիւ համարոյ, և արտաքս քան զհամարս և զթիւս. և ո՞վ հաւատայր եթէ ճշմարիտ եղև բանն ա՟յ, եթէ այս որ եղևս՝ ոչ էր եղեալ ։ Ապա եթէ վասն այսր եղև զի յայտ լիցի պարգևն ա՟յ՝ եթէ առ զկատարումն և հաստատեցաւ, եթէ այսպէս է, ոչ եթէ վասն զի թուեաց զժողովուրդն՝ արբ գան. քանզի ոչ արբ իսկ գան որ թուեացն, այլ այն՝ որ թուեցաւն՝ արբ գան ։ Յորո՞ւմ կողման դնիցեմք ըզյանցանսն. զի ուր խրատն ստուգութե՟ն է, անդէն և յանցանքն ազատութե՟ն ։ Այսուհետև տասն ազգօքն՝ որ թուեցան համարեցան՝ յայտ եղև եթէ բազում եղեն իբրև զաւազ առ ափն ծովու, որպէս և խոստացաւ ա՟ծ սիրելւոյն իւրոյ ։ Բայց տամբն Ղևեայ և որդւովքն Բենիամինի, զի ոչ համարեցան, վասն զի անարգեաց Յովաբ զբանն արքայի, կատարեցաւ և այն՝ զի մի՛ համարեսցին իբրև զաւազ, որ վասն բազմութե՟ն իւրոյ ոչ թուի և ոչ համարի ։

Արդ ա՟ծ զի առաքեաց զմարգարէն, առ Դաւիթ առաքեաց՝ և ոչ եթէ առ ժողովուրդ անդր. զի թէպէտ և 'ի դատավճիռ բանին խառն էն արքայ և ժողովուրդն, այլ երեսք մարգարէին գոգջիր թէ 'ի վերայ Դաւթի ուշ եդեալ նայէր ։ "Երիս, ասէ, չարիս ածեմ 'ի վերայ քո, ընտրեա քեզ"։ Արդ յականջս բարեխօսին եկն դատավճիռ, և ոչ եթէ յականջս յանցաւոր ժողովրդեանն ։ Զի թէպէտ և դէմք ըստուգութե՟ն 'ի վերայ Դաւթի եռ զդատավճիռն,

այլ սակայն շնորհքն յայտնեցին նմա, զի խնդրուածովքն իւրովք կարկատեսցէ զխրամատութի մանկանց ժողովրդեան իւրոյ։ Արդ վասն Դաւթի առաքեցին կալան զքահանայսն հրամանաւ Շաւուղի 'ի սպանումն. արդ վասն նորա համարեցան և կալան, վասն զի ետ Աքիմելէք հաց, կոտորեցան։ Եւ վասն զի ապստամբեալքն դարձեալ և 'ի նմանէն ապստամբեցան, իբրև գայր վրէժխնդրութին որ մեղաւն յերկոսին, յայտնեցաւ այնմիկ՝ ընդ որում յանցեանն երկոքումբք, զի խնդրեսցէ երկոքումբք զրպարտեալն 'ի վերայ երկդիմեան յանցաւորացն 'ի ստոյգ դատաւորէն՝ որ 'ի ձեռն հրեշտակին յարեաւ խնդրեաց զվրէժխնդրութի երկոցունց յանցաւորացն։ "Երկս, ասէ, չարիս ածեմ 'ի վերայ քո, ընտրեա քեզ"։ Արդ նայեաց և տես, զի թէպէտ և մինն ճշմարիտ է, միւսն ևս յայտնէ՝ եթէ ոչ է ճշմարիտ. զի թէպէտ և այն՝ թէ ընտրեա քեզ՝ ճշմարիտ է, այլ այն՝ զի 'ի վերայ քո՝ ոչ է ճշմարիտ. այլ և ոչ այն՝ զի 'ի վերայ քո՝ չէ սուտ։

Արդ այր՝ որ առ Գողիադու հսկայիւ և յամենայն մարտս պատերազմաց իբրև մարտեաւ, զանձնն իւր ետ փոխանակ ժողովրդեանն իւրոյ, յայտ է աւասիկ՝ զի իբրև զանձն իւր սիրէր զժողովուրդն իւր։ Արդ յանձն իւր ըմպէր գան միով 'ի չարեաց անտի, որ 'ի վերայ մանկանց ժողովրդեան նորա իշխէր։ Արդ ոչ եթէ 'ի վերայ Դաւթի գային չարիքն. գայր 'ի վերայ նորա չարն, զի 'ի վերայ մանկանց ժողովրդեանն իւրոյ գայր. և գայր 'ի վերայ նորա դարձեալ, զի մանկամբք ժողովրդեան իւրոյ՝ որ չարչարէին 'ի չարեաց անտի, ինքնին անձամբ իւրով չարչարէր։ Արդ Դաւիթ իբրև ետես եթէ ածէ զերեամ մի սով, գիտաց եթէ զմանկունս ժողովրդեան իւրոյ սատակէր, և ոչ եթէ զնա։ Եւ զերիս ամիսս մատնել 'ի ձեռս թշնամեաց՝ ժողովուրդն կոտորէր, և ոչ եթէ նա. քանզի մատնել ասաց, և ոչ եթէ մեռանել։ Ընտրեաց իւր, զի 'ի ձեռն տեառն՝ որ անխտրպետէն ընդ մեղաւորն և ընդ անմեղն՝ մատնեսցի, և ոչ 'ի ձեռն սովոյ և թշնամեաց մատնեսցի ժողովուրդն նորա։

Արդ առաքեցաւ հրեշտակն յԵրուսաղէմ ապա-

կանել, և ասացաւ նմա՝ շատ ապականեցեր։ Ոչ եթէ զի շատ ապականեաց, այլ զի մի գործեսցէ աւելի քան զայն ինչ՝ որ հրամայեալ է նմա։ Զերիս աւուրսն գումարեաց ստուգութին զաւուրն 'ի ժողովուրդ անդր. և մինչ դեռ կամէր լինել երեք ժամք, զբողոք բարձին շնորհքն զդահճէն ստուգութե՝ եթէ յաճախեաց ապականեաց։ Եւ արդ մինչ սակաւդ ապականեաց, շատ թուեցաւ քեզ՝ թէ ապականեաց. եթէ զերիս աւուրս ապականեալ էր, յաճախէր բազմանայր սուգն և տրտմութի շնորհացն սատակմամբն՝ որ լինէր ժողովրդեանն մարդակոտոր առ հասարակ։

Անդէն ընդ բանին՝ եթէ շատ ապականեցեր, ետես Դաւիթ զհրեշտակն ընդ երկինս և ընդ երկիր, և կայր 'ի վերայ Երուսաղէմի մերկացուցեալ զսուսեր իւր։ Անկաւ Դաւիթ և ծերակոյտ ժողովրդեանն իւրոյ քրձազգած յերեսս իւրեանց առաջի նորա։ Տեսե՞ր աւադիկ, զի բարեխօսին յայտնեցաւ. զի քրրձազգած լինելովն՝ ընդդէմ բարկութեն վառեալ կայր։ Եւ վասն զի ետես եթէ փոքր է աղէտ խընդրուածոյ նորա և ընկերաց իւրոց կալ առաջի հրեշտակին՝ որ սպառնայր, և մերկացեալ ունէր զսուսերն իւր, և ասէր ցտէր. զի եթէ ես մեղայ՝ որ ասացի թուել զժողովուրդս, այս խաշն անմեղ որ թուեցանն իբրև ոչ կամէին, զի՞ մեղան. եղիցի ձեռն քո յիս, վասն զի ես մեղայ, և 'ի տուն հօր իմոյ՝ իբր ոչ մեղան. և 'ի ժողովրդենէս միայն արգելցի մարդամահս։ Արդ ետ իբրև Մովսէս զանձն իւր փոխանակ մանկանց ժողովրդեան իւրոյ, և յաւել ետ զտուն հօր իւրոյ՝ զոր ոչն արար Մովսէս. և վասն զի թուեցաւ նմա եթէ ինքն է պատճառ յանցանացն, ետ զանձն իւր 'ի մահ։ Ստուգութեամբ մատնեաց դարձեալ զինքն և զտուն հօր իւրոյ փոխանակ ժողովրդեանն իւրոյ 'ի ձեռն շնորհացն։ Արդ եթէ կատարեալ էր այն՝ զոր խնդրեաց, ստուգութին անօրինէր. զի փոխանակ ժողովրդեանն՝ որ յանցեաւ, զթագաւորն զանմեղ հարկանէր. և պարգեն այ՝ որ ասացն ցնա՝ եթէ “Ի զաւակի քում կարգեսցի թագաւորութին„, սուտ լինէր՝ եթէ տուն

հօրն Դաւթի ընդ Դաւթի՝ որպէս և Դաւիթն խնդրեաց՝ մեռեալ էին ։

Արդ ՚ի ժամանակի իբրև ետ զանձն և զտուն հօրն փոխանակ ժողովրդեան իւրոյ, և ահա Գադ մարգարէ աճապարեաց և ձեպեալ և ընթանայր յանուն տեառն. և ասէ ցնա, զի շինեսցէ սեղան տեառն ՚ի կալն Արանայ յեբուսացւոյ ։ Եւ արդ զի մի լքցի Դաւիթ՝ թէ մինչ զսեղանն շինեսցէ և զենուցու և յօշեսցէ անդամամաթիւ զպատարագն՝ կոտորեսցէ հրեշտակն զքաղաքն առ հասարակ, ամբարձ զաչս իւր և ետես զհրեշտակն՝ զի ամփոփեալ էր զձեռն իւր յինքն, և ոչ ապականէր ։ Փութացաւ Դաւիթ և հաս առ Արան ։ Նա դարձաւ և ետես զնա, և երկիր եպագ նմա. զի եթէ շքով թագաւորութեանն իւրոյ երթայր նա, ոչ իբրև կայր յետոյ նորա, դառնայր և տեսանէր զնա ։ Ասէ Դաւիթ ցԱրան. “Տուր ինձ ընդ բարի գնոյ զտեղի կալոյս այսորիկ, զի շինեցից ՚ի սմա սեղան հաշտութե̅ տեառն. և արգելցի մարդամահս ՚ի ժողովրդենէս,, ։ Եւ ետ նմա որդին հեթանոսաց ոչ միայն զտեղին, այլ և զեզինսն ՚ի պատարագ, և զօրանն ՚ի պէտս պիտոյից պատարագին. և յաւել ետ ցորեան և նաշիհ՝ որ ոչ էին պիտոյ ։ Իսկ իբրև ոչ կամեցաւ Դաւիթ առնուլ ձրի, նեղեաց զանձն իւր Արան, և առ ակամայ իբրև ոչ կամէր ։ Մատոյց Դաւիթ զպատարագն, և ընդունելի եղև. և էջ հուր ՚ի բարձանց յանդիման ժողովրդեանն ՚ի վերայ պատարագին հաշտութե̅՝ զոր մատոյց նա ։ Արդ իջանելովն հրոյն ՚ի բարձանց՝ վերացաւ ՚ի բարձունս հրեշտակն հրեղէն, որ իջեալ կոտորէր ՚ի ժողովրդեան անդ ։

Արդ վրան ժամուն՝ զոր արար Մովսէս յանապատի անդ, այն զի ՚ի նմա պագանէին երկիր մինչև ցայն օր. իսկ իբրև ետես Դաւիթ՝ եթէ լսելի եղև նա ՚ի կալ անդ Արանայ, երկեաւ նա դարձեալ մատուցանել զաղօթս իւր ՚ի վրան ժամուն ։ Եւ ասաց ՚ի վերայ կալոյն՝ զի “Սա է տաճար տեառն,,. այս ինքն սա է տեղի տաճարի տեառն, և տեղի սեղանոյ պատարագաց Իսրայէլի ։ Ուրախ եղև Դաւիթ յոյժ, զի ոչ միայն որ ինչ պիտոյ էր առ ՚ի շինուած տաճարին

պատրաստեաց նա , այլ և զտեղին ևս տաճարին համանգերձ ամենայն պիտոյիւք տաճարին պատրաստեաց նա ։ Իսկ իբրև յայտ եղև նմա տեղին , ժողովեաց ընպանդուխտան առնել 'ի նոցանէն քարակոփս և ոսկերիչս ։

Արդ թէպէտ և յայտնապէս յանարգութի ̃ հեթանոսաց լինէր նա եկօքն և պանդխտօքն՝ որ առ 'ի շինուած տաճարին ժողովէր , այլ շինուածովն պանդըխտաց՝ խորհուրդ հեթանոսաց՝ որ հանդերձեալ էին 'ի շինել զեկեղեցիս Քրիստոսի՝ նկարէր ։ Արդ այնոքիկ՝ որ յաւուրս Սողոմոնին՝ որ շինեցաւն 'ի նոցանէն մի տաճար յերկրպագութի ̃ Հօր , այսօր բիւրք բիւրուց եկեղեցեաց յերկրպագութի ̃ Քրիստոսի որդւոյ շինեցաւ և շինին 'ի նոցանէն ։ Արդ եթէ ոսկին և արծաթն և պղինձն և երկաթն և քարքն կոփածոյք առաջի տաճարին 'ի հեթանոսաց էին , և եթէ զփայտ տաճարին ծուրացիք և ծայդանացիք բերէին , և եթէ զառաջին խորան ժամուն յեգիպտացւոց և յամովրհացւոց արարին և կանգնեցին նոքա , և եթէ վերջին տաճարն յստացուածոց և 'ի գանձուց տանն Գովգայ և 'ի Պարթևաց թագաւորաց Պարսից շինեցաւ , արդ իւ՞ արդեւք պարծեսցի ժողովուրդն տառապեալ , կամ որո՞վ իւիք հպարտանայցէ ․ զի ահաւասիկ երկոքին տաճարքն հանդերձ վրան ժամուն որով պերճացեալն էին՝ 'ի ձեռն հեթանոսաց կանգնեցան ։

ԳԼՈՒԽ Բ

ԵՒ ասաց Դաւիթ ․ “Սողոմոն մանուկ է ցարդ ևս , և վասն նորա ասացեալ է՝ եթէ նա շինեսցէ զտաճարն ․ պատրաստեցից նմա զամենայն պէտս տաճարին „ ։ Եւ արդ ո՞ւր իցէ ասացեալ վասն նորա զայս ․ արդեւք այս իսկ է՝ զոր ասաց Նաթանն , եթէ “Զաւակն քո՝ որ ելանէ յերանաց քոց , ուղղեցից զաթոռ թագաւորութե ̃ն նորա , և տիրեցուցից զնա 'ի տան իմում և 'ի թագաւորութեան իմում յաւիտեան „ ։ Եւ ասաց Դաւիթ ցՍողոմոն ․ “Տէր ասաց ցիս 'ի ձեռն մարգարէին իւրոյ՝ եթէ դու մի

շինեսցես զտուն անուան իմոյ. վասն զի պատերազմունս զոր արարեր, արիւն բազում հեղեր դու»։ Եւ արդ ո՞ր մարգարէ ասաց ցնա. զի Նաթան՝ որ առաքեցաւն առ նա վասն այսր, զայս ոչ ասաց ցնա. բայց զզաւակն՝ զի կարգելոց էր ազգաց յազգս՝ խոստացաւ նմա, և զթագաւորութիւն յաւիտենից պարգևեաց նմա. և ինքն Դաւիթ զմեծ խոստովանութիւն վասն այսորիկ մատոյց նմա։ Արդ եթէ յայնմ աւուր ոչ ասացաւ նմա այս, և այլ աւուրք ոչ են գրեալ վասն մարգարէին՝ եթէ ասաց ցնա։

Արդ եթէ եպերեալ էր Դաւիթ արեամբն զոր եհեղ, եպերեալ էր և Աբրահամ արեամբն զոր եհեղ զհինգ թագաւորացն։ Եպերեալ է և Մովսէս արեամբն եգիպտացւոց զոր հեղձոյց նա 'ի ծովն Կարմիր, և երկուց թագաւորացն ամովրհացւոց՝ զոր կոտորեաց նա, և մադիանացւոց և ամաղեկացւոց՝ զոր սպան նա։ Եւ եպերեալ է դարձեալ Յեսու որդի Նաւեայ, որ կորոյս սատակեաց զերեսուն թագաւորսն քանանացւոց. եպերեալ է և Նափթեթ, որ կոտորեաց զորդիսն ամոնացւոց. և Գեդէոն՝ որ կորոյս զմադիանացիսն. և Սամփսոն և Սամուէլ՝ որ սպանին զայլազգիսն։ Եւ ահա ինքն իսկ ա̄ծ 'ի ձեռս Նաթանայ ասաց ցնա, եթէ «Եղէց ընդ քեզ, և կորուսից զամենայն թշնամիս քո յերեսաց քոց»։ Արդ եթէ ինքն ա̄ծ կոտորեաց զնոսա, Դաւիթ ինչ ոչ է եպերելի։

Եւ ընդէ՞ր և վասն ո՞յր՝ 'ի պատճառս արեան՝ զի մի ոք յարդարոց անտի ոչ եպերեցան նովաւ, Դաւիթ միայն իբրև կամեցաւ շինել զտաճարն տեառն՝ արգելաւ վասն նորա զի մի՛ շինեսցէ։ Արդ վասն զի ոչ եղև պարապ Դաւթի զամենայն աւուրս կենաց իւրոց պատերազմօք զոր առնէր նա զօրութե̃ն տեառն ընդդէմ թշնամեաց մանկանց ժողովրդեան իւրոյ, արգել զզօրամարմին ծերութ̃ի նորա, զի մի՛ աշխատեսցի 'ի շինուածն տաճարին՝ որպէս և 'ի պատերազմունսն. զի որդւոյն նորա՝ որում յաճախէ խաղաղութիւն՝ գործ գտցի նմա. և զի մի՛ վնասեսցէ նմա դատարկութիւն, որպէս և վնասեաց իսկ նմա։ Պատրաստեցաւ նմա գործ ոչ միայն առ 'ի զբօսանս նորա

եթէ զբօսացուցանէ զնա, այլ և որ յարգէ և փառաւորէ զնա, և շքեղացուցանէ զնա 'ի թագաւորութեանն իւրում ։ Վասն այսորիկ և յետ շինուածոյ տաճարին անկաւ նա 'ի լկտութիւն, զի հազար կին ընդ ազատ և ընդ հարճ արար նա․ բայց յաւուրս շինուածոյ տաճարին յերկիւղ տեառն իւրոյ կայր նա, զի այլում ընդ նմա ոչ պագանէր երկիր ։ Եւ զգուշութ՟ն յաղթեաց նա․ զի ընդ դստերն Փարաւոնի, զի հան 'ի տաճար անդր որ շինեաց նմա, այլ ընդ նմա ոչ է գրեալ՝ թէ հան նա ։ Եւ զի գիտասցես թէ վասն հանգստեան պատրաստեաց նմա զգործն, լուր Դաւթի, իբր յանուն ա՟յ ասէր սա ցորդին իւր․ “Որդի, ասէ, որ լինի քեզ, հանգուցից զնա յամենայն թշնամեաց նորա, և հանգիստ եղիցի Իսրայէլի յաւուրս նորա․ նա շինեսցէ տուն անուան իմոյ„ ։

Արդ ոչ եթէ վասն արեանն զոր եհեղ արգելաւ նա․ զի եհեղ և Մովսէս զարիւնն եգիպտացւոց և զամովրհացւոց, զամաղէկացւոց և զմադիանացւոց․ և փոխանակ եպերմանն ընկալաւ նա զմեծապայծառ շուք փառացն երեսաց․ և ոչ արգելաւ նա թէ մի արասցէ զխորան ժամուն ։ Արդ վ՟ս գործոյ՝ զի գտցի որդւոյ նորա՝ արգել զնա, որպէս և ասացաք մեք․ զի խորհրդովք խօսից տեառնն իւրոյ, և վայելուչ զգուշութ՟բ սրբութ՟ն նորա արգելցի նա 'ի կուոցն օտարոտւոց և 'ի ցանկութ՟է կանանց ։

Արար նա յղևտացւոց գաւառապետս 'ի տանն Իսրայէլի․ և զի եղիցին դարմանել զաղքատս ։ Եւ կարգեաց քահանայս և ղևտացիս 'ի սպաս պաշտաման իւրեանց ըստ իւրեանց կարգին, օրհնիչս և բարապանս յիւրաքանչիւր տեղիս․ և ժողովեաց զմեծամեծս զհեռաւորս և զմերձաւորս ։ Եւ ասաց եթէ 'ի տանէ Յուդայ ընտրեաց տէր զտուն հօր իւրոյ․ և 'ի տանէ հօր իւրոյ զիս ընտրեաց թագաւորել․ և յորդւոց իմոց ընտրեաց զՍողոմոն, զի շինեսցէ տաճար տեառն ։ Եւ արդ սկսաւ պատուիրել, որպէս և Մովսէս ժողովրդեանն, տայր և ինքն հրաման որդւոյն իւրում պահել զպատուիրանս տեառն ։ Եւ ետ զչափ տանն, և և զնմանութ՟ի սեանց սրահին, և զամենայն տանն զիւ-

րաքանչիւր պէտս եցոյց նմա . և վասն ոսկեղէն և արծաթեղէն սեղանոցն, և վասն ամենայն կահի և կարասւոյ պաշտամանն հրամայեաց յայնմ աւուր Սողոմոնի յանդիման ամենայն մեծամեծաց ժողովրդեանն . ետ և զպարգևս 'ի տուն տեառն . և ուրախ եղև Դաւիթ և ժողովուրդն ։ Եւ օրհնեաց Դաւիթ զտէր և ասաց . ո՞վ եմ ես, և կամ զի՞նչ է ժողովուրդն իմ, զի արարեր ինձ և ժողովրդեան իմում զայս ամենայն . և վասն զի զօրէնս քո ուսուցի, քանզի ուսայ ես . զի ճանապարհդ քո կենաց օգնեաց ինձ, այս ինքն պահպանութիք պատուիրանաց քոց . այն իսկ է՝ զի յամենայն մարտս պատերազմաց ապրեցուցեր զիս և զժողովուրդ քո ։

Եւ մատուցին զպատարագս մեծամեծս, և նստուցին զՍողոմոն յաթոռ թագաւորութե, և արկաւ զնովաւ շուք վայելչութեան ։ Եւ թիւ աւուրց՝ զոր թագաւորեաց Դաւիթ 'ի վերայ Իսրայէլի, զքառասուն ամ ։ Եւ մատոյց Սողոմոն հազար ողջակէզս 'ի վերայ պղնձի սեղանոյն, զոր արարեալ էր Բեսելիէլ[1] յանապատի ։ Եւ եբեր զնա Դաւիթ հանդերձ վրան ժամուն յԵրուսաղէմ ։ Եւ յայտնեցաւ տէր 'ի վերայ նորա 'ի տեսիլ գիշերոյ, և ասաց ցնա . "Խնդրեա ինչ, և տաց քեզ" ։ Եւ խնդրեաց նա զիմաստութի՝ դատել զժողովուրդն . և ետ նմա իմաստութիւն առաւել քան որչափ խնդրեաց . և ետ նմա զփառս՝ զոր ոչն խնդրեաց ։ Եւ բազմացոյց և յաճախեաց Սողոմոն զարծաթ և զոսկի և զերիւարս և զսպառազէնս . և մոռացաւ զբանս Մովսիսի զոր ասաց . "Զի մի՛ յաճախեսցէ իւր ոսկի և երիւարս, զի մի՛ հպարտասցի և մոռասցի զտէր" ։ Եւթանասուն հազար փայտակոփ, և ութսուն հազար քարակոփ 'ի ձեռն մեծ արար զնա . զի եթէ ութսուն հազար քարակոփ փոքր իցեն տաճարին, կոփեսցեն և յօրինեսցեն զնոյնչափ քարանցն՝ որ յաւուրս Դաւթի հօր նորա կոփեալ էին ։ Արդ առաքեաց առ Խիրամ վասն մայր փայտի՝ զի բերցեն 'ի Լիբանանէ, իբրև առեալ խոստանայր ծառայիցն Խիրամայ քան հազար քոռ

1 Յօրինակին 'ի լուսանցսն Բածաղիէլ. միւս օրինակն Բածաղիէլ։

ցորենոյ, և քսան հազար մար գինւոյ․ և քսան հազար մար իւղոյ։ Արդ նայեաց և տես որչափ բերրի էր երկիր նոցա, զի Թագաւորացն ևս հեթանոսաց տային ռոճիկս։ Եւ առաքեաց Թագաւորն Ծուրայ Խիրամ որդի կնոջ մի այրւոյ ճարտար յամենայն գործս։

Սկսաւ շինել Սողոմոն տաճար յԵրուսաղէմ 'ի լեառն ամովրհացւոց 'ի տեղի՝ ուր մատոյց Աբրահամ պատարագ զորդին իւր 'ի կալն Որնայ յեբուսացւոյ զոր գնեաց Դաւիթ։ Ահաւասիկ զի տեղին ևս տաճարին հեթանոսաց էր, զի յեբուսացւոյ առեալ էր․ և զարդարիչք նորա հեթանոսք էին․ զի Խիրամ որդի այրւոյ միոջ քանանացւոյ պէսպէս զարդարանօք զարդարեաց զնա։ Բայց նման է դարձեալ, եթէ 'ի տեղի ծառոյն զորմէ կախեալն էր զխոյն, անդ եղև Գողգոթայն․ զի անդ բևեռեցաւ փայտն խաչի փոխանակ ծառոյն, և 'ի փայտի անդ խաչեցաւ որդի հօր Քրիստոս փոխանակ խոյին․ զի խորհրդով իւրով 'ի ծառ անդր, իբրև տարածեալ իսկ էին բազուկք նորա, զգեցաւ նա։ Արդ սկսաւ շինուած տանն 'ի չորրորդ ամի Թագաւորութեն իւրոյ, և կատարեաց զնա 'ի փայտս կնդրկեայս, և քանդակեաց զնա ոսկւով․ և եբեր զսրբութիս հօր իւրոյ, և տարաւ եդ 'ի տուն գանձի տեառն։ Եւ ժողովեաց զամենայն իշխանս իւր, և եհան զարկղն կտակարանաց տեառն 'ի Սիոնէ 'ի գեղջէն Դաւթի, և եդին զնա 'ի մէջ սրբութեցն ընդ թևօքն քրովբէիցն․ և մածեաւ ամպն զսրբութիւն, և էջ հուր յերկնից և եկեր զողջակէզսն զոր մատոյց Սողոմոն։

Եւ յայտնեցաւ դարձեալ տէր 'ի վերայ Սողոմոնի 'ի տեսիլ գիշերոյ, և ասէ ցնա․ «Լուայ ես զաղօթս քո․ և եղիցին, ասէ, աչք իմ հայել 'ի վերայ տանս այսորիկ, և ականջք իմ եղիցին 'ի լսել զաղօթս զոր մատուցանեն 'ի դմա։ Եւ եթէ գնասցես դու առաջի իմ արդարութք, որպէս և գնաց Դաւիթ հայր քո, և հաստատեցից զուխտն իմ որ եղև ընդ նմա՝ թէ մի պակասեսցէ նմա որդի, որ կայ առաջի իմ 'ի Թագաւորութե Իսրայէլի։ Ապա թէ

դարձջիք յինէն պաշտել զկուռս օտարոտիս, կորու-
սից զձեզ յերկրէ՝ ուր բազմացարուքդ իբրև զաւազ
առ ափն ծովու. և զտունդ պարծանաց ձերոց արա-
րից յաւեր և 'ի թափուր։ Եւ զոր օրինակ եղերուք
դուք 'ի փառս և 'ի գովեստս յաւուրս Դաւթի՝ որ
պահեաց զպատուիրանս իմ, սոյնպէս եղերուք 'ի
զարմացումն և յառակս ազգաց, յորժամ ոչ գնայ-
ցէք 'ի պատուիրանս իմ"։ Արդ կացոյց Սողոմոն
քահանայս և ղևտացիս և օրհնիչս և բարապանս ըստ
իւրաքանչիւր արժանի որպէս և Դաւիթն պատուի-
րեաց։ Եւ թագաւորեցաւ 'ի վերայ ամենայն թա-
գաւորութեց յԱրածանւոյ մինչև յերկիրն այլազ-
գեաց, և մինչև 'ի սահմանս եգիպտացւոց քառա-
սուն ամ։

Եւ թագաւորեցաւ Հեռոբովամ որդի իւր զկնի
նորա։ Արդ եկն Յորոբովամ և ժողովուրդն, և ա-
սեն ցՌեբովամ. "Թեթևացո 'ի մէնջ զխիստ լուծ
հօր քո, և պաշտեսցուք զքեզ"։ Քանզի բազում ե-
րիւարօքն զոր ստացաւ, և հազար կանամբքն զոր ած,
և սքանչելի շինուածովքն զոր շինեաց, և բազում
ամրապարիսպ քաղաքօքն զոր հաստատեաց, և ռոճ-
կօքն որ առաքեաց թագաւորաց հեթանոսաց՝ յա-
ճախեաց և թախծեցոյց զժողովուրդն։ Դարձոյց անդ-
րէն Ռեխբայամ խիստ պատասխանի ժողովրդեանն.
և եղև շրջուած, բայց ոչ եթէ յարքայէ. զի թէ-
պէտ և 'ի պատճառս բանին արքայի եղև, բայց սա-
կայն 'ի տեառնէ եղև, զի հաստատեսցի բանն Ա-
խայի մարգարէի՝ որ 'ի թագաւորութեան անդ, որ
ասաց ցՌովբոամ։ Ետ պատասխանի ժողովուրդն և
ասեն. չիք մեր բաժին ընդ Դաւթայ, զի չիք որդի
Դաւթի՝ որ նմանէ Դաւթի. այսուհետև տես զտուն
քո, Դաւիթ, զի ունայնացոյց դատարկացոյց և թա-
փուր արար հպարտութիւն որդւոյ քո զդուռն իւր 'ի
մեծամեծացն Իսրայէլի, որ դեգերեալ կային 'ի դրան
նորա։ Եւ արար Ռոբովամ զչարիս առաջի տեառն, և
ոչ գնաց բոլորով սրտիւ իւրով միամիտ ընդ տեառն։
Եւ թագաւորեցաւ եւթն և տասն ամ, և հանգեաւ։

Եւ թագաւորեցաւ Աբիա որդի իւր զկնի նորա։

Եւ ասէ Աբիա ցՌոբովամ. “Դուք գիտէք, զի տէր ետ զթագաւորութ՟ին Դաւթի և որդւոց նորա իբրև աղ ուխտի, այս ինքն ուխտիւն Ճշմարիտ սիրոյ. արդ դուք աւադիկ, ասէ, թողէք զտէր և պաշտեցէք զորթըս ձուլածոյս զոր արար Յորոբովամ. վասն այսորիկ իբրև յաւուրս Դաւթի չյաղթեցէք 'ի մարտս պատերազմաց ձերոց„: Եւ վասն զի նախատեաց նա ձուլածոյ որթուքն, և հաւատաց՝ եթէ ոչ յաղթէ Իսրայէլ 'ի մարտ պատերազմի իւրոյ, կոտորեաց 'ի նոցանէն Աբիա 'ի սուր սուսերի իւրոյ հինգ հազար: Եւ յետ այսորիկ հար տէր զՅորոբովամ, և մեռաւ: Թագաւորեաց և Աբիա զերիս ամս, և մեռաւ:

Եւ թագաւորեաց Ասա որդի նորա զկնի նորա: Արար և Ասա զբարի առաջի տեառն զքառասուն և զմի ամ թագաւորութեանն իւրոյ: Եւ եկն եհաս 'ի վերայ նորա Զարախ հնդիկ, և հազարք հազարաց զօրք ընդ նմա, և երեսուն հազար կառք ընդ նմա: Եւ զի եկաց յաղօթս, և հաւատաց եթէ մատնի բազում զօրն մոլորեալ 'ի ձեռն սակաւ զօրուն հաւատացելոյ, եբեկ խորտակեաց հրեշտակն տեառն զզօրսն Հնդկաց. և դարձ դունդն յուդայեան յերուսաղէմ բազում աւարաւ: Արդ ընակեցաւ հոգին 'ի վերայ Ազարիայի, և ասէ ցԱսա. “Տէր ընդ ձեզ է, որչափ դուք առ նմա էք. քանզի ահա իբրև թողին զնա հարքն մեր յաւուրս Գեդէոնի, թող լիք եղեն և նոքա 'ի նմանէն, և ոչ գոյր խաղաղութ՟ի՝ որ մտանէր և ելանէր„: Եւ հզօրացաւ կազդուրեցաւ, ժողովեաց առ իւր զօր յամենայն ազգաց: Եւ իբրև տեսին՝ եթէ տէր ընդ նմա է, և մատուցին զպատարագս մեծամեծս, և երդուան. ուխտ և դաշինս կռեցին մատուցանել զաղօթս յամենայն սրտէ իւրեանց առ տէր, և հեռանալ 'ի կռոցն օտարոտեաց. և ամենայն որ ոչ մատուսցէ զաղօթս առաջի տեառն, մահու մեռցի: Եւ անցոյց Ասա և զԱմաքա մայր իւր 'ի տիկնութ՟է իւրմէ. վասն զի արար նա զտօն պակերացն:

Յետ այսորիկ առաքեաց Ասա ոսկի Բերհադադարքայի. զի խափանեսցէ զուխտ իւր՝ զոր եդեալ էր

նորա ընդ Բայաշու արքային Իսրայելացւոց ։ Եւ եկն եհաս Անանի մարգարէ առ Ասա, և ասէ ցնա՝ եթէ “Վասն զի յուսացար դու 'ի թագաւորն Արամայ և ոչ 'ի տէր, փախիցէ զօրն Արամայ 'ի քէն, և միաբանեսցին ընդ արքային Հնդկաց՝ գալ հասանել միանգամայն 'ի վերայ քո. և իբրև խնդրեսցես և պաղատեսցես վասն այսր՝ զինչ արարեր, ապա մատնեսցին 'ի ձեռս քո ։ Եւ մեռաւ Ասա, և թաղեցաւ 'ի գահոյս լիախնկայս ։

Եւ թագաւորեաց Յովսափատ որդի նորուն զկնի նորա. և եղև տէր ընդ Յովսափատու ։ Եւ առաքեաց դպիրս օրինաց 'ի ձեռն քահանայիցն և ղևտացւոցն՝ ուսուցանել 'ի գեօղս և յագարակս որդւոցն Յուդայի ։ Եւ անկաւ երկիւղ տեառն 'ի վերայ թագաւորացն՝ որ շուրջ զնոքօք էին. և ոչ մօտաբերեցին այլ մարտնչել ընդ Յովսափատու. և այլազգիքն և արաբացիքն հարկս հարկանէին նմա ։ Բայց եղև նորա զօր պատերազմի հազարք հազարաց, և հարիւր և վաթսուն հազար ։ Եւ ել նա ընդ Ախաբու յՌեմաթ Գաղաադ 'ի պատերազմ. և մեռաւ անդէն Ախաբ. և դարձաւ Յովսափատ 'ի տուն իւր խաղաղութեամբ, վասն զի օգնեաց նմա տէր ։ Եւ ել մարգարէն ընդ առաջ Յովսափատու և ասէ ցնա. “Զոգար դու յօգնականութիւն ամպարշտին՝ լինել նմա թիկունք օգնականութ̃ե. և նմա ոչ օգնեցեր, և զտէր բարկացուցեր 'ի վերայ քո. բայց հաւատամ ես, զի պատգամք բարւոք ելին 'ի բերանոյ քումմէ„ ։ Արդեւք այն իցէ՝ զոր ասաց ցԱխաբ, եթէ “Հարցջիր 'ի մարգարէէ տեառն„. և զի “Զիք աստ մարգարէ տեառն, զի հարցցուք զպատգամս տեառն 'ի նմանէն„. և զի “Մի, ասէ, ասեր այսպէս, արքայ„, հանդերձ այլովքն՝ զոր ինչ ասացն. քանզի չև երթեալ էին 'ի պատերազմ, որպէս գրեալ է 'ի դրպրութ̃ թագաւորաց. “Արիւն արդար, ասէ, ոչ հեղի„. այս ինքն զարիւն ճշմարիտ մարգարէիցն իբրև զտունն Ախաբու ոչ հեղի ։

Եւ եկին հասին մովաբացիքն և ամոնացիքն տալ պատերազմ և մարտնչել ընդ Յովսափատու ։ Եւ յա-

ղօթս եկաց Յովսափատ առաջի տեառն. և եղև հոգի տեառն 'ի վերայ Ազայելի ղևտացւոյ, և ասէ ցըտունն Յուդայի. “Մի՛ երկնչիք և մի՛ զանգիտէք 'ի բազում զօրաց այտի, այլ քաջասրտեցէք և իջէք 'ի վերայ նոցա, և տեսջիք զփրկութիւն զոր առնէ ձեզ տէր”: Եւ եդ Յովսափատ զօրուն հանդերձ, և օրհնէին և ասէին. “Բարձունք, ասէ, սկսան օրհնել, և լերինք սկսան ցնծալ”. այս ինքն որդիքն Յուդայի՝ որ գնային ընդ բարձունս՝ օրհնէին. և որ շրջէին իբրև այծեմունք ընդ լերինս, վասն վստահութեան իւրեանց, ահա ցնծան վասն աւարին, որ հանդերձեալն են բաժանել: Անդ զելանելն Յուդայի 'ի միջոյ լերանց տեսանէին. և ահա մարմինք զօրացս այսոցիկ հարկանէին մեռանէին. և աւարեցին զամենայն ինչ՝ որ էր նոցա, և դարձան օրհնութ̃ 'ի տուն տեառն: Եւ մատեաւ Յովսափատ առ Ոխոզիա ամպարիշտ՝ առնել նաւս, և երթալ 'ի Թարշիշ: Եւ մարգարէացաւ Եղիազար և ասէ ցՅովսափատ. “Հաղորդութ̃ քով ընդ Ախազու, զի միաբանեցար ընդ նմա, և աստանդեսցէ տէր զամենայն գործս քո”: Եւ զի յառաջնումն ոչ եպերեաց նմա վասն բարի պատգամացն՝ որ գտան 'ի նմա. և վասն սորին այսորիկ՝ զի առաջին եղև յայսմ վայրի, եպերեաց զնա. վասն զի յառաջնումն, որ թողաւ նմա, պարտ և պատշաճ էր նմա արգելուլ յերկրորդէ աստի: Բայց թագաւորեցաւ քսան և հինգ ամ, և արար զբարի իբրև զԱսա հայր իւր, և մեռաւ:

Եւ թագաւորեցաւ Յահովրամ որդի նորուն ըստ նմանէն: Արդ կոտորեաց Յահովրամ զվեց եղբարս իւր, և 'ի ծերոցն Իսրայէլի. և գնաց զճանապարհս Ախաբու, և ետ ըմպել զգինի ուխտաւորաց. և ած առ իւր 'ի պատգամացն Եղիայի մարգարէի: Այս առաքեցաւ առ նա յԵղիայէ՝ եթէ “Վասն զի ոչ գնացեր դու 'ի ճանապարհս Յովսափատու հօր քո, ահա հարկանէ զքեզ տէր և զժողովուրդ քո”: Եւ եկին արտաքս աղիք նորա, և մեռաւ: Եւ չոգաւ առանց ցանկութե̃, վասն զի ապականեցաւ շուք գեղոյ նորա 'ի բազմութենէ տանջանաց նորա. և թա-

ղեցաւ 'ի քաղաքի Դաւթի, բայց ոչ եթէ ըստ պատուի թագաւորաց։

Եւ թագաւորեցաւ Ոխոզիա որդի նորուն ըստ նըմանէն մի ամ. և արար զչարիս առաջի տեառն։ Եւ սպան զնա Յահուլ. և Գոդողիա մայր նորա սպան զորդիսն Ոխոզիայ։ Եւ գողացաւ Յոհոշեա քոյրն Ոխոզիայի՝ որ եղեն կին Յովադայ քահանայի՝ զորդին Ոխոզիայի, և թաքոյց զվեց ամ։ Եւ թագաւորեցաւ Գոդողիա քոյրն Ախաբու 'ի վերայ երկրին։ Իսկ յեւթներորդ ամին չոգաւ Յովադա առ զօրագլուխս և իշխանս և հարիւրապետս, և արկ զնոսա յուխտ տեառն։ Ուխտեցին և դաշինս կռեցին. և եցոյց նոցա զորդին արքայի։ Եւ ած զնա Յովադա, և եդ թագ 'ի գլուխ նորա։ Եւ լուաւ Գոդողիա զձայնն և զբարբառ փողոյն՝ զի խրախուսէր, և եկն՝ իբրև պատառէին զգեստք նորա վասն թուինն իւրոյ՝ զի թագաւորեցաւ, և սպան զնա ժողովուրդն։ Եւ երդմնեցոյց զնոսա Յովադա պաշտել զտէր. և խլեցին զբագինսն, և զմեհեանսն Բահաղու կործանեցին։ Նորոգեաց Յովադա զարժանս և զօրէնս պաշտաման տեառն, որպէս յաւուրս Դաւթի. և պահանջեաց նա զնպաստ 'ի ժողովրդենէ երկրին առ 'ի նորոգութ̃ի տանն տեառն, և յաճախեցին բերել ուրախութ̃ք։ Եւ մեռաւ Յովադա հարիւրամեան և երեսնամեան, և թաղեցին զնա յօրէնս թագաւորաց։

Եւ դարձան որդիքն Յուդայի 'ի տեառնէ՝ և պաշտեցին զկուռս. և առաքեցաւ առ նոսա 'ի ձեռն մարգարէի դառնալ 'ի ճանապարհաց իւրեանց չարաց, և ոչ կամեցան։ Եւ եկն հոգի տեառն 'ի վերայ Զաքարիայի որդւոյ Յովադայ քահանայի՝ և ասէ, թէ “Այսպէս ասէ տէր. մի՛ ծաղկեսջիք. այսինքն մի՛ յաջողեսցի ձեզ. զի թողէք դուք զճանապարհս իմ, և ես թողից զձեզ”։ Եւ քարկոծեցին զնա քարիւք 'ի սրահի տեառն։ Եւ մոռացաւ Յովյաշ զշնորհսն զոր արար ընդ նա Յովադա, և սպան զնորա այնոքիկ ըստ նմանէն. զի իբրև սպանանէր զնոսա, ասէին 'ի մահուանն իւրեանց. տեսցէ տէր և խնդրեսցէ։ Եկն եհաս 'ի վերայ նորա Զամէ արքայն

եդովմայեցւոց, և կոտորեաց զնախարարս նորա, և զկապուտս գերութեան նոցա ետ տանել արքային դամասկացւոց: Թողին դատաւորք զՅովյաշ, և անկաւ 'ի ցաւս անհնարինս, և սպանին զնա 'ի գահոյսն իւր. և ոչ թաղեցաւ ըստ օրինի թագաւորաց 'ի գերեզմանս թագաւորաց:

Եւ թագաւորեաց Ամոծիա որդի նորա ըստ նմանէն: Եւ արար Ամոծիա զբարի առաջի տեառն, բայց ոչ եթէ յամենայն սրտէ իւրմէ. և սպան զսպանողս հօր իւրոյ: Եւ ընտրեաց 'ի Յուդայէ երեքհարիւր հազար, և վարձեաց յեփրեմեան գնդէ անտի հարիւր հազար ընդ հարիւր քանքար արծաթոյ՝ տալ մարտ պատերազմի ընդ եդովմայեցիս: Եւ սրտմտեցաւ բարկութիւն տեառն 'ի վերայ նորա 'ի ձեռն մարգարէին, վասն զի կաթոգնեցաւ նա վարձել զօր առ 'ի թիկունս օգնականութեան իւրոյ. և դարձոյց անդրէն յիւրաքանչիւր տեղիս. և կորոյս նա զհարիւր քանքարն: Եւ չու արար խաղաց գնաց և անց կոտորեաց նա զեդովմայեցիսն. և առ զաւ և զապուռ աւարին յոյժ բազում: Եւ յետ այսորիկ երկիր եպագ առաջի դիցն լեռնագեղիցն Գաբաղայ: Եւ առաքեաց առ նա 'ի ձեռն մարգարէին, եթէ "Ընդէ՞ր՝ վասն ո՞յր պագեր երկիր դիցն հեթանոսաց, զի զպաշտօնեայսն իւրեանց ոչ կարացին ապրեցուցանել 'ի ձեռաց քոց": Արդ ամբարհաւաճեցաւ Ամոծիա 'ի վերայ Յովաշու որդւոյ Յահովայ Ախոզեայ յահովեանց. և առաքեաց առ նա՝ զի տեսցեն զերեսս միմեանց: Եւ եկն Յովաշ, և կալաւ զԱմոծիա և տարաւ յԵրուսաղէմ. և խրամատեաց 'ի քաղաքի անդ չորեքհարիւր կանգուն, և առ զամենայն որ ինչ գտաւ 'ի տան տեառն և 'ի տան արքայի, և դարձաւ 'ի Շամրին: Եւ յետ ժամանակին իբրև անց՝ խոտորեցաւ Ամոծիա յերկիւղէ անտի տեառն, սպանին զնա 'ի Լաքիշ[1]:

Եւ թագաւորեաց Ազարիա որդի նորուն ըստ նմանէն: Եւ թագաւորեաց Ազարիա զյիսուն և

1 Յերկուս օրինակսն ևս գրեալ էր Եղ+իշ:

երկուս ամս 'ի թագաւորութ՟են իւրում. և արար զչարն առաջի տեառն իբրև զԴաւիթ հայր իւր. վասն զի ուսուցանէր զնա Զաքարիա քահանայ պաշտել և մատուցանել զաղօթս առաջի տեառն: Եւ ուղղեաց տէր զամենայն ճանապարհս նորա. և մարտեաւ ընդ այլազգիսն, և խրամատեաց զպարիսպս Գաթայ և Ազայի և զԴաշդոդայ. և հաս համբաւ նորա մինչև յԵգիպտոս: Եւ մեծացաւ նա ընչիւք և ստացուածովք, և հպարտացաւ մոռացաւ զտէր. և մուտ 'ի տաճար տեառն դնել զբուրվառ խնկոց: Եւ ասէ ցնա Զաքարիա. “Ոչ է քո տեղիդ այդ, արքայ»: Եւ իբրև խոժոռեցաւ ընդ քահանայսն, ել բորոտութ՟ի 'ի սրբութ՟է անտի, և անկաւ ընդ մէջ աչաց թագաւորին, և նստաւ 'ի տան իւրում բորոտացեալ. և Յովաթամ նորուն որդի վարեաց զթագաւորութ՟ին նորա: Եւ մեռաւ Ազարիա, և ոչ թաղեցաւ նա 'ի գերեզմանս թագաւորաց:

Եւ թագաւորեցաւ Յովաթամ որդի իւր ընդ նմանէն: Ի վեշտասաներորդ ամի թագաւորութ՟են Յովաթամայ արար նա զչարն, որպէս և արար հայր նորա. բաց յայնմանէ՝ զի ոչ ժպրհեցաւ դնել զխունկս տաճարի տեառն. և եղև քաջանուն մեծութ՟բ յորդիան Ամովսայ, և մեռաւ:

Եւ թագաւորեցաւ Աքազ որդի իւր ընդ նմանէն: Արդ թագաւորեցաւ Աքազ վեշտասան ամ, և արար զչարիս առաջի տեառն, և անցոյց զորդիսն իւր ընդ հուր: Եւ մատնեցաւ 'ի ձեռս Արամայ և Փակէի, և կոտորեցին 'ի տանէ անտի Յուդայի հարիւր և քսան հազար 'ի միում աւուր. և գերեցին 'ի նոցանէն երկերիւր հազար. և զորդիս նոցուն ածին 'ի Շամրին: Պատգամ տեառն եղև 'ի վերայ Ադոնայի, և դարձուցին անդրէն զգերին 'ի տեղի իւր յԵրուսաղէմ: Եւ դարձեալ յետ այսորիկ բարկացոյց Աքազ զտէր. և կալաւ զդրունս ներքինս և զարտաքինս տաճարի տեառն, և բազմացոյց զսեղանս յանկիւնս Երուսաղէմի. և գրգռեցան ընդ նմա Եդովմայեցիքն և այլազգիք, և գերեցին 'ի նմանէն գեօղս բազումս: Եւ եկն եհաս 'ի վերայ նորա Թագ-

ղաթփաղսար արքայ Ասորւոց ։ Եւ առ Աքազ զամենայն որ ինչ էր 'ի տան տեառն, և 'ի տուն առաջնոց թագաւորաց, և որ ինչ եգիտ 'ի տունս մեծատանց, և ետ ասորեստանւոյն, զի մի՛ նեղեսցէ զնա ։ Եւ մեռաւ, և ոչ թաղեցին զնա 'ի գերեզմանին թագաւորաց ։

ԳԼՈՒԽ Գ

Եւ թագաւորեաց Եզեկիա որդի իւր ընդ նմանէն ։ Թագաւորեաց Եզեկիա քսան և ինն ամ, և արար զբարի առաջի տեառն ։ Բաց զդրունս տաճարի տեառն անդէն յամսեանն իբրու թագաւորեցաւ. և ժողովեաց զղևտացիս՝ որ յերկիւղէ հօր նորա ցրուեալ էին, և հրաման ետ նոցա զի սրբեսցին ինքեանք և սրբեսցեն զտաճար տեառն ։ Եւ մուտ Եզեկիա ծերակոյտ ժողովրդեամբն հանդերձ, և մատուցին զպատարագ նոխազեան՝ սրբել արեամբ նորա զտաճարն և զքահանայսն և զամենայն ժողովուրդն ։ Եւ կարգեցաւ կազմեցաւ պաշտօնն 'ի սրբութեան անդ, որպէս պատուիրեաց Դաւիթ. և օրհնէին նոքա յօրհնութիւնս Գադայ և Նաթանայ մարգարէիցն Դաւթի. այս ինքն մարգարէքն՝ որ յաւուրսն Դաւթին 'ի վերայ Դաւթին մարգարէանային, և յօրհնութիւնս Դաւթի և Ասափայ. զի աստ մարգարէ կոչեաց զնա ։ Բազմացան յաճախեցան պատարագքն քան զքահանայսն, մինչ զի ղևտացիքն պատարագօք քահանայիցըն եղբարց իւրեանց օգնէին նոքա ։

Եւ արար զտօն բաղարջակերացն յերկրորդ ամսեանն զեւթն օր, վասն զի չժամանեաց առնել վասն անսրբութեան քահանայիցն և ղևտացւոցն ։ Բայց ազգն եփրեմեան և մանասեան և իսաքարեան և զաբուղոնեան, որ կերան զզատիկն առանց օրինաց՝ այս ինքն յառաջ քան չև էին սրբեալ, յաղօթս եկաց Եզեկիա 'ի վերայ նոցա՝ զի քաւեսցին յայսմանէ ։ Եւ ասաց՝ եթէ սրբութիւն ոչ է սուրբ քան ըզմեզ, զի ինքն լռութեամբ իւրով քաւեսցէ. և մեք աղօթիւք ո՞չ քաւիցեմք ։ «Եւ լուաւ, ասէ, ձայնի

Եզեկիայի, և քաւեաց զժողովուրդն»: Բայց ոչ եղեալ է իբրև զայս տօն 'ի Սողոմոնէ մինչև ցԵզեկիա: Եւ հրաման ետ վասն երախայրեացն քահանայիցն, և եբեր ժողովուրդն ուրախութբ, մինչև յաւելաւ 'ի քահանայից անտի՝ որ ընդ ամենայն տեղիս ցրուեալ էին, և տուաւ 'ի նմանէն աղքատաց:

Յետ այսորիկ եկն եհաս տակառապետն. ձեռն 'ի վեր կալաւ, 'ի բարձր ձայն ամբարհաւաճելով խօսել կալաւ ընդ ժողովրդեանն և ասէ, եթէ «Զինչ օգուտ արար Եզեկիա, զի անցոյց զմեհեանս և զբագինս. և ասաց թէ առաջի միոջ սեղանոյ պագջիք երկիր»: Արդ նայեաց և տես, ո՛րչափ ել համբաւս այսորիկ. զի զոր ինչ արար նա յԵրուսաղէմ, յասորեստան լսելի եղև. արդեւք 'ի քաղաքաց անտի՝ որ շուրջ զնովօք էին զոր գերեացն, գիտաց նա զայսմանէն: Բայց կոտորեցաւ բանակ նոցա 'ի ձեռն հրեշտակին, և ելին որդիքն Երուսաղէմի աւարեցին, և մտին անդրէն: Բայց բազում մեծութբն զոր ժողովեաց Եզեկիա 'ի բանակէն ասորեստանեաց՝ զնոյնն զասորեստանեացն զոր ինչ աւարեցին 'ի քաղաքացն զոր գերեցին և բերին անդրէն, առ 'ի նոցանէն Եզեկիա. քանզի այսպիսի մեծացաւ, զի շտեմարանս արար նա ոսկւոյն և արծաթոյն և ականցն պատուականաց: Բայց հպարտացաւ նա 'ի միտս իւր, և ժամանեաց նմա խոնարհութի հիւանդութէ: Բայց ոչ եթէ նա միայն հպարտացաւ, զի մանկունք ժողովրդեան նորա իբրև զնա հիւանդացեալ էին հպարտութբ. այլ ոչ եկն 'ի վերայ նոցա բարկութի յաւուրս Եզեկիայի վասն Եզեկիայի: Եւ մեռաւ Եզեկիա:

Եւ թագաւորեցաւ Մանասէ որդի իւր ընդ նմանէն: Յիսուն և հինգ ամ թագաւորեաց Մանասէ, և արար զչարիս առաջի տեառն, և շինեաց զսեղանս կռոցն՝ զոր հայր նորա աւերեաց. և շինեաց մեհեանս ամենայն աստեղաց երկնից յերկոսին սրահսն տեառն, և անցոյց զորդին իւր ընդ հուր, և արար զկախարդս և հարց ցգէտս և ցքաղդէս, և ուղղեաց զպատկերն չորեքդիմեան 'ի տաճարին տեառն. և մոլորեցոյց Մանասէ զհրէաստան գործել զգործս հեթանոսաց: Եւ

ած տէր զիշխանսն ասորեստանի, և իջուցին զՄանասէ շղթայիւք 'ի Բաբելովն ։ Արդ երկեաւ Մանասէ յերեսաց տեառն. և յաղօթս եկաց, և դարձոյց զնա յԵրուսաղէմ ։ Եւ գիտաց Մանասէ եթէ տէր է ած. և առ անցոյց զկուռսն օտարոտիս՝ զորս եդեալ էր 'ի տաճարին տեառն, և զամենայն մեհեանսն հատակոտոր կոտորեաց և ընկէց արտաքս քան զքաղաքն ։ Եւ փոխանակ զի շինեաց բագինս կռոցն, շինեաց սեղան տեառն. և զի մոլորեցոյց զժողովուրդն, կարդաց քարոզ 'ի ժողովրդեանն առնել զտօն ածն. և զի մի մատուցեն զպատարագս այլոց դիցն օտարոտեաց, բայց եթէ տեառն միայն ։ Եւ հանգեաւ Մանասէ, և թաղեցին զնա ոչ ըստ թաղելոյ օրինի թագաւորաց ։

Եւ թագաւորեցաւ Ամոն որդի իւր ըստ նմանէն ։ Եւ արար Ամոն յերկուս ամս թագաւորութեանն իւրոյ զչարիս առաջի տեառն. զի ամենայն պատկերաց զոր արար հայր նորա՝ զոհէր նա. և ոչ երկեաւ Ամոն 'ի տեառնէ իբրև զՄանասէ ։ Եւ մեռաւ Ամոն ։

Եւ թագաւորեցաւ Յովսիա որդի իւր ըստ նմանէն ։ Եւ արար Յովսիա բարի առաջի տեառն. և զերեսուն և զմի ամ թագաւորեաց նա. և 'ի մանկութենէ իւրմէ յաղօթս կայր նա առ ածն Դաւթի հօր իւրոյ ։ Եւ մինչ երկոտասանամեայ էր նա, սրբեաց զՀրէաստան, և խլեաց զմեհեանս և զբագինս և ըզկուռս. և փլրեաց զմոխիր նոցա 'ի վերայ գերեզմանաց նոցուն մարդոց՝ որ զոհէին. և զոսկերս քրմացն հան և այրեաց, զի սրբեսցէ զերկիրն 'ի նոցանէն ։ Կարկառեաց դարձեալ զտաճարն տեառն, և յաւել զականս պատուականս, և զարդարեաց յօրինեաց զսպաս պաշտաման նորա. արար նա կապ քանդակածոյս 'ի պէսպէս գունակ գործած ճարտարաց ։

Կարդացին առաջի նորա զգպրութիւն օրինաց՝ որ գտաւ 'ի տուն տեառն, մինչ չև արհամարհեալ էր տաճարն յաչս նոցա. և պատառեաց զպատմուճանս իւր, և առաքեաց մատուցանել զաղօթս վասն իւր և վասն ժողովրդեանն առաջի տեառն, զի գուցէ

դայցեն համանիցեն անէծքն օրինաց 'ի վերայ ժողովրրդեանն յաւուրս նորա ։ Եւ եկին առ Խոդէ կինն մարգարէ, որ նստէրն յԵրուսաղէմ յուսումն. այս ինքն ուսուցանել զժողովուրդն ։ Եւ մարգարէացաւ յանուն տեառն՝ եթէ “Ասացէք ցարքայն, զի վաղվաղակի լինելոց է ժողովրդեանդ՝ ամենայն որ գրեալ է 'ի դպրութեանն զոր ընթերցան առաջի քո ։ Եւ վասն զի դողաց սիրտ քո և պատառեցեր զպատմուճան քո և սգացեր վասն չարութեանդ զոր ինչ գալոց է 'ի վերայ աշխարհիս այսորիկ, ահա ժողովեմ զքեզ խաղաղութբ առ հարս քո, և մի տեսցես զչարն զոր ածելոց եմ ։ Ընթերցան զդպրութիւն օրինացն և առաջի ժողովրդեանն ։ Ուխտ եդին և դաշինս կռեցին և երդմունս երդուան, զի պաշտեսցեն զտէր, և նմա երկիր պագցեն ։ Եւ ուղղեաց կարգեաց կազմեաց զպաշտօնն զտօնիցն և զքահանայիցն և զգովչացն, որպէս յաւուրս Դաւթի ։ Եւ արար զզատիկն, զի իբրև զնա ոչ էր եղեալ, բայց եթէ յաւուրս Սամուէլի մարգարէի ։

Յետ այսորիկ ել Փարաւոն կաղ մարտնչել ընդ Մաբովկ քաղաքի, որ նստի 'ի վերայ Արածանոյ ։ Եւ ել Յովսիա մարտնչել ընդ նմա ։ Եւ առաքեաց առ նա Փարաւոն՝ եթէ “Ոչ գամ ես 'ի վերայ քո. և կամ տէր ասաց ցքեզ ոչ սպանանել զիս, այլ երկեցուցանել՝ որպէս զի դարձայց. 'ի բաց լեր յայն՝ որ ընդ իս է, զի մի ապականեսցէ զքեզ ” ։ Արդ թէպէտ և դառնալն յանուանէն ա̃յ՝ որ ոչն էր ա̃ծ՝ ոչ էր արժան նմա այլ և լսել զայն. “Զի ոչ եթէ 'ի վերայ քո գամ ես ”, պա՛րտ էր նմա ։ Այլ ոչ ասեն գիտաց զնոսա՝ եթէ 'ի տեառնէ եղև. և ոչ զի մեռցի 'ի պատերազմի, այլ զի մի մեռցի ։ Արդ ասացաւ նմա եթէ ժողովեմ ես զքեզ յառաջ քան զչարն, զոր ինքն իսկ անձամբ անձին ած 'ի վերայ անձին իւրոյ չար. զի եթէ հարցեալ էր նորա 'ի տեառնէ, ահա արդելոյր և զտեղի առնոյր, և ոչ ելանէր ։ Եւ եթէ մեռանէր նա, զմահ խաղաղութե՝ որպէս խոստացաւ նմա՝ մեռանէր նա. և վասն զի ել նա իբրև ոչ հարց, պատահեցաւ նմա անփութութբն Աստուծոյ զոր ինչ

ոչ հատ 'ի վերայ նորա ստուգութ՟ին տ՟յ ։ Արդ եթէ
Փարաւոն մոլորեալ ոչ ել առանց աստուածոյն իւ֊
րոյ, որպէս և ասացն, “Զի մի՞ ապականեսցէ զքեզ
ա՟ծ որ ընդ իս է „, Յովսիայ որչափ ևս առաւել պարտ
և պատշաճ էր, որ զճշմարիտ ա՟ծն ունէր՝ իւ ոչ ելա֊
նէր 'ի մարտ պատերազմի առանց հրամանի նորա ։
Հար զնա Փարաւոն նետիւ, և տարան զնա յԵրու֊
սաղէմ և մեռաւ. և թաղեցին զնա ըստ թաղելոյ
օրինի թագաւորաց ։

Եւ ասէ Երեմիա. “Արք և կանայք, արդարք և ճըշ֊
մարիտք, յիւրաքանչիւր յողբս ձեր լացէք 'ի վերայ
Յովսիայ „. քանզի նա եղև պատճառ արդարութ՟են՝
այն որ զյիսուն և զեւթն ամ յաւուրս նորա յարըմ֊
նեցաւ ։ Եւ ահա, ասէ, գրեալ են այսոքիկ 'ի դըր֊
րութ՟ի ողբոց, որպէս զի ոչ գոյր մարգարէութիւն ։
Խանան մարգարէն՝ որ յաւուրս Մանասէին էր, այն
որ 'ի նմա գրեալ են ամենայն գործք չարք Մանա֊
սէի ։ Եւ մեռաւ Յովսիա ։

Եւ թագաւորեցաւ Յահովախազ որդի իւր ըստ
նմանէն. բայց ոչ ինչ անագանեցաւ սա. զի յետ ե֊
րից ամսոց եկն և տարաւ զնա արքայն եգիպտացւոց
յԵգիպտոս ։ Թագաւորեցաւ Յովակիմ եղբայր իւր
ընդ նորա ։ Եւ արար Յովակիմ 'ի տասն ամի անդ
թագաւորութ՟են իւրոյ զչարիս առաջի տեառն ։ Յա֊
ւուրս նորա ել Նաբուքոդոնոսոր, և կապեաց զնա և
տարաւ 'ի Բաբելոն. տարաւ և զդանիէլեանս, և յա֊
նօթոցն սրբութ՟ե առ նա ընդ իւր ։ Եւ թագաւորե֊
ցաւ Յովաքիմ որդի իւր ըստ նմանէն ։ Արար դար֊
ձեալ և սա զչարիս առաջի տեառն զհարիւր օր որ֊
չափ թագաւորեաց նա. և առաքեաց տարաւ զնա
արքայն բաբելացւոց 'ի Բաբելոն ։

Եւ թագաւորեցոյց զՃեդեկիա հօրեղբայր իւր
ըստ նմանէն ։ Արար և սա զմետասան ամ թագաւո֊
րութ՟են իւրոյ զչարիս առաջի տեառն ։ Եւ ապստամ֊
բեցաւ 'ի տեառնէ և յարքայէն բաբելացւոց, և յԵ֊
րեմիայէ մարգարէէ ոչ երկեաւ. և ժողովուրդն և
ծերակոյտն և քահանայքն և ղեւտացիքն պղծեցին
զտունն սրբութ՟ե, և գործեցին իբրև զգործս հեթա֊

նոսաց ։ Եւ առաքեաց տէր առ նոսա 'ի ձեռն հրեշտակաց իւրոց, այս ինքն 'ի ձեռն մարգարէից իւրոց. վասն զի խնայեաց 'ի վերայ ժողովրդեանն իւրոյ. և վասն զի անարգեցին զբանս մարգարէիցն մինչև շարժեցին զսրտմտութիւն բարկութեան տեառն ։ Եւ ած 'ի վերայ նոցա զբաբելացիս երիցս անգամ. և կոտորեաց զերիտասարդս նոցա 'ի տունն սրբութեան՝ ուր մտին ապաւինել 'ի նա 'ի ժամ բարկութեանն ։ Բայց յառաջ քան չև էր եկեալ բաբելացին պղծել զնա յարիւն դիականց նոցուն, նոքա իսկ ամենեքին չար գործովքն իւրեանց պղծեցին զնա ։ Աւրին բաբելացիքն զամենայն անօթս սրբութեանն, և հրձիգ արարին ըզտաճարն տեառն, և խլեցին զպարիսպս Երուսաղէմի, և իջուցին ընդ իւրեանս 'ի գերութիւն՝ որք մնացին սրին 'ի մնոյ 'ի սրոյն սուսերի. և եղեն ծառայք բաբելացւոց, մինչ զի ետուն զթագաւորութիւն Պարսից, զի կատարեսցի բանն Երեմիայի՝ զոր ասաց. "Զի աւերեսցի և թափուր մնասցէ երկիրս 'ի նոցանէն եւթանասուն ամ" ։

Որ ամ մի էր Կիւրոս արքայի, եղև կատարեցաւ արդեամբք իւթանասուն ամն այն՝ զոր կանխեաց և ասաց Երեմիա յառաջ քան զեւթանասուն ամն ։ Եւ զարթոյց տէր զոգին Կիւրոս պարսկի. և գրեաց ընդ ամենայն իշխանութիւն թագաւորութեան իւրոյ պատճէն հրովարտակաց, զի գրեալ էին այսպէս. "Այսպէս ասէ Կիւրոս, թէ տէր Աստուած երկնից ետ ինձ զամենայն թագաւորութիւնս երկրի" ։ Եւ վասն զի ամենայն թագաւորաց գերեալ էր զնոսա, սա՝ որ իշխէրս 'ի վերայ ամենայն թագաւորաց, և կարօղ էր նա՝ զի յամենայն թագաւորաց դարձ քարոզեսցէ նոցա ։ Եւ այս օտար և անթլփատ, որ գիտաց զտէր Աստուած երկնից, 'ի ձեռն սորա դարձոյց զորդիսն թլփատեալս սիրելւոյ իւրոյ, որք երկիւղիւն երկնից զոհս համդերձ կանամբք և որդւովք առնէին ։ "Եւ, նա, ասէ, ետ ինձ հրաման շինել նմա տուն յԵրուսաղէմ" ։

Արդ նայեաց և տես, զի և զմարգարէութիւնն Եսայեայ փութացաւ ընթեռնուլ, վասն եղանելոյն այնոցիկ՝ որ յաւուրս Երեմիայի այպանելով այպա-

նէին զմարգարէսն՝ որ զայս ամենայն քարոզէին 'ի վերայ նոցա ։ “Ո՞ գոյ 'ի ձեզ, ասէ, յամենայն ժողովրդենէ այտի, զի տէր ա͞ծ հաճի ընդ նմա, եկեսցէ ելցէ առ իս„ ։ Յայտ արար՝ եթէ որք արժանին են՝ ելանեն, և որք ոչն կամին ելանել՝ նոքա են որք ոչն են արժանի ։ Յապաղեցուցանէ զնոսա՝ զի մի ելցեն, որք կալանն կապեցանն 'ի սովորութիւն տեղւոյն, և կամ 'ի հանգիստ նորա, և կամ 'ի հեթանոսութե͞անդ ։ Ինքն տէր ոչ կամեցաւ 'ի նոսա՝ զի ելցեն, զի մի յաւելցեն և պղծեսցեն զանուն ա͞յն իւրեանց, “Որպէս զի պղծեցին հարք նոցա զանուն իմ„ ։

ԿԱՏԱՐԵՑԱՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ
ԻԲՐԱՄԵՆՈՒ
ՁԻ ՍԱ ԻՆՔՆ ՎԱՐՈՒՄՆ ԱՒՈՒՐՑ ԹԱԳԱՒՈՐԱՑ
ՀՐԷԱՍՏԱՆԻ

27619